Էջմիածին



1965

ԱՀ 146

ՌՆԺԴ

ԻԲ ՏԱՐԻ

Փետրուար-Մարտ - Ապրիլ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՍԱ-5613

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Բ-Գ-Դ

1965

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏի կոնդակը ապրիլյան մեծ եղեռնի 50-ամյակի առթիվ (ներփակ)	
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏ— Խոսք աղոթքի և ուխտի (ներդիր)	
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Եղեռն ու վերածնունդ	3
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ— Եղեռն մը և իր պատմությունը	6
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏի խոսքը հայ ժողովրդի հերոս զոհերու Անդրանիկի գերեզմանի վրա ծննդյան հարյուրամյակի առթիվ	27
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ— Խոհեր մեծ եղեռնի մասին	28
Մ. ՍԱՐՅԱՆ— Մտորումներ ապրիլ 24-ի առթիվ	30
ՄԱՐԻԵՏՏԱ ՇԱՀԻՆՅԱՆ— Սրտի ձայն	32
ԼՈՐԻՍՏՈՆ ԼԵՎԻՆԳՍՏՈՆ ՍՔԵՅՖ— Մեր մեծ եղբայրները	33
ԼԵՎՈՆ-ՋԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ— Տասը խոհերդածություններ	34
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԿԱՐՈ ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ— Թերթիկներ իմ հուշամատյանից	36
ՀԱՄԱՍՏԵՂ— «Հաւատամ ես կեցուցեն զհեզ»	40
ԳՈՀԱՐ ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ— Անհայտ էջեր հայ հաճատակների գրական ժառանգությունից	43
Ա. ՀԱՏԻՏՅԱՆ— Նոր Վևոեդյաճ	58
ՄԻՆԱՍ ՀՅՈՒՍՅԱՆ— Ջմռացվող աճուններ	71
ԳԵՎՈՐԳ ՄԱՏՈՅԱՆ— Հայ գրականության կորուստները	76
Գ. ԳՅՈՒԼՅԱՆ— Մեր ազգային վերածնունդը	85
ՍՈՒՐԵՆ ՔՈԼԱՆՋՅԱՆ— Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները	96
Ի. ՅԱՎՈՐՈՎ— Հայեր	108
ՕՆՆԻԿ ՓԱՆԻԿՅԱՆ— Հայը	109
ԵՎԱՐԴ ԳՈԼԱՆՃՅԱՆ— Կարմիր գիշերները	110
ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀՄԻԶՅԱՆ— Հուշամատյաններին նեմեսիով	113
ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ— Մայրս փրկեց զիս նժիրատես	122
ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳԱԼՖԱՅԱՆ— Հայկազուճ արի արաեց	125
ԱՐՄԱՆ ԿՈՒՐԻԿՅԱՆ— Փա՞ռ պատվածներին	127
ՀՈՒՓՍԻՄԵ ՍԵՐԻՆԿՅՈՒԼՅԱՆ— Հուշեր Գրիգոր Զոհրապի մասին	130
ԱՌԱՔԵԼ ՊԱՏՐԻԿ— Գուժկաեը	133
Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ— Իուրքեն Զարդարյան	136
Հ. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ— Վանի ապրիլյան հերոսամարտը	140
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՓԱՇԱՅԱՆ— Լեո, որ ապրում է ժողովրդի սրտում	149
Ն. Գ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ— Արխիվային նոր նյութեր Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի վիճակի մասին	156
ՀՆՆԻՒ ՄՈՐԳԵՆԹԱՈՒ— Պատմության ամենաստոկալի եղելությունները	168
Ա. Խ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ— Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավաճանների միհիսարության ներկայացված հայկական նկողցիների և վաճերի ցուցակները ու բարերները	174
ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀՄԻԶՅԱՆ— Հուշարձան	188

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин; Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue „Etchmiadzine", Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1965 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵԻ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ

ՈՏՆԱՀԱՐՎԱԾ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ

Վարդգես Սուրենյան

Дорогой мой друг

Извини меня, что я так долго не писал тебе. Я был очень занят. Сначала я ездил в Ленинград, потом в Москву, а потом мне нужно было много работать. Сейчас я, наконец, свободен и могу написать тебе несколько строк. Я часто вспоминаю наши встречи в Ленинграде, наши прогулки по Невскому проспекту, наши разговоры. Ты помнишь, как мы с тобой ходили в Эрмитаж и Русский музей? Как нам нравились картины Репина и Васнецова? Как мы спорили о Врубеле и Серове? Я часто вспоминаю наши споры. Ты был прав, когда говорил, что Врубель — гений.

Недавно я был в Третьяковской галерее. Там висят все картины Врубеля, которые я так люблю. Я стоял перед ними и думал о тебе. Мне очень не хватало тебя, чтобы поделиться своими впечатлениями. Ты знаешь, я написал несколько стихотворений о Врубеле. Я хочу прочитать тебе одно из них, когда мы снова встретимся.

Я живу в Москве уже месяц. Здесь много интересного и удивительного. Но иногда мне становится очень грустно. Я скучаю по Ленинграду, по нашим прогулкам, по нашим разговорам. Здесь я никого не знаю, кроме родственников. Иногда мне кажется, что я никогда не вернусь в Ленинград. Но я надеюсь, что это скоро произойдет. Я очень хочу снова увидеть тебя, Невский проспект, Эрмитаж, Русский музей, Третьяковскую галерею. Я хочу снова ходить с тобой по Невскому, разговаривать о живописи, о поэзии, о жизни.

Напиши мне, пожалуйста, как ты живешь. Что нового у тебя? Как твои родители? Как твои занятия? Ты, наверное, много работаешь? Я знаю, что ты очень трудолюбивый. Я тоже много работаю. Мне нужно закончить несколько картин к весенней выставке. Я надеюсь, что они будут иметь успех. Я очень хочу, чтобы ты приехал на выставку. Я буду ждать тебя.

Передай привет своим родителям. Я часто вспоминаю их. Они были так добры ко мне. Я никогда не забуду их доброту.

Напиши мне скорее. Я жду твоего письма с нетерпением.

Твой друг

„Ի տան համարը չգիտեմ, ես տեղը կարող եմ ցույց տալ։ Ասաց. Ես երեսի տեսած եմ, ճանաչում եմ։ Հետ վերադարձանք հարյուր մետրի չափ, որ ասաց համարի տեղը գտնելու համար։ Ես ասացի, որ չեմ կարող, որովհետև ես ինձ համար եմ եկել, ոչ թե ձեզ համար։ Ես ձեզ հետ չեմ գնա։ Ասաց. Ես ձեզ չեմ ստիպում, ես ձեզ չեմ խնդրում, ես ձեզ հրամայում եմ։ Ես ասացի. Ես ձեզ չեմ ենթարկվում։ Ասաց. Ես ձեզ կսպանեմ։ Ասացի. Ես ինձ էլ կսպանեմ։ Ասաց. Ես ձեզ կխեղդեմ։ Ասացի. Ես էլ ձեզ կխեղդեմ։ Ասաց. Ես ձեզ կդանակահարեմ։ Ասացի. Ես էլ ձեզ կդանակահարեմ։ Ասաց. Ես ձեզ կհրացանահարեմ։ Ասացի. Ես էլ ձեզ կհրացանահարեմ։ Ասաց. Ես ձեզ կծեծեմ։ Ասացի. Ես էլ ձեզ կծեծեմ։ Ասաց. Ես ձեզ կսպանեմ։ Ասացի. Ես էլ ձեզ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԵՂԵՌՆ ՈՒ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Լրացավ ապրիլյան եղեռնի կես դարը:

Ամենայն Հայոց Հայրապետի եղեռնի հիսնամյակի առթիվ գրի առած 17 օգոստոս 1964 թվակիր սրբատառ կոնդակի հրաւիանգով և ոգով, Հայաստանյայց Առաքելական բոլոր եկեղեցիներում, թեմերում, Հայաստանում և արտասահմանում, ապրիլի 24-ին կատարվեցին կրոնական հատուկ արարողություններ և հոգեհանգստյան պաշտոններ, կազմակերպվեցին հուշի և հարգանքի հավաքույթներ, նվիրված մեր ազգային մեծ ողբերգության:

Համայն հայ հավատացյալ և հայրենասեր ժողովուրդը, որ ի հայրենի երկիր և ի սփյուռս աշխարհի, արժանավայել լրջությամբ, համազգային հանդիսությամբ և սրտառուչ համերաշխությամբ նշեց *հայ տառապանքի և հավաքական նահատակության հիսնամյակը:*

Հիսուն տարի է անցել մեր բոլորի սրտերը բզկտող, մեր հոգիները փոթորկող և մեր աչքերը կրակե արցունքով ու անսահման վշտով ողողող սև օրերից, բայց դեռ վերքը բաց է, այրում և արյունում:

Մեծ է մեր վիշտը, խորունկ՝ մեր հուշումը նաև նրա համար, որ եվրոպական պետությունները ողբալիորեն ուխտադրուժ գտնվեցին մեր ազգի, մեր դատի հանդեպ, և թույլ տվեցին, որ բաղաքակիրթ մարդկության հնագույն և թանկագին մեկ մասնիկը կակղող, Արևելքում քրիստոնյա աշխարհի դարավոր առաջապահը հանդիսացող մեր բարի, մեր շինարար, մեր աշխատավոր և խաղաղասեր ժողովուրդը ենթարկվի անլուր մարտիրոսագրության:

1915 թվական, ապրիլ ամիս...

Հայկական եղեռնի սև թվականը, երբ մի ամբողջ ժողովուրդ տեղահանվեց և տարագրության մռայլ ճանապարհների վրա նահատակվեց, գերեզմանվեց անապատներում, կիրճերում, ձորերում:

Հինգ տարի շարունակ, գետի նման հոսեց արյունը մեր ժողովրդի այն հողերի վրա, ուր նա հավարամյակներով ապրել, աղոթել, ստեղծագործել ու կերտել էր:

1915 թվական, ապրիլ ամիս...

Դա այն արյունոտ թվականն էր, երբ Արևմտյան Հայաստանի քաղաքներում և գյուղերում, օրը ցերեկով, ցեղասպանության մշակված ամենանուրբ մեթոդներով, երիտասարդ թուրքերը մորթոտում էին աշխարհի ամենահին ժողովուրդներից մեկին՝ հայ ժողովրդին, որն իր քրիստոնեական մշակույթով, լեզվով, արվեստով և գրականությամբ, իր ապատատենչ ու լուսաբաղձ հոգու ձգտումներով, քիչ վաստակներ չունի քաղաքակիրթ մարդկության առաջ:

Ինչ հայկական էր և գեղեցիկ, ինչ ստեղծվել էր հայ սերունդների սուրբ հավատով ու հանճարով, քրտինքով ու արյունով, այդ բոլորի վրայով անցավ վայրագության, բարբարոսության, ցեղասպանության ալիքը...:

Արևմտահայությունը ապրեց իր Գողգոթան:

Եղեռնին գոհ տվինք մեր ամբողջական թվի ավելի քան երկու երրորդը, շուրջ 2 միլիոն նահատակ: Դա ահավոր կորուստ էր մեզ համար:

«Այդ սև օրերուն,—գրում է Ամենայն Հայոց Հայրապետն Իր հայրենաշունչ կոնդակում,—*եկած էր պահ մը, երբ «այս աշխարհի վրա այլևս անհնար էր հայ ըլլալ»: Ամեն հուր կորսված կթվեր և հայոց պատմության գիրքը՝ փակված ու արյան մեջ թաղված»:*

Ավելի քան 2 500 քանդված, այրված, կողոպտված հայկական վանքեր ու եկեղեցիներ,

բավմահապար հայերեն ձեռագրեր, արվեստի անկրկնելի հրաշալիքներ թալանված, փչացված:

Իսկ նյութական կորուստները անհաշիվ էին ու անհամար:

Թշնամին իր հարվածն իջեցրեց նաև մեր ժողովրդի իմացական ու հոգևոր բոլոր կենդանի ուժերի ակունքին:

Եղեռնին պոհ գնացին մեր նորագույն գրականության և արվեստի ջահակիրները և շուրջ 4000 հոգևորականներ:

Ապրող հայության սրտում, շիկացած երկաթով է գրված սուլթանական Թուրքիայի այդ անլուր ոճիրը:

Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա իր նահատակներին:

Այո, կատարվեց կատարվելիքը... Հայության գլխի վրա կախված մեծ աղետը եկավ ու անցավ:

Անցավ հիսուն տարի...: Բայց վիշտը մնաց և փոխակերպվեց ուժի, կյանքի, ստեղծագործ կամքի, հավատի:

«Ոչ յօժարիմք պջշուառութիւն մերոյ ապգիս ողբալ»:

Պատմությունը մեր ժողովրդի ճակատին գրել էր ոչ թե *մեռնել*, այլ *ապրել* և *վերածնվել:* Ժողովուրդները հավաքական մաքառումներ են և խիպախումներ:

Հայ ժողովուրդը երբեք չի ընկճվել բախտի հարվածներից և գիտեցել է իր *նահատակությունը վերածել հաղթանակի:*

Երբ մի ժողովուրդ կռվում է և նույնիսկ նահատկվում է իր ազատության, իր գոյության համար, նա ապրում է, չի կորչում: Այդ գիտակցությունը, հոգեկան այդ վստահությունը անառիկ բերդ է, որին չի կարող տիրել ոչ մի թշնամի:

Ժամանակավոր պարտություններն ու նահատակությունները չեն որոշում ժողովրդի կյանքն ու ապագան:

Խաչելության, Գողգոթային հաջորդում է հարության այգաբացը, նահատակության՝ վերածնունդը:

Մեր ժողովրդի ուժի և կենսունակության գաղտնիքը ա՛յս գիտակցության մեջ է: Գիտակից ժողովուրդը չի կորչում, չի սպառվում նահատակությամբ: Ջենքի, բիրտ ուժի տիրապետության դիմաց կա հոգու տիրապետությունը, մշակույթի վորությունը: Ոգեկան այս ուժի մեջ է գտել ժողովուրդն իր փրկությունը, բռնությունների դիմաց՝ նահատակությունների մեջ:

Եվ ահա, *«մահը հաղթող հայոց պատմության ոգին,*—գրում է Վեհափառ Հայրապետը,—*անգամ մը ևս պատռեց վարագույրը անողոք ճակատագրին ու կյանքի կոչեց մնացորդացը մեր նահատակված ապգին»:*

Հայ ժողովրդի հավաքական մարտիրոսագրության մեջ կար և՛ հարություն և՛ երկինք:

Չկորավ մեր ժողովուրդը:

1920 թվական...

Կոտորակված արևմտահայությունը արյունաքամ, բկկտված, գաղթական, վիրավոր ու սոված, Էջմիածնի պարիսպների տակ և Երևանի փողոցներում:

Թշնամին 10 կիլոմետր հեռավորության վրա փորձում է ապրիլյան մի նոր եղեռնի մեջ խեղդել վերջնականապես հայության վերջին մնացորդացը՝ շուրջ 700 000 հոգի, որի մեջ և արեվելահայությունը:

Ահավոր երկունքի մեջ է Հայոց աշխարհը. *«Երկնէր երկին, երկներ երկիր»:*

Ամեն կողմ նորից արյուն, նորից կոտորած, թշվառություն, մահ, բայց և ապրելու վճռականություն. *«Ընդ եղեգան փող բոց ելանէր»:*

Հերոսության, նահատակության ճանապարհի վրա, թափ է առնում ապգովին վերածնվելու և ապրելու վճռականությունը:

Ու ծնվում է *նոր Վահագնը* մեր արյան ծովից, մեր նահատակության բոցերից, մեր պայքարի թափից:

«Եվ *«Ի բոցոյն պատանեկինն վահէր»*, «հուր հեր» և «արեգական աչկունք» ունեցող նորս-մանուկը՝ Սովետական Հայաստանը:

Մեր ժողովուրդը գիտի [illegible]անքը հաղթության, իմաստության, արության վերածելու գաղտնիքը:

«Հայոց նահատակությունը,—հաստատում է հայրենասեր Հայրապետը,—*վերջնապես պսակված է հաղթության բրաբիոնով և նոր կյանքի լուսաբացով և վերածնած է մեր հինավուրց երկիրը Հայաստան, իբրև ապգային պետություն»:*

Հայ ժողովուրդը գտնում է իր ապգային վերածնության ճշմարիտ ուղին, իր պատմության ամենածանր պահին:

Այդ ծանր, մղձավանջային օրերին, եղբայրական օգնության ձեռք է երկարում ռուս բարեկամ ժողովուրդը:

Հայ ժողովուրդը իր բախտը, փրկության հույսը ընդմիշտ կապում է ռուս ժողովրդի հետ, որը նրան ոտքի է կանգնեցնում, բուժում նրա վերքերը, բարի Սամարացու նման:

Պայծառանում է հայոց երկինքը: Մեր ապգային ճշմարիտ վերածննդյան հուսալի սկիզբ էր դրվել: Փարատվում է մղձավանջը և բացվում է հուսալից լուսաբացը հայոց աշխարհում, խաղաղության, ապահովության, առաջադիմության պայմաններում:

Հայ ժողովուրդը, տառապանքի «Կարմիր ծով»-ից մապապուրծ ապատված, պատերապմից արյունաքամ, ժառանգում էր միայն ավերակ, քայքայված ու կապմալուծված մի երկիր, մի «որբի ու ողբի հայրենիք»:

Նոր կյանքի է կոչվում հայ ժողովուրդը իր ապատագրված հողում, սկսում է վերաշինել հայրենի իր բույնը, բուժում իր վերքերը:

Կատարվում է մեր մեծ նահատակների իղձը, երազը: Հայ ժողովուրդը տիրանում է իր հողին, իր ապատության, ստեղծում է հայրենիք, պետություն, ապահով ու խաղաղ կյանք:

«Եթե ինձ հարցնեն, թե մեր մոլորակի վրա որտե՞ղ կարելի է առավել շատ հրաշքների հանդիպել, ես առաջինը կտայի Հայաստանի անունը: Ժողովրդական տնտեսության, գիտության, մշակույթի, արվեստի բնագավառում ձեր հանրապետության վերափոխումները, իրոք, հրաշքի են նման» (Ռոբվել Ջենտ, Ամերիկա-սովետական բարեկամության ազգային խորհրդի նախագահ, նշանավոր նկարիչ):

«Այցելելով Հայաստան, ես ապշած մնացի հանրապետության վերածնության և առաջադիմության լայն ծավալով... Ինձ վրա խոր տպավորություն թողեց Հայաստանի մայրաքաղաք Երևանը, որը հանդիսանում է հայ ժողովրդի ուժի և արիության իսկական արտահայտությունը: *Ես իմ կյանքում չեմ տեսել մի քաղաք, որի բնակչությունը պատմականորեն կարճ ժամանակամիջոցում՝ 40 տարվա ընթացքում, 30 000-ից հասներ 600 000-ի*» (ֆրանսիացի գրող Ժան Պոլ Սարտրը):

Քառասունհինգ տարին ոչ մեկ ժողովրդի կյանքում մեծ ժամանակաշրջան չէ: Բայց հրաշքի համալոր նվաճումներ կատարվեցին մեր ժողովրդի մաքառումներով, խիպախումներով, պայքարով ու աշխատանքով շինարարության, գիտության, մշակույթի, ժողովրդական լուսավորության, արդյունաբերության, առողջապահության և այլ բնագավառներում:

Հայաստանը դարձել է լույսի հայրենիք, հույսի հայրենիք, նոր ու հզոր Սովետական Հայաստան: Երբեմնի հետամնաց, քայքայված ու ավերակ Հայաստանը դարձել է շեն ու ծաղկած երկիր, իսկ քաղաքամայր Երևանը հայ մշակույթի, լուսավորության և հայ նոր կյանքի կենտրոն, իր համալսարանով, ինստիտուտներով, գիտահետազոտական հիմնարկներով:

Տարեցտարի անճանաչելիորեն փոխվել է մեր հանրապետության քարտեզը, ծնունդ են առնում նոր քաղաքներ, ավաններ, որոնց մեջ ապրում են և ստեղծագործում ապագային վառ հույսերով նայող հայ նոր սերունդներ:

Մեր երկիրը, իր հազարամյակների պատմության ընթացքում, չի տեսել երբեք բնակչության այնպիսի աճ, ինչպիսին ունի այժմ: 1920 թվականին 700 000, իսկ այսօր, միայն Հայաստանում՝ 2 000 000:

Այս բոլորը յուրաքանչյուր հայ մարդու սիրտը լցնում է ազգային հպարտության ամենաանուշ զգացմունքներով և մասամբ մեղմում եղեռնի անհավոր վշտի ծանրությունը, մորմոքը:

Եվ բացել է հայրենիքն իր մայրական գիրկը նաև 1915 թվականի ազգակործան եղեռնից մազապուրծ ապատած, աշխարհի չորս ծագերին ցրված իր հայրենազուրկ զավակների առաջ, և կանչում է նրանց, բոլորին դեպի տուն, դեպի հայրենի օջախը:

Վերջին տարիներին, ավելի քան 200 000 արևմտահայեր է ընդունել հայրենիքն իր գրկում:

Մայր հողի հայությունը իր ազգային վերածնության, պետականության, իր պայծառ ապագայի հիմքերն է ամրապնդում օրերի հետ և շենացնում համայն հայության հայրենի օջախը:

Ինչ ստեղծվել է 44 տարիների ընթացքում, դա սեփականությունն է հայ ժողովրդի:

Այսօր, եղեռնից հիսուն տարի վերջ, պայծառ է վերածնված մեր ժողովրդի *ներկան*, է՛լ ավելի վառ՝ նրա *ապագան:*

Այսօր հայ ժողովուրդը իր ձեռքն է վերցրել իր ճակատագիրը և *հայրենի հողի վրա վառել է իր հավերժության, իր գոյության խարույկը,* եղբայրական ժողովուրդների համերաշխ ընտանիքում, և վառ հավատով է նայում ավելի պայծառ գալիքին՝ մեր նահատակների կտակով, տեսիլքով, պատգամով:

Այո, իսկուր չի անցել ապրիլյան եղեռնի վոհերի թափած սուրբ արյունը: Հայ ժողովրդի համար նվիրական է միշտ մեր նահատակների խնկելի հիշատակը, երեկ, այսօր և վաղը:

Վա՛յ այն ժողովուրդին, որը կմոռանա իր նահատակներին:

Հայ ժողովուրդը նշեց իր բյուրավոր նահատակների պայծառ հիշատակը աղոթքով ու սուրբ ուխտով և մանավանդ մեր վերածնված Մայր Հայրենիքի, նրա բեղուն ներկայի և առավել պայծառ գալիքի անպարտելի գիտակցությամբ:

Հայ ժողովուրդը իր նահատակների անմահ հիշատակին կանգնեցրել է մեծագույն կենդանի, ներշնչող հուշարձանը, մեր վերածնված Սովետական Հայաստանը, և ավելի քան երբեք վըստահ է, որ վերջնական հաղթանակն ու արդարությունը կլինեն մեր նահատակների կողմը և երբե՛ք, երբե՛ք չի կրկնվի ապրիլյան եղեռնը:

Այդ է հայ ժողովրդի խորունկ հավատը:

Հավերժական փա՛ռք մեր բյուրավոր նահատակներին:

Փա՛ռք ապրիլյան եղեռնից հրաշափառապես հարություն առած մեր ժողովրդին:

Փա՛ռք մեր վերածնված Մայր Հայրենիքին՝ Սովետական Հայաստանին:



Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԵՂԵՌՆ ՄԸ ԵՎ ԻՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ*

Թող այս էջերը ծոցվին իմ պաշտելի մորկանս, որ զարհուրելի տարիներու բովանդակ լեղին ըմպեց, անզուգական եղերաս Հայկին, զոր դաւիճը խամրեցուց իր զարուընի մէջ, ու բոլոր այն եղբայրներուն, զորս այն սև գիշերը ճնճեց ճիվաղը ու ա՛լ ետ չդարձուց...:

Գ.— ԵՂԵՌՆԸ ԻՐ ՊՈՌԹԿՈՒՄԻՆ ՄԵՋ

Ի.— Ռազմի շեփորը

Հայ ժողովուրդը իր ամենեն խանդավառ պահերեն մեկը կապրեր, երբ աշխարհ ալեկոծվեցավ մեկենի

1914 Հուլիս 28-ին կբռնկեր համաշխարհային պատերազմը, ճիշտ այն օրերուն, երբ հայ ժողովուրդը, բռնկած վերնլքի ճիգով, տեսիլքներու և հույսերու մեջ կողողվեր։ Եվրոպա նշանակած էր արդեն իր ղուլգ մարդ-

պանները, որոնք սիտի հակեին բարենորոգումներուն, հայկական յոթը նահանգներու մեջ, բարօրութեամբ օժտելու համար Հայոց աշխարհը։ Հոֆ, նորվեգիացի, հասած էր արդեն Վան, իր պաշտոնատեղին, իսկ Վեստենենկ, հոլանդացի, կպատրաստվեր կարին մեկնելու։

Եվ ահա լախտի հարվածը հանկարծ։ Հայ ժողովուրդը կշշմեր զարհուրանքի տակ, մինչ Թուրք վարիչները կխայտային ուրախութենեն։ Հոֆ ետ կճամբվեր Վանեն, մինչ Վեստենենկ Պոլսեն կդառնար արդեն իր տեղը։ Կապանքն էր, զոր կփշրեր Թուրքիան, ծիծաղելով Եվրոպայի, և մեր ալ, միամտութեան վրա, որ Թուրքիան ծունկի բերել կարծած էր։

Ալլապես ալ սարսափ կանցներ հայը։ Թուրք վարիչները սկսեր էին արդեն կծու նա-

---

* Ապրիլյան մեծ եղեռնի 50-ամյակի առթիվ գրված Հ. Ճ. Սիրունու չորս մասից բաղկացած հոդվածաշարից սույն բացառիկ համարում հրատարակում ենք Գ գլուխը, որը եղեռնի արյունոտ պատմությունն է։— Խմբագրություն «Էջմիածին» ամսագրի։

յիլ անոր, իրենց ակնարկին մեջ հազիվ կարենալով պարտկել վրեժխնդրության բոցը։

1914 նոյեմբեր 14-ին ռուսական պատերազմը կսկսեր։

Գողգոթայի ճամբան կբացվեր հայ ժողովուրդին...։

II.— Դահիճը պատրաստ

Դահիճը վաղուց կսպասեր պատրաստ։ Երբ Թուրան հասնելու փորձերը երիտասարդ թուրքերը որդեգրեր էին իբրև ազգային իդեալ, անոնք վճռեր էին չքացնել ամեն խոչընդոտ իրենց քայլերուն առջև։ Հայ ժողովուրդի մահավճիռն էր, որ անոնք տվեր էին, զայն կիրարկելու համար սպասելով պատեհ ժամուն։

Մինչև որ այդ պատեհ ժամը գար, պետք էր սակայն պատրաստվիլ։ Իթթիհադ ունեցած էր այդ հոգը, ու պատրաստվեր էր։

Թե հայաջինջ եղեռնը պատահական ներշնչման մը արդյունքը չէր, և ոչ ալ հետևանքը այն պատրվակներուն, զորս Իթթիհադը կհեղհեղե շարունակ, փաստերու ամբողջ դեզ մը կա, որ կմատնե ահավոր կանխամտածությունը։

Այդ կանխամտածությունը իր թևերը երկարեց ամեն մարզե ներս։ Երիտասարդ թուրքերը վճռած էին հայ ժողովուրդի ճիգերը ամլացնել բոլոր ասպարեզներու վրա։

Բոյկոտը, որ հայերու դեմ սկսավ 1913-ին Անադոլուի զանազան շրջաններուն մեջ, նախանշաններեն մեկն էր եղեր այն հալածանքներուն, որոնք պիտի շղթայազերծվեին շուտով։ Ան կձգտեր տնտեսապես փչացնել հայերը։ 1913 ապրիլին Սեբաստիայեն սկսեր էր ան, տեղվույն կուսակալ Մուամմերի իսկ նախաձեռնությամբ և մզկիթներուն մեջ տրված քարոզներով, և հետզհետե տարածվեր էր Բրուսա, Իզմիր, Բանդրմա, Բալըքեսիր, Բիղա, Իզմիտ և այլն։

Նախանշաններ հետո ալ անպակաս եղան։ Երիտասարդ թուրքերը ամբողջ երկիրը կկանխապատրաստեին ընդդեմ հայուն, որպեսզի վտանգի ժամուն ան կարեկցող չունենա թուրքերու մեջեն, և հալածանքները, զորս ծրագրեր էին, թուրք ժողովուրդը համախոհ գտնեն իրենց։

«Թէշքիլաթը մախսուսա»-ն գերագույն օրգանը պիտի ըլլար, որ պիտի վարեր հալածանքները, մինչև վերջնական բնաջնջումը հայ ժողովուրդին իր պապենական հողերուն վրա։ Ան, ղեկավարությանը տակ դրված ամենեն փորձված իթթիհադականներուն, պատրաստ պիտի ըլլար ճիշտ ուզված ժամուն։

Իր բուն սպանդը սկսելե առաջ, Իթթիհադը դահիճները մարզեց նախ, անոնք, որ պիտի կազմակերպեին և վարեին տեղահանությունը, տեղահանվածները ողջ չհասցնելով սակայն սահմանված վայրերը։ Պահեստի սպաներու դպրոցը, որ մարմին առավ 1914-ի ամռան, ամենեն հարմար վայրն էր կազդեր պատրաստելու։ Անոնք, որ նույն դպրոցը գտնվելու առիթը ունեցան ինձի պես, գիտեն, որ պահեստի սպաներու հրահանգիչ սպաներեն մեկուն՝ Վեյսել բեյի առաջնորդության տակ, կմարզվեին զանազան գումարտակներե հավաքված զուտ թուրք երիտասարդներ, հրամանատար դառնալու համար քիչ հետո այն հրոսախումբերուն, որոնք պիտի գործեին Անադոլուի մեջ։

Մարդասպաններու ամբողջ ջոկիր մը Իթթիհադ բանտերեն ևս քաղեց։ Անոնք պատրաստի եղեռնագործներ էին, և պետք չկար զանոնք կանխավ մարզելու։ Բացավ բանտերուն դուռը, զինեց արհեստով այդ չարագործները, և իր կազմակերպած չեթեներու շարքերը մտցուց։

Ահավոր աշխատանք էր անշուշտ ամբողջ ժողովուրդ մը չքացնել։ Իթթիհադը չէր բավականացած գաղտնի հրահանգներ տեղացնելով գավառական իշխանությաց. օրեր առաջ հրահանգիչներ ալ պտտած էին գավառե գավառ՝ տեղահանությունը կազմակերպելու համար իր բոլոր մանրամասնությանց մեջ։

Իրենց ստացած հրահանգներուն համաձայն, տեղական իշխանությանց առաջին գործն եղավ բնակչության և գլխավորաբար հայերուն զենքերն հավաքել՝ անզեն գտնելու համար զանոնք ճակատագրական պահուն։ Հետագային հայտնի եղավ, թե ինչ վայրագությամբ կիրարկվեր էր կեդրոնի այս հրամանը։

Իշխանությանց երկրորդ մտահոգությունը հայ զինվորները ևս անզեն ձգելն էր։ Հետևաբար գրեթե ամենուրեք առնվեցան անոնց զենքերը և զետեղվեցան բանվորական վաշտերու («ամելե թաբուրու») մեջ։

Կանխազգուշական ուրիշ միջոցի մը ևս պետք եղավ դիմել։ Սարսափներու շրջանը սկսելե առաջ, անհրաժեշտ էր, որ անգլուխ մնա հայ ժողովուրդը վտանգի սեմին։ Պետք էր ուրեմն, զանգվածները տեղահան չըրած, ձերբակալել հայ ղեկավարությունը, հոգևորական թե աշխարհական։ Այս մասին ևս թուրք կառավարությունը պատշաճ հրահանգները վաղուց էր ղրկած ոստիկանական օրգաններուն։

Գոնե մենք, Պոլսո մեջ, շաբաթներ առաջ գիտեինք, թե զմռսված պահարաններու մեջ ցանկեր հաղորդված են ոստիկանական պա-

հականոցներուն՝ հետագա հրահանգի մը վրա բացվելու համար։

Դահիճը, դանակը սրած, պատրաստ էր արդեն հոշոտելու իր որսը։

III.— Առանց տեր ու պաշտպանի

Ջոհը միս-մինակ էր հիմա դահիճին առջև։ Դաշնակից պետությունները, այսինքն ա-նոնք, զորս հայ ժողովուրդը բարեկամ կար-ծեր էր իրեն, կռվի բռնված էին թուրքին հետ, և անոնցմե որևէ հույս չկար, եթե վտանգ մը սպառնար հայուն։

Հայը չէր կրնար ապավինիլ նաև գերմա-նին։ Նախ որ հիմա զինակիցն էր ան թուր-քին և հետո, ան բարեկամ երբեք չէր եղած հայուն։

Հայ ժողովուրդը գիտեր, թե Բեռլինի մեջ մեկն էր եղեր ան հայ դատը խոշտանգողնե-րեն, և սառն էր մնացեր միշտ դեպի հայկա-կան տառապանքները։ Ան էր եղեր, որ հե-տագային ալ չկամուբյուն էր ցույց տվեր հայկական բարենորոգումներուն հանդեպ, և Համիդ, հանձին Վիլհելմի, թանկագին զորա-վիգ մը գտած էր միշտ իր բռվանդակ տիրա-պետության ընթացքին։ Անկե ապավեն սպա-սել միամտություն պիտի ըլլար մանավանդ հիմա։

Ավստրիան կքալեր Գերմանիո հետքերուն վրայեն, և ան ալ ստիպված էր խուլ մնալ հայոց ճիչերուն, երբոր հնչեր վտանգի ժամը։

Բուլղարները, սակայն, որոնք նույնպես դաշնակից դարձան թուրքերուն 1915 հոկ-տեմբեր 14-ին, այսինքն երբ բուն զարհու-րանքի ամիսներն անցած էին, կռվի մտնելե առաջ, երբ արդեն հայտնի էր իրենց ուղին, որուն պիտի հետևեին, իրենց սահմանները բացին թուրքիայեն փախչող հայերուն և թույլ տվին, որ մամուլին մեջ արձագանք գտնե հայ ողբերգությունը։ Կռիվի մտնելե հետո ալ թուրքերու կողքին, անոնք չքեցին իրենց բարյացակամությունը հայերուն հանդեպ, ըլլա իրենց երկրին մեջ, ըլլա իրենց Պոլսո դեսպանատան միջոցավ։ Ոչ միայն աքսորեն բերել տվին իրենց հպատակները, այլև հնա-րավորություն տվին, որ վտանգված հայեր կարենան ապաստանիլ իրենց հողը։

Հայոց իբր ապավեն չեզոք պետություննե-րը կմնային լոկ։ Անոնցմե Իտալիան, երբեմն զինակից Գերմանիո, բայց արդեն հակիլ սկսած էր մյուսներուն։ Ան 1915 ապրիլ 25-ին գաղտնի դաշնագիր պիտի կնքեր դաշ-նակիցներուն հետ, և շուտով կռվի պիտի մտներ անոնց կողքին։

Ամերիկան կմնար միայն, և բարեբախտու-թյուն եղավ հայերուն համար, որ ան չեզոք էր դեռ հայաջինջ զարհուրանքներու ամենեն բուռն շրջանին։ Անոր դեսպանը, Մորգեն-թաու, բարյացակամությամբ լեցված էր դե-պի հայն ու իր տառապանքները, և պետք է ըսել, որ ի նպաստ հայերու միջամտություն-ներ հաճախ ըրավ։ Այնպիսի գազաններու դիմաց, որոնք Թալեաթն ու Էնվերն էին և որոնց կողքին գերման Վանգենհայմը կար, իր դիմումները մեծ մասամբ դատապարտ-ված էին անպտուղ մնալու։ Միակ բարիքն այն եղավ, որ ան շատ բան տեսավ ու լսեց, ու հետո գնաց պատմել աշխարհին։

Մոնսինյոր Դոլչին, որ պապին նվիրակն էր Պոլսո մեջ և հայերուն ալ բարեկամ, մեծ բան մը չկրցավ ընել։ Իր միջամտությունները կաթոլիկներու ի նպաստ բարեխոսություննե-րե անդին չանցան։

Հայը իսկապես անապավեն էր։

IV.— Շփոթած հայը

Ի՛նչ պիտի կրնար ընել խեղճ հայը, այս-պես անպաշտպան, ահավոր վտանգին առջև, որ կսպառնար իր բովանդակ գոյությանը։

Շփոթեցավ ամենեն առաջ ինքը, հայ ղե-կավարությունը,— ազգային իշխանություն-ներն ըլլան թե հայ կուսակցությունները։ Զա-վեն պատրիարք Աթոռ եկեր էր 1913-ին, ճակատագրական պահու մը. բախտն ունե-ցեր էր մասնակից ըլլալու մեր խանդավա-ռության վերջին օրերուն, դիմավորելու հա-մար քիչ հետո բովանդակ տագնապները հայ ժողովուրդի փորձության և անդրհանքի դժնդակ տարիներուն։

Այնքան զարհուրելի էր ստեղծված պահը, որ ոչ ինք, ոչ ալ ազգային վարչությունը, որուն գլուխն էր, կրնային ճար մը գտնել գավառներեն հասնիլ սկսող ողորմուկ ճիչե-րուն։

Ուրիշ բան չէր մնար իրենց ընել, բայց եթե ողոքել գազանը՝ հայոց հավատարմական զգացումներուն մասին հազար հավաստիք տալով։

Պատերազմի հայտարարությենեն քիչ հետո, ազգային վարչությունը, ինչպես գրված է խառն ժողովի 1914 օգոստոս 29-ի տեղեա-գրության մեջ, կորոշեր օսմանյան կառավա-րության հետ ունեցած իր հարաբերություններ մեջ վերջին աստիճանի զգույշ և հաշտարար ուղղություն մը որդեգրել։ Իսկ 1914 հոկտեմ-բեր 20-ին (նոյեմբեր 2), Թուրքիո պատե-րազմի մտնելու վաղորդայնին, կհանձնարա-րեր պատրիարքին՝ լավ հարաբերություններ մշակել Իթթիհադական կուսակցության և կառավարության հետ և ջանալ մեղմացնել գավառներու կացությունը, կորոշեր հանուն հայ վաճառականներու և բարեկեցիկ դասա-կարգին, շրջուն հիվանդանոց մը ստեղծել իր

բոլոր կազմածովը, և հրահանգ ուղղել ամենուրեք, որպեսզի հայ ժողովուրդը անթերի կատարե իրեն վիճակված պարտականությունները։

Պատրիարքարանը համապատասխան հրահանգներ կփոխանցներ գավառի առաջնորդներուն ալ, թելադրելով իր շրջաբերականին մեջ սիրալիր հարաբերություններ մշակել տեղական իշխանությանց հետ և օժանդակել անոնց ջանքերուն, խոհեմ ըլլալ իրենց դիմումներուն մեջ, և հորդոր կարդալ ժողովուրդին, որպեսզի իրենց հարևաններուն հետ վարվին սիրալիր, «օգնեն անոնց անձնվիրությամբ և զոհողությամբ, հարգեն անոնց զգացումները, հեռանան և շրջահայաց ըլլան ամեն ժամանակ ավելի, առիթ չտան թյուրիմացությանց, և ըստ ամենայնի զգույշ ըլլան իրենց խոսքերուն և վարմունքին մեջ, զի հայտնի է, թե այսպիսի ժամանակի մը մեջ մարդիկ չզազգիր և դյուրագրգիռ կդառնան»։

Նվազ շփոթած և անճրկած չէին նաև հայ կուսակցությունները։

Այս տողերը գրողը գիտե, որևէ մեկեն ավելի, հուսահատությունն ու բարոյալքությունը, որ կտիրեին Պոլսո հայ ղեկավարության մեջ մեծ աղետի նախօրյակին։ Լավատես քիչերը միայն կային, և անոնք ալ այն միամիտներն էին, որ կկարծեին, թե գերմաններու ներկայության թուրքերը պիտի չհամարձակեին ծայրահեղությանց դիմել։ Բոլոր մյուսները, անմիջական վտանգի մը սարսափին հաճախանքին տակ, իրենց բոլոր կարելին կընեին, որպեսզի ղգույշ մնա հայ ժողովուրդը, և թուրք վարիչները գրգռելու ամենադույզն առիթ չտա։ Շատ ալ չմեղադրենք հիմա անոնց այս մտավախությունը, թեև ճիշտ է, որ այս մտավախությունն էր, որ հայերը դրդեց ամենուրեք շտապել իրենց զենքերն հանձնելու և գառնուկի պես երթալ սպանդանոց։ Եվ եթե տեղ-տեղ հայերը կրցան ընդվզման պահեր արձանագրել ինչպես Վանի և Սվեդիո (Մուսա լեռ) մեջ, և կամ սուղի ծախել իրենց արյունը, ինչպես այդ Շաբին-Գարահիսարի և Եդեսիո մեջ պատահեցավ, տեղական նախաձեռնությանց արդյունքն էր միայն, և ոչ թե ընդհանուր մտայնության մը պտուղը։

Դաշնակցությունը, օրինակ, Կարնո իր ընդհանուր ժողովին ետ դարձեր էր սահմրակած։ Մերժեր էր Իթթիհադի երեք ներկայացուցիչներուն՝ Բեհաեդդին Շաքիրի, Օմեր Նաջիի և Հիլմիի իրեն ըրած առաջարկը պատերազմի պարագային Թուրքիո գործակցելու Կովկասի մեջ, և բավականացեր էր ըսելու անոնց, որ հայը ստիպված է իր քաղաքացիի պարտքը կատարել ինչպես Թուրքիո մեջ Թուրքիո հանդեպ, նույնպես Ռուսիո մեջ՝ ռուս պետության։ Գիտեր, որ սպառնալիքը, զոր այդ առթիվ զգացուցեր էին իրեն Իթթիհադի պատվիրակները, բլըֆ մը չէր, և կզգար հետևաբար, որ պիտի չուշանա տագնապի պահը։ Իրեն ուրիշ բան չէր մնացած ընել, եթե ոչ սպասել, կասկածով ու դողով, դեպքերու ընթացքին, մանավանդ քանի Իթթիհադի պետերը, Թալեաթն իրենց գլուխը, սպառնալիքներ կզգացնեին շարունակ, Կովկասի դեպքերուն համար պատասխանատու հռչակելով ամբողջ հայ ժողովուրդը։

Հնչակյանները կանցնեին տարբեր տագնապ մը։ Հորմեհետե 1914 հուլիսին ձերբակալված էին իրենց տեսուչները, անոնց գլխավոր ղեկավարները արդեն նետված էին բանտ, և կսպասեին չարագուշակ ճակատագրի մը, որ պիտի չուշանար։

Հուսեին Ջահիդ կպատմե իր հուշերուն մեջ Վարդգեսի դիմումը Թալեաթ փաշային, տեղահանութենեն քիչ առաջ, երբ արդեն շշուկներ կային ոստիկանության ղրկված ցանկերու մասին։ Թալեաթ, ակնարկելով այն միջամտության, զոր ցարական Ռուսիա փորձեց Արևելյան նահանգներու հայերուն ի նպաստ, Բալկանյան պատերազմեն հետո, կրսե հայոց համար միջամտություն ընելու եկող հայ երեսփոխանին.

— Հիմա կարգը մերն է, Վարդգես։ Գիտե՞ս յա, ինչպես արյուն փսխել ուիլք ինձի։ Գիտե՞ս յա, ի՞նչ տեսակ փորձանք մը բացած էիք այս երկրի գլխուն...

«Վարդգեսի հիշեցնելե հետո,— կշարունակե Ջահիդ,— թե կառավարությունը ինչ տառապանքներ կրեց այդ ձեռնարկին վրա, զոր հայ կոմիտեները քաջալերեցին և այնքան մեծ երջանկությամբ դիմավորեցին, Թալեաթ ավելցուց.

— Քաղաքականություն է այս, Վարդգես։ Կարգով է։ Հիմա մենք ենք ուժեղը։ Թրքական շահը ինչ որ պահանջե, այն պիտի ընենք...»։

Եվ մյուս կողմե աղեխարշ լուրերը կշարունակեին հասնիլ գավառներեն։ Սեբաստիայեն Երզնկա տանող ճամբուն վրա, Սու-շեհրի մոտերը, 1914 դեկտեմբեր 18/31-ին, սպանվեր էր Երզնկայի առաջնորդ Սահակ վարդապետ Օգաբաշյան, երբ իր պաշտոնատեղին կերթար։ Ինչպես պիտի ապացուցվեր հետո, ոճրագործները Սեբաստիո արյունկզակ կուսակալին՝ Մուամմերի կողմե ղրկված էին ետևեն։

Ու ադեն հետո հարստահարությանց և սպանությանց ամբողջ շարք մը սկսեր էր գավառներու մեջ, զարհուրանքով լեցնելով հայերը գրեթե ամենուրեք և անոնց թախանձագին ճիչերը հասցնելով մայրաքաղաք։

Գավառեն հասնող այս նոր գույժերը սարսափով կհամակեին անշուշտ Պոլիսը ևս։

Ազգային իշխանությունները անճրկած էին։ Ազգային երեսփոխանական ժողովը վաղուց էր ընդհատած իր նիստերը, ու Պատրիարքարանը լքված կմնար իր բախտին։ Ան յոխպեվեցավ խորհրդակցական վերջին ժողովի մը կանչել հայ երեսփոխաններն ու ծերակուտականները, ու անոնց հետ կարգ մը կարևոր ազգայիններ ալ։ Պատմական այդ ժողովը տեղի ունեցավ 1915 ապրիլ 10/23-ին։ Դժբախտաբար բացակա էին հայ երեսփոխաններն և ծերակուտականներն ոմանք։ Երկար խորհրդակցություններե հետո, ժողովը պաշտոն տվավ Գրիգոր Զոհրապի և Զաբել Դիլբերի՝ խմբագրել հիշատակագիր մը, զոր հատուկ պատվիրակություն մը պիտի տաններ կառավարության՝ հայոց հավատարմությունը բացատրելու, գավառներու կացությունը ներկայացնելու, և պետության բարյացակամության կոչում ընելու համար։

... Եվ մինչդեռ ժողովը հայոց ցավերուն համար ճար կմտածեր, անդին, թուրք կառավարությունը իր վերջին հրահանգները կարձակեր, ձերբակալելու համար հայ մտավոր ընտրանին Պոլսո և գավառներու մեջ։

Ապրիլ 24-ի նախընդօրն էր...։

V.— «Դժոխային մեքենան»

Մինչ հայը, այսպես շփոթած, չէր գիտեր ուրկե՛ ապավեն աղերսե իրեն, կազմ ու պատրաստ էին արդեն իր դահիճները՝ խողխողելու համար իրենց հեք զոհը։

Երեք ճիվաղներ, որոնք Բեհաեդդին Շաքիրը, Նազըմն ու Շյուքրին էին, Իթթիհադի ընդհանուր կեդրոնին հրամանով, կազմած էին վաղուց մեծ եղեռնին ծրագիրը, և արդեն տեսնված էին բոլոր կանխապատրաստությունները՝ կիրարկության դնելու համար այդ ծրագիրը իր պատեհ ժամուն։

Եղեռնի տասնաբանյան, զոր մշակեր էր հրեշներու երրյակը, հետևյալ կետերը ուներ.

ա. Խափանել բոլոր հայ ընկերակցությունները, ձերբակալել անոնց ղեկավարությունը, ինչպես և բոլոր անոնք, որոնք որևէ առեն Իթթիհադի հանդեպ թշնամական կեցվածք ունեցած էին, աքսորել զանոնք դեպի Մուսուլի և Բաղդադի շրջանները, և բնաջնջել զանոնք ճամբան կամ ուրիշ տեղեր։

բ. Դիմադրության անատակ ձգելու համար հայ ժողովուրդը սարսափներու ազդանշանը տրված առեն, հայերեն հավաքել նախապես ամեն տեսակ զենքերը։

գ. Կարելի բոլոր միջոցներով իսլամական կարծիքը գրգռել ընդդեմ հայերուն, և մասնավորապես Վանի, Կարինի կամ Ադանայի նման շրջաններու մեջ, ուր հայերը իրենց հին գործունեությամբ իսլամներու մեջ ևս ոխ հասունցուցած էին, կազմակերպել դեպքեր՝ այդ ոխը ավելի ևս գրգռելու համար։

դ. Կարինի, Վանի, Խարբերդի և Բաղեշի նման վայրերու մեջ, իսլամ ժողովուրդին թունավորել սարսափներու կիրարկությունը, զորքերը և կարգապահական ուժերը իբրև թե ջարդերը կարգադրելու գործածելով, իսկ Ադանայի, Սեբաստիո, Բրուսայի, Նիկոմիդիո և Զմյուռնիո պես տեղեր, ընդհակառակը, զինվորական ուժով օգնել իսլամներուն իրենց նախճիրներուն մեջ։

ե. Տառացի կերպով բնաջնջել հիսունեն վար այրերը, իսկ աղջիկներն ու մանուկները պահել՝ իսլամացվելու համար։

զ. Անհետացնել արտասահման խույս տալ հաջողողներու Թուրքիո պարագաները։

է. Զանազան պատրվակներով իրենց պաշտոններեն քշել պետական հայ պաշտոնյաները։

ը. Բանակին մեջ գտնվող հայերը ջնջել պատշաճ ձևերով։

թ. Գործողությունները սկսիլ ամենուրեք միևնույն ժամանակ, և այսպիսով հնարավորություն չտալ հայերուն՝ ինքնապաշտպանության համար պատրաստվելու։

ժ. Բնաջնջման այս ծրագիրը գաղտնի պահել քանի մը հոգիի մեջ միայն, մինչև կիրարկության վայրկյանը։

Թալեաթ, իր հավանությունը տալե հետո երրյակ շարագործներու եղեռնական ծրագրին հայոց տարագրության և անոր հարակից միջոցառումներուն մասին, հետևյալ հրահանգը կուղղեր.

«Հայերուն իրենց բնակավայրեն հանվելով, բանակին չկարենալ սպառնալու և երկրին խաղաղությունը չկարենալ խանգարելու համար ուրիշ վայրեր ղրկվիլը քաղաքային և զինվորական իշխանության կողմե որոշված ըլլալուն, այս որոշումին շուտափույթ գործադրության շատ մեծ պետք կա։

Իրականության մեջ իր գոյությունը պաշտպանելու համար, պատերազմի դաշտերուն վրա, իր հազարավոր զավակները զոհող և այս պահուն առանց ցեղի և կրոնի խտրության, իր բոլոր հպատակներեն հայրենիքին հանդեպ ամեն ժամանակ ավելի աջակցություն ակնկալող կառավարության մը, զինքը ներսեն ղրաղեցնողներուն և կռնակեն զարնելու աշխատողներուն հանդեպ այս որոշման հանգիլը և միևնույն ժամանակ անոր գործադրության մեջ չմերանալը՝ շատ բնական և օրինական իրավունք է։

Ըստ այնմ հարկ եղածին լուրջ կերպով գործադրությունը կհրահանգվի»։

Պաշտոնական տարազն էր միայն սա սարսափներուն, զորս ծրագրած էին Իթթիհադն ու իր գլխավորած կառավարությունը, ինչպես

պիտի ըլլային այն օրինքները, զորս սույն կառավարությունը պիտի հրատարակեր առիթ առիթ, օրինական ձև տալու համար զենքերու խուզարկության, տեղահանության, լքյալ գույքերու հափշտակության և այլն։ Այս բոլորը իրենց հիմնական նպատակին առաջնորդելու համար, անհրաժեշտ էին սակայն այնպիսի հրեշային մեթոդներ, որոնք գաղտնի միայն կրնային հաղորդվիլ գործադիր օրգաններուն։ Եվ եթե պատմությունը շատ բան չգիտցավ գաղտնի հրահանգներուն մասին, որոնք տրված էին բերանացի կամ հատուկ պատվիրակներու միջոցով, ան սակայն տեղյակ էր ծածկագիր հրահանգներու ամբողջ կույտի մը, զոր եղեռնը չքացնել չէր կրցեր։ Անոնցմե ոմանց մենք ևս պիտի ծանոթանանք այս հոդվածաշարքին ընթացքին։

Ահա, օրինակ, սահմռկեցուցիչ հրահանգը, զոր հայ ժողովուրդի մյուս դահիճը, պատերազմական նախարար Էնվեր փաշան, ուղղած էր ծածկագիր՝ զինվորական հրամանատարությանց.

«Ներկա կացության բերմամբ, բարձրագույն հրամանով որոշված է հայոց ամբողջական բնաջնջումը և անոնց մասին հետևյալը պիտի գործադրվի.

1. Թուրքիո մեջ գտնվող հայերը և հայ անունը կրող ոչ զինվոր անհատները (բաշըբողուկ), հինգ տարեկանեն վար մանուկներեն զատ, դուրս պիտի հանվին քաղաքներեն ու գյուղերեն և պիտի սպաննվին։

2. Բանակին մեջ ծառայող բոլոր հայ զինվորները, իրենց զինվորական շրջանեն (մանուրկա) հեռացվելով, հրացանազարկ պիտի ըլլան, առանց որևէ դեպքի տեղի տալու և ժողովուրդին տեսությենեն գաղտնաբար։

3. Բանակին մեջ ծառայող հայ սպաներն ալ հսկողության տակ պիտի առնվին, իրենց պատկանած զորանոցներու կեդրոններուն մեջ։

4. Վերոհիշյալ երեք հոդվածներուն տրամադրությունները պիտի հաղորդվին բանակի հրամանատարներուն, որպեսզի այդ հաղորդագրություններեն մինչև 48 ժամ կիրարկության դրվին անոնք։

Չարագործ ձեռքը Պոլսեն պիտի սկսեր իր կարմիր քաղը։ Ու ադոր համար ուրիշ մեղսակիցներու ան կարիք ուներ։

Արդարև, Պոլսո մտավորականության ձերբակալությունն ու աքսորը իրթիհադ վստահեցավ ուրիշ երեք ճիվաղներու՝ Բեդրիին, Ջանպոլադին և Ռեշադին. առաջինը ոստիկանության ընդհանուր տնօրենն էր, երկրորդը պետն էր հանրային ապահովության, և երրորդը՝ ոստիկանության քաղաքական ճյուղին տնօրենը։ Ռեշադ ջուրի պես հայերեն ալ գիտեր, և թեև, բացի իր օգնական Ալի Ռիզայեն, հայ օժանդակներ ալ ուներ, բայց աստոնց գրեթե պետքը չէր զգար։

Ասոնք էին, որ շարժման պիտի դնեին «դժոխային մեքենան», սկսելով Պոլսո հայ մտավորականության ձերբակալութենեն։

VI.— «Պատեհ ժամը»

Ինչո՞ւ թուրքերը այդ ժամն ընտրեցին։ Ճշտիվ չգիտցվեցավ այդ։

Սա միայն ստույգ է, որ 1915-ի գարունը շփոթության մեջ գտավ թուրքերը։ Էնվեր, հունվարի վերջերը, նվաստացած գարձեր էր Կովկասի ճակատեն, Սարըղամիշի իր ձախողած արկածախնդրութենեն հետո, որ, ըստ թուրք աղբյուրներու, 50 000 զոհ արժած էր թուրք բանակին։ Ջախողությամբ վերջացեր էր նույնպես, փետրվար 2-ին, Ջեմալի արկածախնդրությունը Սվեզն անցնելու։

Հոգեկան այդ բեկումի օրերուն էր, որ ահա, փետրվարի կեսին, դաշնակից նավատորմը Դարդանելը կսկսեր ռմբակոծել։

Ով որ այդ օրերուն Պոլիս եղավ, պետք է հիշե խուճապը, որ իսկույն տիրեց մայրաքաղաքին մեջ։ Մինչ քրիստոնյա բնակչությունը ցնծության օրեր կապրեր մոտալուտ ազատության մը հույսով, թուրքերը շփոթած էին, և իսկույն պատրաստություններ սկսան տեսնել՝ Անադոլու փոխադրելու համար սուլթանն ու կառավարությունը։

Պատմելով խուճապը, որ մարտի սկիզբը կտիրեր Պոլսո մեջ, ամերիկյան դեսպան Մորգենթաու իր հուշերուն մեջ կգրե, թե «Այդ պահուն, մայրաքաղաքին մեկնիլ սկսած էին արդեն. կիներ և մանուկներ երկրին ներսերը կտարվեին. դրամատուները հրահանգ ունեին իրենց ոսկիները Փոքր Ասիա ղրկելու. Բարձրագույն դռան դիվանաթուղթերը էսկիշեհիր կփոխադրվեին. և միևնույն ատեն գրեթե բոլոր դեսպանները և իրենց հետևորդները և պաշտոնատարները իրենց կարգադրությունները կընեին հանդեպ այն պարագային, որ քաղաքը պարպել ստիպողական կդառնար։ Կոստանդնուպոլսո արվեստի գործերեն մեծ մաս մը թաղած էին նկուղներու մեջ, կամ որևէ եղանակով պահպանած։ ... Բոլոր կանխապատրաստությունները լրացած էին. կայարանին մեջ այն կառախումբերը, որոնք պատրաստ էին սուլթանը, կառավարությունը և դեսպանները Փոքր Ասիա տանիլ, շոգիի վրա էին, պատրաստ առաջին նշանին վրա մեկնելու, և մենք ամենքս կսպասեինք համաձայնական նավատորմին հաղթական ժամանումին»։

Եվ արդարև, մարտ 18-ին անգլիական և ֆրանսական տորմիղները կռմբակոծեին Դարդանելը, բայց, ավա՛ղ, «Պուվե»-ն, «Օ-

սեան»-ը և «Իռեզիստիբլ»-ը վրա տալե հետո, կքաշվեին ետ։ Յնծութեյան օր մը եղավ այդ թուրքերուն և գերմաններուն համար։

Կվախցվեր, սակայն, որ դաշնակիցները այս ձախողութենեն առանց հուսահատելու, զորք ցամաք կհանեն Թերակղզին։ Այնպես որ տագնապը փարատած չէր, ու խուճապը միշտ կտիրեր։

Թուրքերուն համար պատեհ ժամն էր Պոլսո հայ ղեկավարությունը քշելու երկրին ներսերը։ Պետք չէր որ Պոլիս գտնվեր ան, երբ համաձայնականները մայրաքաղաք մտնեին։

Ավելցնենք, որ թուրք վարիչներուն կասկածը անտեղի չէր։ Ապրիլ 25-ին, հայ մտավորականության ձերբակալություններեն օր մը վերջ, անգլիացիք ու ֆրանսացիք զորք ցամաք կհանեին Գելիբոլու։ Բայց, ավա՛ղ, անփառունակ պիտի վերջանար այս փորձն ալ։

VII.— Ապրիլյան հունձքը

Ուժերես վեր է դիմանալ սարսուռին, որ հոգիս կբռնկտե այս պահուս, և առանց արցունքի այս տողերը գրի առնել սկսիլ։

Ընթերցողը թող ներե, եթե գրիչս պահ մը դնեմ վար, ու աչքերս փակեմ երկյուղած, մինչև որ մտքիս առջևեն կարգով անցնին ուրվականները այնքան, այնքա՛ն եղբայրներու, զորս այն սև գիշերը ճիվաղը մեզմե խլեց, և որոնք, ահա, կես դար հետո ալ, մեզ կժպտին նույնքան մտերիմ և նույնքան նուշ, ինչպես այն տարիներուն, երբ լեցված էինք բոլորս հույսերով ու տեսիլքներով։

Կես դար հետո ալ անոնք մեր մեջն են, մեր շուրջն ու մեր հոգիներուն մեջ, ու ճիվաղը, որ զանոնք հնձեց, ինքը չքացավ ուրվականի մը պես...։

... Մեզմե շատերուն համար անակնկալ մը չեղավ հարվածը, որ հայ ժողովուրդի գլխուն իջավ ապրիլ 24-ի այդ չարաշուք գիշերը։ Վաղուց է լուր ունեինք ցանկերու մասին, որոնք կսպասեին պահականոցները գոց պահարաններու մեջ հունձքի գիշերվան։

Ու ահա ժողովուրդի դահիճները պահը հասած սեպեցին, սկսելու համար զոհերուն առաջին քաղը, մեծ սարսափներուն չսկսած։

Իրականին մեջ ձերբակալությունները ապրիլ 24-ի շաբաթ օրը ցերեկին սկսան։ Քանի մը հոգի ոստիկանությունը առավ տարավ իրենց աշխատած տեղերեն։ Լուրը պտտելով, թաղե թաղ, տարածեց առաջին սարսափը։ Գիշերն էր սակայն, որ ճիվաղը պտտեցավ տուները ու հավաքեց իր չարաշուք ցանկին մեջ գտնվողները։ Ու մեքենահանի բանտին մեջ շուտով զիրար գտան հայ կուսակցությանց կարկառուն դեմքերը, ու ասոնց հետ մեկտեղ շուրջ 200 ուրիշներ, մեծ մասամբ գրագետ ու լրագրող, հոգևորական և ուսուցիչ, բժիշկ և փաստաբան, ամբողջ փաղանգ մը գրչի ու մտքի մարդոց, որոնք աչքի փուշ էին թուրք վարիչներուն։

Առտուն սարսափով բացավ Պոլիս աչքերը։ Գուժը տարածված էր ամբողջ մայրաքաղաքին մեջ, կսկիծ ու երկյուղ սփռելով։

Օր մը և գիշեր մը կեդրոնական բանտը պիտի անցնեին ձերբակալվածները, իսկ ապրիլ 25-ին անոնք ճամբա պիտի հանվեին Պոլսեն ու պիտի տարվեին, Իզմիթի, Բիլեջիկի և Էսկիշեհիրի ճամբով մինչև Սինջենքյոյ, հոն բաժնվելու համար երկու խումբի։ Մեծ խումբը, որ ամենեն «վտանգավոր» սեպվածներեն կազմված էր, պիտի ղրկվեր Այաշ, մյուսը, որ նվազ վտանգավորներու խումբն էր, Ջանղըրը պիտի տարվեր։

Պոլսո մեջ կանգ չառին սակայն ձերբակալությունները։ Անոնք շարունակվեցան դեռ քանի մը շաբաթ, ու ձեռք անցան այս կերպով շատերն անոնցմե, զորս ոստիկանությունը չէր գտեր առաջին գիշերը, և նաև նոր կասկածելիներ, որոնք բոլորն ալ ղրկվեցան մեկնողներուն ետևեն, Այաշ կամ Ջանղըրը։

Ջորս շաբաթ հետո, այն է մայիս 21-ին, պիտի ձերբակալվեին խորհրդարանի հայ անդամներեն երկուքն ալ, Զոհրապ ու Վարդգես, ու պիտի քշվեին ավելի հեռու։

Իսկ անոնցմե ավելի քան տարի մը հետո, Պոլսեն պիտի տարագրվեր Զավեն պատրիարքն ալ։

Ապրիլյան հունձքը Պոլսո մեջ վերջ կգտներ այս կերպով։ Իթթիհադ գլխատած էր հայ ժողովուրդը հանձին իր ղեկավարության, ու դայն այլևս կրնար պահել մշտական անդոհանքի մը սարսափին տակ։

Թշնամին միայն Պոլսեն չէր որ քաղեց իր առաջին զոհերը։ Ան ստիպված էր գավառը ևս անգլուխ ձգել մարտիրոսագրության պահուն։ Առաջին անգամ, Պոլսեն իսկ առաջ, ան Վանեն սկսած էր, երբ դեռ նույնիսկ ոտքի ելած չէր Վանը։ Ապրիլ 16-ին և 17-ին, ան ձեռք անցուցեր էր հոն իշխանն ու Վռամյանը և զանոնք խողխողեր ճամբան։ Եվ մինչդեռ Պոլսո մեջ ապրիլ 24-ին սկսեր էին ձերբակալությունները մինչև մայիս 19 տևելու համար, ապրիլեն ան սկսավ իր որսը Պոլսո շրջաններուն մեջ ալ, ինչպես Իզմիր, Պարտիզակ, Բալըքեսիր և Ադաբազար։ Հայ կառկառուն դեմքերու այս հունձքը մայիսի առաջին շաբաթներուն տեղի պիտի ունենար գրեթե ամենուրեք, Մեծ և Փոքր Հայքերեն մինչև Կիլիկիա։

Մայիսի կիսուն հայ ժողովուրդը որևէ տեղ գլուխ չուներ ա՛լ։

**
*

Հունձքը, զոր ճիվաղը քաղեց այդ չարաշուք գիշերը, առաջին քայլն էր հայ ժողովուրդը ընդարմացնելու։ Ան ժողվեց ինչ որ անհրաժեշտ կարծեց առաջին պահուն, ամենեն կարկառուն դեմքերը՝ աննշան մարդոց, ու անմեղը՝ մեղավոր կարծածին հետ։ Պոլսո մտավորականության տարագրումեն քիչ հետո, Թալեաթ ըսած է Պոլսո գերման դեսպան Վանգենհայմին, թե հարմար վայրկյան էր աքսորելու համար անձեր, որոնք կրնային դեր մը խաղալ, ավելցնելով որ, բնականաբար, շատերը որևէ կերպով հանցավոր չէին[1]։

Սուգիվ, Պոլսեն աքսոր քշված այդ հարյուրավոր մարդոց մեջ կային դիպվածով ձերբակալվածներ, ինչպես և մարդիկ, որոնք անվան շփոթության զոհ էին միայն։ Ադոնցմե ոմանք իսկապես ետ դարձվեցան հետո, բայց շատեր ալ ոստիկանության շվարման մեղքը քավեցին։

Ջանդրրիի իրենց աքսորավայրեն Պոլիս վերադարձվեցան նաև մոտ երկու տասնյակ անձեր, որոնց պարագաները հաջողեր էին զորավոր միջամտություններ ապահովել։ Այսշի աքսորականներեն քիչերու միայն օգնեցին միջամտությունները. Իթթիհադի աչքին վտանգավոր էին Այաշ ղրկվածներեն գրեթե բոլորը։

Ու տեղն է հիշել, որ աքսոր քշվողներուն մեջ կային նաև այնպիսիները, որոնք թուրք քերթերու կաշխատակիցին առավելապես և որևէ դեր չունեին հայ կյանքեն ներս. անբաղձալի սեպեց Իթթիհադը զանոնք ալ, և ուզեց այս առթիվ անոնցմե ևս ազատվիլ։

**
*

Ապրիլ 24-ը խորհրդանշան մըն է։ Ան կխորհրդանշե նախ այն մեծ հարվածը, զոր հայ միտքը կրեց սարսափի այդ տարիներուն։ Դեմքերը, զորս իրենց տուներեն ժողվեց այդ սև գիշերը կամ անոր հաջորդող օրերուն Պոլսեն ու գավառներեն, և զորս ա՛լ ետ չդարձուց, իրենց մեջ ունեին ստվար հույլ մը մտավորականներու, որոնք կորիզն էին հոգեկան այն մեծ ճիգին, զոր կփորձեր հայ ժողովուրդի արևմտյան հատվածը, տեսիլքներով և հույսերով բռնկած այդ տարիներուն։ Կորուստը ահավոր էր հայ մտքին համար, նախ իր զոհերու թիվովը, և հետո այն մեծ բացով, զոր անոնցմե շատերը պիտի բանային արևմտահայ գրականության մեջ, գրեթե որբ ձգելով զայն։ Շատ տարիներու պետք պիտի ըլլար, որ այդ բացը մասամբ գոցվեր. բայց ոմանք, ավա՜ղ, անփոխարինելի պիտի մնային շատ մը սերունդներու համար...։

Ապրիլ 24-ը կխորհրդանշե նաև եղեռնը ինքնին։ Անով սկսավ մեծ ողբերգությունը, ու հետևաբար ան է կոչված դառնալու թվականը, որ ամեն տարի եղեռնը մեզ պիտի հիշեցնե։ Ան մեր միտքը կբերե ամեն տարի ոչ միայն կարկառուն դեմքերը, որոնց վրա իր առաջին ակնարկը հառեց դահիճը, այլ բոլորը, մեծ ու պզտիկ, հայտնի և աննշան, բոլորը, որ իրենց արյունը տվին հանուն հայ ժողովուրդին։

VIII.— Տեղահանությունը

Ապրիլ 24-ը աղետներուն սկիզբն էր միայն, կամ ավելի ճիշտ՝ առաջին հանգրվանը այն սարսափներուն, զորս թուրք վարիչները պիտի շղթայազերծեին շուտով։

Եվրոպան՝ հետուն, ինքը՝ քաջալերված իր դինակիցներեն, և հայ ժողովուրդը՝ առանց ղեկի ու ղեկավարի, Իթթիհադին համար լավագույն պահն էր դժոխային դավը ի կիր ածելու։

Ու արդարև, 1915 տարվան ամբողջ ամառը հանդիսատես եղավ մեծ ողբերգության մը, որ տեղահանության մեղմ անունին տակ, ավերածությունն էր բուվանդակ Հայոց աշխարհին։

Ան սկսավ մայիսի կեսին, ճիշտ այն օրերուն, երբ ոստիկանությունը ավարտած էր իր չարաշուք առաքելությունը—աքսոր էր քշեր հայ ղեկավարությունը ամեն տեղ։

Տեղահանությունն սկսելե առաջ, երիտասարդ թուրքերը անհրաժեշտ գտան, ինչպես հիշեցինք, հայոց մոտ գտնված զենքերը հավաքել նախ. այդ կերպով պիտի կանխեին հավանական որևէ դիմադրություն հայերու կողմե։ Ու պետք է ըսել, որ առաջին զարհուրանքները այդ խուզարկութանց առթիվ սկսան։ Թուրք ոստիկանությունը չարշարանքներուն ամեն տեսակը կիրարկեց պահված զենքերը գտնելու համար, ու առաջին գաղանները այդ առթիվ էր, որ հայտնվեցան։ Բավական է հիշել Պոլսո կեդրոնական բանտի տնօրեն Զեքեջի Իբրահիմը, զոր մենք ալ ճանչցանք, և որ Պոլսո մտավորականությունը իր աքսորավայրը հասցնելե հետո, հատկացվեր էր Բյութանիո շրջանի զենքերը հավաքելու, այսինքն չարշարելու և խոշտանգելու անոնց տեղերը շմատնանշողները։

1915 մայիս 14/27-ին է, որ տեղահանության օրենքը լույս կտեսներ, մինչ իր հրատարակութենեն առաջ ան կիրարկվիլ սկսած էր արդեն։ Ներքին գործերու նախարարությունը, որ է ըսել Թալեաթ, մայիսի սկիզբեն իսկ գաղտնի շրջաբերական ղրկած էր գավա-

[1] Լեփսիուս, էջ 60։

ռային իշխանութեանց՝ տեղահանութեանց ձեւակերպութեանց մասին, իսկ մայիս 15-ին կարին սկսած էր արդէն տեղահան ըլլալ։

Ու որքա՜ն անմեղ կհնչեր թշվառական այդ օրենքը։ Ան միջոցներ կնախատեսեր միայն անոնց նկատմամբ, որ պետութեան դեմ կրմբոստանային, և կհրահանգեր տեղահան ընել այն վայրերը լոկ, ուր լրտեսութիւն և դավաճանութիւն կհաստատեին տեղական իշխանութիւնները։

«Երբ ժողովուրդին կողմէ,— կըսեր օրենքը,— որևիցե կերպով կառավարութեան հրամաններուն և երկրին պաշտպանութեան, արդարութեան պահպանումին վերաբերյալ միջոցներու դեմ անսաստում, զենքով դիմադրութիւն տեսնվի, բանակի և զորաբաժիններու հրամանատարները ևասոնց փոխանորդները, անկախ կեդրոններու. հրամանատարները, անմիջապես զինվորական ուժով ն խիստ կերպով պատժելու և այս դիմադրութիւնը հիմնովին բնաջնջելու արտոնված և պարտավոր են։

Զորաբանակի և անկախ կեդրոններու հրամանատարները, զինվորական պետքին համաձայն, լրտեսութիւն և դավաճանութիւն զգացված գյուղ և գյուղախումբերու ժողովուրդը կրնան անհատապես և ամբողջութեամբ ուրիշ վայրեր տարագրել և բնակեցնել»։

Թե ի՛նչպես կիրարկվեցավ այդ տեղահանութիւնը, վեր է մարդկային ամեն երևակայութենեն։ Պատմութեան մեջ շատ քիչ անգամ տեսնված վայրագութեամբ մը։ Դժվար թե վաղվան մարդիկը կարենան հավատալ այն բոլորին, զոր տարագրութիւններեն և ջարդերեն ճողոպրածները պիտի պատմեին մեզի, և ամբողջ աշխարհին։

Տեղահանութեանց առթիվ կիրարկված խժդժութեանց արձագանքը կհասներ շուտով Պոլիս, սարսուռ մը պատցնելով տունե-տուն, ու կանցներ նաև արտասահման, շնորհիվ բուլղար բարեկամներու, սահմռկեցնելով դուրսի աշխարհը ևս։

Այդ առաջին սարսափներու լուրերուն ազդեցութեան տակ էր, որ համաձայնական պետութիւնները, Ռուսիո, Ֆրանսայի, Անգլիո ստորագրութեամբ, 1915 մայիս 24-ին հետևյալ ազդարարագիրը կուղղեին Թուրքիո, «Հավաս» գործակալութեան միջոցով.

«Օսմանյան իշխանութեանց թուլլտվութեամբը և անոնց օժանդակութեամբ ջարդեր կկատարվին ամբողջ Անադոլուի և Կիլիկիո մեջ. միևնույն ժամանակ թուրք կառավարութիւնը խիստ միջոցներու ձեռնարկած է Պոլսո մեջ անպաշտպան հայ բնակչութեան դեմ։ Մարդկութեան և քաղաքակրթութեան դեմ Թուրքիո այս ոճիրներուն հանդեպ դաշնակից պետութիւնները հրապարակավ կհայտարարեն թուրք կառավարութեան, թե բոլոր զեկավարները, ինչպես նաև այն բոլոր պաշտոնատարները, որոնք իրենց մասնակցութիւնը բերած են այս ջարդերուն, համաձայնական պետութեանց կողմե անձնապես պատասխանատու պիտի նկատվին»։

Այս ազդարարութեան իրքիհադի կառավարութիւնը հետևյալ շնական պատասխանը կուտար Հունիս 4-ին, գերմանական հեռագրական գործակալութեան՝ «Աժանս Վոլֆ»-ի միջոցով.

«Հայերը հանրային անդորրութիւնը խանգարելու համար որևէ արարքի մեջ չեն գտնված, որով անոնք թուրք կառավարութեան կողմե ոչ մեկ տեսակ հետապնդումի և ճնշողական միջոցներու առարկա չեն եղած, ինչպես նաև հայերուն դեմ որևէ գեշ վարմունք գործադրված չէ երբեք»։

Մինչ այս հեռագիրը կպատեր արտասահման, անդին, Անադոլուի մեջ, սկսած էին արդեն ջարդերը...։

***

Պոլիս տեղահան չեղավ։ Ոչ ոք չգիտցավ, ու ճշգրիտ չի գիտեր մինչև այսօր ալ, թե դահիճը ինչո՛ւ խնայեց անոր։ Հնթիաթներու շատ չհավատանք։ Ամերիկացիներու կամ բուլղարներու սիրույն չէր որ Իթթիհադը պիտի դեգևեր, եթե վճռած ըլլար ապանդանոց դրկել Պոլսո հայերն ալ։ Ո՞վ գիտե ի՛նչ թաքուն հաշիվներ ուներ չդպչելու համար անոնց, ու այդ հաշիվներուն մեջ կառավարութիւնը դեր կրնար խաղացած ըլլալ։

Բայց նվազ ահավոր չեղան չորս տարիները, զորս ապրեցավ Պոլիս, մեկ կողմե տարագրվելու մղձավանջը ամեն վայրկյան սրտին մեջ, և մյուս կողմե անընդհատ լլկվելով իր հոգին գավառներեն ամեն օր հասնող աղեխարշ լուրերու սարսափին տակ։ Ավելին. ոստիկանութիւնը, իր կարգին, հարատև զարհուրանքի տակ կպահեր Պոլիսը. ամեն օր տուն կխուզարկվեր, երբեմն ամբողջ թաղի մը տուները մեկտեղ. ու ամեն խուզարկութեան անպատճառ կասկածելի մը կիյնար ոստիկանութեան ճանկը, ու կքշվեր աքսոր։

Իզմիր ևս աքսոր չդնաց. քանի մը կասկածելի մարդիկ էր, որ տեղվույն ոստիկանութիւնը բռնեց ու քշեց երկրին ներսերը. հայութիւնը իր տեղը մնաց։ Կուսակալ Ռահմին ինքն էր ուղղակի դեմ կեցեր անոր տարագրության, ու իր այդ կեցվածքին մեջ մարգասիրութենեն ավելի, իր նահանգին մեջ տնտեսական տագնապ մը խնայելու մտահոգութիւնը կար անշուշտ, տագնապ, որ կրնար անդրադառնալ ամբողջ երկրին տնտեսու-

թյան պատերազմի այդ փափուկ տարիներուն, և որուն հավանականությունը կեդրոնական կառավարությունը ևս պետք է ստիպած ըլլա հավանիլ Ռահմիի պնդումներուն։

Եթե Սուրիո հայերը տեղահան չեղան, նույնպես չվերագրենք Ջեմալ փաշայի մարդասիրության, և ոչ ալ անոր տարակարծությունները տերահռչակ երրորդության իր մյուս երկու լծակիցներու՝ Էնվերի և Թալեաթի հետ։ Ջեմալ այդ պահուն զբաղած էր արաբները բնաջնջելով իբրև վտանգ մը երկրին, մինչ հայը այլևս վտանգ մը չէր, Հայոց աշխարհն այդքան հեռու։ Ասկե զատ, Հալեպ այլապես տուրք կուտար եղեռնին. իր ծոցեն կանցնեին հեռուներեն եկող քարավանները, սպանդանոց երթալու իրենց ճամբուն վրա։

Երկրին մյուս հայաշատ կեդրոններեն Կուտինան և մասամբ ալ Կոնիան չբշվեցան երկրին ներսերը։ Ու հոդ արդեն դեր խաղաց նաև ազնիվ կեցվածքը պատվական երկու թուրքերու, որոնք Ջեմալ և Թալիք Ալի բեյերն էին։ Ավելցնենք, որ այդ քաղաքներեն անցնող հայ քարավաններեն շատեր ևս փրկվեցան տեղացիներուն հետ մեկտեղ։

**
*

Տեղահանությունը սկսեր էր ամենեն առաջ Կիլիկիո մեջ 1915 ապրիլին, երբ հայեր տեղահանվեր էին Մարաշեն ու Զեյթունեն։ Իսկ Մեծ Հայքի մեջ սկսեր էր մայիս 15-ին, առաջին անգամ Կարինեն։ Հունիս ամսվան ընթացքին հեռագիրեն տեղահան էին եղեր Խարբերդը, Երզնկան, Բաղեշը։ Հուլիսին արդեն կարգը եկեր էր Սեբաստիո, Բաբերդի, Դերջանի, Մուշի, Մալաթիո, ու նույն ամսվան վերջերը արդեն կտարագրվեր Կիլիկիան նախ իր ծովեզերքով, հետո Այնթաբ, Քիլիս և Ադիյաման, մինչ Մարաշ դեռ մնացողները կթողվեին ետքի, տեղահան ըլլալու համար օգոստոսին Նիկոմիդիո, Բրուսայի և Թրակիո հայաշատ քաղաքներուն հետ։ Օգոստոսի կեսերուն աքսորը իր լրման հասած էր արդեն, և բոլոր քարավանները բռնած էին Դեր-Զորի ճամբան։

IX.— Դեր-Զորի ճամբան

Չկա բառ մը, որ այնքան սարսուռ տա հայուն, որքան այդ անունը։ Դեր-Զորը կխորհըրդանշե կարծես հայ ժողովուրդի բովանդակ Golgotha։

Դեր-Զոր դուռն էր Միջագետքի անապատներուն, և անկե կանցնեին ճամբաները, որոնք կուգային Անադոլուի զանազան շրջաններեն։

Ինչո՞ւ Դեր-Զոր կերթար հայ ժողովուրդը։ Զարդվելու համար տե՞ղ կպակսեր Թուրքիո մեջ։ Զորեր ու կիրճեր չկայի՞ն ուրիշ տեղեր, ուր խողխողվեին հայ քարավանները, կամ չկայի՞ն գետեր, որ հայոց դիակները կուլ տային ու տանեին։

Տեղահանությունը եթե պետք ունեցավ Դեր-Զորին, անոր համար էր, որ գերմաններն ալ համաձայն էին ադոր։

Ըսենք նախ, որ հայկական նահանգներեն հայերը տեղահան ընելու ահավոր ծրագրին մեջ կհամերաշխեին թուրքերու և գերմաններու տեսակետները։ Երկրին անբարյացակամ տարր մը հեռացնել այն շրջաններեն, որոնք բշնամությանց թատերաբեմ կրնային դառնալ շուտով,— շարժառիթ մըն էր, որուն շուրջ չէին կրնար համախոհ չըլլալ թուրք և գերման սպայակույտերը։ Թուրքերը պատճառ չունեին ուրեմն վախնալու իրենց գերման դաշնակիցներեն, եթե Հայոց աշխարհը ամայացնելու իրենց ահավոր ծրագիրը կիրարկելու սկսեին։

Տեղահանությունն շատ առաջ, երբ Եվրոպան ձեռք առած էր վերստին հայկական բարենորոգումներու խնդիրը և թուրքերը մտածել սկսած էին առանց հայու թողուլ Հայաստանը, արդեն ծրագիրներ իսկ կորոճային, հավանաբար Գերմանիո իսկ գիտությամբ, հայերը տեղահան ընելու համար հայկական նահանգներեն։ Լուրը գաղտնի չմնաց։ Ան արձագանք գտավ այս անգամ ալ ռուս մամուլին մեջ։ Չէին կրնար չվրդովիլ թուրք վարիչները իրենց ծրագիրներուն այս անախորժ հայտնությենեն։ Ահա թե ի՛նչ կգրեր «Իկդամ» իր 1914 հունվար 17-ի թիվով. «Մոսկվայի Գոլոս Մոսկվայ թերթը մատնանիշ կընե թուրք և գերման ծրագրի մը գոյությունը, որուն նպատակն է հայաբնակ նահանգներեն հայերը հեռացնել և դեպի Միջագետք տարագրել։ Ռուս թերթը կհարե, թե Գերմանիո և Թուրքիո տնտեսական շահերուն համապատասխան պիտի ըլլա Հայաստանի մեջ բնակեցնել իսլամներ, որոնք ի հարկին Կովկասի իսլամներուն հետ միանալով, պիտի կրնան լուրջ ընդդիմություն մը ընել սլավական ոտնձգություններուն»։ Թուրք թերթը հետո կըսե. «Օսմանյան կառավարությունը այդ տեսակ բան մը ընելու պետք չունի, վասնզի հայաբնակ վայրերու մեջ իսլամնե՛րն են, որ կկազմեն մեծամասնությունը։ Կառավարությունը եթե կարծած ըլլար, թե հայերը սլավական հոսանքին պիտի ծառայեն, հիմա Արևելյան Անադոլուի մեջ հաշտարար և բարեկարգիչ քաղաքականության մը հետևելու տեղ, անհաշտ և հակառակ քաղաքականության մը կհետևեր, մինչդեռ օսմանյան կառավարությունը հայերը գոհաց-

նելու համար թուլլտվութեան վերջին ատիճանին հասած է։ Կառավարութեան ընթացքը ժողովուրդին մէջ հայրենակցական սերը հաստատելու կմիտի և ոչ թէ իրար ձգելու։ Արդեն մենք չենք կարծեր, որ հայերը սլավական հոսանքին ծառայեն, վասնզի ի՞նչ օգուտ պիտի ունենան. եթէ այդ հոսանքը սկսի, միթէ հայութիւն կմնա՞։ «Ինկդամ» Գազազ Հարութիւն ամիրայի Թուրքիո մատուցած ծառայութիւնները հիշատակելէ հետո, հարց կուտա. «Միթէ կարելի՞ է հարիւր հազարաւոր հայերը դեպի Միջագետք քշել։ Թէ հայերն իրենք իսկ հավանին, գործադրութիւնն անկարելի է։ Ի՞նչ հարկ կա այսքան անտրամաբանական բաներ իբրև լուրջ հրատարակել։ Նպատակ մը միայն կա, այն է միշտ դժվարութիւններ հարուցանել օսմանյան կառավարութեան դէմ»։

Փաստերը եկան վկայել հետո, թէ տեղահանութիւնը գերմաններու գիտութեամբն ու հավանութեամբն էր, որ տնօրինվեցավ։

Թուրքերն ու գերմանները համաձայն եղան ճշտելու համար նաև շրջանը, ուր պիտի քշվեին տեղահան եղած հայ զանգվածները։ Կարելի եղածին չափ հայկական նահանգներեն հեռու,— ա՛յս էր երկու կողմին ալ հիմնական նպատակը։

Արաբական անապատը լավագույն շրջանն էր հասարակաց այդ նպատակին համար։

Բայց մինչդեռ թուրքերը այդ ծրագիրը իրագործելով կուզեին հայերն ընդմիշտ ամայացած տեսնել հայ պատմական հողերը, և հարթված գտնել իրենց ցնորքի ճամբան դեպի Թուրան, գերմանները տարբեր երազ մը կհետապնդեին— աշխատասեր ու շինարար հայերով լեցնել այն ճամբաները, ուրկե գերման երկաթուղին պիտի անցներ Բաղդադ հասնելու համար։

Հայերը այս կերպով զոհը կդառնային գերմանական այն մեծ ցնորքին, որ կձգտեր Հնդկաստան հասնիլ, և որուն առաջին հանգրվանը Բեռլին—Պոլիս—Բաղդադ երկաթուղին պիտի ըլլար։ Այդ գիծը, որ Դեր-Զորեն պիտի անցներ, պետք է շեն վայրեր գտներ իր ճամբուն վրա, ու այդ շեն վայրերը պիտի չկրնային երբեք ստեղծվիլ, եթէ անոնց վրա չգար չզետեղվեր իսկապես շինարար տարր մը, որպիսին հայն էր։ Իզուր չէր, որ գերմանները Անադոլուի երկաթուղիներու շինութեան սկսած ատենեն իսկ մտահոգությունն ունեցած էին անոր գլխավարութեան մեջ դեր տալ հայերու։ Ընդհանուր քարտուղարի պաշտոնը պիտի հանձնեին հայու մը, առևտրական տնօրենութեան պիտի կոչեին հայ մը, Հայդար փաշայի կեդրոնը պիտի լեցնեին հայ պաշտոնյաներով, և կայարաններու պետեր զետած ատեն նախապատվությունը պիտի տային հայերու։

Դեր-Զոր, ուրեմն, ամենեն հարմար կետ էր, ուր պետք է գային համախմբվիլ կարիքնեն ու երզնկայեն, Վանեն, Մուշեն ու Բաղեշեն, Սեբաստիայեն ու Խարբերդեն, ու բոլոր մյուս հայ օջախներեն ճամբա հանված քարավանները։

Թուրք. վարիչները այնքան ապուշ չէին, չկռահելու համար գերմաններուն թաքուն ծրագիրները։ Ավելի խորամանկ քան անոնց սուտ խենդ ձևացան։ Բավ է, որ Վիլհելմ համհարզները համախոհ էին իրենց՝ տեղահանության սկզբունքին մեջ, ու ամենադյուրին չափով արգելք պիտի չըլլային իրենց, եթէ հայ բազմությունները բռնի խլվեին իրենց օջախներեն, ու ճամբա հանվեին դեպի Դեր-Զոր։

Գերմանները իրենք է, որ չկռահեցին բան մը—թէ թուրքերը կրնան Դեր-Զոր չհասցնել քարավանները, ու զանոնք կոտորել ճամբան։ Անոնք, նվազ խորամանկ քան թուրքը, հավաներ էին, որ դեպի Դեր-Զոր փոխադրուին Հայոց աշխարհը, առանց իրենց երևակայության թեթև անցնելու, որ խլյակներ միայն պիտի հասնին Արաբական անապատ, որպեսզի ան նոնք ևս այնտեղ կոտորվին։

Դեր-Զորը, ավա՜ղ, պիտի չկարենար շինվելու, եթէ նույնիսկ գերմանները հաջողեին Բաղդադի գիծը անկե անցնել...։

***

Միջագետքի համար պատրաստված քարավաններն շատերը ատեն չունեցան սակայն ճամբա ելլելու։ Անոնք կոտորվեցան իրենց օջախներեն հազիվ ճամբա ելած։ Այսպես հունիս 10-են 14, մոտ 25 000 հայեր կխողխողվեին Քեմախի կիրճին մեջ. հունիս 24-ի դահիճը կպատուհասեր Շաբին-Գարահիսարը, իսկ օր մը հետո, հունիս 25-ին, Ջևդեթ կբնաջնջեր Բաղեշը. հուլիս 8-ին կոտորածներ տեղի կունենային Բաբերդի, Երզնկայի և Դերջանի մեջ, հուլիս 10-ին կջարդվեր Մուշը, հուլիս 15-ին կկոտորվեր Մալաթիան և օգոստոս 5-ին Սամսոնը բնաջինջ կըլլար, օգոստոս 19-ին՝ Եդեսիան, իսկ օգոստոս 30-ին կջարդվեր Անկարան։

Ավելի բախտավոր չեղան քարավաններն որ ճամբա հանվեր էին դեպի Դեր-Զոր։ Անոնցմե քիչերը միայն հասան անապատ, ուրտեղ ևս դահիճը կսպասեր կացինը սրած։

X.— Նախճիրը

«Ամբողջ ժողովուրդ մը տեղահան եղավ դեպի անապատ, և կոտորվեցավ ճամբան»

Այս էր եղեռնը։ Բայց որքա՜ն դավեր ու նենգություններ, որքա՜ն չարշարանք ու վայրագություն պետք եղավ, որպեսզի լրիվ գլուխ բլլե անոնց։

Այդ դավերուն ու նենգություններուն շատերը մենք տեսանք նախընթաց հատվածներով։ Անոնք ցույց կուտային, թե հայկական սարսափները տարերային բռնկումի մը արդյունքը չէին, այլ կիրարկված էին երկար կանխապատրաստութենե մը հետո։

Իրավունք ուներ ակադեմական Տարլեն ըսելու, որ *1915—1916* տարիներուն Թուրք կառավարությունը «հսկայական չափերով ձեռնարկեց հայ ժողովուրդի բնաջնջման գործին, որպեսզի ինքզինքը վերջնականապես անջրպետե Կովկասեն սպառնացող վտանգեն և Ռուսիո հավակնություններեն», և որ «այդ տեսակետով այն, ինչ որ կատարվեցավ Թուրքիո մեջ, իր չափերով կհանդիսանա բոլորովին բացառիկ համաշխարհային պատմության մեջ՝ Չինգիզ-Խանի ժամանակներեն սկսած»[2]։

Չինադադարին, Իթթիհադի Նուրը Օսմանիեի կեդրոնեն ձեռք անցվեցան շշմեցուցիչ փաստաթղթեր։ Գտնվեցավ, օրինակ, գաղտնի հեռագիր մը, որով Թալեաթ հրահանգ կուտար Մալաթիո իթթիհադական մասնաճյուղին. «Բնաջինջ ըրեք ձեր գավառը ղրկված և հավաքված հայերը. բարոյական և նյութական ամեն պատասխանատվություն ինձ կպատկանի»։ Ուրիշ հեռագրի մը մեջ Բեհաեդդին Շաքիր կըսեր. «Կետ առ կետ գործադրեցեք ձեզ տրված հրամանը հայերը սպանելու մասին»։

Բայց եղեռնը կիրարկվեցավ ոչ միայն կանխամտածությամբ և իր բոլոր մանրամասնությանց մեջ հաշվված, այլև կատարյալ սառնասրտությամբ։ Ոչ մեկ չարագործ այնքան պաղարյուն չէ եղած իր ոճիրը գործած պահուն, քան Իթթիհադը հայաջինջ սարսափները սարքած և գործադրած ատեն։ Այդ պիտի ըլլա առաջին տպավորությունը անոր, որ օր մը եղեռնին պատմությունը պիտի շարադրե իր բոլոր երևույթներուն տակ։

Ու ոչինչ այնքան պերճախոս կերպով պիտի վկայե այդ կանխամտածությունն ու սառնասրտությունը, որքան այն հայտարարությունները, զորս Թալեաթ ըրած է Պոլսո ամերիկյան դեսպանին, ինքն իսկ տեսակցության մը հրավիրելով զայն.

— Ես խնդրեցի ձեզմե, որ այսօր գաք,— ըսած է ան,— փափաքելով, որ ձեզի բացատրեմ հայերու հանդեպ մեր վարմունքը. այդ վարմունքը հիմնված է երեք որոշ կետերու վրա. նախ՝ հայերը հարստացած են ի վնաս Թուրքին. երկրորդ՝ անոնք որոշած են մեր տիրապետութենեն բաժնվիլ և անկախ պետություն մը ստեղծել. վերջապես՝ բացեիբաց օգնած են մեր թշնամիներուն, Կովկասի մեջ օժանդակած ռուսերուն, և ադով պատճառ եղած մեր ձախողանքներուն։ Ուրեմն մենք անդառնալի որոշումը տված ենք պատերազմի վախճանեն առաջ անզոր դարձնել զանոնք։

Ի պատասխան դեսպանին առարկությանց, Թալեաթ շարունակած է.

— Ջարժեր փաստել. մենք արդեն հայերու երեք չորրորդին կացությունը կարգադրած վերջացուցած ենք. ա՛լ ո՛չ Բաղեշի, ո՛չ Վանա, և ո՛չ ալ Էրզրումի մեջ հայ կա։ Երկու ցեղերու մեջ առելությունը այնքան բուռն է, որ մենք պարտավոր ենք կարգադրել անոնց գործը. ապա թե ոչ ստիպված ենք անոնց վրիժառութենեն վախնալ։

Դեսպանին նոր առարկություններուն պատասխանելով, Թալեաթ ըսած է.

— Ես խնդրեցի ձեզմե այստեղ գալ, որպեսզի ձեզի հաղորդեմ, թե այս խնդրույն մեր ընթացքը բացարձակորեն որոշված է, և թե ոչինչ չպիտի փոխե զայն։ Մենք Անադոլուի մեջ այլևս հայ տեսնել չենք ուզեր. անոնք կրնան անապատին մեջ ապրիլ, բայց երբեք ուրիշ տեղ...։

Ու Թուրք բորենին ըսած է շնականորեն.

— Այո՛, շատ սխալներ կգործենք, բայց երբեք չենք ցավիր մենք ադոնց համար...։

Հայոց դեմ հալածանքները կազմակերպելով, Իթթիհադի նպատակը չէր միայն կասկածելի տարր մը հեռացուցած տեսնել ռազմաճակատի մերձականներեն. ոչ իսկ վրեժ լուծելու համար էին միայն անոնք այն դժվարություններուն փոխարեն, զորս հայերը ավեր էին դատ վարելով իրեն դեմ կամ ռուս բանակներուն կամավոր տալով։ Այլ այդ սարսափները սարքելով, երիտասարդ Թուրքերուն հիմնական նպատակն էր հայ տարրը իսպառ չքացնել իր հողին վրա, որովհետև զայն վտանգ մը կնկատեր իր իսկ գոյության համար։ Նվ ադոր համար էր, որ ան խոիր չդրավ անմեղներուն և մեղավորներուն, մեծին ու պզտիկին, տղամարդուն և կնոջ միջև։

«Մեր երեսին կուտան,— ըսած էր Թալեաթ «Բեռլիներ տագեբլատ»-ի թղթակցին,— թե մենք տարբերություն չենք դներ անմեղ և հանցավոր հայերու միջև. այդ բանը բացարձակ կերպով անկարելի էր, որովհետև այսօրվան անմեղները թերևս վաղվան հանցավորները պիտի ըլլան»։

Ավելին։ Հայաջինջ սարսափները կիրարկվեցան վայրագության բոլոր ձևերով։ Հա-

[2] Ե. Դարլե, «Եվրոպան իմպերիալիզմի շրջանին», Մոսկվա, 1928, Բ տիպ, էջ 387։

Ա. 5663
ԱՆԱՀԻՏԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

տորներ պետք են պատմելու համար այն, ինչ որ տեղի ունեցավ պատերազմի տարինե-րուն, և սակայն ոչ մեկը պիտի կրնա ճշգրիտ պատկերը տալ կատարված նախճիրներուն, այն բոլորին, զոր պիտի կրնար երբեմեն հղանալ ու կիրարկել մարդոց գազանացած հոգին։

Այս էջերը այդ գազանութեանց մանրա-մասնութիւնները նկարագրելու համար չեն, և ոչ ալ պատմելու, թե ինչե՛ր տեսան ու ի՛նչ-պես լացին հայ օջախները, երբ իրենցմե կխլվեր վերջին հայ շունչը, ինչե՛ր տեսան ձո-րերն ու ճամբաները Հայոց Մեծաց սարերեն մինչև Միջագետքի անապատները...։

Ըսենք միայն, որ դահիճները խոիր չդրին ինչպես իրենց կիրարկած միջոցներուն, նույնպես իրենց զոհերուն մեջև։ Ողեռնին հավասարապես զոհ գացին մեծն ու պզտիկը, հեղափոխականն ու պահպանողականը, գեղ-ջուկն ու մտավորականը, հոգևորականն ու արհեստավորը։ Դահիճը խոիր չդրավ նաև հայ դավանանքներու միջև. հայուն հետ մեկ-տեղ հնձեց կաթոլիկն ու բողոքականը, հա-կառակ պապին ու Ամերիկայի միջամուտ-թյանը՝ գոնե իրենց դավանակիցները փրկե-լու։

Դահիճը իր զոհերը եղբայրացուց իրենց մարտիրոսագրության մեջ, ինչպես մեր սու-գին մեջ մեզ պիտի եղբայրացներ հետո։

XI.— Կախաղաններու շարանը

Թուրք կառավարությունը չգոհացավ միայն ջարդով։ Ան ուզեց հայերը պատժել դատով ու դատաստանով ալ։

Այդ դատերը նախ պատրվակներ էին զո-հեր ճամբա հանելու, առանց կասկած ներ-շնչելու անոնց, և անոնց մեծ մասը նահա-տակել ճամբան։ Այդպես ըրին, օրինակ, Ա-յաշեն ճամբա հանված այն ինը հայ կար-կառուն դեմքերուն, որոնք Զարդարյանը, Սիամանթոն, Խաժակը, Ակնունին, Ճանկյուլ-յանը, դոկտ. Փաշայանը, Հայկ Թիրյաքյանը, դոկտ. Տաղավարյանն ու Սարգիս Մինասյանն էին, որոնք իբր թե Տիգրանակերտ պիտի տարվեին դատվելու համար, և որոնք պիտի խողխողվեին ճամբան։

Այդպես ըրին Զոհրապին ու Վարդգեսին ալ, որպեսզի մեռցնեն ճամբան, այդպես ըրին Բարսեղ Շահպազին, և շատ ուրիշներու։

Այնուամենայնիվ, դատավարություններ իսկապես եղան, բայց անոնք եղան պարզա-պես իբրև առիթ, աշխարհին ցուցադրելու համար հայոց մեղքերը, որովհետև Իթթիհադ դատ ու դատաստանի պետք չուներ «մեղա-վորները ջոկելու համար. ան նախ «կպատ-ժեր» հայը և հետո միայն զայն ամբաստա-նելու և դատելու համար մեղքեր կորոներ։ Զոհերեն շատ քիչերը միայն իրենց դատավո-րին երեսը տեսան. անոնց համար դահիճնե-րը միևնույն ատեն դատավոր էին։

Մահապատիժները շատ կանուխեն սկսան, նույնիսկ մտավորականներու ձերբակալու-թեններն և զանգվածային տեղահանություննե-րեն շատ առաջ։ Այսպես, Սահակ Կաթողիկոս 1915 հուլիս 5-ին Հալեպեն կգրե Զավեն պատրիարքին, թե «մարտ 12-են մինչև հիմա տասներկու հայեր կախված են Ադանա, Տար-սոն, Մերսին, Զեյհան, Օսմանիե, Կարս, Սիս. չորս հոգի հրացանի բունված են և երեք հոգի ի բացակայության մահվան դատապարտ-ված են։ Երանի որք ի Տէր ննջեցին»[3]։

Իթթիհադ կախաղաններ ալ ցուցադրեց աշ-խարհին։ Անոնց պետք չուներ չքացնելու հա-մար իր զոհերը։ Այդ ցուցադրություններն եղան անդոհանքի տակ պահելու համար մնացող հայերը։

Պոլիս, օրինակ, անդոհանքի նման օրեր ապրեցավ։

Այդպիսի օր մըն էր 1915 հունիս 15-ը, երբ Բայազեդի հրապարակին վրա կախաղան հանվեցան 20 հնչակյաններ։ Թալեաթ մեկ կողմե Պոլիսը կսարսափեցներ, և մյուս կող-մե վրեժ կլուծեր հնչակյաններեն, որոնք զինք ահաբեկելու համար Կոնստանցայեն երեք տեռորիստներ ղրկեր էին Պոլիս։ Թա-լեաթի դատարանը ոչ միայն կախաղան կհա-ներ այս երեքը, և նաև Կոնստանցայի ժողո-վին մասնակցողներեն մեկ քանին, որպիսին դոկտ. Պեննեն և Փարամազն էին, այլ աչս գործին հետ բոլորովին կապ չունեցողներ և նույնիսկ անոր տարակարծիք եղողներ ալ, ինչպես պատվական Գեղամ Վանիկյանը։

Ամիսներ հետո, այն է 1916 մարտ 13-ին, Պոլիս ուրիշ կախաղաններ ալ տեսավ։ Ադա-փազարեն բերվելով, Բայազեդի նույն այդ հրապարակին վրա կախաղան հանվեցան Խորեն Երեմյան և Գրիգոր Գալֆան, ռումբեր շինած կամ պահած ըլլալնուն համար, և անոնց հետ մեկտեղ Կարապետ Փաթուկյան, որ Իզմիտեն բերված էր։

Կեսարիան հանդիսատես եղավ կախաղան-ներու ամենեն զարհուրելի թիվին։ Ասոնց շարանը սկսավ 1915 հունիս 2/15-ին, երբ կախաղան բարձրացան 11 հայեր Քյոմյուր-փազարի մեջ։ Հուլիս և օգոստոս ամիսներուն կախաղանի վրա ճոճեցան դիակները ուրիշ 31 հայերու։ Կախաղանները կանգ չառին նաև տարագրութենեն հետո։ 1915 սեպտեմբեր 5/18-են մինչև 1916 նոյեմբեր 15/28 դահիճը կախաղան հանեց 11 հայեր ևս, 54-ի հասցը-նելով զոհերուն ընդհանուր թիվը, զոհեր,

[3] «Կիլիկյան կաթիծներ», Բեյրութ, 1927, էջ 182։

որոնց մէջ էին հնչակեան ամբասիր գործիչը՝ Համբարձում Պոյաճեան (Մուրադ), երկու բժիշկներ՝ Սուրէն Նշանեան և Թորոս Նազլեան, Գևորգ Վիշապեանի, Վահան Քիւրքճեանի, Վահան Ամատունիի, Հակոբ Եսայեանի նման բեղմնավոր ուսուցիչներ, Ղևոնդ Կամիճեան քահանան, Մարտիրոս Գունտաքճեան և Կարապետ Թաշճեան փաստաբանները և ուրիշներ։

Պատերազմական առաջին օրերը անդուլ գործեցին մասնավորաբար Բյութանիո և Բրուսայի շրջաններուն մէջ, շրջաններ, որոնք համեմատաբար քիչ զոհ տված էին, ամենեն ուշ աքսորված ըլլալով, և որոնք սակայն այլապես տուրք պիտի տային արյունաբերու Մողոքին։ Բոլու, ուր կգործեր ահարկու պատերազմական առյան մը, 1915 սեպտեմբեր 28-են մինչև 1916 դեկտեմբեր 19, 30-ե ավելի կախաղանները տեսավ Ադափազարեն, Արմաշեն, Խասկալեն, Չենգիլերեն, էլմալուեն բերված հայերու, որոնց մէջ քահանաներ և ուսուցիչներ ալ կային։ Բանդրմայի մէջ 1915 օգոստոս 31-ին և սեպտեմբեր 5-ին կախաղան հանվեցան 4 հոգի, մեկը դեղագործ, երկուքը ուսուցիչ, չորրորդը Մուրադչայի Տ. Գասպար քահանան։ Բրուսան ևս 5 կախվողներ ունեցավ, առանց դեռ հիշելու 40-ի մոտ այն հայերը, որոնք Բրուսայեն 10 ժամ հեռու, Աֆրանոսի մէջ հրացանազարկ եղան, և որոնց մէջ բժիշկներ, իրավաբաններ, ուսանողներ և պետական պաշտոնյաներ ալ կային։

Դատարաններն ու կախաղանները գործեցին անշուշտ ուրիշ վայրերու մէջ ալ։ Կառավարությունը կուզեր հավատացնել աշխարհին, թե Թուրքիո մէջ օրենքներն ու արդարությունը միայն կտիրեն։

... Մինչ անդին ամբողջ ժողովուրդ մը կմարտիրոսանար, առանց դատ ու դատաստանի։

XII.— Աշխարհը խաբելու համար

Քիչեր այնքան ճարպիկ եղած են աշխարհը խաբելու համար, որքան եղան երիտասարդ Թուրքերը, և այդ, առաջին իսկ օրեն։ Անոնք գրեթե հրապուրեր էին Եվրոպան իրենց մեղրածորան խոսքերով, և վստահություն ալ ներշնչեցին անոր։ Պատերազմեն քիչ առաջ էր, որ անոնք հաջողեր էին փոխառություն ալ կորզել այդ վստահութենեն, փոխառություն, զոր շատ չանցած պիտի օգտագործեին, կռվելու համար զայն իրենց շնորհողներուն դեմ։

Հիմա, իրենց մեկ քանի զինակիցներեն զատ, բովանդակ Եվրոպան իրենց դեմը ուներ երիտասարդ Թուրքերը, բայց վստահ հաղթանակին վրա, զոր պիտի շահեին շուտով Վիլհելմի բանակները, և իրենք ալ անոնց հետ, կշարունակեին արհամարհել այդ Եվրոպան, ինչպես և անոր հանրային կարծիքը։

Պատերազմը պարիսպով պաշարած էր Թուրքիան, ու դուրսի աշխարհը երկար ատեն լրիվ տեղյակ չէր Թուրքիո մէջ տեղի ունեցող եղերական դեպքերուն։ Եվ սակայն, այսպես կամ այնպես, լուրերը սպրդեր էին դուրս, ու երիտասարդ Թուրքերը այլևս չէին կրնար բոլորովին լուռ մնալ։ Ու արդարև, հաջորդական հինգ զեկույցներով, զորս անոնք աշխարհին սփռեցին գերմանական «Վոլֆ» հեռագրական գործակալության միջոցով, բացատրություններ տալ սկսան։

Առաջին զեկույցը, 1915 հունիս 4-ին, պատասխան էր դաշնակից պետությանց կողմե մայիս 24-ին իրենց ուղղված սպառնական ծանուցագրին, որուն մէջ համաձայնական երրյակը, հիշելով հայոց դեմ գործադրվող հալածանքներն ու ջարդերը, Թուրք կառավարությունը պատասխանատու կսեպեր անոնց համար։ Թուրքերը, իրենց զեկույցին մէջ, բացեիբաց կուրանային Թուրքիո մէջ պատահած դեպքերը, փոխարեն ամբաստանելով համաձայնական պետությունները, թե հայերը կգրգռեն ընդդեմ Թուրքիո, թրքական բանակներուն դեմ կռվող հայ կամավորներ կկազմակերպեն, և այլն։

Երկրորդ զեկույցը, 1915 հունիս 17-ին, կհաղորդեր 20 հնչակյաններու կախվիլը քանի մը օր առաջ Բայազեդի հրապարակին վրա, պատիժ, որ անոնց տրված էր Թուրք պետական դեմքերու դեմ անոնց սարքել փորձած մահափորձին համար։

Թրքական երրորդ զեկույցը, 1915 հունիս 29-ին հաղորդված, կխոսեր հայ կամավորներու գործած ավերներուն և իսլամ բնակչության հանդեպ անոնց կատարած նախճիրներուն մասին։

Թուրք կառավարությունը 1915 հուլիս 12-ին կհայտարարեր «Վոլֆ» գործակալության միջոցավ հաղորդված չորրորդ զեկույցի մը մեջ, թե Թուրքիո թշնամի թերթերը այլանդակ և սուտ լուրեր կհրատարակեն, իրողությունները կշրջեն, ու Թուրքերուն կվերագրեն այն ոճիրները, զորս իրենք ի գործ կդնեն ամեն ատեն, և հետևաբար կառավարությունը բոլորովին կարհամարհե և ավելորդ կսեպե հերքել այդ սուտերը։

Թուրքերուն հինգերորդ զեկույցը, որ 1915 հուլիս 16 թվականը կկրեր, կխոսեր 500 հայերու կատարած ապստամբության մասին Շաբին-Գարահիսարի մեջ, ակնարկելով այն դյուցազնական ինքնապաշտպանության, որուն սահպվեր էին պիմել տեղվույն հայերը,

Թուրք հրոսախումբերու կողմե կոտորվելե առաջ։

1915 օգոստոսին, Թուրք կառավարությունը, ժրնևի իր հյուպատոս Ջիա բեյի միջոցով, Թերթերուն կղրկեր հետևյալ պաշտոնական հերքումը.

«Թուրք բարեխնամ կառավարության պաշտպանության տակ գտնվող բոլոր հայերը, ըլլան անոնք այր թե կին և կամ մանուկ, կվայելեն կատարյալ ազատություն, թեև գտնվեցան մեկ քանի հանցավորներ միայն, բայց անոնք ալ դատվեցան օրինավոր կերպով կազմված դատարաններու առջև»։

Ավելի հետո, 1917-ին, երիտասարդ Թուրքերը պետք տեսան ավելի լայն լուսաբանություններով հրապարակ գալ աշխարհի առջև։ Ջեկույցները, զորս տարածած էին «Վոլֆ» գործակալության միջոցավ, բավարար չէին եղած հանրային կարծիքը համոզելու. ավելի ճիշտ, անոնք Եվրոպան կարհամարհին այն ատեն և պետք չէին տեսած բացատրություն տալու անոր։ 1917 տարվան կեսերուն, կացությունը արդեն բոլորովին տարբեր էր. Գերմանիո և իր զինակիցներու գոռոզությունը իջած էր պատվանդանեն վար։ Այս անգամ, հունգար կառավարության ֆրանսերեն պաշտոնաթերթը օգտագործեցին արդարանալու համար աշխարհի հանրային կարծիքին առջև[4]։ Այդ արդարացումը նույնքան ծիծաղելի էր, որքան ցարդ փորձվածները։ Ինքնապաշտպանության իրենց այդ ձախող փորձին մեջ Թուրքերը կկրկնեին բերնի ծամոց եղած միևնույն առասպելները, թե հայերը դավաճան են ու կդավեն երկրին, թե անոնք միացած են Թուրք պետության թշնամիներուն և վտանգած են անոր ներքին կարգն ու ապահովությունը, և այլն։

***

Երիտասարդ Թուրքերը ամեն փորձ ըրին երկիրը ևս խաբելու համար, ու պետք տեսան հանրային կարծիքին ալ բացատրություններ տալ հայոց կատարած դավաճանության մասին։ Ադով անոնք կուզեին նախ արդարացնել, իրենց ժողովուրդին առջև, հալածանքները, զորս կկազմակերպեին հայոց դեմ և որոնց արձագանքը կհասներ Թուրք զանգվածներուն ալ, ջարդերեն հետու քաղաքներուն մեջ։ Բայց միևնույն ատեն կուզեին Թուրք ամբոխը գրգռել, հայերը ներկայացնելով անոր իբրև երկրին թշնամի տարր մը, որ անընդհատ կդավե պետության դեմ։

Իթթիհադ հարկ սեպեց նախ իր անդամներուն բացատրություն տալ։ Համաժողովը, զոր գումարեց վերջապես 1916-ին, երկար տարիներ զայն հետաձգելե հետո, լավագույն ատիթն էր։

Ճառը, զոր խոսեցավ Թալեաթ այդ համաժողովին մեջ, ինքնարդարացման ծիծաղելի փորձ մըն էր։ Անոր կորիզը այն միևնույն առասպելներն էին, զորս Թուրքերը կհեղհեղեին երկու տարիե ի վեր և պիտի շարունակեին հեղհեղել հետո ալ, Թուրք կառավարության ձեռք առած միջոցներուն միակ պատասխանատուն հռչակելով հայերը։

Իթթիհադի համաժողովին առջև իրենց ոճիրը նվիրագործելե հետո, երիտասարդ Թուրքերը պետք տեսան զանգվածներն ալ հաղորդակից ընել իրենց հերյուրած հեքիաթներուն, ավելի ևս հրահրելու համար անոնց մոլեռանդությունն ու վրեժխնդրությունը։

Ոստիկանության պաշտոնաթերթին՝ «Փոլիս մեջմուասի»-ի ամեն մեկ թիվը, որ ձեռք-ձեռք կանցներ գաղտուկ և կհասներ մինչև մեր թաքստոցները, սարսուռով կհամակեր մեզ։ Թուրքերը այնտեղ է, որ լույս կընծայեին լուսանկարները ուժանակներուն, աւտրճանակներուն, հրացաններուն և այլ զանազան զենքերուն, զորս գտած էին հայերուն մոտեն, իրապես գտնվածներուն քով զետեղելով իրենց իսկ պահեստներեն բերվածներ և միևնույն զենքերը պատցնելով քաղաքե-քաղաք՝ նոր լուսանկարներու համար։

Թուրքերը, 1916-ին, ուզեցին այլապես ալ սարսափի մատնել հայերը։ Իրենց հայ վարձկաններուն խմբագրել տվին և լույս ընծայեցին հայերեն գիրք մը, որուն նպատակը բնականաբար ուրիշ բան չէր, բայց եթե հայերուն իրենց ալ ըսել, թե իրենք եղան պատճառը իրենց գլխուն եկած պատուհասներուն։ Գիրքը հետևյալ գլուխներն ուներ. ա) Պատմական համառոտ ակնարկ մը և Զեյթունի, էրզրումի շարժումները. բ) Կուսակցությունները Պոլսո և գավառներու մեջ. գ) Դաշնակցությունը և ցարիզմը. դ) Դավադրության սկիզբը. ե) Կուսակցությունները ընդհանուր պատերազմի հայտարարության միջոցին. և զ) Վերջաբան։ Եվ սակայն ինչե՞ր չկան 159 էջանոց այս հատորին մեջ. պատմական դեպքերու ամբողջական խեղաթյուրումի մը կողքին, տասնյակներով հեղափոխական երգեր, թերթերե մեջբերումներ, հայ կուսակցությանց արխիվներեն ձեռք անցված նամակներ, և այս բոլորը՝ ապացուցանելու համար, թե հայությունը միշտ դեմ եղած է Թուրքին և արժանի էր իր կրած պատժին[5]։

4 „Vérité sur le mouvement révolutionnaire arménien et les mesures gouvernementales", „Revue de Hongrie", 15 juin 1917,

5 «Հայ հեղափոխական կուսակցությունները և օսմանյան կառավարությունը», Կ. Պոլիս, 1916։

Նույն այդ տարին, կառավարությունը հրապարակ հանեց հատոր մը ևս[6], միևնույն խեղաթյուրումներով հյուսված, այս անգամ սակայն Թուրքերուն ուղղված և ավելի ընդարձակ, մանավանդ ինչ կվերաբերի հայ հեղափոխական կուսակցութեանց գործունեութեան։ Բուն նյութին, որ 233 էջերե կբաղկանա, կցված են 118 վավերաթուղթեր և նկարներ, պատճենները ձեռք անցված նամակներու, ժողովներու ատենագրութեանց, լրագրական հոդվածներու, և սարեն ձորեն հավաքված պատկերներ հեղափոխական դեմքերե, կամավորական խմբանկարներե և բռնագրավված զենքերե սկսյալ, մինչև Հայաստանի քարտեզը, խեղճ «Մայր Հայաստան»-ը, և իբրև հայկական նամականիշ... Աբովյանին, Աղամյանին, Ալիշանին, Պեշիկթաշլյանին, Բաֆֆիին, Նազարյանցին, Այվազովսկիին և ուրիշներու նկարները թղթադրոշմի ձևով տպված ատենին։ Ահա թե ինչե՛ր ըրին երիտասարդ Թուրքերը խաբելու, բայց մանավանդ Թունավորելու համար աշխարհը։

XIII.— Մոլթքեեն մինչև Վանգենհայմ

Հայ ժողովուրդը շատ բան պարտական է անշուշտ գերմանին, ավելի ճիշտ՝ գերման գիտութեան։ Մեծ եղած է գերման գիտնականներու բերած նպաստը հայ բանասիրութեան, անոր բոլոր մարզերուն մեջ։

Բայց նույն գերման կառավարությունը միշտ Թուրք մը եղավ հայ դատին առջև, Բեռլինեն սկսած։ Ան էր նաև, որ թե ու թիկունք եղավ Համիդին, ինչպես պիտի ըլլար անոր ձեռնասուններուն ալ, որոնք երիտասարդ Թուրքերն էին։

Եթե Մոլթքեններն էին եղեր, որ խորհուրդ էին տվեր երբեմն Թուրքերուն հայերը այլուր տեղափոխել իրենց հայրենի օջախներեն, վիլհելմ և իր արբանյակները, ինչպես տեսանք, աջակցեցան զարհուրելի այդ տեղափոխութեան։

Այնպես որ, մեծ եղավ Գերմանիոյ մեղքի բաժինը այն սարսափներուն մեջ, որոնց զոհ գնաց հայ ժողովուրդը։ Գերման կայզերը և իր խորհրդականները Թույլ տվին, որ իր Թուրք դաշնակիցը անպատասխան ժողովուրդ մը հողոտե, իրենց անտարբեր ու անկարեկիր աչքերուն առջև։ Դաշնակից մը չվշտացնելու մտահոգությունը, որ գլխավոր շարժառիթն էր հավանաբար այդ մեղսակից վերապահության, պահ մը հասավ իր գերագույն ծայրահեղության։ Երիտասարդ Թուրքերը ոչ միայն հաշվի չառին գերմաններու ներկայությունը իրենց մեջ, այլ անուղղակի և ուղղակի քաջալերություն ալ գտան։

Բավ է հիշել գերման պետական մարդոց քաջալերիչ կեցվածքը Թուրքերուն շղթայազերծած նախճիրներուն պահուն։ Գերման նախարար մը, Յագով, հայտնելով 1916 սեպտեմբեր 29-ին Ռայխստագի բեմեն, թե գերման կառավարությունը միջամտություններ հաճախ ըրած է հայոց տառապանքը մեղմացնելու համար, բայց անոնց պատճառով չի կրնար գժտիլ Թուրքերուն հետ, ըսած է.

«Հայոցմե ավելի, որչափ ալ զուտ մարդասիրական տեսակետով անոնց վիճակը կողբանք, վեր են մեր զավակներն ու եղբայրները, որոնք իրենց Թանկագին արյունը ծանր պատերազմներու մեջ Թափել կստիպվին, և որոնք մեզ հետ Թուրքերու օժանդակության պետք ունին։ Որովհետև Թուրքերը մեղի էական ծառայություններ կմատուցանեն հարավ-արևելյան կողը պատսպարելու համար։ Ինձի հետ համամիտ պիտի ըլլաք, թե մենք չենք կրնար այնչափ առաջ երթալ, որ խզենք մեր դաշինքը Թուրքերուն հետ, զորս սաստիկ դժգոհ Թողուցած ենք մեր մշտատև բողոքներով հայկական հարցի մասին»[7]։

Ցոն Յագով առանձին չէր իր այս մտահոգության մեջ։ Թուրք վարիչներուն հետ ձեռնոցով խոսելու տրամադրությունը այն օրերու բոլոր գերման վարիչներուն ուղեգիծն էր։ Նման արտահայտություններ Ռայխստագին մեջ քանիցս եղան, ու ավելի ևս շփացուցին Թուրք վարիչները իրենց ապերասանության և հոխորտանքին մեջ։ Անոնք քաջ գիտեին, որ ինչ ալ ընեն, գերմանները ի վիճակի չեն իրենց արգելք ըլլալու, և հայերը պաշտպանելու սիրույն, նեղության պիտի չպատճառեն իրենց։

Ավելի բնորոշ էին սակայն հայտարարությունները ուրիշ գերմանացիի մը, որ կայզերին անձնական ներկայացուցիչն էր Թուրքիո մայրաքաղաքին մեջ, և որ հանդգնություն ունեցավ ավելի անկեղծ ըլլալու.

«Կյանքիս մեծագույն մասը ապրած եմ Թուրքիո մեջ, և կճանչնամ հայերը։ Գիտեմ նաև, որ հայերն ու Թուրքերը միատեղ չեն կրնար ապրիլ այս երկրին մեջ... հետևաբար այս ցեղերեն մեկը անհետանալու է... Ես չեմ մեղադրեր Թուրքերը, որոնք հայերը անհետացնելու վրա են... Հայերը կուզեն անդամահատել Թուրքիան. այս պատերազմին մեջ

[6] «Էրմենի քոմիթեներին ամալ վե հարեքյաթը իթթիհալեյեսի, իլանը մեշրութիյեթդեն էվվել վե սոնրա» («Հայ կոմիտեներու հեղափոխական ձգտումներն ու գործունեությունը, Սահմանադրությենեն առաջ և հետո»), Կ. Պոլիս, 1916։

[7] Լեփսիուս, էջ 294։

անոնք թուրքերուն և գերմանացիներուն դեմ են։ Հետևաբար իրավունք չունին գոյություն ունենալու...»։

Բայց ամենեն չարաշուք դերը հայության ճակատագրին մեջ՝ Գերմանիո Պոլսո դեսպան Վանգենհայմն էր որ ունեցավ։ Ան Գերմանիո շահերը պաշտպանելեն ավելին ըրավ. գործիք դարձավ թուրք շահերուն։ Իր պաշտոնավարության ամբողջ շրջանին, որ երեք տարի տևեց և որ կղուգադիպեր հայ ժողովուրդի համար ամենեն ճակատագրական շրջանի մը, ուրիշ բան չըրավ, բայց եթե թուրքը ողոքել ու դավել հայուն։ Սկսյալ իր բացասական դիրքեն հայկական բարենորոգումներու հետապնդման շրջանին, մինչև թուրքերու հանդեպ իր խրախուսական կեցվածքը հայաջինջ եղեռնի ամենեն բուռն շրջանին, ան ուղղակի մեղսակից մը հանդիսացավ հայոց դահիճներուն։

Սույն Վանգենհայմն էր, որ 1915 մայիս 31-ին, մեկ կողմե կգրեր իր կառավարության, թե «հայ լրտեսության առջև թումբ կանգնելու և նորանոր զանգվածային ապըստամբությանց առջևը առնելու համար, էնվեր փաշա մտադրեր է, օգտվելով պատերազմական բացառիկ վիճակեն, մեծ թիվով հայ դպրոցները փակել, արգիլել հայերեն քեթակցությունը, և արդի ապստամբ կեդրոններեն բոլոր կասկածելի ընտանիքները Միջագետք գաղթեցնել և կխնդրե թախանձանոք, որ մենք ասոր համար իրեն խափանարար չըլլանք», և մյուս կողմե կավելցներ. «Այս միջոցները անշուշտ մեծ խստություն են հայ ժողովուրդին համար։ Բայց իմ կարծիքով, մենք զանոնք ձևականապես անշուշտ մեղմելու ենք, բայց սկզբունքով պետք չէ արգիլենք»։

Գերման կառավարությունը, համոզված ըլլալով հանդերձ, որ թուրքերը նպատակ ունին հայ ցեղը բնաջնջել քրքական պետության մեջ, Վանգենհայմի միջոցավ հետևյալ հուշագիրը կներկայացներ Բարձրագույն դուռ, 1915 հուլիս 4-ին.

«Արևելյան Անատոլիո հայ ժողովրդյան դեմ կայսերական կառավրության վճռած ճնշիչ կարգադրությունները թելադրված ըլլալով զինվորական պատճառներե և օրինավոր պաշտպանության միջոց ըլլալով, գերմանական կառավարությունը հետու է անոնց գործադրության հակառակելե, որչափ ատեն որ այս կարգադրությունները նպատակ ունին Թուրքիո ներքին դիրքը զորացնելու և ապահովելու զայն ապստամբության փորձերե։ Այս նկատմամբ գերման կառավարության տեսակետները բոլորովին կհամաձայնին այն մեկնության հետ, զորս Բարձրագույն դուռը տված է պատասխան այն սպառնալիքներուն, որոնք իրեն ուղղված էին համաձայնական պետությանց կողմե՝ Թուրքիո մեջ հայոց հանդեպ գործված կարծեցյալ խժդժությանց առթիվ»[8]։

Ադկե քանի մը օր հետո, 1915 հուլիս 7-ին, տխրահռչակ Վանգենհայմը կհաղորդեր իր կառավարության, թե թուրքերը չեն բավականանար միայն ռազմաբեմի շրջաններեն տեղահան ընելով հայերը, այլ Փոքր Ասիո մյուս շրջաններեն ևս, ու կավելցներ. «Այս պարագան և այն կերպը, որով այս տեղահանությունը կգործադրվի, ցույց կուտան, թե կառավարությունը իրօք նպատակ ունի՝ հայ ցեղը ջնջելու քրքական պետության մեջ»[9]։

Թուրքիո զանազան քաղաքներու գերման հյուպատոսներեն ոմանք ևս իրենց կրավորական դիրքով և երբեմն նույնիսկ իրենց խրախուսիչ կեցվածքով քիկունք եղան թուրք ջարդարարներուն, թեև այդ հյուպատոսներուն մեջ մարդասեր մարդիկ ալ շատ եղան, որ չէին կրնար ցասմամբ չլեցվիլ, երբ իրենց աչքերուն առջև մահվան կղրկվեին հայերը և իրենց տեղեկագիրներով մարդկությունը ուզեցին տեղյակ դարձնել տեղի ունեցող արհավիրքներուն։

Դեռ խոսքը չենք ըներ գերման այն սպաներուն, որոնք տեղահանության գործակցեցան, զինվորական անհրաժեշտություն մը նկատելով զայն։ Ու զարմանալու չէ այդ բանին, երբ մենք իսկ վկաներն եղանք այն առևանգման, որուն թուրք զինվորներու կողմե առարկա եղան գերման հրամանատար Ֆոն Զանդերսի իր իսկ երկու աղջիկները, և որ սակայն շուտ մը փակվեցավ, առանց դիվանագիտական կնճռոտության մը տեղի տալու։

Վանգենհայմ աչքերը փակեց Պոլսո դեսպանի իր պաշտոնին մեջ 1915 հոկտեմբեր 15-ին։ Ավա՜ղ, շատ ուշ էր արդեն։ Ավարտած էր հայաջինջ եղեռնին ամենեն ճակատագրական շրջանը իր իսկ աչքերուն տակ, իր իսկ մեղսակցությամբ։ Այդ մահը զարհուրելի կորուստ մըն էր թուրք վարիչներուն համար, որովհետև եթե նույնիսկ գերմանական նույն քաղաքականությունը անոր հաջորդներուն ևս ուղեգիծն ըլլար, ոչ ոք սակայն անոր չափ նեցուկ պիտի ըլլար թուրքին իր նախձիրներուն մեջ։ Այդպես ալ եղավ։

Մետերնիհ, որ Վանգենհայմի հաջորդեր էր, անոր մահեն հետո, իբրև Պոլսո գերման դեսպան, իր նախորդին մեղքերը ուղեց քավել։ Իր տեղեկագիրներուն մեջ այլևս անկողմնակալ է ան, ու չի վարանիր անոնց մեջ հայոց իսկական կացությունը պարզել, չմոռ-

[8] Ափսխուս, էջ 96—97։

[9] Անդ, էջ 94։

նալով մատնանշել Թուրքերուն վերաբերումը իր իսկական գույներով։ Մետերնիհ ոչ իսկ տարի մը պահվեցավ սակայն իր պաշտոնին վրա ու կանչվեցավ ետ։

***

Հայ ժողովուրդը Լրախտապարտ է դոկտ. Լեփսիուսին այն մեծ ծառայություններուն համար, զորս ան իրեն մատույց, ոչ միայն այն շրջանին, երբ ան իր ծոցին մեջ կգործեր իբրև միսիոներ, այլ պատերազմի փոթորիկին առեն, երբ ան քաջությունն ունեցավ հաշիվ պահանջելու Թուրքերուն գերման մեղսակիցներեն և հավաքեց փաստեր ու փաստեր, աշխարհին առջև փռելու համար երիտասարդ Թուրքերու վայրագությունները, և գերման ժողովուրդին երեսին տալու իր մեղադրությունը անոնց մեջ, հանձին իր դիվանագիտության և զինվորականության։

Այն գերմաններուն կարգին, որոնք իրենց Պոլիս բնակության ընթացքին պատերազմի տարիներուն շատ բանի իրազեկ դարձան հայկական հալածանքներուն մասին և գացին հետո աշխարհին պատմել իրենց տեսածն ու լսածը զմայլելի անկեղծությամբ մը, կարելի չէ չհիշել «Քյոլնիշեր ցայթունգ»-ի Պոլսո թղթակից Հերրի Շտուրմերը, որ ոչ միայն գերման և Թուրք գործակցության տխուր փաստերուն արձագանք եղավ 1915—1916 տարիներուն իր թերթին ղրկած թղթակցությանց մեջ, այլ նաև Պոլսեն ակամա հեռանալե հետո, իր տպավորությունները հատորով մը ներկայացուց աշխարհի հանրային կարծիքին[10]։

Հիշենք նաև Լիբկնեխտը, որ հայկական ջարդերու մասին ստացված լուրերու ցասման տակ, բուռն զայրույթով մը հարցապնդեր էր արտաքին գործերու նախարարության դիվանագիտական բյուրոյի պետ Ֆոն Շտումմը և բացատրություններ էր պահանջեր Գերմանիո զինակից Թուրք կառավարության այս հանգամարդկային և բոլոր գերմանացիները անդարմանելի կերպով արատավորող բարբարոսական արարքներու մասին, միևույն ատեն նկարագրությունն ընելով հայոց տառապանքներուն։ Գերման պաշտոնատարը, սակայն, սա շնական պատասխանը կուտար.

«Ներքին կայսերական կառավարության ծանոթ է, թե հեղափոխական ցույցեր կազմակերպված են մեր բշնամիներուն կողմե և [Թուրք] կառավարության դեմ շարժումներ տեղի ունեցած են հայկական նահանգներու մեջ։ Որով Թուրք կառավարությունը ստիպված էր տեղահան ընել միայն կարգ մը վայրերու հայ բնակչությունը և զանոնք տեղավորել ուրիշ տեղ։ Առ այժմ բանակցության մեջ ըլլալով, ասկե ավելին չենք կրնար հայտարարել»։

Լեփսիուսներ շատ չունեցավ սակայն Գերմանիան պատերազմի այդ տարիներուն, որպեսզի պաշտպան կանգնին դժբախտ ժողովուրդի մը, անոր մարտիրոսագրության միջոցին։ Հազվադեպ եղան նաև Լիբկնեխտները՝ իրենց զայրույթի աղաղակը հնչեցնելու համար գերման ռայխստագին մեջ։

Ու տեղին է ըսել այստեղ, որ հայ ժողովուրդը պիտի չկարենա երբեք մոռնալ նաև այն քանի մը օտար հյուպատոսները կամ միսիոներական առաքելությանց կարգ մը անդամները, որոնք նախախնամությունն եղան իրեն համար իր մարտիրոսագրության օրերուն։ Այն միսիոներներու կողքին, որոնք զանազան խայծերու ուժով հայ ժողովուրդի խիղճը գնելու եկեր էին, գտնվեցան առաքինի մարդիկ ալ, որոնք արցունք թափեցին հայ ժողովուրդին հետ, և աղետեն հետո գացին աշխարհի խիղճը խաղաղել, թեև անզոր եղան հաճախ իրենց բոլոր ճիգերը՝ ցնցելու համար մարդոց քարացած հոգին։ Եթե գերմանները վանգենհայմ մը հանեցին դեմը մեր սև օրերուն, մեր մեծ դաշնակիցները հետո, հատուցման ժամուն, Ֆրանքլեն Բույոններ տվին, որպեսզի մեր դատը հողոտեն...։

XIV.— Ամոթով չմնաց հայ պատմությունը

Դժբախտ բան պիտի ըլլար, եթե հայ ժողովուրդը մարտիրոսության իր տարիները պատմության հանձներ ողբով ու սուգով, և վաղվան պատմիչը պարզապես արձանագրեր, թե ան ջարդվեցավ գառնուկի մը պես, առանց ծառանալու գոնե պահ մը իր դահիճներուն դեմ։

Հայոց պատմությունը բարեբախտ եղավ։

Հայ ժողովուրդը ընդվզման շքեղ պահեր ևս խառնեց իր նահատակության, որպեսզի վաղվան մարդիկը չամչնան սև տարիներու դիրքը օր մը թղթատած ատեն։

Ընդվզման այդ զմայլելի դրվագները շատ չեղան թիվով, ու կարճ տևեցին։ Բայց անոնք եղան այնքան վսեմ, որ հաջորդ մեր սերունդները պիտի չկրնան չհոնարհիլ հերոսական այն մարտնչումներուն առջև, որոնց ականատես եղավ աշխարհ այնպիսի օրերու, երբոր հայոց դահիճները զգետնած ըլլալ կկարծեին դարավոր կաղնին։

Ի՞նչ պիտի կրնար ընել, արդարև, ժողովուրդ մը, որ այլևս ոչ զեկավար ուներ, և ոչ ապավեն, ոչ իսկ հույսի դույզն ծվեն մը, ժո-

10 Dr. Harry Stuermer, „Deux ans de guerre à Constantinople", Paris, 1917.

ղովուրդ մը, որ անձնատուր եղեր էր արդեն իր դահիճներուն, Ջեյթունն անգամ արդեն մատաղ ըրած անոնց, այնքա՜ն ատեն։

Այդ ժողովուրդը կրցավ սակայն փոթորկիլ տեղ-տեղ, շշմեցնել իր դահիճները, և հպարտ ներկայանալ պատմության առջև։

Հայ ժողովուրդի այդ հոյակապ պահերը դահիճը ինքն էր որ ստեղծեց։ Անոնք հանկարծական պոռթկումներն էին ժողովուրդի մը, որ կբռնկի հանկարծ իր հուսահատության մեջ, ու կփորձե խեղդել ոճրագործին վայրագ ծիծաղը իր զոհերուն դիակին առջև։

Պոռթկումը սկսավ Վանեն։ Ոչ ոք խորհեր էր ապստամբիլ հոն։ Երիտասարդ թուրքերն էին, որ զայն ոտքի հանեցին ու ծառացուցին իրենց դեմ։ Ճիվաղներուն ամենեն նենգամիտներեն մին՝ Ջևդեթն էր ղրկվեր, որպեսզի բնաջնջե Վասպուրական աշխարհը, ու ան արդեն սկսեր էր հայ ղեկավարները որսալ։ Ապրիլ 16-ի և 17-ի օրերը փորձության պահեր եղան Վանի համար։ Ջևդեթ անհետացուց երկուքը հայ ղեկավարներեն, ու կաշխատեր լայնցնել իր որոգայթը։ Վանը ծուղակը չինկավ։ Ան պոռթկաց մեկեն։ Ապրստամբությունը, զոր ան սկսավ ապրիլ 20ին, եղբայրական գործակցության մը մեջ ձուլած բոլոր տարրերն ու տարիքները, ու դիմացուց ամբողջ ամիս մը, մինչև հասան հայ կամավորները, մեկն է այն շքեղ հերոսամարտերեն, զորս երբևիցե արձանագրած ըլլա մեր պատմությունը։ Վանը, ինքը մինակը, այդ պատմությունը կրնա պսակել փառքով։

Սահմաններեն և ապավեններե հեռու, հայ ժողովուրդի պատմության ամենեն եղերականն և ամենեն շքեղ դրվագներեն մեկը պիտի արձանագրեր Շաբին-Գարահիսարի հերոսական ժողովուրդը դահիճներուն դեմ մղած իր զմայլելի դյուցազնամարտով, 1915 հունիս 5-են 28։ Աննման այս քաղաքը, որ Անդրանիկն էր տվեր հայ ազատագրական պայքարին, հանկարծ Ղուկաս աղքատներ ծնցուց իր ծոցեն, որպեսզի պատմությունը չըսե, թե արժանի չեղավ իր ֆեդայիներուն։ Որպեսզի աքսորի ճամբան չբռնե մյուս հեք քաղաքներուն պես, որոնք, կարինեն սկսյալ, բռնի հանվեր էին իրենց օջախներեն՝ հնձվելու համար ճամբան, Շաբին-Գարահիսար նախընտրեց ավելի պատվով մեռնիլ, այսինքն զենքը ձեռքին։ Ու ան, ամրացած բերդին մեջ, այդ զենքը չձգեց ձեռքեն, մինչև վերջին պատառը հացին։ Իրենց հուսկ ճիգերուն մեջ, կռվողները իջան բերդեն վար, կտրեցին Թշնամիին շղթան, ու ցրվեցան դաշտերը, դեռ երկար ատեն կռիվ մղելու և սակայն սպանվելու համար քաջերու նման։ Մինչ հոն, վերը, բերդին մեջ, իրենց կիներն ու մանուկները թույն կառնեին, որպեսզի ողջ չգտնե զիրենք Թշնամին։ Ու երբ, հունիսի 28-ին, Թշնամին ներս մտավ բերդեն, դիակներ միայն գտավ։

Հեռվեն, Միջերկրականի ափերեն, արձագանք տվավ Սվեդիան, Մուսա լեռան իր հայկական 6 գյուղերով, որոնք Բիթիասը, Հաջի-Հաբիբլին, Յողուն-օլուքը, Խըըր-բեյը, Վաքըֆը և Քեբուսիեն էին, և որոնք, մերժելով թուրք բարբարոսներուն հրամանը իրենց հայրենի լեռներեն բաժնվելու և տարագրության ճամբան բռնելու, Մուսա լեռ բարձրացան 1915 հուլիս 31-ի գիշերը, և այն տեղեն, ամբողջ 40 օր, այսինքն մինչև սեպտեմբեր 12, կռիվ մղեցին թրքական ստվար ուժերու դեմ, մինչև որ ֆրանսական-մարտանավեր եկան Պորտ-Սաիդ փոխադրելու զանոնք։ Մուսա լեռը ևս պատմության անցավ, իբրև մեկը այն հպարտություններեն, որոնցմով կոգևորվին սերունդները, ամուր կառչելու համար հայրենի սրբություններուն և ավանդություններուն։

Եդեսիան նույնպես պանծալի էջ մը կտակեց պատմության, ինք ևս ծառանալով իր դահիճներուն դեմ, ու մղելով հերոսական կռիվ մը 1915 սեպտեմբեր 29-են մինչև հոկտեմբերի վերջերը, միս-մինակը, անօգնական, իր բախտին ձգված։ Եդեսիան իր կարգին ինքն ալ ցույց տվավ սերունդներուն, թե մարդիկ չեն վախնար թիվեն, եթե իրենց մեջ բռնկած է սրբազան խենդությունը, որ հայրենասիրություն կկոչվի։ Մկրտիչ Յոթնեղբայրները նախախնամությունն է, որ կղրկե ժողովուրդներուն, որպեսզի չդողան Թշնամիին առջև, որքան ալ հզոր ըլլա ան։

Ու որքա՜ն իրավունք ուներ մեծ վիպասանը, երբոր կգրեր, թե «Ուրֆայի անզուգական, աննախընթաց հերոսամարտը, մեն-մենակ բավական է մի պատմություն զարդարելու դարերի համար»։

Հայոց մարտիրոսագրության իրենց փառքը խառնած այս չորս հերոսամարտերը կրնան անմահության պսակել որևէ ժողովուրդ։ Բայց անոնցմով չի փակվիր շարքը այն վսեմ պոռթկումներուն, զորս հայ ժողովուրդը տեղ-տեղ ունեցավ, որպեսզի դահիճը դյուրավ չխողխողե իր զոհը։ Ահա Շատախը, Վասպուրականի այս արծվեբույնը, որ չուզելով Ջևդեթներու վայրագության ենթարկել իր գոյությունը, 1915 մարտ 29-են մինչև մայիս 11, ուրեմն ավելի քան քառասուն օր, իր Թշնամիներուն դեմ ահավոր գոյամարտ մը մղեց, մինչև հայ կամավորները հասան։ Ահա Սասունը, որ նույնպես վերջին ճիգ մը ըրավ Թշնամին սարսելու, ֆեդայիներուն գերեզմանները անոնց հանձնելե առաջ։

Ու դեռ հերոսական ի՜նչ դրվագներ արձանագրեց հայ մարտիրոսագրությունը մութին

մեջ։ Որքա՜ն հերոսներ եղան, որոնք իրենց դահիճը զարհուրեցուցին, մահվան դեմ իրենց ցույց տված արհամարհանքով, որքա՜ն անձնվեր մարդիկ, որոնք զոհվեցան ուրիշին համար, կիներ, որոնք թույն առին կամ անդունդն ի վար գահավիժեցան, որպեսզի թուրքը չհպի իրենց, ծերունի հայ հոգևորականներ, որոնք, կորաքամակ ու կիծու, քալեցին դեպի Գողգոթա, իրենց հոտին հետ մեկտեղ։

Եղերական դրվագները, որոնց ականատես եղավ հայ ժողովուրդի Գողգոթան, և այն ցասման ու պոռթկումի վսեմ պահերը, զորս արձանագրեց հայ մարտիրոսագրության պատմությունը, ի՜նչ զարհուրելի և ի՜նչ ալ շքեղ էջերու նյութ կրնային դառնալ։ Մուսա լեռը իր պանծացումը գտավ զմայլելի այն վեպին մեջ, որով Ֆրանց Վերֆել հայ ժողովուրդի մեծ ողբերգությունն ու դյուցազնությունը պատմեց աշխարհի բոլոր ժողովուրդներուն։ Բայց Մուսա լեռներ շատ ունի հայ ժողովուրդը, և շատ Բագրատյաններ, որոնք կրնան աշխարհը ծունկի բերել զմայլանքով ու երկյուղածությամբ։

Պետք է ըսել, ի պատիվ հայ ժողովուրդին, թե հոգեպես ամուր մնաց իր դահիճներուն առջև։ Դույզն եղավ թիվը հայերուն, որոնք տկարացան փորձությանց պահուն, և շատ ավելի դույզն թիվը անոնց, որոնք դավաճանեցին իրենց ժողովուրդին։ Այո, եղան քանի մը հրեշներ Արշավիր Շահյանի կամ Հարություն Մկրտիչյանի, Հմայակ Արամյանցի կամ Միհրան Յըլանճյանի, Վահե Իհսանի կամ Հիդայեթի նման, որոնք թուրք ոստիկանության աջ բազուկն էին, բայց անոնք պիտի չկրնան ստվեր ձգել այն փառավոր էջերուն վրա, զորս հայ մարտիրոսագրությունը արձանագրեց իր հերոսան դրվագներով։

... Ու հիմա հայ ժողովուրդը պատմության կներկայանա խիղճը խաղաղ. իր տառապանքին մեջ անգամ իր հոգին չվաճառեց ան, ու չպղծեց դարերուն բերած կտակը։ Դարավոր ստրկության մեջ իր քաջությունը կորսնցուցած ժողովուրդ մը չէր կրնար անշուշտ տկարության պահեր չունենալ։ Բայց փոխարեն, որքա՜ն հերոսներ ալ ցցեց աշխարհի գոսացած խղճմտանքին դեմ, ու իր զոհերն անգամ հուսալով մեռան։

Ան արժանի եղավ իր պատմությանը։

XV.— Մարտիրոս Հայ Եկեղեցին

Մարտիրոսացավ նաև Հայ Եկեղեցին։ Դահիճը չխնայեց և անոր։

Ու շատ տրամաբանական էր։ Պիտի չկարենար հայությունը խորտակել իսպառ, քանի կանգուն էր Հայ Եկեղեցին։

Նախ որ Հայ Եկեղեցվո հովանիին տակ հայ ժողովուրդի վայելած որոշ իրավունքները կջղայնացնեին զայն, և հազար կանիծեր Ֆաթիհ սուլթանը, որ հանդուրժողության վայրկյանի մը մեջ թույլատրեր էր հունաց Պատրիարքությունը և հայկական մըն ալ ստեղծեր էր անոր կողքին։ Հայոց Պատրիարքարանը, ինչպես և հունականը, երկար ատենե ի վեր աչքի փուշ էին թուրքին, այն օրեն հետո մանավանդ, երբ երկու պատրիարքարաններն ալ տեր կանգնեցան իրենց ժողովուրդներու ազգային դատին, ինչպես և կըռվան հանդիսացան անոնց հոգեկան վերելքի ճիգերուն։

Իթթիհադին համար պատերազմը լավագույն առիթն էր հայոց Պատրիարքարանի լուծեն փրկվելու, հաշվեհարդարի ենթարկելով չարիքի այդ վտանգավոր բույնը։ 1916 հուլիս 19-ին (օգոստոս 2) լույս տեսած որոշմնագրով մը լուծված կհռչակվեր 1863-ի Ազգային Սահմանադրությունը, իբրև արմատը բոլոր չարիքներուն։ Եվ հետո, ի՜նչ կարիք կար Պատրիարաքարան մը պահել Պոլիս, ուրիշ մը Երուսաղեմ և ասոնց կողքին՝ Կաթողիկոսություն մըն ալ Կիլիկիո մեջ. ի՜նչ հարկ այսքան հովվապետներու, երբոր հոտ չկար կամ պիտի չմնար շուտով։ Եվ ահա նույն որոշմնագրով, բոլոր այս հաստատությունները կվերածվեին հոգևոր միակ իշխանության մը, կեդրոնացած Կիլիկիո Սահակ կաթողիկոսին անձին մեջ, ողջ մնացած քանի մը հայ հոգևորականներե սինոդ մը ունենալով իր կողքին։

Երիտասարդ Թուրքերը մեկ հարվածով կջնջեին այսպես դարերու ընթացքին նվիրագործված օրինական կացություն մը, և կստեղծեին իրավական նոր վիճակ մը, ուր հայ եկեղեցական իշխանությունը այլևս խրտվիլակ մը միայն կդառնար։

***

Հայ Եկեղեցին իր դիրքն ու հեղինակությունը կկորսնցներ այսպես։

Երիտասարդ Թուրքերը շատ լավ գիտեին, որ Հայ Եկեղեցին պատնեշի դեր է կատարած դարերով հայ ժողովուրդին համար, ոչ միայն տեր կանգնելով անոր իրավունքներուն աշխարհի առջև, այլ նաև հույսի վառարան մը դառնալով անոր։ Ու ան պիտի շարունակեր այդ հույսի օջախը մնալ, քանի հոգևորականություն մը գտնվեր անոր գլուխը։

Հոտը բնաջնջած ատեն, չխնայեց նաև հովիվին։ Եվ արդարև, Հայ Եկեղեցին իր բովանդակ հոգևորականությունը զոհ տվավ հայաջինջ սարսափներուն։ Գավառական թեմերու առաջնորդներեն, առաջնորդական փոխանորդներեն և վանահայրերեն սկսյալ

մինչև գյուղերու համեստ քահանաները երիտասարդ թուրքերու վայրագության զոհ գացին, սպաննվելով երբեմն այնպիսի չարչարանքներու և խոշտանգումներու տակ, որոնց քով կնսեմանային հին սուրբերու կրած չարչարանքները։

Ջմոռնանք հիշել, որ հայ կաթոլիկ հոգևորականությունը ևս իր արյան տուրքը տվավ հղեռնին։ Կեսարիո, Խարբերդի, Սեբաստիո, Մերդինի, Խարբերդի թեմակալ առաջնորդները զատ, որոնք տանջանքներու մեջ նահատակված են ջարդարարներեն, զանազան գավառներու, ինչպես Կարինի, Խոտորջուրի, Ալաշկերտի, Բասենի, Մշո, Սեբաստիո, Կյուրինի, Մալաթիո, Տրապիզոնի, Ադանայի, Տիգրանակերտի, Խարբերդի և Մերդինի մեջ գործող քանի մը տասնյակ վարդապետներեն քիչերը միայն կրցան դառնալ ետ։

***

Հայ Եկեղեցին ու հայ եկեղեցականը արժանի եղան իրենց հավատքին ու իրենց ժողովուրդին։ Անոնք երբեմն այնպիսի դյուցազնական դրվագներ հանձնեցին հայոց պատմության, որոնցմով չի կրնար չհպարտանալ հայ ժողովուրդը, և որևէ ժողովուրդ։

Ջսպե՛ արցունքդ, ընթերցող, եթե կրնաս, երբոր հիշեմ քեզ սա ծերունի քահանան, որ կիոտ ոտքերով կքալե Դեր-Զոր գացող քարավանին հետ, խաչն ու սուրը ձեռքին, և որ կըսե իր շուրջիններուն, երբ կզգա, թե ջարդարարներե պաշարված է քարավանը.

— Զավակնե՛րս, քանի մը ժամեն հարձակում պիտի կրենք և մեզ բոլորս պիտի սպաննեն։ Ամենքս մեկ ուխտենք քաջ ըլլալ։ Երբ հարձակումը սկսի, ամեն մեկս թշնամի մը սպաննենք սպաննվելե առաջ, որպեսզի օրհնյալ ըլլա մեր հիշատակը...։

Հետո դառնալով քանի մը փոքրիկներու, որ իր շուրջն էին, կըսե.

— Փախե՛ք, տղաքս, և եթե ողջ մնաք, օր մը այս բոլորը պատմեցե՛ք անիծված աշխարհին...։

Իսկ սա մյո՞ւս քահանան, Ուրֆայի Տ. Գաբեգինը, որ թուրքերուն գնաց հանձնվիլ եբեցկինոջ հետ, որպեսզի իր հոտը փրկե, և որուն համար մեծ վիպասանը գրեց. «Ուրֆայի հայոց այս հեզ ու խոնարհ քահանան և իր հոտի ընտիրները կարողացան մեծ լինել հավիտենականության համար»։

(Շարունակելի)

ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԸ ՓԱՐԻԶԻ ՓԵՌ-ԼԱՇԵԶԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԵՐՈՍ ՋՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՐՑՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Անդրանի՛կ, քա՛ջ վավակ հայ ժողովուրդի, դո՛ւն՝ ապատության վինվոր, դուն՝ արդար բավուկ, դուն՝ պաշտպան հավատո և հայրենյաց, դուն՝ մեր պատմության բարայրներեն լույս աշխարհ եկած նոր օրերու Մհեր. ահավասիկ Ես, Հայոց Հայրապետը, քեզի կու գամ Ս. Էջմիածնեն, Հայոց աշխարհեն, և քեզի ողջույն կբերեմ:

Կբերեմ քեզի նաև վկայությունը, թե վերածնած մեր Մայր Հայրենիքին մեջ, քու հոգիդ կսավառնի իբրև արծիվ, Հայաստանի սարերուն և ձորերուն վերև: Եվ մանավանդ այս օրերուն, երբ ապգովին ծունկի եկած պիտի աղոթենք մոտ երկու միլիոն մեր նահատակներու հոգիներուն խաղաղության համար, նաև հայրենիքի քու եղբայրներուդ, քույրերուդ և վավակներուդ հայացքները դեպի քեզի են ուղղված Բարգանքով, երախտագիտությամբ, ուխտդ իրենց սրտերուն մեջ ամուր պահած:

Հայրենիքեն ափ մը հող ես չբերի հետս գերեզմանիդ, վասնզի հոգիս կվկայե, թե հեռու չէ այն օրը, երբ ինքը հայրենի հողը իր կուրծքը պիտի բանա և ընդունի աճյուններդ, ուր դուն պիտի հանգչիս հավիտյան:

Անդրանի՛կ, քա՛ջ վավակ Մեր, օրհնությո՛ւն քու հիշատակիդ. օրհնությո՛ւն քու կատարած գործիդ. օրհնությո՛ւն կես թողած գործիդ: Եվ Ամենայն Հայոց Հայրապետին սրտեն ջերմեռանդ մաղթանք Իր ժողովուրդին՝ քու մեծ գործդ հասցնելու իր լրումին...:

ՎԱՉԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

Փարիզ,
Գեո-Լաշեզի գերեզմանատուն,
4 փետրվար 1965:



ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԽՈՀԵՐ ՄԵԾ ԵՂԵՌ Ի ՄԱՍԻՆ

Մեծ եղեռնից մի կաթիլ է ամեն հայ մարդ։

*

Տիեզերական վիշտը զգացել եմ, հասկացել հայության մեծ վշտի միջոցով։

*

Դու, հայ ժողովուրդ, մեծ, ամուր ժողովուրդ։ Ինչե՜ր տեսար... Աշխարհք ամեն վրադ թափվեցին. մարդ չմնաց, որ չխոցեր քեզ, առամ չմնաց, որ չկծեր քեզ, և գարշապար, որ չկոխեր քեզ...։

Բայց դու մնացիր մեծ ու անսասան։ Աշխարհ լիներ քո տեղը՝ կփլվեր, օվկիան լիներ՝ կցամաքեր, երկինք լիներ՝ կմարեր իր արևներով ու աստղերով...։

*

Հայը տիեզերքի չափ սիրտ պիտի ունենա, որ կարողանա այս ցավերին դիմանալ, այս անարդարությունները համբերել և վատությունները հանդուրժել։

*

Մենք հազար տարի շինեցինք, թշնամին մի օրում քանդեց։

*

Մի՞թե երկրագունդը, հողագունդը կարող է ծծել հայի թափված անծիր արյունը՝ չի՛ կարող, անուժ է։

*

Հայոց ժողովուրդ՝ տանջանքի հսկա։

*

Հայ ծնվելը դժբախտություն է, հայ մնալը՝ հաղթանակ։

*

Պատրանքե պատրանք, խոստումն խոստում, հույսե հույս և ջարդե ջարդ՝ այս է եղել մեր կյանքը, հայի կյանքը։

*

Հայաստանը ավեր, ամայի է, բայց նրա հոյակապ ավերակների հետքերից օտար ուղևորը այն կեզրակացնի, թե այստեղ ժողովուրդը աստվածային հզոր թևեր է ունեցել՝ ճախրելու գաղափարների կատարյալ ոլորտում։

*

Տիեզե՛րք, գլուխ խոնարհիր հայ նահատակության առաջ. նա քավության նոխազը եղավ քո ոճիրների համար։

*

Հայերը... դժոխքի հատակը այս երկրի վրա տեսան։

*

Հայկական կոտորածները ապրելով հավատացած էի, որ այսուհետև աշխարհը վերածվեց քաոսի՝ է՛լ ծաղիկ չպիտի բուսնի, է՛լ թռչուններ չպիտի երգեն, գետակը չպիտի կարկաչի և արևը չպիտի ծագի։

*

Եվրոպան միշտ այդ է եղել՝ ողջ ու մեռել ուտող բորենի, բայց մենք չենք ճանաչել, մեր սրտի միջոցով ենք նայել այդ ոհմակների վրա...։ Այժմ խնդիրը պարզ է...։

*

Հայ ժողովուրդը զգաց իրականությունը, դաժան իրականությունը։ Եվ իմաստուն դար-

ձավ, զգաստացավ։ Հասկացավ, որ «հավելյալ արյուն»-ը կապիտալիզմի «հավելյալ արժեք»-ի արդյունքն է, հետևանքը։

*

Այնքա՜ն մեծ է հայության վիշտն ու տառապանքը, այնքա՜ն ահռելի է ու անօրինակ...։ Ո՛չ մի բանաստեղծ չի կարող արտահայտել այդ վիշտն ու տառապանքը, և միայն պիտի զգալ այն հասկանալու համար։

Միլիոն ու կես ժողովուրդ մերկացնել իր հազարամյա հարստություններից, ավերել նրա հնությունները, որ նրա հոգու հատորներն են՝ իր վանքերը, ձեռագրերը, մորթել հարյուր-հազարավոր հայրեր, մայրեր, եղբայրներ, քույրեր, մանուկներ...։

*

Սուրբ է հայրենիքը. նա մեր հացն է, մայրական գիրկը, մեր մանկությունն է նա, մեր պապերի գերեզմանը և մեր մանուկների զվարթ օրորոցը։ Նա մեր տարեգիրքն է, մեր հին ու նոր քնարը։

Նա հայրական տան ծուխն է, որ մեր հրճվանքն ու սիրող սրտերը հող են դարձել այնտեղ։

*

Հազար կյանք ունենամ՝ չեմ խնայի և ոչ մեկը Հայաստանի մի ժայռի համար զոհելու։ Սիրում եմ քեզ, սո՛ւրբ հայրենիք։

*

Հայրենիքը լեզուն է։ Նա է միացնում անցյալն ու ներկան, ապագան, մեռածն ու ապրողը, ծնվողը։

Նա է հավերժացնում ազգը, նա է շտեմարանում ազգի հոգեկան գանձերը։

*

Հայոց լեզվի մեջ մարմնացած է հայ ժողովրդի ոգին։ Ամեն մի բառը նրա հոգու մի կտորն է։ Այդ բառերի մեջ են նյութացած, առարկայացած մեր վիշտը, զրկանքները, դառն ու զվարճալի ապրումները, մեր երազները, հույսերը, ըղձերը, սերը՝ մեր ողջ ժողովուրդը։ Եվ ինչպե՞ս լքենք հիմա այդ լեզուն, ուրանանք, մոռանանք, մեռցնենք։ Նրա համար ծով-արյուն են թափել մեր նախնիները։

*

Հայրենասիրությունը այն է, որ հայերը ամենուրեք իրար պատկանեն և միասին՝ հայրենիքին։

*

Դո՛ւ, հայ պաշտելի ժողովուրդ, դասական աղնիվ ժողովուրդ։ Դու, ադամանդ, ադամանդի պես ամուր։ Փշրվեցին, փոշի դարձան հինավուրց Ասուր-Բաբելոնը. դու կա՛ս ու կամք ունես հավերժության։

*

Մասիսը, Արաքսը միաձուլված են, շաղախված հայոց ճակատագրի հետ, պատմության հետ, հայ հոգեբանության, սրտի հետ։

*

Երևանը, նրա մթնոլորտը լցված է հայության ձայնով, հայերենով. օրեցօր, ամեն օր, ամեն ժամ, ամեն վայրկյան լցվում է հայությամբ ու հայերով։ Ականջդ միալար հայության մեջն է, հայերի։ Պառկում ես և լսում՝ ծառերը հայերեն են սոսափում, թռչունները հայերեն են ծլվլում, առվակները հայերեն են խոխոջում։ Ամեն քար ու իր, աստղ ու երկինք հայերեն, հայկական, հայաշունչ։ Մարդ միայն իր հայրենիքում կարող է մնալ հարազատ ազգային։

*

Անի՛—ահա այստեղ է իրականացած ցնորքը. ամեն ինչ կատարյալ է. գեղեցիկը մարմին է առել այստեղ...։

Անիի Մայր Եկեղեցին... ո՜վ քարացած ցնորք, դո՛ւ, նյութացած թռիչք ոգու և աղոթքի և աննյութացած նյութ։

Անի՛—հավերժական ներշնչարան...։

Անիում ընկնում ես կախարդված վիճակի մեջ, անիրական ոլորտի մեջ։ Կատարելությունն է այստեղ մարմնացած, կատարյալի պատկերն է Անին։

Կատարյալ են պարիսպները, բուրգերը. կատարյալ են սյուները, կամարները, ամեն մի քարը, ամեն մի զարդանկարը։ Շփոթվում ես, զմայլում, վերանում, կորցնում իրականության զգացումը։

Ի՞նչ գաղտնիք է այս. ո՞ւր է այս մեծ արվեստի գաղտնիքը, որ տարան իրենց հետ հանճարեղ վարպետները։

Անիրական է Անին, իրականությունից դուրս մի գերաշխարհ։

Ամենուրեք ցրված բեկորներ, գեղեցկի նշխարներ։

Կատարելատիպ Անի՝ գաղափարի մարմնացում, տիպար վսեմի, գեղեցկի։

Ես զգում եմ ինձ միշտ Անիի քաղաքացի։



Մ. ՍԱՐՅԱՆ
(ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ)

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԱՊՐԻԼ 24-Ի ԱՌԹԻՎ

Վաղարշապա՛տ, Մայր Տաճա՛ր...։ Վանքի պատերի տակ սովից ու համաճարակից մահացող գաղթականներ...։

Ես հայ էի, և ավելի հայ էի դառնում քան էի։ Իմ ժողովրդի վշտոտ ճակատագիրը իմ միջից հանել էր ամեն ինչ։ Այն ժամանակ ես ինձ նկարիչ չէի զգում, իմ մեջ միայն հայն էր խոսում, անարդար, անխիղճ աշխարհի դեմ զայրացած, բայց վրեժխնդիր լինելու անընդունակ հայը։

Ես ծնվել եմ իմ հայրենիքից հեռու, Նոր Նախիջևանում։ Իմ հայրը, իմ պապը նույնպես ծնվել են օտարության մեջ։ Բայց այն ժամանակ, երբ կանգնել էի իմ ժողովրդի դժբախտության դեմ հանդիման, ինձ թվում էր, թե երբեք ու երբեք ոչ մի ժամով չեմ բացակայել իմ հայրենիքից, որ գաղթականների հետ գաղթել, կոտորվողների հետ կոտորվել, մեռնողների հետ մեռել և ապրողների հետ ապրել եմ նաև ես։

Այդ ժամանակ էր, որ իմ մեջ ծնվեց և ողջ կյանքիս ընթացքում ուղեկցեց այն զգացումը, որ ես հազար-հազար տարեկան եմ, իմ ժողովրդի տարիքին, և կռվել ու զոհվել եմ Ավարայրի ճակատամարտում, մասնակցել եմ Հեյթունի հերոսական պաշտպանությանը, կոտորվել եմ ու նորից հարատևել։

Հիմա, երբ հիշում եմ այդ ծանր տարիները, սովից կմախացած երեխաներին, կանանց ու ծերերին, մի բան անջնջելի և ուժեղացող պարզությամբ հառնում է իմ հիշողության մեջ։ Այն տարիներին ոչ գարունն էր գարուն, և ոչ էլ մարդիկ էին մարդիկ։ Ամեն ինչ փոխվել էր, միայն մի բան էր անփոփոխ մնացել՝ հայի աչքերը, թախծախառն, բարի աչքերը, որոնք կարծես ավելի էին մեծացել, ավելի էին խորացել, վշտով լցվել ու բարիացել, այո՛, այո՛, բարիացել։ Պատահաբար չէ, որ այսպես եմ ասում։ Իմ ժողովուրդը տառապանքից առավել մարդկայնանում, ազնվանում և հարստանում է։ Դա զարմանալի հատկություն է, և ես հիմա էլ հաճախ մտածում եմ այդ մասին ու ասում ինքս ինձ. «Քո ժողովրդի ճակատագիրը այդպիսին է և հենց դրանով է պայմանավորված նրա ուժը»։

Այո՛, մենք գիտենք տառապանքը իմաստության, բարության վերափոխելու գաղտնիքը։ Մեր ժողովուրդը կարողացավ իր արցունքների կաթիլների մեջ շատ ու շատ արևներ անդրադարձնել։

Ահա տեսնում եք, ես էլ իմ ժողովրդի զավակն եմ, կոտորածը հիշելու պահին, ընկճվելու փոխարեն փորձում եմ փիլիսոփայել։ Եվ ինչո՞ւ չփիլիսոփայեմ, երբ այդ ընդու-

նակությամբ է հաստատել իմ ժողովուրդը իր գոյությունը, ահա քառասուն և ավելի տարիներ, տիրացել իր հողին, իր ազատության և պետականության: Ով եթե երեկ արևի ճառագայթներն էին միայն անդրադարձվում նրա արցունքների կաթիլների մեջ, ապա այսօր մի ամբողջ արև է շողշողում իր գլխի վերև:

1915 թվականն էր: Ես Վաղարշապատ էի եկել: Հիշում եմ, փորձում էի ամեն ինչով օգնել իմ տառապյալ ժողովրդին, Մայր Տաճարի պատերի տակ սովից ու համաճարակից մեռնող մայրերին, երեխաներին, ծերերին: Ես այդ տարիներին ոչինչ չնկարեցի և հետո նույնպես: Իսկ ո՞վ կարող է իր սեփական որդու մահը նկարել...:

Օտարականներից մեկը մի անգամ ինձ հարցրեց, թե ինչո՞ւ մինչև հիմա հայերը իրենց մեծ եղեռնը գրական և կամ նկարչական մեծ կտավով չեն պատկերել: Դժվար էր նրան բացատրել...:

Ես, իհարկե, այդ մեր մեծ վիշտը նկարել եմ, այո՛, այո՛, նկարել եմ, որովհետև հայերի աչքեր եմ նկարել, իսկ ամեն մի հայի աչքի մեջ մեր դարավոր վշտի կուտակումը, խտացումը կա և այն արցունքը, որի կաթիլի մեջ շատ ու շատ արևներ են անդրադարձվում:

Ու հիմա, հինգ տասնյակ տարի հետո, երբ իմ ժողովուրդը պատրաստվում է նշելու մեծ եղեռնի հիսնամյա տարելիցը, ես ուզում եմ իմ խոսքն ուղղել ողջ աշխարհին:

Ոտքի վրա է, ապրում է և ստեղծագործում իմ ժողովուրդն այսօր: Ցեղասպանություն կոչված բոլոր մութ ուժերը պատմության գիրկն անցան: Ժողովուրդը հարատևեց, բայց հարատևեց և վիշտը: Ով որպեսզի այլևս որևէ ժողովուրդ զոհ չգնա ցեղասպանությունների և մարդկության դեմ նոր, ահավոր հանցագործություններ չիատարվեն, պետք է հավաքական անդուլ աշխատանքով, միասնական պայքարով ու վճռականությամբ շղթայել ազգերի միջև չարիք և ատելություն սերմանել փորձող բոլոր մութ ուժերին և ճշմարիտ եղբայրություն, խաղաղություն հաստատել բոլոր ժողովուրդների միջև:

Այս հույսը, այս հավատն է, որ իմ մեջ ապրում է այսօր, իմ ժողովուրդի մեծ եղեռնի հիսնամյա տարելիցի նախօրյակին:



ՄԱՐԻԵՏՏԱ ՇԱՀԻՆՅԱՆ

ՍՐՏԻ ՁԱՅՆ

Սարսափելի մի տարեթիվ կա մարդկության պատմության մեջ... Ոչ միայն մեր՝ հայ ժողովրդի զավակների, այլև ամեն մի կենդանի մարդու մեջ, ով խիղճ ունի, հրեշային բնաջնջումը միանգամայն անմեղ հայերի վիթխարի զանգվածի,— որի մեջ կային կանայք, երեխաներ, ծերունիներ, մտավորականության ծաղիկը, արվեստի ու մտքի մարդիկ,— չի կարող սոսկում ու սարսափ չառաջացնել, չի կարող սիրտը չսեղմել ծանր ցավ ու մորմոքով։

Իսկ մեզ՝ հայերիս, վշտի այդ հավերժական օրը ստիպում է ավելի սուր ու խորունկ ղգալ սերը հայրենի ժողովրդի նկատմամբ, արյունակցական ու հոգեկան կապը նրա հետ։

Բայց այդ օրը միայն սուգի օր չէ։ Նշելով մեր ժողովրդի հարատև ողբերգական բախտի այդ ճակատագրական տարեթիվը, մենք ի սփյուռս աշխարհի ցրված հայերին հիշեցնում ենք, թե այժմ նրանք հայրենիք ունեն, և այդ հայրենիքը ծաղկում ու բարգավաճում է, խաղաղ արեգակն ու պայծառ աստղերը լուսավորում են նրա անդորր օրերն ու գիշերները, նոր Հայաստանի երեխաները սովորում են, պիտանի քաղաքացիներ դառնում, նրա տաղանդները բոլոր ասպարեզներում բազմանում են, նրա քաղաքներն ու գյուղերը լի են երջանիկ երիտասարդությամբ, որի առջև լայնորեն բացված են աղատ գործունեության ուղիները աշխատանքի ու ստեղծագործության բոլոր բնագավառներում, բացի միայն մեկ բնագավառից՝ մարդու ձեռքով մարդուն շահագործելուց։

Այդ նոր հայրենիքն են կանչում հայերին մեր գիտությունն ու արվեստը, մեր նոր երգերը, մեր «Կռունկ»-ը՝ երգված ժամանակակից սովետահայ բանաստեղծության կողմից։

Եվ դեպի նոր հայրենիքն է կանչում հայերին նաև հիշատակը զարհուրելի այդ տարեթվի, որ մենք այսօր նշում ենք, սգալով զոհվածներին։

8 հունվարի 1965 թ.
Յալթա



ԼՈՐԻՍՏՈՆ ԼՆՎԻՆԳՍՏՈՆ ՍՔԵՅՖ
(Արևմտյան Նյու-Յորքի եպիսկոպոս)

ՄԵՐ ՄԵԾ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

1914 թվականի մեծ պատերազմը մի անդամ ևս ապացուցեց մարդկությանը, որ մարդկային ցեղի յուրահանությունը մեր սեփական ձեռքերի գործերով չէ որ ապահովվում էր։ Անասնական բնազդներից մղված, մարդիկ կռվում էին միմյանց հետ, հիմքից սասանելով քաղաքակրթության ամբողջ շենքը։

Բայց և այնպես, ամենասարսափելի պահերին, պատմությունը արձանագրել է մարդկանց բազմաթիվ օրինակներ, որոնք գալիս են հաստատելու այն ճշմարտությունը, թե քաղաքակրթության շենքի անսասանությունը կարող է ապահովվել միայն Աստուծո օգնականությամբ և թե մեր աշխատանքը Տիրոջ մոտ իզուր չի անցնի բնավ։ Այդ մարդկանց մեջ ահա, ո՛չ ոք այնքան արժանի չի եղել փառքի, որքան այն մեծ հայերը, որոնք Գևորգ Ե Կաթողիկոսի գահակալության ժամանակ, 1915 թվականի ապրիլ ամսին սկրնավորված զարհուրելի կոտորածների ընթացքում, մարտիրոսության պսակն ընդունեցին։ Նրանք իրենց հույսը դնում էին ոչ թե երկրային կառավարությունների վրա, այլ բարեգութ Աստուծո Վերին Քաղաքի վրա։

Մեր օրերում, բոլոր ազգերի մեջ, երկրային բազմաթիվ ձայներ հորդորում են մեզ առաջնորվդել Աստուծո նկատմամբ ունեցած մեր վստահությամբ և այն հավատով, որ Նա աշխատեց մեր փրկության համար Իր Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով։ Մենք համոզված ենք, որ հնարավոր է դիմադրել սատանայի բոլոր չար խորհուրդներին և խոստումներին, որովհետև մենք միշտ մեր աչքերի առաջ ունենք հսկայական բազմությունն այն նշանավոր հայ մարտիրոսների, որոնք հրաժարվեցին երկրային կյանքից, որպեսզի հավատարիմ մնան Աստուծո, հաճելի երևան Նրա աչքին և ընդունեն այն օրհնությունը, որ Նրա ամենասիրելի Որդին պիտի բաշխի բոլոր աստվածասեր և աստվածավախ մարդկանց՝ ասելով. «Ekayf, orhnealf Xor imoj, žamanagegelf qpatrastel ałeq qarfayutiwn i skzbanē ašxarhi» (Մատթ. իե 34)։

Ո՛վ ողորմած Հայր, աղաչում ենք Քեզ, մեր Միջնորդ և Փրկիչ Հիսուս Քրիստոսի միջոցով, մե՛զ նույնպես տուր այդ շնորհները։ Ամեն։

20 դեկտեմբերի 1964 թ.

ԼԵՎՈՆ-ԶԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ

ՏԱՍԸ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ես անցա մեծ եղեռնեն. բացի այդ, ճերմակ ջարդի զոհերեն եմ։ Անգլերեն կխորհիմ, հայերենի կջանամ թարգմանել խորհածս, բայց մայրենի լեզվիս բառերը կխուսափին ինձմե։ Ստիպված եմ լուռ մնալ գրեթե, երբ կրնամ առանձին «էջմիածինն» ամսագրի այս բացառիկ թիվը ծայրեհծայր լեցնել իմ խորհրդածություններով և ոգեկոչումով։

Շատ բան կա ըսելիք, քիչ պիտի ըսեմ.

1. Ամբողջ հայությունը մե՛կ ժողովուրդ է։ Այսօր ամբողջ հայության Մայր Հայրենիքը Սովետական Հայաստանն է։

2. Սփյուռքի հայության հետ մշակութային կապերը պետք է շարունակ ամրապնդել, տարածել։

3. Սփյուռքի հայությունը պետք ունի Հայ Եկեղեցիին։ Մեր Եկեղեցին Ազգային Եկեղեցի է և հայը հա՛յ կպահե։ Կաթողիկոսը, ինչպես Երևան եղած ատենս ըսի, մեր «Թագավոր»-ն է։

4. Ներգաղթ դեպի Սովետական Հայաստան, ուրիշ ճար չկա՛։ Պիտի լուծվինք, կորսըվինք։ Երազներով պետք չէ տարվիլ։ Տասըտասնհինգ տարի հետո կրնա շատ ուշ ըլլալ։ Ներգաղթ հիմա՛, ա՛յս տարի, գա՛լ տարի։ Ամեն կերպ քաջալերել ներգաղթը, մեր սիրելի ռուս մեծ ժողովուրդին և Սովետական Միության մյուս եղբայրական հանրապետություններուն ազնիվ օժանդակությամբ։ Ա՛յդ է իսկական հայրենասիրությունը։

5. Այն հայը, որ կդադրի հայ ըլլալե, կդադրի մարդ ըլլալե. առա՛նց բացառության։ Ես ուրիշ չափանիշ չունիմ հայերու հանդեպ։ Հա՞յ ես—բարեկամս ես. հայ չե՞ս—գուդբայ... կանցնիմ կերթամ։

6. Հայ մնալ Սփյուռքի մեջ՝ հերոսական, խանդավառիչ, կրակոտ բան է։ Այդ իրողությունը հայը կմեծցնե անհատապես։ Իրապես, սքանչելի պայքար է։ Մասամբ բախտավոր ենք այս տեսակետեն։ Հոգեկան-մտային հարստություններ կան այդ պայքարի մեջ։ Կըլլանք ավելի բարդ, խոր, մարդկային։

7. Այդ պայքարը, գիտեմ, պարտությամբ պիտի վերջանա, բայց պայքարը ավելի կարևոր է, քան հաղթանակը։ Եվ պայքարը ինքնին հաղթանակ է։

7. Ներկա աշխարհը պետք ունի փոքրիկ հայ ժողովուրդին, թիվով, հողամասո՛վ միայն փոքրիկ։ Պատմությամբ, մշակույթո՛վ՝ մեծ։ Միջազգային ժողովուրդ ենք։ Շատ լեզուներ կխոսինք։ Եղած ենք միշտ մշակութային կապ Արևմուտքի և Արևելքի մեջ։ Մենք կպատկանինք թե՛ Արևմուտքին, թե՛ Արևել-

քին։ Մենք եվրոպացիներ ենք Արևելքի շեմքին առջև։ Որպես մշակութային կամուրջ, Հայաստանը բացառիկ կարևորություն ունի աշխարհի համար՝ թե՛ Ամերիկայի համար, թե՛ Անգլիո համար և թե՛ նույնիսկ Սովետական Միության համար։

9. Ես անցյալ ամառ Հայաստանի մեջ գտա ոչ միայն հայկական, այլև մարդկային մեծ արժանիքներ։ Մեր փոքրիկ, ծաղկող հանրապետությունը չունի նավթ, հանքածուխ, և այլն. բայց ունի մարդկային հարստություններ։ Ես հուզվեցա այդ հարստություններով։ Շատ ազնիվ, պարկեշտ մարդոց հանդիպեցա։ Երևանը քաղաքակիրթ քաղաք է։

10. Սովետական Հայաստանի զարգացումն ու զորացումը, այս պատմական օղակին ամրապնդումը տարվե տարի, աշխարհի խաղաղության և բոլոր ժողովուրդներու եղբայրակցության գործին մեջ, կխաղա պատվավոր դեր մը։ Մենք, Սփյուռքի հայերս, պետք է մեր հանրապետության օգնենք ոչ միայն որպես հայեր, այլ նաև որպես ամերիկացիներ, ֆրանսացիներ, հույներ և այլն, մեկ խոսքով՝ որպես պարկեշտ, գիտակից, խաղաղասեր, աշխատող մարդիկ։

12 Հունվար 1965
Կալիֆոռնիա



ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Կ. ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ԹԵՐԹԻԿՆԵՐ ԻՄ ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆԻՑ

Հայտնի գերմանական գրող-բանաստեղծ Արմին Թ. Վեգները 1915—1917 թվականներին ծառայելիս է եղել Իրաքում, Ֆոն դեր Գոլց փաշայի բանակում, որպես գերմանական թերթերի թղթակից և սանիտարական սպա։ Նա ականատես է եղել մեծ եղեռնին, դիտել է հայ տարագիրների քարավանները՝ անդարձ ճանապարհ կտրելիս և նկարահանել է մոտ 2000 «տեսարան»...։ 1918 թվականին նա զորացրվում է և վերադառնում Բեռլին։ 1919 թվականի հունվարին նա գրում, հրատարակում է առանձին գրքույկով իր «Բաց նամակը ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին»։ Այդ նամակը շուտով լույս է տեսնում «Berliner Tageblatt» օրաթերթում, որից ամբողջությամբ կամ հատվածաբար արտատպում են բոլոր գերմանական, զվիցերական թերթերը, ապա այն թարգմանվում է ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն, հոլանդերեն, հայերեն և այլ լեզուներով։

1919 թվականի գարնանը Արմին Վեգները, հայ գաղութի հրավերով, Բեռլինի աշխարհագրական «Ուրանիա» թատրոնում, կարդում է մի դասախոսություն՝ «Հայ ժողովրդի տարագրումը Միջագետքի անապատները»։ Դասախոսության ժամանակ մոգական լապտերով նա ցուցադրում էր իր կողմից լուսանկարված մեծ եղեռնի քստմնելի ու զարհուրելի տեսարաններն ու պատկերները։

Թուրքիայի դեսպանությունը Բեռլինում, իմանալով Արմին Վեգների կազմակերպելիք դասախոսության մասին, հրահանգում է թուրք երիտասարդներին խանգարելու այդ դասախոսությունը։ Այդ երիտասարդներին և նրանց գերման բարեկամներին հաջողվում է ձեռք բերել մոտ 100 մուտքի տոմս։

Ծայրից ծայր լցված թատրոնում հնչում են Արմին Վեգների առաջին նախադասությունները, որոնցով նա հավաստիացնում է ունկնդիրներին, թե ինքը պատմելու է միայն այն, ինչ որ տեսել է, տեսածն էլ վավերացնելու է ցուցադրվող լուսանկարներով, որ ինքը անձամբ է նկարահանել։ Այս նախաբանից հետո, նա մոգական լապտերով ցուցադրում է սուլթանական Թուրքիայի աշխարհագրական քարտեզը, որի վրա ընդգծված էին այն վայրերը, որտեղից արտաքսել էին հայ բնակիչներին, ճանապարհին աշխատունակներին կոտորելով, իսկ մնացածին տարագրել Միջագետքի անապատները ի սով և ի մահ...։ Իրար հետևից լուսապաստառի վրա ցուցադրվում էին եղեռնի զարհուրելի տեսարանները, բազմաթիվ նկարներ՝ մեկը մյուսից քստմնելի, մահասարսուռ...

Ահռելի աղմուկ բարձրացավ թատրոնում. Թուրքերն ու թուրքասերները հայհոյում էին ու վարկաբեկում Ա. Վեգներին՝ ստախոս անվանելով, հայերի կողմից կաշառված, գերման-թուրքական բարեկամության թշնամի ու դավաճան։ Հայերն ու մնացած գերմանացիները աշխատում էին հակադրվել նրանց ու պաշտպան կանգնել հումանիստ քաղաքա-

ցուն և տաղանդավոր գրողին...։ Կրքերը խիստ բորբոքվել էին, հայհոյանքը վերջ չուներ. աղմկարարները չէին հանգստանում... Մանավանդ ակտիվ էր իր ճիչ ու աղաղակներով պրոֆ. Յ. Մարկվարտի օթյակում բազմած մի Թուրք երիտասարդ, որն անընդհատ հայհոյում էր Քե՛ Արմին Վեգներին և Քե՛ «գռեհիկ» ու «դավաճան» հայերին, իսկ ցուցադրված նկարները համարում էր հայերի կողմից կոտորված Թուրք խաղաղ բնակչության դիակներ, կախաղաններ և այլն։

Մեկ էլ Թատրոնում լսվեց աշխարհահռչակ արևելագետ, հայկարան պրոֆ. Յ. Մարկվարտի սաստող ձայնը՝ «Wirst du schweigen, Schweinehund»[1]։ Այս խոսքերին հետևեց մի շրմփալի ապտակ։ Ապտակողը պրոֆ. Յ. Մարկվարտն էր։

Այդ ապտակը, ուսես, մի ազդանշան էր. Թատրոնում սկսվեց մի կատարյալ տուրուդմբոց...։ Վրա հասավ ոստիկանությունը կարգ հաստատելու։

Շատպեցի հուզված պրոֆեսորիս օթյակը։ Մի երկու րոպե անց, Թուրք երիտասարդի ուղեկցությամբ, օթյակը մտավ ոստիկանական լեյտենանտը.

— Ես Թուրք դեսպան... փաշային որդի եմ, ձերբակալեցե՛ք այս դռնհիկ հային,— ասաց երիտասարդ Թուրքը, ակնարկելով պրոֆեսորին։

— Ես Բեռլինի համալսարանի օրդինար պրոֆ. Յ. Մարկվարտն եմ. կալանավորեցե՛ք այս Verbrecher-ին[2]։

— Հետևեցե՛ք ինձ, պարոն,— հրամայեց լեյտենանտը Թուրք երիտասարդին։

Հասարակության պահանջով, խանգարիչները վտարվեցին Թատրոնից և դասախոսությունը շարունակվեց։

Հետևյալ օրը հաշվետվություններ լույս տեսան օրաթերթերում այդ ուշագրավ դասախոսության մասին։ «Այժմ հասկանալի է, Թե ի՛նչ սոսկալի պայմաններում էին ապրում հայերը Թուրքիայում, երբ անգամ Բեռլինում Թուրքերը ահաբեկում են նրանց»,— գրում էր Թղթակիցներից մեկը։

***

1919 Թվականի մայիսի 14-ին, Բեռլինում կազմակերպել էինք պատարագ-հոգեհանգիստ 1915—1917 Թվականների Թուրքական հայաջինջ քաղաքականության հետևանքով բարբարոսական ջարդերի ընթացքում զոհված միլիոնավոր արևմտահայերի համար։ Այդ կրոնական-քաղաքական միջոցառումը նախաձեռնող հանձնաժողովի անդամներից էին պրոֆ. Յ. Մարկվարտն ու դոկտ. Յոհաննես Լեփսիուսը։ Դիմեցինք Վիեննայի Մխիթարյաններին՝ խնդրելով այդ նպատակի համար Բեռլին գործուղել Ներսես վարդապետ Ակինյանի գլխավորությամբ պատարագի համար հոգևորական։ Մխիթարյան միաբանությունը հավանեց իր համաձայնությունը և Բեռլին ուղարկեց Մովսես վարդապետին (երգ-երաժշտության մասնագետ)՝ նախապատրաստական աշխատանքներ կատարելու։

Նախաձեռնող հանձնաժողովը վարձեց Բեռլին-Շառլոտենբուրգի օպերայի նվագախումբը և երգեցիկ խումբը և հանձնարարեց Մովսես վարդապետին վարժություններով պատրաստել գերմանացի երաժիշտներին հայկական պատարագը հայերեն կատարելու։ Այդ աշխատանքը հաջողությամբ պսակվեց շնորհիվ այն հանգամանքի, որ պատարագը պատրաստված էր նվագախմբի համար, ընդ որում հայ բառերի տակ լատին գրերով տառադարձված էին հայկական տեքստերը։

Շուտով Վիեննայից Բեռլին ժամանեցին Մխիթարյան հայրերը՝ Հ. Ներսես վարդապետ Ակինյանի գլխավորությամբ (պատարագիչ) և Հ. Ա. վարդապետ Մարտիկյանի (քարոզիչ), Հ. Ս. վարդապետ Կոգյանի, Հ. Փիլիպոս վարդապետի և ուրիշ երկու վարդապետի մասնակցությամբ, որոնց անունները մոռացել եմ։

Հանդիսավոր պատարագը, նվագախմբի և երգեցիկ խմբի մասնակցությամբ, տեղի ունեցավ Բեռլինի մեծագույն կաթոլիկ դոմում՝ St. Hedwigskirche-ում, մայիսի 14-ին։ Տաճարում ազատ տեղ չկար, անգամ յարուսներն ու օթյակների բոլոր տեղերը զբաղված էին։ Մուտքը հրավիրատոմսերով էր։ Հրավիրված էին, բացի Բեռլինի հայ սակավաթիվ գաղութից, բոլոր դիվանագիտական ներկայացուցիչները, գերմանական ռայխըստագի դեպուտատները, համալսարանի պրոֆեսորներ, գրողներ, պետական գործիչներ, պաշտոնյաներ, մամուլի՝ Թերթերի, պարբերական հանդեսների Թղթակիցներ, խմբագիրներ, եկեղեցական գործիչներ և այլն։

Այնտեղ էր, հարկավ, և պրոֆ. Յ. Մարկվարտը։ Ես երբեք նրան այդքան մտասույզ, ինքնամփոփ, հուզված և մտասևեռ չէի տեսել։ Քարոզի ժամանակ մերթ ընդ մերթ աչքերն էր սրբում, պատարագին ինչ որ բան էր մրմնջում (ձայնը չէի լսում, բայց այդ պարզ երևում էր նրա Թավ բեղերի շարժումից)... Աղոթո՞ւմ էր նա... Տեսնե՛ս, ի՞նչ լեզվով՝ հայերե՞ն, Թե՞ գերմաներեն,— անցավ մտքովս...։ Այդ հարցը նրան երբե՛ք չեմ տվել,

[1] Շվաբական բարբառով՝ «Վերջապես, կլուե՞ս, շուն, սրիկա»։

[2] «Հանցագործ»։

անհարմար էի համարում, բայց ի՞նչ մեղքս թաքցնեմ, ինձ թվում էր, որ հայերի համար նա անպայման հայերեն է աղոթել, այն էլ անպայման գրաբար, մանավանդ որ մեկ-մեկ տեսել եմ նրա սեղանի վրա «Պատարագամատոյց»-ը և «Շարակնոց»-ը. Սիրում էր մերթ ընդ մերթ հայացի մտածել ու արտահայտվել, մեկ-մեկ էլ մեքենայաբար ստորագրում էր Յոզեֆ Մարկվարտի փոխարեն՝ Հովսեփ Բդյաշխ։

***

1919 թվականի կեսերին պրոֆ. Յ. Մարկվարտին այցելում է միջին տարիքի թխադեմ մի արևելցի, բարևում է գերմաներեն ու պրոֆեսորի հրավերով տեղ գրավում։ Պրոֆեսորն, ըստ իր սովորության, մի քանի վայրկյանում սեղանին դարսում է իր հայագիտական ուսումնասիրությունները և անմիջապես ավելացնում է. «Das hab ich geschrieben»[3]։ Այս բառերով, կարծես, ուզում է վստահություն և հավատ ներշնչել այցի եկած «հայ»-ին իր անձի նկատմամբ, քանի որ գերմանացիներից շատ-շատերը այդ շրջանում թուրքերի ազդեցությամբ կա՛մ հայատյաց էին դարձել, կա՛մ միանգամայն անտարբեր էին դեպի հայերը։

Պրոֆեսորը, ոգևորված, պատմում է այցելուին, թե ի՛նչ է գրել և ի՛նչ է գրում, բայց շուտով նկատում է, որ գերմանախոս «հայ»-ը շատ անտարբեր է իր պատմածների նկատմամբ։ Մտածում է, թերևս «հայ»-ը կարևոր գո՞րծ ունի հետը, հարցնում է։

Այցելուն պատմում է, որ ինքը մի քանի ձեռագիր է ուզում վաճառել Բեռլինի National Bibliothek-ին (նախկին՝ Königliche Bibliothek), սակայն քանի որ այնտեղ չեն կարողացել գնահատել, գրադարանի վարչությունն ուղարկել է ձեռագիրները պրոֆ. Յ. Մարկվարտին ի գնահատություն։ Այս խոսքերի վրա մեկնում է պրոֆեսորին հասցեագրված գրադարանի վարչության գրությունը։ Պրոֆեսորը խնդրում է ցույց տալ ձեռագրերը։ Այցելուն սեղանին է դնում 4 թե 5 ձեռագիր, որոնց մեջ կային հրաշալի մանրանկարներով զարդարված երկու մագաղաթյա մատյաններ, մեկը քարոզգիրք, մյուսը կամ մյուսները ժողովածուներ են եղել։

— Ինչո՞ւ եք վաճառում. բա՛ ափսոս չէ՞. դրանք ձեր պապերից մնացած սրբություններ են. ո՞վ գիտե, քանի՞ հարյուր տարի սերնդից սերունդ են անցել, մինչև հասել են ձեր ձեռքը։ Խորհուրդ եմ տալիս չվաճառել. տարե՛ք տուն, դուք էլ կկտակեք ձեր որդիներին, թո՛ղ պապական սեփականությունը ձեր տոհմից դուրս չգա։

— Պրոֆեսո՛ր, ես հայ չեմ. ես թուրք սպա եմ։

— Ապա ո՞րտեղից են ձեր ձեռքն ընկել այս ձեռագրերը,— հանկարծակիի գալով, հարցնում է նա։

— Գիտե՞ք, պրոֆեսո՛ր, երբ մենք գերմանական մի վաշտի հետ հարձակվեցինք № գյուղաքաղաքի վրա Վանի մոտերքում և այնտեղից դուրս քշեցինք ռուսներին և հայերին, գինվորները մտան տեղի վանքը և սկսեցին կողոպտել ու ոչնչացնել այն, ինչ չէին կարող իրենց հետ տանել...։ Ես նկատեցի գետնին թափթփած բազմաթիվ գրքեր. մի 10 գիրք ես վերցրի. դրանց մեծ մասն այսպես նկարազարդ էին...։ Սրանք բերել եմ Բեռլին, ուզում եմ վաճառել և ընտանիքիս համար գնուժներ կուտարել։

— Ուրեմն դուք կողոպտի՞չ եք,— ընդհատում է նրան պրոֆեսորը՝ զայրացած.— հայերի դարավոր կուլտուրական հուշարձաններն եք կողոպտել, գողացել և ուզում եք վաճառել ու հայերի դժբախտության վրա, ձեզ համար վայելուչ ու բախտավոր կյա՞նք ստեղծել։ Դո՛ւրս կորեք իմ տնից, ավազակ. Verbrecher, Bandit, Halunke! Դո՛ւրս, անմիջապես հեռացե՛ք... Raus, Verbrecher!

Թուրք սպան ձեռքը մեկնում է, որ ձեռագիրները վերցնի, բայց պրոֆեսորը թույլ չի տալիս, գոռում, կանչում է տնտեսուհուն, որ շուշմաններ[4] հրավիրի։

Թուրք սպան, տեսնելով, որ միջադեպը խնդրանում է և զայրացած պրոֆեսորից չի կարող վերցնել ձեռագրերը, ընկրկում է և փախչում նրա բնակարանից...։

Ձեռագրերը մնում են պրոֆեսորի մոտ։ Մի երեք շաբաթ անց, պրոֆեսորը ձեռագրերն ուղարկում է Վիեննայի Մխիթարյանների գրադարանը։

— Հայերի ձեռագրերը պետք է հայերի մոտ կենտրոնանան և ոչ թե ավարառու թուրքերի կամ նրանց միջոցով եվրոպական գրադարաններում,— ասաց ինձ, երբ գնացի իմ սիրելի պրոֆեսորին այցի։

***

Վերը բերված հուշաթերթիկները քաղել եմ իմ «Հուշամատյան»-իցս։ Դրանք մեծ եղեռնի հեռավոր արձագանքներն են թուրք ջարդարարների դաշնակից կայզերական Գերմանիայում։

1915—1917 թվականներին, երբ Թուրքիայում մոլեգնում էր արյունուռուշ թալանաբ-

[3] «Այդ ես եմ գրել»։

[4] Ոստիկան։

էնվերյան հայաջինջ քաղաքականության մարդախանձ կենսագործումը, գերման ժողովուրդը տեղեկություն չուներ օրը-օրին ծավալվող սպանդի մասին. գիտցողները կա՛մ անտարբեր էին, կա՛մ արդարացնում էին Թուրք կառավարությանը, կամ տեղ-տեղ էլ օժանդակում էին ջարդարարներին։

Մեծ չէր Թիվը այն գերմանական գիտական-գրական-հասարակական գործիչների, որոնք մարդասիրաբար իրենց ձայնն էին բարձրացնում Թուրք կառավարության անլուր գազանության դեմ։ Դրանց Թվին էին պատկանում հումանիստներ դոկտ. Յ. Լեփսիուսը, Կարլ Լիբկնեխտը, պրոֆ. Յ. Մարկվարտը և գրող-բանաստեղծ Արմին Վեգները։

Յ. Լեփսիուսը, իր անձը վտանգի ենթարկելով, մեկնեց 1915 Թվականին Թուրքիա, հավաքեց հարուստ նյութեր հայաջինջ սպանդի մասին, բերեց Բեռլին, լույս ընծայեց առանձին գրքով և տարածեց Գերմանիայում, ապա կայզերական կառավարության հետապնդումներից խույս տալով, անցավ Հոլանդիա, որտեղ գիրքը Թարգմանեց և լույս ընծայեց անգլերեն։ Այս գիրքը առաջին համահավաք հավաստի փաստագիրքն էր եղեռնի մասին։

Դոկտ. Յ. Լեփսիուսը, որպես հայասեր, քաջ ծանոթ է հայ հասարակությանը, Թեկուզ Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հոյակապ վեպից։

Մեր մամուլում գրվել է նաև Կ. Լիբկնեխտի հայանպաստ ելույթի մասին գերման Ռայխստագում։

Այստեղ մենք հակիրճ պատմել ենք միևրկու կենսագրական բնույթի դրվագներ անկեղծ հումանիստ պրոֆ. Յ. Մարկվարտի և գրող-բանաստեղծ Արմին Թ. Վեգների հայապաշտպան մարդասիրական գործունեությունից[5]։ Հայ ժողովուրդը պետք է ճանաչի իր այդ ազնիվ ու ժողովրդանվեր վաստակավորներին։

---

[5] Տե՛ս «Բաց նամակ Վ. Վիլսոնին» և «Հայ մորը»։



ՀԱՄԱՍՏԵՂ

«ՀԱԻԱՏՔ ՔՈ ԿԵՑՈՒՍՑԵՆ ՋՔԵՋ»

Ավետարանեն կուգա այդ ճշմարտությունը։ Քուկդ է կյանքը, նաև երկինքը, երբ հավատաս։ Հավատքը մարմնին մեջ կդառնա հզոր ուժ և պայքար։ Այդ պայքարով է, որ կյանքը իր զգայարանքներու իմաստութեամբ կմտնե հավիտենականության մեջ։ Հավատքին մեջ մահը վախճան չէ, այլ միջոց, հասնելու լուսավոր նպատակին։ Երկինքը իր անհուն կապույտով, արևի և աստղերու խորհուրդով, եղած է խորհրդանիշը սրբազան նպատակին, հողին ձգելով մահկանացու մարմինը միայն։ Մահվան մեջ Աստուծո շունչն է, որ կբաժնվի կավեն։ Քրիստոս, ինքն իր մեջ սրբազան նպատակ, մահկանացու մարմնին մեջեն անցավ չարչարանքով, խաչելությամբ հաղթելու մահվան։ Երեք օր թաղվելեն հետո, երկինք համբարձավ իր մարմնով ու լրիվ զգայարանքներով։ Ան իր չարչարանքներով ու մահով հաղթեց մահվան, կյանքը ձգելով հավիտենականության մեջ. «Մահուամբ զմահ կոխեաց»։

Զարմանալի զուգորդություն մը եղած է հավատքը երկնքին և հավատքը Հայաստանին միջև։ Հայաստանը նույնպես եղած է նպատակ, երկնքի կապույտին չափ անսահման, թերևս անոր համար, որ քրիստոնեությունը, որպես մշակույթ, մուտք գործեց և տարածվեցավ Հայաստանի մեջ տարերային ուժի թափով։ Կերտեց մեր բազում վանքերը, պահեց ու զարգացուց հայ ճարտարապետությունը, մանավանդ մեր մանրանկարչությունը և մատենագրությունը։ Վանքերը դարձան ուսումնարաններ և տվին մեր ուսումնականներուն ինքնուրույն, հայեցի մտածողություն։

Գրերու գյուտով հայացան Հին Կտակարանի Մովսեսն ու մյուս բոլոր մարգարեները, Նոր Կտակարանի Քրիստոսն ու առաքյալները։ Գրերու գյուտեն առաջ, անտարակույս, նույնպես հայ լեզուն և մշակույթն էին, որ կրցան իրենց մեջ հայացնել Պարթև Արշակունիները, նաև Պարթև Լուսավորչի տոհմ հայ Կաթողիկոսությունը։ Հայացան ճենացի Մամիկոնյանները, հրեա Բագրատունիները, նաև Կամսարականները։ Անոնք ոչ միայն հայացան, այլև հայ ազգին պատմությունը կերտեցին։ Անոնք հայ լեզվին և մշակույթին մեջ միայն կրնային հայանալ։ Նույն ձևով հայացան Հին ու Նոր Կտակարաններու սուրբերը։ Կորյունի բառերով՝ «Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհն Հայոց անպայման սեռանշելի լիեր. յորում յանկարծ ուրեմն օրէնուսոյց Մովսէս մարգարէական դասուն և յառաջադէմն Պաւղոս բովանդակ առաքելական գնդովն, հաճեցեր աշխարհակեցոյց Աւետարանաւն Քրիստոսի, միաճգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւատացելոցն հայաբարբառ հայերենախօսք գտան»։

Անոնք ոչ միայն «հայերենախօսք գտան», այլ զգեցան ազգային գույն ու նկարագիր։ Անոնք էին, որ քանդակ առ քանդակ կերտեցին մեր հայ սուրբերը առաքելական նվիրումով, ինչպես Ս. Սահակ, Ս. Մեսրոպ, Ս. Վարդան և մեր վանքերուն չափ բազմաթիվ այլ սուրբեր։ Անոնք իրենց հավատքով մեր ազգային գոյության պատմության մեջ շատ կարևոր շրջաններ բացին։ Անոնց համար երկնքի կապույտին վրա Հայաստանի քարտեզի գծերը կային լուսաշող։

Հայ ժողովուրդը կրոնական նվիրումով հավատաց Հայաստանին և սրբացուց իր նախնիքներու ավանդությունը։ Վա՜յ այն ազգին, որ զուրկ է այդ ավանդություններեն, եթե նույնիսկ այդ ավանդությունները ըլլան «կարի առասպել»։ Վա՜յ անոր, որ չունի Հայկ դյուցազնը՝ «գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստարազուկ», որ չունի Սասունցի Դավիթը՝ քուռկիկ Ջալալիով և թուր կեծեկիով, որ չունի մանավանդ Ս. Մեսրոպի երազը՝ այբ, բեն, գիմը։

Հայ ժողովուրդի այդ երազը ունի մարմին ու դնդեր և պահեց այդ, հակառակ բազում հալածանքներու։ Հալածվեցանք պարսիկներեն, թաթարներեն, արաբներեն, թուրքերեն, քուրդերեն, քրիստոնյա բյուզանդացի հույներեն, և փոխանակ քայքայվելու, ուժեղացուցինք մեր դիմադրական կարողությունը։

Հին ու նոր հավատալիքները առավելապես հիմնված են բարիի, չարի, արևի և խավարի հավիտենական պայքարներուն վրա։ Այդ պայքարները մարմին առած են Որմիզդի, Ահրիմանի, Հրեշտակի և սատանայի կերպարանքներով։ Խավարի և լույսի նման պայքարն էր, որ կտարվեր Թուրքին և Հայուն միջև։ Դևերու նման ահավոր էին անոնք, երբ Հայաստան խուժեցին։ Եկան վայրի տափաստաններեն, անապատներեն։ Անոնք կկերակրվեին մողեսներով, արջու և ձիու միսով ու ձիու կաթով։ Անոնք ավերեցին, քար քարի վրա չթողուցին շեն երկրի մը մեջ, ուր հացի և ջրաղացներու հալալ աշխատանքը կար, ուր կանաչները աղոթքի ջերմեռանդությամբ կծլեին, ուր անձրևը օրհնության մը պես կիջներ առեջ առ առեջ ու արևին տակ արտերը ցորյաններուն՝ ոսկի գույն կառնեին։ Կար օրհնությունը լեցուն փեթակներուն ու ծխանի ծուխերուն, երբ Արևագալին, հեռավոր ու մոտավոր վանքերուն զանգակները կղողանջեին զնգան ապառաժներու արձագանքներով, ուր ամեն առավոտ արևն իր ծիրանի գույները կթափեր հերկված ակոսներուն ու կանաչներուն վրա։ Հորովե՛լ, հորովե՛լ...։ Ծիր մշակը իր յոթը դամեշներով Հայաստանը կհերկեր։

Եկան անոնք այնպես, ինչպես մարախը կթափվի նոր ծլած բամբակի արտերուն վրա։

Կյանքը ինքն իր մեջ տարերային մաքառում է տիրանալու, ապրելու իրավունքին։ Ազգերը հավաքական մաքառումներ են ու պաշտպանություն։

Ապրած են այն ազգերը, որոնք հարուստ եղած են մշակույթով, որովհետև մշակույթը առավելապես հոգեկան ուժի գիտակցական ստեղծագործություն է։ Այդ ուժը անմատչելի բերդ մըն է, որուն ոչ մեկ թշնամի կրնա հասնիլ։ Հայ ժողովուրդը այդ բերդին մեջ գտավ իր պաշտպանությունն ու ինքզինք ձգեց հավիտենականության մեջ։

Այո՛, հայ ժողովուրդը հավիտենական է։ Հզոր ազգերու հզոր բանակները ժամանակավոր հաղթանակներ տարած են միայն, իրենց բանակներուն վրա կոթնող բարբարոս ազգերը անհետացեր են նախապատմական շրջանի մամուխներուն նման, որովհետև բանակներուն և հին բերդերուն տեղ, կա մշակույթին տիրապետությունը։

Նույն բարբարոս ազգերու կարգին, անյնելու դատապարտված է նաև Թուրքը, որ անընդունակ եղած է իր ինքնուրույն մշակույթն ստեղծելու։ Այժմ, ինչ որ ունի, հափշտակություն է ու թալան իր հպատակ երկիրներեն։ Ան հափշտակեց հույներեն, Բալկաններեն, արաբներեն, պարսիկներեն, հափշտակեց մանավանդ հայերեն։ Հայերն էին գլխավոր վաճառականները, արհեստավորները, հողը մշակողները, մղկիթ, մինարե, կամուրջներ շինող ճարտարապետները։ Նույնպես, հայերն էին, որ Թուրքը արջ խաղցնողի, «գարագյոզ»-ի վիճակեն դուրս հանեցին ու թատրոն հիմնեցին։ Հայերու միջոցով կներմուծվեր Թուրքիո մեջ ինչ որ քաղաքակրթություն էր և կամ եվրոպական։

Բոլոր կրոնները բարոյական հիմքի մը վրա կառուցված են, ինչպես նաև Ղուրանը, և սակայն Թուրքը այդ Ղուրանը իր բարբարոս բնազդներուն հարմարցուց։ Ջարդեց՝ Ալլահին անունով։ Ալլահին անունով քրիստոնյա տաճարներուն առջև ձիեր կապեց։

Հողին մեջ նետված ցորենի սերմերուն նման բնական և առողջ եղած է հայ ժողովուրդին պայքարը՝ «որպէս հատն ցորենոյ»։ Ո՞վ կրնա հասկնալ գաղտնիքը հողի մեջ նետված ցորենահատին, թե ի՛նչ մաքառումով այդ փոքրիկ հատը կճեղքվի հողին մեջ, կոշտ հողերն ու քարերը մեկ կողմ հրելով։ Այնքան ուժեղ է այդ փոքրիկ ծիլը, որ կրնա քարն անգամ ճեղքել, իր լուռ գոյությունը ճչալու համար նոր ծնած երեխայի մը պես։ Բնական ուժի այդ մաքառումով է, որ հայ ժողովուրդը ինքզինք արևին կրանա, հասնելու համար իր լուսավոր նպատակին։ Այդ նպատակը «Իսկն է առ Աստուած», և այդ հավատքով ալ նահատակվեցան մեր երանելի նախնիքները Վարդանանց պատերազմի ժամանակ և 1915-ի հայկական մեծ եղեռնի մեր սրբազան զոհերը։ Անոնց վերջին շունչերուն մեջ, անտարակույս, աղոթքի մրմունջները կային։ Անոնք այնքան եղբայրացած էին ու մտերմություն կզգային Քրիստոսի չարչարանքներուն հետ։ Եվ նույն մարդկային աղաղակը, ինչպես Քրիստոս խաչին վրա աղաղակեց. «Աստուա՜ծ իմ, Աստուա՜ծ իմ, ընդէ՞ր թողեր զիս»։ Ինչպես Քրիստոսի այդ

աղաղակին մեջ կար հարութիւնն ու երկինքը, նոյնպես սրբազան նպատակի մը հարութիւնն ու Հայաստանը կար 1915-ի նահատակներուն աղաղակներուն մեջ։

Եթե հայ ժողովուրդը իր նահատակներով ուժեղացուց իր ապրելու կամքը, ողբերգութեան մեջ հաստատեցուց իմաստութիւնը։

Մարդկութիւնը տակավին հասած չէ կյանքի գեղեցկութիւնը ապրելու կատարելութեան, հակառակ բազմազան կրոնքներուն և օրենքներուն։ Մահը ինքնին այդ բնական անկատարելութիւնն է, իսկ «իմացեալ մահ»-ը կմտնէ նպատակի մը հավիտենականութեան մեջ։ Այդ «իմացեալ մահ»-ով նահատակվեցավ 1915-ի մեր մոտ երկու միլիոն խաղաղ բնակչութիւնը՝ կապված բարի հողին ու բարի հավատքին։ Նահատակները հավատացին, որ իրենց պարտութեամբ, պիտի հաղթանակե հայ ազգը, և հայ ազգը պարտութեամբ հաղթանակած է։ Վարդանը իր պարտութեամբ ավելի մեծ հաղթանակ մը չէր կրնար արձանագրել գալիք դարերուն և հայ ժողովուրդի հոգեկան պատմութեան համար։ Վարդանին համար Հայաստան աշխարհը երկնքին չափ լուսավոր և իրական էր։

Հայ ժողովուրդը պարտութիւններ շատ ունեցեր է։ Այդ պարտութիւններու ընթացքին է, որ ներքին առողջ կենսատարրերը ավելի գործոն եղած են։

Վարդանանց պարտութենեն հետո էր, որ թափ առին Վահան Մամիկոնյանի պարտիզանական կռիվները, և ան հաղթեց։ Անիի քայքայումեն հետո, Կիլիկիո մեջ կվերածներ Հայաստան մը ծաղկուն մշակույթով։ Թրքական հալածանքներուն ժամանակ, երբ պարտված էր ժողովուրդը, երբ լծվարը արտին մեջ կսպաննվեր, երբ նոր հարսը եկեղեցական պսակեն կհափշտակեին նարոտը գլխին, երբ թուրք ու քուրդ խուժանը շուկա ու գյուղ կթափվեր՝ սպանելու և թալանելու համար, հայ ֆեդայիներն էին, որ հայոց լեռներեն վար կուգային, բանակի դեմ անհավասար կռիվ տանելու։ Անոնք կհսկեին ճամբաներուն վրա՝ ժողովուրդին իրավունքները պահպանելու։ Անոնք ձմեռվան բուքին քարայրներուն մեջ կպաշտպանվեին, և անոնց կռիվներուն մեջ կար մարգարեներու ցասումը. հայ ֆեդային՝ հաստ բեղերով, թավ հոնքերով, վառ աչքերով ու շարք-շարք փամփշտակալներով, կհագներ մազե կուրդիկ ու շալվար, իսկ ոտքերուն՝ տրեխ։ Անոնք դյուցազնական շրջան մը ստեղծեցին։

Անտարակույս, մարդկային պատմութեան մեծագույն ողբերգութիւնը եղավ 1915-ը։ Գազանն իսկ պահ մը կանգ պիտի առներ այդ ողբերգութեան առջև։ Միայն թուրքը կրնար սարքել այդ։ Միայն թուրքը կրնար խողխողել հրեշտակային աչքերով մանուկները, ցեղ մը իր սաղմով ոչնչացնելու համար։ Ճեղքել Վարուժանի, Սիամանթոյի, Զարդարյանի գլուխները, որոնց մեջ ամեն օր արևին հետ արշալույս մը կբացվեր։ Քարով ջարդել գլուխը Զոհրապին, այդ կատարյալ մարդուն, որ թուրք փաթթոցավոր խորհրդարանին մեջ ուզեց եվրոպական, սահմանադրական օրենքներ ներմուծել։ Թուրքը միայն կրնար մոտ երկու միլիոն հայ խաղաղ ժողովուրդի մը կմախքները անպատիժ ավազներուն, անդներուն և փորսող կենդանիներուն ձգել։

Այդ ահավոր պարտութեան ընթացքին էր, որ հալածական, անոթի, համաճարակի բռնված հայ ժողովուրդին մեջ թափ առավ ազգովին ապրելու տարերային շարժում մը, ինչպես հով մը, որ հետզհետե ավելի կմեծնա ու կդառնա հզոր փոթորիկ։ Այդ փոթորիկը հայ ժողովուրդի կամքն էր, որ ստեղծեց մեր Հայաստանը՝ իր կարելի սահմաններով։ Գիտակցական կյանքն է, որ կմղե գիտակցական մահվան։ Գիտակցական եղած են մանավանդ մեր ազգային կյանքն ու նպատակը։

Մենք կանք այսօր և կբարգավաճինք մեր փոքրիկ Հայաստանի մեջ, մինչ թուրքը ամերիկյան դարբասներուն առջև ցնցոտիներ հագած, պնակը ձեռքին, մուրացիկ է դարձեր։

Մենք կանք ու պիտի ապրինք։ Հայ նահատակները չեն մեռնիր։ Անոնք ապրողներուն հետ են։

Աշխարհի չորս ծագերուն մեջ, ուր որ հայ մը կա, իր մեջ սրբազան կիրք մը ունի։ Այդ կիրքը վրեժ չէ։ Հայը ընդունակ է թուրք մանուկն ու անօգնական ընտանիքը ազատել հրդեհեն, իր կյանքը վտանգելու գնով, որովհետև հայուն մեջ մարդկայինը եղած է սաղմը իր ազգային գոյության։ Հայուն կիրքը ուժ է և հավատք։ Այդ ուժով է, որ օր մը պիտի տիրանա իր երազին։

Հավիտենական հայ ժողովուրդին համար դարերը տարիներու նման արագ կանցնին։

Պիտի գա այն օրը, երբ Հայկ դյուցազնը պիտի շեփորե Արարատեն, և այն շեփորի հզոր ձայնեն մեր ապրիլյան եղեռնի նահատակները բոլորը մեկ պիտի հավաքեն իրենց ոսկորները անապատներեն, բանակներու պես ոտքի պիտի կանգնին ապրողներուն հետ՝ մեր հայրենի երկրի վրա, որուն ամեն մեկ թիզ հողին մեջ սիրտ մը կբաբախե։

Հայ ժողովուրդին հավատքը կյանք է և ապրելու հզոր տենչանք։

ԳՈՀԱՐ ԱՋՆԱՎՈՒՐՅԱՆ

ԱՆՀԱՅՏ ԷՋԵՐ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ

1915 թվականը աղետաբեր եղավ հայ ժողովրդի համար։ Հայկական մեծ եղեռնին զոհ գնացին ժողովրդի խոշոր հատվածը և նրա միտքն ու խիղճը հանդիսացող ազնիվ ու տաղանդավոր գրողներ, արվեստագետներ, մտավորականներ, որոնց ոչ միայն հոշոտեցին մարդակերպ գազանները, այլև ոնչնչացրին, հրի մատնեցին ու մոխրակույտերի վերածեցին նրանց արխիվները, որպեսզի ոչ մի հետք չմնա նրանց հարուստ ու բովանդակալից կյանքից։

Մեծ է եղել կորուստն ու անդարմանելի։ Սակայն այդ նույն արհավիրքի օրերին, գտնվեցին անձնազոհ, խիզախ անհատներ, որոնք իրենց կյանքի գնով փրկեցին մի քանիսի արխիվները և կամ առանձին վավերագրեր, ու որպես նշխար խնամքով պահեցին իրենց մոտ։ Տարիներ անց, նրանց ժառանգները պահպանված արխիվները ուղարկեցին Սովետական Հայաստան, որտեղ նրանք գտան ոչ միայն ապահով հանգրվան, այլև աստիճանաբար դառնում են հայրենիքում ժողովրդի սեփականությունը։

Այս տեսակետից անկեղծ շնորհակալության արժանի են բանաստեղծներ Դ. Վարուժանի և Սիամանթոյի հարազատների (Արաքսի, Վերոն, Արմեն, Հայկակ Վարուժանների և Զապել Յարճանյան-Համբարձումյանի) կողմից վերջին տարիներին Հայաստան առաքած արխիվները, որոնք չափազանց արժեքավոր են հեղինակների կյանքը, հայրենասիրական և գրական-գեղարվեստական ամբողջական գործունեությունը բազմակողմանի կերպով ուսումնասիրելու, լուսաբանելու և ըստ արժանվույն գնահատելու համար։

Ինչպես յուրաքանչյուր գրողի, մշակութային գործչի, այնպես էլ արևմտահայ հարուստ գրականության ներկայացուցիչներից ամեն մեկի կյանքն ու գործունեությունը. յուրովի արտահայտվել են իրենց ստեղծագործությունների, ինքնակենսագրական հուշերի և հատկապես գրած նամակների մեջ։ Նամակներում անկաշկանդ ձևով բացահայտվել են նրանց անցյալը, ներկա կյանքը, ապագա իղձերը, ցանկությունները, երազներն ու տվայտանքը փոքր չափով անձնական և մեծ մասամբ ազգային-հայրենասիրական ու հաճախ համամարդկային բնույթի, որոնք բնորոշում են նրանցից ամեն մեկի հոգու վեհությունը, սրտի ազնվությունն ու մարդասիրությունը։

Հայաստանի կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանը, որը մեր հանրապետության մշակութային կարևոր օջախներից մեկն է հանդիսանում, լայն ճանաչում է գտել հանրապետության սահմաններից շատ հեռու, նաև սփյուռքահայ կյանքում։ Թանգարանն իր մեջ ամփոփում է շուրջ 550-ի հասնող նշանավոր գրողների, գրականագետների, արվեստագետների, խմբագիր-հրատարակիչների, մշակութային գործիչների և բազմաթիվ այլ մտավորականների թանգարժեք արխիվներ։ Այդ թվի մեկ վեցերորդը, որոնք ստացվեցին վերջին տասնամյակում, կազմում են արևմտահայ և սփյուռքահայ մտավորականների արխիվները։ Արժե հատկապես նշել նշանավոր հասարակական գործիչ Ա. Զոպանյանի շատ հարուստ ու արժեքավոր ֆոնդը (ստացված Փարիզից 1956 թվականին, մշակութային հանձնախմբի ջանքերով, նախագահ՝ Ա.

Դարբինյան) և Թորոս Ազատյանի նույնքան արժեքավոր հավաքածուն (ստացված Պոլսից 1957 թվականին, տիկին Շուշանիկ Ազատյանի միջոցով) և բազմաթիվ այլ կարևոր արխիվային ֆոնդեր։

Ծրագրանագետ-քննադատ Ա. Զոպանյանի և մյուսների արխիվներում կենտրոնացած են մի քանի տասնյակ հազարների հասնող նամակներ, այդ թվում հայ մեծ եղեռնի զոհերից Կոմիտաս վարդապետի, Գ. Զոհրապի, Դ. Վարուժանի, Սիամանթոյի, Ռ. Զարդարյանի, Թլկատինցու, Ռ. Սևակի, Ա. Հարությունյանի, Երուխանի, Ս. Բյուրատի և մյուս նահատակների ձեռագրերը։ Այդ վավերագրերից շատերը փայլուն վկայություններ են թուրքական դաժան բռնակալության պայմաններում ապրող հեղինակների ծանր կացության, նրանց հոգեկան վիճակի, որոնց ցանկությունն է եղել ազգի կարող, մտավոր ուժերը կենտրոնացնել Պոլսում և զարգացնել արվեստն ու գրականությունը, աչքագայում ապահովելու հաշտ ու խաղաղ գոյակցությունը հարևան բոլոր ժողովուրդների համար։

1908 թվականին Սահմանադրությունը որոշ հույսեր ներշնչեց ոմանց, նույնիսկ Զոհրապի նման ականավոր իրավագետ-քաղաքագետը մի պահ հավատաց այդ սև թղթի կտորին. նույն կարծիքը հայտնեցին նաև Վարուժանը, Կոմիտասը և մյուսները, սակայն շատ շուտով Ադանայի արյունոտ ջարդերը զգաստացրին հայրենասեր մտավորականներին, նրանք տեսան անմեղ մանուկների ու մարդկանց խոշտանգումը, որոնց արյունով ներկվեց հայրենի հողը։ Այս տեսակետից բնորոշ են Վարուժանի 1909 թվականի մայիսին Կանդից գրած ցասումնալից այն տողերը, որոնց մեջ բանաստեղծը ըստ արժանվույն դատապարտում է հայի արյան ծարավի մարդակերներին, ու միևնույն ժամանակ բարձր է գնահատում այն դերը, որ դարեր շարունակ կատարում է հայ ազգը ու ապահովում իր տեղը ապագա մարդկության մեջ, «ժողովուրդներու սիրազոդ շղթային մեկ ոսկի օղակն ըլլալու համար»։

Երախտագետ հայ ժողովուրդը, Կոմիտասի, Զոհրապի, Սիամանթոյի, Վարուժանի և նրանց գրչակից ու արվեստակից մյուս նահատակների թողած ժառանգությունը բարձր գնահատելով, այն դարձնում է հասարակության սեփականությունը և հավերժացնում նրանց անմեռ հիշատակը։

Հայկական մեծ եղեռնի 50-ամյակի առթիվ, հրատարակության ենք հանձնում մեր նահատակ գրողներից մի քանիսի մի շարք ձեռագիր նամակները և նյութերը, որոնք գտնվում են Հայաստանի գրականության և արվեստի թանգարանում (ԳԱՔ)։

1. Կոմիտաս վարդապետից՝ Արշակ Զոպանյանին

1912 25/ԺԲ (դեկտեմբեր), Կ. Պոլիս
Pangaldi, № 83 (47)

Սիրելի՛ Արշակ.

Երկար ժամանակ է, ուզում եմ քեզ նամակ գրել, բայց այսօր վաղն ասելով ցարդ ուշացավ։

Արդեն մասնակի տեղեկանում եմ և գիտեմ, թե այժմ որքա՜ն սուրբ ու ազնիվ, քո սիրած ու պաշտած, կշռած ու մարսած գործն ես մշակում՝ հայուն ապագան է արդ քու հոգածությանդ առարկան, ուստի բոլոր ուժդ, իրավամբ, դեպի գերագույն նպատակն ես ուղղած։ Արդեն հայ ազգը քեզ շա՜տ բան է պարտական. դո՛ւն էիր առաջինը, որ լավ ըմբռնեցիր, թե մեր աւյագան հարթելու համար պետք էր, նախ մեզ օտարներին ծանոթացնել, ցույց տալ, որ մենք կենսունակ ենք, լուսո որդեգիր ու կարապետ ենք խավար վայրերում, շինարար ենք... Եթե մեր մեջ տնականությունն ու միությունը պակաս է եղած, պատճառն այն է, որ ազատ չունչ չենք քաշել, նույնիսկ մեր իբր անկախության օրերումն իսկ՝ հալածվելով տգիտությենեն ու խավարեն, ավերակեն ու ավարեն, սրեն ու հրեն... բայց աննկուն բան ունինք մեր մեջ, մի ամուր հույս՝ դեպի ապագա լուսո կանթեղը հառած են մեր հայացքները, դեպի այն կանթեղը, որ հայ ժողովուրդը, իր թագավորությունն ու իշխանությունը կորցնելեն հետո, տարել ու կախել է բազմաբեղուն ու երկնադետ Արագածի գագաթը՝ երկնքի անտես առաստաղեն, անթել կապով, որ մարդիկ՝ խավար ու ավարառու ձեռք տալ չկարողանան և գոնե նորա լուսո նշույլը ցայտե մեր վերա և մեր ապագա կյանքը երաշխնք։ Դուն էիր, առաջինը, որ մեր նախնյաց ստեղծագործ հոգին թղթերով ու գրքերով նկարեցիր ու ցուցադրեցիր օտար աշխարհի մեջ քաղաքակրթության հարազատ զավակներին, որ մե՛նք ևս իրենց շավիղն ենք բռնել, մենք ևս իրենց ճամբան ենք քայլել, մենք ևս մեր ձեռքին լույս բռնել, և, թեպետ ջանացել են դևերը փչել ու մարել մեր կյանքը, բայց փչողներն են խորտակվել ու մենք դեռ մոխիրների տակ առկայծել ենք՝ ապավինելով գիտության ու կրթության, որ թեև մերն է եղել՝ իբր արևելքի զավակներ, բայց մեր ձեռքեն դուրս է ելել ու Եվրոպան լուսավորել. արդ, քանի որ մեզ համար անծանոթ չէ մեր մտքի նախատիպը և կարողությունը, որ այժմ Եվրոպայից է, որ մեզ լուսավորում է, ինչո՞ւ չունենանք մեր իսկ լուսո ջահը՝ մեր ձեռքին։ Դո՛ւն էիր առաջինը, որ հրավիրեց հայի գեղարվեստական ստեղծագործության

ծանոթացնելու քաղաքակիրթ աշխարհին... Արդ, հանգիստ վայելի՛ր և ուրախացի՛ր, ո՛ւժ առ և ո՛ւժ տուր, պի՛նդ կեցիր, որ բարձրացած դարավոր ազատության ձգտող կոհակներն ու ալիքները չզարնվեն ժայռին ու այս անգամ էլ փշրվեն, որի վերջը թերևս կորստաբեր լինի մեզ համար։

Սակայն այժմ զգացմունքներն ու զատենք իրողությունը։

Ինձ այնպես է թվում, թե մենք մինչև նվազագույնով առաջին ու դրական քայլը չանենք, երբեք չենք կարող երկրորդի մասին մտածել կամ մեծամեծ ձգտել։ Արդ, մեր երկիրն սկզբեն եղել է կուսակալներ արշավող ու շրջակա հզոր պետությանց աշխարհակալության ճանապարհի վերա և պահել է ցարդ նույն վիճակը։ Մենք այժմ իրապես ռուսաց շահի առարկան ենք. մեր երկիրն արդեն որոշված է, այսօր կամ վաղը ռուս պետության բաժին դառնալու։ Ուրեմն պիտի ձգտենք մեզ ազատագրել երկու կերպ. թե պետ և երկուքի վերջակետն էլ նույնն է, տարբեր ուղիով միայն։ Առաջինն է առավելագույնը՝ ինքնուրույն ու անկախ լինելով իբր պատվար ցցվել ռուս դիվանագիտության առաջ և երկրորդը՝ նվազագույնը՝ ապավինել Քեռի-Ռուսին և միաձույլ հայության սահմանել։ Երկուքն էլ նույն է, բայց երկրորդն իրագործելի՝ շահերի նույնության վերա հենվելով, իսկ առաջինը անիրագործելի։ Ռուս կառավարությունը Նայրագույն Արևելքեն առժեց. ուրեմն ընդարձակման ճանապարհը այս կողմը մնաց. արդեն Պարսկաստանը բաժնված է իրապես Անգլիո և Ռուսիո միջև. այսպես, հայերը պարսկական լծեն պիտի ազատին և միանան ռուսահայոց և փոխադարձաբար ուժովնան. արդ, հերքեն եկել է մեզ՝ տաճկահայերիս։ Ես չե՛մ կարող մոքես անցնել, որ ռուս կառավարությունը իր շահերը զոհեն մեզ. զի նա չէ կարող թույլ տալ, որ այս բաժինն ավելի լավ վիճակ ունենա, քան իր երկրի հայերը. ուրեմն մի՛շտ ձգտելու է պահել մեզ (եթե իրան չմիանանք) իրան կարող վիճակի մեջ, որպեսզի ապագա գրավման ձեռնտու տարր հանդիսանանք. արդեն մեր մեծ ջարդերն ապացույց են ասածներիս։ Ռուս թերթերն էլ ճիշտ այս կետն է, որ շարունակ շեշտում են, որ մեր փրկությունը կռելու և կոփելու ենք Փեթրսուրկի (Պետերբուրգի) պարիսպներու դռներուն առջև. ա՛յս էր պնդել ժամանակին Լորիս Մելիքով[1], Գևորգ Դ կաթողիկոսին[2] զգուշացնելով (երբ սա ռուս-տաճկական պատերազմի-



ժամանակ, փրկությունը տեսնելով ու հուսալով տաճիկներեն, գրեթե բացարձակապես ապաստիլիս է եղել տաճիկներին էջմիածնի մեջ)։ Արդեն քաջ գիտես, որ Անգլիո, Ֆրանսիո ու Ռուսիո միության գլխավոր նպատակն էլ այս էր։ Ուրեմն չի՛ք փրկություն արտաքո Ռուսիո։ Պետք է նախ բոլոր հայերը խմբվին մեկ տերության, մեկ օրենքի տակ, աճեն ու զարգանան բարոյապես և նյութապես և ապա ժամանակին ինքն է, որ պիտի բերե մեզ մեծ ազատությունը. շտապելով, առաջինը չառած երկրորդ քայլի դիմելով, բոլորովին պիտի կորչինք. տաճիկեն ոչ մի հույս մի՛ ունենաք, մի՛ սպասեք. նորա ուղեղը քարե ժայռից է, զարգացման անընդունակ, լոկ փշրվելու համար պիտանի և ոտքի տակը սալահատակելուն համար։

Ցպե՛տք է բաժնվինք, չպե՛տք է խաբվինք Եվրոպայի զանազան խոստումնալից խաբկանքներեն, միանալու ենք և գործնական ճամբան բռնելու՝ ըստ իս, առաջին քայլն է բոլոր հայությունն ամփոփել ռուսի իշխանության տակ, երկրորդ քայլն է տնտեսապես ու բարոյապես, զուտ ազգային, առանց օտարեն ու մեզ անմարս գաղափարներով առաջնորդվելու՝ զարգանալ. երրորդ քայլն արդեն ինքը ռուս հեղափոխությունն է, որ պիտի անե, ո՛չ թե մենք. իսկ մենք օգտվելու ենք այդ քայլեն, սակայն պատրաստվելով, լեհերու պես զուտ ազգային շավիղը բռնելով։ Եվրոպական մարդկային գաղափարները որքան որ ընտիր են ու փափագելի,

[1] Լորիս Մելիքով Միքայել (1825—1889), նշանավոր պետվորական։

[2] Գևորգ Դ կաթողիկոս Քեռեստեճյան (1813—1882),

բայց մեզ անպետք են. պաղ երկրի բույսերը մեր ջերմ արևին տակ կկիզվեն։

Ես վախ չունիմ, թե ռուս կառավարության մեջ կհալչինք, որքան ալ որ հալինք, այնուամենայնիվ մեր ինքնագիտակցությունը զարթնած է և եթե խելոք շարժվինք, կվաստրկենք. ես այս կարծիքն ունիմ։

Ցանկալով քեզ սրտագին եռանդ, ուժ ու քաջություն, մաղթեմ, որ մեզի նոր տարուն բերելիք նվերդ լինի համեստ ու համեղ բան։

Համբուրիվ և կարոտով, քույդ՝

Կոմիտաս վարդապետ

(ԳԱՓ, Ա. Ջոպանյանի արխիվ, I բաժին, № 3416)

2. Ապգին վիճակը

... Հոտն անհովիվ՝ մոլոր ու շփոթ, աներեվույթ և անզուսպ ալիքներ հախուռն կհուզին ի խորս մեր հալածական և ողբալի կենաց ծովու։ Անմիտ որսորդներ բոլորած՝ միամիտ ձկներ ցանցած։ Մթնոլորտը թույն կտեղա, բուժիչ ուժ չկա։ Ավերած, սարսափ ու ցեխոտ սրտեր մյուս կողմեն։ Փառասիրություն, փուճկոտություն մեկ երեսեն, ապիկարություն, տգիտություն մյուս երեսեն։ Յուրաքանչյուր ոք իր պաշտոնն զգեցած է իբր հանդերձ, «յոր մերկութիւն մտաց ծածկի ի միամիտ աչաց»։ Մեր մարմինը նեխած է, մեր հոգին ապականած, մեր կյանքը դիակնացած... Ո՞ւր է մեր խոհական խորհնացին. թող ելլե՛ արյունաքամ հողու տակեն և ողբա մեր խակերու սիրտն ու հոգին, միտքն ու գործը։ Մեր նախնիք իրենց պաշտոնին փարած էին անձնահեղձուքյամբ, իսկ մենք կհափշտակենք գործն՝ ընչաքաղցությամբ։

Սիրտս փլած է։

Կոմիտաս վարդապետ

(Անթվական)

(Թեոդիկ, «Ամենուն տարեցույցը», 1916—1920 թ. թ., Պոլիս, էջ 61)։

3. Գրիգոր Զոհրապից՝ Արշակ Ջոպանյանին

1908, օգոստոս 5/18, Կ. Պոլիս.

Սիրելի բարեկամս.

Ստացա նամակդ. որքան կբաղձայի, որ հոս քովս ըլլայիր և ձեռք-ձեռքի աշխատեինք և իրարու թև ու թիկունք ըլլայինք այն պարտականություններուն առջև, որոնք զիս վախցնելու չափ—և դյուրավ վախցողներեն չեմ—մեծ են։

Մինակ, բոլորովին մինակ եմ հոս. և հարկադրված՝ ուղղիչը դառնալու ոչ միայն ամեն մտքի ու սրտի կորովե զուրկ, այլ նաև ամենեն գռեհիկ ու ստորին ունակություններով խաթարված այս տեղի հայերու զանգվածը շարժման մեջ դնելու համար։



Տաղանդով, նկարագրով ու զարգացումամբ մեր ազգին պատիվ բերող երեսփոխաններ գտնել և ընտրել նեխած, ապականած դիակն մը կենսատու հյութ մը փնտռելու կնմանի։

Ես ապերախտ վաստակին մեջ կտառապիմ. օրագրիս գալով, որ ասկե վերջը մեր թուրքահայոց կյանքին մեծ levier[3] պիտի ըլլա, քու աջակցությունդ թանկագին է և եսասեր տեսակետով մը՝ անոր համար որ մեր գրական esthétique[4]-ն մարմնացող էն պայծառ դեմքն ես։

Այսօր, ստացա Trouvères arméniens, poèmes և Massacre d'Arménie[5] հատորները, կսպասեմ մյուսներուն և մանավանդ անհամբերությամբ կսպասեմ հոդվածներուդ։

---

3 Լծակ։

4 Էսթետիկա, գեղագիտություն։

5 «Հայ աշուղներ, բանաստեղծություններ» և «Հայաստանի կոտորածը»։

Բանաստեղծութեանց ֆրանսերեն թարգմանութեանց մասին եղած արդար գովեստներն ու գնահատումներն այստեղի ֆրանսական և հայ մամուլին մէջ ես հրատարակել կուտամ. ադիկա ամեն գրչի վաստակավորի անկապտելի իրավունքն է։ Հոս թուրք գրական մարդերու pléthore[6] *մը կա, բայց հայանի հեղինակութիւններն ու տաղանդները դեռ ճշուած չեն. այսօր բարձրացողը մյուս օրը կխոնարհի, կտապալի կոր, սպասենք ամիս մը։*

Անտարակույս գիրքերդ կրնան Տաճկաստան մտնել և «Անահիտ»-դ[7] *բաժանորդներու գոհացուցիչ թիվ մը պիտի ստանա իսկույն. «Նոր օր»-ս*[8] *իրեն պատիվ պիտի սեպե ծավալելու համար զայն։*

Լավագույն գրավաճառը այն է, որ թե՛ գիրքերուդ, թե՛ «Անահիտ»-իդ հոգովը զբաղի. շաբաթե մը միայն կրնամ պատասխանել, պետք է որ պզտիկ քննութիւն մը ընեմ։

Թե որ կներես, առաջարկութիւն մըն ալ պիտի ընեմ. այս մեծ հեղափոխութեան առթիվ, որ հայոց ու թուրքաց մէջ տեղի ունեցավ և որ անկեղծ խանդավառութեան ամեն հավաստիքը ունի, կարժե որ դուն ալ ձայնդ լսեցնես ու այն շքեղ հոդվածներեդ մին գրես, որոնք ասանկ դարագլուխի մը առջև բարձրացող հիշատակարան մը կազմե և լուսավորե այն նոր ճամբան, որուն մեջ այսուհետև պիտի քալենք թուրքաց հետ փոխադարձ հարգանքով ու փոխադարձապես իրավունքներնիս, պարտքերնիս և արժանիքնիս ճանչնալու հիման վրա։

Ղրկած 3 հատորիդ վրա գին չկար նշանակված, բայց մյուսներն ալ կարգով պիտի հասնին և կհուսամ անոնց վրա գտնել գիներուն ինչ ըլլալը։ Հիմա ուշադրութեամբ դիտելով գտա գիներնին և ներփակյալ կղրկեմ անոնց փոխարժեքը mandat poste-ով[9]։

Կհամբուրեմ ղբեզ՝

Գ. Զոհրապ[10]

(ԳԱԹ, Ա. Զոպանյանի արխիվ, I բաժին, № 2171)։

6 *Առատութիւն։*

7 *«Անահիտ», ազգային-գրական-գեղարվեստական հանդես, լույս է տեսել Փարիզում, 1898—1911 թվականներին (հին շրջան) և 1929—1949 թվականներին (նոր շրջան) ընդմիջումներով։ Խմբագիր-հրատարակիչ՝ Ա. Զոպանյան։*

8 *«Նոր օր», լույս է տեսել 1908 թվականին Պոլսում, ըստ երևույթին միայն առաջին №-ը (տե՛ս Գ. Լևոնյան, «Հայոց պարբերական մամուլը», Երևան, 1934)։*

9 *Փոստային վճարագիր։*

10 *Գրիգոր Զոհրապ (1860—1915), արևմտահայ նշանավոր գրող, իրավաբան, հասարակական գործիչ, մեծ եղեռնի զոհերից։*

4. Դ. Վարուժանից՝ Հ. Արիստակես Քասգանտիլյանին

[1907, հունվար 22—23], Գանգ.

Սիրելի Հայր Արիստակես Քասգանտիլյան[11]*.*

Ստացած եմ Ձեր երկու նամակները՝ և անոնց մեջ ներփակյալ (300 ֆրանկ) գումարը։ Ինչպե՞ս շնորհակալ ըլլամ, որ համապատասխանեք Ձեր սրտին։ Այս Ձեր լիաբուխ ուղարկման առջին, առանց ձգձգումի՝ առանց որևէ դժկամակ բառի մը, ես հիացումով գլուխս կխոնարհեմ, և կշափեմ անդունդ մը Ձեր և Ձեր նախորդին միջև։ Ձեզ անկե համակրա՞նքը կաարբերե, թե բնածին խառնվածքը.— առաջինին կվկայե հոգիս, և երկրորդին այն՝ թե հայր Ստեփան ցուցանք մըն էր[12]*։*

Անոր պատկերը այնպես գեղեցկագիտորեն նկարած էիք, որ հարյուր գաղատացի պիտի ուզեի կորսնցնել այդպես էջ մը ունենալու համար։ Ես կցավիմ, որ Դուք քիչ կգրեք կամ գոնե քիչ կհրապարակեք։ Ստեպ մտքես անցուցած եմ, թե ինչո՛ւ կենսագրական կամ գրաքննական ընդարձակի satire-*ի*[13] *մը չեք ձեռնարկած։ Ձեր մոլախինդը դեղ է և հաճույքով պիտի խմվի։ Մեր մեջ միթե Հ. Ստեփաննե՞ր կպակսին. անոնց բանակը կրնա ամբողջ Արփիկեն աշխարհակալել. թո՛ղ թե մինչև Բարեհուսո ատորոտը, որուն վրա (ո՛վ արդար Թեմիս) երբեք իրենց դրոշակը պիտի չտնկեն։*

Ուսման շրջանս կհարցնեք.— այս տարիով ան երեք տարվան մեջ կլմննա։ Մասնաճյուղ ընտրած եմ sciences politiques et sociales[14]*։ Մտածեցի, որ շոր իմաստասիրությամբ և աստուգաբանությամբ պիտի չկրնամ ուղղակի օգուտ մը մատուցանել ազգիս։ Արդեն այս ճյուղիս մեջ ալ առաջին տարին բոլորովին իմաստասիրություն և պատմություն կդասախոսվի. մնացածն ալ ինքնօգնությամբ կլրացնեմ։ Միակ նպատակս է հայրենիքիս օգտակար դառնալ. ահա գաղափարականը՝ որ զիս կոգևորե և կկանգնե. արդ, միայն իրմով ես կապրիմ, իրմով եմ հաղթական. օր մը գուցե ան զիս թողու, կամ իր փլատակին*

11 *Հ. Արիստակես Քասգանտիլյան (1853—19....), Վենետիկի Մխիթարյան միաբաններից, մանկավարժ, թարգմանիչ, գրասեր, Դանիել Վարուժանի ուսուցիչը Պոլսում, այս ժամանակամիջոցում Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի տեսուչը։*

12 *Խոսքը Ստեփան վարդապետ Սարյանի մասին է, որին հեռացրել էին այդ ժամանակ Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի տեսչությունից, իր կատարած չարաշահումների համար։*

13 *Երգիծանք։*

14 *Քաղաքական և սոցիալական գիտություններ։*



տակ գլուխս ծռե և ողս կոտրե. է՛ լավ, այն ատեն ես կանիծեմ հույսը և իր հեղինակը, և այս կավիս վախճանը կփնտռեմ իմ անարգ փառքեայն մեջ։ Փարթամ կյանք մը ապրելու ձգտում չունիմ և ոչ ալ գիտութիւնն է, որ ինձի ճշմարտութիւնը կխոստանա. գիտեմ, որ առաջինին մեջ սիրտը կմեռնի և երկրորդին մեջ միտքը կխաթարվի։ Դանդը՝ որուն կսպասեմ, տարրական բարեկեցութիւն մըն է, վասն զի այդ արդեն կբավե ծնողքիս հույսին հագուրդ տալու համար. ապրելով նեղ շրջանակի մեջ՝ անոնց մեջ նոր փափագներ չեն զարգացած, իրենց պետքերուն սահմանավորութիւնը, ապագային մեջ քիչ մը ուժերս կքաջալերե։ Եվ ես իբր անդամ ընտանիքի, գոյութեանս վախճանը իրագործված կզգամ։ Բայց, ավա՛ղ, այս պարտքով պիտի շատանայի, եթե ազգը կամ ընկերութիւնը ինձի ոչինչ չըրած ըլլար, եթե իմ դաստիարակութիւնն ըլլար իբրև մեծ զոհողութիւն միմիայն հոր մը պարտավորիչ փառքին կամ մոր մը բնազդական որդեսիրութեան։ Բայց այս չէ այսպես։ Ազգն է որ մեզ՝ վարժարանին մեջ թե համալսարանին, անուցած է և կրթած։ Իր գանձեն տարվե տարի վերածնող ընձյուղն ենք, իր կյանքին շարունակութիւնը և իր անցյալին ապագան։ Հետևաբար Մուրատ-Ռափայելյանի ամեն ձրիավարժ շրջանավարտ աշակերտ, որ լոկ ընտանիքին օգտակար, հայրենիքին ոչինչ կընե՝ գող է, և ընտանիքը իր գողոնին մասնակից։ Ես խիստ զայրացած եմ մի քանի նախկին աշակերտներու վրա՝ որոնք կամ այլասերած են, կամ եղած են անտարբեր և անձնասպարար հայեր, և ճշմարիտ ըսելով քիչ մըն ալ վարժարանը մեղսակից կգտնեմ ադոր ի վնաս իրեն. գուցե ես ապրած եմ իր անկումին ժամանակ՝ թե ոչ ցավով կըսեմ, թե հոն բոլորովին տոհմային գիտութիւնը երեսն ձգված է։ Օտար վարժարանական աշակերտ մը, եթե իր պատմութիւնը մատի վրա չգիտնա, ցավալի կիսատ մը կնկատվի։ Մարք Բոցարիս[15] հունական գիտութեան ամենաքստմնելի ժամանակը, նույն մայր երկրին մեջ, ուր օսմանական արհավիրքը կիշխեր, դպրոցներու մեջ մտցուցած է ոչ թե միայն պատմութիւնը՝ այլ գրեթե օրը օրին կատարված ազգային բոլոր շարժումներուն տեղեկագրութիւնը։

Իտալական ազատագրութեան մեջ նույնը կգտնեմ։— Երբ ազգ մը գերի է և իր ամբողջ շրջագիծով կտառապի, ընտանիքներու կղզիացյալ բարեկավութիւնը դրական օգուտ մը չունի, զատ-զատ կայծեր են..... որ իրենց ցրվածութեան մեջ որևէ բոց չեն գոյացներ, երբ իրենց մեջ մերձեցումի, խմորումի, և ավելի մեծ նպատակի մը ծառայելու գիտակցական կորիզը չէ դրած...

Այս ամենը Ձեզ կգրեմ՝ վասնզի ինձի քաղցր է բացատրելու իմ վերջին իդեալս ավագին, առաջին դաստիարակիս, մեկնելու համար նախ մասնաճյուղս, զոր ընտրած եմ և հետո հոգվույս մեջ, ընտանիքի թե ազգի պատկանելու այն [հևիհև] կռիվը, որուն հերկար ժամանակ ի վեր ենթարկված եմ։

Առ այժմ, մասնավորապես աշխատանքը և զարգացումն է, որ ղիս կառաջնորդե։ Վաղը կա՛մ լեռան վրա կա՛մ իդեալին առջև խուճկ և կնդրուկ, կամ խավարին մեջ ճակատագրեն լքված, էլի՛, էլի՛, լամա՛ սաբաքթանի։

Ձերկարեմ։

Ընդունեցեք սիրալիր հարգանքներս և եղեք քաջառողջ։

Միշտ Ձերդ՝
Դ. Վ[արուժան][16]

(ԴԱՔ, Դ. Վարուժանի արխիվ, անտիպ նամականիներից)։

---

[15] Մարք Բոցարիս (1788—1823)— Հույն ազգային հերոս, ազգային ազատագրական պայքարի առաջնորդներից մեկը։

[16] Դանիել Վարուժան— Ջալուքյարյան (1884—1915), արևմտահայ ականավոր բանաստեղծ, մեծ հղեռնի զոհերից։

ՎԵՐՋԻՆ ԳԻՇԵՐԸ

Սարգիս Մուրադյան

5. Դ. Վարուժանից՝ «Ազդակ»-ի խմբագրության

[1909, մայիս ?] Դանդ.

«Ազդակ»-ի խմբագրության.

Համիդին փորասողուկ թավալումը ինձի այնքան ուրախություն չպատճառեց՝ որքան Կիլիկիայի ջարդը ճմլեց աղիքներս։ Ցեղին հոգին արյուն կուլա մեջս, հրդեհված քաղաքներեն եկող ամեն լուր՝ տաք մոխիրի նման կթափի գլուխս և սրտիս վրա։ Հինգ դարեր պետք եղան՝ որպեզի թուրքերեն մաս մը քաղաքակրթվեր, եվրոպականանար, ինչպես փտած կաթսաները կկլայեկվին. ո՜վ գիտե դեռ որշա՞փ հինգ դարեր պետք են և որչա՞փ հայու արյուն՝ մյուս մեծագույն մասին համար։ Երիտասարդ թուրքերը չեն դադրիր եվրոպայի հասկցնելե, թե թուրքը ի բնե բարի ժողովուրդ է, թե տաք հայերու անխոհեմությունն է աղետին սկզբնապատճառը.— ոճի՜ր,— եղած՝ եվրոպայի հայանպաստ կարծիքին դեմ հակազդելու համար, կարծիք մը՝ որ արդեն առանց ադո՛ր ալ պոռնկացած է։ Լուրերը ա՜յնքան գեշ ազդած են վրաս, որ կցավիմ Ադանա չգտնվելուս համար։

. . . . . .

Կովկասի հայ-թաթարական ընդհարումները օրինակ մեզ։ Եթե այդ ոճով շարժինք, խուժանը ինքը պիտի գա մեզ եղբայրություն քարոզելու։ Կռապաշտ է խուժանը. բոցին առջև միայն կխոնարհի։ Քանդել և այրելը բարբարոս ժողովուրդի մը համար առաքինություն է. այդ կարմիր առաքինությունը ունեցող մարդիկ միայն կրնան իրենց պատկառանք ներշնչել։ Երջանիկ ապագան, ժողովուրդներու եղբայրությունը Աշխատանքի սրբարանին առջև՝ զոր մենք բոլորս կհուսանք և կհետապնդենք։ Ուխտ մըն է՝ որ թուրք խուժանին հետ լոկ զենքերու վրա կկնքվի։

Միթե դեռ հայեր կա՞ն՝ որ ձեր ըսած խլուրդի գոյությունը կապրին։ Եթե մինչև հիմա ուրիշ ազգ մը մեր կյանքը ապրեր՝ իր մեջ մեկ պահպանողական չէր հաշվեր։ Միթե այսքան պղնձի և կրակի դարեր չկրցա՞ն ձուլել Գայլ Վահաններու սերունդ մը։ Գնչուները անիշխանական պիտի ըլլային՝ եթե մեր ճակատագիրն ունենային։ Եվ դե՞ռ հայության ծոցին մեջ «խլուրդի գոյություններ» կան։ Խլուրդ չեն ադոնք, ընկե՛ր, մեր նախնիքներուն դիակներեն սարասեռած որդեր են, անարգ որդեր, զոր ադամանդե գալշապարիկ տակ ճղմել իսկ պիտի զզվեի։ Ո՜վ ատրաշեկ երկաթով կուրացված հայրեններ, չտեսա՞ր, թե ինչպե՜ս լուսաբուխ ծիծերուդ վրա կսեղմեիր աստղապսակ որդիներուդ հետ, որոնք Մասիսեն կիջնեին, այնպիսի ճեմեր, որոնց սկիզբը թաղված է այն մորուաններուն մեջ՝ ուր Վահագն աստվածային՝ Մեղքի վիշապն սպաննեց։

Բայց հայը պիտի ապրի՜ հակառակ դահիճներուն, և հակառակ իր առյուծի աչքին տակ բուսած կորեկին։ Հայը պիտի ապրի ժողովուրդներու սիրազոդ շղթային մեկ ոսկի օղակն ըլլալու համար։ Այս է մեր բոլորիս հույսը, հույս մը՝ զոր մուրճով կռեցինք ինչպես մեր պապերեն մեկուն նիզակը՝ որ նպատակին կդիմեր օդին և արևուն մեջ երգելով։

«Ջանցնիր այն ճրագն՝ զոր վառեց Աստվածն», ըսած է Վարպետս[17] իր «Հայրունի»-ին մեջ, զոր ես կհասկնամ այն Աստվածը՝ որ յուրաքանչյուրիս կամքին մեջ է, այն Աստվածը՝ որ իր իսկ քնարը զեն ու զարդեց մարտիկի մը նման՝ զոր առաջին անգամ իդեալական պատերազմին կտանին։

Ջանցնիր այն ճրագն՝ զոր կամքը վառեց։

Դանիել Վարուժան

(«Ազդակ», 1909 թ., 9/22 մայիս, № 21, էջ 334)։

6. Սիամանթոյից՝ Նապենի և Զապել Ցարճանյաններին

Այաշ, [1915 ապրիլ—մայիս].

Սիրելի և աղիզ մայրս[18] և քույրերս[19].

Երկու-երեք օր է, այստեղ կգտնվիմ. առողջությունս լավ է, մորս և քույրերուս շատ ու շատ բարևներ. ապահովագրված փոստային ծրարով ձեռք մը սպիտակեղեն, բրդյա գուլպա, թաշկինակ և չօսլայված շապիկ մը ուղարկեցեք։

Ձեր նամակները թուրքերեն գրեցեք. ինձ և Համբարձումյանի[20] համար հոգ մի՛ ընեք. մայրս իր առողջությանը թող հոգ տանի. դուք ալ իրեն առանձին մի՛ ձգեք, ըսեք որ հոգ չընե։

---

17 «Վարպետ» ասելով նկատի ունի Հ. Ղևոնդ Ալիշանին (1820—1901), Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամներից, բանաստեղծ, հայագետ, գիտնական։

18 Նապենի Ցարճանյան, Սիամանթոյի մայրը։

19 Զապել Ցարճանյան—Համբարձումյան, Սիամանթոյի քույրը, նեղկյանս ընակվում է Փարիզում, երկրորդ քրոջ անունն անհայտ է մեզ։

20 Համբարձում Համբարձումյան (1890—1915), լրագրող, Զապելի ամուսինը։

Բոլոր սկյուդարցիներուն շատ-շատ կբարեվեմ։

Ատոմ Յարճանյան[21]

Անգարայի նահանգի Այաշ գավառի կեդրոն

Պոլիս, ընդհանուր ապահովութեան միջոցով Սկյուտար, Իջատիէ, Գայսերլի-օղլու փողոց թիվ 27, տիկին Յարճանյանին[22]։

7. Սիամանթոյից՝ Նպենի Յարճանյանին

1915, 16 մայիս, Այաշ.

Անկարայի կուսակալութեան Այաշ գավառակի կեդրոնը, Ատոմ Յարճանյանից և Համբարձում Համբարձումյանից։

Մեր սիրելի մայրը.

Անցյալ օրը տիկ. Զապելի գրած քարտի մը ընթերցումեն քեռաղայի հյուր ըլլալնիդ տեղեկացանք, ձեր առողջության լուրերեն շատ ուրախացանք։ Մինչև հիմա Վահանեն ոչ մեկ լուր ստացանք, ինչո՞ւ չի գրեր, ի՞նչ վիճակի մեջ է. կխնդրենք այս մասին տեղեկություն տվեք, մեզի համար երբե՛ք հոգ մի՛ ընեք. առողջությունիս և հանգիստնիս լաւ են։ Մեզի նամակ գրելու մեջ մի՛ թերանաք, երբվանե՞ք քեռաղային հյուր եք. բնակարանը ի՞նչ վիճակի մեջ թողուցիք։



Քեռաղային և բոլոր ազգականներուն և բարեկամներուն մասնավոր բարևներ կընենք և կհամբուրենք ձեզ, քույրերը և եղբայրը։ Հարություն Տե....յանեն անցյալ օր քարտ մը ստացանք, մեր բարևները հաղորդեցեք իրեն։

Ատոմ Յարճանյան

Համբարձում Համբարձումյան

Պոլիս, ընդհանուր ապահովության միջոցով Բերա, Գումպարաճը զառիվեր, «Պրոգրե» քոլայի ֆաբրիկա, Ճենազյան Ղազարոս էֆենդիին[23]։

8. Սիամանթոյից՝ Վահան Յարճանյանին

1915, հունիս 26, երեքշաբթի, Այաշ.

Սիրելի եղբայրս, հոգեհատորս Վահան[24].

Ուղարկած երկու սիրալիր և եղբայրական մտերիմ նամակներդ ստացա։ Մեր մոր և ձեր նամակներեն կհասկնամ, որ մեր բնակարանը թողուցեր եք. շատ գոհ մնացի. ամեն շաբաթ և ուրբաթ օրեր, այսինքն ազատ եղած ժամանակդ, մորս մոտ երթալով, զինքը տեսնելու մի՛ թերանաք, քանզի մխիթարության կարոտ է. ձեր այցելությունը զինքը կուրախացնե. փոխնորդներս ինձի հասած ըլլալը հաղորդած եմ. եթե երբեք որևէ բանի պետք ունենամ, կգրեմ։ Հինգ ոսկի պարտական եմ ըսելով ինձ այդ գումարը ուղարկել փափագող անձեն ես առնելիք չունիմ, ես դրամի պետք չունիմ. պատվիրեցեք, որ չուղարկե, որովհետև եթե ղրկելու ալ ըլլա, պիտի վերադարձնեմ, որովհետև Պատրիաքարանի դրամեն փոխ առնելով կապրիմ. արդեն այս պարագան անգամ մը ձեզ գրած էի։ Քրոջմես Զապելեն ընդարձակ նամակ մը չեմ ստացած, եթե փոքր բան մըն ալ ստացած եմ, ուրիշ հատ մը ևս ստանալ կուզեմ։

Վերջին նամակի մեջ անմեղ ըլլալս և պատասխանատվություն առաջացնող ոչ մեկ տեսակ նույնիսկ հասարակ հանցանքի մեջ գտնվելուս մասին կգրեր և կըսեր, որ ազատ պիտի արձակվիմ։ Ես քեզի հետ համամիտ եմ, վասնզի արդարադատ պետություն մը ինձ նման անմեղները արդեն ազատ պետք է արձակեր, եթե ձեր կողմեն ալ աշխատվի և հետապնդվի, քիչ ժամանակեն ձեզ գրկելու և մայրիկիս ձեռքերը անձամբ համբուրելու ուրախության կարժանանամ։

Քեզի գրել եթե կարելի է, ձեր կեդրոնի հասցեն ուղարկեցեք։

Ձեր եղբայրը՝

Ատոմ Յարճանյան

Կ. Պոլիս, ընդհանուր ապահովության միջոցով Բերա, Գումպարաճը զառիվեր, «Պրոգրե» քոլայի ֆաբրիկա, Ճենազյան էֆենդիին։

---

[21] *Սիամանթո—Ատոմ Յարճանյան (1878—1915), արևմտահայ ականավոր բանաստեղծ։ Մեծ եղեռնի զոհերից։*

[22] *Ա. Յարճանյանի այս և հաջորդ երեք բացիկները պնտիսլ են և թարգմանված են թուրքերենից։*

[23] *Ճենազյան Ղազարոս էֆենդի, հավանորեն Սիամանթոյի ծանոթներից կամ բարեկամներից մեկը։*

[24] *Վահան Յարճանյան, գրասեր, բանաստեղծ, Սիամանթոյի փոքր եղբայրը։*

9. Սիամանթոյից՝ Նապենի Յարճանյանին

1915, 27 հունիս, Այաշ.

Սիրելի մայր իմ.

Այս օրվան բղխատարով, Պոլիս, երեսփոխան Հալաճյան Պետրոս էֆենդիին աղերսագիր մը ղրկեցի. անմիջապես եղբայրս տեսնելով, այդ մեծահարգ անձնավորության քով ղրկե. պետք եղած դիմումը թող կատարե և դիս այստեղեն ժամ առաջ ազատ արձակելու միջոցը գտնե, որովհետև աշխարհ գիտե, որ ո՛չ մեկ առնչություն ունիմ քաղաքականության հետ և ո՛չ ալ տեղեկություն ունիմ ուրիշ հանցանքի հետ կապ ունեցող որևէ արարքեւ Քիչ մը հիվանդացա, անհանգիստ մի՛ ըլլաք. միայն թե Հալաճյան էֆենդիին քովը երթալով, դիմումս հետապնդեցեք։

Բոլորիդ կբարևեմ։

Ատոմ Յարճանյան

Ճննադյան քեռիիս բարևներ։

Կ. Պոլիս, Բևրա, Գումպարաճը զառիվեր, «Պրոգրե» բոլայի ֆարրիկա, Ճննադյան Ղազարոս էֆենդիի միջոցով, տիկին Նապենի Յարճանյանին։

10. Թլկատինցուց՝ Արշակ Չոպանյանին

1909, նոյեմբեր 27, Խարբերդ.

Մեծ Վարպետ.

Շնորհակալությամբ ընդունեցի Ձեր գեղեցիկ «Անահիտ»-ին երեք պրակները, մեկեն մինչև վեցերորդ թիվ, զոր հաճեր էիք խրկել պ. Սողիկյանի[25] հասցեին, ինձի հանձնվելու համար։

Նույնեն ապա նամակ մըն ալ Ձեզ էր ստորագրված ու ծրարված հին բարեկամության մը սխրահուշ զգացումներով, խոստովանեի թե շատ ամչցուց վրս։ Շատ, որովհետև հոյակապ գրական պարբերականի մը մեջ երևալու կոչ մը կուտա ինձի մտածել, որ գեղի դուրաններուն վրա իր դերբուկ ինքնության մեջ թափառոտող պարզուկ շինականի մը տեսակն ալ կուզեք ավելցած տեսնել շարքը Ձեր քաղքենի հարսնևորներուն։

Տեսակի ի խնդիր հրավեր մըն է Ձերը, զոր սիրով պիտի ընդունիմ, բայց ուրիշ խոստովանանք մը— Դուք ալ չե՞ք մտածեր, թե ան ցանկալին ազատության արևին այնքան հանկարծորեն նշողումը, չղջիկի կուրության մը մատնեց կարծես սա գետիններուն վրա ապրող հայ գրողը, որ գլուխը պատե-պատ զարնելեն անդին բան մը չըներ տակավին։

Օր մը հարմարած մեր միջավայրին, որ բռնությունն էր ստեղծեր, գեշ աղեկ կրնայինք ծամ մը պահել գրիշին բերանը, իսկ հիմա, որ մեր երազածներուն այնքան մոտը ու դեմ-դեմի կգտնվինք հրաշալի անակնկալով մը, ցամաքը նետված ձկնիկին շնչահեղձությունը կզգանք հիմա ալ. մեզի համար այն սակավավորությունը բան մըն էր վերջապես։

Ու հետո, Դուք ըսեք, թե գավառի գրողը, նեղոսի մը ճախճախուտքեն դուրս եկած սա խեղճ արդեն ու նիհար երինջը, որ կաշի ու ոսկոր ունի միայն, ի՛նչ սայլի կրնար լծվիլ, ի՛նչ բեռ ու ծանրություն կարող է տանիլ։ է՜հ, ինչերու տարվեցավ միտքս, հարգելի վարպետ, ես, որ միայն կարճ խոսքը գտնելով պիտի ըսեի Ձեզի, թե այո՛, Ձեր պատվաբեր հրավերը չպիտի կրնամ մերժել։ Դպրոցես դուրս ժամանակի չափ մըն ալ Ձեր փառավոր հանդեսին համար տրամադրելի պիտի պահեմ։ Ու հարկավ պիտի օգնեք ինձի, որ ծունկերու կթուռվածություն չզգամ շատ, հոն մտնալու ատենս։

Սիրով ու խանդաղատորեն հարգանքներով, միշտ Ձերդ՝

Հովհաննես Հարությունյան
(Թլկատինցի)[26]

(ԳԱԹ, Ա. Չոպանյանի արխիվ, I բաժին, № 2352)։

11. Ռուբեն Զարդարյանից՝ Արշակ Չոպանյանին

1905, նոյեմբեր 8/21, Ֆիլիպե.

Սիրելի՛ եղբայրակից.

Այն պահուն, ուր ինքս կպատրաստվեի գ.ելու Ձեզի, Դուք կկանխեք զիս, շնորհապարտ թողլով Ձեզի։ Իրավունք ունիք մեղադրելու, որ արտասահման հասնելես ետք չկրցի գրել. գիտնայիք, թե ի՛նչ մտահոգություններով ու դժվարություններով լեցուն բան մըն էր՝ ամբողջ ընտանիք մը շալակն առնել ու գնչուի գաղթով գալ հաստատվիլ այս օտար հողերուն վրա։ Ու երբ հազիվ ինքզինքս գտնելու վիճակին մեջ, ահա «Ռազմիկ»-ը[27]՝ որուն կլծվեի միս մինակս, քաշելով բոլոր թերթին պատասխանատվությունն ու հոգնապահանջ բեռը։ Որքա՜ն երջանիկ պիտի ըլլայի՝ անգամ մը Ձեզ տեսնելով և սեղմելով Ձեր ձեռքերը, որովհետև Ձեր պատկերը ամենեն հարգալից տեղը կգրավե իմ գրական պաշտամունքներուս մեջ. չկա բացարձակապես, ինձի համար, ամբողջ հայ գրականության մեջ մեկը՝ որուն գեղեցկագի-

---

25 *Սողիկյան Կարապետ (1874—1915), պրոֆեսոր, լեզվագետ, մանկավարժ, գրասեր, լրագրող, խմբագիր «Ծիրատ» պարբերականի 1909—1915 թ. թ.։ Մեծ եղեռնի զոհերից։*

26 *Թլկատինցի—Հովհաննես Հարությունյան (1866—1915), արևմտահայ գրող, մանկավարժ։ Մեծ եղեռնի զոհերից։*

27 *«Ռազմիկ», ազգային, գրական և քաղաքական լրագիր (նախ եռօրյա և ապա օրաթերթ). լույս է տեսել 1905—1910 թվականներին Ֆիլիպեում. հրատարակիչ՝ Մ. Օվանեսով, խմբագիր՝ Ռ. Զարդարյան։*

տութեան, գրական դատաստանին ու արվեստին վրա նախապաշարված վստահութիւն ունենամ, որքա՛ն ձերինին. և ասիկա համոզում մըն է, որ երբեք չպիտի խաբեի իմ մեջս. ուստի, կրնաք երևակայել, թե ի՛նչ բաղձանք է, որ փայփայած եմ տարիներով և հեռավորութեան մը մեջեն՝ անգամ մը անձնապես Ձեզ տեսնելու և հայտնելու սքանչացումս Ձեր բեղմնավոր տաղանդին համար։ Պիտի ջանամ, որ հառաջիկային այդ առիթը գտնեմ վերջապես։ Եվ տեղն է, որ ըսեմ, թե շատ բան պարտական եմ Ձեզի։ Առաջին քաջալերութիւնը Ձեզմե լսած եմ իմ գրական սկզբնավորութեանս մեջ և Ձեր գնահատումը բարերար եղած է ինձի. ուստի, երբ «Անահիտ»-ի աշխատակցութեան հրավեր կընեք, միմիայն պարտականութիւն մըն է որ կհիշեցնեք։ Այս պահուն աշխատութիւններս որքան ալ ծանրատար ըլլան, նորեն կխոստանամ ասեղը շուք ընել և մտքի կտոր մը հանգըստութիւն գտածիս պես՝ գրել Ձեզի։ Գալով վարձատրութեան, խղճի խայթ պիտի ըլլար ինձի, անոր խոսքն անգամ ընել. միայն շնորհակալ պիտի ըլլամ, եթե Ձեր ընտրութեամբը ֆրանսերեն գրքեր ղրկեք ինձի, իմացնելով անոնց փոխարժեքը, որպեսզի վճարեմ, այդ ընտրութիւնն իսկ վարձատրութիւնն է իմ գրածներուս։

Օրինակել տալով Ձեզի պիտի ղրկեմ այսօր վաղը այն հեքիաթը, որուն վրա խոսած եի Իզմիրեն Ձեզի։ Դժբախտաբար շատ քիչ բան գրած եմ դեռ ու չեմ ալ գիտեր, թե ե՛րբ կարող պիտի ըլլամ վերջացնել զայն։ Բայց վերջացնելե առաջ, կուզեմ Ձեր պատասխանը լսել. ու եթե հարմար չդատեք Ձեր կողմեն անոր շարունակութիւնը, իմաց տաք որ ընդհատեմ։ Ամփոփ կերպով ըսեմ Ձեզի նյութին կարևոր գիծերը։ Ավանդութիւնը Բիթլիսի բերդին վրա է։ Հեթանոսութեան շրջանին՝ բերդին շինութեան ձեռնարկված է, որը հազիվ քիչ մը կբարձրանա և ահա հանկարծ աստվածները սարսելով գետինը, կփլցնեն զայն գիշեր մը. այսպես քանի մը անգամ։ Վերջապես, պատգամը կհայտնեն, որ ամենեն գեղեցիկ աղջիկը պետք է ողջ-ողջ դրվի բերդին հիմերուն տակ, որպեսզի աստվածները թողուն անոր կառուցումը։ Աղջիկը կդրվի հիմին տակ հատկապես պատրաստված խցիկի մը մեջ և բերդը կբարձրանա ու կավարտի։ Ջոհը՝ դիտելով իր լուսամուտեն դուրսի աշխարհն ու արևը, կեղերերգե, կուլա, կոգեվարի և կմեռնի։ Արցունքներեն քանի մը կաթիլ թափած ըլլալով դուրսի ապառաժին վրա, անոնցմե հիմա նշենի մը ծաղկած է, որ դարերով կա ու կմնա և կծառայե իբրև ուխտատեղի։ Բաղձանքս է, որ հեքիաթը իր իսկական հանդերձանքին մեջ ըլլա նաև այլաբանություն մը մեր ներկա կյանքին. Բերդը՝ Ազատութիւն, իսկ թե Ջոհը՝ այս մաքուր, կույս արյունները որ կթափին և պետք է տակավին թափին՝ բարձրացնելու համար հասարակաց փրկութեան շենքը։ Կուզեմ, որ գործը մոտավորապես 800 տող պարունակե, բաժնվելով երեք կամ չորս նվագի։ Հիմա մոտեցած եմ առաջին նվագին վերջավորութեանը և նոր պիտի մտնեմ քերթվածին ծոցը։ Կսպասեմ Ձեր խորհուրդին։ Շատ շնորհակալ եմ «Ռազմիկ»-ի հրատարակութեանը նկատմամբ «Անահիտ»-ի մեջ Ձեր հայտնած համակրանքին և իմ մասին Ձեր գնահատումին, որուն արժանացած ըլլալուս համար երջանիկ կզգամ ինքզինքս։

Միակ և անյապաղ առաջադրութիւնս է, որ «Ռազմիկ»-ը մեր բոլոր շարքերուն մեջ խաղաղութեան և եղբայրութեան պատգամավորներեն մեկն ըլլա. եղբայրասյաց կիրքերը, հանրային փրկութեան սպառնացող վեճերն ու արարքները արյունով կլեցնեն սիրտս. չե՛ք գիտեր, թե անդին հայ ժողովուրդը երկրին խորերը ի՛նչ հավատք, ի՛նչ վստահութիւն դրած է արտասահմանյան մեր գործիչներուն վրա. անդարմանելի հուսահատութեան և կորուստի պիտի ենթարկվի այն օրեն, երբ իր մեջ այս վերջին հիասթափումն ալ տեղի ունենա։ Մեր կուսակցութեանց մեջ միութիւն մը ես առայժմ անկարելի կնկատեմ, սակայն համերաշխ գործունեութիւն մը, իրարհասկացողութիւն մը, որքան որ անհրաժեշտ, նույնքան ալ կարելի է ինքնին։ «Ռազմիկ»-ի առաջին թիվերուն իսկ այդ ուղղութեամբ բաղձանք հայտնեցի և ամեն միջոցներով պիտի ձգտիմ նույն նպատակին։ Հետևաբար, Ձեր առաջարկած խորհրդակցական համաժողովին համաձայն եմ. մեր մեջ այդ գաղափարը հասունցնելու և արդյունավորելու համար կխոստանամ ամեն կարելին չխնայել։ Ես պիտի նախընտրեի լռելյայն, ընկերական շրջանակներու մեջ մտքերը պատրաստել, ավելի շուտ հասնելու համար առաջադրութեան. հարկ եղած ատեն, հրապարակով ալ պիտի ըսեմ ինչ որ անհրաժեշտ է։ Ապահով եմ, թե ջանքերս բոլորովին ապարդյուն չպիտի անցնին։ Լավ նկատած եք, թե կուսակցութեանց մեջ քողարկված վատ տիպերն են, որ ջուրը կպղտորեն, այս իսկ պատճառով, պետք է նախ կուսակցությունները անոնցմե մաքրագործել, առանց ասոր, համեմատաբար տգետ և ինքնութենեն զուրկ մեծամասնություն մը միշտ հետևող պիտի ըլլա և իր ուժին տակ պիտի խեղդե ամեն աղնիվ ցանկություն։

Ձեր «Ճգնաժամ»-ը, ուրախ եմ հաղորդելու Ձեզի, ընդհանրապես հաճույքով կարդացվեցավ հոս և լրջորեն մտքերու ազդեց։ Ներե-

ցե՛ք, որ Իզմիրի մասին Ձեր ըրած դիտողութիւններուն համակարծիք չգտնվիմ, քանի որ անոնք սխալ մեկնակէտեն փրթած էին։ Իզմիրը առանձին ցույց մը չէր որ պիտի ըներ, ոչ ալ տարաձայնված կերպովը. լրացուցիչ մասը պիտի կազմեր գործի մը, որու հղացումը հոյակապ էր պարզապես։ Ուստի հավասարապես ցավիլ պետք է միայն ձախողանքին համար։

Ահա Ձեզի երկար նամակ մը, որ եթե ձանձրալի չըլլա, գեթ իմ լուռիյանս քավութիյունը կրնա կազմել։

Եղբայրական ողջագուրանքով ու հարգալից,

Ձերդ՝

Ռ. ՉԱՐԴԱՐԵԱՆ[28]

(ԴԱՔ, Ա. Չոպանյանի արխիվ, I բաժին, № 2095)։



12. Ռուբեն Զարդարյանից՝ Չապել Եսայանին

1907, մայիս 1/14, Փիլիպե.

Տաղանդավոր քույրս[29].

Գիտե՞ք որքա՜ն կարոտցեր էի Ձեր նամակը և ի՜նչ անհամբեր գուրգուրանքով կարդացի Ձեր ապրիլ 13 թվակիր պատվականը, որուն այսօր միայն կարող կըլլամ պատասխանելու։

Երեք ամիսն իվեր բացակա էի ասկե և Զատկի կյուրակին միայն վերադարձա, ուստի թախանձագին Ձեր ներողութիյուը կխընդրեմ ակամա այս համեցումիս։

Օր մը արտասահման ըլլամ կըսեի՝ երբ երկիրն էի ու բունութիյան խավարեն կկուրնայի. բայց ահա դարձյալ դժգոհ եմ, որովհետև արտասահմանի լույսեն չեմ կրնար օգտվիլ, այնքա՜ն վաղնեվաղ, հևիհև ու տենդոտ կյանք մը կանցնեմ. ու երևակայեցեք, որ շաբաթը երկու անգամ ալ թերթ մը պետք է լեցնել, յուրաքանչյուր եղած թիվին նաևեն անմիջապես հաջորդին վրա մտածել՝ գրեթե միս մինակդ, առանց կարևոր ուժ մը ունենալու քեզի իբրև թևընկեր։ Հոգնութիյուն, խոնջենք ու մտացիր վիճակ, առանց կարենալ ամփոփվելու զուտ գեղարվեստական աշխատութիյան մը վրա, առանց նույնիսկ օրը օին պատասխանելու բարեկամական նամակներու։ Ահա թե ինչո՛ւ կկարմրիմ հիշելով, թե Ձեր նախորդ նամակը անպատասխանի թողուցած եմ մինչև հիմա։ Գրութիյուններ կան, որոնց պատասխան մը տալը հոգեկան բավարարութիյուն մը, ամբողջ վայելք մըն է. այս պատճառով կպահեմ զանոնք գեղեցիկ ու լուսավոր պահի մը. հա՞րկ է ըսել, թե Ձեզի համար ունեցած անսահման զմայլանքս ու Ձեր տաղանդին համար տածած հարգանքս՝ օծում մը կուտան Ձեզի ուղղած նամակներուս, որոնք չեմ ուզեր սովորական գրիչով գրել ու շուտով պահարանի մը մեջ նետել։ Բայց ես այս անգամ այնքա՜ն հանցավոր եմ ու Դուք ալ նույնքան իրավացի Ձեր մեղադրանքին մեջ։

Հաճույքով կարդացի Եգիպտոսի աղգային թերթերուն մեջ՝ որ Գահիրե եղած եք, և հիմա, այնքա՜ն շնորհապարտ եմ Ձեզի, որ դոկտոր Տաղավարյան[30] բարեկամիս հետ զի՛ս ալ հիշելու պատիվն ըրած եք ինձի։ Միայն բան մը՝ որ մինչև հիմա տակավին վշտակցութիյուն կպատճառե ինծի, այն, թե ի՞նչ էր այն անակնկալ «դժբախտութիյունը», որով ստիպված եղաք փութով հեռանալու Եգիպտոսեն։ Որքա՜ն շնորհակալ ու երախտագետ պիտի ըլլայի, եթե հաճեիք այս մասին տեղեկութիյուն մը տալ, քանի որ Եգիպտոսի թերթերը լուռիյամբ անցած էին, դժգույն բացատրութիյունով մը գոհանալով միայն։

Կղգամ Ձեր հոգեկան դառնութիյունը՝ որ կուգա ձեզի օտարութենեն ու օտարեն, և՛ իսկ նույն ցավը կուլամ մեջս, թեև հոս հայ կյանք մը գտնվի տակավին ու մեր սիրելի

---

[28] Ռուբեն Զարդարյան (1874—1915)—նշանավոր գրող, խմբագիր, հրատարակիչ։ Մեծ եղեռնի զոհերից։

[29] Չապել Եսայան—Հովհաննիսյան (1879—1943), արևմտահայ նշանավոր գրող, հասարակական գործիչ։

[30] Նազարեթ Տաղավարյան (1862—1915), բժիշկ, հասարակական գործիչ։ Մեծ եղեռնի զոհերից։

Արևելքին ալ շատ մոտիկ ըլլանք։ Գրական foyer-ն[31], որուն կակնարկեք և որուն կարոտն ունինք ամենքս ալ, գուցե պահ մը կարող ըլլար գեղեցիկ չակերտ մը դնելու մեր տրտմութեան մէջ, բայց համոզված եմ Ձեզի հետ ես ալ՝ թե անհնար է առայժմ, մանավանդ արտասահմանյան ներկա հայութեան ներշնչած հավատքովը։ Հավանաբար մոտ օրերեն Կովկաս սկսի հրատարակվիլ գրական հանդես մը՝ կովկասահայ մեր կարողագույն գրագետներու աշխատակցութեամբ. ի՜նչ արդյունավոր ու հրաշալի գործ մը պիտի ըլլա՝ եթե թրքահայ ու ռուսահայ մտավորականութեյունը հոն իրար ամբողջացներ։ Մտադրութեյուն ունիմ անցնիլ Կովկաս. եթե կարելի եղավ իրագործել այս մտադրութեյունս՝ վստահաբար այդ հանդեսը իմ փափագած ձևովս կհրատարակվի, ու այն ատեն բնավ տարակույս չունիմ, թե Դուք անոր մէջ չմերժեք գրավել Ձեր տեղը[32]։ Վերջերս Ահարոնյանի[33] հետ կխոսեինք թրքահայ գրականութեյան վրա. երևակայեցեք, հոգեկան ու մտավորական ամբողջ գործունեութեյամբը՝ թրքահայաստանով տարված ու ամենեն ավելի մեզի ծանոթ գրագետ մը՝ ինչպիսին է մեր անզուգական Ղարիբը, չէ՞ր ճանչնար Գրիգոր Զոհրապը, տո՛ղ մը իսկ կարդացած չէր անկե, և, խիստ քիչ բան գիտեր Ձեր մասին։ Ցավ մը զգացի, որ երբեք չպիտի մոռնամ. սակայն, մեզի կիյնա թրքահայ գրականութեյունը ծանոթացնել Կովկասին ու Կովկասի մտավորականութեյան։ Ու ես համոզված եմ, որ այս փոխադարձ ծանոթացումը, երկու ձգտումներուն ու երկու մտավորականութեյանց փոխադարձ լրացումի՝ բեղմնավոր, բոլորովին նոր և ուժեղ գրականութեյան մը դարագլուխը պիտի բանա մեր ցեղին համար։

«Ռազմիկ»-ը միշտ Ձերն է և միշտ Ձերը պետք է նկատեք. ամոթն ունիմ, որ ի վիճակի չեմ փոխարինութեյուն մը առաջարկելու Ձեր աշխատակցութեյան, այս իսկ պատճառով համարձակութեյուն չեմ ունեցած Ձեզմե գրութեյուն խնդրելու։

Խնդրելով, որ ընդունիք հարգանքներս ու եղբայրական աղապատանքս, կմնամ սրտագին բարևներով՝

Ձերդ՝
Ռ. Զարդարյան

(ԳԱԹ, Զապել Եսայանի արխիվ, № 671, անտիպ)։

---

31 Օջախ։

32 Հայտնի չէ, թե ո՛ր հանդեսի մասին է։

33 Ավետիս Ահարոնյան (1866—1948), գրող, դաշնակցության ղեկավարներից։ Գրականութեյան մէջ հայտնի է նաև Ղարիբ ծածկանունով։

13. Արտաշես Հարությունյանից՝ Արշակ Չոպանյանին

[1895] 10/22 մարտ, Մալկարա.

Սիրելի՛ եղբայրակից.

Փայփայած երազներս մեկն էր օր մը զքեզ առանձին պարբերական թերթի մը գլուխը տեսնել։ Այդ երազիս իրականացումը այսօր ինձ մանկունակ ուրախութեյամբ մը կհամակե, ու անբացատրելի հրճվանքով մը կլեցվի հոգիս՝ բարձր գրականութեյան պատկանող հրատարակութեյուն մը ունենալու կատարյալ գիտակցութեյան մէջ։

Այս ծափահարելի նախաձեռնութեյունը Ձեր գործունեութեյան մէջ պարագա մըն է, զոր մոռնալ մեր գրական պատմութեյան՝ ապերախտութեյուն կնկատե արժանիքը մարդուն իրավունքներուն դեմ։ Սրտագին կշնորհավորեմ զՁեզ և Ձեր գործը գնահատողներուն մէջ ամենեն գիտակից և ամենեն անկեղծ կերպով կբարևեմ «Ծաղիկ»-ը[34]։

Գաղափարներու իմացական բաժնին մէջ, «Ծաղիկ»-ը թող ծայրահեղներուն և խիզախներուն թերթն ըլլա, վասնզի կհավատամ, թե բարեշրջութեյան դանդաղ գործը՝ իրենց ժամանակին համար անըմբռնելի և paradoxal[35] մտքերու ջանքովը հարդարված ու առաջ քշված վ միշտ։

Ինձի կթվի, թե ֆրանսացի երիտասարդ գրողներուն հիմնած թերթերեն «La Plume»[36] ընտիր ուղեցույց մը կրնա ըլլալ «Ծաղիկ»-ի։ Եթե հրատարակչական դյուրութեյուններ թույլ տան ու երբեմն բնագրե դուրս կամ բնագրին մէջ ուսումնասիրված գրական դեմքերուն պատկերներն ալ դնենք, շատ լավ կըլլա իմ կարծիքով։

Ձեզի Մալկարայի մէջ բավական թվով բաժանորդներ կհայթայթեի հիմա, եթե արդեն գոյութեյուն չունենային այստեղ նախորդ «Ծաղիկ»-են պահանջք ունեցող 4—5 բաժանորդներ՝ որք մինչև 10-րդ թիվը թերթերը նախորդ հրատարակչեն պիտի ստանան։ Խոստանալով հին բաժանորդներուն շարունակել տալ իրենց բաժանորդութեյունը, միշտ պիտի ջանամ նորեր ալ գտնել ու անմիջապես գրել Ձեզի։ Այս նյութական աշխատակցութեյան մասին ունեցած փութիս ու պատրաստակամութեյունս իմ անկեղծ համակրութեյանս թանձրացյալ ցույցը կրնա՞ համարվիլ արդյոք։

---

34 «Ծաղիկ»— Ազգային քաղաքական և գրական կիսամսյա հանդես, լույս է տեսել 1886—1911 թվականներին։ 1895—1896 թվականին խմբագիր եղել է Ա. Չոպանյանը։

35 Հակասական։

36 «Գրիչ»։

Իսկ մտավորական գործակցություն մը սիրով պատրաստ եմ նվիրելու, եթե երբեք նիհար տաղանդես «Ծաղիկ» բան մը սպասելու տրամադրություն ցույց տա։

Ձեր գրական գործունեության վրա պատրաստած եմ պզտիկ ուսումնասիրություն մը, զոր անպատճառ կուզեմ հրատարակված տեսնել, մեր մեջ ևս գրական անձնավորությունները իրենց հատուկ շրջանակին մեջ դեռեղելու պետքին մղում տալու հառաջադրությամբ։ Եվ սակայն արգելքներ կրնա՞ն գոյություն ունենալ, որ նույնիսկ «Ծաղիկ» չկարենա հրատարակել իր խմբագրապետին գործը անկեղծորեն վերլուծող ուսումնասիրություն մը։ Այս մասին հաճեցեք ինձի երկու տող գրել ու անոր համեմատ ղրկեմ ձեռագիրս։

Կարոտով Ձեր խոհուն ճակատը կհամբուրեմ։

Կարո (Արտաշես Հարությունյան)[37]

Հ. Գ.— Եթե պատշաճ դատեք, ներփակյալեն քանի մը տող հաճեցեք հատկացնել «Ծաղիկ»-ի հառաջիկա թիվին մեջ։

Հարցում մը ևս, որուն գործնականապես պատասխանելու տրամադրություն հայտնած էիք ինձի մեր տեսակցության պահուն։ Հաճախ գիրքերու պետք կունենամ, զորս անկարելի է այստեղ գտնել. կբարեհաճի՞ք ինձի միջնորդություն մը ընել Փարիզի և Մալկարայի միջև։ Գումարները ես Ձեզի կղրկեմ և Դուք գիրքերը Փարիզեն հոս ղրկել կուտաք։ Կընդունի՞ք այս խնդիրս։ Նույնպես, օրինակ մը ղրկեցեք ինձի Ձեր աշխատասիրած Դուրյանի կենսագրութենեն, արժեքը որքան որ է, կվճարեմ։

Նույն

(ԳԱՔ, Ա. Ջոպանյանի արխիվ, I բաժին, դեռևս առանց №-ի)։

14. Արտաշես Հարությունյանից՝ Զապել Եսայանին

1908, հուլիս 20, Մալկարա.

Զապել Եսայանին.

Ազատության անվարժ ու հուզումե դողահար ձեռքով մը կգրեմ Ձեզի, սիրելի՛ բարեկամուհիս։ Չեմ գիտեր, թե ի՛նչ գրելու եմ, չեմ գիտեր, թե ի՛նչ կրնամ գրել։ Շանթահար մարդու մը տպավորության մեջ եմ, ու դեռ պետք եղածին պես չեմ սթափած, հստակորեն տեսնելու և դատելու համար իրականությունը։ Ուստի և, ներեցեք ինձի, պիտի գրեմ՝ ինչ որ կա գրչիս ծայրը, առանց հակակշռի, առանց հաշիվի։

[37] Արտաշես Հարությունյան— Կարո *(1873—1915)*, արևմտահայ բանաստեղծ, լրագրող, քննադատ։ Մեծ եղեռնի զոհերից։

Օ՜հ, ամենեն առաջ՝ թողեք Ձեզի ըսել համարձակ՝ այլևս ղՁեզ կարենալ տեսնելու հույսս ու երջանկությունս։ Հիմա այլևս կրնամ տեղես շարժիլ, հիմա այլևս կրնամ Պոլիս երթալ, ուր 15 տարիե ի վեր թույլ չէր տրվեր ինձի ճամբորդել։ Հիմա ամեն հույս ունիմ ղՁեզ հոս կամ հոն տեսնելու, Ձեր ձեռքերը սեղմելու։ Ե՞րբ կհուսաք վերադառնալ մեր երկիրը։ Այլևս պետք ունի՞ք մտախլապատ երկինքներու ներքև ապրելու հանուն ազատության։ Վերադարձե՛ք, սիրելի բարեկամուհիս, վերադարձե՛ք մեր մոտ։ Մեր կապուտաներուն ու մեր արևներուն կարոտը չի՞ ձգեր ղՁեզ դեպի մեզ։ Ըսե՛ք ինձի, ե՞րբ կհուսաք վերադառնալ։ Հետո, բոլոր մյուս տարագիրները չպիտի՞ վերադառնան։ Ե՞րբ։ Արշակը[38], Սիսակը[39], Երվանդը[40], Բաշալյանը[41], այնքա՜ն ուրիշներ։ Վերադարձե՛ք, վերադարձե՛ք Պոլիս։ Հո՛ն է ձեր հայրենիքը։ Հո՛ն ապրեցեք, և հո՛ն արժեցուցեք մեր տադանդները։ Հիմակուց կերևակայեմ, ի՜նչ հրաշալի գրականություն մը պիտի ունենանք։ Ափեղցփեղ կխոսիմ, ուրիշ կերպ չեմ կրնար ընել։ Բայց մանավանդ Դուք գրեցեք ինձի։ Ա՛լ ինչե՜ր չեք կրնար գրել որ։ Ձեր աշխատություններուն, Ձեր ծրագիրներուն, ամե՛ն բանի վրա։ Ձեր ֆրանսերեն հատորին վրա կսպասեմ հիմա, որ մանրամասնորեն գրեք։ Կխնդրեմ մանավանդ։ Արշակ՝ Mercure-ի տպարանեն գիրք մը հաներ է վերջերս[42]։ Այսօր պիտի գրեմ բերել տալու համար։ Ձեզի պիտի հարցնեի նաև՝ կարծեմ թե մեկ երկու տարի առաջ ալ Poèmes Arméniens[43] անունով հատոր մը հրատարակած էր, բայց տպագրելը չեմ գիտեր, ո՞ւր կրնամ գտնել, լավ բան մըն է։

Կավետեք ինձի, թե «Կեղծ հանճարներ»-ը[44] ավարտած եք. ի՜նչ ուրախություն, պատիվներով կընկճեք զիս, Ձեր թանկագին, անփոխարինելի բարեկամությամբը կկենդանացնեք զիս։ Ես ի՜նչ ընելու եմ փոխարենը։ Շվարած եմ։ Անճրկած եմ։

Չպիտի կրնամ երկար գրել։ Շատ բան ունեի գրելիք, ու բան մը չունիմ ահա։

[38] Խոսքը Ջոպանյանի մասին է։

[39] Հավանորեն խոսքը վերաբերում է Տիգրան Կամսարականին, որը հաճախ հանդես է եկել Սիսակ Արմենյան ստորագրությամբ։

[40] Երվանդ— Հավանորեն Օտյանի մասին է։

[41] Խոսքը Հևոն Բաշալյանի մասին է։ Այս անձնավորություններն ապրում էին Եվրոպայում։

[42] Խոսքը „Poèmes" գրքի հրատարակությանն է վերաբերում, որը լույս է տեսել 1908 թվականին։

[43] «Հայկական բանաստեղծություններ»։

[44] Զ. Եսայանի «Կեղծ հանճարներ»-ը, լույս է տեսել 1910 թվականին, Պոլսում։

Պահանջումնիս պիտի միայն ընեմ։ Այսուհետև շա՛տ բան պարտիք գրել Դուք։ Ի՞նչ հիշատակներ ունիք վտարանդիներու կյանքեն։ Այլևս վերապահումներ ընելու ստիպված չեք։ Ի՞նչ վեպեր, նորավեպեր չպիտի կրնայիք Դուք գրել՝ հայ աքսորականներու և փախստականներու կյանքեն։ Ահագին քանակությամբ նյութ ունիք. այլևս ոչ մեկ կապանք կա, ոչ մեկ անկարելիություն։

Ձեր նամակին մեջ կհանդիմանեք զիս։ Սիրահոժար կընդունիմ այդ հանդիմանությունը. ինչ որ Ձեր կողմեն կուգա՝ քաղցր է ինձի համար։ Բայց այո՛, անկեղծորեն կվախնամ զՁեզ հուսախաբ ընելե, երբ տեսնելու ըլլաք զիս։ Վա՛տ է ան, որ կկեղծես։ Պատժեցե՛ք զիս Ձեր տնօրինելիք պատիժներուն սաստկագույնովը, բայց պիտի համարձակիմ ըսելու, կվախնամ զՁեզ հուսախաբ ընելե, վասնզի հակառակ ամեն բանի, անդրմանելիորեն հասարակ, terre-à-terre[45] մարդը կտեսնեմ ինքզինքիս մեջ։ Իբրև «բանաստե՛ղծ» կճանչնաք զիս։ Ոչ ոք ինձի չափ «հասարակ մարդ» մըն է, առանց ծեքծեքումի, առանց արվեստականության, առանց կեղծ դիմակավորումներու. ու կվախնամ թե՝ Ձեր դյուրազգաց, փափկազգաց բնավորության՝ հաճելի չի գար այդ թշվառ մարդկայնությունը։

Ահա՛ ես ալ, ամբողջ նամակս, մեկ ծայրեն մյուսը, ինձմով լեցուցի։ Դուք կքաջալերեք զիս ամեն անգամ՝ այդ անխորհուրդ épanchement-ներուն[46], ճանչցե՛ք զիս ինչպես որ եմ։ Ի՞նչ պետք ունիմ սքողելու։ Թերևս կուսումնասիրեք զիս իբր հետաքրքրաշարժ թիփ մը. չեմ խրտչիր այդ ենթադրութենեն։ Հաճելի, փափագելի պիտի ըլլար նույնիսկ արժանացած ըլլալ Ձեր ուշադրության այդպիսի տեսակետե մը։

Ահա՛, սիրելի բարեկամուհիս, տարօրինակ նամակ մը։ Անիկա ի՞նչ տպավորություն պիտի ընե Ձեր վրա։ Ըսե՛ք, գրեցեք ինձի, ինչ որ հարկ է։ Սանձեցե՛ք իմ համարձակություններս. ի կարգ հրավիրեցե՛ք իմ անխոհեմություններս։ Բայց մանավանդ՝ մի՛ պատժեք զիս՝ Ձեր նամակներուն երկարորեն սպասելու դատապարտությամբ։

Վերստին ներողություն խնդրելով իմ այս խենդուկ ու անխնամ նամակիս համար, կմնամ ձերդ անձնվեր՝

ԱՐՏԱՇԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(ԳԱԹ, Զ. Եսայանի արխիվ, № 744)։

[45] Ոճի մեջ՝ հետևողական։

[46] Զեղում։



15. Երկու բանաստեղծություն Ռուբեն Սևակից[47]

ԱՍՏՂԻ ՄԸ

Ամեն իրիկուն արևն երբ չքնաղ,
Արյան մեջ կարծես՝ կը սուզի դանդա՛ղ,
Ու ստվերի մեջ սարեր կը հևան,
Ես քե՛զ կը նայիմ, ո՛վ Աստղ իրիկվան։

Չեմ գիտեր, ո՛վ Աստղ, անունըդ գոնե,
Դեռ ինձի ոչի՛նչ չեն պատմած քեզնե.
Գիտեմ միայն որ մանուկ հասակես,
Ո՛վ Աստղ իրիկվան, ես կը նայիմ քեզ։

Մանուկ հասակես նույն կեանս ես դողդոջ,
Անհունին մեջ նույն ժպիտը բողբոջ։
Ի՞նչ փույթ, թե անդին դեռ բյուր աստղեր կան,
Ես քե՛զ կը նայիմ, ո՛վ Աստղ իրիկվան։

[47] Ռուբեն Սևակ (1885—1915), արևմտահայ անվանի գրող, բժիշկ։ Մեծ եղեռնի զոհերից։ Ռուբեն Սևակի այս բանաստեղծությունների սևագրերը գտնվում են Թորոս Ազատյանի արխիվում (Գրականության և արվեստի թանգարան)։

Անոնք շատ բարձր են, անհաս, հավակնոտ,
Դուն վարն ես, մերին հորիզոնին մոտ.
Մինակը՛դ դժգո՞ւյն, դժգո՞ւյն, ոսկեգես,
Ո՛վ Աստղ իրիկվան, ես կը նայիմ քեզ։

Դուն կաս ու չկաս,— խաբկանքը լույսին,
Դուն հույսն ես հեռվի, հույսը անհույսին...
Ու երբ արցունքոտ բիբերս կը հևան,
Ես քեզ կը նայիմ, ո՛վ Աստղ իրիկվան։

Կյանքը երգ մ՛է քեզ.... Ու ի՞նչ կյանք,
Աստվա՛ծ.
Միշտ հույսին հարած ու միշտ ալ խաբվա՛ծ,
— Մեր է սիրտս, բայց աչերս սիրակեզ,
Ո՛վ Աստղ իրիկվան, դեռ կը նայի՞ն քեզ...։

1909 օգոստոս 20/սեպտեմբեր 3
(Թորոս Ազատյանի ֆոնդ, գրական բաժին, № 171)։

ՁԱՄԲՈ՞ՐԴ...

Ձամբո՞րդ, անցա՞ր դու այն գեղէ հեռավոր,
Որ ժայռերուն սերտիվ կառչած վես
կուրծքին՝
Իր քարուքանդ պարիսպներուն դարավոր
Կը դիտե շուքը ծովուն մեջ տրտմագին.
Ձամբո՞րդ, անցա՞ր դու այն գեղէ հեռավոր։

Տեսա՞ր կարգով տնակները հին ու ցած,
Որոնց սեմի առջև ծերեր կերևին,
Արյունաներկ, մամոռոտ պատերը հինցած,
Ուր մողեսնե՛րը կը տաքնան արևին.
Տեսա՞ր կարգով տնակները հին ու ցած։

Անցա՞ր վտիտ արահետեն, բարեկա՛մ,
Որ մարգերուն մեջ կը սողա գետին հետ,
Կամուրջներով կընդհատե զայն շատ անգամ,
Հետո, հետո՞ւն կըլլա դաշտին մեջ անհետ.
Անցա՞ր վտիտ արահետեն, բարեկա՛մ։

Ա՜խ, հոն են դեռ այգեստաննները գյուղին,
Ողկույզներու տակ բեռցված քաղցրավե՞ռ,
Ուր ցորենի անծայր դաշտերը դեղին,
Որ ոսկեշող կը ծփային արևետ.
Ձամբո՞րդ, տեսա՞ր այգեստաննները գյուղին։

Ու նայեցա՞ր ապառաժին բարձունքեն
Գիշեր ատեն, երբ սյուքը մեղմ կը փչե,
Ու ծովափին վրա ալյակնե՛րը կերգեն,
Երբ լուսնակին տակ գյուղը լուռ կը ննջե.
Ու նայեցա՞ր ապառաժին բարձունքեն։

Լուսնակ լույսով գերեզմաննոցն ալ տեսա՞ր...
Որ ժայռերուն հանդարտ կողքին կը փարի.
Բլրակներու ներքև գետնին հավասար՝
Կը ննջեն մեր նահատակները բարի...
Լուսնակ լույսով գերեզմաննո՛ցն ալ
տեսա՞ր...

Տարիներով կարո՞տն ունիմ սիրագին
Այդ հողերուն, աղբյուրներուն մեղմ հոսուն,
Գերեզմանին, անբառ ծովին, լուսնակին
Ու ժայռերուն, որ իմ ծնիլս տեսան...։
Կարմիր կարոտն, կարոտն ունիմ սիրագին։

Ձամբո՛րդ, անցա՞ր դու այն գյուղեն
հեռավո՛ր...։

19 օգոստոս
(ԳԱՔ, Թորոս Ազատյանի ֆոնդ, գրական բաժին, № 225)։

Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ՆՈՐ ՂԵՎՈՆԴՅԱՆՔ

1500 տարիներ են մեզ բաժանում Ղևոնդյանց արիական և ծանր օրերից, հերոսական ժամանակներից։

Ղևոնդյանք, նահատակ հոգևորականների այդ լուսե փաղանգը, Հայ Եկեղեցու պայծառ սրբերն են և «ախոյեան եկեղեցւոյ», որոնք երջանիկ արիությամբ «ետղին զարիւս իւրեանց ի նորոգումն եկեղեցւոյ» և, նրանց անձնուրաց նահատակությամբ, «եկեղեցիք Հայաստանեայց պայծառապէս զարդարեցան»։

Հայ Եկեղեցու ծոցում և հայ հոգևորականության սրտում միշտ վառ մնաց Ղևոնդյանց ոգին, Ավետարանի կենդանի շունչով և հայրենիքի սիրով առլցված։

Ղևոնդյանց նահատակությամբ հերոսացավ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և սրբացավ հայրենի հողը։

Ղևոնդյանց նահատակությունը անջինջ ու հավիտենական հիշատակ թողեց ապագա հայ եկեղեցական սերունդների սրտում։

Հետագա դարերում, երբ օտարները սուր բարձրացրին մեր հավատի, սրբությունների, Եկեղեցու և հայրենիքի վրա, Ղևոնդյանց ուխտապահության և հայրենասիրության ոգին նորից ոտքի հանեց Եկեղեցու սպասավորներին, «վասն Յիսուսի և վասն Հայրենեաց»։

Այդ ոգին հավերժացավ այդպես Հայ Եկեղեցու տարեգրության էջերում և դարձավ անխորտակելի վեմը մեր Եկեղեցու կենսունակության և գոյության։

50 տարիներ են մեզ բաժանում նոր Ղևոնդյանց նահատակությունից։

Ապրիլյան եղեռնի արյունոտ օրերին, հայ ժողովրդի ողբերգական և տխուր ճակատագիրը հավասար արիությամբ բաժանեց նաև հայ հոգևորականությունը, որպես պլուխ և առաջնորդ ժողովրդի։ Թշնամին, որ ուզեց մահացնել մեր ժողովրդին, իր հարվածը ուղղեց նախ հայ մտավորականության և հայ հոգևորականության, մեր իմացական ու հոգևոր ուժի ակունքներին։

Հայ հոգևորականությունն էլ ապրեց իր Գողգոթան և ըմպեց «զբաժակ մահու»։ Հովվի արյունը խառնվեց իր հոտի արյան հետ։ «Անօրէնք ետղին զարիւն անբիծ» (Ա Մակաբ. Ա 8), և «ոչ nf էր nr թաղէր զնոսա (Սաղմ. ՀՀ 3)։ Ոճրագործը միասին հնձեց հոտն ու հովվին, որոնցից շատեր «կոշկոնեցան, զտանջանաց և զգանից փորձ առին, զկապանաց և զբանտից, fարկածեցան, սղոցեցան, սպանմամբ սրոյ մեռան, կախեցան» (Եբր. ԺԱ 35—37), և «որոց անուանքն ի դպրութեան կենաց են գրեալ (Փիլ. Դ 3)։

Հայ ժողովուրդը, Հայ Եկեղեցին երբեք չեն մոռանա նահատակ հոգևորականներին, «զի ուխտն հաւատոց նոցա ոչ եթէ ըստ մարդոյ էր, այլ անլուծութեամբ Աստուծոյ, որում չիf հնար fանդել և ի բաց ելանել, ոչ այժմ, և ոչ յապա և ոչ յաւիտեանս և ոչ յաւիտենից յաւիտեան» (Ղևիշե)։

Հայ հոգևորականությունը, ժողովրդի ծոցից ելած, ժողովրդի հարազատ զավակ, իր կյանքն ու ճակատագիրը, գործն ու հույսերը կապել է միշտ իր ժողովրդի կյանքին ու հույզերին։

Հայ հայրենասեր հոգևորականը եղել է միշտ իր ժողովրդի հետ, բաժանել է նրա ուրախություններն ու վիշտը, որպես հայ հավաքականության անբաժանելի մասը։

Հայ հոգևորականն իր գնահատելի մասնակցությունն է բերել մեր մշակույթի ստեղծման, զարգացման և պահպանման շնորհակալ գործին։

Անմոռաց ու լուսաշող հայ հոգևորականների պայծառ անուններն ու գործերը զարդարում են մեր մշակույթի պատմության էջերը, Ե դարից մինչև մեր ժամանակները։ Նա, հայ հավատավոր հոգևորականը, իր

մասնակցությունն է բերել նաև մեր ազգային-ազատագրական շարժումներին, միշտ մտահոգվել է հայ ժողովրդի ճակատագրով և իր սրտագին լուման է ներդրել մեր ժողովրդի ճակատագիրը դարբնող բոլոր եկեղեցական, ազգային, քաղաքական և մշակութային շարժումների և ճիգերի մեջ։

Հայ հոգևորականությունն ունեցավ իր նահատակներին մեր պատմության արհավրաքից բոլոր շրջաններում, ինչպես նաև ապրիլյան եղեռնին։

Մեծ եղեռնին զոհ գնացին բազմաթիվ եպիսկոպոսներ, վարդապետներ և քահանաներ, «որոց զանուանս Տէր գիտէ միայն» և «որ ժառանգեցին զանուն բաջութեան»։

Ապրիլյան եղեռնի օրերին Հայ եկեղեցիներն ու վանքերն էլ ծանր և անդարմանելի կորուստներ կրեցին։

Կործանվեցին վանքեր, թալանվեցին և հրկիզվեցին եկեղեցիներ։ Մինչև եղեռնը, Արևմտյան Հայաստանում օսմանյան կառավարությունը ամենախիստ հսկողության տակ է պահել հայկական բոլոր եկեղեցիներն ու վանքերը։

1915 թվականի եղեռնից առաջ, Արևմտյան Հայաստանում հայկական վանքերի և եկեղեցիների թիվն ու վիճակովը թուրքական կառավարության հետաքրքրությունը որոշակի կապ է ունեցել արևմտահայության մեծ եղեռնի ծրագրի հետ։

Ըստ Օրմանյան սրբազանի կազմած վիճակագրության, 1912 թվականին Արևմտյան Հայաստանում հայ եկեղեցիների և վանքերի ընդհանուր թիվը հասնում էր ավելի քան 2 200-ի (Օրմանյան, «Հայոց Եկեղեցի», էջ 259—264)։ Ամեն գյուղ ուներ իր ժամն ու քահանան։ Եղեռնի տարիներին, շուրջ 2150-ի է հասնում կողոպտված, թալանված, հրկիզված, նահատակ եկեղեցիների և վանքերի թիվը, իսկ նահատակ քահանաների թիվը՝ շուրջ 4 000 հոգու։

Եղեռնի զոհ գնացին նաև հայ կաթոլիկ հոգևորականներ, Մխիթարյաններ, հայ բողոքական հովիվներ, որպես «ազնվոր հայոց Աստուծո», որոնց մասին կխոսվի ներքևում։

Թշնամին միասին հնձեց Օրմանյանի, Մխիթարի և Դուրյանի աշակերտներին, Արմաշի և Ս. Ղազարի խոստումնալից միաբաններին, որոնց մեջ կային արդարև գրչի, մտքի տեր ճշմարիտ մտավորականներ, որոնք իրենց արյունը խառնեցին իրենց ժողովրդի արյան հետ։

Ապրիլյան եղեռնին մեծ և անդարմանելի կորուստ կրեց նաև Արմաշի դպրեվանքը։

Նահատակների առաջին մեծ խումբը արմաշականներ էին, Օրմանյանի և Դուրյանի շունչով Արմաշում հասունացած խոստումնալից և հավատավոր հոգևորականների սերունդը։

Ազգային Սահմանադրության հռչակումից հետո (1860), հասունացած հարց էր եկեղեցականների կրթության խնդիրը և Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռի կողքին նոր դպրեվանք ունենալու անհրաժեշտությունը։

«Կարելի չէր որ Կոստանդնուպոլսո հայոց Պատրիարքական Աթոռը, ընդհանուր տաճկահայոց կյանքի կեդրոնը, շարունակեր անտարբեր մնալ այս մասին» («Արմաշու դպրեվանքին 25-ամյա հոբելյանի առթիվ, 1889—1914», Կ. Պոլիս, էջ 34)։

1889 թվականին, Խորեն Աշըգյան պատրիարքի օրով, բացվում էր Արմաշի դպրեվանքը, նորապսակ Օրմանյան եպիսկոպոսի վանահայրությամբ, որպես դպրեվանք Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության։

Ընդհանուր ցանկությունն այն էր, որ Արմաշի հին վանքը, որը գոյություն է ունեցել տասնյոթերորդ դարից, դառնար «Քրքահայոց Վենետիկը» (նույն տեղում, էջ 26)։

Դպրեվանքի առաջ կարևոր խնդիր էր դրված՝ պատրաստել հավատավոր, իրենց կոչման բարձրության վրա գտնվող հայրենասեր հոգևորականություն և «Հայ Եկեղեցին ի սպաս դնել հայ ժողովուրդին, անոր կյանքի բոլոր հանգրվաններուն վրա»։

1889—1914 թվականներին, Արմաշն, իր 25-ամյա գործունեության ընթացքում, ազգին ու եկեղեցուն տվել է 34 վեղարավոր, որոնցից շատերը նահատակվել են (Օրմանյան, «Խոհք և խոսք», Երուսաղեմ, 1929, էջ 455)։

Արմաշն արդարացրեց իր վրա դրված հույսերը։

Արդարև, արմաշականների մեծ մասը, հազիվ վեղար առած, գավառ փութաց, կյանք տալու գավառի թեմերին, նույնանալու հայ ժողովրդի հոգսերի հետ, մինչ մյուս մասը մնաց դպրեվանքում, ծառայելով ուսուցչական և հոգևոր ասպարեզներում։

Հայրենասեր հոգևորականներ էին արմաշականները, որոնք հավատում էին Հայ Եկեղեցու և մեր ժողովրդի վաղվա հոգևոր, մշակութային վերածննդյան և աշխատում էին իրենց վիճակներում ճանապարհ հարթել հայոց պայծառ գալիքի համար վարչական, քարոզչական, մանկավարժական և հայրենասիրական գործունեությամբ։

Բայց շատերը վաղաժամ ընկան պարտականության ճանապարհի վրա, հավատարիմ իրենց կոչման, իրենց իդեալին ու հավատին։

Արմաշականները գավառներում պաշտոնների վրա անցան 1897 թվականից սկսած Խարբերդ, Կարին, Սեբաստիա, Շաբին-Գա-

բահիսար, Ակն, Քղի, Բայազետ, Ամասիա, Արաբկիր, Դիարբեքիր, Իզմիր, Մուշ, Սղերդ, Ջանիկ, Երզնկա, Գաստեմունի, Տրապիզոն, Բանդրմա, Անկարա, Կուտինա, Ադանա, Մարաշ, Ռոդոստո և այլ վայրեր։

Եղեռնը գավառներում արմաշականներից շատերին գտավ պաշտոնի վրա և տարավ...։

«Հաւասարեսցի մաճս մեր ընդ մանի խաջ նահատակացն և խառնեսցի արիւնս մեր ընդ արիւն անկեալ վիրաւորացն և հաճեսցի Տէր ընդ եկեղեցիս իւր՝ բազմութեամբ կամաւոր զուարակացն, որ ելանեն ի վերայ սուրբ սեղանոյս» *(Ղեղէե)։*

Թուրք կառավարությունը տապարը հայ հոգևորականության գլխին իջեցնելուց հետո, հաշվեհարդարի ենթարկեց Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքությունն ու ազգային իշխանությունը։

Կառավարությունը մեկ հարվածով չնչեց իր իսկ ստեղծած Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքական Աթոռի «դարերու ընթացքին նվիրագործված կացությունը»։ Աքսորվեց Ջավեն պատրիարքը և 1916 թվականի հուլիսին հրատարակվեց «Հայոց Կաթողիկոսության և Պատրիարքության կանոնագիրը», որով չնչվում էր 1860 թվականի Ազգային Սահմանադրությունը և տաճկահայերի «կապն ու հարաբերությունը բոլորովին արգելված էին հայոց արտարաովում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ»։

«Հայության դեմ հալածանք բացողը բավական չտեսավ հայ անհատներու կյանքի և ինչքերուն, Հայ Եկեղեցվո պաշտամանց ու հաստատությանց, հայ կրոնքին ինքնության ու պահանջին դեմ ուղղել յուր փքինները կ նույնիսկ պետական սկզբունքով, նախնական ավանդությամբ և կայսերական հրովարտակով ճանչցված ու հաստատված հայությունը ուզեց յուր կազմեն զրկել, և անոր նոր կազմակերպություն մը տալ, որով յուր կարևորությունը կորսնցներ, և, եթե հնարավոր ըլլար, գոյությունն իսկ վտանգեր» (Օրմանյան, «Խոհք և խոսք», էջ 339)։

ՆԱՀԱՏԱԿ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐ

1. Խոսրով եպիսկոպոս Բեհրիկյան (1869—1915)

Ավազանի անունով Խաչատուր, բնիկ զարեցի։ Արմաշի դպրեվանքի ավագ սերնդի ներկայացուցիչ և առաջին շրջանի (1889—1895) յոթներեն մին («Խոհք և խոսք», էջ 442)։

Օրմանյանի աշակերտ և արմաշական առաջին նահատակներից մեկը։

1895 թվականին կուսակրոն քահանա և ձեռնադրվում և 1897 թվականին ստանում է ծայրագույն վարդապետի աստիճան։ Վարդապետական իր ավարտաճառի նյութն է եղել «Գրիգոր Տաթևացու կյանքն ու մատենագրական վաստակը»։

Խոսրովը առաջիններից մեկն էր, որ Օրմանյանի հանձնարարությամբ կանչվում է գավառներում առաջնորդական պատասխանատու պաշտոնի նախ Տրապիզոն 4 տարի (1897—1901), ապա Մուշ (1901—1903) և Խարբերդ (1904—1908)։

Սահմանադրության հռչակումից հետո (1908), «կուսակցական գրգռմանց հետևանքով», թողնում է Խարբերդի առաջնորդությունը, մասնավոր հսկողության տակ բերվում է Կոստանդնուպոլիս, ուր զբաղվում է քարոզչությամբ։

1911 թվականին մահանում է Կեսարիայի առաջնորդ Տրդատ եպիսկոպոս Պալյանը (1887—1911)։

1912 թվականին Խոսրով ծայրագույն վարդապետը ընտրվում է Կեսարիայի թեմի առաջնորդ, «ուր իր նախորդին՝ Տրդատ եպիսկոպոսին՝ գործը պահպանելու ու զայն չքանդելու համար ամեն ջանք ըրավ» (Ա. Ալպոյաճյան, «Պատմություն հայ Կեսարիո», Ա, Կահիրե, 1937 թ., էջ 958)։

Խոսրով եպիսկոպոս Բեհրիկյան

1914 թվականին, էջմիածնում, Գևորգ Ե կաթողիկոսից եպիսկոպոս է ձեռնադրվում Կեսարիայի թեմի վրա։

Էջմիածնից վերադարձին ամբաստանվում է, «իբր թե Թշնամի երկրին գրգռություն բերած ըլլա» («Հոհք և խոսք», էջ 443)։ 101 տարվա բանտարկության է դատապարտվում և դեպի Դիարբեքիր ճանապարհի վրա, Բոզանթի (Եդեսիայի մոտերը), Թուրք ոստիկան ուղեկիցների կողմից սպանվում է։ «Հակառակ նահատակ սրբազանին աղերսանաց, որ ճակտին ուղղյալ գնդակով մը մահացնեն զինքը, ձեռքերը կապ կապակեցնեն յաթաղանին տակ, ոչխարի պես մորթելով» (Թեոդիկ, «Հայ եկեղեցականության Գողգոթան», անտիպ, տե՛ս Ա. Ալպոյաճյան, նույն տեղում, էջ 958)։

Օրմանյան սրբազան իր նահատակ աշակերտին բնութագրում է հետևյալ բառերով. «Խոսրովի նկարագիրը՝ հանդարտ և խոհական վարչականություն է եղած» («Հոհք և խոսք», էջ 443)։

Կեսարիայի թեմից նահատակվող հոգևորականներն էին հետևյալները.

Տ. Աշոտ Եպիսկոպոս Երկաթյան (1854—1915), նշանավոր մանկավարժ և բազմավաստակ դաստիարակ։

Տ. Արիստակես Եպիսկոպոս Թեմուրյան (1875—1915), ուսուցիչ, մանկավարժ։

Տ. Ղևոնդ Եպիսկոպոս Կիմիշյան (1859—1915), ուսուցիչ, մտավորական։ Կախված։ (Ա. Ալպոյաճյան, նույն տեղում, էջ 1211)։

Տ. Հովհաննես վարդապետ, Թոմարզայի վանքի վանահայր։

2. Սմբատ եպիսկոպոս Սաատեթյան (1871—1915)

Արմաշի դպրեվանքի առաջին շրջանի սաներից, աշակերտ Օրմանյանի։ Ավազանի անունով Գրիգոր, բնիկ ադաբազարցի։

1895 թվականին կուսակրոն քահանա է ձեռնադրվում և 1897 թվականին ստանում է ծայրագույն վարդապետի աստիճան։ Սմբատի ավարտաճառի թեման եղել է «Ներսես Համբրոնացու կյանքը և մատենագրական վաստակը»։

Սաատեթյանը նույնպես դպրեվանքի անդրանիկ վեղարավորներից մեկն էր, առաջնորդական պաշտոնով գավառ մեկնած 1897 թվականին, նախ Նիկոպոլիս, ապա Շաբին-Գարահիսար և հուսկ ուրեմն Կարինի 1908—1915 թվականներին, հաջորդելով Զավեն եպիսկոպոս Տեր Եղիայանին (1898—1907)։

Օրմանյան ևս իր առաջին առաջնորդական պաշտոնավարությունը կատարում է Կարինի թեմում, 1880—1887 թվականներին։

Սմբատ եպիսկոպոս Սաատեթյան

«Կարևոր ազգային կյանքը՝ իր եկեղեցական, կրթական, տնտեսական, շինարարական, վանքերու մատակարարման բաժիններով, հասցուցած էին թվապես նախանձելի վիճակի մը (1908—1914 թվականներուն), անոր տալով պետական մեքենայի մը պատկերը և տարողությունը։ Վերելքի այս կետին էր, որ վրա կհասներ առաջին համաշխարհային պատերազմը և անոր հետ 1915 թվի հայկական սարսափները, որուն գլխավոր զոհերը պիտի դառնային Կարինը և իր հայությունը, ենթարկվելով անասանելի չարչարաքներու և զանգվածային կոտորածներու։

Իր ժողովուրդի բախտին պիտի ենթարկվեր նաև իր արժանավոր հովիվն՝ Սմբատ եպիսկոպոս՝ իր քահանայական դասին հետ նահատակվելով Երզնկայի մոտերը («Հուշամատյան Բարձր Հայքի», տե՛ս Ղազար Ջարըգ, «Կարինապատում», Բեյրութ, 1957, էջ 160)։

Սաատեթյան սրբազանի հետ միասին նահատակված քահանաներն էին.

Տ. Ներսես ավագ Եպիսկոպոս Վահանյան, առաջնորդական փոխանորդ, Օրմանյանի ձեռնասուն, ձեռնադրված 1892 թվականին։

Տ. Մակար Եպիսկոպոս Պեխոզլյան, Օրմանյանի ձեռնասուն և օծակից Տ. Ներսեսի։

Տ. Հմայակ Եպիսկոպոս Մուրադխանյան, Տ. Ջարեհ Եպիսկոպոս Շյուշեյան, Տ. Ջարմայր Եպիսկոպոս Գևորգյան, Տ. Հուսիկ Եպիսկոպոս Գավագյան (նույն տեղում, էջ 130)։

«Մեքսիկոյի նկարագիրն է քաղցր և համեղ գործունեություն, պարտքեն ու պահանջեն ոչինչ թերի չթողուվ» («Խոհք և խոսք», էջ 444)։

3. Մկրտիչ վարդապետ Ջուլատյան (18...—1915)

Ավազանի անունով Հովհան, բնիկ դատվանցի, արմաշական, քահանայից լսարանից, Օրմանյանի աշակերտ։

1898 թվականին Կոստանդնուպոլսում, Սկյուդարի Ս. Կարապետ եկեղեցում, քահանա է ձեռնադրվում Օրմանյանից՝ Տրապիզոնի վիճակի վրա, «դպրեվանքցվոց քահանայության դիմելը քաջալերելու դիտմամբ» («Խոհք և խոսք», էջ 448)։

Ջուլատյան նախ քահանայագործում է Սեբաստիայում, ուր դժբախտությունն է ունենում արկածով կորցնելու երեցկնոջն ու զավկին։ Այնուհետև վեղար է ստանում և Օրմանյանի հրահանգով հովվում է Եփովպիայի հայ գաղութը։ Ապա նշանակվում է Բայազետի թեմի առաջնորդական փոխանորդի պաշտոնում։

Մկրտիչ վարդապետ Ջուլատյան

Ջավեն պատրիարքի օրով կոչվում է Տիգրանակերտի վիճակի տեղապահության, ուր պաշտոնավարում է մինչև իր նահատակությունը՝ 1915 թվականի մայիս ամիսը։

«Մկրտիչ վարդապետի շարշարանքը սոսկալի էր, գլուխ-գործոց մը թուրք ճիվաղության։ Այս կենդանի մարտիրոսը ենթարկվեցավ անլուր խայտառակ նախատինքներու, և այդ վիճակով Տիգրանակերտի փողոցները և շուկան ի ցույց մուսլիմաններու՝ թմբկահար շեյխերու և դերվիշներու առաջնորդությամբ պտտցվելե վերջ, կվերադարձնեն մզկիթին բակը կառավարության շրջանակին մեջ, և հոն կառավարական պաշտոնյաներու, իսլամ խուռն ամբոխին և շեյխերու ու թմբկահար դերվիշներու ներկայությամբ՝ վրան քարյուղ կթափեն և կենդանվույն կայրեն...» (Թովմաս Գ. Մկրտիչյան, «Տիգրանակերտի նահանգին ջարդերը», Կահիրե, 1919, էջ 55—56)։

Մկրտիչ վարդապետ Ջուլատյանի հետ նահատակվում են 9 քահանաներ և Առաքելոց վանքի վանահայր Վահան վարդապետը։

4. Տ. Սահակ ծայրագույն վարդապետ Օդաբաշյան (1875—1915)

Արմաշի դպրեվանքի չորրորդ շրջանի (1896—1901) 10 վարդապետներից և Դուրյանի առաջին ձեռնասուններից մեկն է։ Այս խմբի մեջ էին Մեսրոպ Նարոյան (ապագա պատրիարք), Երվանդ արքեպիսկոպոս Փեհտահճյան, նահատակ Արտավազդ վարդապետ, Կորյուն վարդապետ, Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյան, Գարեգին Խաչատրյան (Տրապիզոնի, ապագա պատրիարք), Գրիգորիս եպիսկոպոս Պալաքյան և Եղիշե վարդապետ Խաչերյան։

Տասնյակի այս ձեռնադրությունը, «Արմաշի համար աննախընթաց ... ընծայալներուն թիվին տեսակետովը, ոգևորիչ էր անոր համար ևս, որ ձեռնադրվածները ամենքն ալ իրենց կոչումին գիտակցությամբը զորացած խոստումնալից երիտասարդներ էին և կարևոր նպաստ մը կբերեին Հայ եկեղեցւոյ ծառայության նվիրական գործին» (Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակեան, «Եղիշե պատրիարք Դուրյան», Երուսաղեմ, 1934, էջ 190)։

Օդաբաշյանը ծնվել է 1875 թվականին Սեբաստիայում։ Ավազանի անունն է Քերովբե։ Վարդապետ է ձեռնադրվել 1901 թվականին։

Առաջնորդական պաշտոններ է վարել Սեբաստիայում, Սամսոնում, Բրուսայում և Երզնկայում։

Օդաբաշյանն ամբաստանվել է որպես «մեծ յեղափոխական Բրուսայի վալիի կողմից և «շատ գեշ ներկայացված ներքին գործոց նախարարության առջև» (Կ. Գաբրիկ-

Սահակ ծայրագույն վարդապետ Օդաբաշեան

յան, «Ծղեռնապատում», Բոստոն, 1924, էջ 46)։

Ինքնամատույց հանձնառու եղավ երթալ Բրուսային Երզնկա (որն առանց առաջնորդի էր մնացել), պատերազմի դժվարին ժամանակամիջոցին, այլ տեղը չհասավ և Շաբին-Գարահիսարի կողմերը սպանվեցավ» («Խոհք և խոսք», էջ 449), 1914 թվականի դեկտեմբերի 19-ին։

«Գարահիսարի Աղվանիս հայ գյուղին մոտ, Ջորան-Թեքքեսի ըսված տեղը չեթաները (Սեբաստիայի հայտնի ոճրագործ Մուամմեր վալիի կարգադրությամբ) դարանակալ կսպասեն. կառքը (վարդապետի) կհասնի հոդ, գնդակները կսուրան. Տ. Սահակ վարդապետը և կառապանը Առաքել՝ կիյնան անկենդան, գնդակներու տարափին տակ։ Սեբաստիայի պատվական մեկ զավակը, եկեղեցական այնքան կարևոր դեմք մը, նույնիսկ պարտականության ճանապարհին վրա, քաղաքական այսքան բացարձակ եղեռնի մը, Թուրք դավաճանության զոհը կըլլա։ Սեբաստահայը խոր սուգի ու սարսափի կմատնվի։ Այս կըլլա ընդհանուր զորաշարժեն ետք, սկիզբը և ազգանշանը հայաջինջ թուրք բաղաքականության» («Ծղեռնապատում», էջ 48)։

Սահակ ծայրագույն վարդապետ Օդաբաշեանը «գավառական պաշտոններու համար արթուն և անձնդիր պաշտոնյա մըն էր» («Խոհք և խոսք», էջ 449)։

5. Արտավազդ ծայրագույն վարդապետ Գալենդերյան (1876—1915)

Արմաշի չորրորդ շրջանի 10 վարդապետներից մին, օծակից նահատակ Սահակ ծայրագույն վարդապետ Օդաբաշյանի։

Ծնվել է 1876 թվականին Բրուսայի Ենիչե գյուղում։ Ավազանի անունն Եփրեմ։ Ձեռնադրվել է 1901 թվականին։

Շնորհալի, բանաստեղծական տաղանդով օժտված, Քրիստուն հոգի և պայծառ իմացականություն։

Առաջնորդական պաշտոններ վարեց Թոգատ և ապա ընտրվեց առաջնորդ Եդեսիայի, ուր ծավալեց վարչական, կրթական, քարոզչական բեղուն գործունեություն։

«Տարագրության ժամանակ եդեսացվոց ընդդիմության մանսակից սեպվեցավ և քաղաքին ընկճվելուն վրա, ինքն ալ դատվեցավ և սպանվեցավ։

Արտավազդ վարչական խոհականության հետ, հատուկ հաջողականություն և գործու-



Արտավազդ ծայրագույն վարդապետ Գալենդերյան

նեութիւն ուներ երգեցողութեան և երաժշտութեան մեջ» («Խոհք և խոսք», էջ 450)։

Զգայուն, գեղապաշտ հոգի և որպես քընքուշ բանաստեղծ, Արտավազդ վարդապետի գրչին են պատկանում մի շարք քերթվածներ, որոնցից է «Վիրավոր տատրակը» (տե՛ս «Արմաշի դպրեվանքը», էջ 217), գեղեցիկ՝ իր մտահղացման և արտահայտչական ձևերի մեջ։

Ինքն էլ «անմեղուկ մի տատրակ», ընկավ Թշնամու սրի առաջ, «եղերերգելով ցավն ու կսկիծն իր խորունկ»։

6. Պարգև ծայրագույն վարդապետ Դանիելյան (1888—1915)

Արմաշի դպրեվանքի վեցերորդ շրջանի (1899—1905) չորս վարդապետներից՝ Պարգև, Շավարշ, Պսակ և Շահե, որոնց Դուրյան սրբազանը ձեռնադրեց 1905 թվականին Արմաշում, Զմյուռնիայից գալով։

Ավազանի անունով Հայկ, բնիկ կոստանդնուպոլսեցի (Խասգյուղ)։

1896 թվականի Կոստանդնուպոլսի հայկական կոտորածների ժամանակ որբանում է և

Պարգև ծայրագույն վարդապետ Դանիելյան

գերմանացիների կողմից տարվում է Գերմանիա սովորելու։ «Բայց կրոնափոխության չհավանելով Պատրիարքարան կդիմե և զինքը ետ բերել կուտամ և դպրեվանք կհղեմ,— գրում է Օրմանյան («Խոհք և խոսք», էջ 452)։

1899—1905 թվականներին Հայկը սովորում է դպրեվանքում և 1905 թվականին ներկայացնելով իր վարդապետական ավարտաճառը՝ «Վարդապետք Հայաստանյայց Եկեղեցվո», վարդապետ է ձեռնադրվում։

Օրմանյանի պատրիարքության օրով և նրա պաշտպանության ներքև Պարգև վարդապետը մեկնում է գավառ, նախ Նիկոմիդիա և 1914 թվականին՝ Բրուսա, ուր, իր եկեղեցական գործունեության համար, ձերբակալվում է եղեռնից առաջ, բանտարկվում, դատվում և դատապարտվում է։ Նահատակվում է Դեր Զորի բանտում։ «Պարգևին չի պակսիր ոչ աշխատասիրությունը և ոչ հաջողականությունը» («Խոհք և խոսք», էջ 452)։

7. Պսակ ծայրագույն վարդապետ Տեր-Խորենյան (1882—1915)

1905 թվականին Դուրյանի ձեռնադրած քառյակի Բենիամինը։

Ավազանի անունով Անուշավան, գուրգրենցի։

Օրմանյան պատրիարքի ձեռքի տակ, Կոստանդնուպոլսում մի որոշ ժամանակ քարոզչական պաշտոններ կատարելուց հետո, ընտրվում է առաջնորդ Քղիի (1907—1912) և ապա Խարբերդի, ուր ծավալում է բեղուն առաջնորդական, քարոզչական գործունեություն։ Միաժամանակ զբաղվում է գրական, բանասիրական աշխատանքներով։

Բոլոր արմաշականները, Օրմանյանի և Դուրյանի հովանու տակ, գրական իրենց անդրանիկ փորձերը կատարել էին «Մասիս» կրոնական շաբաթաթերթում (1896) և Կոստանդնուպոլսի այլ պարբերականներում, ուր տպվում էին նաև նրանց հոդվածները։ Պսակ վարդապետի ավարտաճառն էր «Ս. Գրքի կանոնը Հայաստանյայց Եկեղեցվո մեջ»։

Պսակ վարդապետ Քղիի իր առաջնորդության տարիներին զբաղվում է հատկապես Քղիի գավառաբարբառի ուսումնասիրությամբ։ Ահա թե ի՛նչ է գրում նա այս մասին,

«Խորձյան գավառ» անուն հինգ հայորներ բաղկացյալ ընդարձակ ձեռագիր աշխատության մը մեջ, զոր գրած եմ Քղի պաշտոնավարության (907—912) շրջանին, ուսումնասիրած եմ գավառի դպրեվանքներուն պատմությունը, որ հետաքրքրական երևույթ մը կպատկերացնե։ Եվ կկարծեմ թե, մեր սիրելի դպրեվանքին քսաննհինգամյակին առթիվ ամենեն հարմար, և ավուր պատշաճի

Պսակ ծայրագույն վարդապետ Տեր-Խորենյան

նյութը կրնա կազմել ներկա աշխատութիւնը, քանի որ դպրեվանքներու «ծագումները» կշղշափե ան։ Այս ուսումնասիրութիւնը ըրած ենք ձեռագիրներե քաղվածներով, անձնական պրպտումներով և վավերական փաստաթղթերու վրայեն։ Ուսումնասիրութեանս մեջ՝ համոզված ենք՝ թե Խորճենի վանքերու միաբանները համառ աշխատողներ եղած են։ Վանական մոնոզոններ բնավ պարապ չեն մնացած, և եվրոպական վանքերու միաբաններու նման նվիրված են աշխատութեան, ոմանք՝ գրչագրութեան, ոմանք՝ կոկումի, տողաշարողի, կազմողի, գծագրողի, ներկողի, ծաղկողի մասնագիտութեամբ, և դիտած ենք, որ ձեռագիրներն առհասարակ լավագույն արտադրութիւններ են։ Մասնագիտական այս պարապումները՝ անհատնում եռանդ և հարատև ոգի մը կհատկանշեն մեր վանականներու քով, որոնք աշխատութեան ճաշակն ունեին և անգործութեան չարիքներու ենթակա չէին ըլլար. պատիվ իրենց, փառք իրենց» («Արմաշի դպրեվանքը», էջ 264)։

Պսակը նահատակվեց Խարբերդի ողջ ժողովրդի հետ։ «Տարագրութեանց ատեն նա ալ քաղաքեն հանվեցավ և ճանապարհին սպանվեցավ, ժիր երիտասարդութեան հպակին մեջ, երբ լավագույն ակնկալութիւններու իրավունք կընծայեր» («Խոհք և խոսք», էջ 453)։

8. Շավարշ ծայրագույն վարդապետ Սահակյան (1881—1915)

Արմաշական, Պսակ և Պարգև նահատակ վարդապետների օծակից, աշխարհական անունով Արշավիր, ծնվել է 1881 թվականին Շաբին-Գարահիսարում։

Վարդապետական ավարտաճառն էր «Հայ Եկեղեցիին հարաբերութիւնները մյուս եկեղեցիներուն հետ»։

Փոխ-առաջնորդական և առաջնորդական պաշտոններ վարեց Սեբաստիայում, Թորգոմ եպիսկոպոս Գուշակյանի ձեռքին տակ, ապա Եվդոկիայում, ուր և նահատակվեց։

«Խոհական և անխոնջ աշխատող մըն էր, որ լավ ապագա կխոստանար («Խոհք և խոսք», էջ 452)։

Շավարշ ծայրագույն վարդապետ Սահակյան

9. Սուրեն վարդապետ Գալեմյան (18...—1915)

Արմաշական, յոթերորդ շրջանի (1900—1906) երեք վարդապետներից՝ Սուրեն, Գեղամ, Վահրամ, որոնցից առաջին երկուսը՝ նահատակ։

Ավազանի անունով Պողոս, արաբկիրցի։ Սարկավագ է ձեռնադրվել Օրմանյանից, իսկ վարդապետ՝ Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյանից։

1915 թվականին Սուրենը Բաղեշի առաջնորդն էր, ուր զոհ գնաց եղեռնին՝ իր ժողովրդի հետ։

«Գործունյա և աշխույժ բնավորությամբ, ապագային համար լավ հույսեր կներշնչեր» («Խոհք և խոսք», էջ 453։

10. Գեղամ վարդապետ Թեվեքելյան (18...—1915)

Դասակից, օծակից և ճակատագրակից Սուրեն վարդապետի։

Ավազանի անունով Խաչիկ, շաբինգարահիսարդի, առաջնորդ Բաղեշի, ուր նահատակվեց։ «Բնավորությամբ հեզ և մեղմ, բայց գործով ժիր երիտասարդ էր Գեղամ և հուսալից ապագա կխոստանար» («Խոհք և խոսք», էջ 543)։

Գեղամ վարդապետ Թեվեքելյան

11. Համապատասխ վարդապետ Եղիսեյան (1864—1915)

Արմաշական։ Դպրեվանք է ընդունվում «հառաջացյալ տարիք»-ում։ Նախկին ուսուցիչ, ավազանի անունով՝ Հակոբ, յողդատցի։

1910 թվականին վեղար է ստանում Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյանից, Արմաշում։

Առաջնորդական պաշտոն է վարում Սամսոն-Ջանիկի վիճակում, ուր նահատակվում է։

Նահատակ արմաշականների մեջ պետք է հաշվել նաև նախկին Մաշտոց վարդապետ Փափազյանին, Մեհրուժան վարդապետ Աշխարունուն, որոնք նահատակվեցին որպես աշխարհական։

Արմաշականներից աքսորվեցին Զավեն պատրիարք, Երվանդ եպիսկոպոս Փերտահճյան, Գարեգին Տրապիզոնցին, Գրիգորիս վարդապետ Պալաքյանը, Հմայակ վարդապետ Բաղդասարյանը և Մամբրե վարդապետ Սիրունյանը։

12. Ներսես եպիսկոպոս Դանիելյան (1868—1914)

Կիլիկյան Աթոռի միաբան։ Ծնվել է 1868 թվականին Յարփուզում (Զեյթուն)։ Ավազանի անունով Գևորգ։ Աշակերտել է Սսի մայրավանքին և Սամաթիայի Սահակյան վարժարանին։

Որոշ ժամանակ Ադանայում ուսուցչությամբ զբաղվելուց հետո, 1890 թվականին վարդապետ է ձեռնադրվում Վեհապետյան Մկրտիչ եպիսկոպոսից։

1890—1895 թվականներին առաջնորդական փոխանորդ Ալեքսանդրետի (Անտիոք)։

1896 թվականին ամբաստանվում է որպես Զեյթունի ապստամբության ղեկավարներից մին և բանտարկվում է Հալեպում ու ապա աքսորվում Դամասկոս։

Օրմանյան պատրիարքի երաշխավորությամբ բերվում է Կոստանդնուպոլիս, ուր մնում է 10 տարի և զբաղվում է քարոզչությամբ՝ միշտ հսկողության տակ։

1907 թվականին, Սահակ Բ Խապայան կաթողիկոսի երաշխավորությամբ, վերադառնում է Սիս։ Ադանայի կոտորածից հետո (1909) բանտարկվում է՝ Հաջընի ինքնապաշտպանության պարագլուխներից մեկը լինելու մեղադրանքով։

1910 թվականին Ադանայում է, մինչև 1914 թվականը, երբ ընտրվում է Յողդատի առաջնորդական փոխանորդ։ 1911 թվականին եպիսկոպոս է ձեռնադրվում։

Դանիելյան սրբազան Կոստանդնուպոլիս գտնված միջոցին հրատարակում է երկու քա-

րոզագրքեր՝ «Կյանքն առանց հավատքի», ժողովրդական քարոզներ, Ա, Վիեննա, 1903 թ., և «Կաթիլ մը ջուր այրած սրտերու», Կոստանդնուպոլիս, 1912 թ.։

Նահատակ հոգևորականի գրական ծածկանունն էր «Սսական վարդապետ»։

«Կյանքիդ բոլոր շրջաններուն մեջ չարշարանքը միայն ճանչցար, միշտ կալանակապ և արգելափակ» («Հուշարձան», էջ 64)։

13. Հակոբ-Աշոտ եպիսկոպոս Փափազյան (1847—1914)

Կոստանդնուպոլսեցի։ Մնվել է 1847 թվականին։ Վարել է մի շարք քարոզչական և առաջնորդական պաշտոններ Կոստանդնուպոլսում և գավառներում։ «Տառապանքի տակ վախճանած է Իզմիրի զինվորական բանտը, Կիլիկիո աղետի մասին մատուցած իր տեղեկագրին մեկ պատճենին իր թուղթերուն մեջեն գտնված ըլլալուն համար» («Հուշարձան», էջ 81)։

14. Խորեն եպիսկոպոս Դիմաքսյան (1864—1914)

Մնվել է 1864 թվականին Կյուրինում։ Կիլիկյան Աթոռի միաբան։ Վարդապետ է ձեռնադրվել 1892 թվականին։ Եղել է առաջնորդ Կյուրինի։ Նահատակվել է բանտում։

15. Եսնիկ եպիսկոպոս Գալբաքճյան (1864—1915)

Մնվել է Կոստանդնուպոլսում 1860 թվականին։ Ուսանող Կալաթա Սերայի լիսեին և բժշկական «Միլքիե» վարժարանին։ Արմաշական վարդապետ՝ 1886 թվականին, եպիսկոպոս 1912-ին։ Մինչև 1915 թվականը առաջնորդ Բալուի, ուր նահատակվում է։

16. Գևորգ ծայրագույն վարդապետ Թուրյան (Պչաքճյան) (1872—1915)

Մնվել է 1872 թվականին Ռոտոսթոյում։ Սաղմոսական և այնուհետև ուսուցիչ Զորլուի ազգային վարժարանում։ 1897 թվականին ԱՄՆ-ում հետևում է աստվածաբանական դասընթացներին։ 1911 թվականին վարդապետ է ձեռնադրվում և Արմաշի դպրեվանքում դասավանդում է աստվածաբանություն և փիլիսոփայություն։ 1912 թվականին ընտրվում է առաջնորդական տեղապահ Տրապիզոնի։

Տարագրության ճանապարհից Կոստանդնուպոլիս հեռագրում է. «Կարին պատերազմական ատյան կոտանին զիս», և այնուհետև ոչ մի լուր նրանից (նույն տեղում, էջ 83)։

17. Վարդան ծայրագույն վարդապետ Հակոբյան (1846—1914)

Սասունցի, Ահարոն գյուղից, միաբան Մուշի Ս. Կարապետ վանքի։

1880 թվականին վարդապետ է ձեռնադրվում և ստանձնում է Կենճի նորակազմ վիճակի առաջնորդական տեղապահի պաշտոնը, ուր ծավալում է կրթական գովելի գործունեություն, ինչպես նաև Սլիվան, Ցարխենի գյուղերում։

1893—1894 թվականներին, Սասունի կոտորածների առթիվ, թուրքական խժդժությունների մասին ֆրանսերեն լեզվով տեղեկագիր է ներկայացնում ռուս և անգլիացի հյուպատոսներից կազմված քննիչ հանձնաժողովին։

1893—1899 թվականներին կառավարում է Մուշի թեմը և ծավալում է շինարարական մեծ գործունեություն, և այնուհետև, մինչև իր նահատակության թվականը, վարում է Մուշի Ս. Կարապետ վանքի վանահայրությունը։

Մուշի հայության տեղահանության օրերին, նրան ևս «շատ մը երևելիներու հետ բոկոտն դուրս կհանեն Մուշեն և Ալի Ջռնան գյուղի մեջ կայրեն նավթով» (նույն տեղում, էջ 84)։

18. Անանիա ծայրագույն վարդապետ Հապարապետյան (1861—1915)

Մնվել է 1861 թվականին Սեբաստիայում (Դերենդե)։ Սաղմոսական։ Վարդապետ է ձեռնադրվում Հարություն պատրիարք Վեհապետյանից 1892 թվականին և ծառայում է սուրբ տեղյաց մեջ։

Եղեռնի նախօրյակին ընտրվում է առաջնորդական տեղապահ Եդեսիայի և ապա առաջնորդ, մինչև 1907 թվականը։

Եղեռնը նրան գտնում է Բաբերդի առաջնորդական Աթոռի վրա և տանում։

Նահատակ հոգևորականներ են նաև հետևյալները.

19. Մելքիսեդեկ վարդապետ Հովիվյան, առաջնորդ Երզնկայի և Կեմախի։

20. Գևորգ վարդապետ Նալբանդյան (1857—1915), միաբան Աղթամարի, առաջնորդական տեղապահ Սղերդի։

21. Համազասպ վարդապետ Վարդանյան (1868—1915), միաբան Կտուց անապատի, առաջնորդ Զմշկածագի սանջաքի։

22. Կորյուն վարդապետ Սրապյան (1847—1915), միաբան Գլակա վանքի, տեղապահ Սղերդի և ապա Բասենի։

23. Կարապետ վարդապետ Հակոբյան, սաղմոսական։

24. Երեմիա վարդապետ Լիփոյան *(1875—1915), սաղմոսական, տեսուչ Բեյրութի։*
25. Սահակ վարդապետ Սարգիսյան, *սաղմոսական, տեսուչ Բեյրութի։*
26. Հովսեփ վարդապետ Սողոմոնյան *(1860—1915)։*
27. Ներսես վարդապետ Մկրտչյան *(1864—1915), միաբան Եվդոկիայի Ս. Հովակիմ-Աննա վանքի, առաջնորդական փոխանորդ Եվդոկիայի։*
28. Աբգար վարդապետ Յոթեղբայրյան, *առաջնորդական փոխանորդ։*
29. Բարսեղ ծայրագույն վարդապետ Մանկրյան *(1850—1915), սսական։*
30. Սահակ վարդապետ Զոլաֆյան, *սսական։*
31. Ներսես ծայրագույն վարդապետ Բարթողիմեոսյան *(1895—1915), հին արմաշական։*
32. Հովհաննես վարդապետ Մավյան *(1858—1915), հին արմաշական։*
33. Օհան վարդապետ, Կյումիշխանեի *վանքի վանահայր։*

33—37. *Մուշի Ս. Կարապետ վանքի միաբաններ* եղիշե վարդապետ Պալունի, Կոմիտաս վարդապետ Առծրունի, եղիշե վարդապետ Կարապետյան, Ստեփանոս վարդապետ Բաղդասարյան, Կարապետ վարդապետ Լարիյան։

Նահատակ հայ հոգևարականների մեջ մեծ թիվ էր կազմում նահատակ հայ քահանայությունը։ Արևմտյան Հայաստանի ամեն գյուղ ուներ իր ժամն ու քահանան։ Ինչպես նահատակ վարդապետների, այնպես էլ նահատակ քահանաների լրիվ ու ամբողջական ցուցակը կազմել, նրանց բոլորի անուններն ու կենսագրությունները ունենալ անհնար է, նույնիսկ եղեռնից 50 տարի հետո։ Ձեռքի տակ ենք ունեցել եղեռնին վերաբերյալ բոլոր հրատարակությունները, հուշերն ու նկարագրությունները և քաղել ենք հետևյալ մի շարք անունները միայն, մինչ նահատակ քահանաների թիվը հասնում է շուրջ 4 000-ի։

Տ. Հուսիկ Եպիսկոպոս Քաջունի *(1851—1915), արաբկիրցի, ազգային երեսփոխան։* Տ. Վարդան Եպիսկոպոս Ասլանյան *(1863—1915), բինկյանցի, ծանոթ մանկավարժ, հրապարակագիր, գործակից Թլկատինցուն Խարբերդում և ճակատագրակից բանտում։* Տ. Եղիա Եպիսկոպոս Ղարիբշաճյան, *Սղերդի առաջնորդական տեղապահ։* Տ. Մեսրոպ, Տ. Աշոտ, Տ. Առսեն Եպիսկոպոսներ։ Տ. Տաճատ Եպիսկոպոս Ռեխյան *(Քղի)։* Տ. Սուրեն Եպիսկոպոս Մելիքյան *(Քղի)։ Ալֆոնի 5 քահանա հայրեր, անուններն անծանոթ։* Տ. Մարտիրոս Եպիսկոպոս, Տ. Արիստակես Եպիսկոպոս Հարությունյան, Տ. Գարեգին Եպիսկոպոս Վեմյան, Տ. Արիստակես Եպիսկոպոս Օձնեցի, *կարնեցիներ, նահատակված առաջնորդ Սմբատ Եպիսկոպոս Սատեփյանի հետ։* Տ. Գրիգոր Եպիսկոպոս *(Ղալթախչի).* Տ. Ներսես Եպիսկոպոս *(Կաղզվան).* Տ. Իրավափառ, Տ. Եփրեմ և Տ. Անդրեաս Եպիսկոպոսներ *(Սեբաստիա)։* Տ. Մատթեոս Եպիսկոպոս Կոկոյան, Տ. Հովհաննես Եպիսկոպոս *(Ակն),* Տ. Սուքիաս և Տ. Աբրահամ։ Տ. Մամբրե Եպիսկոպոս Թորիկյան *(Մարզվան).* Տ. Մեսրոպ, Տ. Շիղա, Տ. Հուսիկ *(Տրապիզոն)։* Տ. Հարություն Եպիսկոպոս Տեր-Մելիքոնյան *(Այնթապ)։* Տ. Պետրոս Եպիսկոպոս Գասյան *(Ակն)։* Տ. Խորեն Եպիսկոպոս *(Բալու)։* Տ. Գասպար Եպիսկոպոս Ավետիսյան. Տ. Արտաշես Եպիսկոպոս Ավետիսյան *(Ակն)։* Տ. Ներսես Տոքյաշյան *(Իզմիր)։* Տ. Հովհաննես Եպիսկոպոս Քյոմյուրճյան, Տ. Կարապետ Եպիսկոպոս Մխալյան *և որդին՝* Տ. Բարթող Եպիսկոպոս Մխալյան *(Պարտիզակ)։* Տ. Մատթիա Եպիսկոպոս Կյուլեյուրյան, Տ. Փիլիպոս Եպիսկոպոս Աբրահամյան, Տ. Ներսես Եպիսկոպոս Պալյան, Տ. Բոնաբաս Եպիսկոպոս Բարունյան *և բազմաթիվ ուրիշներ։*

Հայ կաթողիկե նահատակներ

Ապրիլյան եղեռնի օրերին, Բշնամին հնձեց հայ ժողովրդի զավակներին, առանց հարանվանական տարբերության։ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու եպիսկոպոսների, վարդապետների, քահանաների և ժողովրդի արյունը եղբայրորեն խառնվեց հայ կաթողիկե նահատակ հոգևորականության և հավատացյալների արյան հետ։

«Մրրկաւ բաժանուածք» եղբայրները միացան արյան և նահատակության ճանապարհի վրա, «վասն Յիսուսի և վասն հայրենեաց» մղված ճակատամարտում։

Ըստ հայ կաթոլիկ աղբյուրների, Հայ Կաթողիկե եկեղեցու և հասարակության կորուստներն են եղել հետևյալները.

Եպիսկոպոս՝ 8, վարդապետ և քահանա՝ 106, կույսեր՝ 55, և ավելի քան 80 000 հավատացյալներ («Բազմավեպ», 1919, № 10, էջ 284, «Հանդես ամսօրյա», 1917—1918, էջ 134, 1920, էջ 38—51)։

Եպիսկոպոսներ.

1. Անդրեաս Եպիսկոպոս Զելեպյան (1848—1915), մերդինցի, նահատակված Դիարբեքիրում։ «Գետինը փորելով զինքը մինչև վիզը կթաղեն և հետո տապարով գլուխը կտոր-կտոր կընեն» («Հանդես ամսօրյա», 1920, էջ 40)։

2. Ստեփանոս Եպիսկոպոս Իսրայելյան (1866—1915), մշեցի։

3. Հակոբ Եպիսկոպոս Թոփալյան (1855—1915), պարտիզակցի։ «Ողջ-ողջ կայրեն» (նույն տեղում, էջ 41)։

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿ.

ՀԱԿՈԲ ԱՇՈՏ ԵՊԻՍԿ. ՓԱՓԱԶՅԱՆ

ԳԵՎՈՐԳ Ծ. ՎՐԴ. ԹՈՒՐՅԱՆ

ՔՈՒՅՐ ԿԱՄԵԼԱ

Հ. ՍՏԵՓԱՆ ՎՐԴ. ՍԱՐՅԱՆ

Հ. ՊՈՂՈՍ ՎՐԴ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԻԵԼՅԱՆ

ՊՈՍՅԱՆ

1965

ԵՂՆԻԿ ԵՊԻՍԿ. ԳԱԼԲԱՋՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՔՀ. ԱՍԼԱՆՅԱՆ



ՀՈՒՍԻԿ ՔՀ. ՔԱՋՈՒՆԻ

Հ. ԹՈՎՄԱՍ ՎՐԴ. ՕԳԱԲԱՇՅԱՆ

4. Լևոն Եպիսկոպոս Քեչեճյան *(1860—1915), մարաշցի։*

5. Կարապետ Եպիսկոպոս Քչուրյան *(1847—1915), խոտորջուրցի։*

6. Հովսեփ Եպիսկոպոս Մելիքսեթյան։

7. Միքայել Եպիսկոպոս Խաչատրյան *(1846—1915), մալաթիացի։ «Կուրծքին վրա կրակ կվառեն և սուրճ կեփեն» (նույն տեղում, էջ 39)։*

8. Իգնատիոս Եպիսկոպոս Մալոյան *(1878—1915) մերդինցի։*

Նահատակ հայ կաթոլիկ վարդապետների մեջ ևս կային մտքի և սրտի տեր պատրաստված հոգևորականներ, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյաններ, այսպես.

1. Հ. Ստեփան վարդապետ Սարյան *(1865—1915), գաղատիացի, մանկավարժ, աստվածաբան, խմբագիր «Բազմավեպ»-ի, հեղինակ «Աստվածաբանություն տեսական» (1894), «Մագնիսական քուն» (1901), «Էակներու ծագում» (1905) և այլ աշխատությունների։*

2. Հ. Կարապետ վարդապետ Տեր-Սահակյան *(1882—1915), մշեցի, բանաստեղծ, բանասեր և մանկավարժ, հեղինակ «Հայ կյանքը Բյուզանդիոնի» 2 հատոր աշխատության (1907), «Համիդի տապալումը» (1910) և մատենագրական ուսումնասիրությունների՝ Փավստոսի, Կորյունի և Փարպեցու մասին։ Օծակից և բախտակից Հ. Ս. Սարյանի։*

3. Հ. Թովմաս վարդապետ Օղաբաշյան *(1887—1915), տրապիզոնցի, մանկավարժ և աշխարհագրագետ։*

4. Հ. Պողոս վարդապետ Գասպարյան *(1878—1915), մերդինցի, աստվածաբան և մանկավարժ։*

5. Հ. Մատթեոս վարդապետ Հանյան *(1867—1915), խոտորջուրցի, բանասեր. զբաղվել է մանավանդ իր ծննդավայրի գավառաբարբառի, սովորույթների և զրույցների ու հեքիաթների ուսումնասիրությամբ։ Վիեննայի Մխիթարյան։ Հրատարակել է «Մատթեոսի Ավետարանը» (ոստանավոր, 1897), «Երգեր, առակներ, հանելուկներ Խոտորջրոյ» (1904), «Հին ավանդական հեքիաթներ Խոտորջրոյ» (1907), «Տաղարան հոգևոր» (1910)։ Ունի Խոտորջուրի գավառաբարբառի մասին ընդարձակ մի ուսումնասիրություն։*

Անարատ Հղության նահատակ քույրերից պետք է հիշել մեծավորուհի Քամելիա Փիլիպոսյանին, Իսկուհի, Ռամելա և Երանուհի քույրերին (Թոխատ), մեծավորուհի Վասիլուհուն, Մաքրուհի և Համասիլուհ քույրերին (Խարբերդ), Էմիլիա, Մագթաղինե, Քլեմանտին և Ժերմեն քույրերին (Մալաթիա և Խարբերդ)։

Հայ բողոքական նահատակներ

Ապրիլյան եղեռնին զոհ տվեց նաև Արևմտյան Հայաստանի հայ բողոքական համայնքը՝ իր համալսարանական պրոֆեսորներով, վերապատվելիներով և քարոզիչներով։

Սահատակ հայ բողոքական մտավորականության և հոգևորականության մեջ էին.

1. Պրոֆ. Կարապետ Սողիկյան *(1874—1915), խարբերդցի, լեզվագետ, քիմիաբան և դասախոս։ Կործակից Թլկատինցու և Ռուբեն Չարդարյանի։ «Գանակոծման հետևանքով մեռած Խարբերդի ամերիկյան հիվանդանոցում»։*

2. Պրոֆ. Մկրտիչ Որբերյան *(1870—1915), մալաթիացի, եղբորորդին բանաստեղծ Ռուբեն Որբերյանի. երկրաբան և աշխարհագրագետ։ «Մտագար վիճակի մեջ կնահատակվի Խարբերդի բանտին մեջ»։*

3. Պրոֆ. Հովհաննես Պուճիգանյան *(1873—1915), չնգուշցի, մանկավարժ և փիլիսոփա։*

4. Պրոֆ. Նիկողոս Թենեքեճյան *(1863—1915), խարբերդցի, մանկավարժ և ազգապետ Խարբերդի շրջանի հայ բողոքական համայնքի։*

5. Պրոֆ. Տոճապետ Կ. Լյուլեճյան *(1876—1915), խարբերդցի, կենսաբան, բուսաբան և կենդանաբան, նահատակված Կարինում, թարգմանել է Լոկգֆելլոյի «Իվանջելին»-ը։*

6. Պրոֆ. Առաքել Կ. Սիվասլյան *(1859—1915), կեսարացի, աստղագետ և մաթեմատիկոս, դասախոս Մարզվանի կոլեջում։*

7. Պրոֆ. Հովհաննես Հակոբյան *(1862—1915), մունճուսունցի, օրենսգետ և լեզվաբան, հեղինակ անգլերեն-հայերեն կարևոր բառարանի։*

8. Պրոֆ. Հովհաննես Առոզյան, *խարբերդցի, կենսաբան, դասախոս Սանասարյան վարժարանի և Մարզվանի կոլեջի։*

9. Պրոֆ. Ջեսի Մաթոսյան, *այնթապցի, 42 տարեկան, մանկավարժ և հոգեբան։*

10. Պրոֆ. Լուբֆի Պապիկյան, *այնթապցի, 32 տարեկան, մաթեմատիկոս և երկրաբան։*

11. Պրոֆ. Արշակ Ռումյան, *ուրֆացի, 30 տարեկան, լեզվաբան։*

Նահատակ պատվելիների մեջ հիշատակվում են. Կիրակոս Խաչատուրյան, Չաքարիա Եղիկյան, Պետրոս Պետրոսյան, Սամվել Մանուկյան, Հայրապետ Օտյան, Հովհաննես Էսկիճյան, Ա. Գևորգյան, Ա. Յարդըմյան, Միհրան Գազանճյան, Սողոմոն Ագշգյան *(Խաշվան, Ուրֆա)*, Կ. Սիճանյան, Արշակ Թյությունճյան, Գրիգոր Ստեփանյան, Միքար Մինճերյան, Գևորգ Դեյիրմենճյան, Գրիգոր Տեր-Պողոսյան, Հակոբ Նաճարյան, Խաչա-

տուր Թոփուզյան, Երվանդ Գապասագալյան, Սամվել Քեհեիկյան, Մատթեոս Հովիվյան և *շուրջ 30 բողոքական քարոզիչներ («Հուշարձան», էջ 75)։*

Եվ կատարվեց կատարվելիքը։

«Իսկ երանելի սուրբ հանանայիճ ոչ եթէ մարմնական համարէին զկռիւն, այլ հոգևոր առաքինութիւն և ոչ ինչ շտապեալ տագնապեցան, այլ մեծաւ համբերութեամբ տանէին զնգնութիւնս... զի ժամանակեալ վշտօճն զանժամանակեան երանութիւնսն ժառանգեսցեն» *(Ղազար)։*

Ամեհի փոթորիկը եկավ և անցավ Հայ եկեղեցու և հայ հոգևորականության վրայով։

«Աստուած, մտին ինթանոսք ի ժառանգութիւն ֆո, պղծեցին զտաճար ֆո, արկին զդիակունս ծառայից ֆոց գէշ թռչնոց երկնից... ետին զարիւն նոցա որպէս զջուր» *(Սաղմ. ՀՀ 1—3)։*

Չկան Արմաշը, Սիսը, Աղթամարը, Մուշի Ս. Կարապետը, ինչպես չկան մեր բյուրավոր այն վանքերն ու եկեղեցիները, որոնց կամարների տակ և խցերում «Հայ միտքը երբեմն լույս կքամեր, ու բոլոր այն գյուղերը, որոնց մեջ հայ ավանդությունները դեռ կպլպլային» (Հ. Ճ. Միրունի, «Էջմիածին», 1961 սեպտեմբեր, էջ 27)։

Չկան մեր սրբավայրերը, «որոնց կվազեր մեր ժողովուրդը հրաշք աղերսելու համար։ Բայց կա ինքը, հայ ժողովուրդը, միշտ լույսի ծարավ, միշտ իր ստեղծագործ ճիգին մեջ» (նույն տեղում, էջ 26)։

Չկան Արևմտյան Հայաստանում մեր հազարավոր վանքերն ու եկեղեցիները, բայց կա ու կենդանի է, հայրենի աշխարհի սրտին վրա, հավերժական Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ մեր հավատքի ամրոցը, որպես դարավոր ու պատմական անհաղթահարելի կենտրոնը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու, խանձարուրը՝ բոլոր դարերի Ղևոնդյանց ու Վարդանանց, կան ու պայծառ են մեր նվիրապետական բոլոր Աթոռները, մեր ազգային-եկեղեցական թեմերը իրենց նորակառույց եկեղեցիներով, հավատացյալներով, և որոնք, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ղեկավարությամբ, պայծառ ու կենդանի են պահում երեկի նահատակ մեր Հայ Եկեղեցին և պատրաստում են, նահատակ մեր հոգևորականների փոխարեն, մեր եկեղեցականների նոր սերունդը Հոգևոր Ճեմարանում, ժառանգավորաց վարժարաններում և դպրեվանքներում, Ղևոնդյանց ոգով, հավատով և հայրենասիրությամբ։

«Երանի՜ մեռելոցն որ ի Տէր ննջեցին, զի գործ իւրեանց չոհան զկնի նոցա» *(Յայտնութ. ԺԴ 13)։*

Փա՜ռք մեր նահատակ հոգևորականներին։

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»։

ՄԻՆԱՍ ՀՅՈՒՍՅԱՆ
(Բանասիրական գիտությունների
դոկտոր–պրոֆեսոր)

ՁՄՈՌԱՑՎՈՂ ԱՆՈՒՆՆԵՐ

(Գրիգոր Զոհրապի և Տիգրան Չյոկյուրյանի հիշատակին)

Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցի առթիվ, սրտի վշտակոծ հեկեկանքով, վերհիշում ենք մեր անթիվ, անհամար զոհերին, սպանված ու կենդանի թաղվածներին, առևանգված քույրերին, ձուլելու տարված մանուկներին, հիշում ենք մեր մշակույթի, մեր գրականու-

Գրիգոր Զոհրապ

թյան կարկառուն ներկայացուցիչներին, որոնք զոհերը դարձան փողկապավոր և անփողկապ վայրենիների բարբարոսության մոլուցքի, արնախում կրքերի նոպաների, խղճի գոլորշիացման փաստի։

Տարբեր սերունդի մարդիկ են Զոհրապն ու Չյոկյուրյանը, սակայն նրանց մեջ կան որոշ ընդհանրություններ։ Երկուսն էլ նուրբ արվեստագետներ են, մեծապես գնահատող արվեստի դերն ու նշանակությունը, երկուսն էլ ուխտավորներ նույն գաղափարի, հայ ժողովրդի ազատագրության սրբազան ուխտի, երկուսն էլ զոհերը եղան աննախընթաց եղեռնի, մեկը կյանքի ու գործունեության մեծ վաստակը ուսերին, մյուսը բոլորովին կանաչ տարիքում, երկուսն էլ տակավին ունակ շատ բան տալու մեր գրականությանը։

Գրիգոր Զահրապին և Տիգրան Չյոկյուրյանին, շատ հավանական է, որ միացնում է նաև վարպետի ու աշակերտի հանգամանքը։ Մեր կարծիքով, երիտասարդ արձակագիրը մեկը եղավ այն շատերից, որոնք, Մեսրոպ Զանաշյանի բառերով ասենք, «անոր [Զոհրապին] նայեցան որպես արուսյակի մը՝ որ հորիզոնին վրա մշտապայծառ իր փայլով՝ կհրապուրեր ու կգծեր կտրվելիք ճամբան...», և սովորեցին նրանից, սովորեցին ամենից առաջ հակիրճության, քիչ բառերով շատ բան ասելու, բառի վրա մեծ բեռ դնելու արվեստը, մի բան, որ մեր դարի արձակագրի հաջողության գլխավոր պայմաններից մեկն է։

***

Գրիգոր Զոհրապը մեր գրականության փառքը կազմող մեծություններից է, չգերազանցված իբրև նորավիպագիր, մեկը աշ-

խարհի խոշորագույն նորավիպագիրներից, որին, իբրև հմայիչ ու կատարյալ արվեստագետի, սիրել ու գնահատել են և՛ մեր խոշորագույն գրողներն ու քննադատները, և՛ մեր ժողովուրդը։

Իայց Զոհրապը գնահատվել ու սիրվել է ո՛չ միայն իբրև գրող. նա, վերածնունդի տիտաննե՛րի նման, ինչպես իրավացի նշված է, իր հանճարը դրսևորեց տարբեր բնագավառներում, իբրև ընդհանուր ճանաչում գտած մեծ հռետոր, որի ճառերն ու ելույթները ժամանակին գտնում էին լայն արձագանք նաև մեր իրականությունից դուրս, իբրև համաշխարհային հռչակի տիրացած իրավագետ և իրավաբան (փաստաբան), իբրև հասարակական-քաղաքական ազդեցիկ գործիչ, հրապարակախոս և իրավագիտության դասախոս, իբրև Ազգային երեսփոխանական ժողովի և օսմանյան խորհրդարանի անդամ, որով, ինչպես «Մշակ» թերթն է գրել, նա պատմության մեջ անմահության էջ բացեց իրեն համար։

Այս բազմաբնույթ գործունեությունը և ամեն մարզում դրսևորած անսպառ կարողությունը, Զոհրապին դարձրին «ազգային ժամանակակից փառքերեն մին» (Ե. Օտյան), դարձրին իբրև գրող՝ «առաջին վարպետը [արևմտահայ] իրապաշտ գրականության» (Ռ. Զարդարյան), «հայ նորավեպի իշխան» (Ա. Զոպանյան) և համաշխարհային գրականության այդ սեռի խոշորագույն վարպետներից մեկը (Ա. Զոպանյան, Ա. Տերտերյան), իբրև իրավաբան՝ «դատական արվեստի թագավոր», իբրև հռետոր՝ «քայլող միջնաբերդ», և իբրև հանրային-քաղաքական գործիչ՝ «հայոց պարագլուխ» (լիդեր), ինչպես բնորոշել է նրան Պոլիս հրատարակվող բուլղարական «Դևևնիկ» թերթը։

Այդ մեծ հայրենասերի բազմահատված գործունեությունը, ըստ էության, մաքառումների մի հոյակապ պատմություն է, պայմանավորված արևմտահայ ժողովրդի ընկերային և մանավանդ քաղաքական այն ողբերգական վիճակով, որ ստեղծվեց Բեռլինի վեհաժողովից հետո, երբ, ի պատասխան հայ ժողովրդի ազատագրության բաղձանքների, սուլթանական կառավարությունը, մանավանդ 1908 թվականի հեղաշրջման հետևանքով իշխանության եկած իթթիհադական ջուլիրը, որոշեցին բնաջնջել հայերին, ստեղծելով հայ ժողովրդի համար մի վիճակ, որ Զոհրապը համեմատում է «գլուխը դանակի տակ» գտնվող մարդու վիճակի հետ։

Ահա այս դրության մեջ գտնվող ժողովրդին օգնության փութալը դառնում է Զոհրապի գործունեության գլխավոր նպատակը թե՛ մամուլում, թե՛ դատական ատյաններում, թե՛ Ազգային ժողովում, թե՛ օսմանյան խորհրդարանում, ուր նա ծավալեց փայլուն գործունեություն, պաշտպանելով ո՛չ միայն հայերի ոտնահարված իրավունքները. մանավանդ 1909 թվականի Կիլիկիայի կոտորածի ժամանակ, այլև բոլոր հպատակ ազգերի իրավունքները, պաշտպանեց դարավոր հետամնացությունը թոթափելու, առաջադիմության ու քաղաքակրթության ուղին բռնելու անհրաժեշտության գաղափարը, գաղափար, որի իրագործման խանգարում էր քարացած մոլեռանդությունը, արյան ծարավի կիրքը, մեծապետական շովինիզմի անամոթ, շնական քաղաքականությունը։ Հեղափոխության անունով իշխանություն նվաճած իթթիհադականները զբաղված էին ոչ թե երկրի, ժողովրդի կարիքները բավարարելու հոգսերով, այլ հպատակ ժողովուրդներին երկգույն ջարդով ոչնչացնելու ծրագրի իրագործմամբ, որի հետևանքը եղավ նաև արևմտահայերի անհնարին կոտորածը և բռնագաղթը, վտարումը հայրենիքից, ուր նա ապրել էր հազարավոր տարիներ, և ուր աճեցրել էր իր հոգու անսպառ բերքերը։

Ի պատասխան Թուրքիայի զարգացման համար Զոհրապի գործադրած անկեղծ ջանքերի, իթթիհադականները քարով չախչախեցին նրա գլուխը, իբրև երախտագիտության թուրքական ձև, իբրև ապացույց այն բանի, որ վայրենությունն ու բարբարոսությունը թոթափելը այնքան էլ դյուրին գործ չէ։

Իբրև գրող, Զոհրապը նախ փորձեց իր ուժը բանաստեղծության մեջ, ապա գրեց արևմըտահայ իրապաշտական առաջին վեպը, սակայն շուտով համոզվեց, որ իր ստեղծագործական անհատականությանը համապատասխանում է փոքր տարազը, իրականության խտացված և ոչ ծավալուն արտացոլումը։

1880-ական թվականների կեսերին նա հարեց ձևավորվել սկսվող իրապաշտական գրական շարժմանը, որ գլխավորում էր Արփիար Արփիարյանը և շուտով դարձավ այդ շարժման տեսաբաններից մեկը և ամենախոշոր արվեստագետը։ Իր գեղագիտական հայացքներում դավանելով այն սկզբունքը, որ «գրականությունը ժողովրդյան կյանքեն պիտի քաղվի՝ ժողովրդյան կյանքին ծառայելու համար», որ գրականությունը պետք է դառնա իրականության «անխարդախ հայելի», որ նա պետք է ոչ միայն ժխտի, այլև հաստատի, նա կանգնեց ստեղծագործական ճիշտ ուղու վրա։

Գեղագիտական այս ելակետային սկզբունքները, որոնք ժամանակի ամենառաջավոր սկզբունքներն էին, մեծապես նպաստեցին նրա ստեղծագործական վերելքին, նպաստեցին այն բանին, որ Զոհրապը գրի

մեծ բովանդակություն խտացնող, գաղափարապես հագեցված իրապաշտական նորավեպեր, որոնցով նա դարձավ այդ սեռի սկզբնավորողը մեր գրականության մեջ և ունեցավ բազմաթիվ հետևորդներ։

Քանակով շատ չեն, ինչպես և ծավալով մեծ՝ Զոհրապի նորավեպերը, բայց դրանց մեջ, արվեստի ներգործուն ուժով, արտացոլվել է մի ամբողջ ժամանակահատվածի իրականության պատկերը, ընկերային վիճակը՝ դրամի իշխանության տակ, հասարակության շերտավորումը «իր պառակտումներով ու չսպիացող վերքերովը» (Զոհրապ), աշխատավորության դառն ճակատագիրը։

Իր նորավեպերը հեղինակն ամփոփել է երեք ժողովածուների մեջ՝ «Խղճմտանքի ձայներ», «Կյանքը ինչպես որ է» և «Լուռ ցավեր»։ Այս իմաստալից խորագրերով կարծեք նա արտահայտել է, հիմնական գծերով, իր նորավեպերի բովանդակությունը։ Իրոք, նրանց մեջ կյանքը պատկերված է ինչպես որ է, կյանքը իր արատներով ու խոցերով, իր տգեղություններով ու գեղեցկություններով, իր իրարամերժ հակասություններով ու լուռ, արտաքնապես հաճախ աննկատ ցավերով, որոնք պատկերել է զգայուն, մարդասեր հեղինակը իր խղճմտանքի ձայների մասնակցությամբ։ Այդպիսի նորավեպեր են «Փոստալ»-ը, «Թեֆարիկ»-ը, «Ճիտին պարոմ»-ը, «Այինկա»-ն, «Անդրշիրմի սեր»-ը, «Լուսաճոգին» և այլն, որոնք համաշխարհային գրականության այդ սեռի գեղեցկագույն էջերից են։

Զոհրապի գրական ժառանգության մեջ կարևոր տեղ ունեն նաև «Մանոթ դեմքեր» ընդհանուր խորագրի տակ զետեղված գրական դիմանկարները, որոնք, իբրև նոր սեռ մեր գրականության մեջ, շատ բարձր են գնահատվել, համարվել են «ոսկեշարք» («Շիրակ»), հեղինակին անվանել «Մանոթ դեմքեր»-ու հանճարեղ նկարիչ» («Մասիս»)։

Մեր գրականության մեջ այդ սեռը բավական լայն տարածում գտավ։ Այս կամ այն հաջողությամբ գրական դիմանկարներ կամ դիմաստվերներ գրեցին Սիպիլը, Օննիկ Չիֆթե-Սարաֆը, Արտաշես Հարությունյանը, Աբրամ Անտոնյանը, Թեոդիկը և շատ ուրիշներ։ Դժբախտաբար այդ սեռը մոռացության է տրված այսօր մեր գրականության մեջ։

Գրեթե նորավեպերի չափ, Զոհրապը գրել է տարբեր բնույթի ակնարկներ՝ ճամբորդական, հուշագրական, երգիծական, խոհական և հրապարակախոսական, որոնց մեջ նա անդրադառնում է ժամանակի իրականության բազմապիսի հուզող հարցերի, պայքարում է սուլթանական բռնապետության և աշխարհակալության դեմ, մերկացնում է դրամի տիրապետությունը, ճիզվիտական մտայնության տարածումը եվրոպական որոշ երկրներում և այդ վարակի տարածումը հայ իրականության մեջ, որը պատճառ է դառնում օտարամոլության ախտին, սեփական ժողովրդից հեռանալուն, ժողովրդի պառակտմանը։ Իր ակնարկների մեջ է, որ հեղինակը, հասնելով հանճարեղ ընդհանրացման, «մեղրամոմե» մակդիրով է բնորոշում հայությանը, նկատի ունենալով, անշուշտ, հատկապես գաղութահայությանը, այն իմաստով, որ ազգային գիտակցության պակասի կամ բացակայության պատճառով, գաղութահայությունը շուտ է ենթարկվում ամեն ազդեցության, որոնք հաճախ հանգեցնում են սեփական դեմքի կորուստին և առաջնորդում ճերմակ ջարդի ամենակուլ, 20-րդ դարի երկրորդ կեսի մեր ժողովրդի ամենամեծ թշնամու, երախը։

Զոհրապի ակնարկներից առավել արժեքավոր է «Էջեր ուղեւորի մը օրագրեն» ակնարկաշարը, որի մեջ, Եվրոպային լավ ծանոթ հեղինակը խոսում է Բելգիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի մասին, անդրադառնալով հասարակական, քաղաքական, մշակութային և գրական բնույթի բազմապիսի հարցերի։ Իր իրատես հայացքով, նա նկատում է առաջին աշխարհամարտի նախապատրաստումը, հատկապես գերմանական աշխարհակալության տենդոտ ջանքերը, խիստ դատապարտում է աշխարհակալության էությունը, «իրավունքը հզորագունին» հակամարդկային ըմբռնումը, և իր քաղաքական հստակատեսությամբ գուշակում է, որ իզուր են գերմանական աշխարհակալության՝ աշխարհը նվաճելու ջանքերը, որովհետև, ինչպես ինքն է ասում, «ազգերը գեր վարելու, աշխարհակալություն ընելու դարը իսպառ վերջացած է»։

Զոհրապը գրել է նաև չափածո և արձակ բանաստեղծություններ, հատկապես իր կյանքի վերջին շրջանում։ Զոհրապի չափածո քերթվածները առավելապես անձնական ապրումների ու հույզերի արձագանքներ են, իսկ արձակ քերթվածների մեջ, որոնք հայ արձակ բանաստեղծության մարգարիտներից են, հեղինակը անդրադառնում է հասարակական հուզող հարցերի, նկարագրում տառապող մարդու բազմապիսի վերքերը («Ապրիմ-մեռնիմ»), երբեմն տուրք տալով հուսալքման, խոսում է վշտի մշտականության և երջանկության խուսափման մասին («Էտըլվայս»), ցավով է պատկերում, դիմելով այլաբանության, իր սերնդի՝ հայ ժողովրդի ազատագրության արշալույսը տեսնելու հույսերի խորտակումը և բռնապետության հայհալած քաղաքականության և հետաշարժ-

ման ուժեղացումը ընդհանրապես («Թիֆլեռնիկներ»)։

Երկար տարիներ զբաղվել է Զոհրապը հրապարակախոսությամբ, կենդանի հետաքրքրություն ցույց տալով դեպի օրվա հուզող հարցերը։ Նրա հրապարակագրության կենտրոնական հարցերը վերաբերում են հայ ժողովրդի գոյամարտին, տնտեսական վիճակին, հայ մշակույթի, մասնավորապես դպրոցի զարգացմանը։ Հայ դպրոցի շահերը պաշտպանում է Զոհրապը հատկապես 1895—1896 թվականների ջարդերից հետո, երբ ճիզվիտ կղերը, օգտվելով ժողովրդի դժբախտ վիճակից, որս տեսած անգղերի նման հարձակվում է մատաղ սերնդի վրա, բաց է անում բազմաթիվ ճիզվիտական դպրոցներ, հարվածը ուղղելով հայ ժողովրդի սրտին, փորձելով խլել նրանից ճերմակ ջարդի դեմ պայքարելու հիմնական միջոցը՝ ազգային դպրոցը։

Հայրենասիրությունն ու մարդասիրությունը Զոհրապի մեջ միացել էին ներդաշնակորեն, և դրանց մղումով է նա գործել իր ամբողջ կյանքում։

***

Կարճատև եղավ Տիգրան Չոկկյուրյանի կյանքը, բայց շատ բովանդակալից։ Մնողներին կորցրած որբ պատանյակը, շնորհիվ ազգային որբանոցների և դպրոցների տված կրթության, շնորհիվ իր մեծ օժտվածության, դարձավ ուսուցիչ, խմբագիր, թարգմանիչ ու գրող, ապրելով «սուրվելու և սուրվեցնելու» ու «ճանրանվեր գործունեության» «տենդեն բռնված», մինչև որ երեսունմեկի մեջ նոր թևակոխած, տարան նրան՝ միացնելու մեր զոհերի մեծ բանակին։

Մեծ չէ Չոկկյուրյանի գրական ժառանգությունը. դպրոցական տարիներին գրած «Հոռետես երգեր» խորագրով արձակ քերթվածները, որոնք գրեթե մնացին անտիպ, մի քանի նորավեպեր, որոնք ինքը ամփոփեց «Հայրենի ձայներ» հավաքածուի մեջ, գրականագիտական ու արվեստագիտական հոդվածներ ու մի շարք գրախոսականներ, մի քանի թարգմանություններ, որոնք լույս տեսան իր և Միքայել Շամտամճյանի հրատարակած «Ոստան» եռամսյա պարբերագրերում, «Հերոսը» խորագրով վիպակը և վերջին երկը՝ «Վաճիր» վեպը։

Համեմատած իր նախորդ երկերի հետ, «Վաճիր» ստեղծագործական մի այնպիսի վսեմ խիզախում է, այնպիսի ակնառու վերելք, որ տարակույս չի թողնում Չոկկյուրյանի մեծ կարելիությունների վերաբերյալ, որոնցից զրկվեց մեր գրականությունը։

«Վաճիր», ծավալով այս ոչ մեծ վեպը, մեր գրականության, շատերին տակավին անծանոթ, գոհարներից մեկն է, որ կարղացվում է չքնաղացող հետաքրքրությամբ, հոգեկան մեծ բավականությամբ։ Հիացմունք է առաջացնում վեպի անթերի կառուցվածքը, տիպարների հստակ կերտումը, քնարականությամբ խառն, հակիրճ, խորություններ քանդակող ոճի տարողունակությունը, բյուրեղյա հստակ և նկարուն լեզուն, խոհական թռիչքը, հոգեբանական դիմանկար կերտելու ապշեցուցիչ կարողությունը։ Այս գրքի գեղարվեստական ամեն մի մանրամասը կրում է արվեստով արտահայտված՝ մտքի ու հույզի կնիքը։

«Վաճիր» վեպը ունի յուրահատուկ կառուցվածք, որ հնարավորություն է տվել զարմանալի ներդաշնակությամբ միացնելու անհատական և ազգային կյանքի պատկերները, անհատական և ազգային կյանքի դժբախտությունները համատեղ պատկերմամբ։ Ապրելով որբանոցներում, 90-ական թվականների կոտորածներից փրկված որբերի հետ միասին, Չոկկյուրյանը իր վշտի մեջ զգացել է հազարավորների վիշտը, հոշոտվող ազգի վիշտը։ Առհասարակ, վեպի գրեթե բոլոր հերոսները, այդ թվում և դեռատի որբերը, իրենց հոգու խորքում զգում են ընդհանուրի ցավը։ Ե՞րբ պիտի վերջ գտնի «հայուն տառապանքը». սա է վեպի գլխավոր հարցադրումը, վեպի հերոսների մեծ մասի մտահոգության առարկան։

«Վաճիր» հուշագրական վեպ է, գրված, ինչպես ցույց է տալիս նրա ենթավերնագիրը, իբրև օրագիր, որի մեջ հեղինակն օգտագործել է իր՝ Գաղատիո վանքի որբանոցում եղած օրերի հուշերը։ Վեպի հուշագրական բնույթը հնարավորություն է տվել շատ մտերմիկ ոճով բացահայտելու կենտրոնական հերոսի ներաշխարհը, նրա հոգեբանական դիմանկարը և դրա միջոցով մարդկային խոցված հոգու վերքերը, ինչպես և ազգային մեծ ու անդարմանելի վշտից առաջացած կրտտանքները, որով գունավորված է ամբողջ վեպը։

Վեպի կենտրոնական հերոսը Արտակ վարդապետն է, մի վերին աստիճանի զգայուն, հուզական հարուստ ներաշխարհ ունեցող, հայրենասեր երիտասարդ, որը վանք է գալիս «նվիրական գործ»-ի համար, իբրև տեսուչ վանքում բացված որբանոցի, «իբր հայր բյուրավոր որբերին մեկ-երկու տասնյակին՝ որոնք անագորույն ջարդերու զոհ, պիտի գան այս հովանավոր հարկին տակ պատըսպարվիլ»։

Վեպի տիպարները շատ չեն. Արտակ վարդապետից բացի, ծերունի վանահայրն է, վանական մեկուսի կյանքից գրեթե քարացած

մի մարդ, հայ մանրանկարչության և գրչության արվեստին սիրահարված մի տարեց ուսուցիչ, վանքում աշխատող կանայք, դրանցից մեկի դուստրը՝ Շուշանը և որբերը։ Վեպում ներկա է նաև ժողովուրդը, որը սրտառուչ ուշադրություն և հարազատի վերաբերմունք է ցույց տալիս դեպի որբերը, չնայած կոտորածից և թալանից առաջացած ծանր վիճակին, նույնիսկ նյութական օգնություն է հասցնում որբերին։

Վեպի հորինվածքի կենտրոնում Արտակի սերն է դեպի գեղանի Շուշանը։ Այդ սերը պատկերված է քնարականության բոլոր թովիչ նրբություններով, Արտակի հուզաշխարհի վարպետ դրսևորումներով, Շուշանի գեղեցկությունն ու կանացիությունը բացահայտող խոսուն ուրվագծերով։ Հեղինակը ցանկանում է, որ վանքերը դառնան օրինակելի ագարակներ, և հայ գյուղացիները վանքապատկան հողերում, եվրոպական մեթոդներով, զարգացնեն գյուղատնտեսությունը։

«Վանքը» վեպի ամենաուշագրավ արժանիքներից մեկը ջերմ, հուզաթաթավ հայրենասիրությունն է, որ արտահայտվում է բազմապիսի ձևերով և վեպի մի քանի կերպարների միջոցով։ Վեպի մի քանի կերպարները ունեն խորունկ իմաստ, վերածվելով երբեմն խորհրդանշանների։ Այսպես, օրինակ, որբերը, որոնք նույնպես հեղինակի ուշադրության կենտրոնումն են, հայ ժողովրդի անլուր տառապանքների կենդանի վկայություններ են, հայ գրչարվեստի և մանրանկարչության հաճախակի հիշատակումը վերածվում է մեր ժողովրդի ստեղծարար կարողության խորհրդանշանի։

Ավելի մեծ խորհուրդ ունի ժողովրդի ներկայությունը վեպում, որով հեղինակը ուզում է ցույց տալ, որ չնայած հայությունը բնաջնջելու թուրք վարիչների ծրագրված քաղաքականության, չնայած աշխարհակալ պետությունների և նրանց գործակալության նենգ վարքագծի, աշխարհի քար անտարբերության դեպի հայ ժողովրդի անտանելի վիճակը, հայ ժողովուրդը կա՛, գոյությո՛ւն ունի իբրև անհերքելի փաստ։ Վեպի վերջույթի մեջ հատուկ միտումով, հեղինակը նկարագրում է, թե ի՛նչպես վանքի ուխտի օրը, խումբ-խումբ գալիս են ուխտավորները, լեցնում թաղերը, վրաններ բարձրացնում, կամ ապրում բացօթյա, երևում են «ժպտող դեմքեր», «կարմիր ղեզտներով հարսներ», «ժըպտուն, փոշեթավալ ու պոռչտող մանուկներ», լսվում են «երգի ծածանող շեշտերը»։ Այս սուգը թոթափած, խուռներամ ժողովուրդը իր առօրյա կյանքով, իր երգով ու զվարթությամբ, մեր ազգի գոյության, նրա լավատեսության, հակառակ բոլոր աննպաստ պայմաններին, իր կյանքը շարունակելու կամքի անհերքելի ապացույցն է, իմաստալից խորհրդանշանը։

***

Վերհիշելով մեր անհուշարձան, անգերեզման այս երկու գրողների ողբերգությունը, չենք կարող շհիշել մեծ եղեռնին զոհ գնացած մեր բոլոր գրողների ողբերգությունը, որ, ըստ էության, հայ ժողովրդի ողբերգությունն էր։

Խոնարհվելով մեր գրականության այդ մեծ ու փոքր երախտավորների սևով երիզված հիշատակի առջև, կրկին ու կրկին ասենք.

Փա՜ռք նրանց հիշատակին։

Փա՜ռք մեր տոկուն, նույնիսկ Սիլուռքի պայմաններում ապրելու հավատը վառ պահող և դրանով գոյատևող ժողովրդին։

ԳԵՎՈՐԳ ՄԱԴՈՅԱՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

1915 թվականին, քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ, հայ ժողովրդի նկատմամբ գործադրված անմարդկային ոճրագործության առաջին զոհերը եղան գրողները։ Այդ տարվա ապրիլի 24-ի, 25-ի և 26-ի սև գիշերները, Պոլսում և գավառներում, թուրք և գերմանացի մարդատյացների ծրագրով, ձերբակալվեցին ավելի քան 700 հայ մտավորականներ, այդ թվում մեկ տասնյակից ավելի նշանավոր գրողներ. նրանք մաս-մաս քշվեցին Այաշ կամ Ջանղըրը աքսորավայրերը և ապա, ավելի փոքր խմբերի բաժանվելով, տարվեցին դեպի երկրի խորքերը և խոշտանգվելով սպանվեցին՝ մնալով անթաղ ու անշիրիմ։

Ձերբակալված մտավորականների և գրողների մեծ մասը երկար ժամանակ ապրել էր արտասահմանում. 1908 թվականի թուրքական «Սահմանադրություն»-ը, «եղբայրության, հավասարության և ազատության» կեղծ կոչերով, նրանց հրապուրեց Թուրքիա և որոգայթի մեջ գցեց։

Հոսեց կյանքով, ստեղծագործական վառ երազներով շնչող մի հուժկու գրական փաղանգի արյունը և գնաց խառնվելու իր բնօրրանից տեղահանված և բարբարոս սվիններով ուղեկցությամբ դեպի մահ գնացող բազմահազար ժողովրդի ծովածուփ արյանը։

Հայ ժողովուրդը իր սրտում միշտ վառ պահեց այդ բոցաշունչ ասպետների, հեգ նահատակների անունը ու միշտ հպարտությամբ պիտի հիշի նրանց ազգանվեր գործունեությունը։

***

Ահա Գրիգոր Զոհրապը (ծնված 1861 թ.), որի ստեղծագործությունը կարող էր պատիվ բերել ամեն մի կրթված ժողովրդի, հայ իրապաշտ արձակի ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկը, հռչակված իրավագետ, ականավոր քաղաքական գործիչ։ Նա Թուրքական խորհրդարանի անդամ էր, և ըստ այդ երկրի սահմանադրության՝ անձեռնմխելի, սակայն առաջիններից էր, որ թուրքական կատաղության զոհ գնաց։

Ի՞նչ ժառանգություն թողեց Զոհրապը և հայ գրականությունն ի՞նչ սպասելիքներ ուներ նրանից։

Զոհրապի առաջին հրապարակախոսական գործերը մամուլում երևացին դեռևս 1878 թվականին։ Այնուհետև իրար զուգահեռ սկսեցին լույս տեսնել նրա գրական ստեղծագործությունները և հրապարակախոսական երկերը՝ հասարակությանը հուզող ամենահրատապ հարցերի մասին։

Զոհրապը հայ գրականությունը դրեց իրապաշտ արվեստի հաստատուն հիմքերի վրա։ Նրա «Անհետացած սերունդ մը» վիպակը, «Կյանքը ինչպես որ է», «Խղճմտանքի ձայներ» և «Լուռ ցավեր» նորավեպերի ժողովածուները հսկայական դեր կատարեցին հայ արձակի զարգացման գործում, հեղինակին բերելով «նորավեպի իշխան» պատվանունը։

Զոհրապի երկերում գեղարվեստական անզուգական վարպետությամբ վեր են հանված պոլսահայ հասարակության տարբեր խավերի կյանքն ու ձգտումները, ստեղծված են հոգեբանական խոր հիմքի վրա բարձրացող կերպարներ, անմոռանալի մարդկային բնավորություններ։ Զոհրապն իր դարաշրջանի հայ գրականության ուղեցույց աստղն էր, երիտասարդ գրողների դաստիարակն ու խորհրդատուն։

Զոհրապի երկերի սովետահայ և սփյուռքահայ բազմաթիվ հրատարակությունները, ինչպես և դրանցից լավագույնների անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, վերջերս նաև պարսկերեն թարգմանությունները նրան դասեցին աշխարհի ամենասիրված գրողների շարքը։

Մեծ է նաև Զոհրապի հրապարակախոսության նշանակությունը։ Նա գրել է հասարակական բոլոր հարցերի մասին՝ գրականություն, լեզու, մամուլ, թատրոն, դպրոց, ընտանիք։ Յուրաքանչյուր հարցի մասին նա շարադրել է իր առաջադիմական պահանջները, նպաստել հասարակության մտավոր ու բարոյական զարգացմանը։ «Գրականությունը ժողովրդյան կյանքին պիտի քաղվի՝ ժողովրդյան կյանքին ծառայելու համար»,— պատգամում է Զոհրապը, անհաշտ պայքար հայտարարելով ժողովրդի ձգտումներին անհասորդ, գրողի նեղ անձնական ապրումները թարգմանող գրականության դեմ։ Դրա հետ կապված է լեզվի հարցը, և Զոհրապը հորդորում է ամեն կերպ զարգացնել աշխարհաբարը։ Թատրոնը կոչված է կրթելու ընկերային ճաշակն ու բարքերը, ուստի պետք է միշտ կանգուն ու բարձր պահել այն։ Մամուլը՝ «ճշմարիտ օրագրությունը համոզումի պես անկեղծ, հավատքի պես հաստատ, ու կրոնքի պես սուրբ է»։ Ազգի առաջադիմության գլխավոր աղբակն է դպրոցը. պետք է բարձր մակարդակի վրա դնել կրթության գործը, հատուկ ուշադրություն նվիրել մայրենի լեզվի ուսուցմանը, դպրոցում սովորեցնել տեղական արհեստներ։ Այս բոլորի միջոցով միայն կարելի է կանգուն պահել ազգը։ Պոլսում օտարամոլությունը ավերածություններ է կատարում։ Երեխաներին տալիս են օտար դպրոցներ։ Իսկ «օտար վարժարանը՝ օտար եկեղեցվո գավիթն է»։ Պոլսում քիչ չեն «տուները, ուր ֆրանսերեն կխոսին, ու ֆրանսերեն կզգան. ոչ իրենց լեզուն գիտեն շնորհքով և ոչ ալ մեր երկրին լեզուն։ Ի՞նչ կըլլան ասոնք վերջիվերջո. կհաջողի՞ն գոնե ֆրանսացի դառնալուս։ Ո՛չ, այդ բանը չի հաջողվում. Զոհրապի համոզմամբ, նրանք դառնում են «կենդանի մեռյալներ»։

Համիդյան տիրապետության շրջանում, իր դեմ եղած անլուր հալածանքներից խույս տալով, Զոհրապը 1905 թվականին ստիպված է լինում հեռանալ Պոլսից։ Սահմանադրության հռչակումից հետո, նա վերադառնում է Պոլիս և եռանդուն մասնակցություն բերում հասարակական-քաղաքական կյանքին։ 1908 թվականից մինչև իր եղերական մահը, նա թուրքական խորհրդարանի անդամ էր։ Զոհրապը այն գործիչներից մեկն էր, որոնք, ոգևորված Սահմանադրության գաղափարով, հավատացած երիտասարդ թուրքերի սուտ ու պատիր հավաստումներին, կարծում էին, որ այդ Սահմանադրության միջոցով հնարավոր է լուծել Թուրքիայի արեվելյան հայաբնակ գավառների ինքնավարության հարցը։

Խորհրդարանում իր ելույթների մեջ Զոհրապը ջերմորեն պաշտպանում էր Թուրքիայում ապրող մանր ժողովուրդների դատը, բողոքում հայկական գավառներում շարունակվող հարստահարությունների դեմ։ Իր ամենասկզբունքային ելույթներից մեկը նվիրված է 1909 թվականին Ադանայի հայկական կոտորածի հանգամանքների վերլուծությանը։ Զայրույթով նշավակելով մարդասպաններին, նա խորհրդարանի ամբիոնից հայտարարեց, որ երեսուն հազար անմեղ հայերի ջարդը կազմակերպված է կառավարության գիտությամբ և կուսակալ Ջեվատ բեյի անմիջական մասնակցությամբ։ Նա պահանջում է պատժել հանցավորներին, անհապաղ նպաստ հասցնել հրկիզված քաղաքների և գյուղերի բնակչությանը, զորք ուղարկել անդորրությունը վերականգնելու համար։

55 տարեկան էր Զոհրապը, երբ խորհրդարանի իր «ընկեր» Թալեաթի կարգադրությամբ ուղարկվեց գլխատման։ Նա ստեղծագործական մեծ հղացումներ ուներ։ Միայն «Ծանոթ դեմքեր» հուշագրական երկը, որի մի քանի դիմանկարներն էին լույս տեսել, շարունակվելու դեպքում ամբողջացնելու էր մեկ հիսնամյակի պոլսահայ մշակութային կյանքի պատկերը։

***

Բացառիկ ընդունակություններով օժտված, խանդավառ բանաստեղծ էր Սիամանթոն (Ատոմ Յարճանյան), ծնված Ակնում 1878 թվականին։ Սորբոնի համալսարանն ավարտելուց հետո, նա սկսում է մի եռանդուն գրական կյանք, իրար հետևից լույս է ընծայում «Դյուցազներեն», «Հայորդիները», «Հոգեվարքի և հույսի ջահեր», «Կարմիր լուրեր բարեկամես» և այլ ժողովածուներ, մասնակցում ժամանակի գրեթե բոլոր պոլսական և արտասահմանյան պարբերականներին։

Սիամանթոն գրական ասպարեզ եկավ այնպիսի ժամանակ, երբ հայ ժողովուրդը բարոյական վերածնության օրեր էր ապրում, երբ՝

«Ցեղը ապրի՛լ կուզեր, իր շղթաները իր
ոտքերուն տակը թափե՛լ կուզեր,
Իր կապանքները փշրե՛լ կուզեր, իր աչքերը
արբե՛լ, իր ձայնը որոտալ.
Ապրի՛լ կուզեր, ստեղծե՛լ կուզեր,
պայծառորեն վերածնի՛լ կուզեր...»։

Սակայն այդ ոգևորությունը երգել չէր վիճակված բանաստեղծին, նա վկա եղավ իր ժողովրդի խոշտանգմանը։ Տեսավ 1895 թվականի հայկական ջարդը, 1909 թվականի Ադանայի դեպքերը և որդիական սիրո ամենաջերմ խոսքերով ողբաց իր ժողովրդի դաժան ճակատագիրը.

«Կոտորա՜ծ, կոտորա՜ծ, կոտորա՜ծ...
Քաղաքներուն մեջ և բաղաքներեն դուրս.
Եվ բարբարոսներն արյուններով կը դառնան,
Մեռելներուն և ոգեվարքներուն վրայեն,
Ագռավներու բազմություններ կանցնին
վերեւեն,
Արյունոտ բեռաններով ու գինովի
երիջներով...»։

Ահա այդ մղձավանջային իրականությունն է, որ մռայլ գույներ է հաղորդել Սիամանթոյի գրեթե ամբողջ ստեղծագործությանը, ուր գերիշխողը մահվան, հոգեվարքի, ավերումի, արյան ու սուգի սրտաճմլիկ պատկերներն են, մարդկային իրավունքների բռնադատությունը ճաշակող մի ժողովրդի տագնապալից կյանքը։ Բանաստեղծը դառնում է «հայ արյունին, իր որբ ցեղին և դավաճան մարդկության զարհուրանքներն արտացոլող հայելին»։

Սակայն լացն ու ողբն անզոր են հարազատ ժողովրդի վիշտն ամոքելու, ուստի նա կոչ է անում՝ «մոխիրներու, դիակներու և վիշտերու ճովիտներեն անցնելով, արդարությունը ստեղծել, արդարությունը մոլեգնաբար հափշտակել, չորս ծագերու դիմաց հրդեհել գաղափարի փարոսները, անհրավության կուծիերուն վրա թավալել ապառաժներու կույտերը, ոտի հանել ճողի հրեղեն և ըմբոստ մարտիկներուն հետ ինախնդրության և սարսափի բանակներու արշավանքն անեղաշար...»։

Պայքարն է, որ հաղթանակ է բերում. ահա այդ պայքարի կոչն է նա հնչեցնում իր «Դարերու վրեժ» քերթվածում։

Ժամանակակիցները նրան անվանել են քսաներորդ դարի Նարեկացի։ Դանիել Վարուժանը նշում է, որ Սիամանթոյի ստեղծագործության մեջ «մարդկային այնպիսի բան մը կա, որ սահմանված է մարդ էակին հետ ապրելուս։ Դրանից բարձր գնահատական չկա ստեղծագործողի համար։

Սիամանթոն զարգացման մեծ հեռանկարներ ուներ, ստեղծագործական լայն ծրագրեր։ Մի քանի մեծ, ծրագրային գործեր արդեն սկսել էր, մասամբ մշակել։ Մասնավորապես ուշագրավ են «Պաղատանքի խոսքեր բնության առջև» և «Մտածումի ճառագայթներ» գործերը։ Վերջինի մեջ նա փառաբանելու էր մարդկային բանականությունը. այդ գործի առանձին մասերի մեզ հասած տարբերակներում նա թողել է Տոլստոյին, Վոլտերին, Բեթհովենին նվիրված հատվածներ, որտեղ վերջինները բնութագրվում են իբրև բանականության դրոշով խավարի ու բռնության դեմ ծառացած հանճարներ, իր հոգեհարազատները։

Անվանի քնարերգուն իր ուժերը փորձել է նաև թատերգության ասպարեզում։ Նոր սկսել էր գրել «Ընտանիք» դրաման, որ շատ այլ գործերի հետ անավարտ մնաց...։

***

Դանիել Վարուժա՜ն...։ Մի վառվռուն հայրենասեր բանաստեղծ, որն ընդամենը 31 տարեկան էր զոհվելիս։ Դանիել Վարուժանը (Զիպուկիյաշյան) ծնվել է Սեբաստիայի Բրգնիկ գյուղում։ Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանի սաներից է. ավարտել է Գանդի (Բելգիա) համալսարանը։ Իբրև ուսուցիչ պաշտոնավարելով Հայրենի Սեբաստիայում, Եվդոկիայում և ապա Պոլսում, Վարուժանը միաժամանակ գրում է իր հայրենաշունչ բանաստեղծությունները, աշխատակցում «Բազմավեպ», «Անահիտ», «Գեղունի», «Գեղարվեստ», «Շիրակ» և այլ պարբերականների։

Վարուժանի գրական գործունեությունը տևեց հազիվ մեկ տասնամյակ։ Այդ կարճ ժամանակամիջոցում նա իրար հետևից հրատարակեց բանաստեղծությունների երեք գիրք՝ «Սարսուռներ», «Ցեղին սիրտը» և «Հեթանոս երգեր»։ Իր եղերական մահվանից առաջ տպագրության էր պատրաստել «Հացին երգը» ժողովածուն, որ տպվեց հետմահու։ Ընթերցողների լայն շրջանները խանդավառությամբ են դիմավորել այդ գրքույկները։

Ի՞նչ էր երգում Վարուժանը։ Իր ժողովրդի ու մարդկության տառապանքները, ընկերային կյանքի անարդարությունները, իր ժողովրդի ու մարդկության երջանիկ ապագայի երազանքը։

Վարուժանը տեսել է 1895 թվականի հայկական կոտորածը և դրան հաջորդող բոլոր արհավիրքները։ Հայ ժողովրդի անլուր տառապանքների արձագանքն է նրա «Ջարդը» նշանավոր քերթվածը։ Դա և՛ բողոք է, և՛ մարտահրավեր։ Ցըլդըզ-քյոշկից տրված անմարդկային հրամանին հնազանդ, զինված խուժանը հարձակվում է իրենց խաղաղ աշխատանքով զբաղված գյուղերի և քաղաքների վրա՝ «Տավրոսեն մինչև Մասիս, Մասիսեն՝ Ջամլըճան»։

«Կճալածեն հայորդիներն անպաշտպան,
Հայորդիներն, որոնք հագիվ վերցուցած
Իրենց գլուխն աշխատանքի կարկաճեն՝
Ըղեղներու մեջ կզգան
Սույլերը տաք գնդակին...»։

Ազատվելու հույսով խուճապահար դեպի լեռները փախչող ծեր, մանուկ ու կին, նույն ճակատագրին են արժանանում, յաթաղանն ու բրոցը ամենուրեք գտնում են նրանց ու խողխողում.

«Իսկ արտերուն, ա՜խ, արտերուն մեջ չ'ճնաղ,
Ուր հայուն կյանքն արև կըմպե և արևն
Հոգիի մեջ կը մեռնի՝
Վաստակաբեկ դիակներով կկանգնին
Գողգոթաներ, Գողգոթաներ սրբազան...»:

Գլխավորն այն է, որ իր ժողովրդի հետ այդ սոսկումներն ապրած բանաստեղծը չի կորցնում իր ուղին, հոռետեսության մեջ չի ընկնում: Նա լավատեսությամբ է պատկերում իր ժողովրդի ապագան: Նրա համոզմամբ՝ վառ հայրենասիրությամբ համախմբված դիմադրության մեջ է փրկությունը, որին հավատում է բանաստեղծը և նույն հավատը ներշնչում ընթերցողին:

Լույսով, ջերմությամբ, պայծառ ապագայի հավատալիքով է բնութագրվում Վարուժանի ստեղծագործությունը: Բայց առավել լուսավոր էին նրա հեռանկարները: Նա ծրագրել էր ստեղծել «Հայկական Հոմերագիրք» երկը, մշակել «Սասմանց տուն» ժողովրդական էպոսը, գրել «Աչքեր» թատերգությունը, ձեռք զարնել արձակին...:

***

Ռուբեն Սևակը (Զիլինկիրյան) ղոհվեց հազիվ երեսուն տարին բոլորած: Լոզանի համալսարանը նոր ավարտած, հմուտ բժիշկ և շնորհալի բանաստեղծ էր նա: Սևակի առաջին բանաստեղծությունները լույս տեսան 1905 թվականին «Մասիս» հանդեսում և իրենց թարմությամբ, ինքնատիպությամբ արժանացան ընթերցողների լայն շրջանների ուշադրությանը: Աշխատակցել է նաև «Արեվելյան մամուլ», «Լույս» և այլ պարբերականների:

Ադանայի կոտորածը թունդ հանեց ժողովրդի սիրտը: Այդ եղեռնի աղեծության տակ, Սևակը գրեց իր բանաստեղծությունների «Կարմիր գիրք» ժողովածուն, որի մեջ ամբողջ խորությամբ ցուցադրում է հայ մարդու մարտիրոսությունը, արձանագրելով, որ այդ երկրում «հացը աշխատողինը չէ, հացը գողցողինն է. ու մեռնողին իրավունքը մեռցընողեն հարցնելը եղերական անմտություն մըն է»:

Բանաստեղծը ողբում է իր տարաբախտ հայրենիքի ապրած սարսափները.

«Ով դո՜ւն, ո՛վ դժբախտ երկիր հայրենի,
Որ արյունի տա՜ք շամանդաղի մեջ,
Ջոճ՝ գազանները խաղին վայրենի
Ու համայնասպան բոցերո՜ւ անշեջ,
Կը մխա՜ս, դժբախտ երկիր հայրենի...»:

Իր գրչով ու կյանքով բանաստեղծը նվիրվում է «գազաններու վայրի խաղին զոհ» իր հայրենիքի փրկությանը: Իր «Վերջին հայերը» գրքում նա ծառանում է հայ ժողովրդի մի այլ թշվառության՝ արտագաղթի դեմ, ցանկանալով ժողովրդին կապած պահել հայրենի հողին:

«Եթե բժիշկ ըլլայի,— գրում է նա իր նամակներից մեկում,— ամենամեծ փափագս էր երկրագործ ըլլալ. ու նույնիսկ դեռ հիմա ամենավերջին փափագս է օր մը գյուղ քաշվիլ ու կյանքիս վերջին տարիները դաշտերուս ու հողերուս վրա անցնել...»:

Դժբախտաբար հայ գյուղը փրկելու, արտագաղթը կասեցնելու համար այդ միջոցն էին համարում լավագույնը հայ գրողներից և մտավորականներից շատերը, անտեղյակ պատրաստվող դավին, որին զոհ պիտի գնային հայրենի հողին կառչած հեգ աշխատավորները:

Սևակի հետաքրքրությունները միայն հայրենի երկրով չէին սահմանափակվում: Նրա բանաստեղծությունները հասարակական հարուստ բովանդակություն ունեն: Ընդհանրապես տառապող մարդն է նրա ուշադրության կենտրոնում, դրամատիրական կարգերի, «սուտի ու կեղծիքի, շպարի ու ամոթի» զոհ դարձող, արհամարհված ու լքված խեղճ ընչազուրկը:

Սևակը մեծ հաջողություններ ուներ նաև արձակի ասպարեզում: Նրա «Բժիշկին գիրքեն փրցված էջեր» պատմվածքաշարը իր ընդգրկած նյութով բոլորովին նորություն էր մեր գրականության մեջ և, ինչպես ժամանակակիցներն են վկայում՝ այն «լափելով կարդաց ամեն ոք»: Այդ գիրքը հայկական արձակի լավագույն նմուշներից է: Դա ոչ թե առողջապահական զրույցների շարք է, այլ մարդկային հոգու ծալքերը բացող, հոգեբանական ամենանուրբ հետազոտությունների արդյունք, բացառիկ արժեք ունեցող գրական վավերագիր:

Սևակը վաղվոան, բազմաշնորհ անհատականություն էր, գրական-հասարակական ասպարեզում գործելու անսպառ եռանդով: Հայ գրականությունը նրանից շա՜տ սպասելիքներ ուներ...:

***

Հայ իրապաշտ արձակի կորովի վարպետներից էր Տրուխանը (Տրվանդ Սոմաճեշխանլյան), ծնված 1870 թվականին Պոլսում: Ուսուցչական աշխատանքին զուգընթաց, նա զբաղվել է գրականությամբ: Գրել է «Ամիրային աղջիկը» ծավալուն վեպը և ձկնորսների կյանքից վերցված տասնյակ հուզիչ նո-

րավեպեր։ Խույս տալով թուրքական կառավարության ամենօրյա հալածանքներից, նա մերթ բնակություն է հաստատել Բուլղարիայում, մերթ Եգիպտոսում։ 1891 թվականից սկսած, զբաղվել է նաև խմբագրական աշխատանքով. եղել է «Արևելք» օրաթերթի խմբագրապետ, Վառնայում հրատարակել է «Շարժում» թերթը և «Շավիղ» գրական հանդեսը, կարճ ժամանակով եղել է Գահիրեի «Լուսաբեր» թերթի խմբագրապետ, այստեղ էլ Սմբատ Բյուրատի հետ հրատարակել է «Սիսվան» ամսաթերթը։ Հրատարակել է հարյուրավոր հոդվածներ՝ գրական-հասարակական հարցերի մասին։

Երուխանը մեծ նշանակություն էր տալիս գրականությանը և գրողին։ Նա գտնում էր, որ հայ ժողովուրդը, քաղաքական աննպաստ պայմանների բերումով, հասցված է կորցուցյան անդունդի եզրին։ Այդ պայմաններում գրականությունն է դառնալու ժողովրդի փրկության խարիսխը։ Նա նշում է, որ հայ գրականությունը հայ ժողովրդի դժբախտության ամենադժնի օրերին եղել է «ազգին գերագույն մխիթարանքը»։ Դա աշխարհի ուշադրության ու համակրանքին արժանի մի առողջ ու բազմակողմանի գրականություն է։ «Միտքի ներկայացուցիչներու վրա,— գրում է Երուխանը,— պիտի նայինք իբրև կոչեցյալներու՝ որոնք այս տառապյալ ազգը տարին ամեն փոթորիկներու և հեղաշրջումներու միջեն, և որոնց կիյնա դարձյալ վաղվան անակնկալներուն մեջեն առաջնորդել անսայթաք և անկորուստ»։

Այդ բանը գիտեին նաև Թուրք ջարդարարները և այդ պատճառով էլ 1915 թվականի ահավոր եղեռնի նախօրեին, օրենքի ու զենքի անունը պղծելով, առանց դատ ու դատաստանի, գլխատեցին ազգը, նրանից խլելով իր առաջնորդներին, որոնցից էր նաև Երուխանը։

1913 թվականին Երուխանը ընտանիքով Պոլսից տեղափոխվում է Խարբերդ և ստանձնում ազգային դպրոցի տեսչությունը։ Հազիվ տեղ հասած, նա բարեկամներին գրում էր. «Ինձի համար ուսումնասիրության հանք մըն է այս երկիրը և այս կյանքը։ Թեև ողջ մնամ, հուշատետրս լեցուն կդառնամ Պոլիս»։ Շփումը հայրենի հողի ու մարդկանց հետ նրա մեջ ծնում է ստեղծագործական նոր ծրագրեր։ Բայց մթնոլորտը շիկանում էր։ 1914 թվականի հոկտեմբերի 11-ին նա բարեկամներին գրել է. «Անպատմելի է հոգեկան վիճակս։ ասանկ ատեն մը Անադոլուի խորերը գտնվիլը «չոլուխ-չոճուխով»՝ դյուրին բան չէ։ Ողջ առողջ օր մը զիրար պիտի տեսնե՞նք արդյոք»։

Երուխանը լավ էր ճանաչում իթթիհադականներին։ Ճիշտ էին նրա տագնապները. վեց ամիս անց՝ Անադոլուն դարձավ հայ ժողովրդի եղբայրական գերեզմանոցը...։

Բազմաթիվ տաղանդավոր հղացումներ հողը մտան Երուխանի հետ։ Խարբերդից Պոլսի «Ժամանակ» թերթին ուղարկված նրա գեղարվեստական գործերը և հրապարախոսական հոդվածները խմբագրությունը զգուշացավ տպագրել որպես «ցեղերու համերաշխության» խանգարող գործեր։ Իր մոտ պահվող նյութերն ու պատրաստի գործերը տպագրելու պատեհ ժամանակը չհասավ և դրանք նույնպես ոչնչացվեցին...։

***

Արևմտահայ գյուղի պատկերները հարազատությամբ կենդանագրել է Թլկատինցին (Հովհաննես Հարությունյան), և այդ առումով էլ նա առանձնահատուկ տեղ է գրավում հայ գրականության մեջ։ Ծնվել է Խարբերդի Թլկատին գյուղում 1860 թվականին։ Մեծ կրթություն չի ստացել. ավարտել է Խարբերդի Սմբատյան թաղային վարժարանը, բայց համառ ինքնակրթությամբ իմաստնացել, մշակել է իր գրական ճաշակն ու ձիրքերը, գնացել Խրիմյանի, Սրվանձտյանցի ճանապարհով։ Եվ չնայած այդ բոլորին, Թլկատինցին, ինչպես Ա. Ջոպանյանն է նկատել, մնացել է «հայ գյուղացի, հանճարեղ ու զարգացած հայ գյուղացի մը, ճիշտ ինչպես Աբովյանը, և իր գործին գլխավոր հատկանիշը՝ այդ շինական բնատոհմիկ շեշտի տիրապետությունն է անոր մեջ»։

1893 թվականին «Հայրենիք» օրաթերթում տպագրված «Ճամբու տպավորություններ» ակնարկով սկսվեց Թլկատինցու գրական գործունեությունը։ Դրան հաջորդեցին այլ ակնարկներ, գյուղական պատկերներ, բանաստեղծություններ, թատերախաղեր։ Արևմտահայ գյուղի կյանքը, մինչև Թլկատինցին, ինչպես նշել է գրականագետ Սիմոն Հակոբյանը, «մեզ համար գոցված գիրք էր», ահա այդ գիրքն է, որ նա լայն բաց է անում մեր առաջ։

Թլկատինցու «Դեպի արևը» չքնաղ արձակ բանաստեղծության մեջ ցոլանում են հեղինակի ներքնաշխարհը, նրա ըմբռնումներն ու ձգտումները։ Արդարություն փնտռելու նպատակով դեպի արևը գնացող մարդուն հայրենակիցները պատվիրում են պատմել արևին իրենց ցավերը. «Մենք ամենքս ալ դժբախտ այն դարդերով, որ սա հողերուն երեսը ինչ որ ցանենք, որքան ալ խնամենք, չի բուսնիր, բուսնի ալ, բերանը չի հասնիր, լոպը, մրջյունը, մարախը, այլ շատ ավելի մարախի դունչով ու սոված մարախի բազմությամբ մար-

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

ՍԻԱՄԱՆԹՕ

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ

ՌՈՒԲԵՆ ԶԱՐԴԱՐՅԱՆ



ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

ԵՐՈՒԽԱՆ

ԹԼԿԱՏԻՆՅԻ



ՀՐԱՆԴ

ԱՐՏԱՇԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՂԱՄ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՉՅՈՒՅՈՒՐՅԱՆ

դերու տեսակներ հանկարծ մեր ցանքերուն վրա կիյնան ու բան մը չեն ձգեր որ մերը ըլլա, վերջին ցորենհատին հետ անոնք հարդի վերջին շյուղն անգամ իրենց ակռաներուն տակ կաղան»։

«Կուլիկն ու վարժապետը» երկում Թլկատինցին ցուցաբերում է երգիծաբանական տաղանդ, ցուցադրում է հայերի արտագաղթի աղետավոր հետևանքները։ Պանդխտությունը ոչ միայն տառապանք է, այլև խորթացում հարազատներից, հայրենիքից։ Կուլիկի տղան Ամերիկա է պանդխտել. մայրը և կինը խեղճության մեջ են. մի զույգ կոշիկ ունեն, որ հագնում են փոխնիփոխ։ Բայց Կուլիկին ամենից շատ տանջում է այն միտքը, թե ընտանիքը դեպի կորուստ է գնում։ Նա վարժապետին թելադրում է իր նամակը. «Էմեկս էն առեն հելալ կընեմ տղիս, թե որ երկիր դառնա ու օճդես մուխ հանե»։ Նկարագրելով իրենց թշվառությունը, Կուլիկը օգնություն է հայցում որդուց։ Բայց խորթացած, այլասերված Կարապետը այլևս չի կամենում հայրենիք վերադառնալ. մոր երկար-բարակ նամակին պատասխանում է կարճ և սառը՝ «աշխատեցեք դուք ձեղի համար օգնել ու օգնվիլ», ինքնօգնությամբ հոգալ անձնական կարիքները. դա է լուսավորյալ Ամերիկայի ղեկավար սկզբունքը։ Նույն խնդրին է նվիրված նաև «Դեպի արտասահման» թատերգությունը։

«Արևս տար, մահս բեր» ակնարկում, անդրադառնալով Ադանայի կոտորածին, հեղինակը այդ համարում է մարդկության պատմության մեջ չտեսնված ոճիր, «1895-ի դժոխքեն բեռներ»։ Նա գրում է. «Վենիքիմուր և ուրիշներ բոլոր իրենց հրեշայնություններուն ուժովը քիչ մը հայուն քիթը ճանկած են, նայելով ան Ադանան ու ատանացի հայը մեկ օրեն մյուսը հովերուն առաջքը նետող կատաղություններուն»։

Թլկատինցին երեսուն տարի զբաղվեց ուսուցչությամբ։ Խարբերդի Ս. Հակոբի թաղային վարժարանը դարձրեց երկրորդական կարգի օրինակելի դպրոց, հասցրեց կրթված մարդիկ, այդ թվում՝ Ռուբեն Զարդարյան, Վահե Հայկ և ուրիշներ։ Ձերբակալվեց Խարբերդում, աքսորվեց և մատնվեց դահիճների ձեռքը։

Թլկատինցու գործը «խոշորակեռ հատոր մը կկազմեր»։ Ուներ նաև նոր մտահղացումներ՝ «հում գործեր», որոնք կենսագործելու համար մտածում էր թողնել ուսուցչությունը։ Դահիճները կանխեցին նրան։ Շատ բան ուներ տալու. դրանցից զրկվեց մեր գրականությունը։ Ուներ պատրաստի գործեր, սևագրություններ, որոնք, ափսո՛ս, հրո ճարակ դարձան։

***

Ռուբեն Զարդարյանը ծնվել է Սևերեկ գավառում, 1874 թվականին։ Հասակ է առել Խարբերդում, 1892 թվականից զբաղվել է ուսուցչությամբ։ Առաջին տարին պաշտոնավարել է Մեզրեի ազգային կենտրոնական վարժարանում։ 1903 թվականին բանտարկվում է, հաջորդ տարին բանտից ազատվելով, տեղափոխվում է Իզմիր և շարունակում ուսուցչական պաշտոնը Մանիսայում։ 1905 թվականին անցնում է Բուլղարիա և Ֆիլիպեում հրատարակում «Ռազմիկ» թերթը։ Թուրքիայում Սահմանադրության հռչակումից հետո տեղափոխվում է Պոլիս։

Հայ դպրոցի պատմության մեջ իրենց դրական դերն են կատարել Զարդարյանի կազմած գրական ընթերցանության «Մեղրագետ» դասագրքերի 6 հատորները, որոնք ընդգրկում են հայ և համաշխարհային գրականության լավագույն նմուշները և նպատակ ունեին «մտքի և արվեստի գեղեցկություններուն առջև զմայլումի հրավիրել մեր նորահաս սերունդը և այդ զմայլումի ստեղծագործ աղբեցության տակ բեղմնավորել անոնց միտքն ու հոգին»։

Առավել նշանակալից է Ռ. Զարդարյանի գրական գործունեությունը։ Նրա գրվածքներն սկսել են տպագրվել 1890 թվականից «Մասիս», «Ծաղիկ», «Արևելյան մամուլ» և այլ պարբերականներում։ Որպես գրող, Զարդարյանը հետևում է իր ուսուցիչ Թլկատինցուն և գրականության նյութ դարձնում գավառական բնատոհմիկ կյանքը, բայց ընթանում է ուրույն ճանապարհով։ Հայ գյուղը, հայ ժողովրդի սուվար զանգվածը, որ մինչ այդ դուրս է մնացել գրականության տեսադաշտից, այժմ խուժում էր գրականությունից ներս, ցույց տալիս տիրական հոսանք դառնալու ոլյալներ։

Ռ. Զարդարյանն իր ստեղծագործության մեջ լայնորեն օգտագործեց ժողովրդական ավանդությունները, գյուղական պատկերները և զգալի դեր կատարեց վեպի, հեքիաթի, հովվերգության մշակման մարզում։ 1910 թվականին առանձին գրքով լույս ընծայված նրա «Ծայգալույս» ժողովածուն եկավ որոշելու նրա հաստատուն տեղը հայ գրականության մեջ։

Նրա «Փողոցը», «Տան սերը», «Ցեղին տղան» և այլ գործեր արևմտահայ գյուղի կենդանի պատկերներ են, խոր և խոսուն։ Նրանց մեջ մարմնավորված է գյուղաշխարհի վիշտն ու տառապանքը։ «Ցեղին զավակը» պատմվածքի հերոս մուրացիկ Վարդանն ասում է. «Զարսանջա՜ք, մրեղելի՜ք գավառ, ուր տարին տասներկու ամիս սով է և մատ

մը հացը՝ արյունի գին։ Հողը Արսլան բեկինն է, տունը Արսլան բեկինը, աղբյուրի ջուրն ու երկինքին արևն ալ Արսլան բեկինը...»։ Սակայն այդ բոլորը նա համարում է բնական բան և համակերպվում։ Ահա այդպիսին են նրա հերոսները. նրանք ապրում են ցայգալուսային վիճակ, բայց համոզված են, որ մոտ է այգաբացը։

Հեքիաթներից, գյուղական պատկերներից հեղինակը բարձրանում է խոշոր ընդհանրացումների։ Նա այն կարծիքին է, որ առանց բարձր գաղափարների, մարդը մեռած է հասարակության համար և հասարակությունն էլ՝ մարդկության համար. «Վա՛յ այն հոգիներուն, որոնք թափուր են, և ուր իդեալի գահերն ու գահակալները չեն բազմիր... Վա՛յ այն սիրտերուն, որոնք սուլթաններ չունին», գրում է նա, գտնելով, որ գաղափարների չգոյությունը հարատև է դարձնում բռնավորների գահը. «ընկերական արդարության և ազատության մեծ գաղափարը» միայն կարող է վերջ դնել վշտակիր մարդկության ծով արյանը, շահագործմանը և ստրկացմանը։

Զարդարյանի արվեստը բարձր է գահատվել ժամանակակիցների կողմից։ Հայագետ Ֆրեդերիկ Մակլերը գրում է, որ նա հայ գրականության մեջ բերեց «հայրենի երկրին կենդանի գույնը, հեքիաթներու գրավիչ քաղցրությունը, գեղջկական հոգիի միամիտ ջերմությունը»։ Երուխանն այսպես է բնորոշում Զարդարյանի դերը դարասկզբի հայ գրականության մեջ. «Գավառի երգը է՛ն քաղցրն է, մանավանդ երբ ան կհատկանշվի այնպիսի այլազան, ինքնադրոշմ ու բարձր ձևով մը, որպիսին է Զարդարյանի գրականությունը»։

Թլկատինցին ու Ռ. Զարդարյանը հիմնեցին իրենց գրական դպրոցը, որը, ցավոք սրտի, հետևորդներ չունեցավ, կապված «արևմտահայ գյուղ» աշխարհագրական հասկացության անհետացման հետ։

***

Մելիոն Կյուրճյանը (Հրաճատ) ծնվել է 1859 թվականին, Բալուի Հավավ գյուղում։ 12 տարեկանից պանդխտել է Պոլիս, սովորել նախ Սկյուտարի ճեմարանում, ապա Ս. Խաչի վարժարանում։ Հսկայական նորություն է բերում նա հայ գրականության մեջ։ Նա պանդուխտների և աղքատների երգիչն է։ Պանդուխտը՝ բեռնակիր, ջրհանկիր, սևագործ բանվոր, Կյուրճյանի համոզմամբ այն թշվառ արարածն է, որը «չորցած տերևի նման կնետվի ըստ բախտի անկյուն մը փոշիներու մեջ և կամ սարավանդի վրա հովեն ծեծվելու»։ Նրանք ապրում են հարազատներից հեռու, ցեխերի մեջ, «տիղմն ու ծովու աղի ջուրը խառնելով անիծյալ հացի մը հետ»։ Ու փչանում են։ «Ա՛խ, ես քանիները տեսեր եմ,— գրում է հեղինակը,— թարմ ու առույգ տղաներ, հսկաներ ըլլալու խմորով շինված, որք տաժանելի աշխատության տակ սմքած և սբլած մնացին, քանիները ճնշվեցան ու կճզմվին, քանիներն ալ կրծոց տախտակները չախչախված անցան գնացին վաղամեռիկ»։

Սով, տառապանք, նվաստացում, վաղահաս մահ. ահա թե ո՛րն է հեռավոր գյուղում ընտանիքը թողած և Պոլիս ու Թուրքիայի նավահանգստային այլ քաղաքները թափված պանդուխտների բաժինը։ Ամենասրտաճմլիկը կին պանդուխտների վիճակն է։ Երբ ընտանիքի վերջին տղամարդը կուլ է գնում պանդխտության մեջ, ավելացող պարտքերից ազատվելու համար կինն է գնում քաղաք ֆիզիկական աշխատանք կատարելու («Ակոր աղբարը»)։ Սոսկալի է այն կանանց վիճակը, որոնք վարձվում են հարուստ ընտանիքներում իբրև ստնտու։ Նրանք «հարսնության առաջին սերերեն ետքը... կմտնեն ունևորներու տուները և հոն օտարի մը ծոցածինը կգրկեն ու կփայփայեն... Ու երբ խույս կուտա իրենցմե երիտասարդությունը... երբ մարդկային կյանք մը պատառ-պատառ կձգեն ունևոր տուներու անկյուններուն», իրենց առջև փակված կգտնեն բոլոր դռները։

Կյուրճյանն իր պատմվածքներում և հոդվածներում դատապարտում է հարուստների եսասիրությունն ու ամբարտավանությունը։

Մ. Կյուրճյանը բազմամյա ուսուցիչ էր, ճանաչված մանկավարժ։ Նա խիստ պահանջներ էր դնում դպրոցի և ուսուցչի առաջ, պահանջում էր ուժեղացնել թաղային վարժարանները, որտեղ սովորում էին խոնարհ խավերի զավակները։

Մ. Կյուրճյանը անընդմեջ ստեղծագործել է ավելի քան 30 տարի և թերևս հայ ամենաբեղմնավոր գրողներից է։ Բայց, դժբախտաբար, շատ քիչ բան է հասել մեզ, գլխավորապես այն, ինչ ժամանակին տպվել է պարբերական մամուլում՝ «Մասիս», «Արևելք», «Հայրենիք», «Բյուզանդիոն», «Մշակ» և այլ հանդեսներում։ Դրանց մեջ կան մի քանի տասնյակ հոդվածներ, ակնարկներ, պատմվածքներ... իսկ մնացածը այրվել է բարբարոսական ձեռքերով։

Բավական է ասել, որ Կյուրճյանի ձեռագրերը բռնագրավվել ու ոչնչացվել են երեք անգամ։ 1895 թվականին, հեղինակի ձերբակալության ժամանակ, ոչնչացվեցին նրա բոլոր պատրաստի և դեռ չտպագրված գործերը։ Գաստեմունիի աքսորում, հակառակ խստագույն արգելքներին, տասը տարվա ընթացքում գրված բոլոր գործերը մատնության հետևանքով հայտնաբերվում են, բռնագրավ-

...ում և այրվում։ 1915 թվականի ապրիլի ...4-ին նրա ձերբակալության ժամանակ ո... ...նշացվում են վերջին յոթ տարվա ընթաց... ...ում դրված գործերը...

***

Սմբատ Բյուրատը (Տեր-Ղազարյան) ծնվել 1862 թվականին Զեյթունում։ Երուսաղեմի ...առանգավորաց դպրոցն ավարտելուց հետո, ...րրև ուսուցիչ պաշտոնավարել է Մարաշում, ...Զեյթունում, Սսում, Սամսոնում, Կահիրեում, ...Ալեքսանդրիայում, եղել է Ռումինիայում։ ...Հրատարակել է «Փյունիկ», «Նոր օր», «Սիս... ...վան» և «Գաղափար» պարբերականները։

Գրել է «Բանտե բանտ», «Յըղդզեն Սա... ...սուն»; «Սասունեն եռքը» և այլ ծավալուն ...վեպեր, բանաստեղծություններ, թատերա... ...գրություն։ Բազմիցս ձերբակալվել է։

Բյուրատի երկերում արձանագրված է հայ ...ազատագրական շարժումների պատմությու... ...մի ամբողջ հիսնամյակի ընթացքում։

Իր «Հոնական» հուշատետրը» անավարտ ...ինքնակենսագրական գործում Բյուրատը ...ավել է իր ամբողջ գործունեության բնութա... ...գիրը։ Երկրում ստեղծված իրադրության մեջ ...Նարդն ակամայից իրեն զգում է նվաստա... ...ցած և եթե իր մեջ բարոյական մեծ ուժ չի ...գտնում, ապա մնում է որպես անարդար ...օրենքների կույր գերին։ Դա մարդուն ստի... ...պում է ապրել բուսական կյանքով։ Իսկ հե... ...դինակին առաջնորդում են այլ զգացումներ ...և գաղափարներ. «Լուծին ստելությունը, ա... ...զատագրության բաղձանքը, ահա օրենքը»։ ...Ահա թե ինչի՛ է ձգտել նա իբրև քաղաքացի ...և հայրենասե՛ր՝ արհամարհելով վտանգը, ...բանտն ու աքսորը։

Ապագայի համար նոր ծրագրեր ուներ Բյուրատը։ Այդ են ապացուցում իր անա... ...վարտ ինքնակենսագրական աշխատությանը ...կցված յոթ նոր գործերի ծրագրերը։

***

Արտաշես Հարությունյանը (Մալկարացի Կարո) ծնվել է 1873 թվականին Մալկարա գյուղաքաղաքում։ Հայրենի գյուղաքաղաքում է ստացել միջնակարգ կրթությունը և մինչև 1913 թվականը ապրել ու աշխատել է այս... ...տեղ։ 1890-ական թվականների սկզբից, նրա գավառական պատկերները տպագրվել են Ա. Արփիարյանի «Հայրենիք» ժողովում։ Արփի... ...արյանը ջերմորեն ողջունեց Ա. Հարությունյանի երևումը, նրան դասելով թլկատինցու կողքին՝ իբրև «տոհմային դիմագիծ ունեցող և իրապաշտ գրականություն» մշակող շնորհալի արձակագրի։ Այդ օրվանից սկսած, Ա. Հարությունյանը, հեռավոր Մալկարայում նստած, աշխատակցում էր պոլսահայ գրեթե բոլոր պարբերականներին։

Լայն էին Ա. Հարությունյանի հետաքրքրությյան սահմանները և ստեղծագործական հնարավորությունները։ Նա լուրջ կերպով ուսումնասիրում էր համաշխարհային գրականությունը։ Նա ոչ միայն զգալի թվով թարգմանություններ է կատարել ֆրանսերենից, այլև ֆրանսիական մամուլում հանդես է եկել հայ գրականության վերաբերյալ հոդվածներով։ Բազմաթիվ օտարազգի գրողների թվում նա թղթակցել է բելգիական ականավոր բանաստեղծ Էմիլ Վերհառնի հետ. վերջինիս ազդեցությամբ գրեց անհանգ բանաստեղծություններ և հասավ զգալի հաջողության։ 1902—1912 թվականների ընթացքում նրա լույս ընծայած «Լքված քնար», «Երկունք» և «Նոր քնար» ժողովածուները նրան բերեցին սիրո և բնության շնորհալի երգչի համբավ։

Պոլիս տեղափոխվելուց հետո, նա հրավիրվում է ղեկավարելու «Բյուզանդիոն»-ի և ապա «Շանթ»-ի քննադատական բաժինները։ Նա գրախոսել է այդ տարիների բոլոր հրատարակությունները, անխնա քննադատել միջակությունները, միևնույն ժամանակ արժանին հատուցել առաջատար ու կորովի ստեղծագործողներին։ Նա առաջինն էր, որ հիացական խոսքերով գրվատեց Մ. Մեծարենցի արվեստը, արժեքավոր ուսումնասիրություններ կատարեց Դ. Վարուժանի և Սիամանթոյի ստեղծագործությունների մասին։ Նշանակալից են Ա. Հարությունյանի քննադատական հոդվածները «վաղվան գրականության» մասին։ Նա պահանջում էր գրականության նյութ դարձնել հայ բնաշխարհի կյանքը՝ այն «անծանոթ ու անորոշ կալվածը», որ չէր ոգևորում պոլսահայ գրողին։

Ա. Հարությունյանը շատ ասելիքներ ուներ և՛ արձակի, և՛ չափածոյի, և՛ քննադատական մտքի զարգացման ասպարեզում։

***

Դեղամ Բարսեղյանը ծնվել է 1883 թվականին Պոլսում։ Ավարտել է Պեզճյան մայր վարժարանը։ Կարճ ժամանակով հաճախել է Պոլսի Կենտրոնական վարժարանը։ Կանոնավոր դպրոցական կրթություն չի ստացել։ Ուսման պակասը լրացրել է լուրջ ինքնակրթությամբ։ Խորապես ուսումնասիրել է մայրենի գրականությունը. համաշխարհային գրականությունից մասնավորապես մեծ խնամքով ուսումնասիրել է ֆրանսիականը։

Մամուլում տպագրվել է 1900-ական թվականների սկզբից։

Առաջին պատմվածքները լույս են տեսել 1900 թվականին «Սուրհանդակ» թերթում։ Այդ օրվանից նա ընդմիշտ կապվում է մամուլին, իր աշխատակցությունը բերելով պոլսահայ գրեթե բոլոր պարբերականներին։ Նա գրել է պատմվածքներ, արձակ բանաստեղծություններ, հրապարակախոսական և քննադատական հոդվածներ։ Մի հանգամանք կա, որով նա տարբերվում է մեր հիշած բոլոր գրողներից, այն է, որ նա գրել է գեղեցիկ պատմվածքներ մանուկների համար. «Ծաղիկ» ամսագրում նրա տպագրած «Տղու մը կյանքը», «Պզտիկ բանվորի արկածը», «Պզտիկ Մակարը» և այլ պատմվածքներ գրված են ջերմ սիրով, մանկական հոգեբանության ճշգրիտ ըմբռնումով։

Բարսեղյանի զուտ գեղարվեստական գործերը շատ չեն։ Սակայն նրա գրած յուրաքանչյուր փոքրածավալ երկի մեջ զգալի է «արվեստի պաշտամունքով առլցված», իր նկատմամբ պահանջկոտ, բանիբուն գեղագետի ճաշակը։ Նա գրում է հայրենի ժողովրդի տառապանքների մասին, նշավակում Աբդուլ Համիդի՝ «արյունաթաթավ ձեռքերով դահճապետի» վայրագությունները, ապրում իր ստեղծագործ ժողովրդի վառ երազանքներով։

Գեղամ Բարսեղյանը այն երազողներից էր, որոնք ժողովրդի փրկության գլխավոր միջոցներից մեկը համարում էին լուսավորությունը։ Նա խանդավառությամբ ողջունեց Դանիել Վարուժանի վերադարձը հայրենի Բրգնիկ գյուղը և բոլոր նրանց, ովքեր գնում էին հայրենի ժողովրդին լուսավորելու և նրա գրկում ծաղկեցնելու իրենց արվեստը, ովքեր «իրենց փոխատնկված ծաղկի հոգվույն մեջ բաբախուն ցանկությամբը կսարսռան դեպի իրենց մայր հողը, անոր արևեն շառայլ մը պահելով իրենց ծոցին խորը, և կուզեն երթալ թևատարած և խառնվիլ անոր, շնչել անոր օդը, մտերմանալ բոլոր իրերուն որ զայն, իրենց մայր երկիրը կհորինե, պրիսմակել իրենց մեջեն բոլոր գույներն ու բոլոր տեսքերը անոր, բոլոր ձայներն ու բոլոր ցավերը ու բովանդակ հոգին անոր, ու հետո, այս անգամ ավելի հզորապես ու ավելի իսկատպորեն, նորեն ճառագայթել, նորեն բուրմունավետել»։

Գեղամ Բարսեղյանը չկարողացավ բացահայտել իր բոլոր կարողությունները. նա ապրում էր իր ուժերի ամենաբուռն զարգացման շրջանը։

***

Տիգրան Չոկյուրյանը ծնվել է 1884-ին Գյումուշխանե քաղաքում։ Փոքր հասակից որբացել է. կյանքն ու ուսումնառությունը ընթացել են տարբեր որբանոցներում։ Գրական ասպարեզ է եկել 1907 թվականին։ Ուսուցչական աշխատանքին զուգահեռ, «Բյուզանդիոն»-ում իրար հետևից տպագրում է իր պատմվածքները, որոնք հետագայում լույս տեսան առանձին գրքով՝ «Հայրենի ձայներ» ընդհանուր խորագրի տակ։

Իր պատմվածքներում Տ. Չոկյուրյանը նկարագրում էր արևմտահայ գյուղի մոայլ առօրյան՝ կողոպուտ, սպանություններ, ոևևանգում, միևնույն ժամանակ ցույց տալով հարստահարվածների բողոքն ու ընդվզումը («Տերտերին ոճիրը», «Հարսին վրեժը», «Տկարին ուժը» և այլն)։

1914 թվականին առանձին գրքով լույս տեսավ Տ. Չոկյուրյանի լավագույն երկը՝ «Վանքը» վիպակը, որտեղ նա տված է իր մանկական և պատանեկան տարիների ապրումների ու միջավայրի գունեղ, իրապաշտական նկարագիրը։

1911 թվականից սկսած Մ. Շամտանճյանի հետ հրատարակում է «Ոստան» հանդեսը, որտեղ երևան եկան նաև նրա քննադատական ընդունակությունները։ Նրան ևս վիճակված չէր ապրելու իր տաղանդի ծաղկումը։

***

Մի ակնարկի մեջ անհնարին է բնութագրել եղեռնի բոլոր զոհերի ստեղծագործությունը, գծել նրանց քաղաքացիական դիմանկարը։ Մենք փորձեցինք մի բան ակնթարթ դարձնել, որ նրանք բոլորն էլ կարող, խոստումնալից ուժեր էին, ընկած ստեղծագործական սրբազան գործի կես ճանապարհին։

Մեծ էր հայ գրականության կորուստը։ Ինչքա՜ն հոյակապ երկեր պետք է գրվեին, որ չգրվեցին։ Հայ ժողովրդի հոգևոր կյանքն արտացոլող ինչքա՜ն վիպական, թատերական, բանաստեղծական, քննադատական երկեր բռնագրավվեցին և ոչնչացվեցին։

Այո՛, կորուստն անդարմանելի էր։ Հայ գրականությունը դուրս եկավ իր զարգացման բնականոն ճանապարհից, որոշ ժամանակ ապրեց մի տարտամ վիճակ, միչև որ հաջորդ տասնամյակում նորից հավաքեց իր ուժերը և սկսեց զարգանալ նոր թափով, ապացուցելով հայ ցեղի կենսունակությունն ու ստեղծագործական անսպառ հնարավորությունները։

Գ. ԳՅՈՒԼՅԱՆ
(Դասախոս Հոգևոր ճեմարանի)

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ

Ով գեթ մի անգամ թերթել է մեր պատմությունը, գիտի, որ հին է մեր ժողովուրդը, որ դժվարին է եղել նրա ուղին։ Մեր պատմության այգաբացն անգամ հատկանշվում է ազատագրական պայքարի դյուցազնական դրվագով. Հայկը նետահարեց Բելին՝ արյամբ նվաճելով իր փոքրիկ ժողովրդի ազատությունը։

Մեր երկիրը, գտնվելով Արևելքի և Արևմուտքի հատման կետի վրա, բազմաթիվ անգամներ թատերաբեմ է հանդիսացել աշխարհակործան պատերազմների։ Մեր հինավուրց հողի վրա ահագնորեն իրար են բախվել բյուզանդական վահանակիրներն ու պարսկական նետաձիգները։ Ահեղ հողմերի պես մեր երկրի վրայով են անցել Շապուհների և Հազկերտների, Բուղաների և Ալփարսլանների, Լենկթիմուրների և Շահաբասների չարագուշակ, մահատարած ուրվականները։ Հաճախ է ավերվել մեր երկիրը. հրո ճարակ են դարձել մեր գյուղերն ու քաղաքները. թշնամի սմբակների տակ տրորվել են մեր ծաղկավառ դաշտերը։ Բայց ամեն անգամ, փոթորկից հետո, նորից է իր մեջքը ուղղել թեքված նշենին, կանաչել է մեր կարկտահար արտը։ Հայ շինականը իջել է իր լեռներից, վերակառուցել իր տունը, ծուխ է բարձրացել երդիկներից և հասկակալած, ոսկեկոհակ ցորյանների ծփուն պատմուճանը զարդարել է մեր հողերի պարարտ կուրծքը։

Բայց այն, ինչ տեղի ունեցավ 1915 թվականի ապրիլի 24-ին հայ մտավորականության ձերբակալությամբ, իր ընդունած չափերով և հետևանքներով, մոռացնել է տալիս բոլոր հին արհավիրքները, չունի իր նախընթացը վշտի ու տառապանքի սովոր մեր ժողովրդի պատմության մեջ։ Հիսուն տարի առաջ իթթիհադական թուրքերը սառնասրտորեն հղացան և հանճարեղ հետևողականությամբ ի կատար ածեցին մի ոճիր, որի համեմատությամբ դժգունում, նսեմանում է տոսկանացի մեծ բանաստեղծի ցնորեցուցիչ երևակայությունը։ 20-րդ դարի սեմին, ավելի խտացրած գույներով, նրանք իրականություն դարձրին դանթեական առասպելը։ Մի ամբողջ ժողովուրդ, որ «գիր ուներ ու ապաո», որ գալիս էր դարերից, որ ստեղծել էր քաղաքակրթական, մշակութային հոյակապ արժեքներ, տեղահանվեց և, գաղթի ճանապարհին արնաքամվելով, ամբողջությամբ գերեզմանվեց արաբական անապատների մեջ։ Հիսուն տարի հետո անգամ ապրիլյան եղեռնի առանձին դրվագների ոգեկոչումը անկարելի է կատարել առանց սոսկումի։ Իր բնիկ տերերից ամայացավ մի ամբողջ երկիր, հրո ճարակ դարձան գյուղեր ու քաղաքներ, հսկայական խարույկների բոցերի մեջ ածխացան հարյուր հազարավոր կենդանի մարդիկ, ոտնահարվեցին մարդկային բարոյականության տարրական իրավունքները, արատավորվեց հայ առագաստի պատիվը։ Հայ կույսերը, երամ առ երամ, Եփրատի ահեղավազ ջրերի մեջ պատանքեցին իրենց վիրավոր կուսությունը։ Հրատոչոր անապատը դարձավ հայ կմախացած բազմությունների հսկայական գերեզմանոցը։

Ծանր, չարագուշակ լռություն իջավ Արևմտյան Հայաստանի վրա. լռեց երգը, մորթվեց վերջին հորովելը։ Պատմությունը որբացավ իր կենդանի, բնիկ տերերից և նահան-

ջելով՝ ծվարեց լեռների ծերպերի և ավերակ վանքերի մեջ։ Հեռու, հեռու մնացին աքոռանիստ Սիսն ու արծվեբույն Զեյթունը, գեղածիծաղ Վանա ծովակն ու Աղթամարը, Նեմրութն ու Սիփանը, Տարոնն ու Սասնա միգամած լեռները։ Լռել է ձայնը էրզրումի հայոց լեռներում, հողը ճաքճքած է, խոպան տարածությունները ծածկված են եղինջով ու մոլախոտով, վարսաթափ է ուռենին Եփրատի, Տիգրիսի, Արածանիի դալարագեղ ափերում, ագռավներն են միայն կռնչում գորշ ու անհրապույր երկնքում։

դրության հայերի կողմից։ Եվ թուրքերը սառնասրտորեն ի կատար ածեցին մի ամբողջ ժողովուրդ բնաջնջելու՝ խնամքով մշակված իրենց ճիվաղային ծրագրերը։ Հակառակ թուրքերի ակնկալությանը, եղան սակայն դիմադրության դեպքեր։ Դիմադրեց Տարոնը և ամբողջությամբ բնաջնջվեց տեղում։ Դիմադրեց Շապին-Գարահիսարը, դիմադրեց Ուրֆան, դիմադրեց Մուսա լեռը և փրկվեց։ Կանոնավոր, անձնուրաց և կազմակերպված ինքնապաշտպանությամբ, Վասպուրականի հայությունը պարտության մատնեց թուրքա-



Մի տեսարան Երևանից

Ապրիլյան եղեռնը ծրագրված էր, որ կատարվեց երկու պլանով՝ տեղահանությամբ և սպանդով։ Համիդի հայահալած ու հայաջինջ քաղաքականության տրամաբանական և օրգանական շարունակությունն էր այն, ավելի մեծ չափերով։ Երիտասարդ թուրքերը, ոճիրի հղացման և գործադրման ձևերի մեջ, գերազանցեցին իրենց արյունկզակ, կարմիր սուլթանին։ Նրանք ընտրեցին պատմության ամենահարմար պահը։ Աշխարհը բռնվել էր առաջին համաշխարհային պատերազմի բոցերի մեջ։ Նեղուցները փակ էին։ Թուրքիայի մայրաքաղաքից հեռացել էին օտար դեսպանները։ Եվրոպան զբաղված էր իր իսկ հոգսերով։ Պահը հարմար էր, ադիքը՝ աննախադեպ։ Ընդհանուր զորաշարժով՝ զենքի տակ էին կանչված 18—45 տարեկան բոլոր հայ տղամարդիկ։ Թիկունքում մնացել էին միայն ծերեր, կանայք և պատանիներ։ Նման պայմաններում բացառվում էր ամեն դիմադրություն հայերի կողմից։ Եվ թուրքերը սառնասրտորեն ի կատար ածեցին մի ամբողջ ժողովուրդ բնաջնջելու՝ խնամքով մշակված իրենց ճիվաղային ծրագրերը։ Հակառակ թուրքերի ակնկալությանը, եղան սակայն դիմադրության դեպքեր։ Դիմադրեց Տարոնը և ամբողջությամբ բնաջնջվեց տեղում։ Դիմադրեց Շապին-Գարահիսարը, դիմադրեց Ուրֆան, դիմադրեց Մուսա լեռը և փրկվեց։ Կանոնավոր, անձնուրաց և կազմակերպված ինքնապաշտպանությամբ, Վասպուրականի հայությունը պարտության մատնեց թուրքական կանոնավոր զորքին։ Շնորհիվ ռուսական բանակի օգնության և նրա շարքերում կռվող հայ կամավորական գնդերի, հատկապես Անդրանիկի մարտերի և հոգատարության, արևմտահայերի մի մասը փրկվելով, կարողացավ տեղափոխվել Անդրկովկաս և ձախողեց թուրքերի հայաջինջ քաղաքականության ամբողջական հաջողությունը։

Ապրիլյան եղեռնը կրկնակի բնույթ ունի՝ ողբերգական և դյուցազնական։ Ֆիզիկական իմաստով՝ դա մեր պատմության ամենամռայլ էջերից մեկն է։ Ապրիլյան եղեռնին մենք կորցրինք մեր ամբողջական թվի ավելի քան երկու երրորդը։ Մեզ նման թվով փոքր մի ժողովրդի համար դա ահավոր, անդարմանելի կորուստ էր։

Ապրիլյան եղեռնը միաժամանակ ցույց տվեց սակայն մեր ժողովրդի դյուցազնական, անկոտրում ոգին, ցույց տվեց այն անկրկնելի առաքինությունները, որոնցով մի ժողո-

վուրդ նվաճում է արևի տակ ապրելու իր անկապտելի իրավունքը։ Մեծ փորձության ժամին հայ ժողովուրդը չդավաճանեց ինքն իրեն։ Հավաքական նահատակությամբ մերժեց հավատուրացության, ազգուրացության հրավերը։ Մահը չսարսափեցրեց նրան։ Շատ անգամ հայ կանայք, հայ կույսերը ինքնակամ նետվեցին խարույկի բոցերի մեջ, վարարած ջրերի հորձանքի մեջ՝ մահը նախամեծար համարելով։ Լեռներն ու անտառները ապաստանած հայ սակավաթիվ այրեր քաջությամբ կռվեցին գերազանց ուժերի դեմ։ Թուրք կանոնավոր բանակն ու ջարդարար ոհմակները շատ անգամ են խուճապահար նահանջել դյուցազն Անդրանիկի և նրա առյուծների կրկնվող հարվածների տակ։ Հոգեվար հայ մայրը ավազուտի վրա իսկ հավատարիմ մնաց Մեսրոպին՝ իր որբացած ձագուկների աչքին շողացնելով նրա տառերի հրաշքը։ Տարագիր, հալածական մշեցի հայ կինը, ամեն ինչ մոռացած, ապահովության նավահանգիստ հասցրեց մեսրոպատառ մեր մագաղաթներից մեծագույնը։

Մաշտոցի անվան Երևանի մատենադարանը

Միշտ էլ ազատաբաղձ հոգու ամեն մի խոյանք դեմ է առնում բռնության ապառաժին։ Բարձրագույն քաղաքակրթությամբ օժտված հնադարյան մի ժողովուրդ չէր կարող հաշտվել կյանքի ստորացուցիչ պայմանների, հավիտենական սարկության հետ և չփորձել իր թևերը ազատության երկնքի մեջ։ Այս եղավ հայ ժողովրդի հանցանքը։ Թոթափելով ավելի քան վեց դարերի սարկության փոշին՝ նա ձգտեց արևի և պահանջեց նրա տակ ազատ ապրելու իր իրավունքը։ Բայց թշնամին, հոգեպես, բարոյապես կաթվածահար այդ անարգ, հիվանդ բռնակալը, օրհասական արջի կատաղությամբ, մոլեգնորեն հակազդեց, կազմակերպելով խաղաղ ու ստեղծագործ մի ժողովրդի վրա պատմության մեծագույն եղեռներից մին։ Նրան հաջողվեց ժամանակավորապես կասեցնել մեր ժողովրդի վերելքի թափը, բայց նա ձախողվեց իր գլխավոր նպատակի մեջ։ Մեր ժողովուրդը ավելի քան կառչած մնաց իր սեփական ազատ հայրենիքը ստեղծելու գաղափարին, որ մի շարք սայթաքումներից հետո իրագործվեց 1920 թվականի նոյեմբերի 29-ին՝ հյուսիսում ճառագած նոր արդարության բարերար ազդեցությամբ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման շնորհիվ։

Բոլոր դարերի բռնակալների խելքը ավելի երկար չի լինում, քան իրենց սուրը։ Նրանք անկարող են ըմբռնելու ոգու հակազդեցությունը։ Նրանք չգիտեն, որ խաչին հաջորդում է հարությունը, նահատակության՝ վերածնունդը։ Իրենց հայաջինջ քաղաքականության մոլուցքի մեջ, իթթիհադական թուրքերը չկարողացան գիտակցել, որ նահատակությունը կարող էր հրաշափոխել մեր արյունը, ավելի խտացնել մեր ստեղծագործական կարողությունները և կռանել մեր ապրելու կամքը։ Իրոք, ապրիլյան եղեռնը հրաշափոխեց մեր արյունը, մեզ մաքրեց սարկության կեղտից, ավելի կռանեց մեր տևելու կամքը։ Մեր նահատակների մարող աչքերի մեջ համեցող լույսի վերջին մնացորդը մեզ ցույց տվեց հրաշքով այն ճանապարհը, որին պետք է հետևեինք՝ մեր մեծ երազի իրականացման համար։ Մեր ժողովրդի կարևոր մեկ հատվածը՝ տարատնկված հայրենի հողից, օտար երկինքների տակ, հակառակ ամեն տեսակ դժվարությունների, կարողացավ հայ մնալ՝ հիշատակովն ու ավանդովը միայն մեր նահատակների։ Մեր նահատակների արյունն էր, որ օրեցօր չթուլացող սիրով, խանդաղա-

տանքով և հպարտությամբ, բոլոր հայերի հայացքը սևեռեց նորաստեղծ հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի վրա, նրանց գոտեպնդեց բոլորվելու նրա կենդանարար գաղափարի շուրջ։

Այսօր, մեծ եղեռնից հիսուն տարի հետո, փաստ է, որ Արաքսի ձախ ափի վրա, Արարատյան դաշտում, որ հնուց ի վեր եղել է մեր ժողովրդի տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքի օրրանը, արմատախիլ արեմտահայության բեկորներով ստվարացած, համախմբված է ավելի քան երկու միլիոն հայություն, որ Խորհրդային Միության ժողովուրդների համերաշխ ընտանիքում, վերակառուցել է իր տունը և վստահ քայլերով առաջ է ընթանում՝ համաշխարհային մշակույթին ու քաղաքակրթությանը տալով տասնյակ ու տասնյակ նոր անուններ, ստեղծելով կյանքի բոլոր բնագավառներում այնպիսի արժեքներ, որոնցից օգտվում են նույնիսկ երեկվա մեր ջարդարարների որդիներն ու թոռները։ Հայ ժողովուրդը ապրելով և ստեղծագործելով է լուծում իր վրեժը երեկի ջարդարարներից և անտարբեր, քարսիրտ աշխարհից։ Դարեր շարունակ ա՛յս է եղել և այսօր էլ ա՛յս է մնում մեր ժողովրդի կենսափիլիսոփայությունը։

Տարօրինակ է, բայց փաստ է, զարմանահրաշ փաստ։ Մեր ժողովուրդը իր փրկությունը գտավ, երբ հասել էր կործանման եզրին։ Անկասկած է, որ ժողովուրդները միշտ էլ կարողանում են գտնել իրենց ճշմարիտ ուղին։ Մի շարք խարխափումներից, մոլորություններից հետո, մեր ժողովուրդը գտավ իր ազգային վերածնության ուղին և վերելքի հնարավոր միջոցները։ Երբ մահատարած թշնամին, անզուսպ կատաղությամբ, հասել էր Երևանի դռների առաջ, մեր ժողովրդի առաջնորդները զավակները նշմարեցին հյուսիսում ճառագած նոր աստղը և նրա հետ կապեցին իրենց փրկության հույսը։ Հայաստանում խորհրդային իշխանության հռչակումը ի չիք դարձրեց թշնամու սադրանքները և նրան մեխեց տեղում։ Թշնամին նույնիսկ նահանջեց՝ հաշտվելով անկախ Հայաստանի գոյության հետ։

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը մեզ տվեց այն, ինչ մեզ պակասել էր դարեր շարունակ՝ խաղաղություն և ապահովություն։ Վերջ գտան ազգամիջյան կռիվները, հաստատվեց երբեմն իրար թշնամի ժողովուրդների համերաշխությունն ու համագործակցությունը։ Հայ ժողովուրդը ազատագրվեց ազգային և սոցիալական ճնշումից։

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը ազդարարեց մեր ժողովրդի վերածնունդը, և այնքան վսեմ խոյանքներից հետո, նահանջի դառնությամբ դժգունած նրա անկարելի թվացող հույսերի իրականացումը։

Հայաստանը իր փրկությամբ պարտական է Հոկտեմբերյան հեղափոխության հռչակած նոր սկզբունքներին։ Նոյեմբերի 29-ը Հոկտեմբերյան արևից Հայաստան հասած առաջին շողն էր, որ ցրեց մեր ավեր երկրի վրա ծանրացած մահվան մշուշը, պայծառացրեց մեր երկինքը։

Ապրիլյան մեծ եղեռնից հետո անցել է 50 տարի, իսկ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո՝ 45 տարի։ 45 տարին շատ կարճ ժամանակամիջոց է, մի ակնթարթ միայն պատմության մեջ։ Բայց ինչ որ կատարվեց այդ 45 տարիների ընթացքում, ավելին է, քան հրաշքը։ Հիմնովին փոխվել, անճանաչելի է դարձել մեր երկրի դեմքը։ Անդառնալիորեն պատմության գիրկն է անցել գետնափոր տների քսենոփոնյան վաղնջական Հայաստանը։ Հայաստանը դադարել է արցունքի հովիտ լինելուց, սուի ու որբի երկիր լինելուց։ Երբեմնի հետամնաց երկրագործական Հայաստանը այսօր դարձել է նորագույն տեխնիկայով արդյունաբերական հզոր երկիր, գիտության, մշակույթի, համատարած գրագիտության երկիր։ Նախկին ավերակների վրա բարձրացել են նոր քաղաքներ։ Լայն երակների նման բացվել են կապույտ ջրանցքներ։ Ամբողջ երկիրը ծածկվել է դպրոցների, մասնագիտական բարձրագույն ուսումնական հաստատությունների, հիվանդանոցների, գիտական, մշակութային մեծ տների, արդյունաբերական խոշոր հիմնարկությունների մեծ ցանցով։ Անհնար է թվարկել նյութական այն բոլոր բարիքները, որ ստեղծագործ, տաղանդավոր ու շինարար հայ ժողովուրդը ստեղծել է այս 45 տարիների ընթացքում։ Օրեցօր փոխվում, զարդարվում, գեղեցկանում է մեր երկիրը։ Բացվում են լայն ու լուսավոր պողոտաներ, զբոսայգիներ, կառուցվում են արվեստական լճեր, որոնց մեջ լողում են խաղաղության կարապները։ Հայ ժողովուրդը, դարերի այս անխոնջ ուղեկիցը, դեռևս շարունակում է ստեղծագործել երիտասարդական անսպառ ավյունով։

Այսօր, Հայաստանում հայ ժողովրդի կյանքը զարգանում է համաչափ, բազմակողմանիորեն՝ դրսևորվելով նյութական և հոգևոր բազմաթիվ ու բազմազան արժեքների մեջ։ Մեր հոդվածը ծանրաբեռնելու գնով իսկ, ուզում ենք բերել որոշ փաստական տվյալներ, որոնցով չի կարող չհպարտանալ հայ ժողովուրդը։

Հայ ժողովրդի հնադարյան և բազմարժեք մշակույթի խոշորագույն օջախ է հանդիսանում 1958 թվականին Երևանում կառուցված

ՀԱՑԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԸ

Մեսրոպ Մաշտոցի անվան հայ ձեռագրերի նոր Մատենադարանը, որտեղ ամփոփված են շուրջ 10 000 ամբողջական ձեռագիր աշխատություններ, որոնցից 675-ը օտար լեզուներով։ Բացի ձեռագիր ամբողջական աշխատություններից, Մատենադարանում կան շուրջ 3 500 պատառիկներ, որոնք մեծ մասամբ ավելի վաղ շրջանում գոյություն ունեցած ամբողջական ձեռագիր աշխատությունների ներկայացուցիչներ են հանդիսանում։

Երևանի Մատենադարանը հարուստ է պատմագրական աշխատություններով։ Ձեռագիր աշխատություններում ամփոփված են հին և միջին դարերի ավելի քան 80 պատմիչների գործերը, որոնք իրենց բնույթով և արժեքով մեծ մասամբ չեն սահմանափակվում հայերի և Հայաստանի համար ունեցած նշանակությամբ։

Մատենադարանում կան 1950 ձեռագրեր, որոնց մեջ ամփոփված են փիլիսոփայական աշխատությունները անտիկ փիլիսոփայության կարկառուն ներկայացուցիչների՝ Պլատոնի, Արիստոտելի, Ջենոն Իմաստասերի, Եզնիկի և Դավիթ Անհաղթի։

Մատենադարանում հսկայական գրականություն կա նաև քերականության և բառարանագիտության վերաբերյալ։ Շուրջ 400 ձեռագիր աշխատություններ կան, որոնցում ամփոփված են քերականական մեկնություններ, և ավելի քան 550 ձեռագիր աշխատություններ, որոնք բառարաններ են հանդիսանում։

Մատենադարանը հարուստ է նաև միջնադարյան գրականության լավագույն նմուշները պարունակող ձեռագիր աշխատություններով։

Պատմագիտությունը կարևոր տեղ է գրավում Մատենադարանի ձեռագրերում։

Բժշկագիտական բովանդակություն ունեցող բազմաթիվ ձեռագրեր են հասել մեզ հին Հայաստանից։ Մասնագետների կողմից կատարված այդ բժշկարանների ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե որքան բարձր մակարդակի վրա է կանգնած եղել հայ բժշկագիտությունը դեռևս միջին դարերում։

Մատենադարանը հարուստ է նաև մանրանկարչական, երաժշտական (խազագրական),

Մի տեսարան Լենինականից

դրական գիտությունների, մաթեմատիկայի, քիմիայի, տոմարագիտության, աստղաբաշխության վերաբերյալ բազմաթիվ ձեռագիր աշխատություններով, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում մասնագետ գիտնականների համար։

Հայաստանը այսօր ծածկվել է մշակութային այլ հիմնարկների լայն ցանցով և դարձել է համատարած գրագիտության, առնջավոր գիտության, արվեստի և գրականության երկիր։ Այժմ Խորհրդային Հայաստանում կան 1383-ից ավելի դպրոցներ, որոնցում սովորում է 312 000 աշակերտ։ Դպրոցներում աշխատում են 20 000 ուսուցիչներ։

1921 թվականին բացվեց Երևանի պետական համալսարանը և ապա պոլիտեխնիկական, գյուղատնտեսական, բժշկական, մանկավարժական, թատերական և այլ ինստիտուտներ, ինչպես նաև Կոմիտասի անվան պետական երաժշտանոցը։ Այժմ Հայաստանի տասներկու բարձրագույն ուսումնական հաստատություններում և 37 տեխնիկումներում սովորում են 30 000-ից ավելի խոստումնալից ուսանողներ։

Հայաստանում աննախընթաց վերելք է ապրում գիտական միտքը, որի կենտրոնն է հանդիսանում Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիան, հիմնադրված 1943 թվականին։ Այնտեղ ներկայումս աշխատում են ակադեմիայի 36 անդամներ, 26 թղթակից անդամներ, 67 դոկտոր-պրոֆեսորներ և գիտությունների թեկնածուներ։

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի շուրջ համախմբված գիտնականները զգալի հաջողությունների են հասել ժողովրդա-տնտեսական ու տնտեսական խոշոր նշանակություն ունեցող խնդիրների ուսումնասիրման ասպարեզում։ Այժմ Հայաստանում կան 66 գիտահետազոտական հիմնարկություններ, որոնցում բեղմնավոր կերպով աշխատում են ավելի քան 5 000 գիտական աշխատողներ, այդ թվում գիտությունների 153 դոկտորներ և 1 350 թեկնածուներ։

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի բեղմնավոր աշխատանքում գիտական խոշոր ներդրում ունեն հայ ժողովրդի այնպիսի տաղանդավոր զավակները, ինչպիսիք են Մ. Աբեղյանը, Հ. Մանանդյանը, Հ. Աճառյանը, Ս. Մալխասյանը, Գ. Ղափանցյանը։ Իրենց աշխատություններով մեծ հռչակ ու ժողովրդականություն են վայելում տաղանդավոր գիտնականներ Վ. Համբարձումյանը, Հ. Օրբելին, Ալիխանյան եղբայրները, Ա. Մնջոյանը, Ն. Հարությունյանը, Ա. Շահինյանը, Ս. Մերգելյանը, Ի. Մաղաքյանը, Ա. Հովհաննիսյանը և ուրիշներ։

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիան, իր բազմաթիվ գիտահետազոտական ինստիտուտներով և հիմնարկներով, մեծ ճանաչում է գտել ոչ միայն Խորհրդային Միությունում, այլև նրա սահմաններից դուրս։ Գիտության տարբեր բնագավառներում հայ մեծատաղանդ գիտնականները իրենց աչքի ընկնող հայտնագործություններով արժանի ավանդ են մուծում համաշխարհային գիտության գանձարանը։ Նրանք հաջողությամբ մշակում են միջուկային ֆիզիկայի, քիմիայի, աստղագիտության, մաթեմատիկայի, հաշվողական տեխնիկայի, կիբեռնետիկայի, աստրոֆիզիկայի և մի շարք այլ կարևոր խնդիրներ։ Խորհրդային Հայաստանի գիտնականների բազմահազարանոց բանակը ջանք չի խնայում մարդկության բարօրության զարգացման հայրենանվեր աշխատանքում։

Անցնող 45 տարիների ընթացքում ածեց և ուռճացավ նաև խորհրդային արվեստը իր բոլոր ճյուղերով։ Հիմնադրվեցին պետական երաժշտանոցը, պետական ֆիլհարմոնիան և Ալեքսանդր Սպենդիարյանի անունը կրող օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնը։ Խորհրդահայ երաժշտական մշակույթի զարգացման ասպարեզում խոշոր ծառայություններ են մատուցել Ա. Խաչատրյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը, Ա. Սաթյանը, Ս. Բարխուդարյանը, Ա. Այվազյանը, Ե. Սաղյանը, Ա. Մանուկյանը, Վ. Տալյանը, Գ. Ղեհյանը, Ա. Դոլուխանյանը և շատ ուրիշներ։

Խորհրդահայ երաժշտությունն ունի իր ականավոր կոլեկտիվները և անհատ կատարողները. այդ շարքում ուրույն տեղ են գրավում պետական օպերան, աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր Հայկական ֆիլհարմոնիան, Կոմիտասի անվան կվարտետը, լայն ժողովրդականություն վայելող Հայկական ՍՍՌ ժողովրդական երգի-պարի վաստակավոր անսամբլը, ռադիոկոմիտեի ժողգործիքների անսամբլը, Հայկական պարի պետական անսամբլը, պետական էստրադային նվագախումբը, Սայաթ-Նովայի անվան գուսանական անսամբլը։ Երաժշտական կատարողական արվեստի բնագավառում մեծ ծառայություններ ունեն անվանի վարպետներ, ՍՍՌՄ ժողովրդական արտիստներ Պ. Լիսիցյանը, Գ. Գասպարյանը, Տ. Սազանդարյանը, Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստներ Ն. Հովհաննիսյանը, Ա. Պետրոսյանը, Զ. Դոլուխանյանը և շատ ուրիշներ։

Ստեղծագործական բուռն վերելքով է ապրում Գ. Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնը։ 45 տարվա կյանք ունեցող այդ թատրոնը իր խաղացանկը սկսելով Շեքսպիրի, Շիլլերի, Գոլդոնիի, Գոգոլի, Օստրովսկու Իբսենի, Գորկու, Սունդուկյանի, Պարոնյանի, Շիրվանզադեի և այլ դասական հեղինակների ստեղծագործությունների բեմադրությամբ, սերտորեն կապվեց ժողովրդի հետ, կանգնեց սոցիալիստական ռեալիզմի ճանապարհի վրա և հասավ նպատակասլաց, ժամանակակից ստեղծագործությունների բեմադրման բարձր կարողությունների աստիճանին։ Այժմ Հայաստանում գործում են մի քանի պետական թատրոններ՝ պատանի հանդիսատեսի թատրոնը, պետական ռուսական թատրոնը, Լենինականի և Կիրովականի պետական թատրոնները, մի շարք միջշրջանային թատրոններ և այլն։ Հայ տաղանդա-



Մի տեսարան Կիրովականից

վոր դերասաններ Պ. Ադամյանի, Սիրանույշի, Ջմշկյանի, Հ. Աբելյանի և ուրիշների արվեստի հոյակապ ավանդություններով աճեցին և խորհրդահայ բեմական արվեստի բարձր նվաճումների հասան անվանի դերասաններ Հ. Ներսիսյանը, Վ. Վաղարշյանը, Օ. Գուլազյանը, Ա. Ավետիսյանը, Հ. Գարագաշը, Գ. Ջանիկյանը, Դ. Մալյանը, Ռ. Վարդանյանը, Գ. Գաբրիելյանը, Մ. Կոստանյանը, Օ. Բունիաթյանը, Հ. Ավագյանը, Թ. Սարյանը, Գ. Խաժակյանը, Ա. Արազյանը, Մ. Պարոնիկյանը, Գ. Աշուղյանը, երիտասարդ դերասաններ Մ. Սիմոնյանը, Բ. Ներսիսյանը, Լ. Հովհաննիսյանը, Ա. Խոստիկյանը, Խ. Աբրահամյանը, Ֆ. Դովլաթյանը, Լենինականի թատրոնից Ց. Ամերիկյանը, Լ. Զորաբյանը, Ա. Փաշայանը և ուրիշներ։

Օրավուր զարգանում է նաև խորհրդահայ գրականությունը։ Անցած 45 տարիների ընթացքում, գրական ասպարեզ իջան և աճեցին բազմաթիվ վիպասաններ, թատերագետներ և բանաստեղծներ, որոնք գրական ժառանգությամբ հարուստ մեր ժողովրդին պարգևեցին խորհրդահայ մարդկանց կյանքը ճշմարտացիորեն արտացոլող մեծ թվով արժեքավոր երկեր։

Ճանաչված ու սիրված արժեքներ են այսօր Ե. Չարենցը, Ն. Զարյանը, Գ. Սարյանը, Հ. Շիրազը, Ս. Կապուտիկյանը, Հ. Սահյանը, Պ. Սևակը, արձակագիրներ Դ. Դեմիրճյանը, Ս. Զորյանը, Ա. Բակունցը, Վ. Անանյանը, Հ. Քոչարը, Ս. Խանզադյանը, Ազավնին, Գ. Մահարին և շատ ու շատ ուրիշներ։ Ներկայումս Խորհրդային Հայաստանի գրողների միության անդամակցում են ավելի քան 900 գրողներ ու թարգմանիչներ։

Մեծ նվաճումների հասավ նաև խորհրդահայ կերպարվեստը։ Խորհրդահայ կերպարվեստի ավագ գործիչներ Մ. Սարյանի, Փ. Թերլեմեզյանի, Հ. Կոջոյանի, Գ. Գյուրջյանի, Ա. Սարգսյանի և մյուսների հետ միասին նոր կյանք կառուցող խորհրդային մարդկանց հերոսական առօրյան և հայրենասիրությունը պատկերող արժեքավոր կտավներով ու քանդակներով հանդես են գալիս Հ. Զարդարյանը, Է. Իսաբեկյանը, Բ. Քոլոզյա-

Մի տեսարան Էջմիածնից

նը, Մ. Աբեղյանը, Ա. Բեքարյանը, Ն. Նիկողոսյանը, Հ. Կալենցը և շատ ուրիշներ։

Արվեստի մեծահարուստ գանձարան է Երևանի պետական պատկերասրահը, ուր պահվում են շուրջ 10 000 գեղարվեստական բարձրարվեստ գործեր։

Աննախընթաց կերպով աճել է նաև խորհրդահայ մամուլը։ Ներկայումս Հայաստանում լույս են տեսնում ավելի քան 100 անուն հանրապետական, քաղաքային, շրջանային բազմատպաքանակ թերթեր, տեսական, քաղաքական, տնտեսագիտական, գրական-գեղարվեստական, կրոնական և այլ հանդեսներ ու պարբերականներ, որոնց միանվագ տպաքանակը հասնում է ավելի քան 375 000 օրինակի։ Խորհրդահայ ընթերցողը մայրենի լեզվով կարդում է ռուսական և համաշխարհային գրականության կոթողները։

Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանը ծածկվեց ակումբների և գրադարանների ցանցով։ Վիթխարի վերելք ունեցավ գրատպության գործը։ Հայաստանում գործում են ավելի քան 2 800 գրադարան, ուր ամփոփված են 16 600 000-ից ավելի գրքեր։ Խոշոր գրադարաններից են Ա. Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարանը, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի գրադարանը, պետական համալսարանի գրադարանը, պոլիտեխնիկական ինստիտուտի գրադարանը, Լենինականի քաղաքային գրադարանը և շատ ուրիշ գրադարաններ։

Աննախընթաց տեմպերով զարգանում է հրատարակչական գործը։ 1920—1956 թվականներին հրատարակվել է 22 000 գիրք ու բրոշյուր 101 000 000 օրինակ ընդհանուր տպաքանակով, չհաշված ամսագրերն ու թերթերը։ Հայերեն լեզվով թարգմանվել և հրատարակվել են եղբայրական հանրապետությունների ժողովուրդների և աշխարհի շատ ուրիշ ժողովուրդների խոշորագույն գրողների գործերը։ Հայաստանի աշխատավորները այսօր սիրով ընթերցում են Հոմերոսի, Վիրգիլիոսի, Խայամի, Շեքսպիրի, Մոլիեռի, Գյոթեի, Շիլլերի, Սերվանտեսի, Վոլտերի, Բալզակի, Հյուգոյի, Տոլստոյի, Պուշկինի, Գոգոլի, Գորկու, ինչպես նաև ժամանակակից խորհրդային և արտասահմանյան առաջադեմ գրողների երկերը։ Հայաստանը այժմ ունի 55 տպարան։ Ամեն տարի լույս է տեսնում ավելի քան 100 անուն դասագիրք։

Անցնող 45 տարիների ընթացքում, հայ ժողովուրդը, բուժելով իր վերքերը, ձեռնամուխ է եղել շինարարական մեծ աշխատանքի։ Այսօր Հայաստանի գլխավոր պողոտաներն ու հրապարակները զարդարված են ճարտարապետական այնպիսի կոթողներով, որոնք իրենց ազգային երանգով, ճարտարապետական նուրբ ու գեղեցիկ ձևավորմամբ հիացմունք են պատճառում Հայաստան այցելող հյուրերին։

Շնորհիվ օրավուր աճող շինարարության լայն թափի ու ծավալի, Հայաստանում առաջացել ու զարգացել են մի շարք խոշոր արդյունաբերական գեղեցիկ ու բարեկարգ քաղաքներ ու կենտրոններ, որոնք գլխավորում է նոր Հայաստանի մայրաքաղաք Երևանը իր ավելի քան 650 000 բնակչությամբ։ Այժմ Հայաստանն ունի 12 քաղաք, 23 քաղաքատիպ ավան։ Այսօր արդիական նոր քաղաքներ են նաև Լենինականը, Կիրովականը, Աբովյանը, Գորիսը, Ղափանը, Էջմիածինը, Հոկտեմբերյանը։ Գեղեցիկ են հայրենի նոր քաղաքները իրենց քարեղեն նոր կառույցներով, որոնք, Ա. Իսահակյանի պատկերավոր արտահայտությամբ, «կարծեք թե մեր լեռների և ժայռերի խմաստալից շարունակությունը լինեն»։

Մեծ ծավալ է ստացել նաև բնակարանային շինարարությունը։ Անճանաչելիորեն փոխվել է քաղաքամայր Երևանը, որն առաջ նահանգային հետամնաց քաղաք էր 23 000 բնակչությամբ։ Այժմ Երևանը դարձել է Խորհրդային Միության առաջավոր ու գեղեցիկ քաղաքներից մեկը, Խորհրդային Հայաստանի զարգացող արդյունաբերության, գիտության և մշակույթի կենտրոնը։ Տարիների ընթացքում Հայաստանի բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր գեղեցկացել են հազարավոր արդիական բնակելի բազմահարկ շենքերով, հիվանդանոցներով, գիտական և մշակութային հիմնարկներով, սանատորիաներով և հանգրստյան տներով։

Խորհրդային իշխանության տարիներին, առաջ մղվեց նաև առողջապահության գործը, ապահովվեց բնակչության ձրի բուժսպասարկումը։ Հիվանդանոցային մահճակալների թիվը Հայաստանում 1913 թվականի համեմատությամբ ավելացել է ավելի քան 56 անգամ, բժիշկներինը՝ 50 անգամ։ Ներկայումս Հայաստանում գործում են 1480 բուժհիմնարկներ, այդ թվում 268 հիվանդանոցներ՝ 11 200 մահճակալներով, որոնց սպասարկում են շուրջ 4 000 բժիշկներ և 10 000 բուժաշխատողներ։

Հայաստանի գեղատեսիլ բնության բոլոր պարգևները օգտագործվում են աշխատավորության բարեկեցիկ կյանքի, հանգստի և առողջապահության համար։ Թավ անտառներում, հանքային աղբյուրների մոտ, բարձրանում են Հայաստանի առողջարանները և հանգստյան տները, որոնց թիվը հասնում է 29-ի։ Հանրաճանաչ են հատկապես Ջերմուկի, Արզնու, Դիլիջանի, Կիրովականի առողջարանները և Ծաղկաձորի ու Ախթալայի հանգստյան տները։

Օրավուր ավելանում է մանկամսուրների, մանկապարտեզների թիվը, ծավալվում են

Սասունցի Դավիթ
(Քանդակագործ՝ Երվանդ Քոչար)

բժշկասանիտարական կանխարգելիչ միջոցառումները։ Վաղուց արդեն Հայաստանում վերացված են մալարիան և վարակիչ մի շարք հիվանդություններ։

Մեծ են Հայաստանի ձեռք բերած նվաճումները նաև գյուղատնտեսության մեջ։ Ներկայումս Հայաստանում կա 863 կոլտնտեսություն և 55 սովխոզ, 9 տեխնիկական վերանորոգման կայան և 29 մեքենատրակտորային կայան։ Գյուղատնտեսության մեջ լայնորեն կիրառվում են ժամանակակից տեխնիկան և գիտության նվաճումները։ Բարձրանում է տնտեսությունը պահելու կերպը, ավելանում է գյուղատնտեսական մթերքների արտադրությունը։ Հայաստանի կոլտնտեսությունների և սովխոզների դաշտերում աշխատում են ավելի քան 5 000 տրակտոր, մեծ թվով կոմբայններ և ժամանակակից գյուղատնտեսական այլ մեքենաներ։ Կոլտնտեսությունների 83 տոկոսը էլեկտրիֆիկացված է։

Ոռոգման նոր սիստեմների կառուցման շնորհիվ, որոգելի տարածությունը հասել է

Այգեկութքը Արարատյան դաշտում

213 500 հեկտարի՝ 1913 թվականի 97 000 հեկտարի դիմաց։

Այս տարի շահագործման կհանձնվեն Մանթաշի ջրամբարը, Նոյեմբերյանի, Գեղափ—Աղավնաձորի, Այրում—Ճոճկանի, Կապսի, Գյուլիբուլաղի, Լալագյուղ—Ուզունթալայի և մյուս ջրհան կայանները։ Նախագծված միջոցառումների շնորհիվ, ոռոգելի հողերի տարածությունը Հայաստանում 1965 թվականին կավելանա 15 000 հեկտարով, իսկ լրացուցիչ ջուր կստանա 40 000 հեկտար արոտավայր։ 1966—1970 թվականներին, նախատեսվում է նոր ոռոգելի հողերի տարածությունն ավելացնել 93 000 հեկտարով, բարելավել 26 000 հեկտար տարածության ջրապահովությունը և լրացուցիչ ջուր տալ 130 000 հեկտար արոտավայրերի։

Գյուղատնտեսական արտադրության հետագա ուժեղացման միջոցառումների իրագործումը ստեղծում է լայն հնարավորություններ գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ավելացնելու համար։

Հայաստանում հատկապես արագ թափով են զարգացել քիմիական, էլեկտրատեխնիկական, ռադիոէլեկտրոնային, հանքային արդյունաբերությունը, գունավոր մետալուրգիան, մեքենաշինությունը և գործիքաշինությունը։

Ինչպես հայտնի է, նախախորհրդային Հայաստանում քիմիական արդյունաբերություն չի եղել, այնինչ այժմ կան տասնյակ քիմիական ձեռնարկություններ, որոնք երկրին տալիս են սինթետիկ կաուչուկ, արհեստական թելեր, հանքային պարարտանյութեր, ավտոդողեր, ներկեր, ռետինատեխնիկական իրեր, ծծմբաթթու և ժողովրդական տնտեսության զարգացման համար շատ այլ ուրիշ նյութեր։ Միայն 1963 թվականին, 1958 թվականի համեմատությամբ, քիմիական արտադրությունն աճել է 2,1 անգամ, ըստ որում սինթետիկ նյութերի արտադրությունն ավելացել է 7 անգամ։ Միայն 1964 թվականին ինն ամսում արտադրվել է 27 500 տոննա կաուտուկ սոդա, 5 016 տոննա արհեստական և սինթետիկ թել, 495 100 տոննա արհեստական և սինթետիկ մետաքս, 869 000 հատ ավտոդող։

Խոշոր հաջողություններ են ձեռք բերվել թեթև արդյունաբերության զարգացման բնագավառում։ Խորհրդային Հայաստանն ունի այժմ ժամանակակից տեխնիկայով զինված և բարձր զարգացման հասած թեթև արդյունաբերություն։ Մեր թեթև արդյունաբերության ձեռնարկությունները ներկայումս երկրին տալիս են ոչ միայն միլիոնավոր մետր մետաքս, բրդե, բամբակե կտորեղեն, այլև տասնյակ հազարավոր մետր արհեստական և սինթետիկ թելերից պատրաստված կտորեղեն ու հագուստեղեն։ Միայն անցյալ տարվա 9 ամսում Հայաստանում արտադրվել է 49 400 000 քառակուսի մետր գործվածք, որից 5 400 000 քառակուսի մետր մետաքսե կտոր, 33 100 000 զույգ գուլպեղեն, 2 510 000 հատ տրիկոտաժի վերնազգեստ, 1 770 000 հատ ժամացույց, 5 174 000 զույգ կաշվե կոշիկ և այլն։

Եվ բացել է Մայր Հայրենիքը՝ Խորհրդային Հայաստանը՝ իր մայրական գիրկը 1915 թվականի ազգակործան եղեռնից մազապուրծ ազատված, աշխարհի չորս ծագերին ցրված իր հայրենաբաղձ զավակների առաջ և կանչում է նրանց բոլորին դեպի տուն՝ դեպի հայրենի երդիկ։ Վերջին տարիներին հայրենիք են վերադարձել ավելի քան 100 000 ներգաղթողներ։

Դժվար է, եթե ոչ անհնարին, մի առ մի թվերով արտահայտել այն բոլոր նվաճումները, որ վերջին 45 տարիների ընթացքում ձեռք է բերել մեր ժողովուրդը՝ շնորհիվ սո-

...եսական իշխանության իր վերագտած ա...ահովության և խաղաղության պայմաննե...ում։ Իրականությունը, կարծես, գերազան...ում է երազին։ Բայց միամտություն կլիներ ...արծել, որ այս բոլորը հեշտությամբ է ձեռք ...ներել հայ ժողովուրդը։ Պատերազմից ար...աքամ՝ ապրիլյան եղեռնին վերապրող սե...ունդը ժառանգել էր միայն ավերակներ, ...այքայված և կազմալուծ մի հայրենիք։ ...երմարդկային ճիգով, ուժերի գերագույն ...արումով մեր ժողովուրդը լծվեց աշխա...անքի՝ անհուն զրկանքների գնով, տքնու...յամբ ու տառապանքով մի առ մի կառուց...ելու համար այն բոլորը, որ այսօր մեկ բա...ով կոչվում է Խորհրդային Հայաստան։ Երկ...որդ համաշխարհային պատերազմում մեր ...ողովրդի լավագույն զավակները դարձյալ ...խնայեցին իրենց արյունը, որպեսզի նորից ...կրկնվի ապրիլյան եղեռնը։

Այսօր Խորհրդային Հայաստանը հսկա ...փարոսի նման լուսավորում է բովանդակ ...հայության երթուղին։ Այսօր մեծագույն ...փաստը, որով նշանավորվում է մեր ժո...ղովրդի ազգային վերածնունդը, կոտորակ...ված հայության վերամիավորման փաստն է, ...հայ պետականության գոյության փաստը, ...հայրենի հողի վրա, հայ պետության հովա...նու տակ, հայ ժողովրդի տունդարձի, հա...մախմբման և ամբողջացման փաստը, հայ ժողովրդի հավաքական հոգեբանության, պե...տական նկարագրի կազմավորման ու ամ...րապնդման իրական հնարավորությունների առկայության փաստը։

Այսօր Խորհրդային Միության ժողովուրդ...ների համերաշխ ընտանիքում, հայ ժողո...վուրդը գտել է իր վերջնական տեղը, ապա...հովությունն ու խաղաղությունը։ Հայ ժողո...վուրդը չի մոռացել իր մեռելներին, ավելի քան մեկուկես միլիոն իր նահատակներին։ Նա այսօր կրկնակի թափով ու եռանդով լծվել է համառ, հետևողական, շինարար աշխա...տանքի, որպեսզի քայլ պահի քաղաքակիրթ առաջադեմ մարդության հետ, որպեսզի շու...տով վերացնի այն ավերները, որ նրան պար...տադրել էր մեր երեկվա ահավոր պատմու...թյունը։ Հայ ժողովուրդը կառուցում է, նա ստեղծում է այն բոլոր արժեքներն ու ուժե...րը, որոնք հիմնավորապես բացառում են ապրիլ 24-երի կրկնությունը։ Նա իր գոյու...թյան փաստովն իսկ, իր նվաճումներով, իր հանճարի արտափայլումներով դարձել է շուրջ երկու միլիոն մեր անթաղ նա...հատակների հիշատակին կանգնեցրած անձեռակերտ ամենամեծ հուշարձանը։

ՍՈՒՐԵՆ ՔՈԼԱՆՋՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ԵՎ ՄԵՐ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

«Ոչնչացան հայ ժողովրդի անգնահատելի գանձերը... որ ո՛չ ցեղը և ո՛չ ուսիճը պիտի ոչնչացներ, բայց ոչնչացրեց մոլեգնող էնվերների և Թալեաթների բուրկական կառավարությունը՝ վանդալների և Ատիլաների բարբարոսությունից առավել աստիճաններով: Ոչնչացել են Անկյուրիո, Կեսարիո և Արմաշի ձեռագրական հազարավոր հատորներից մեծ ժողովածուները կամ անհատների սեփականություն եղած հարյուրավոր ձեռագիրներից բաղկացած ժողովածուները... Այդ ձեռագիրների մեջ էր մարմնավորված հայ արվեստը, հայ մշակույթը, հայ միտքը, դարերի ընթացքում հայի ստեղծագործությունները, հայ հոգին, որոնց նույնպես հանճարակության և ոչնչացման մեծ բաժին հասավ:

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀՈՎՍԵՓԵԱՆՑ
(«Դեպի լույս և կյանք»,
Անթիլիաս, 1947, էջ 319):

Դարեր շարունակ հայ ժողովուրդը ենթարկվել է օտար բռնակալների ասպատակությունների և խժդժություններին: Ողջակիզված հայությունը ոչ միայն զոհ է տվել իր անհամար լավագույն զավակներին, այլև շատ անգամ իսպառ ոչնչացել են նաև նրա ստեղծած հոգևոր անգին գանձերը: Թշնամին անխնա կերպով հետևել է քանդելու և ոչընչացնելու հայն ու իր մշակույթը հիշեցնող որևէ հուշարձան:

Անցել են մեր ժողովրդի ցավատանջ պատմության երկար և ձիգ դարերը և հայը փյունիկի նման միշտ կարողացել է հարություն առնել իր իսկ մոխիրներից: Նորանոր սերունդներ աշխատել են սպիացնել իրենց վերքերը և վերստին կյանքի են կոչել հայ մշակույթի բազմաթիվ հրաշալիքներ, որոնք իրենց հերթին լույս են բաշխել մեր ժողովրդին և նպաստել նրա գոյատևմանը:

Անխնա կերպով ոչնչացվել և մոխիր են դարձվել մեր ճարտարապետական հոյակապ հուշարձաններից շատերը, մեր քանդակագործական արվեստի լավագույն նմուշները, անհետ կորել են մեր մտավոր մշակույթի գանձերը:

Մեր ժողովրդի ճակատագիրն են ապրել նաև մեր ձեռագիր հուշարձանները: Տասնյակ հազարավոր հայերեն ձեռագրեր իսպառ ոչնչացել են, իրենց հետ տանելով մեր հինավուրց պատմության, գրականության, ճշգրիտ գիտությունների և վերջապես արվեստի գոհարներ: Ձեռագրերից շատերը եղել

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽԵԼԱԳԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԸ

(Նկարիչ՝ Գրիգոր Խանջյան)

...ն գերության մեջ բազմաթիվ անգամներ և ...կրկին փրկագնվել ու ազատվել, մի շարք ձե...ռագրեր հրապարակային անարգանքի են ...նամանվել, ստացել են քրի հարվածներ, մի ...քանիսի վրա նույնիսկ նշմարվում են արյան ...հետքեր, իսկ հազարավոր ձեռագրեր իրենց ...տերերի հետ միասին տարվել են հեռավոր ...երկրներ։

Միջնադարյան ինչքա՜ն հեղինակների գործեր գիտենք, որ չեն հասել մեզ... իսկ ինչքա՜ն էլ եղել է, որ հեղինակի կամ գործի անունն իսկ այժմ չգիտենք։

Դեռևս չի գրված հայերեն ձեռագիր հուշարձանների ոչնչացման և փրկության պատմությունը։ Սակայն մեզ հայտնի մի քանի փաստերն իսկ բավական են մի կողմից խոսելու համար։ Ինչպես գրում է Ստեփանոս Օրբելյան պատմիչը, 1170 թվականին, սելջուկների արշավանքի ժամանակ, Սյունիքի Բաղաբերդ ամրոցում անխնա կերպով ոչնչացվեցին ավելի քան 10 000 ձեռագրեր, այսինքն խոշորագույն մի մատենադարան։ Այս լոկ մի թվական է, իսկ ինչքա՜ն ձեռագրեր էին ոչնչացել մինչ այդ և ոչնչացան էլ նրանից հետո...։ Իսկ ի՜նչ մեծ թվով ձեռագրեր հայրենասեր հայերի կողմից գերությունից են ազատվել և բերվել ու հանձնվել իրենց նախկին մատենադարանին։ Այս առթիվ, ինչպե՜ս կարելի է չհիշել հայ ժողովրդի ճակատագրի հետ համընթաց ապրող Մուշի ձեռագիր հսկայի կամ աննման ճառընտիրի փորձություններով լի պատմությունը։ 1204 թվականին էր ստեղծվել նա Մուշի նշանավոր Ս. Առաքելոց վանքում և ահա շուտով սելջուկները հոշոտում են նրա պատվիրատուին և նրա ունեցվածքի հետ կողոպտում են նաև իր գրչությամբ, բովանդակությամբ և մանրանկարչական արվեստով նշանավոր այդ ձեռագիրը և գերի տանում շատ հեռու։ Սակայն հայերը, թափառելով երկրից երկիր, հավաքում են 4 000 արծաթ դրամ և փրկելով այն, կրկին հանձնում Մուշի Ս. Առաքելոց վանքին, ուր և մնում է շուրջ 700 տարի, մինչև մեծ եղեռնը, երբ նոր փորձություններ էին հասնելու մեր ամենամեծ ձեռագրի գլխին։

Երբ խոսվում է մեր ձեռագրերի փրկության մասին, ի՞նչպես կարելի է մոռանալ նաև այժմ Վենետիկի Մխիթարյանց մատենադարանում պահված մի ձեռագիր Ավետարանի փրկության այնքան հուզիչ և սքանչելի մանրամասնությունները։ Լենկթիմուրի բուռն արշավանքների ժամանակ, 1400 թվականին, երբ ամեն տեղ մահ էր սփռվում և մարդիկ մահանում էին սովից, հալեպցի մի հայ Թավաքալ անունով, գնում է Այնթաբ հաց գնելու և տեսնելով, որ մի ձեռագիր Ավետարան է գտնվում այլազգիների ձեռքում և հրապարակային անարգանքի է ենթարկվում, շատ է զգացվում և լաց լինում ու մոռանալով սովը, տալիս է իր հացի դրամը և ազատում ձեռագիրը։

Հակառակ իր կրած բոլոր արհավիրքներին, հայը ամեն տեղ կարողացել է ստեղծել նորանոր ձեռագիր հուշարձաններ։ Մեր չարքաշ գրիչները խոնավ խցերում, թե գաղթի ճանապարհին, անմատչելի մենաստաններում, «Մի նշխարով, մի կում ջրով և ճգնությամբ գիշերն անքուն», կարողացան իրենց ապագա սերունդներին ժառանգություն թողնել մեր մշակույթի բազմաթիվ գանձերը։ Բավական է նշել, որ մեր հնագույն մատենագիրների և ոչ մեկի գործը մեզ չի հասել իր բնագրով, ուստի եթե չլիներ հատկապես ԺԴ—ԺԶ դարերի մեր գրիչների անդուլ աշխատանքը ձեռագրերի արտագրման գործում, ապա այժմ մենք շատ բան չէինք ունենա Ե—ԺԴ դարերի մեր նշանավոր մատենագիրների գործերից։

Արաբական, սելջուկյան, թաթար-մոնղոլական, պարսկական և այլ ծանր արշավանքներից հետո, Հայաստանը ԺԲ դարի վերջում և հատկապես ի դարի առաջին քառորդում ականատես եղավ սահմռկեցուցիչ մի սպանդի, որը երբեք նման չէր նախորդ կոտորածներին։ Սուլթանական Թուրքիայի վարիչների կազմակերպած հայաջինջ կոտորածների շարքն էր այդ, որի մոտ նսեմացան հայերի անցյալում կրած ամենադաժան նախճիրներն իսկ։ Եթե անցյալում դարերով ողջակիզվել է մեր ժողովուրդը, իսկ նրա մի մասը ստիպվել է ցրվել աշխարհով մեկ, այնուամենայնիվ միշտ էլ հայեր մնացել են Մայր Հայրենիքում, պահպանել իրենց պապերի մշակութային գանձերը և վերանորոգել իրենց կյանքը հայրենի կուրծ տակ։ Ապա սուլթանական Թուրքիայի կազմակերպած կոտորածները հատկապես ծրագրված էին ընդմիշտ վերջ տալու մեր ժողովրդի գոյությանը։ Ահա թե ինչո՞ւ այս ահավոր սպանդի ժամանակ նախ հայը արմատախիլ արվեց իր պապենական տնից, իր հայրենիքից և ապա հայ անունը պահող որևէ հուշարձան կամ անգամ մեքրոպատառ մի գերեզմանաքար հիմնահատակ կործանվեց և կամ փշրվեց։ Այս համատարած կոտորածների ընթացքում, ոչնչացան նաև շատ մեծ թվով հայերեն ձեռագրեր։

Այժմ արդեն շատ դժվար է ճշգրիտ պատկերացում ունենալ եղեռնի ընթացքում մեր ոչնչացած ձեռագրերի քանակի և նրանց գիտական արժեքի մասին, քանի որ որևիցե ամփոփող տեղեկություն այդ մասին մեզ հայտնի չէ։ Այս գործը շատ ավելի դժվարա-

նում է նաև նրանով, որ ոչ 1894—1896 թվականների Համիդյան կոտորածների և ոչ էլ 1915 թվականին սկիզբ առնող հայ մեծ եղեռնին նախորդող տարիներին Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում գտնվող հայերեն ձեռագրերի մասին դժբախտաբար չունենք և ոչ մի ընդհանուր ցուցակ։

Ինչպես 1894—1896 թվականներին Արևմտյան Հայաստանում սուլթան Համիդի կազմակերպած համատարած կոտորածների, այնպես էլ 1909 թվականին Կիլիկիայի աղետի մասին եղած զեկուցագրերը շատ հակիրճ են և մեծ մասամբ վերաբերում են մարդկային կորուստներին և մասամբ նաև սրբավայրերի պղծման կամ քանդման, ուստի շատ քիչ են անդրադառնում մեր գրչագրերի ոչնչացմանը։ Այդ ծանր օրերին, հնարավոր էլ չէր հիշյալ ամփոփ զեկուցագրերում մեծ չափով անդրադառնալ նաև մեր ձեռագիր հուշարձանների ոչնչացմանը։ Սակայն այն փաստը, որ հարյուրավոր վանքեր և եկեղեցիներ այրվեցին, կողոպտվեցին և կործանվեցին, ինքնըստինքյան հավաստում է մեզ այն մասին, որ շատ վայրերում մեր ձեռագիր գանձերը ևս ոչնչացվեցին։

Բոլորովին այլ էր 1915 թվականի մեծ եղեռնը։ Եթե նախորդ կոտորածների վերաբերյալ այս կամ այն չափով հնարավոր է եղել յուրաքանչյուր նահատակվող հայկական վայրից թեկուզ կցկտուր զեկուցագրեր հասցնել, ապա 1915 թվականին դրանք խափառ բացակայում են, քանի որ հայկական բոլոր կենտրոնների բնակչությունը տեղահան էր արվել և ամայություն էր տիրում ամեն տեղ։ Կողոպուտը և հայկական գանձերի ոչնչացումը մեծ մասամբ տեղի էին ունեցել հայաբնակ վայրերում միայն հայերի տեղահանությունից հետո։ Այս շրջանին վերաբերող նյութերը մեծ մասամբ տարագրված և հրաշքով վերապրող հայերի հուշեր են, ուր գերազանցապես պատմվում են հայերի կրած անլուր տառապանքների մասին։ Սակավաթիվ զեկուցագրերն էլ, որ պահպանվել են, գրված են հեռավոր վայրերից և դարձյալ վերաբերում են մեր ժողովրդի Golgոթային։

Քննարկվող հարցի մանակի լուսաբանմանը կարող են միայն նպաստել մինչև հայկական ջարդերը Արևմտյան Հայաստանում և Թուրքիայում գտնվող ձեռագրերի նկարագրությունները, լինեն դրանք տպագիր կամ անտիպ։ Դժբախտաբար պետք է նկատել, որ ԺԹ դարի վերջին տասնամյակներին է մասնավորապես, երբ մեզ մոտ սկսվեց ավելի մեծ հետաքրքրություն ստեղծվել դեպի մեր մագաղաթները։ Այս պատճառով էլ Համիդյան ջարդերից և անգամ մեծ եղեռնից առաջ կատարված ձեռագրական ցուցակագրումները շատ հեռու են Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայում եղող հայկական ձեռագրերի վերաբերյալ մեղ լրիվ գաղափար տալուց։

Այնուամենայնիվ, նախքան 1894—1896 թվականների Համիդյան ջարդերը, Արևմտյան Հայաստանում գոյություն ունեցող հայերեն ձեռագրերի մասին մեծարժեք աղբյուրներ են հանդիսանում ֆրանսիացի հայագետ Վ. Լանգլուայի, հայ նշանավոր բանասեր Գարեգին վարդապետ Սրվանձտյանցի, տոսպեցի հայտնի բանահավաք և գրող Ղևոնդ վարդապետ Փիրղալեմյանի, Հ. Կ. Ճանիկյանի և ուրիշների թողած ժառանգությունը։ Միայն հիշյալ հեղինակների գործերի ծանոթացման միջոցով է, որ հնարավոր է թեկուզ մի աղոտ պատկերացում ստանալ արևմտահայ ձեռագրական աշխարհի մասին և այդտեղից էլ փորձել հետևություններ անել այս բնագավառում ևս մեր կրած կորուստների մասին։

Ֆրանսիացի հայտնի հայագետ Վ. Լանգլուան առաջին անգամ դեռ 1855 թվականին իր «Ուղևորություններ դեպի միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքը՝ Սիս» փոքրածավալ գործի վերջին մասում շատ համառոտ նկարագրել է Սսում պահված 145 ձեռագրերը, որոնք վերաբերում են ԺԷ—ԺԸ դարերին, ուր կան գրչագրեր Մովսես Խորենացու պատմության, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Վարդանի, Գրիգոր Տաթևացու, Առաքել Սյունեցու գործերից, մեկնողական հարուստ գրականություն և այլն[1]։ Չնայած այս գործի մասնակի բնույթին և շատ համառոտ բովանդակությանը, այնուամենայնիվ այս շրջանում մեր առաջին և միակ ծանոթությունն է Կիլիկյան ձեռագրերի մասին։

Այս շրջանին վերաբերյալ իր ընդգրկման ծավալով շատ ավելի լայն տեղեկություններ է հաղորդում մեր ձեռագիր գանձերի մասին Գարեգին վարդապետ Սրվանձտյանցն իր «Հնոց և նորոց» և մանավանդ «Թորոս աղբար» երկու մասից բաղկացած աշխատությունների մեջ։ Սրվանձտյանցն իր առաջին գործում, հրատարակված 1874 թվականին, «Ցանկ ձեռագիր մատենից ի վանս Սրբոյ Կարապետին Մշոյ» խորագրի տակ, ցանկել է 139 ձեռագիր[2]։ Սակայն Արևմտյան Հայաստանի բազմաթիվ վայրերում գտնվող հայերեն ձեռագրերի գոյության մասին բացառիկ

[1] Victor Langlois, „Voyage à Sis, capitale de l'Arménie au moyen âge", Paris, 1855, p. 38—45.

[2] Գարեգին վարդապետ Սրվանձտյանց, «Հնոց և նորոց», կ. Պոլիս, 1874, էջ 140—149։

շանակություն ունեն Սրվանձտյանցի «Թորոս աղբար»[3] աշխատության առաջին և երկրորդ մասերը։

Գարեգին վարդապետ Սրվանձտյանցի հիշյալ գործերի ստեղծման առիթը հետևյալն էր։ 1878 թվականին, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Ներսես արքեպիսկոպոս Վարժապետյանը, անհրաժեշտ զգալով ունենալ Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության ցուցակը, երեք վարդապետների գլխավորությամբ ցուցակագրողներ է ուղարկում Ամասիայի, Մարզվանի, Եվդոկիայի, Շաբին-Գարահիսարի, Սեբաստիայի, Դիվրիկի, Ակնի, Չարսանջաքի, Արաբկիրի, Ջմշկածագի, Խարբերդի, Չնքուշի, Բալուի, Մալաթիայի և Փիարբեքիրի գավառները։ Ահա այդ ուղարկվածների մեջ էր նաև Գարեգին վարդապետ Սրվանձտյանցը, որը և կարողանում է իր ժողովրդին պարգևել «Թորոս աղբար»-ի երկու գրքերը, որոնք շարադրվել են ոչ միայն բանաստեղծական մեծ շնորհով և խոր հայրենասիրությամբ, այլև ճանաչողական մեծ նշանակություն ունեցան ու լիովին արդարացրին Հեղինակի կողմից առաջին մասի առաջաբանում գրված հետևյալ տողերը. «Հայը հայուն ծանոթացնել, հայը հայուն սիրել տալ է բոլորովին իմ փափագս և ջանքս»[4]։ Լինելով պատմական Արևմտյան Հայաստանի ամենից ավելի հայաշատ վայրերում, նա հնարավորություն ունեցավ մոտիկից հաղորդակից լինելու մեր ժողովրդի կյանքին ու ստեղծագործությանը։ Սակայն Սրվանձտյանցին իր այս ճանապարհորդությամբ վիճակված էր կատարելու նաև մի խոշոր ծառայություն։ Սրվանձտյանցն էր, որ կարողացավ առաջին անգամ, և ինչո՞ւ չէ, նաև մեծ մասով վերջին անգամ, հայագիտությանը ծանոթացնել Հայաստանում ցրված մեծ թվով ձեռագիր գանձեր, նշեց նրանց թիվը, բովանդակությունը, ժամանակը և մեջ բերեց հաճախ նաև ձեռագրի լրիվ հիշատակարանը։ Եթե նշենք, որ նրա եղած վայրերում այժմ համարյա հայեր չեն ապրում, իսկ նրա նշած ձեռագրերից շատերն էլ անհետ կերպով ոչնչացել են, ապա պարզ կլինի, թե ինչպիսի մեծ ծառայություն էր մատուցում անվանի բանասերը իր ժողովրդին։

Ահա համառոտ կերպով Սրվանձտյանցի թանկարժեք տվյալները։ Մարզվանի հայոց վանքից նկարագրում է 8 ձեռագիր, Ամասիայից՝ 3, այդ թվում մի երկաթագիր Ավետարան 1238 թվականից, գրված Կիլիկիայում, Զիլեում՝ 3, Թոքատում՝ 13 ձեռագիր, այդ թվում 1174 թվականին գրված երկաթագիր մի Ավետարան, և 10 այլ ձեռագրեր Ս. Հովակիմ և Աննայի վանքից։ Սեբաստիայում նշել է 89 ձեռագրերի մասին, իսկ առաջնորդի և վարդապետի մոտ՝ 20 ձեռագիր։ Դիվրիկի Ս. Լուսավորիչ վանքում և Ս. Աստվածածին եկեղեցում ևս 16։ Արաբկիրում կարողացել է օրինակել տալ միայն 1 ձեռագիր, Մալաթիայում՝ 2 ձեռագիր։ Ձեռագրերի նկարագրությամբ շատ ավելի հարուստ է նրա «Թորոս աղբար»-ի երկրորդ մասի երկրորդ բաժինը, որն ամբողջությամբ հատկացված է ձեռագրերի նկարագրությանը։

Բաղեշում, Խնդրակատար Ս. Աստվածածնի վանքից, Սրվանձտյանցը նկարագրում է 5 ձեռագիր, Ամրդոլու վանքի մատենադարանից՝ 1 ձեռագիր։ Նրա շրջակա մասերից նկարագրում է ևս 7 ձեռագիր. Վանի Ս. Վարդան եկեղեցուց և Մանազկերտից՝ 5 ձեռագիր։ Անշուշտ Սրվանձտյանցը դիտավորյալ կերպով Վանից այսքան քիչ ձեռագրեր է նկարագրել, քանի որ նրան քաջ հայտնի էր, որ դեռևս իրենից առաջ Վանի և շրջակայքի ձեռագրերով զբաղվել է Ղևոնդ վարդապետ Փիրղալեմյանը։ Նկարագրված ձեռագրերի թիվն է 1224 թվականի գրչությամբ մի Ավետարան։

Սրվանձտյանցը Երզնկայի եկեղեցիներից և վանքերից նկարագրել է 5 ձեռագիր, Կամախի Ս. Թադեոս առաքյալի վանքից՝ 9, Թորդանի տաճարից՝ 4, Ակնից՝ 3, այդ թվում «Սասունցի» կոչված Ավետարանը գրված 1169 թվականին և այլն։ Բինկա գյուղում՝ 3, այդ թվում ևս մի Ավետարան մագաղաթյա՝ «Սասունցի» անունով։ Խարբերդի և շրջակա վայրերում՝ 55 ձեռագիր, Ջմշկածագ և գյուղերը՝ 15, այդ թվում երկաթագիր մի Ավետարան 1227 թվականից։ Չարսանջաք և այլն՝ 10, Բալու և այլն՝ 8, Արղնի՝ 7 ձեռագիր և մի ցուցակ «Ձեռագիր մատեանք Բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանից Արղնոյ»՝ 147 ձեռագրի թվումով, այդ կարգին շարականոցներ, կանոնագիրք, Սամվել Անեցու «Ժամանակագրութիւն»-ը, Մովսես Խորենացու, Ստեփանոս Տարոնացու, Արիստակես Լաստիվերտցու պատմությանց մատյանները և այլն. նաև մի Ավետարան երկաթագիր 1223 թ.։ Տիգրանակերտում՝ 93 ձեռագիր, այդ թվում երկաթագիր Ավետարաններ՝ 1177 և 1242 թվականներից, վերջինը գրված Հռոմում։ Չնքուշի Սիրահայաց Ս. Աստվածածնի վանքից՝ 43 ձեռագիր և մի կոնդակ, այդ թվում շարակնոց, Փավստոսի պատմություն, գանձարան խազերով, բառարան և այլն։

Այսպիսով Սրվանձտյանցը իր վերոհիշյալ երկու աշխատություններում նկարագրել է ավելի քան 700 ձեռագրեր։ Սակայն կարո՞ղ

---

[3] Գարեգին վարդապետ Սրվանձտյանց, «Թորոս աղբար, Հայաստանի համբորդ», մասն առաջին, Կ. Պոլիս, 1879, մասն երկրորդ, Կ. Պոլիս, 1884։

[4] «Թորոս աղբար», Ա մաս, էջ ժ։

ենք սրանից հետևցնել, թե այդ շրջանում նրա այցելած մեծ թվով հայաշատ վայրերում թվով այդքան քիչ հայերեն ձեռագրեր են գտնվել։ Ամենևին էլ ո՛չ։ Սրվանձտյանցը, ինչպես նշում է, բազմաթիվ ձեռագրեր է տեսել, սակայն ժամանակ չի ունեցել բոլորը նկարագրելու։ Այս կապակցությամբ լավագույնն է լսել հեղինակի խոսքը ասված «Թորոս աղբար»-ի առաջին մասում. «Կատարյալ գործ մը չէ այս, վասնզի այնքան խուռն և կարևոր պաշտոններու մեջ, չէի կրնար լիովին ստորագրել և ամեն բան աչքի անցունել, այսուամենայնիվ որքան կրցա հավաքեցի և ի գիր անցուցի, տեղ-տեղ ալ ձեռագիր մատյաններու ցանկը ու հիշատակարանները օրինակելով, զորս իբր դուզնաքյա աշխատություն՝ բանասիրաց և ազգասիրաց փոքրիկ ճաշակ մը կընծայեմ»[5]։ Հաճախ նա նշում է, թե ժամանակ չի ունեցել անգամ թվելու իր տեսած ձեռագրերը։ Նա Մարզվանի եկեղեցու մասին գրել է. «Մարզվանի եկեղեցին ևս ձեռագիր մատյաններ ուներ, բայց անձեռնհաս եղա կրկտելու և հիշատակագիրերու թվականներն օրինակելու»[6]։ Ջիլեի մասին ևս գրել է. «Թեպետ բավական թվով ձեռագիրներ կային բայց ես ամենքը չկրցի տեսնել»[7]։

Տվյալ ժամանակաշրջանում ձեռագրերի ստվարության մասին են վկայում Եվդոկիայի վերաբերող Սրվանձտյանցի հետագա տողերը. «Նույնպես նոխ էր (ընդգծումը մերն է—Ս. Ք.) նաև Ս. Ոսկեբերանի վանքի գրադարանը, որո ձեռագիրներեն ցանկ և հիշատակարան օրինակելու միջոց չունեցա դժբախտաբար։ Մեծ ցավ եղավ սրտիս, որ Թոքատի եկեղեցվո ձեռագիր մատյանները, որ շատ հարուստ թիվ (ընդգծումը մերն է—Ս. Ք.) կկազմեին, չկրցա աչքե անցնել ամենքն ալ և պետք եղածն ընդօրինակելը։ Շարունակության մեջ հեղինակն ասում է նաև, որ «նույնիսկ տունները բավական ձեռագիր մատյաններ կան եղեր, կերևի թե Թոքատի ժողովուրդն ասկեց առաջ աղեկ ճաշակ ունեցեր է գրելու կարդալուն։ Նա նշում է նաև, որ քաղաքից բացակա եղող անձանց մոտ ևս գրքեր կային[8]։ Սեբաստիայի մասին Սրվանձտյանցի բերած ձեռագրերի ցանկը մենք դարձյալ լրիվ համարել չենք կարող, քանի որ նա գրում է, թե «Սեաստու մեջ բազմաթիվ են ձեռագիրները, բայց մենք մեր տեսածներու ցանկը և հիշատակարանները միայն կդնենք այստեղ»։

Դիվրիկի ձեռագրերի բերած ցանկից դուրս, ինչպես նշում է Սրվանձտյանցը, բազմաթիվ կանոնական և ծիսական գրքեր կային, որոնք վատ վիճակում էին պահված և ինք չի նկարագրել։ Արաբկիրի մասին ևս նա գրում է, որ եղած բազմաթիվ գրքերից միայն մեկն է, որ արտագրել տալով հիշատակել է։

Ամրդոլու նշանավոր մատենադարանի մասին նշում է, որ ձեռագրերը ցույց չեն տալիս այլոց և ինք «դուրս եղածները» միայն տեսել է։ Տիգրանակերտում իր նկարագրածներից բացի Սրվանձտյանցը գրում է, որ եկեղեցիների մեջ շատ մատյաններ կան, «Տանց մեջ ալ շատ կգտնվեին»։ Այդ շարքում նա հիշատակում է Վիեննայի Մխիթարյան բանասեր Հ. Մեսրոպ վարդապետ Ջենեսիլյանին, որը գրել էր Տիգրանակերտի և Միջագետաց պատմությունը (Քերովարտ), նրա «աչաց լույսը տուժած էր և անլույս կնստեր իր սենեկի մեջ, ուներ բավական թվով ընտիր ձեռագիր մատյաններ» (ընդգծումը մերն է—Ս. Ք.), որոնք իր գանձեր և միակ մխիթարանքն էին»[9]։

Ձեռագրերի ստվարությունը այդ վայրերում նկատի ունենալով էր, որ Սրվանձտյանցը գրում էր նաև հետևյալ տողերը. «Անշուշտ ինձ պատահածներեն շատ դեռ բազմաթիվ ձեռագիրք և հիշատակարանք կան նույնիսկ իմ շրջած տեղերը։ Ինչպես շատ և շատ կգտնվին մանավանդ Վանա կողմերը»[10]։ Հակառակ ձեռագրերի կրած մեծ կորուստներին, նրանց թիվը այնքան մեծ էր այդ շրջանում, որ այդ պատճառով էլ Սրվանձտյանցը եզրակացնում էր գրելով. «մարդ կհամարձակի ըսել թե՝ տպագրվածներե ավելի ունինք»[11]։ Անգամ գյուղերում մեծ թվով ձեռագրեր կային։ Սրվանձտյանցը Ջմշկածագի Հաղբուկ գյուղի վերաբերյալ գրում է. «Այստեղ հավաստեցին, թե Ջմշկածագցի Տեր Գրիգորի հայրը բեռ մը ձեռագիրէ (ընդգծումը մերն է—Ս. Ք.) տարած է այն գեղեն և խարտիշատու Ս. Կարապետ վանքին»[12]։

Այսպիսով Սրվանձտյանցի վերոհիշյալ բանկագին տեղեկությունները մեզ հավաստում են, որ տեսածներից բացի, իր եղած վայրերում մեծ թվով ձեռագրեր են եղել, որոնք չի տեսել, նույնպես տեսածներից ոչ բոլորն է կարողացել նկարագրել։ Բացի այդ, նա շատ վայրերում չի կարողացել լինել։ Նա չի եղել ոչ Կիլիկիայում, ոչ էլ Անատոլիայում և Թուրքիայի արևմտյան մասում և ոչ էլ պատմական բովանդակ Արևմտյան Հա-

[5] «Թորոս աղբար», Ա մաս, էջ ծ։
[6] Նույն տեղում, էջ 39։
[7] Նույն տեղում, էջ 77։
[8] Նույն տեղում, էջ 128—129։
[9] «Թորոս աղբար», Բ մաս, էջ 221։
[10] Նույն տեղում, էջ 251—252։
[11] Նույն տեղում, էջ 251։
[12] Նույն տեղում, էջ 365։

աստանում։ Ուստի Սրվանձտյանցի վերոհիշյալ նկարագրությունները միայն մի փոքր մասն են կազմում Արևմտյան Հայաստանի և մյուս հայաշատ վայրերում ջարդերից առաջ գտնված ձեռագրերի։ Սակայն նրա կողմից «բարեսիրաց և աղգասիրաց ընծայված այս փոքրիկ ճաշակն» իսկ հարուստ հետևություններ անելու կարևոր կռվան է հանդիսանում։

Արևմտյան Հայաստանում և Թուրքիայում գրված հայկական ձեռագրերի մասին մենք որոշ չափով պատկերացում ենք ստանում նաև շնորհիվ Ղևոնդ ծայրագույն վարդապետ Փիրղալեմյանի տպագիր և անտիպ աշխատություններին։ Չնայած Փիրղալեմյանը Սրվանձտյանից շուտ էր սկսել շրջել և հավաքել հայերեն ձեռագրերի հիշատակարանները, սակայն նրանից ուշ է, որ հանդես եկավ իր «Նոտարք հայոց»[13] գրքով, ուր ամփոփեց 1383—1467 թվականներին վերաբերող ձեռագիր հիշատակարաններ մեծ մասամբ Վասպուրականից, սակայն նա անձամբ կարողացել է լինել նաև հայաշատ բազմաթիվ վայրերում և կամ ուրիշների միջնորդությամբ բազմաթիվ ձեռագրերի հիշատակարաններ է ամփոփել, սկսած Կարինից մինչև Կոստանդնուպոլիս։ Շատ ավելի հարուստ են Փիրղալեմյանի անտիպ մնացած «Ցիշատակարանք կամ նշխարք պատմութեան Հայոց» հիշատակարանների ժողովածուները, որոնք պահվում են Մաշտոցի անվան մատենադարանում[14]։ Չնայած, որ նրա երեք ժողովածուներն էլ շատ բանով կրկնում են իրար, սակայն մյուս կողմից էլ նրանք լրացնում են մեկը մյուսին։ Շատ ավելի մեծ է Փիրղալեմյանի ձեռագիր հիշատակարանների ընդգրկման ծավալը, քանի որ այն բովանդակում է սկսած մեր թվակիր հնագույն 887 թվականին գրված և գիտությանը ապա հայտնի լազարյան Ավետարանից մինչև ԺՐ դարը և բերում է շուրջ 1 000 հիշատակարան։

Չնայած Փիրղալեմյանը դեռ Սրվանձտյանից ավելի քան 10 տարի առաջ (1864—1865) է լինում վերջինիս լինելիք բազմաթիվ վայրերում, այնուամենայնիվ Փիրղալեմյանի տվյալները (որոնք դարձյալ ամբողջական լինել չեն կարող, քանի որ նրա ձեռագրերից շատերը իր մահից հետո այրվել են, իսկ ինքն էլ հնարավորություն չի ունեցել լինելու բոլոր հայաշատ վայրերում), տարբերվում են Սրվանձտյանից։ Արաբկիրից եթե միայն մեկ ձեռագիր է ներկայացրել Սրվանձտյանցը, ապա Փիրղալեմյանի մոտ, այն էլ ոչ լրիվ տվյալներով, այդ թիվը հասնում է 15-ի, Մարզվանում 8 ձեռագրի տեղ՝ 15, Ամասիայում 3 ձեռագրի փոխարեն ինչքան ցույց է տվել Սրվանձտյանցը, Փիրղալեմյանի մոտ այդ թիվը հասնում է 15-ի։ Փիրղալեմյանը նշում է նաև այլ ձեռագրական կենտրոնների մասին, որոնք դուրս են մնացել Սրվանձտյանցի տեսադաշտից. այսպես՝ Կոստանդնուպոլսի զանազան մատենադարաններից նա նշում է շուրջ 36 ձեռագիր, Ռոդոստոյից (Թեքիրդաղ)՝ 11, Զմյուռնիայից՝ 12, Նիկոմիդիայից՝ 4 և այլն։

Այսպիսով, Փիրղալեմյանի հատկապես անտիպ նյութերի օգնությամբ կարելի է լինում եզրակացնել, որ տվյալ ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի գրեթե բոլոր հայաշատ վայրերում հայերեն ձեռագրեր են եղել, որ Սրվանձտյանցի տվյալները, ինչպես ինքն էլ հայտնել է, ամբողջական չեն, իսկ Փիրղալեմյանի գործերը ևս, չնայած իրենց որոշ առավելություններին, այնուամենայնիվ շատ հեռու են արևմտահայ ձեռագրական աշխարհը լրիվ պատկերացնելուց։ Թեև Սրվանձտյանցը ճիշտ կերպով իր ժամանակին նշում է, որ ձեռագրերը բավականին վայրեր էին փոխել և հաճախ տեղափոխվել իրենց ծնունդ առած վայրից շատ հեռու, սակայն և այնպես Փիրղալեմյանի հիշատակարաններից մեծ մասամբ երևում է նաև այն, որ մինչև 1894—1896 թվականների Համիդյան կոտորածները, հայերեն ձեռագրերի մի կարևոր մասը դեռևս գտնվում էր իր այն գրչության վայրում, ուր նա ստեղծվել էր դարեր առաջ։

Առանձին քաղաքների մատենադարանների մասին ԺԲ դարի վերջին լույս տեսան նաև մի շարք մասնակի գործեր, որոնցից են Տրդատ եպիսկոպոս Պալյանի Կեսարիայի մի շարք եկեղեցիներում և վանքերում գտնվող ձեռագրերի ցուցակները, Հ. Կ. Ճանիկյանի՝ Ակնի ձեռագրերի մասին տված տեղեկությունները, Ա. Ս. Միհրդատյանի և Հ. Հակոբոս Տաշյանի՝ Ֆոնուզի Ս. Կարապետ վանքի ձեռագրացուցակը, գերմանացի հայագետ դոկտ. Ֆրեդերիկ Մյուլլերի հրատարակած գերմաներեն համառոտ ձեռագրացուցակները Արղնիի (Արղանա), Սեբաստիայի և Չնքուշի հայերեն ձեռագրերի վերաբերյալ, որը ճանաչողական նշանակությունից բացի, միջազգային ասպարեզ բերեց մեր ձեռագիր գանձերի կարևորությունն ու արժեքը, և այլն։

Այս բոլորի մեջ ընդարձակ կամ համառոտ ձևով նկարագրվել է Արևմտյան Հայաստանում գտնվող մոտ 400 ձեռագիր։ Փիրղալեմյանի գործերից երևում է, որ նա օգտվել է նաև Արսեն վարդապետ Թոխմախյանի և

---

[13] «Նոտարք հայոց։ Հաւաքեալ և ի լոյս ածեալ ձեռամբ Ղևոնդ վարդապետի Փիրղալեմեան Տոսպեցւոյ, վարագայ վանուց վանականի», կ. Պոլիս (անթվական)։

[14] Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրեր № № 6273, 4515, 6232։

Խորեն Խրիմյանի կողմից կազմված ձեռագրացուցակներից։ Գիտենք, թե դրանք անտիպ են եղել, սակայն թե ո՞ւր են գտնվում այժմ, մեզ հայտնի չէ։

Քաջ գիտակցելով մեր ժողովրդի ձեռագրական հարստության նշանակությունը, ԺԹ դարի վերջերին Արևմտյան Հայաստանում և Թուրքիայում արդեն իսկ դարեր առաջ գոյություն ունեցող մատենադարաններն սկսում են վերակազմվել, ստեղծվում են նաև նոր թանգարաններ։ Այս շարքից են Մուշի Ս. Կարապետը, Վարագա Ս. Նշանը, Աղթամարը, Սիսը, Արղնիի Բարձրահայաց Ս. Աստվածածինը, Լիմ և Կտուց անապատները, Սեբաստիայի Ս. Նշանը, Արմաշի Ջարխափան Ս. Աստվածածինը, Կեսարիայի Մ. Կարապետը, Ս. Փրկիչ հիվանդանոցը, Ղալաթիայի մատենադարանը, Զմուռնիայի թանգարանը, Մուշի Ս. Առաքելոց վանքը, Բաղեշի Ամրդոլի վանքը, Եդեսիայի թանգարանը և այլն։

***

Երբ Աբդուլ Համիդ Բ արյունարբու սուլթանն սկսում էր 1894—1896 թվականներին գործադրել հայերին բնաջինջ անելու իր վաղուց ծրագրած սև գործը, Թուրքիայի, Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայաշատ վայրերում հայ ժողովրդի լավագույն զավակները կարողացել էին ժամանակի ավերիչ ճիրաններից փրկել և հավաքել հազարավոր ձեռագրեր և սկսել էին առաջին քայլերն անել՝ նրանց գիտությանը ճանաչելի դարձնելու և միջազգային ասպարեզ դուրս բերելու ուղղությամբ։ Սակայն շատ շուտով սուլթանական յաթաղանի և Համիդիե կոչված ավազակախմբերի միջոցով փորձվեց . կասեցնել հայ ժողովրդի առաջընթացը՝ նրա լույսի տաճարները արյան ավազանների վերածելով։ 300 000-ից ավելի հայեր տանջամահ արվեցին, թալանվեցին և քանդվեցին հարյուրավոր վանքեր ու եկեղեցիներ, անարգվեցին, այրվեցին ու պատառոտվեցին դարերին դիմացող և հրաշքով մինչև այդ օրերը վերապրող մեր ձեռագրերը։

Դեռևս չի գրված հայկական կոտորածների ընթացքում մեր կրած ձեռագրական կորուստների պատմությունը, սույն համեստ ուսումնասիրությունը լոկ մի փորձ է այս ուղղությամբ և հետևաբար հեռու է ամբողջական լինելուց։ Սակայն հետագայի երկարատև նորանոր ուսումնասիրությունները կարող են է՛լ ավելի լրացնել մեր սկսած գործը։

Ցարդ ճշգրիտ ոչինչ չգիտենք ինչպես այս, այնպես էլ հետագա ժամանակաշրջանի ձեռագրական մեր կորուստների մասին։ Ինչպես ասացինք, կոտորածներին ականատես եղողների կողմից հայաբնակ վայրերից ուղարկված և հայկական պարբերական մամուլում տպված բազմաթիվ զեկուցագրերը գրեթե ամբողջությամբ նվիրված են մեր ժողովրդի կրած դառն տառապանքներին և կրուստներին։ Եվ իսկապես, ի՞նչպես կարելի էր մարդկային ամեն հասակի պատկանող զոհերի ապրած աննկարագրելի նախճիրը թողած, գրել նյութական և մշակութային կրուստների մասին, երբ հարցականի տակ էր դրված այդ բոլորն ստեղծող ժողովրդի ամբողջ գոյությունը։ Այնուամենայնիվ, տվյալ ժամանակաշրջանի հայկական թերթերում հրատարակված զեկուցագրերի և լուրերի պրպտումը, որքան էլ մասնակի, սակայն և այնպես որոշ գաղափար է տալիս նաև մեր ձեռագիր գանձերի և հնատիպ մատյանների ոչնչացման մասին։

1896 թվականին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքը իր թաքրիրով բարձրագույն դռան հայտնում էր, որ «Քանդվածներն ու վնասվածները հայոց սրբարաններն են, թվով 400-են ավելի»[15]։ Սակայն այդ թիվը անշուշտ ամբողջական չէր. քանի որ ջարդը հայաբնակ վայրերում համատարած բնույթ էր կրել և, ինչպես նշում է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, «վերև գծված սահմաններուն մեջ վանք չէ եղած, որ անձեռնմխելի մնացած ըլլա, եկեղեցի չէ մնացած, որ կամ քանդված կամ պղծված կամ մզկիթի փոխարկված չըլլա»[16]։ Ահա այս ժամանակաշրջանում է, որ, ինչպես գրում է դարձյալ Օրմանյանը, ծիսական գրքերը ևս պատառոտվեցին[17]։

Այժմ նշենք մի քանի կարևոր փաստեր այս ուղղությամբ։

Կոտորածների ընթացքում ծանր վնասներ կրեցին նաև Վասպուրականի հուշարձանները։ 1896 թվականի մի տեղեկագրից քաղում ենք հետևյալ տողերը. «Մահմեդական խուժանն յուր կատաղությունը ամենեն ավելի թափեց հայ վանորեից, եկեղեցյաց, դպրոցաց և մատենադարանաց վրա (ընդգծումը մերն է—Ս. Ք.)։ Ասոնք այսօր առհասարակ ավերակաց կույտեր դարձված են, մանավանդ գյուղերուն և գավառներուն մեջը։ Աղթամարի վանուց դրսի տունը, ուր ամփոփված էր վանքի բոլոր հարստությունը, կողոպտվեցավ։ Կողոպտվեցան և մեծավ մասամբ այրեցան Նարեկի, Վարագի, Կարմրավորի, Ս. Խաչի, Ս. Գրիգոր Լուսավորչի, Մե-

[15] «Դրոշակ», 1896, № 13, էջ 100։

[16] Մաղաքիա արհիպիսկոպոս Օրմանյան, «Ազգապատում», Գ, էջ 5030։

[17] Նույն տեղում, էջ 5029։

ծոփա, Ս. Աստվածածնա, Սպիտակ վանուց և այլն մեծ ու փոքր վանորայք, և վանահայրք ու միաբանական անդամք ալ մեծավ մասամբ սպանվեցան։ Կողոպտվեցան դարձյալ Լիմ և Կաուց անապատներուն դրսի տներն և Ս. Էջմիածնի վանքը։ ... Կողոպտվեցան դարձյալ վանորեից և եկեղեցյաց եկեղեցական թանկագին սպասներն, անոթներն, սփռոցներն և այլն, որոնց գումարը կկազմե ահագին հարստություն։ Միայն Նարեկի և Վարագա վանուց կողոպտած շարժական և անշարժ հարստությունը կհասնի 5—1000 լիրայի, թողունք նշանավոր հնություննները, հին ձեռագիրները, մատենադարանները, որոնք կողոպտվեցան և կամ բզիկ-բզիկ կատրվեցան» (ընդգծումը մերն է—Ս. Ք.)։ Շարունակության մեջ ասված է, որ այժմ ավարառուները ծախել են ուզում կամ ջարդել են տալիս արծաթյա և ոսկյա սրբազան անոթներ, արծաթապատ կամ ոսկեպատ Ավետարանները և այլն[18]։ Ըստ եղած վիճակագրական տվյալների, Վանի գավառների հրդեհված եկեղեցիների թիվն է եղել 8, իսկ վառված կամ թալանված վանքերինը՝ 20[19], նույն ժամանակաշրջանում Բաբերդի գյուղերում թալանված և մասամբ կործանված են 36 եկեղեցի[20]։ Լուսնկ գյուղի մեջ Ս. Ավետարանը հազար կտոր են արել, փողոցը ձգել և ոտքի տակ տվել[21]։

Երզնկայի շրջանում բազմաթիվ գյուղեր ու վանքեր կործանվեցին։ Այս վերջինների թիվն էր 12 վանք, որոնցից հիշատակելի են Ջարչարանաց Ս. Լուսավորիչ, Ս. Գևորգ, Ս. Հակոր, Ավագ վանք, Ս. Նիկողոս, Սեպուհի Լուսավորիչ և այլն[22]։

Հայ վանականները և հայ աշխարհականները քաջաբար կարողանում են դիմադրել Խիզանի Ս. Խաչ վանքում, սակայն Քշնամին նենգորեն կարողանում է մտնել վանքի դռներից ներս և մորթազերծ անում վանահայր Սահակ վարդապետին։ Հայերը մինչև իրենց վերջին շունչը դիմադրում են և ընկնում պատվով։ Ազատվող միակ անձը, որ կռվում վիրավորվել և սակայն կարողացել էր թաքնվել, նկարագրում է, թե ի՛նչպես վանքը կողոպտվում է և այրվում։ Եկեղեցում ոչինչ չէր մնացել, արծաթյա անոթները տարել էին, ջարդոտել էին պատերի քանդակները, քանդել դարբասը և այլն։ Միաբանության խուցերը, առաջնորդարանը, բոլորը տակնուվրա էին արել, գրադարանը նույնպես, որը պարունակում էր իր մեջ 1 000-ի չափ ընտիր գրքեր, որոնք «Խիզանյան ընկերության» քրտնաջան աշխատության արդյունքներն էին։ Ականատեսն ի վերջո գրում էր. «Աչքերիցս սկսեց հոսել արտասուքը, երբ տեսա բոլորը մոխիր դարձած»[23]։

Ո՛վ գիտե ինչքան չուսումնասիրված թանկարժեք ձեռագրեր և հնատիպ գրքեր կային այդ 1 000 հատորանոց գրադարանում և որոնք բոպեական մոխիր դարձվեցին։

Կոտորածը Խիզանից հասնում է Սպարկերտ։ Մի զեկուցագրում կարդում ենք. «Հիմնահատակ ավերված են բոլոր եկեղեցիները և վանքերը, ոմանք էլ մզկիթի փոխած։ Այրած են բոլոր եկեղեցական գրքերը, մեծ մասը հայի ձեռքով և եկեղեցական զգեստները»[24]։

Տիգրանակերտ քաղաքից 12 ժամ հեռու գտնվող «դարավոր և թանկագին հնություններովն նշանավոր Բարձրահայաց անունով վանքը, բոլորովին կողոպտելե, մերկացնելե հետո միաբանությունը սրե անցուցած են»։ Նույնպես Սադի գյուղում ըստ ավանդության Ս. Թադեոս առաքյալի կառուցած Ս. Խաչ մատուռը, որ դարեր շարունակ ժողովրդի սրբավայրն էր, մոխրակույտի է վերածված»[25]։ Ի՛նչքան արժեքների հետ ո՛վ գիտի ո՛րքան թանկարժեք գրչագրեր իսպառ ոչնչացան այս վանքերում, իրենց լույսը թողած մթությունը գրկելով։

Երբ 1897 թվականին Վարագա վանքը կողոպտվեց և մասամբ էլ այրվեց, նրա արժեքավոր գրքերը բարերախտաբար ազատվեցին[26]։

Հայ արժեքների ոչնչացման տխուր պատկերը նույնն էր, սկսած Տրապիզոնից մինչև Եդեսիա, Կոստանդնուպոլսից մինչև Կարին։ Կատրասի եկեղեցում (Տրապիզոնից արևելահարավային կողմում) ժամագրքերը կըտրատվեցին ու այրվեցին և սրբապատկերները պղծվեցին[27]։

Սույն կոտորածների ընթացքում ծանր հարված կրեց նաև Եդեսիայի (Ուրֆա) հայությունը։ Չնայած հանդուգն ուրֆացիների ցուցաբերած ուժեղ դիմադրությանը, քաղաքի մեծ եկեղեցում ապաստանած կանայք, երեխաներ, տարեցներ, թվով 3 000 հոգի, սրի քաշվեցին և ողջ-ողջ այրվեցին։ Եվդոկիայի պատմության հեղինակ Աբրահամ քահանա Արևյանը, որը և այս դեպքերի նահատակներից մեկը եղավ, դեռ 1877 թվականին բազ-

18 «Արարատ», Վաղարշապատ, 1896, էջ 585։
19 Նույն տեղում, էջ 586։
20 «Դրոշակ», 1896, № 1, էջ 15։
21 «Արարատ», 1896, էջ 87—88։
22 «Դրոշակ», 1896, № 4, էջ 29։
23 «Դրոշակ», № 16, էջ 123։
24 Նույն տեղում, № 10, էջ 86։
25 Նույն տեղում, № 10, էջ 77։
26 Նույն տեղում, 1898, № 4, էջ 38։
27 Նույն տեղում, 1896, № 6, էջ 45։

մաթիվ ձեռագրեր էր հավաքել և հիմքը դրել մի բանգարանի։ Հայոց եկեղեցու վրա հարձակվող խուժանը իր գոգն էր լցրել Ավետարանները, սրբոց մասունքները և ծաղրուծանակի էր ենթարկում նրանց։ Թշնամիները, հարձակվելով ժամարար քահանայի սենյակի վրա, եկեղեցու սնդուկի գրասենյակը մտան և կողոպտեցին բոլոր իրերը և այնտեղ գտնված «տոմարները և եկեղեցական հին պատմագրքերը պատառոտեցին»[28]։ Ունենք հավաստի տեղեկություններ, որ դեռ 1882 թվականին քաղաքի նորաստեղծ մատենադարանում ձեռագրերի թիվը 94 էր, իսկ տպագրվածներինը՝ 228։ Հիշվում է, որ ձեռագրերի մեջ մինչև 730 տարի առաջ (հաշվելով 1882 թվականից—Ս. Ք.) գրված մագաղաթյա գրքեր կային[29]։

Արյունարբու Համիդի գահընկեցությունից հետո, 1910 թվականին, հայտնվում էր, որ Եդեսիայի հայոց եկեղեցին 1895 թվականին ձեռագրերից կողոպտվելու ժամանակ, կորած է նաև ոսկեզօծ ուրվագրատ մի ճոխակազմ Ավետարան, գրված 1248 թվականին, գրել տրված Կոստանդին Ա Կիլիկիայի հայոց թագավորի կողմից, Կիրակոս գրչի ձեռքով, և նվիրված Կոստանդին թագավորի և Զապել թագուհու կողմից, «ի վայելումն արքայորդւոյ նոցին Լևոնի»։ Այս Ավետարանը Կիլիկիայի անկման շրջանում հափշտակվել էր թաթարների կողմից։ Ազատելով այն, Եդեսիայի Ս. Աստվածածին եկեղեցուն էր նվիրել ուրհայեցի խոջա Արսլանը[30]։

Ակնա մոտի Բինկյանի Ս. Հրեշտակապետ եկեղեցում այլ ձեռագրերի շարքում գտնվող մագաղաթյա փոքրագիր Ավետարանը, որ չքնաղ մանրանկարներով էր պատրաստված և ԺԲ դարի վերջում Կոստանդնուպոլսում կրկին կազմվելով բերվել էր այստեղ և այդ ժամանակ այն գնահատվում էր 200—300 թուրքական հնչուն ոսկի, 1895 թվականի դեպքի ժամանակ այն ևս այրվեց[31]։

Բավականին թվով գրչագրեր ոչնչացան նաև Մարաշում։ 1895 թվականին փչացավ մագաղաթյա 300 տարվա ընտանեկան մի հիշատակարան, որը պահված էր Թիթեղյա տուփի մեջ, մի սենյակի առաստաղի ծակում։ Այնտեղ նկարագրված էր նաև Շահրաբասի ժամանակ հայերի գաղթի պատմությունը[32], Քաղաքի Ս. Գևորգ եկեղեցու դպրոցի դիմացը, «խուց»-ի մութ ու խոնավ պահարաններում, դիզված էին մագաղաթյա ստվար հատորներ, կողքերը կաշեպատ տախտակներով ամուր կազմված, Հայսմավուրք, Ժամագիրք և եկեղեցական ուրիշ գրչագիր մատյաններ։ Հետո այդ գրչագրերը այրվեցին 1895-ի ջարդի հրդեհի մեջ[33]։

Հ. Հ. Քոսյանը, որ ցուցակագրել է նաև Կարնո գյուղերի ձեռագրերը, Կարինի Կրիչք գյուղի Քրիստոս Թագավոր եկեղեցում 1912 թվականին տեսած և ցուցակագրած մի Ավետարանի մասին տվել է հետևյալ ծանոթությունը. «Ավետարան գրված 1466 թվականին Խաթում, Մկրտիչ քահանայի կողմից»։ «Կրիչք գյուղի Ավետարանս ունի եղեր արծաթապատ հաստ կողեր, խաչ և զարդեր վրան, դեպքի տարին եկեղեցվո արծաթ սպասներու հետ կգողնան նաև Ավետարանս, արծաթապատ կողերը կքաշեն կհանեն վրայեն և առանց կողքի կնետեն առվակի մը վրա դրված կամուրջին տակ։ Ժամանակ անցնելե հետո կգտնվի Ավետարանս. կազմել կտրվի և կդրվի դարձյալ եկեղեցվույս խորանաց վրա, բայց պարզ կազմով, զրկված յուր նախկին արծաթ կողերեն և զարդերեն»[34]։ Չգիտենք, թե այս փրկված Ավետարանը ազատվե՞ց արդյոք 1915 թվականի մեծ եղեռնից։

Թշնամին Ադելջևազ գավառում կողոպտել էր բազմաթիվ վանքեր։ Եկեղեցիներից հափշտակված քահանայական զգեստները հագնվելով, ձեռքներին խաչ և Ավետարան, անամոթ պարեր էին պարում և ծաղրի ենթարկում։ Մզկիթների փոխակերպված եկեղեցիներում և վանքերում Ղուրան են սկսել քարոզել մոլլաները[35]։

Թե ինչքա՜ն շատ են եղել հայկական եկեղեցիներում և վանքերում ոչնչացված գրքերի թիվը, այդ երևում է նաև Կոստանդնուպոլսի պատրիարք Մատթեոս արքեպիսկոպոսի 1896 թվականի 28 դեկտեմբեր թվակիր գրությունից, ուղղված Էջմիածին, Ամենայն Հայոց Կաթողիկոսին, ուր հայտնում է, որ կողոպտված եկեղեցիներում եկեղեցական պաշտամունք կատարելու համար, անհրաժեշտ են եկեղեցական անոթներ, զգեստներ և «եկեղեցական մատյաններ»։ Նույն դիմումում պատրիարքը հայտնել էր նաև, որ այս

---

28 Աբամ Սահակյան, «Դյուցազնական Ուրֆան և իր հայրդիները», Բեյրութ, 1955, էջ 25, 360, 363։

29 «Արձագանք», Թիֆլիս, 1882, № 27, էջ 422։

30 «Արևելք», Կ. Պոլիս, 1910, № 7282, էջ 1։

31 «Ակն և ակնցիք», նախաձեռնեց և հավաքեց Առաքել Քեշյան, աշխատասիրեց, դասավորեց և խմբագրեց Մկրտիչ Պարսամյան, Փարիզ, 1952, էջ 110։

32 Գրիգոր Հ. Գալուստյան, «Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթունն», Նյու-Յորք, 1934, էջ 573։

33 Նույն տեղում, էջ 429։

34 Հ. Հ. Քոսյան, «Ծուցակ ձեռագրաց Կարնո գյուղերու», տե՛ս «Հանդես ամսօրյա», 1963, էջ 38։

35 «Արարատ», 1896, էջ 89։

պատակով կազմված մասնախումբը հնարավորություն չունեցավ գնել «զարթամատեանս», այդ պատճառով էլ նա դիմում է Եհհափառ Հայրապետին՝ Մայր Աթոռից նվիրելու «զեկեղեցական մատեանս ի պէտս կոտրտանել եկեղեցաց, որպէսզի կարող իցեն ահանայք կատարել զկանոնական ժամերգութիւնս և զխորհուրդ սրբոյ պատարագի»[36]։

Եթե նույնիսկ ոչնչացված եկեղեցական գրքերի մի մասը հնատիպ էր, ապա կասկածից դուրս է, որ ամեն տեղ դեռ շատ կային ամենաձեռագիր մատյաններ, որոնք այդ շրջանում եկեղեցիներում դեռևս առօրյա գործածության մեջ էին։

Եվ ահա այս տարիներից հետո, թերթերում տպագրված Արևմտյան Հայաստանի վերաբերյալ լուրերը հիմնականում հաղորդում էին կոտորածներից տուժած եկեղեցիների ու վանքերի վերանորոգության, գրքերի ձեռքբերման և որբանոցների ստեղծման մասին։

Մեր հնադարյան ձեռագրերի մեջ հաճախ հիշատակարաններում գրված է ոչ միայն ձեռագրի պատմությունը, այլև զանազան տեղեկություններ նաև հայերի կրած տառապանքների մասին։ Հայաջինջ կոտորածները այս բազմաթիվ ձեռագրերում իրենց արձագանքը գտան. 1894—1896 թվականների հարածանքի տարիներին վերաբերյալ բերենք մի նմուշ մի ձեռագրից, որն այժմ պահվում է Փարիզում։ Տիգրանակերտի Ս. Սարգիս եկեղեցուն պատկանած այս ձեռագիրը ևս հափշտակվեց և կրկին ազատվելուց հետո, Տիգրանակերտի առաջնորդ եղբկիել վարդապետ Արշակունին հետևյալ հիշատակարանը գրեց նրա էջերում.

«Տիգրանակերտ. 1895 թվին Քրիստոսի, Հոկտեմբեր 20, օսմանցոց Համիդ թագավորի ժամանակին մեծ ջարդ մը տրվեցավ հայոց ազգին։ Բոլոր Հայաստանի մեջ գտնված Հայոց եկեղեցիները հափշտակվեցան, ունեցած հնութիւնները և սուրբ անոթները պղծվեցան, ցիրուցան եղան։ Սուրբ Ավետարանը մեծ քանակութիւնեմբ անօրեն տաճիկներեն առնվեցավ։ Արդեն Տիգրանակերտի Ս. Սարգիս եկեղեցիին կպատկաներ և իր սեփականութիւնն էր, ի փառս Քրիստոսի Փրկչին մերոյ և ի պատիւ Հայկազյան տոհմի, ամէն...»[37]։

Բերված փաստերից կարելի է եզրակացնել, որ հազարավոր ձեռագրեր և հազվագյուտ տպագիր գրքեր ոչնչացան 1894—1896 թվականների կոտորածների ժամանակ և իրենց հետ լուության մատնվեցին բոլորովին չուսումնասիրված և ո՛վ գիտի գիտության համար ինչպիսի առեղծվածներ լուծելու սահմանված մագաղաթներ...։ Սակայն Համիդյան վարչակարգը ձեռագրերի ոչնչացման մասին չէր թույլատրում գրել և ոչ մի տող։ Բանասեր Բաբգեն վարդապետ Կյուլեսերյանը (ապա աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո), 1901 թվականին «Հին ձեռագրներ» խորագրով իր ուշագրավ հոդվածաշարում[38], խոսելով ձեռագրերի ոչնչացման պատճառների մասին, թվելով հանդերձ փչացման նպաստող ամենաերկրորդական պատճառները, գիտակցորեն ստիպված լռում էր գրելուց ամենամեծ պատճառների, ինչպես թաթար-մոնղոլական, այնպես էլ միայն դեռ 4 տարի առաջ Համիդյան ջարդերի հետևանքով ոչնչացված մեծ թվով ձեռագրերի մասին։ Համիդը փոխարեն սպասում էր միայն գնահատական և արևշատության մաղթանքներ...։

Լուռ կերպով ոչնչացվել էին թանկագին նշխարները հայ անցյալի և իրենց հետ տարել դարերի գաղտնիքը...։ Մինչև վերջ համր էր մնացել նրանց լեզուն և պարտադրվում էր նաև, որ նրանց ոչնչացման մասին էլ մարդիկ միշտ լուռ մնային...։

***

Հայը հազիվ սկսել էր մասամբ բուժել իր ստացած ծանր վերքերը, երբ 1909 թվականին տեղի ունեցավ Կիլիկիայի չարաբնեզ աղետը, ուր 30 000-ից ավելի անմեղ հայեր տանջամահ արվեցին երիտասարդ թուրքերի մեղսակցությամբ։ Ի՛նչ փույթ, թե շուտով դահիճ Աբդուլ Համիդ Բ-ը գահընկեց էր արվում, այժմ նրանից ոչնչով չէին ուզում ետ մնալ նրա դեմ պայքարող երիտասարդ թուրքերը։

Համիդյան ջարդերի նույն տխուր պատկերը կրկնվեց նաև հայկական Կիլիկիայում։ Այրվեցին Ադանայի նահանգում՝ Ադանայի, Տարսոնի, Հաջընի, Դյորթ-Յոլի և այլ վայրերի 24 եկեղեցիները, իսկ Հալեպի նահանգում 7 եկեղեցիներ հրկիզվեցին կամ թալանվեցին[39]։ Կասկածից վեր է, որ այս ժամանակ ևս այրված և թալանված այդքան սրբավայրերի մեջ պետք է, որ ոչնչացված լինեին նաև բազմաթիվ ձեռագիր մատյաններ։

Կիլիկյան կոտորածը սակայն անջնջելի է մնալու մեր մատյանների պատմության մեջ

---

36 «Արարատ», Վաղարշապատ, 1896, էջ 142։

37 Ներսես արքեպիսկոպոս Այտընմեյան, «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Եվրոպայի մասնավոր հավաքումներու», Ա, 1950, Փարիզ, էջ 25։

38 «Բյուզանդիոն», Կ. Պոլիս, 1901, № 1399։

39 Հակոբ Թերզյան, «Կիլիկիո աղետը», 1909, Կ. Պոլիս, էջ 254։

պատահած մի եզակի դեպքով։ Այդ զգայացունց եղելությանը մարդիկ միայն այն ժամանակ կարողացան ականատես լինել, երբ Ադանայի կողքին գտնվող Հասան-Բեյլիում մի փոքրաթիվ հայություն հերոսաբար դիմադրելով, ի վերջո ընկավ զենքը ձեռին, թշնամու անհավասար ուժերի առջև։ Մեծ եղեռնի նահատակ, զգայուն գրչի տեր Ներսես եպիսկոպոս Դանիելյանը (ավելի ծանոթ իր Սսական վարդապետ և ապա Սսական եպիսկոպոս ծածկանունով) ականատես է լինում մի անսովոր տեսարանի։ Նա պատմում է, թե ինչպե՛ս ջարդից վերապրողները վերադառնում են իրենց այրված ու մոխրացած գյուղը և սկսում են այս ու այն կողմ իրենց սիրելիների ընկած դիակները հավաքել ու թաղել. գտնում են նաև Տեր Պետրոսի մարմինը։ Երբ բզկտված վերարկուն ու պարեգոտը հանում են՝ նրա մարմինը պատանքելու համար, քահանայի կրծքի վրա գտնում են արյունոտած մի Մաշտոց, որն իր հոտի սիրով միշտ բաբախուն սրտի հետ սվինահար էր եղել...։ Ներսես եպիսկոպոս այդ Մաշտոցով է, որ շրջել է գյուղից գյուղ և իր կատարած մկրտություններից մեկի ընթացքում, հուզված իր ձեռքի սվինահար Մաշտոցից, երեխայի անունը դրել էր Սվիճ. և ի վերջո այդ Մաշտոցը հանձնել էր Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսարանին, որպեսզի հատուկ հիշատակագրով պահեն այն վանքի գանձարանում[40]։ Չգիտենք, թե սվինահար Մաշտոցը ոչնչացա՞վ արդյոք մեծ եղեռնի ժամանակ, ինչպես որ նահատակվեց այն հայտնաբերող և նվիրող բացառիկ հայրենասեր սրբազանը, թե՞ փրկվեց։ Համենայն դեպս, սվինահար Մաշտոցը հայ գրքի ճակատագրի ամենապերճախոս վկան է մնալու առհավետ։

***

Մեծ եղեռնին նախորդող տարիներին, Արևմտյան Հայաստանում գտնվող հայերեն ձեռագրերի ուսումնասիրության ուղղությամբ որոշակի աշխատանքներ են կատարվել։ Մեծանուն հայագետ Հ. Հակոբոս Տաշյանի կողմից կազմված Վիեննայի Մխիթարյան միաբանության ցուցակը դառնում է դասական օրինակ այլ վայրերում գտնվող ձեռագրերը ևս նույն ձևով ցուցակագրելու և վանքերի մութ պատերի խորը մնացած մեր ձեռագիր արժեքները լույս աշխարհ բերելու և հայագիտությանը ճանաչելի դարձնելու ուղղությամբ։

Հայ ձեռագրագիտության մեծանուն վաստակավորը հանդիսացող Գարեգին վարդապետ Հովսեփյանցը (հետո Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո), 1911—1914 թվականներին գիտական ուղևորություններ է կատարում դեպի Արևմտյան Թուրքիայի և Փոքր Ասիայի շրջանները։ Նա գնում է Կոստանդնուպոլիս, Զմյուռնիա, Սեբաստիա, Թոքատ, Ամասիա, Յոզղատ, Խանղալի և այլ հայաշատ կենտրոններ և ամեն տեղ որոնում, գտնում և ուսումնասիրում է պահվող ձեռագրերը, և հարուստ ատաղձներ քաղում իր մի շարք ծրագրած աշխատությունների համար։ Դժբախտաբար, Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցի բացի ձեռագրաց հիշատակարանների Ա հատորից, ուր լավագույն կերպով ի հայտ են գալիս վերոհիշյալ վայրերում իր կատարած ձեռագրագիտական աշխատանքների արդյունքները, նրա մյուս կարևորագույն աշխատությունները, որոնք խարսխված են մասամբ դարձյալ իր ուղևորության ընթացքում հավաքած նյութերի վրա, ցարդ լույս չտեսան։ Դարձյալ էջմիածնի միաբաններից մեկը, ժրաջան ձեռագրագետ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը՝ Մագիստրոսը, ի դարի սկզբներին, շրջագայություններ է դուրս գալիս դեպի Կոստանդնուպոլիս և այլ բազմաթիվ վայրեր, և երկար տարիների տքնաջան ու համառ աշխատանքով կազմում 22 000 հայերեն ձեռագրերի հսկա ցուցակը, որը մինչև այժմ անտիպ է մնացել և պահվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիվանում[41]։

Ինչպես Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցի, այնպես էլ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի աշխատությունները մեծ արժեք են ներկայացնում, քանի որ նրանցում գտնվում են մեծ թվով ձեռագրերի նկարագրություններ, որոնք ոչնչացել են 1915 թվականի մեծ եղեռնի ժամանակ։ Հիշյալ աշխատությունների հրատարակումը անկասկած մեզ համար շատ բան կպարզի ձեռագրական մեր կորուստների վերաբերյալ և միևնույն ժամանակ կարևոր ավանդ կլինի հայագիտության համար։ Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի՝ Մագիստրոսի դիվանից նշենք մի-երկու օրինակ։ Նա 1908 թվականին երկու շաբաթով լինելով Կոստանդնուպոլսում, հայտնում է, որ այնտեղ, ձեռագրերի և ձեռագրացուցակների միջոցով ծանոթացել է 1121 ձեռագրերին։ Եթե նույնիսկ այդ ցուցակից հանելու լինենք Անտոնյան միաբանության մատենադարանի ձեռագրերը, որոնք այժմ տեղափոխվել են Զմմառի վանքը (Լիբանան), ինչպես նաև Արմաշի և

[40] «Տաճար», կ. Պոլիս, 1911, № 16, էջ 249—250։

[41] Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիվան, գործ № 201—267, և այլն։

...այլ վայրերի ձեռագրացուցակները, որոնց ...ձեռագրերը չէին պահվում Կոստանդնուպոլ...ում, դարձյալ կունենանք ավելի քան 500 ...ձեռագիր, որոնցից, որքան մեզ հայտնի է, ...շատ քիչ բան է մնացել այժմ Կոստանդնու...պոլսում: Նույնպես, ըստ Մեսրոպ եպիսկո...պոս Տեր-Մովսիսյանի դիվանում եղած մի ...գրության, Ամասիայում ցուցակագրվել է 41 ...ձեռագիր, այնինչ, ինչպես նշվեց, Գարեգին ...վարդապետ Սրվանձտյանցն իր ժամանակին ...միայն 3 ձեռագիր էր հիշատակել Ամասիա...յից, իսկ Ղևոնդ վարդապետ Փիրղալեմյա...նը՝ 15:

Գեղամ Տեր-Կարապետյանը (Մշո Գեղամ) ...ևս կազմել է Մուշի և շրջակաների ձեռագրե...րի հիշատակարանների ճոխ մի հավաքածու, ...որը ևս, ցավոք սրտի, դարձյալ անտիպ է ...մնում:

Քննարկվող ժամանակաշրջանում գնահա...տելի ջանքեր թափվեցին նաև առանձին վա...նական մատենադարանների գիտական ձե...ռագրացուցակներ կազմելու ուղղությամբ: ...Բարգեն վարդապետ Կյուլեսերյանի ջանքե...րով, ստեղծվեցին Անկյուրիայի Կարմիր ...վանքի, Ղալաթիայի (Կոստանդնուպոլիս) ...հայոց ազգային մատենադարանի ձեռա...գրացուցակները, որոնք միայն վերջերս հրա...տարակվեցին: Հակոբ Թոփճյանը դեռ 1903—1904 թվականներին կազմեց Արմաշի վանքի ձեռագրերի ցուցակը, որը դարձյալ վերջերս է որ հրատարակվեց: Բարգեն վարդապետ Կյուլեսերյանը ևս ուներ նույն Արմաշի ձեռագրերի մի ցուցակ (անտիպ): Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը կազմեց Սեբաստիայի Ս. Նշան վանքի ձեռագրացուցակը, Տրդատ եպիսկոպոս Պալյանը՝ Կեսարիայի և շրջակայքի ձեռագրացուցակը, որոնք լույս տեսան «Հանդես ամսօրյա»-ում: Կորյուն վարդապետը Փարիզի «Բանասեր»-ում հրատարակեց Կոստանդնուպոլսի Ս. Հրեշտակապետ Թաղի մատենադարանի ձեռագրերի ցուցակը և այլ մանր ցուցակներ, ուսուցիչ Օ. Բարաղամյանը կազմեց Վասպուրականի ձեռագրերի մի մասի ցուցակը, որն անտիպ է և պահվում է Մաշտոցի անվան մատենադարանում: Հայտնի ազգագրագետ Երվանդ Լալայանը 1915 թվականին հրատարակեց Վասպուրականի զանազան վայրերում գտնվող ձեռագրերի ցուցակի միայն Ա հատորը: Վասպուրականի ձեռագրերին վերաբերող նրա ընդարձակ ցուցակը (№ 481-ից № 1525 ձեռագիրը) ցարդ մնացել է անտիպ:

(Շարունակելի)

Բ. ՅԱՎՈՐՈՎ

ՀԱՅԵՐ

Հալածվածներ թշվառ, չնչին բեկորներ,
Ժողովուրդի մ'արի, այսօր նահատակ,
Ահաբեկ ու գերի մոր մը վավակներ,
Զոհեր՝ անհունորեն վսեմ քաջության,
Հայրենիքեն հեռու օտար երկնքի տակ,
Հյուծած, գունատ, հավաքված տուն մը խարխուլ,
Կըմպեն, ու իրենց կարյունի սիրտը՝ վերքեն,
Կերգեն, ինչպես երգն՝ արցունքին ընդմեջեն:

Անոնք կերգեն, կուլեն մոռնալ՝ հարբելով՝
Հին տառապանքն ու ցավերը այսօրվա,
Հիշատակը խեղդել հրաշունչ գինիով,
Քնացնել հոգին ջախված կրծքին տակ,
Կուլեն՝ հակած գանգերուն մեջ անհետի
Տառապագին պատկերն անոր մայրական,
Կուլեն անոր օգնության կանչը վերջի
Ա՛լ չլսել, մոռացության մեջ գինով:

Հոտ մը՝ ինչպես գապանե մը հալածված,
Ահա անոնք տարտղնված են ամեն տեղ,
Ու կատաղի բռնակալը արնախանձ՝
Անոնց գլխուն կը պահե իր սուրը մերկ,
Խեղճ հայրենիքն արյունի մեջ են լքած,
Բոցերու մեջ լքած են տունն հայրենի:
Օտարության մեջ անոնք խորթ մնացած,
Միակ ճամբան, գինետանն է՝ կը բացվի:

Անոնք կերգեն...: Վայրենի է երգն իրենց,
Ու վերքերը անոնց սիրտը կը կրծեն.

Ու կը խեղդե վանոնք քենը բոցակեզ,
Ու արցունքը կիյնա դալուկ այտերեն...
Ճնշված սրտերն դառն մաղձով են լեցուն,
Ու կրակը կայրե միտքը գանգին մեջ,
Ու կը փայլի շանթը արնոտ աչքերուն,
Ու կը խոսի հոգիներուն մեջ վրեժ:

Իսկ փոթորիկը ձմռան կը ձայնակցի
Կարծես, կոռնա աճեղորեն ցայգուն գիրկ.
Կը տարածե ապստամբ երգն աշխարհի
Վրա՝ ինչպես աճեղ որոտ ու մրրիկ:
Ու երկինքը կը մռայլի ավելի,
Ու ավելի կը խոժոռի ցուրտ գիշեր,
Կերգե խումբը, ուժգնությամբ ավելի
Կըլլա աճեղ փոթորիկն ալ ընկեր...:

Կը խմեն ու կերգեն... անոնք՝ բեկորներ
Ժողովուրդի մ'արի, այսօր նահատակ,
Ահաբեկ ու գերի մոր մը վավակներ,
Զոհեր՝ անհունորեն վսեմ քաջության,
Հայրենիքեն հեռու, բոկոտն ու մերկ,
Օտար երկիր՝ հավաքված տուն մը խարխուլ,
Կըմպե՛ն—գինվով տառապանքը կը մոռնան,
Կերգեն. ինչպես երգն՝ արցունքին ընդմեջեն...:

Թարգմ. բուլղարերենե՝ Ա. ՍԵՎԱՆ
(Թեոդիկ, «Ամենուն տարեցույցը», 1926, էջ 255):

ՕՕՆՆԻԿ ՓԱՆԻԿՅԱՆ

Հ Ա Յ Ը

Հայը նման է գետի մը հոսուն.
Եթե ընթացքը խափանել ուզեն,
Կանգ չառներ բնավ, հորդելով հունեն,
Ճամբա կը բանա, կընթանա նորեն:

Հայը նման է ծառի մը դալար.
Գոս տերևները կը թափին հովեն,
Մարդիկ ճյուղերը թեև կը կտրեն,
Արմատը խորն է, ծառը կա նորեն:

Հայը նման է արևին լուսեղ.
Եթե գլուխը կտրեն ու նետեն,
Ջերդ վերջալույսի արև հրեղեն,
Հաջորդ առավոտ կը ծագի նորեն:

Հայը նման է թռչունին փյունիկ.
Թշնամիներ չար ինչո՞ւ վայն կայրեն,
Չե՞ն գիտեր որ ան իր իսկ մոխիրեն
Կը ծնի՛, կապրի՛, կը թռչի՛ նորեն...:

ԵԴՎԱՐԴ ԳՈԼԱՆՑԱՆ

ԿԱՐՄԻՐ ԳԻՇԵՐՆԵՐԸ

— Տրապիզո՛ն, ի՞նչպես է ջարդին գիշերը:
— Գիշերն է բաբախուն ու կեռուն արյունով.
Ալիքներ կապտակեն սարահարթը դաժան
Ու հետ-հետ կը փսխեն մանուկներ ձյուն շուշան.
Սև հեղուկ Անեզրը հառաչում է գինով,
Մանուկներ, որ մորկանց ծիծերն իսկ չտեսան:

— Կարնո Դա՛շտ, ի՞նչպես է ջարդին գիշերը:
— Գիշերն է գերեզման թանձր ամպով բուերու:
Մանգաղներ ժանգոտած կը սպասեն անհարիր...
Անոնք ա՛լ մահի՛կն են ու գետինն է ոճի՛ր,
Ու ծով-ծով ցորեններ կը փսփսան իրարու
Աղետքեն վանկ մ՛երկար, որ բնավ չավարտիր...:

— Երվնկա՛, ինչպես է ջարդին գիշերը:
— Գիշերը վերջ չունի ու լեռներն են հալեր.
Նշույլ մ՛իսկ չկա, որ անդունդիս տա երակ:
Չե՞ք լսեր ընդհողյա խուլ ձայն մը, շա՛տ բարակ.
Հոս թաղված են ողջ-ողջ չորս հարյուր
մանուկներ,
Չե՞ք լսեր բաբախյունն հորերուս անհատակ:

— Ջեմա՛խ, ի՞նչպես է ջարդին գիշերը:
— Գիշերն է վրեժի խորագիծ վերտառում,
Մարմարե սյուներով ծառացող որ կայրի:
Տաճարին մեջ բանտված քա՛ղցն է, որ կը փրփրի,
Աստվածն է, որ կուլա Իր տունին մեջ տրտում:
Բնավ հացի չփոխվող մարմարն է տաճարի:

Մո՛ւշ, ի՞նչպես է ջարդին գիշերը:
— Գիշերն է բոցավառ անհամար խարույկով,
Ուր մեռելն իսկ կրնա քրտնիլ հողին տակ...:
Փողոցներ լայնաբաց կլափներ են անհագ,
Լափելով ջինջ կույսերն ու կիները թոթով:
Գիշերը Մողոք մ՛է բոց գիրկով մ՛անհատակ:

— Սեբաստիա՛, ի՞նչպես է ջարդին գիշերը:
— Գիշերն է արյունի շատրվան անպատո՛ւմ,
Հարության սուրբ տոնին՝ վանգակն է լուռ
իսպառ,
Բայց ինչո՞ւ բպպուն մը կը մնա դեռ անճառ...
Մոռցե՛ր է անդորրն իսկ՝ գերեզմանը տրտում.
Շիրիմներ կը տանին, Աստված ա՛լ չունի բառ...:

— Շապին-Գարահիսա՛ր, ի՞նչպես է ջարդին
գիշերը:
— Գիշերն է գնդակի անսպառ հրանձրև,
Կայծերու, սուրերու անտառ մը միշտ կանգուն.
Գիշերն է ադամանդ քրտինքը հուսկ հալուն,
Որ փրփրած կիյնա վար ու նորե՛ն պայրահև
Կը կանգնի, ճանկերուն մեջ առած հողն անհուն:

— Գաղատիա՛, ի՞նչպես է ջարդին գիշերը:
— Գիշերն է լայնալիճ արև մը արյունե,
Ու վարդեր մայիսյան, արյունով շեկ կրկի՛ն,
Արյունին բուրումեն հաղթված՝ կը ծնգին,
Գիշերը խայտացնոր խանչերն է, մահի՛կն է,
Բոսոր վիհն է, հունձքն է գանկերուն ու Մտքին:

— Կեսարիա՛, ի՞նչպես է ջարդին գիշերը:
— Գիշերը կախաղան-անտառն է, մարդ-
բուրվա՛ռ,
Ջաներու պես կախվող գլուխներու Պանթեո՛ն,
Հռնդյունն է Աստուծո, սարսափի մռայլ տոն,
Չգործված ոճիրին քավությունն է անճառ.
Գանգերով թավալվող լույս Համրիչն է, Սերն՝
հոն:

— Եփրա՛տ, Տիգրի՛ս, Արածանի՛, ի՞նչպես է
ջարդին գիշերը:
— Գիշերն է թափանցիկ՝ արյունի կոհակով:
Ուռիները կաճին ծուխերու պես խունկի...
Գիշերը ճողփյունն է սրտերուն վեհոգի...
Պայտիվն է, որ մեր մեջ շանթակեզ կընկլուլի:



Մեծ եղեռնի նահատակների հիշատակին

(Նկարիչ՝ Մ. Քեպապճյան

— Դեր-Զո՛ր, ի՞նչպես է ջարդին գիշերը:
— Գիշերը բոցանուտ ավազն է անսահման,
Կափկափումն է քաղցին ատամանց ծռած ի հող.
Ծարավն է փրփրուն, խոր կլափն է անցող,
Բոմբայի պայթյունով՝ ավերքի օվկիա՛ն.
Գիշերը Մայր մըն է ձեռնունա՛յն միշտ քալող:

— Անապատնե՛ր, ի՞նչպես է ջարդին գիշերը:
— Գիշերն է միությունն երկինքին և խիճին,
Բորենվույն ու մարդուն, գանգին ու Աստուծո,
Քալողին ու ոսկերց որ հանգչա՛ծ են բրածո:
Գիշերն հայ Քրիստոսն է լացող մեծ Անուրջին,
Աշխարհքին Քավությունն, որ կըսե. «Տէ՛ր, անցո՛...»:

***

Ո՛վ կարմիր գիշերներ, ինչպես դուք ա՛լ լուսցաք.
Ի՛նչ մեծ սեր մը պետք էր լուսցնելու համար ձեզ,
Սափորնե՛ր սարսափի, անհատակ, փրփրադեզ,
Ի՛նչպես դուք թափվելով՝ ձեր հալած ժաիրը տաք
Չկրցավ ջնջել բնավ Հայությունն ողջակեզ:

Զանգակներն հալեցան, բայց աղոթքն է բզկտուն...
Օրրոցներն ինկան, այլ կապրի՛ միշտ Ցավորդին.
Կույսերը մեռան, այլ վա՛րկը մնաց Հայ Սրտին.
Խարույկներ մոխրացան, այլ անոնց բոցն անհուն,
Լո՛ւյս տվավ Աշխարհին և աչք մ՛ալ Անդունդին...:

Կ. Պոլիս, 1918:

(«Խաչված քաղաքներու ձայնը» անտիպ ժողովածուից)

ՀԻՊՈՂՈՍ ԹԱՀՄԻԶՅԱՆ

ՀՈՒՇԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Համազգային խոր սուգի այս ամիսներին, մենք էլ, շատ-շատերի պես, Արևմտյան Հայաստանի քաղաքներին ու գյուղերին և առհասարակ Փոքր Ասիայի հայաշատ կամ հայաբնակ վայրերին նվիրված հուշամատյաններին դիմեցինք, ամբողջական ու լրիվ գաղափար կազմելու համար մասնավորապես մեծ եղեռնի առթիվ մեր կրած երաժշտական կորուստների մասին։ Ու չնայած, որ նախապես էլ գիտեինք, թե վայրենի թաթը մեծ ավեր էր գործել նաև հայոց երաժշտական մշակույթի անդաստաններում (հիշենք թեկուզ և նամիայն Կոմիտաս վարդապետի կյանքի ողբերգական ուղին, նրա 20-ամյա ամլությունն ու չիրագործված ծրագրերը), հետզհետե հավաքված նյութը միանգամայն գերազանցեց սպասվածը։ Արդարև, շատ ծանր են երաժշտական մեր կորուստները։ Պատմական որոշակի մեկ ժամանակամիջոցի առումով, ուղղակի կասեցվեց հայկական երաժշտական մշակույթի փայլուն առաջընթացը (վերջինիս լավագույն ցուցիչներից են հանդիսացել, 1912—1914 թվականներին, հայոց գրերի գյուտի 1500-ամյակի կապակցությամբ, մինչև իսկ հայկական գյուղերում կազմակերպված, և իրենց մակարդակով անմիջական շրջապատից վեր բարձրացած, երգահանդեսներն ու նվագահանդեսները)։ Պարզվում է, որ մենք կորցրել ենք՝ ա) երաժշտագրագրական հսկայածավալ մեկ միջավայր ու վիթխարի քանակությամբ նյութեր (չմոռանանք, որ եղեռնից առաջ, հայկական երաժշտական աղբագրությունը դեռ նոր-նոր էր միայն դրվում գիտական հիմքերի վրա). բ) երաժշտա-կրթական բազմապիսի շեն օջախներ (հոգևոր երգարվեստի հինավուրց ավանդույթներով օծուն վանական ուսումնարաններ, երգ-երաժշտության դասավանդումը պատշաճ բարձրության վրա պահող հայկական աշխարհիկ կրթարաններ և հայ ուսանող երիտասարդությունը ռուսական և եվրոպական երաժշտությանը հաղորդակից դարձնող օտար բազմաթիվ վարժարաններ՝ կոլեջներ). գ) ինչպես նաև շատ տաղանդավոր աշուղներ, երգիչներ, ու եվրոպայում երաժշտական բարձրագույն կրթություն ստացած պրոֆեսիոնալ հիանալի գործիչներ։

Քսամնելի էր ապրիլյան եղեռնը։ Վայրենի թաթը իր ճիրանները մեկնում էր մեր հոգևոր հարստություններին ևս։ «Աքսորելոց տունն ու կայքն ավարել հիմնովին,— գրում էր դեռևս Հ. Հ. Տաշյանը,— ... քանդել եկեղեցիներն ու ամեն հաստատություն, նաև դարավոր պատմական շինվածքները, որոնել ամեն շինություն ու քար՝ հայ արձանագրությունքն իսկ ջնջելու համար, նոյնիսկ պարզ գերեզմանաքարեր չթողուլ իրենց տեղն անխախտ, հայության որևէ հետք ջնջելու համար, չխոսելով գրավոր և այլ հիշատակարանաց փշացման մասին. այս ամենն ալ թեև անծանոթ չեն օսմանյան պետության, բայց նոր են իրենց միահամուռ ամբողջությամբ և ավելի ևս իրենց նպատակավը»[1]։ Դժբախտաբար մինչև այժմ իսկ շարունակվում է «անցյալը վերագնահատելու» այս եղանակը, որին միանում են մեր հոգևոր հարստությունների մի մասն էլ սեփականացնել ու տխուր մտահղացումներ։ Նկատի ունենալով հատկապես երաժշտության բնագավառը, այստեղ անհրաժեշտ է նշել գեթ հետևյալը։ Ժողովրդական տիպի բազմահարյուր գողտրիկ երգեր կան («Ամանի»-ներ, «Ալե-կյոզլու»-ներ և այլն), որոնք հորինված են Կիլիկիայի կամ Սև Ծովի ավազանի, Փոքր Հայքի

[1] Տաշյան Հ. Հ., «Հայ ազգի տարագրությունը գերմանական վավերագիրներու համեմատ», Վիեննա, 1921, էջ 3։

թե Կուտինայի կամ Աֆիոն-Գարահիսարի Թրքախոս հայերի կողմից, և որոնք, հենց Թուրքերեն լինելու ու նաև որևէ անհատ հեղինակի անվանը կապված չլինելու պատճառով՝ «անարգել» կերպով սեփականացվում են այժմ, ինչքան էլ մեզ զգուշացրած լինեն այդ մասին ավագ սերնդի մեր մտավորականները[2]: Այնուհետև, սեփականացվում են նաև Թուրքերենով երգած ու հորինած արևմտահայ աշուղների տաղանդավոր ստեղծագործությունները, որոնք, ի դեպ, վաղուց իվեր խնամքով հավաքվելիս են եղել առանձին անհատների կողմից, ինչպես այդ մասին մի քանկագին վկայություն է տալիս Ս. Տյովլեթյանը, մատնացույց անելով հայ աշուղ Սեկյահիից շատ երգեր գրի առած բանաստեղծ Մեհմեդ Էմին Բեյին[3]: Նրբեմն բոլորովին անաղմուկ «սխրագործություններ» են կատարվում, որոնցից մեկիր արդյունքն այն է, օրինակ, որ Բաբա Համբարձում Լիմոնջյանի հնարած հայկական ձայնագրության նոր դրությունը ... գերմանացի գիտնականներ Ռոբերտ Լախմանի ու նրանից օգտված Յոհաննես Վոլֆի աշխատություններում բերվում է որպես նոտագրության ... Թուրքական սիստեմ[4]: Երբեմն էլ պարզապես աղաղակող մի սանձարձակություն է գործ դրվում, ինչպես, օրինակ, ոմն Հալիդե Էդիբի կասկածելի «Հուշեր»-ի հրատարակությունը «Ենի Իքթամբուլ» թերթում, որոնցում (Հուշերում) խոսվում է Կոմիտասի ... Թուրք լինելու կամ նրա Թրքական ծագման մասին[5]: Այս բոլորը լոկ քմծիծաղ առաջ կբերեին, եթե միայն, ավելի քաղաքակրթված մի ժողովուրդ բարբարոսաբար բնաջնջելուց ու ճակտի արդար քրտինքով նրա վաստակածը հալանելուց հետո, հոգևոր հարստություններն էլ կողոպտելու նախորոք մշակված ծրագրերի իրագործման արտահայտությունները չլինեին:

Եղեռնը յուրօրինակ հատուցումը եղավ այն բոլոր օգտակար ծառայությանց, որ արևմտահայերը մատուցեցին օսմանյան պետության, ինչպես երկրագործության և արհեստների, արդյունաբերության և ազատ արվեստների[6], այնպես էլ երաժշտության բնագավառում: Ընդհանրապես հայտնի է, թե ի՛նչպիսի ակնառու դեր են խաղացել պոլսահայերը, ի դեմս մի ամբողջ շարք լուսավորյալ երաժիշտների՝ վաղամեռիկ Գաբրիել Երանյանից[7] մինչև մեծատաղանդ Տիգրան Չուխաջյանը[8], Թուրքիան Արևմտյան եվրոպայի երաժշտական նվաճումներին հաղորդակից դարձնելու գործում, մի բան, որ կամա թե ակամա ընդունվում է Թուրք երաժիշտ-պատմաբանների կողմից ևս[9]: Իր տարողությամբ շատ ավելի մեծ է Թուրքիայում հենց արևելյան երաժշտության ավանդույթների զարգացման գործին հայոց բերած մասնակցությունը: Հայերը իրենց բարձր երաժշտականությամբ դեռևս խոր միջնադարում մեծապես նպաստել են վաշկատուն կյանքով ապրող Թուրք եկվոր ցեղերի երաժշտական հակումների զարգացմանը, հենց միայն մոտավոր հարևանի բնական ազդեցության ուժովն իսկ[10]: Ավելի ուշ, օս-

---

[2] Տե՛ս Շ. Ն., «Հակոբոս Այվազյան երաժշտագետ», Փարիզ, 1958, էջ 89, ուր իրավամբ գրված է. «Ապագա երաժշտագետին կմնայ լուծել երաժշտական երանգները՝ ճշտելու համար Անադոլու կոչված երկրամասին ժողովուրդներին յուրաքանչյուրին նպաստը, առանց խարխլելու բառերուն ազգութիւնն»:

[3] Տյովլեթյան Ս., «Հուշեր Շապին-Գարահիսարեն», Փարիզ, 1954, էջ 57—59:

[4] „Tonschriften der Araber, Perser und Türker" տե՛ս Johannes Wolf, „Die Tonschriften", Breslau, 1924, էջ 18—24:

[5] Տե՛ս Հովհաննեսյան Ոսկան, «Կոմիտասը սեփականացնելու Թրքական զվարճալի փորձ մը», «Վրթաբեր», Նյու-Յորք, № 87, 1956, 9 փետրվարի, էջ 2; Տե՛ս նաև «Կռունկ», Նյու-Յորք, № 18, 1956, 20 հունվարի, էջ 1—5 («Թուրքիան ինչպես որ է: Կոմիտաս վարդապետը «Թուրք» է եղեր...») և այլն:

[6] Տե՛ս Զոպանյան Ա., «Ժամանակակից Հայաստանի առաքյալը Ն. վ. Մկրտիչ», «Անահիտ», Փարիզ, 1907, № 1, էջ 18; Տե՛ս նաև Գևորգ Մեսրոպ, «Հայերը արվեստներու տարածիչ», «Հայրենիք», Բոստոն, 1925, մայիս, էջ 69—70:

[7] Որ հասարակական հանդուման, հանրօգուտ իր գործունեությամբ վաստակեց եվրոպական երաժշտությունը Պոլսում «առաջին ծաղկեցնողը»-ի համբավը: Տե՛ս «Եվրոպական երաժշտությունն ի Պոլիս առաջին ծաղկեցնողը», Թեոդիկ, «Ամենուն Տարեցույցը», Կ. Պոլիս, 1916—1920, էջ 89—90:

[8] Որ հանդիսացավ Պոլսում օպերա-օպերետի հիմնադիրը և, առհասարակ, արևելյան երաժշտության մեջ եվրոպական տեխնոլոգիան վարպետորեն օգտագործած առաջին (իսկ Թուրքիայի համար նաև մինչև այժմ իսկ անգերազանցելի) կոմպոզիտորը: Տե՛ս Тигранов Г., «Армянский музыкальный театр», т. I, Ереван, 1956, стр. 144.

[9] Տե՛ս Махмуд Рагиб, «Западно-Европейская музыка в Турции», «Советская музыка», 1933, № 6, стр. 136—141.

[10] Երաժշտական արվեստի բնագավառում հայ-թրքական այսպիսի փոխ-հարաբերությանց գոյացման համար կային նախատեսված պայմաններ: Հայկական և թուրքական (ակզբնապես թուրանական) մի՛ձայնությունը խարսխվում էր ակուստիկական միևնույն դրության վրա; և շատ ընդհանուր կողմեր ուներ, ինչպես լադային հիմքի, այնպես էլ, որոշ չափով, ռիթմո-ինտոնացիոն «բառապաշարը»-ի տեսակետից: Այլ բան է, թե սկզբից ևեթ գալի տարբերություն է եղել հայկական

…ական պետության հզորացումից հետո, …ւլթանական դաժան լծի տակ, Կիլիկիայի և …որը Ասիայի հայկական գաղութների բնակ…չության մեկ մասը այնպես էլ չկարողացավ …ահպանել մայրենի լեզուն, և իր ավանդա…ան բանահյուսությունն իսկ, հետզհետ …արգմանելով, սկսեց զարգացնել թուրքերե…ի հիման վրա, այսպիսով դարերով կու…ակված գեղագիտական իր արժեքներն ու …նածին ընդունակությունները, կամա թե …կամա, ծառայեցնելով թուրքական մշակույ…ի ծաղկմանը[11]։ Հար և նման ճակատագիր …ունեցավ նաև արևմտահայ աշուղների ողջ …ամասեղությունը, որ նույն ծառայությունը …ատուցեց Թուրքիային[12], հասկանալի է, ա…ելի լայն չափսերով ու ավելի բարձր …ակարդակով, իր վրա հրավիրելով պալա-

…րաժշտական արվեստի և բրքական քոչվոր ցեղերի …րդ-երաժշտության միջև՝ գեղագիտական խորքի առու…ով, որ և դնալով մեծացել է, ի վերջո վերածվելով …ախման ու պայքարի։ Գեղագիտական թուրանա-թուր…ական ըմբռնումը, ոչ մի բան չմոռանալով, և ոչ մի բան …յուրացնելով այս նոր միջավայրում, անվերջ իրն է …պարտադրել շրջապատին, իսկ հայկականը հետզհետ …իր պայմանի մեջ ամփոփվելով դիմադրել է, մինչև …Կոմիտասի գործունեության փրկարար շրջանը, նորից …ույս աշխարհ գալով տարածվելու համար։ Եվ ահա …այժմ գիտենք, թե մեր երաժշտությունը շատ ավելի …զուսպ է, լուրջ, զգաստ և իր արտահայտությունների …մեջ չափավոր, ներքնապես լցված, հագեցած ու հա…րուստ լինելով հանդերձ։ Այն հարազատ արտացոլումն …է հայկական բարձրավանդակի բազմապիսի գեղեցկու…թյանց, մինչ թուրքականի մեջ դեռ այժմ իսկ Թուրանի …տափաստանների շունչն է իշխում։ Շատ ճիշտ է, երբ …ասվում է, թե «... ամեն ժողովուրդ չի կրնար հաղոր…դակցել իր միջավայրին հետ։ Թուրքը չկրցաւ աշխար…հագրականանալ այն հողերուն հետ, որոնց վրա կգտնվի» (Շ. Ն., «Կոմիտաս և իր արվեստի փիլիսո…փայությունը», «Անդաստան», Փարիզ, 1955, № 5, էջ 34)։

[11] Այս կապակցությամբ պիտի շեշտել, որ հայոց կողմից թուրքերենով հորինված (մասամբ հայերենից թարգմանված և մասամբ էլ նորաստեղծ) ժողովրդական տիպի երգերից շատերը իրենց գեղագիտական խորքով ու երաժշտական բաղկացուցիչով զուտ հայացի են, և մենք այժմ պարտավոր ենք տարբերել դրանք, որոշելով դրանց առանձնահատկությունները. մնացածների նկատմամբ սրելով լոկ հեղինակային պատկանելության (հավաքական իմաստով) հարցը։

[12] Այստեղ նույնպես պարտավոր ենք տարբերել թուրքերենով հորինված աշուղական բազմաթիվ այն երգերը, որոնք իրենց խորքով քրիստոնեական են և հայացի, իրենց բնույթով պարզապես թուրքական արվեստին պատկանող ստեղծագործություններից, շեշտելով վերջիններիս հեղինակային պատկանելության հարցը։

տական շրջանների իսկ հատուկ ուշադրությունը[13]։ Աշուղներից պակաս օգտակար չեն եղել նաև արևելյան երաժշտության ասպարեզում փայլած հայ վիրտուոզ կատարողները՝ երգիչները («հաննենդե») և մանավանդ նվագածուները («սազենդե»)։ Դեռևս ԺԸ դարի առաջին կեսում նշանավոր է եղել սուլթան Մահմուդ Ա-ի (1736—1756) պալատական նվագածու Թամբուրի Հարությինը[14]։ Իսկ հաջորդ, ԺԹ դարում և սույն հարյուրամյակի սկզբում, հայ անվանի կատարողները պարզապես ողողել են Պոլիսն ու Թուրքիայի մյուս քաղաքները։ Նրանցից շատերը, ինչպես Նեյզան Ջենոբ, Թամբուրի Ալեքսան, Հաննենդե Նիկողոս, Աշաղուրկ Սեպուհ, Ջիլերջյան Գրիգոր, Գուզկունճուքլյան Հարություն, Հաննենդե Աստիկ, Քեմանի Թադեոս, Քանունի Համբարձում, Քեմանի Նիկողոս, Սազենդե Արշակ և ուրիշներ, մեծ հռչակ են վայելել, ու փաշաների և սուլթանների կողմից իսկ մեծամեծ պատիվների են արժանացել[15]։ Ինչպես այժմ պարզվում է, հայ երաժիշտները զգալի աշխատանք են տարել նաև պրոֆեսիոնալ երաժշտության այնպիսի ժանրերի զարգացման մեջ, ինչպիսիք են՝ «չարքի», «սեմայի», «բեսդե», «փեշրեֆ» և այլ ձևեր։ Մասնավորապես պարզվում է, որ այս բնագավառում բեղմնավորապես աշխատել են, բացի վերոհիշյալ կատարող-երաժիշտներից, նաև Բաբա Համբարձում Լիմոնջյանը, Համբարձում Ջերջյանը, Լևոն Խանջյանը, Հակոբոս Այվազյանը և ուրիշներ[16]։ Վերջապես հայ երաժիշտները իրենց մասնակցությունն են բերել անգամ Թուրքիայում արևելյան երաժշտա-տեսական դրույթների բյուրեղացման գործին։ Այսպես, վերև հիշատակված Թամբուրի Հարությինից (ԺԸ դ.) մեզ հասել է

[13] Սուլթան Մեջիդի (1839—1861) պալատական աշուղ Քեշիշ-օղլին, որին հիշատակում է Գ. Լևոնյանը (տե՛ս «Աշուղները և նրանց արվեստը», Երևան, 1944, էջ 16), որպես հայ բացառություն չի կազմում։

[14] Այս շնորհալի երաժիշտը ծառայել է նաև Նադիր-Շահի պալատում և գրել՝ «Պատմություն Թահմազ Ղուլու» աշխատությունը հայատառ տաճկերենով, որ մի քանի անգամ տպագրվել է տարբեր լեզուներով (այդ թվում և արդի թուրքերենով)։ Նրա հայկական հրատարակությունը տե՛ս Հայկական ՍՍՌ ժողկոմսովետին կից պետական Ձեռագրատուն (Մատենադարան), Գիտական նյութերի ժողովածու, № 1, Երևան, 1941, էջ 101—128։

[15] Տե՛ս Հիսարլյան Ա., «Պատմություն հայ ձայնագրության, և կենսագրություն երաժիշտ ազգայնոց», կ. Պոլիս, 1914, էջ 38—42, 46—53, 170—177։

[16] Տե՛ս „Oriental Sharky" վերնագրված մատյանը, Երևանի գրականության և արվեստի թանգարանում, Հակոբոս Այվազյանի արխիվում։

նաև արևելյան երաժշտության մի «Զեռնարկ»[17], նորից հայատառ տաճկերենով։ Արևելյան երաժշտության տեսականին քաջ գիտակ է եղել կեսարացի Գրիգոր դպիր Գապասաքալյանը, որ երևում է նրա երաժշտատեսական բոլոր գործերից[18]։ Արևելյան ձայնեղանակների՝ մուղամների մասին հայատառ տաճկերենով գրված երաժշտա-տեսական մի աշխատություն ունեցել է էվերեկցի կան մի աշխատություն ունեցել է էվերեկցի Կարապետ Ծառուկեան (1805—1875) երաժշտագետ վարդապետը ևս, ինչպես դա վկայում է Տրդատ եպիսկոպոս Պալյանը[19]։ Բազմահմուտ Համբարձում Լիմոնջյանը, որը քաջատեղյակ էր նաև թրքական երաժշտության տեսության, հայկական ձայնագրության նոր դրությունը ստեղծելուց հետո, ձայնանիշերից ամեն մեկին հատուկ տաճկական անուններ հարմարեցրեց և նորահնար այդ արվեստը տաճիկներին ևս դասավանդեց, միևնույն ժամանակ ձայնագրելով ու հրատարակելով նրանց «ծանր» տիպի զանազան բարդ եղանակները[20]։ Եղիա Տնտեսյանը առաջին երաժիշտն է, որ տվել է արևելյան, այդ թվում և տաճկական, ու եվրոպական հիմնական ձայնաշարերի համեմատական վերլուծությունը[21]։ Հակոբոս Այվազյանը հեղինակն է նաև արևելյան երաժշտության հիանալիորեն պատրաստված մեկ «Դասագիրք» աշխատության, որ պահվում է նրա արխիվում[22]։ Կոմիտաս վարդապետը հայկական գեղչկական երգերը հավաքելուն զուգընթաց, ձայնագրելով կորստից փրկել է նաև թուրքական երգերի ներկայանալի նմուշներ[23]։

Ահա թե ինչպիսի՛ ծառայություններ են մատուցել մեր հայրերը մեր ջարդարարներին։ Այո՛, արևմտահայերի երաժշտական գործունեությունը նույնպես, ուղղակի կամ անուղղակիորեն նպաստում էր նաև առհասարակ ողջ Թուրքիո երաժշտական մշակույթի զարգացմանը, զարգացում, որ դեռևս ԺԹ դարի երկրորդ կեսին իսկ նշանակալի մի հանգրվանի կհասներ անշուշտ, եթե հիշյալ գործունեությունը ընթանար գեթ մի քիչ ավելի բնականոն պայմաններում[24]։ Ընդհակառակը, սակայն, և կարծես բարիքը հենց չարիքով հատուցելու հաստատ դիտավորությամբ, Թուրքիայում տիրող ընդհանուր տգիտության, հետամնացության, մոլեռանդ այլամերժության ու ահավոր խավարամտության առանց այդ էլ հեղձուցիչ մթնոլորտը ի վերջո հղացավ ու դիվայնորեն գործադրել տվեց մեծ եղեռնը, որից, ի դեպ, ողջ երկրին ու նրա «տերեր»-ին էլ բաժին մնաց տնտեսական, քաղաքական, մշակութային ու բարոյական սնանկության ներկայիս ողորմելի վիճակը։ Բայց մենք գիտակցենք մեր երաժշտական կորուստները։ Դրան խորապես հասնելու լավագույն միջոցը կլիներ պարզել, թե երաժշտականորեն (երաժշտա-ազգագրական ու երաժշտա-կրթական տեսակետներից) ի՞նչ էին ներկայացնում Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի մեր քաղաքներն ու գյուղերը, ինչպես նաև Փոքր Ասիայի հայկական գաղութները, մինչև համաշխարհային առաջին պատերազմը։ Բայց խնդիրն էլ հենց այն է, որ դրա լրիվ ու կենդանի համայնապատկերը վերստեղծելը, Վանից ու Կարինից մինչև Պոլիս ու Ադրիանապոլիս, և Սսից ու Ադանայից մինչև Սամսոն և Տրապիզոն, անհնարին է պարզապես։ Հետագայում գուցե հնարավոր լինի այդ բանն անել ամենաընդհանուր գծերով։ Ստորև մենք կփորձենք տալ մեզ հետաքրքրող երաժշտական միջավայրի մանրանկար մեկ պատկերը միայն, այն էլ թերի ու պակասավոր։ Թեկուզ և միայն այն պատճառով, որ մեր աղբյուրները, հիմնականում, հուշամատյաններն են, ինչպես ասացինք, իսկ դրանցում մեր նյութին վերաբերող հարցերի միակցությունը կարևորություն է ստանում և լուսաբանվում տարբեր չափով ու մակարդակով, չխոսելով գրեթե ընդհանուր մեկ թերության մասին, որով հուշամատյանների ջախջախիչ մեծամասնության մեջ ժողովրդական բանահյուսության վերաբերող ազգագրական նյութերը բերվում են առանց մեղեդիների ձայնագրության։

---

17 «Զեռնարկ»-ը մեզ հասել է ԺԸ դարի վերջի մի գրչագրով, որ Մաշտոցի անվան մատենադարանում պահվում է 9340 թվահամարի տակ։

18 Տե՛ս Քեկուլ և «Գրքոյկ որ կոչի նուագարան, արտահաննեցեալ ի Կեսարացի Գապասաքալեան Գրիգոր դպրէ», Կ. Պոլիս, 1794։

19 Տե՛ս Ալպոյաճյան Ա., «Պատմություն հայ Կեսարիո» (տեղագրական, պատմական և ազգագրական ուսումնասիրություն), Բ, Կահիրե, 1937, էջ 1582 (տողատակ)։

20 Ռուբեն աբեղա, «Բաբա Համբարձում Լիմոնջյան և հայ նոտագրության ծագումը», էջմիածին, 1915, էջ 17։ Տե՛ս նաև «Տարազ», 1893, № 11։

21 Տետեսյան Ե., «Ազգային երաժշտություն», Սիոն, Երուսաղեմ, 1867, № 9, էջ 146—148։

22 Գրականության և արվեստի թանգարան, Հակոբոս Այվազյանի արխիվ («Դասագիրք»-ը գրված է հայերենով և ունի երկու մաս. ա) եղանակներ, բ) ուսուլներ)։

23 Տե՛ս Атаян Р., „Комитас—собиратель и исследователь армянской народной песни. VII межд. конгресс антр. и этн. наук", Москва, август 1964 г., стр. 4—5.

24 Ինչպես արդարացիորեն դիտել է տալիս Ալ. Շահվերդյանը. տե՛ս նրա «Հայ երաժշտության ակնարկներ 19—20-րդ դ. դ.», Երևան, 1959, էջ 293—294։

**
*

Անցնելով հիշատակված մանրանկար սխեմայի պատկերմանը, նախ մոտենանք պատմական Հայաստանի շրջաններին, սկսելով Ուրֆայից։

Ջափազանց քիչ բան գիտենք մենք այժմ Ուրֆայի հերոս հայության երգաստեղծության մասին։ Մեզ համար հետաքրքրական մեն անշուշտ Ա. Սահակյանի առաջ բերած վիրային, հարսանեկան և մանկական մի քանի երգերի խոսքերը. առավել ևս, «... հավատարիմ խաչակիրներու շրջանեն մնացած», «Ազգիս ոչ մոյ ապաւէն, բացի որդոց քաջէն» զգաստ հայրենասիրությամբ տոգորված երգի գրական տեքստը։ Բայց սրանք միշրանքներ են միայն, որոնք երաժշտա-ազգագրական առումով մի դեմք ու կերպարանք չեն ունվագծում դեռևս, ինչպես դա հաստատում է ինքը Սահակյանն էլ, նշելով. «... այս քաղաքի հայության ժողովրդական բանահյուսությունը շատ ավելի մեծ արժեքով պիտի ներկայանար մեզ, եթե տարիներ առաջ՝ դրուն իսկ Ուրֆայի մեջ հավաքված ըլլային ամանոնք»[25]։ Որոշ տեղեկություններ կան Ուրֆայի հայ ճանաչված նվագածուների մասին։ Ուշադրության արժանի է մանավանդ հայ նվագածուների և ասորի երգիչների համագործակցության երևույթը, ինչպես դա արտահայտվել է, «Կարապետի և Ջրջոյի նվագախմբի» մեջ, որում ջութակի, քանոնի, դափի և դհոլի վրա նվագողները հայեր են, իսկ «ըսողները»՝ «Ասորի Ջրջո» և «Ջյուրե Մահո»[26]։ Գալով Ուրֆայի հայության մեջ ժամանակին տարված երաժշտա-կրթական գործին, սա կարող ենք ասել, որ այստեղ նույնպես դպրոցներում եռանդով դասավանդվում էին գեթ մեր ազգային-հայրենասիրական երգերը, դասելով՝ թեկուզ և՝ «Երբ ալեկոծ ծովուն վրա» երգի հիշատակությունից[27]. մինչ եկեղեցում հարատևում ու ծաղկում էին հայոց հոգևոր երաժշտության հինավուրց ավանդույթները։ Մանավանդ երբ ի նկատի ենք առնում, որ տեղահանությունից առաջ Ուրֆայի առաջնորդը եղել է Արտավազդ Գալենդերյան երաժիշտ վարդապետը, այստեղ էլ հենց ընկնելով նահատակի մահուվ։ «Արտավազդ ծայրագույն վարդապետ Գալենդերյան, բացի իր կրոնական և գրական արժանիքներեն՝ եռանդուն հետևող մը եղած է երաժշտության»-— գրում է Ե. Մրսբրյանը։— «Ծնած է 1876-ին, Բրուսայի Ձեհիջե գյուղը։ Իր նախնական կրթությունը ստանալե վերջ մտած է Արմաշի դպրեվանքը, ուր իր ուշիմության շնորհիվ շուտով ստացած է կրոնականի աստիճանները և վարդապետ ձեռնադրվելով երիտասարդ տարիքի մեջ, վարած է առաջնորդական տեղապահի և ուրիշ զանազան պաշտոններ։ Դպրեվանքին մեջ իր ուսանողության շրջանին մասնավոր հակում ցույց տված է երաժշտության. աշակերտած է Համբարձում Չերչյանի ... դպրեվանքեն ելլելեն վերջ ալ չէ մարած իր մեջ երաժշտության սերը. Պոլսո մեջ կարճ ատեն մը Գ. Մեհդերյանի աշակերտելե հետո՝ ինքնօգնությամբ մշակած է իր երաժշտական հատկությունը և հետզհետե արտադրած է երաժշտական գործեր։ Հրատարակած է «Սարսուռներ» ձայնագրությունը»[28]։ Իսկ Գ. Սյուրմենյանն ավելացնում է. «... Արտավազդ վարդապետ տեղահանության նախօրյակին Ուրֆայի առաջնորդն էր, 915 հուլիս 28-ին ոստիկաններու կողմե առաջնորդարանին մեջ ձերբակալվելով դեպի Տիգրանակերտ ղրկվեցավ ու ճամբան «Շեյխան-դերեսի»-ի մեջ նահատակվեցավ»[29]։

Երաժշտա-ազգագրական առումով գուցե մի քիչ ավելի գիտենք Տիգրանակերտի հայության մասին։ «Ամիդայի հայոց ընտանեկան կյանքին ամենեն խրախճալի և ամենեն ուրախառիթ մասը կկազմե ամուսնությունն՝ որուն յուրաքանչյուր աստիճանն առիթ մը կուտա հավաքումի»[30],— տեղեկացնում է Տ. Մկունդ։ Եվ հարսանեկան երգերի նրա մեջբերած նմուշների խոսքերին ծանոթանալով իմանում ենք, որ Տիգրանակերտի հայությունը երգելիս է եղել, նախ հայերեն բարբառով (որ անշուշտ հնագույն արմատներ ուներ), ապա և թուրքերենով (հասկանալի է, ուշ միջնադարի պայմանների բերումով)։ Երևում է նաև, որ հայերեն բարբառով երգելու սովորությունը ավելի կանայք են պահպանել[31], քան տղամարդիկ, որ արտաքին աշխարհի հետ շփման մեջ լինելով հանապազ, շատ են ենթարկվել տիրող պայմաններին։ «Այրերուն նվագարաններն,— վկայում է նույն հեղինակը, խոսելով տղամարդկանց խնջույքների մասին,— չորս, երբեմն ալ հինգ կտորներե կբաղկանան. դաֆ, քանուն, քամանի,

---

25 Սահակյան Ա., «Դյուցազնական Ուրֆան և իր հայորդիները», Բեյրութ, 1955, էջ 693։

26 Անդ, էջ 632 (այստեղ տե՛ս նաև հիշյալ նվագախմբի նկարը)։

27 Անդ, էջ 975։

28 Տե՛ս «Գանձարան հայկական երգերու», Դ գիրք, Կահիրե, (Ա. Բ.), էջ 525։

29 Սյուրմենյան Գ., «Երգնկա», Կահիրե, 1947, էջ 156։

30 Մկունդ Տ., «Ամիդայի արձագանքներ», Նյու-Ջերզի, 1950, էջ 400։

31 Անդ, էջ 402, 409, 410, 413։

մաշա և չըղըրտմա։ Մասնավոր խաղ ըսող մը կհրավիրվի երգերուն առաջնորդելու համար ... նվագածուներն կսկսին հասարակ եղանակներ նվագել երբ հրավիրյալներ տակավին առօրյա նյութերու վրա կխոսակցին։ Նախ՝ գեզրնդի կընեն, ապա՝ թախսիմ-փեշրով, երեք կամ չորս տարբեր եղանակներով, որմե ետք վարպետ երգիչը կսկսի փափուկ եղանակով մեներգ մը՝ դիվան, ապա անոր համար խմբերգը, խմբերգին նվագածուներն կընկերանան վարպետին և հրավիրյալներեն ամեն անոնք որ երգելու ձայն կամ փափագ ունին»[32]։ Բայց սրանից չպիտի հետևցնել, թե տղամարդիկ միշտ և անպայման թուրքերեն են երգել, և առհասարակ հայերեն-թուրքերենի վերոբերյալ բաժանումը չպիտի հասկանալ ուղղագծորեն։ Որովհետև, մի կողմից, կանանց երգած Համբարձման «վիճակի խաղեր»-ի մեջ ևս եղել են թուրքերենով հորինվածներ[33], և, մյուս կողմից, տղամարդիկ նույնպես երգել են նաև հայերեն, ըստ որում, անկախ այն բանից, թե երգի կամ մեղեդիի տվյալ տեսակը ընդհանուր արևելյան կամ թրքական ինչպիսի նոր անուն է ստացած եղել, ասենք, նույն ուշ միջնադարում (ինչպես որ նրանք նաև հայկական երաժշտություն էին նվագում իրենց երաժշտական հինավուրց գործիքների վրա, անկախ այդ գործիքների պատմականորեն նորամուտ թրքական կամ արաբական անուններից)։ «Վերջապես տուն երթալու ատենը կուգա,— կարդում ենք տղամարդկանց նույն խնճույքների մասին,— ... այս անգամ նվագածուներ մայա կերգեն. այս եղանակին համար տեղական (իմա՛ հայերեն) բարբառով գեղեցիկ հորինված համարներն կերգվին.— «... Բաղն ի՞նչ է, բաղչան ի՞նչ է, աղջիկ քու սևդան ի՞նչ է» և այլն։ Եվ դեռ, նախքան այդ էլ, նշանավոր սաբան են անելիս եղել, հետևյալ շահեկան վկայության համաձայն. «Առավոտյան դեմ, լուսաբացին մոտ, բակը կելնեն, եթե օդը նպաստավոր է, սաբան ընելու համար. ասոր եղանակները մի քիչ ճողուն են, սակայն երգեցողութիւններն բոլորն ալ սիրահարական են. երբեմն-երբեմն ազգային երգ մ'ալ կերգեն»[34]։ Աշուղական, հոգևոր և նույնիսկ ազգային երգի ոլորտներում, ամիդացի հայերի կյանքում, երևի մինչև վերջ էլ գերիշխող են եղել անցած հարյուրամյակին վերաբերող արժեքները։ Քանի որ մինչև այժմ էլ հիշատակվում են, գլխավորապես, աշուղ Օհան Շիրինն ու նրա թուրքերեն երգերը, եկեղեցական երգաստեղծության զարգացմանը սատարած էքմեքջյան Մկրտիչ վարժապետն ու նրա տաղերը և դպրոցներում 1875-ական թվականներից տարածված՝ «Հայրենիքեն ողբի ձայներ կը լսվին» ազգային երգը, Մ. Փորթուգալյանի խոսքերով[35]։

Ազգագրապես Տիգրանակերտի հետ կապված է եղել Հայնին, որտեղի հայութ յան կյանքում տարածված երգերի (օրոր, հարսանեկան, պարերգ և այլն) մի մասը, ըստ երևույթին, հենց Տիգրանակերտից էլ անցել է այստեղ, ինչպես դա հաստատվում է Բ. Ժամկոչյանի որոշակի մեկ ակնարկից[36]։ «Նախապես ըսինք, թե երկրագործ չըլլալով շատ երգ ունեցած չենք,— բացատրում է նա,— բայց ունեցած ենք լավ երգողներ՝ Ֆերմանենց Տիգրանը, Ամո Տոնոյենց Սաքին, Թուխոյենց Կարապետը, Մանաստուրենց Պողոսն ու Մանուկը (հուշակավոր), Դրնեցի Փոռթոյենց Տըփփոն (հուշակավոր), Ստեփան Ներսեսյան...»[37]։ Հայնիի կարևոր մեկ առանձնահատկությունն այն է, որ այստեղ ապրել են քրդախոս հայեր, իրենց քրդալեզու երգերով, որոնք, ինչպես և Հայնիի հայերեն մյուս երգերը, Բ. Ժամկոչյանը բերում է իրենց մեղեդիների ձայնագրություններով հանդերձ, օգտվելով Համբարձում Բերբերյանի ծառայություններից[38]։

Մոտենալով հայոց ցեղային հատկությունների պահպանման տեսակետից մեր ամենահոգեհարուստ շրջաններին (Մոփք, Տարոն, Վասպուրական, Բարձր Հայք), անհրաժեշտ է նախորոք նշել, որ մենք այդ շրջաններին ևս անդրադառնալու ենք, նախընթաց օրինակով, հիմնականում, ըստ համապատասխան հուշամատյանների (բայց անշուշտ ի մտի ունենալով Գ. վարդապետ Սրվանձտյանցի, Հ. Ջանիկյանի, Հ. Աջեմյանի և այլոց շնորհիվ ստեղծված ազգագրական գրականությունը)։ Որովհետև նախ՝ մեզ, տվյալ դեպքում, լոկ ազգագրությունը չէ, որ հետաքրքրում է (ինչքան էլ այդ ներկայացնի այստեղ արծարծվող հարցերից ամենածանրակշիռը), հետո՝ հուշամատյաններում, համենայն դեպս, այս կամ այն չափով, հաշվի առնված են ազգագրական հին նյութերը ևս, և, վերջապես՝ հիշյալ նյութերը իրենք էլ, հենց ամբողջությամբ վերցված, շատ անբավարար են, չխոսելով երաժշտական նյութերի մասին։

---

[32] Մկուեդ Տ., «Ամիդայի արձագանքներ», էջ 415։

[33] Անդ, էջ 422—423։

[34] Անդ, էջ 416։

[35] Անդ, էջեր, համապատասխանաբար, 331—337 (ըստ բոլոր տվյալների, Օհան Շիրինը հորինել է նաև հայերեն. տե՛ս էջ 413, «Քեշիշիս Շիրինին», հայերենով), 322—325 և 385—386։

[36] Ժամկոչյան Բ., «Հայնին», Բեյրութ, 1951, էջ 105։

[37] Անդ։

[38] Անդ, էջ 105—130։

Վերջիններս չափազանց քիչ են, գոնե դատելով մինչև այժմ հրատարակված ժողովածուներից։ Նրանցում արտահայտված չեն Հայաստանի, ինչպես վերոհիշյալ, այնպես էլ մյուս ազգագրական շրջանները, իրենց գեթ ուրվագծորեն ամբողջական դեմքով։ Անկեղծ ասած, նրանցում լիարժեք կերպով արտահայտված չեն անգամ հիշյալ շրջաններից մի քանիսի համար խիստ հատկորոշ, և մեր ժողովրդական երգաստեղծության ամենաարժեքավոր բաժինները կազմող ժանրերը։ Այսպես, լոկ փշրանքներ են ձայնագրված Ակնա-Վաղաշենի անտունիներից (դուրս թողնելով Գյուրիմացության միայն անտունի անվանված Կոմիտասի հանրահայտ «Անտունի»-ն, որ դարիբի երգ է)[39], Վանա և Կարնո պարային հռչակված խմբերգերից ու գործիքային նվագներից, և կամ Տարոնում ստեղծված հայկական դյուցազնա-վիպական գովված երգերից։ Ահա թե ինչո՛ւ վերն անվանված ազգագրական քիչ թե շատ հայտնի մի քանի շրջանները հատուկ կերպով չենք բաժանում մյուսներից։ Եվ ահա թե ինչո՛ւ, Հայնիից հետո խոսքը մասնավորելով, ասենք, Տարոնի շուրջ, ուշադրություն պիտի դարձնել դէ թե ազգագրական ու երաժշտա-ազգագրական տեսակետից այն քիչ արվածի, այլ հուշամատյաններից մեկում հանդիպող հետևյալ ու դրա նման բնորոշումների վրա։ «Տարոնի աշխարհը հնագարյան օրորան մը եղած է հեթանոսական մեհյաններու, կրոնական ծեսերու, աղոթքներու, նավասարդյան հանդեսներու և երգերու, ինչպես նաև դյուցազնավեպերու և առասպելներու։ Անցյալով հարուստ այս կեդրոնը հայկական նկարագրի ամենեն ցայտուն և ամենեն ուշագրավ արարքներու թատերաբեմը եղած է դարերով։ Ամենեն շեշտված հատկությունը զինվորական և ըմբոստ նկարագիրն է, որ կարմիր թելի պես կանցնի հին և նոր Տարոնի պատմության էջերեն։ Ու ահկե՝ դյուցազնավեպերու հյուսքը անոր դյուցազն զավակներու անունին և արարքներուն շուրջ։ Մեհենական պատերազմներեն հետո, լույսի ու գրականության մեծագործությունները... Մամիկոնյան տան դյուցազնական խոյանքները (Արտավազդ, Վասակ, Մանվել, Վահան, Մուշեղ, Վարդան սպարապետներու երգերը), ու ապա՝ Սանասար, Մհեր, Դավիթ և Փոքր Մհեր ազգային դյուցազնավեպի ստեղծագործությունը ... Տարոն քաջագործության և ազգային բաղձանքներու օրորան մը եղած է, ու չէր կրնար չըլլալ նաև երգի ու դյուցազներգության կեդրոն մը»[40]։ Սակայն միայն դյուցազներգության՝ Տարոնի ժողովրդական բանահյուսության «ամենեն հարուստ»[41] բնագավառում չէ, որ չհասցրեց պետք եղած հունձքը կատարել հայ երաժշտական ազգագրությունը։ «Երկրորդ հատկությունը նույնպես ակնբախ է Տարոնի և անոր կյանքին մեջ»,— կարդում ենք նույն տեղում։— «Տարոնի հայ ժողովուրդը կենսունակ է և կենսուրախ, հակառակ իր փոթորկալի կյանքին։ Եթե հեթանոսական նավասարդյան տոները վերջ գտնեն, քրիստոնեական ուխտագնացությունները նավասարդյան տոներու պես խրախճանքի վերածեն, կերգե ու կպարէ»[42]։ Այնուհետև՝ «Տարոնի ժողովուրդը լրջության և հերոսականին հետ սրամտությամբ օժտված է։ Կատակը և սրամտությունը կսիրե և կարտահայտե պատկերալից ձևերով, երբեմն սքողված, սինբոլիկ կարճ արտահայտությամբ»[43]։ Հավաքական ներաշխարհի այս հատկությունները բազմակողմանիորեն արտահայտող երգերը նույնպես չհասցրեց հայտնաբերել ու ձայնագրել մեր երաժշտական ազգագրությունը, մի կողմ թողնելով հետևյալ հարցերի մեջ մխրճվելու պարտքը։ «Տարոնի ամբողջ աշխարհը երբ միասին կառնենք՝ անոր բանահյուսությունը բարբառային երկու ճյուղի կբաժնվի։ Մշո դաշտ, Բուլանուխ, Խնուս, Վարդո և Սասուն Արևմտյան Տարոնը կկազմեն և զուտ Տարոնի բարբառով կստեղծագործեն, ավելի նուրբ և ավելի պատկերալից։ Ծոփաց աշխարհին սահմանակից ըլլալով և հին դարերեն սկսած հույն-բյուզանդական կիսագունդին պատկանելով՝ հելլենական արվեստի հավասարակշռությամբ կստեղծագործեն։ Իսկ Ախլաթ, Բիթլիս, Խիզան՝ Վանի բարբառի խառնուրդն ունին, մնալով անկախ և ինքնահատուկ ... Մոկաց և Սպարկերտի երգերեն շատերը Տարոնի երգերն են, Մոկաց բարբառին վերածված»[44]։

Տարոնի տեղահանության անմիջապես նախորդող շրջանի հայ աշուղների մասին, ցավոք, շատ քիչ բան է գրված ընդհանրապես, մինչդեռ ավելի քան պարզ է, որ «Մշու Սուլթան Սուրբ Կարապետը» բովանդակ Հայաստանի աշուղների պաշտպանն ու «մուրազատուր»-ը լինելով, և բոլոր քիչ թե շատ անվանի աշուղներին որպես հատուկ ուխտա-

---

39 Այդ մասին տե՛ս Աբեղյան Մ., «Գուսանական ժողովրդական տաղեր, հայրեններ և անտունիներ», Երևան, 1940, էջ 16 (տողատակ)։

40 Ս. Կ., «Պատմություն Տարոնի աշխարհի», Բիւրատ, 1957, էջ 476։

41 Անդ, էջ 512։

42 Անդ, էջ 476։

43 Անդ, էջ 477։

44 Անդ։

վորներ ընդունած լինելով, իր սեփական աշխարհում ևս աշուղական արվեստի բազմահազար սիրահարների հետ նաև փայլուն նվագացուցիչներ հովանավորած պիտի լիներ մինչև վերջ[45]. ինչպես արդեն ընդհանուր առմամբ հայտնի է, թե միայն Ս. Կարապետի վանքի անմիջական շրջապատում եղել են մեկից ավելի տեղացի աշուղներ[46]։ Նրանց կյանքի ու ստեղծագործության մասին տեղեկություններ բնավ չունենք, այլ քաջ գիտենք Մշո գյուղերից հռչակավոր աշուղ հերոս Ծրմոգին, որ նաև թագավոր եկեղեցու դպիրն էր. հետո Պոլսում երգեց Կում-Կափուի և Բերայի եկեղեցիներում ևս, Ղալաթիայի եկեղեցու դպրությունը ստանձնեց և միևնույն ժամանակ աննման «աշըղ»-ի համբավը վայելեց. 1915-ին գավառացի ուրիշ հայերի հետ աքսորվեց Անադոլու, և ողջ մնաց իր նշանավոր «թուրքի»-ների .շնորհիվ, որոնք կախարդեցին մարդասպաններին իսկ. հասավ Մուշ ու տեսավ իր ավերված գյուղն ու համագյուղացիների անթաղ դիակները. կեղծ ուրացության դիմեց՝ ժամանակ շահելու և մտածելու համար. և մի օր էլ «գժոխային մեքենա»-յով պատժեց նույն գյուղի (մզկիթում հավաքված) բոլոր իսլամներին, լուծելով գազանորեն խողխողված իր անմեղ համագյուղացիների արդար վրեժը, և ինքն էլ մարտիրոսացավ[47]։ Տարոնի ժողովրդական թե աշուղական երգ-երաժշտության համատեղ փայլատակումները տեղի են ունեցել առհասարակ ուխտագնացությունների ժամանակ դեպի Բաղեշի, Մուշի և Սասունի հնադարյան վանքերը, և նամանավանդ դեպի նույն Ս. Կարապետի վանքը։ «Հին ժամանակներեն Ս. Կարապետ հայուն սիրած ուխտավայրերեն եղած է,— գրում է Հ. Հ. Ոսկյանը։— «Հոն կհամախմբվին հեռավոր գավառներեն և մերձավոր վայրերեն ուխտավորներ, մանավանդ Վարդավառի և Վերափոխումի տոներուն։ Հորինված էին զանազան տաղեր ու երգեր, որոնք անոնց (իմա ուխտավորների) բերանն էին, նաև իրենց տան մեջ ու ճամբուն վրա։ ... Վանքին մեջ ու շրջակայքը տեղի կունենային եկեղեցական և աշխարհիկ հանդեսներ և զվարճություններ»[48]։ Ավելորդ է ասել, թե ինչպիսի արժեքներ մնացած պիտի լինեին, մինչև մեր օրերն իսկ, Ս. Կարապետի (փաստորեն պատմական Գլակա) վանքի նման հնագույն մի ուխտատեղիի ու նրա շրջակայքի ավանդապահ ժողովրդի հիշողության մեջ, նույնիսկ հեթանոսական ժամանակներից հարատևած[49], եթե տեղի չունենար անդարմանելին։

Տարոնում հնագույն ավանդություններ պահպանված պիտի լինեին նաև եկեղեցական երաժշտության բնագավառում։ «Ս. Կարապետի մեջ հինեն իվեր կար ծառանգավորաց վարժարանը»,— հաստատում են Սարգիս և Միսակ Բդեյանները, նշելով, որ նույնպիսի «ժառանգավորաց»-ներ ունեին Մուշի Առաքելոց, Ս. Հովհաննես ու մի քանի ուրիշ վանքերն ևս[50]։ Նաև հաշվի պետք է առնել, թե Մուշի հայկական եկեղեցիներին կից հինգ ծաղկոց-վարժարանները այնպիսին էին, որ «իրենց աշակերտներուն կսորվեցնեին՝ քերական, հեգարան, սաղմոս, ժամագիրք [և] շարական»[51]։ Այս վկայությունը առանց հատուկ քաշքշուկի կարելի է տարածել Բաղեշի ու Սասունի ծաղկոց-վարժարանների վրա ևս։ Մուշի վարժարաններում դասավանդած վարժապետներից, իբրև սիրված երգիչ-երաժիշտներ, հիշատակվում են Գասոյենց Մեծ Հակոբ վարժապետ ու Ստեփան վարժապետ Տեր-Բարսամյանը[52]։ Գալով առհասարակ երաժշտա-կրթական գործի տեսակետից Տարոնում մասնավոր ծառայություններ մատուցած հաստատություններին, այստեղ անհրաժեշտ է հիշատակել Միացյալ ընկերության վարժարանը Մուշի մեջ, և Ամերիկյան կոլեջը Բաղեշում։ Առաջինը փայլել է հատկապես Մ. Սարըյանի տեսչության օրոք, որն անձամբ մասնակցել է դպրոցում տարվող երաժշտա-կրթական աշխատանքներին։ «Սարըյան ինք դաս կու տար եկեղեցական հանդիսավոր օրերու երգեր։ Ինք

---

45 Ջեռնելով Մշո աշուղական հին, ասենք, Բաղդասարից, Մատուրից և Մատուր-օղլիից եկող ավանդությունների մասին (տե՛ս Լևոնյան Գ., «Հայ աշուղներ», Ալեքսանդրոպոլ, 1892, էջ 19 և 52), որոնք նույնպես իրենց նպաստը բերած կլինեին նորագույն աշուղների կազմավորմանը։

46 Միհաս Ջերազ, «Յա Սուրբ Կարապետ», տե՛ս «Դիթգավան», Գիրք Ա, խմբագրեց Հ. Մ. Պոտուրյան, Բուքրեշ, 1923, էջ 44։

47 Անդ, էջ 44—52։

48 Ոսկյան Հ., «Տարոն-Տուրուբերանի վանքերը», Վիեննա, 1953, էջ 241—243։

49 Հիշենք, թե այս տեսակետից ինչպիսի հորիզոններ է բացել մեր առաջ Ս. Կարապետի «մեծ ուխտագնացության» ժամանակ հանդիսավոր կերպով երգված և Կոմիտասի կողմից ձայնագրված, թեկուզ և միայն, Մուշի նշանավոր «Շորոր»-ը (պարերգ). տե՛ս Զոպանյան Ա., «Հայ երաժշտության և բանաստեղծության մասին» (բանախոսություն), «Անահիտ», Փարիզ, 1907, № 1, էջ 27։

50 Բդեյան Ս. և Մ., «Հարազատ պատմություն Տարոնոն», Կահիրե, 1962, էջ 14։

51 Անդ, էջ 11։

52 Անդ, էջ 12։

...Թլլեթբաշյան Նիկողոսի հետ՝ առանց շա-
...կիկ հագնելու՝ երբեմն կմասնակցեր եկեղե-
...ական երգերուն։ Լավ կերգեր ... Դպրոցա-
...ան երգերն ալ Բերբերյանի հետ դաս կու-
...ար. Թե հայրենյաց պսակադիր, Դու զո՞վ
...անդրես, երբոր բացվին, Ո՞րն է աշխարհ-
...Հայաստան, Ոչ եղբարք, Ազատն Աստված,
...Ազնիվ ընկեր, Ընցավ տարին, Առավոտյան
...աղցր և անուշ, Ի բյուր ձայնից, Տեր Կեցո,
...Արիք Հայկազունք, Բամ փորոտան, Ալոն
...ղ՝անֆան»[53]։ Ի միջի այլոց, այս վերջին երգի՝
...եղափոխական վերստեղծիչ պայքարի խոր-
...երդանիշը հանդիսացող նշանավոր «Մար-
...սեյոզ»-ի տարածված լինելը հայկական
...երջանակներում՝ շատ բան է հուշում այդ
...երջանակներին համակած ճշմարիտ հայրե-
...նասիրական (հակաավատատիրական, հա-
...կամիապետական և հակաբռնատիրական,
...այլ ոչ թե նեղ-ազգային, շովինիստական)
տրամադրությունների մասին։ Շարունակե-
լով վերևի վկայությունը, պետք է արձանա-
գրել նաև, որ Մուշում «խմբական երգեցո-
ղությունը դպրոցներու մեջ Սարբյանի օրով
գոյություն ունեցավ»[54]։ Ինչ վերաբերում է
Բաղեշի Ամերիկյան կոլեջին[55], նրա մասին
մանրամասն տեղեկություններ չկարողա-
ցանք ձեռք բերել, այլ, դատելով առհասա-
րակ Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և
Անադոլիայի նույն կոլեջների գործունեու-
թյունից, գեթ ընդհանուր ձևով կարող ենք
ասել, թե Բաղեշի այս կոլեջը նույնպես, ջո-
թաքի և թավջութակի, դաշնամուրի ու երգե-
հոնի ճաշակը հաղորդած պիտի լիներ իր հայ
ուսանողներին։

(Շարունակելի)

---

53 Ա. Կ., նշված ախատությունը, էջ 324—325։

54 Անդ, էջ 325։

55 Այդ մասին տե՛ս Մոցիկյան Ս., «Արևմտահայ աշխարհ», Նյու-Յորք, 1947, էջ 130։

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

ՄԱՅՐՍ ՓՐԿԵՑ ՋԻՍ ԵՓՐԱՏԵՆ

Շապին-Գարահիսարի հերոսամարտին շքեղ 26 օրերուն վրա սև վարագույր իջնալեն հետո, երբ բերդեն վար իջանք, մեզմե 500—600 հոգի, ամբողջությամբ կին, երեխա ու պատանի, քաղաքեն մեկ ժամ հեռու գտնվող չքնաղ Թամզարա գյուղը տանիլ տեղավորելու պատրվակով, թուրքերը մեզ ճամբա հանեցին ու աքսորեցին։ Մեր այն հարցումին, թե «մեզ ո՞ւր կտանիք», ըսին՝ «Միջագետք»։ Մեր մեջ չափահաս այրեր չկային, բոլորը նախօրոք սպանված էին։ Նրբայրս՝ Հայկազը և Անուշավան Խանճյանը, որոնք երկուքն ալ 17 տարեկան էին, իբրև «գարթ կյավուր» վար դրին ու գնդակահարեցին։ Որով, ես, հազիվ 15 տարեկան պատանի, մեր խումբին մեջ գտնվող մանչերուն ամենեն տարեցը մնացի։ Շատեր կզարմանային, թե ինչպես կըլլար, որ թուրքերը զիս ալ վար չէին դրեր, կամ՝ տեղնուտեղը գնդակահարել։

Բռնագաղթի առաջին օրը, վերը հիշած երկու պատանիներես զատ, սպանեցին նաև ծերունի կին մը, որովհետև չէր կրնար ճամբան շարունակել։ Երկրորդ օրը, ձորի մը մեջ մեր քարավանը կիսեցին ու վերջին մասը հանձնեցին հոն սպասող չարդարարներու։ Անոնցմե ոչ ոք ազատեցավ։ Երրորդ օրը, հոգնած ու քաղցած, հասանք Աղվանիս։ Աղվանիսը Աշխարհ Օվայի բերրի հայ գյուղերեն մեկն էր, մյուտիրանիստ։ Իր հողե ցածլիկ տուներուն մեջեն հպարտորեն գլուխը վեր կբարձրացներ հայոց եկեղեցին՝ իր զանգակատունով ու փեշին տակ ծվարած դպրոցով։ Աքսորեր կամ չարդեր էին բոլոր հայերը ու անոնց բնակարանները հիմա կգործածեին իբրև օթևան ճակատ գացող կամ ճակատեն ետ դարձող զինվորներու։ Կարնո ճակատը պահեն կամ ռազմանյութ փոխադրող քարավաններն ալ այս գյուղին մեջ կանգ կառնեին։ Ահա թե ինչու, երբ մենք հոն հասանք, գյուղը լեցուն էր զինվորականներով։ Ընդարձակ կալի մը մեջ ձգեցին մեզ, որ հանգչինք, շունչ առնենք։ Ոստիկանի մը ընկերակցությամբ մեզի այցելության եկավ 8—10 տարեկան տղեկ մը։ Հագված էր պզտիկ պարոնի մը պես։ Ըսավ, որ ինք հայ էր, բայց հիմա իր անունը Թևֆիք է ու իր «նոր հայրիկը», որ գյուղին մյուտիրն է, զինքը շատ կսիրե։

— Մայրիկդ ալ հոս, քո՞վդ է,— հարցուցի։

— Չէ, մայրիկս գնաց, բայց նոր հայրիկս մարդ ղրկեց իր ետևեն, որ գտնե ու ետ բերե։

Մայրս, որ ներկա էր այս խոսակցության, նեղնեղվեցավ։

— Եթե այս տղան կրցած է որդեգրվելով ազատվիլ, դուն ալ կրնաս,— ըսավ ուրախությամբ։— Արդեն կկաղաս՝ ու պիտի չկրնաս շարունակել ճամբադ։ Դուն աչքովդ տեսար, թե ի՛նչ կպատահի ետ մնացողներուն։ Աս ալ կա որ, չեմ ուզեր քեզ աղքատի, գեղացիի տալ. ծանր աշխատանքի տակ կսպաննեն քեզ... Ջանա՛, այս պզտիկին պես, էրկանակոտա (հեղինակավոր) մեկը գտնել իբրև տեր ու պաշտպան։

Չպատասխանեցի։ Գլուխս կախած կուլայի և կմտածեի իր ըսածներուն մասին։

— Եթե այդ տղան կրցեր է մնալ, ուրեմն հայ տղաքը որդեգրելու արտոնություն կա,— եզրակացուց ան,— ուրեմն աչքդ բաց։

Նորեն չպատասխանեցի, գլուխս կախ կմտածեի։ Կմտածեի, թե ինչպե՞ս կրնամ ընտանիքս լքել ու իմ կաշիիս փրկության մասին մտածել... Չէ՞ որ տունին այր մարդը ես էի հիմա...

— Ինչո՞ւ շվարեր մնացեր ես, չլսեցի՞ր ըսածներս։

— Լսեցի։

— Ուրեմն...

— .....

Եղեռնը (Նկարիչ՝ Բյուզանդ Կոճամանյան, Կահիրե)

— Ինձի նայէ՛, զաւա՛կս, դուն դպրոցը ազգային պատմութիւն, քաջ Վարդանի պատմութիւնը չե՞ս կարդացած. ան ալ, մյուս նախարարներն ալ երեսանց ուրացան իրենց կրոնն ու Աստուածը, բայց Ղևոնդ երեցը ներեց անոնց։ Անոնց ներող Աստուածը քեզ ալ կներե։ Կան պարագաներ, որ հարկը օրենքը կլուծե։ Ամերիկա և Ռուսիա աղբարներ ունիս, օր մը կազատիս ու կգտնես զանոնք... Ու անոնց կպատմես, թե թուրքերը ի՛նչ կարմիր ձյուն բերին մեր գլխուն։

— Աղեկ, ենթադրենք, թե ես թրքացա ու մնացի, բայց դո՞ւք, հարսներդ, պզտիկնե՞րը...

— Հոգ չէ, քու ներկայութենեդ օգուտ մը չկա մեզի համար, ընդհակառակը, վաղը, մյուս օր ժանդարմա մը կուգա ու կըսե. «Ինձի 5, 50, 100 ոսկի տուր, չենե տղադ կսպանեմ». այնատեն ես գլուխս ո՞ր քարին կրնամ զարնել... Լավ է, որ դուն գլխուդ ճարը նայիս։ Հարսները արդեն թույն ունին հետերնին. երբ տեսնեն, թե պատիվնուն պիտի դպին, կառնեն ու կազատին։

— Մա՛յր...

— Հիմա խոսք մտիկ ըրե, տղա՛ս, ու գնա գլխուդ ճարը գտիր։

Գտա միջոցը՝ առանց փնտռելու. ավելի ճիշտ՝ միջոցը եկավ ու գտավ զիս։ Մոտակա աղբյուրը լվացված պահուս, թուրք կին մը հավնեցավ ինձի ու առաջարկեց, որ մուսուլման ըլլամ, որ զիս որդագրե, իր տունը տանի։ Իր հետ «լա իլա իլլալլահ» ըսի ու եղա իսլամ։ Ի՛նչ ալ դյուրին էր...

Կինը, երբ զիս հսկող ոստիկանին տարավ, որդեգրումս վավերացնելու համար, մարդուն խելքը կարեց ու ինք վար դրավ զիս։

— Քաղաքաբնակ այս տղան դաշտին մեջ աշխատանքի դնելով կսպաննես,— ըսավ,— ես զայն հետս կտանիմ տուն ու դպրոց կղրկեմ։

Վազեցի մորս քով՝ ուրախ լուրը տալու և իր օրհնությունն առնելու վերջին անգամ։

Լացավ։ Բայց բացատրեց, թե ուրախութենեն է որ կուլա... Խրատներ տվավ ու գլուխս ափերուն մեջ առած, սեղմեց կուրծքին ու սկսավ անհագորեն համբուրել։ Անհուն կորովով իր ձեռքերը կպտցներ դեմքիս, ճակտիս, այտերուս վրա, կարծես ջանալով անոնց ջերմությունն ու կաղապարը անջնջելի կերպով դրոշմել իր ափերուն մեջ, որ, երբ միտքն ու հիշողությունը դավաճաններին իրեն, ափը հիշե...

Վերջապես արցունքներս սրբեց ու մեղմորեն հանդիմանեց զիս։

— Ի՞նչ մատ մը տղու պես կուլաս...

— Հապա դուն ինչո՞ւ կուլաս։

— Ես... ես... ես... եթե լալս շատ կտեսնես ինձի, ա՛լ չեմ լար... Բայց դուն իմ վրաս մի՛ նայիր, ես մայր եմ։ Ինտո՞ր մայր ըլլալու եմ, որ չլամ... Չէ՞ որ դուն վերջինն ու հինգերորդ զավակս ես, որ կկորսցնեմ... Օտարի դուռ կձգեմ... Իմ խե՜ղճ, իմ անբա՜խտ, իմ անո՜ւշ ձագս... Կօրհնեմ քեզ բոլոր հոգիովս ու բոլո՜ր սրտովս։ Թող տված կաթս հալա՜լ ըլլա... Թող բոլոր նեղութիւնները դժամանակավոր ըլլան, քար բռնես՝ ոսկի դառնա. փուշ բռնես՝ վարդ... Հիշե՛ միշտ, թե ամեն ձմռան գարուն մը կհաջորդե կրնկակոխ ու ամեն ամպի ետև՝ արև մը կա... Հոգ տար ինքզինքիդ, առողջութեանդ։ Կարևոր է այդ։ Խրատ մըն ալ։ Կրոնդ, ազգդ ու հավատքդ չմոռնա՜ս։ Մեզի համար հոգ չընե՜ս... Մենք բան մը կըլլանք... Ալեմը ինչ՝ մենք ալ ան... Ու ա՛լ մի լար։ Եթե ես կուլամ, այդ իմ կամքես անկախ է։ Ինչա՜նկ մայր ըլլամ որ չլամ...

Իր հոգնած, արևահար դեմքին վար, կապույտ աչքերեն ծորող արցունքը ջուրի պես կհոսեր։

— Չե՛մ երթար, մայրի՛կ, ձեզ մինակ ձգած չե՛մ երթար,— պոռացի հանկարծ իր վիզը իյնալով։

— Չէ՛ մանչս, մնալը ստուգ մահ է, պետք է երթաս։ Եթե երթաս, մեռած պահուս, հոլյսը սրտիս մեջ պիտի մեռնիմ... Ա՛լ ամեն բան հիշելու չափ մեծ ես ու խելահաս. վախ չունիմ, թե հոգիով կկորսվիս... Կօրհնեմ քեզ, թող տված կաթս հալա՜լ ըլլա... Դուն մեզ համբուրե, մենք քեզ, ու ե՛լ, գնա՛։

Երբ իր վերջին պատվերը կատարելէ վերջ կերթայի, հասավ ետևես։

— Կեցիր անգամ մըն ալ համբուրեմ քեզ։ Վերջին անգամ մըն ալ... Իմին անբա՜խտ, իմին օտարի դուռ ձգված ձագուկս, իմին... Իմի՜ն... Իմի՜ն... Ջա՜նս, ջիկե՜րս, յավրո՜ւս...։

***

Այդ թվականեն մոտավորապես վեց ամիս վերջ, քրդական գյուղի մը մեջ հանդիպեցա Արտեմիս անունով մեկ ազգականուհիիս։ Անակնկալ այս հանդիպման պատճառած հուզման ալիքն անցնելեն վերջ, հարցուցի, թե գիտե՞, թե ի՛նչ եղան մերինները, մայրս...։

— Մինչև էկին մեզի հետ էր,— ըսավ,— հարսներն ու թոռները շուրջը հավաքած, մինչև հոն եկավ մեզի հետ։

Լռեց։

— Վերջը՞,— հարցուցի սիրտս սեղմած։

— Ա՛լ լուր չունիմ, վերջեն լուր չունիմ։

— Ինձմե մի՛ պահեր, ստուտ մի՛ խոսիր։

— Իրավ կըսեմ, Արամ աղբար, լուր չունիմ. եթե ստուտ եմ, թո՛ղ աչքս քոռնա, թո՛ղ Աստված հոգիս առնե... Չէ՛, մի՛ նայիր ինձի այդպես, խաչ որ լուր չունիմ... Այնպես իրարանցում էր, այնպես սարսափելի...

Հասկցա։ Լուր ուներ։ Գիտեր։

Բայց չէր կրնար, չէր ուզեր արտասանել ահավոր բառը,— Եփրա՜տը։

Եփրա՜տը, հարյուր հազարներու ջրեղեն գերեզմանը...։

ՍԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳԱԼՖԱՅԱՆ

ՀԱՅԿԱԶՈՒՆՔ ԱՐԻ ԱՐԱՆՑ

Կեսարիո հայութեյան ապրիլեան եղեռնի տահատակաց պատմութեյունը մեծ մասամբ գրված է մեր հմուտ բանասեր Արշակ Ալպոյաճեանի կողմեն, երկու մեծահատոր «Պատմութեյուն հայ Կեսարիո» գրքին մեջ։ Առհավետ երախտաբարտ կմնանք իրեն։

Ուրիշ գրողներ ալ տակավին կփորձեն լրացնել զայն, որոնք ևս արժանի են գնահատման։ Ես ինքս ալ իմ համեստ կարողութեյամբ, իմ ծննդավայրս Զոմախլու գյուղի և ապա «Գիրք Ելից հայոց» գրքերու հրատարակութեյամբ, ջանացեր եմ հայ եղեռնի ականատեսի վկայութեյուններով, արի արանց Հայկազեանց անմար կանթեղին մեջ կաթիլ մը յուղ ձոնել, հիշատակ անմոռացութեյան։

Այսօր, մեր այդ միլիոնավոր նահատակաց հինգամյակին, մեր Վեհափառի շնորհալի պատգամին հետևելով, կհամարձակիմ, Կեսարիո առաջին մարտիրոսացած Ինճեսուի նախասարկավագ հովիվ, քաջ Տեր Ատոմի և իր համայնքին նահատակութեյունը ամփոփել, սրտամորմոք, հակիրճ հուշերով։

1914—1918-ի աշխարհավեր պատերազմի սև օրերուն, 18-են մինչև հիսուն տարիքը ունեցող հայ երիտասարդները, որպես Թուրքիո քաղաքացիներ զինվորագրված, բայց անզեն, բահ ու բրիչով, հոս ու հոն ցրված, ճամբաներ կշտկեին։ Ես ինքս ալ այդ բանվոր զինվորներու վեցերորդ վաշտին մեջն էի, Արգեոսի մոտ։

Մենք քաղաքացիական պարտականութեյուն կկատարեինք հավատարմորեն և ահա մեր հավատարմութեյունը ինչպե՞ս գնահատվեցավ երիտասարդ Թուրքերու կողմեն։

Լսեցինք, որ 1915 մարտ 15-ին Կեսարիո կոմիսար Ահմեդ բեյը չորս ոստիկաններով կիջևանի Ինջեսուի գյուղապետ Վարդան Բարսեղյանի սենյակը, և կհրամայե անմիջապես հանձնել հայ կուսակցութեյուններու զենքերը։

— Ես տեղեկութեյուն չունիմ, որ հոս կուսակցութեյուններ կան և զենք ունին,— կըսե Բարսեղյան։— Բայց ունինք քանի մը որսի հինումին հրացաններ, ինչ որ պատրաստ եմ հավաքել և ձեզ հանձնել։

— Խային գյավուր,— կսաստե կոմիսերը,— չե՞ս գիտեր, որ հնչակյանները հոս բերած են 100 մարթին և սնդուկներով փամփուշտ։ Հիմա եթե ադոնք շուտով չհանձնեք մեզի, դուք դավաճաններ եք և ձեր արժանի պատիժը պիտի կրեք...

Հետո, կոմիսերը կհրամայե ոստիկաններուն, որ երթան հավաքեն գյուղին էրիկ մարդիկը և հոն բերեն։ Ոստիկանները զինյալ կմտնեն տուները և մեկ ժամվան մեջ հավիվ տասը հոգի կրնան հավաքել, որոնց մեջ են գյուղին հովիվը՝ Տեր Ատոմ Անչիկյան և սարկավագ Միհրան Դավիթյան և գյուղին հարուստը՝ Փանոս Օհանյան։ Արդեն գյուղին երիտասարդները բոլորը զինվոր էին։

Առաջին հարցուփորձին Օհանյան ծունկի կուգա կոմիսերին առաջ, վաթսուն դեղին ոսկի նվիրելով։ «Բեյիմ,— կըսե,— մենք գյուղացիներս ոչինչ գիտենք, թե ի՞նչ է հնչակը և ի՞նչ է դաշնակը։ Մենք կհետևինք մեր տերտերին և մեր տիրացուի քարոզներուն...»։

— Պահկեցուցե՛ք ուրեմն սա ղաբաքաշը և գանակոծեցե՛ք։

Այդ միջոցին Օհանյան և Բաղդասարյան, աչքի արցունքով կոմիսերին ոտքը կհամբուրեն և կազատեն հովիվը։ Հոս միջանկյալ հիշենք, որ այդ սև օրերուն մեր գյուղաքաղաք էվերեկի տեղակալը ապագայի ոճրագործ Զե-

քին էր։ Կոմիսերը անշուշտ կաշառքեն խելքի եկած, կհրամայէ, որ գյուղեն անմիջապես հավաքեն որսի չախմախլը հրացանները և զանոնք, Տեր Ատոմն ալ միասին, ոստիկաններուն հետ կտանի կհանձնէ էվերեկի տեղակալին և կմեկնի Կեսարիա։

Զեքին անշուշտ հուսախաբ, կհրամայէ որ դարաբաշը բանտարկեն։

Ամիս մը բանտի տառապանքեն ետք, Զեքին իր մոտ կբերե Տեր Ատոմը և կըսե։ «Խրնգըր գյավուր, չոջո՞ւգ մը ալղադիյորսուն, յոխսա զանն էղիյորսուն բեհիմ խաբերիմ յո՞գ մու...։ Յաքըրը՛ն չու խրնգըրը, վուրուն, գեբեսիհն» (Սատկեցուցեք այս խոզը)։

Տեր Ատոմին այդ պատժի մասին, ականատեսներու վկայությամբ, կգրե Թեոդիկ 1925-ի տարեցույցի մեջ.

«Տեղակալ Զեքին կհրամայե պառկեցնել զայն և ֆալախան անցնել ոտքերուն։ Խոշոր բիրի մը հարյուրավոր անխնա բաշխումներուն տակ երբ արյունը կսկսի ժայթքիլ անոր մորթահերձ ներբաններեն, հարվածները կդադրին, մինչ գայմագամը՝ անգութ Զեքին, կրկին կսիրտե հայտնել պատկանած կուսակցության թուղթերուն ու զենքերուն թաքստոցը...։ Եվ իր հարցումին բացասական արդյունքեն ավելի զայրացած, կհրամայե նորեն պառկեցնել խոստովանելու համառությունը գործող այս քոմիթաճին։ Այս անգամ ահռելի ճիչերու մեջ դարձյալ ծեծը կսկսի ահռելի կերպով։ Հարվածները կտեղան թիկունքին, իրանին, կողերուն ու կողոփոցներուն, մինչև որ Տեր Ատոմ նվաղած կփռվի գետին...։ Եվ ահա խոշտանգումի նոր գյուտ մը կբերե Զեքին—խելքին՝ չարափոխյալ աստվածը։ Երկու ճոկաններ կձետեղեն ծունկերուն ետև և սրունքները վրան ծալլելով կնստեցնեն, մինչ երկու հոգի ուսերուն վրա կդնեն արջու թաթերնին՝ մարմինն ուժգնակի ճնշելով վար։ Հոդոսկրի ու ձգաններու ցավագին ճարճար մը լսելի կըլլա հանկարծ, ընդհանուր լուության մեջ...։ Հարամուտքը կխախտի և Տեր Ատոմ կփլի ինքն իր վրա...։

Ոստիկանին մեկը՝ նույն պահուն «նարկիլե»-ի մը կաշեփողին շամբը՝ կմխե դեպի Տեր Հոր սրբանը, մյուս ծայրեն փշելով։ Որովայնը կսկսի ուռիլ և առիթել սայրասուր խիթեր...։ Քովի խշտյակեն (ֆեննեսեցի ուսուցիչ) Գաբրիել Թագվորյանը արցունք կթափե... մինչև որ կարգը կուգա եղունգները քաշելու անգթության և աքցանին բիրտ խածատումով մատներուն ծայրեն կարմիր արյունը կկաթկթի...»։ (Այսշափը բավ է կարծեմ, ընթերցող)։

Հաջորդ օրը, մայիս 20-ին, Զեքի հրամայե դարաբաշը կապել իշու մը վրա, ինքն ալ (երկու մատնիչները) միասին՝ կառնե քանի դինյալ ոստիկաններ և կուգա ուղղակի Տեր Ատոմին տունը, ուր կհավաքվին թուրք աղաներ ալ։ Սենյակը վար-վեր կխուզարկեն կուսակցական թուղթեր գտնելու համար, բայց ոչինչ կար, վասնզի Տեր Ատոմ իր ձերբակալութենեն առաջ ամեն բան այրած էր։ Ասոր վրա Զեքին կկատղի և հրամայե գանակոծել Տեր Հոր ծնողքը և երեցկինը. «Պառկեցուցե՛ք և սատկեցուցե՛ք այդ շուներն ալ...»։

Ճիշտ այդ պահուն, Տեր Ատոմ «Ցա Սուրբ Աստվածածին» կըսե և ակռաները կրճտելով կհարձակի ոստիկաններուն վրան։ Եվ անհավասար կռիվներու միջոցին, ոստիկաններեն սրահար կիյնա իր կնոջ և ծնողքին մարմիններուն վրա շնչահեղձ։

Ապա հոդ կբերեն և թոպահար կսպաննեն սարկավագ Միհրան Դավթյանը՝ որպես ճնշկատեճադպիր։ Հետո կարգավ սրահար կրսպաննեն Բաղտասար Գասպարյանը, Հովակիմ Բեհան Պողոսը, Պետիյան Գևորգը, Այտճյան Սարգիսը, Հաճավագյան Հակոբը, Աբրահամ Ուստաֆելմկրտչյանը։ Եվ ապա անոնց մարմինները էշերու պոչին կապած, քաշկռտելով կտանին մոտի լեռը...։ Եվ քովերնին մեյ-մեկ հրացան դնելով, իբր գնդակահար եղեռնախաչեներ Պոլիս կհեղեկագրեն մայիս 23-ին։ Շաբաթ օր Ինճեսուե ամբողջությամբ կքշեն սարուձոր։

ԳԱՐՄԱՆ ԿՈՓԻԿՅԱՆ

ՓԱ՛ՌՔ ՊԱՐՏՎԱԾՆԵՐԻՆ

(„GLORIA VICTIS!“)

«Եւ եղև ի վերայ իմ ձեռն Տեառն, և եդ զիս ի մէջ դաշտին, և այն լի էր ոսկերօք մարդկան. և անց բազում յոյժ էին ի վերայ երեսաց դաշտին, և ցամաքեալ յոյժ:

Եւ ասէ ցիս. «Որդի մարդոյ, իցէ՞ թէ կենդանի լինիցին ոսկերդ այդոքիկ»: Եւ ասեմ. «Տէր, Տէր, Դու գիտես զայդ»: Եւ ասէ ցիս. «Որդի մարդոյ, մարգարեաց ի վերայ ոսկերացդ այդոցիկ և ասասցես ցդոսա. «Ոսկերդ ցամաքեալ, լուարուք զպատգամս Տեառն: Աճուսիկ ես ածից ի վերայ ձեր շունչ կենդանի, և կենդանասջիք: Եւ տաց ի ձեզ ջիղս. և ածից ի վերայ ձեր մարմինս, և ձգեցից ի վերայ ձեր մարմինս, և ձգեցից ի վերայ ձեր մորթ, և տաց զոգի իմ ի ձեզ...»:

... Եւ անց եղև շարժումն. և մերձեցաւ ոսկր առ ոսկր առ իւրաքանչիւր յօդս: Եւ տեսի և անց ջիղք և մարմինք պատէին, և ձգէր ի վերայ նոցա մորթ, և շունչ ոչ գոյր ի նոսա:

Եւ ասէ ցիս. «Մարգարեաց ի վերայ շնչոյն, և ասասցես ցշունչն. «Ե՛կ, շունչ, ի չորից հողմոց, և փչա՛ ի մեռեալս յայսոսիկ և կեցցեն»:

Եւ եմուտ ի նոսա շունչն, և եղեն կենդանի, և կանգնեցան կացին ի վերայ ոտից իւրեանց ժողովուրդ բազում յոյժ յոյժ....»:

ԵՁԵԿԻԷԼ, Լէ 1—10:

Եբրայեցի նշանաւոր փիլիսոփա և բանաստեղծ Եզեկիել մարգարեի (Զ դար Ք. Ք. ա.) վերոհիշյալ խոսքերը, ասված հրեա ժողովրդի հանդեպ գործադրվող ահեղ ջարդերի կապակցությամբ, նույնությամբ համընկնում են 1915 թվականի համազգային Մեր մեծ եղեռնին, որն սկսվեց նույն տարվա ապրիլի 24-ին և շարունակվեց ավելի քան մեկ տարի, միլիոնավոր զոհեր խլելով հայ ժողովրդի զավակներից:

Հիշելով այս եղերական թվականը, ես բոորովին էլ մտադիր չեմ նորից անդրադառնալու այն քաոսմանելի վայրագությանց, ջարդարարական այն հրեշավոր տարաճևերին, որպիսիք գործադրվեցին հայ ժողովրդի հանդեպ թուրք կառավարության կողմից: Մտադիր չեմ, որովհետև հիսուն տարվա ընթացքում բազմաթիվ ականատեսների փաստական նկարագրությունները, աշխարհի բոլոր լեզուներով հրատարակված հազարավոր վկայություններն ու գրավոր ապացույցները անզոր եղան արդարության ձայնը լսելի դարձնելու համար:

— Ի՞նչ անել, ինչպե՞ս անել, հատուցման ինչպիսի՞ եղանակ ընտրել,— պիտի հարց տաս, իմ սիրելի ընթերցող և արյունակից:

Հատուցման եղանակը մե՛կ է, եթե ուզում ես, որ թակարդված աղատության վերածվի հաղթանակի:

Հարկ է թշնամուն հատուցել վրեժի բարձրագույն չափով. այն է՝ վերածննդի կուրացուցիչ լուսարձակի ուժով ցույց տալ մեր ժողովրդի ո՛չ միայն գոյատևման, այլև անընկճելիության փաստը: Այս սրբազան հավատը անհրաժեշտ է դարձնել իրականություն:

Այնժամ, այն թուրք դահիճը, որ դեռ ապրում է Թուրքիայի ինչ-որ մի անկյունում, մնա, որ իր թրով ճեղքեց հայ կնոջ արգանդը, արյունոտ մատներով դուրս քաշեց այնտեղից դեռ լրիվ չկազմավորված անմեղ մանկան և կատր-կատր անելով շպրտեց շների առաջ, տեղնուտեղը հանկարծամահ պիտի լինի անխուսափելի վրեժխնդրությունից սարսափահար։ Այնժամ, հուսահատ թշնամին կատաղությունից պիտի ոռնա, տեսնելով ողջ մի ժողովուրդ բնաջնջելու իր ծրագրի սնանկությունը, որ իր չարդած միլիոնները նորից կյանք են ստացել և բերնեբերան լցվել իրենց վաղեմի հարազատ երկրում։

«Փա՜ռք պարտվածներին»։

Այսպես է նշանաբանը մեծ մարգարե Եզեկիելի, այսպիսին է խորախորհուրդ իմաստը նրա։

«Եւ ասէ ցիս... «Մարգարեաց ի վերայ շնչոյն. և ասասցես ցշունչն. «ե՛կ, շունչ, ի չորից հողմոց, և փչեա՛ ի մեռեալս յայսոսիկ և կեցցեն»։ Եւ եմուտ ի նոսա շունչն, և եղեն կենդանի, և կանգնեցան կացին ի վերայ ոտից իւրեանց ժողովուրդ բազում յոյժ յոյժ...»։

Իմ սիրելի ընթերցո՛ղ և արյունակի՛ց, իմացի՛ր, որ այս նպատակին հասնելու համար երեք միջոց կա.

Առաջին՝ չմոռանալ երբեք և միշտ վերհիշել ապրիլի 24-ը։

Երկրորդ՝ չմոռանալ երբեք և մի՛շտ հիշել, որ մեր նահատակների հիշատակին կանգնեցված հավերժական հուշարձան է մեր վերածնված Մայր Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը։

Երրորդ՝ չմոռանալ երբեք և միշտ հիշել, որ պատերազմը չարիք է, ցեղասպանությունը՝ ոճիր, և պետք է աշխատել ու պայքարել աշխարհում կայուն խաղաղության և ժողովուրդների միջև եղբայրության և ավետարանական սիրո թագավորության հաստատման համար։

Ա՛յս է պատգամը մեր բյուրավոր նահատակների։

ՀՌԻՓՍԻՄԵ ՍԵՐԻՆԿՅՈՒԼՅԱՆ

ՀՈՒՇԵՐ ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԻ ՄԱՍԻՆ*

Գրիգոր Զոհրապի պես մեծ մտքի տեր և հանճարեղ անձնավորության մասին գրելու համար, պետք է գրիչ ունենալ և ոսկի գրիչ, իսկ իմս մատիտ է անգույն, բայց որովհետև իրարու շատ մոտ մարդիկ ենք եղած և ամեն օր հանդիպած, մանավանդ որ տղայիս կնքահայրն էր, փորձեմ հուշերես բան մը թողուլ սա թուղթին, որ մնա անկորուստ։

Զոհրապ միջահասակ, բավական լեցուն կազմվածքով, կլոր դիմագծերով, ուշագրավ տեսքով, շարժուձևերով աշխույժ մեկն էր, զննող, նկատող հայացքով, այնպես կդիտեր շուրջը, որ կարծես գրելու նյութ կհավաքեր։ Արտաքնապես միշտ շատ ճաշակավոր, անգլիական ամենաազնիվ բրդեղեն կտորներով կոստյումներու մեջ և ամեն ինչ հագվածին համապատասխան, բաճկոն, փողկապ, թաշկինակ և այլն, և այս բոլորը շատ անփույթ ձևով, կարծես ինքնիրենը եղած ըլլար։

Պերճաբան էր Զոհրապ, բառի ամենալայն իմաստով, ճիշտ այնպես կխոսեր, ինչպես որ կգրեր։ Ուր որ ալ ըլլար՝ խորհրդարան, ազգային երեսփոխանական ժողով, որևէ ընկերական հավաքույթ, գրական երեկո, իրենց տունը, մեր տունը, երբ Զոհրապն էր խոսողը, բոլորը կլռեին և բերանաբաց կլսեին։ Ան կնկարեր, կքանդակեր կարծես իր պատմածը։

Ամեն նորության, ըլլա գրական, գիտական, գեղարվեստական, քաղաքական, անմիջապես կտեղեկանար, ոչ միայն իր ապրած երկրին մեջ, այլև ամբողջ աշխարհի մեջ և իր հեղինակավոր կարծիքը կհայտներ այդ մասին։

Բնակարանը, Բերա Թաղամասի Այազփաշա փողոցի ծովահայաց մեծ տան մը մեջ, վերևի 4-րդ հարկը, սքանչելի տեսարան ուներ։ Ննջարանի պատշգամեն, պատուհաններեն ցույց կուտար շոգենավերու, նավակներու, մակույկներու անընդհատ լողալ-երթևեկը, կյանքին հետ համեմատելով։

Աշխատասենյակը կգտնվեր մուտքի դռան ճիշտ դիմացը, ոչ շատ մեծ, պատերը մինչև առաստաղը գրապահարաններ՝ փառակազմ գրքերով։ Գրասեղանը նույնպես ոչ մեծ, ամենաազնիվ փայտեղենով շինված, վրան ամեն ինչ գեղարվեստական՝ քանաքաման, գրիչ, մատիտ, թերթահատ, արձանիկներ և այլն։ Կսիրեր առհասարակ դուռը բաց աշխատիլ, գրասեղանին առջև, կքած թուղթե-

---

* «Էջմիածին» ամսագրի խմբագրության ենք ներկայացնում հայ մեծանուն գրող Գրիգոր Զոհրապի մասին գրած ակնատեսի՝ տիկին Հռիփսիմե Սերինկյուլյանի շատ կողմերով ուշագրավ հուշերը։ Տիկին Հ. Սերինկյուլյանը լինելով գրողի մտերիմ ընկերոջ՝ Վարդգեսի կինը, հաճախ, Պոլսում ապրած տարիներին, ելոմոտա է ունեցել նրանց տանը, մոտ կապերի մեջ է եղել ընտանիքի հետ, ականատես է եղել նրանց նախատուկացին, Զոհրապի ձերբակալության և աքսորվելուն, ընտանիքի տառապանքներին։

Տիկին Հ. Սերինկյուլյանը իր հուշերը Թբիլիսիից ուղարկել է գրականության և արվեստի ֆանգարան։ Հուշերի բնագիրը պահվում է Գրիգոր Զոհրապի արխիվային փոքրիկ ֆոնդում։— Գ. Ազյան։

1915



ՄՈՒՐԱՏ (ՀԱՄԱՐԱՐՈՒԹ ՐՈՅԱՔՅԱՆ)

1965

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՀՐԻԿՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ Կ. ՄՈՆՈՅԱՆՑ

Է. ԱԿՆՈՒՆԻ

ՊՈՂՈՍ ԿԱՐԱՊԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԻՐԱՆ ՋԵԼԱՑՅԱՆ

ԳՈՎՏ. Ն. ՏԱՂԱՎԱՐՅԱՆ

Գ. ԽԱՉԱԿ

Վ. ՌԱՄՄՅԱՆ

ՓԱՐԱՄԱԶ

Վ. ԱՐԴԳԵՍ

ն վրա, պենսնեն քթին։ Իրենց այցելելու
ժամերուն, երբ կտեսնեինք զինքը այդ դիր-
ք, արագ մը կանցնեինք և կմտնեինք հյու-
սենյակ։ Մեր գալեն քանի մը րոպե անց,
ղգար եռանդով բարևելու մեզ։ Ներողու-
մուն կխնդրեինք իրմե որ զինքը խանգարե-
ցած էր սրամիտ կատակներով։ Ամենասովո-
րական դեպքը կպատմեր գունագեղ։ Իր ա-
ղպարանքին մեջ, տարբեր ձևով շատ մը
նր պատկերելու։ Մեծ հաճույքով կլսեինք
նքը, կամ, ավելի ճիշտ, կտեսնեինք պատ-
ծածները։

Քրյուսելի ցուցահանդեսեն վերադարձին,
ես չեմ սխալիր՝ 1914 թվականին, արձան մը
րած էր՝ սպիտակավարդագույն մարմարի
ա քանդակված ոչխարներու հոտը, հովիվը
ասին։ Արձանը տեղավորեր էին պատու-
մնին մեջ, ժանյակավոր վարագույրին
ակ, էլեկտրական լույսին տակ, ուր ավելի
ղյտուն, ավելի գեղեցիկ կերևար ան։ Զոհ-
ղ մեզի ցույց կուտար արձանը ըսելով.
՝Ինչ ճիշտ մտահղացում և մատներու ի՜նչ
ւրբ ճարպիկություն պետք է, սա անխոս
արմարին այս կյանքը տալու համար։ Ոչ-
արներու գեղմը կշղշափես ափիդ մեջ, ան-
ն հովիվը տիրական կանգնած, խուզար-
ւ հայացքը նետած հեռուն, պահապան
ամփոը ոտքերուն առջև։ Քանդակագործին
տքին ավելի նուրբ ու համառ աշխատանքն
գնահատելի»։ Զոհրապ առհասարակ ամեն
անի վրա թափված աշխատանքն էր որ
գնահատեր։

Ամբողջ բնակարանը նման էր գեղարվես-
փ թանգարանի մը։ Ընտանիքով բոլորը՝
ենը՝ Կլարան, աղջիկները՝ Դոլորես և Հերմի-
ն, տղաները՝ Լևոն և Արամ վերին աստի-
անի նուրբ և գեղեցիկ ճաշակի տեր մարդիկ
ին։ Ներս մտնողը չէր գիտեր ո՛ր նկարին,
ր արձանին, ո՛ր գեղեցիկ ծաղկամանին
ոջև կանգներ ու դիտեր հիացումով։ Ճա-
արանի պատերը ծածկված էին Էդգար Շա-
ինի ձեռակերտ նկարներով։ «Որչա՜փ շար-
ուն կյանք կա բոլորին մեջ և համառ, տո-
ուն աշխատանք»,— կըսեր Զոհրապ։

Որևէ անճաշակ բան կամ ոչ ճիշտ երևույթ
ւեսնելով կավելցներ. «Բարբարոս ձևով մը
ղած է»։ Մեծ մտածողը կարո՞ղ էր գուշակել,
ր այդ «բարբարոս» ձևը իր վրա պիտի գոր-
ադրվեր և ինք պիտի նահատակվեր բարբա-
ոսաբար։

Տան մեջ մանուկի մը պես կխնամեին զին-
ը, ամեն ինչ նախապես մտածված՝ սնունդ,
անգիստ, հագուստ և ամեն բան։ Երբեմն
կբողոքեր. «Զգեցեք անգամ մըն ալ ուզածիս
պես շարժիմ, ուզածս ընեմ»,— կկատակեր
հաճախ այդ մասին և մենք բոլորս կծիծա-
ղեինք։

Կիրակի օրերը կսիրեր ոտքով երկար
պտույտներ ընել մեծ աղջկան՝ Դոլորեսի
հետ։ Բավական հեռու կապրեինք մենք։
Սովորականեն տարբեր, ուժեղ զանգահարու-
մով մը ներս կմտներ և դեռ միջանցքին մեջ
«սատե մը» կպատվիրեր («սատե», թուրքե-
րեն, կնշանակե «միայն, զուտ», այսինքն
սուրճ առանց շաքարի)։ Հազիվ նստած,
կպատմեր իր տպավորություններեն կամ նոր
պատահած դեպքե մը։

Իրավաբանական ասպարեզին մեջ առա-
ջինն էր. ինչ դատ որ ստանձներ, անպայման
պետք է շահեր։ Փաշայի մը շատ խճճված
դատը ստանձնեց, շահեցավ, փաշան շնոր-
հակալ եղավ մեծ վարձատրությամբ։ Ինքն
ալ նույն առատաձեռնությամբ կծախսեր ա-
մենուն վրա, ամեն բանի համար։

Իբրև իրավաբան կցված էր ռուսական դես-
պանատան հետ։ Կսիրեր ռուսերը, «Անոնք
շիտակ մարդիկ են, մեզի պես չեն»,— կըսեր։
Դեսպանատան զինվորական կցորդը շատ
մոտ էր Դոլորեսին, զոր կսիրեր, բայց որով-
հետև դիվանագիտական ասպարեզին մեջ
աշխատողը իրավունք չուներ ամուսնանալու
օտարահպատակ աղջկան հետ, խոստացած
էր երթալ, ձգել պաշտոնը, վերադառնալ և
կապվիլ ամուսնությամբ։ Գնաց և ուշացավ։
Ազդված էին ընտանիքով, հայր ու աղջիկ
մանավանդ, իսկ հետո պատերազմն սկսավ
և ամեն ինչ այլ ձև ստացավ արդեն։

Զոհրապ լիովին վստահ էր ռուսերուն հաղ-
թանակին։ «Արևելյան սահմանագլուխին վրա
ռազմական ուժ չունինք»,— կըսեր։ Այդպես
ալ եղավ։ Կռիվն սկսելեն քիչ վերջ, ռուսա-
կան բանակը մտավ Տաճկաստան, բայց,
ափսո՜ս, նահանջեց, գրեթե իսկույն, որմե
հետո ոճրագործ իթթիհադականները (օս-
մանյան կառավարության ղեկավար կուսակ-
ցությունը) սկսան իրագործել նախապես
ծրագրված հայերու բնաջնջումը, աննախըն-
թաց բռնագաղթով։ Զոհրապի տրամադրու-
թյունը փոխվեցավ բոլորովին. մտախոհ,
ծանր տեսք ուներ։ Իսկ երբ 1915 թվականի
ապրիլ 24-ի գիշերը ձերբակալություններ
եղան Պոլսի մեջ, մտավորականներու մեծ
մասը ձերբակալվեցավ և հաջորդ օրն իսկ
աքսորվեցավ, Զոհրապ ամեն օր ամուսնուս՝
Վարդգեսին հետ կդիմեր «նեզարեթ»-ները
(մինիստրություն), ինչպես և գլխավոր ոս-
տիկանապետ Բեդրի բեյին ու բացատրու-
թյուն կպահանջեր անմեղ մարդոց հանդեպ
կատարված հալածանքներուն համար։ Մինչև
որ... գիրենք ևս ձերբակալեցին մայիս 20-ի

երեկոյան, ազատվելու համար բողոքներեն, և հաջորդ օրը, առավոտ կանուխ, աքսորեցին սևածիր ճամբաներով...։

Զոհրապի գրական գործունեության մասին չեմ համարձակիր բան մը ավելցնել, քանի որ Մինաս Հյուսյանը և ուրիշներ այնքան ձեռնհասորեն ուսումնասիրած են անոր գրական ժառանգությունը։ Ըսեմ միայն, որ ինքը՝ մեծ Զոհրապը, ոչ մեկ կարևորություն կուտար իր գրվածքներուն։ «Կյանքեն պզտիկ նոթեր, պզտիկ պատկերներ են անոնք»,— կըսեր,— ես ամատյոր մըն եմ միայն գրական ասպարեզին մեջ»։ Ակնարկիս մեջ կհնչե դեռ իր համեստ արտահայտությունը։

Զոհրապը ճանչցեր եմ 1911 թվականին, երբ ամուսնությանս առթիվ փոխադրվեցա Պոլիս։ Քանի մը օր էր որ հասած էինք Պոլիս, դեռ ոչ բոլորովին տեղավորված։ Զոհրապ հրավիրեց մեզ ճաշի, ինչի կինը բացակա էր, Եվրոպա գացած ըլլալով։ Ինքը Զոհրապ, տղան և փոքր աղջիկը ընդունեցին մեզի։ Առաջին պահին այնպես ջերմ սիրալիրությամբ դիմավորեց մեզի, կարծես հինեն մոտ բարեկամներ եղած ըլլայինք, և այդպես մնացինք մինչև վերջին օրը։ Հիսուն տարեկան էր այն ժամանակ, թեև մազերը բոլորովին սպիտակած, բայց երիտասարդի աշխույժ և ավյուն կար բոլոր ձևերուն մեջ։ Հետաքրքրությամբ հարցեր կուտար, պատմել կուտար գավառի՝ էրզրումի կյանքեն, դպրոցներու մասին և այլն։ Ես ալ կպատասխանեի տեսակ մը քաշվելով, երևի երիտասարդ տարիքիս պատճառով։

Շարժապատկերի պաստառին պես տեսողությանս առջև կսահի վերջին պահը, երբ առավոտ կանուխ գացի Սիրքեջիի կայարան ճանապարհելու զիրենք։ Ամուսինս հաջողեր էր բացառիկ թույլտվություն ձեռք բերել, որ ճանապարհելու երթամ։ Ոստիկաններով շրջապատված, փոքր սենյակի մը մեջ, նստած էին Զոհրապն ու Վարդգեսը տախտակե բազմոցին վրա, անհայտին առջև հուսաբեկ արտահայտությամբ։ Կոշիկներուն կոճակները կոճկված չէին, մազակալս տվի, որ կոճկե։ «Այդպես ալ մնա նե, ի՞նչ հոգ,— ըսավ։ Հրամայեցին, որ թուրքերեն խոսի։ Քանի մը խոսք ըսավ տիկնոջ հաղորդելու։ Հազիվ կես ժամ անցած, տարին, նույնպես ոստիկաններով։

Տարին... անանուն ճանապարհներով, ոչընչացնելու համար հայ մտքի, գրչի, գաղափարի այլ տիտաններու հետ։

Ջերքակալության հաջորդ օրը, Զոհրապի կինը, գլուխը կորնչացուցած, կդիմեր աջ ու ձախ պաշտպան գտնելու, ամուսինը ազատելու և վերադարձնելու համար։ Գերմանական դեսպանատուն, խորհրդարանի նախագահին, վարչապետին և ուրիշ ծանոթներուն կատարված դիմումները անցան իզուր, ոչ ոք օգնեց, ոչ մեկ բան ընել ուզեցին։

Օսմանյան խորհրդարանի այն ժամանակվա նախագահ Խալիլ բեյը Զոհրապի մոտ ապաստաներ էր, երբ Իթթիհադը կհալածվեր Իթթիլաքեն (իշխանություններ)։ Խալիլ բեյը հալածանքի օրերուն շունչը առեր էր Զոհրապի տունը և երկու շաբաթեն ավելի պահվեր էր անոր մոտ, մինչև հաջողցուցեր էին զայն գաղտնի հեռացնել Պոլսեն։ Նույն այդ նզովյալ Խալիլը «Ոչ մեկ բան ընել չեմ կարող»,— պատասխաներ էր Զոհրապի կնոջ։ Իսկ երբ Կլարան վարչապետին դիմեց որպես ծանոթ, ըսելով, որ «Իր ամուսինը հեղափոխական չէր, ոչ մեկ կուսակցության կպատկաներ, այս հալածանքին պատճառն ի՞նչ է»,— վարչապետը անտարբեր պատասխաներ էր. «Չե՞ք գիտեր, որ թաց խոտն ալ չորին հետ կվառի»։

Ճիշտ նույն պատասխանը, նույն բառերը գրեր էր Բաֆֆին իր «Կայծեր»-ուն մեջ, 70 տարի առաջ, երբ Ասլան կբողոքեր Վանի վալիին, անմեղ մարդոց դեմ կատարված հալածանքներուն համար։

Արևմտահայերու ճակատագիրը դարերե վեր դառնագինորեն նույնն է եղած։

Զոհրապ հաջողեր էր ճանապարհեն մեկ երկու նամակ և հեռագիր մը հասցնել տունը։ Իսկ երբ այդ ևս դադրեցավ, ընտանիքը մնաց առանց լուրի։ Կլարան օրը քանի մը անգամ հեռախոսով կհարցներ, թե ո՞րտեղ կգտնվի ամուսինը, որմե ինքը ոչ մեկ լուր ուներ։ Ոճրագործները պատասխաներ էին. «Զոհրապ յոլդա օլմյուշ» («Զոհրապ ճանապարհին մեռեր է»)։

Աննկարելի է նկարագրել սոսկալի հարվածի ազդեցությունը Զոհրապի ընտանիքին վրա։ Անհնար է երևակայել ընտանիքի ապրած մեծ վիշտը։ Հաջորդ օրն իսկ ուղեցին մահազդը տալ, հոգեհանգիստ կատարել, բայց արգիլեցին։ Նման ոճրագործության վրայեն պետք էր լռելյայն անցնիլ։

Արտաստաքներու հեկեկանքին մեջեն տիկին Կլարան ցույց կուտար Զոհրապի գրասեղանը, գրապահարանները, հանդերձապահարանը և կհեկեկար. «Այս ամենը ձգեցիր, ո՛վ գացիր, ես քեզ հիմա ո՞ւր պիտի գտնեմ...։

Հիշողություններս, թեև փոքր, բայց ջրական, թող մնան թուղթին, իբր հիշատակ անմահ Զոհրապին։

4 դեկտեմբեր 1963
Թրիլիսի

Ռ. ՌԱՔԵԼ ՊԱՏՐԻԿ

ԳՈՒԺԿԱՆԸ

Կեա՛ դար է անցել այն օրից, երբ մենք՝ հերապրողներս, հանդիսատես եղանք մի այնպիսի համատարած եղեռնի, որի նմանը մի արձանագրել մարդկային պատմությունը։ Մի եղեռն, տարիներ առաջ պետականորեն ծրագրված, դավադրորեն կազմակերպված և ամենաանգութ կերպով գործադրված մի խաղաղ, ստեղծագործ ժողովրդի դեմ, որպես ազգային բնաջնջում...։

Այս տողերը գրողը դժբախտաբար ականատես վկաներից մեկն է եղել այդ եղեռնագործության։

Ես ուզում եմ միայն համառոտակի պատմել մի դրվագ, ուր իմ վշտահար սիրտը մի անգամ ևս ցնցվեց անհուն կսկիծով, իմանալով իմ սիրելի ուսուցչի՝ Դանիել Վարուժանի նահատակման սոսկալի մանրամասնությունները, պատմված Զանղըրըի հենց նրա տանտիրոջ կողմից։

1917 թվականին ես նորից զինվորական իշխանության ձեռքն ընկա ու քշվեցի Գոնիա մի զորանոցը։ Սակայն հայի համար ի՛նչ զինվորություն. դա էլ հաճախ մի պատրվակ, մի միջոց էր բնաջնջման։

Հսկա զորանոցում միակ հայը ես էի։ Ձեռքն ընկա մի վայրագ, արնախում չավուշի, որ միշտ թշնամաբար էր վերաբերվում ինձ հետ, գերիի նման ինձ ծառայեցնելով սև աշխատանքում միայն ու յաճախ հայհոյելով և արժանապատվությունս վիրավորելով։

Մի անգամ, երբ աշխատում էի խոհանոցում, բոլորովին անտեղի կերպով սկսեց ինձ հայհոյել, անպատվել կրոնս էլ, ազգությունս էլ։

Այլևս չկարողացա հանդուրժել, ընդհատեցի գործս ու ասացի.

— Քանի ես էլ օսմանյան զինվոր եմ, ուստի իրավունք չունեք վիրավորելու իմ ազգային արժանապատվությունը։

Իմ այդ անսպասելի համարձակությունը սաստիկ զայրացրեց նրան. մերկացրեց իր սվինն ու գոչեց.

— Խնդի՛ր գյավուր, ես հիմա ցույց կտամ քեզ...։

Մինչ այդ, ես էլ իմ մոտի կրակարանից անմիջապես վերցրի երկաթյա մեծ ունելին, ինքնապաշտպանության համար։

Այդ որ տեսան խոհանոցում գտնվող թուրք զինվորները, միահամուռ խուժեցին վրաս հարվածներ տեղալով, ու թևիցս բռնած, տարան զորանոցի հերթապահ սպայի առաջ, ամբաստանելով ինձ որպես ապստամբի։

Արյունը ծորում էր վիրավոր գլխիցս ու ներկել էր դեմքս։ Փորձեցի ինքնարդարացման մի խոսք ասել. սակայն սպան, որ մինչ այդ բեղերը ոլորում էր ու գլուխը ոխակալորեն շարժելով ինձ էր նայում սադայելի նման, լռեցրեց ինձ մի հայհոյանք պոռթկալով, ու հրամայեց, որ ինձ նետեն շղթայակապների բանտը։ Հազիվ ներս մտած, կիսախավար միջանցքում հետզհետե խռնվեցին կալանավորները, զրնգացնելով իրենց շղթաներն ու հետաքրքրվելով իմ հանցագործության մասին։ Սակայն ես շվարել էի, չգիտեի ո՛ր մեկին պատասխանել, մանավանդ որ դեմքս ի վար հոսում էր արյունը ու ես ստիպված էի շարունակ սրբել։ Նրանց մեջ մեկուսի կեցել էր բարձրահասակ և թիկնեղ մի երիտասարդ, զինվորական հագուստով, սակայն առանց ուսադիրների. նա ինձ էր նայում։ Տեսնելով իմ շվարուն և վիրավոր վիճակը, հրամայեց շուրջիններին, որ թողնեն ինձ իր մոտ գնալու։ Ես մոտեցա նրան, բարևեցի։ Նա ինձ առաջնորդեց իր թախտի վրա, անձեռոց տվեց, որ սրբեմ դեմքիս արյունը, ծխախոտի մոխիր ցանեց գլխի վերքիս վրա արյունահոսությունը դադարեցնելու համար, ու թողեց, որ հանգստանամ։

Երբ բավականին հանդարտվել էի, սկսեցինք խոսակցել։ Պարզվեց, որ նա չանդրանիկ է, իսլամացած Թրքախոս հայ, Իբրահիմ անունով։ Ինձ խստիվ պատվիրեց, որ իր հայ լինելու մասին գաղտնապահ մնամ։ Հետո, երբ ավելի մտերմացանք, նա հարցրեց, թե երբևէ լսե՞լ էի Վարուժան անունով մի բանաստեղծի մասին։ Զարմացած, նրան նայեցի.

— Ինչպե՞ս թե. բայց նա մեզ ուսուցիչ է եղել Սեբաստիայում,— ասացի ոգևորված։

Նա ձեռքով նշան արեց, որ զգուշավոր խոսեմ. ուստի շշնջալով հարցրի, թե ի՛նչ գիտեր նրա մասին։

Իբրահիմը լռում էր գլխահակ, մերթ կըրկնելով.

— Հե՛չ, ոչի՛նչ...։

Իմ պնդումների վրա, վերջապես ինձ շշընջաց.

— Նա մեր տանն էր բնակվում երկու ուրիշ ընկերների հետ, որպես վարձակալ. նրանցից մեկը դոկտոր Սևակն էր. մյուսի անունը հիմա չեմ հիշում։ Հայրս քաղաքի ամենալավ դերձակը լինելուն համար, կառավարիչը առաջարկել էր նրան կա՛մ իսլամանալ ընտանյոք, և կամ քշվել դեպի աքսոր...։ Ուստի, իսլամանալով, մենք մնացինք և մեզի նման ուրիշ մի քանի հայտնի արհեստավորներ։ Նրանց տներում էլ աքսորական վարձակալներ տեղավորված էին, որոնք մերթ գալիս, հավաքվում էին Վարուժանի մոտ։ Նա կարդում էր իր գրած նոր բանաստեղծությունները. սակայն հաճախ այնքան էր հուզվում, որ չէր կարողանում շարունակել, ու նստում, հեկեկում էր, դեմքը ձեռներովը ծածկած։ Այդ ժամանակ լսվում էր Կոմիտաս վարդապետի «Տէ՛ր, ողորմեա՛»-ն։ Ներկաները նրան ձայնակցում էին արտասվագին։ Էլ ո՞ր մեկ սիրտ կդիմանար...։ Կողքի սենյակից այդ ամենը լսում էինք ու մենք էլ լաց լինում...։ Կոմիտաս վարդապետը հետո արտոնվեց վերադառնալ Պոլիս։ Վարուժանին շարունակում էին այցելել նրա մտերիմ ընկերները։

— Հետո՞, հետո՞,— կրկնում էի ես հուզված, շունչս բռնելով։

— Խեղճ Վարուժանը օրնիբուն կա՛մ կարդում էր, և կամ գրում։ Նա շատ էր սիրում փոքր քրոջս՝ Մանուշակին. նրան նստեցնում էր ծնկներին, գգվում, փայփայում։

— Իմ զավակների կարոտն եմ առնում,— ասում էր նա մեզ։

— Հետո՞...։

— Ափսո՛ս, գեթ դոկտոր Սևակը կարող էր փրկվել, եթե հանձն առներ իսլամանալ և փեսայանալ, ինչպես առաջարկել էր քաղաքի ազդեցիկ մի Թուրք, որի աղջկան բժշկել էր նա ծանր հիվանդությունից։ Սակայն նա մերժել էր։ Օ՜, ինչ տղամարդ էր նա...։

— Իսկ Վարուժա՜նը, Վարուժա՜նը,— շշնջում էի ես, ավելի ու ավելի տագնապած։ Սակայն Իբրահիմը դիտավորյալ խուսափում էր, որպեսզի թեթևացնի պատմելիքի իմ վրա թողնելիք տպավորությունը։ Վերջապես, այնպես անտարբեր երևույթ առնելով, ասաց.

— Է՜, ջանըմ, ի՞նչ պիտի լինի, նա էլ գնաց, ինչպես շատերը...։

Հետո շարունակեց.

— Օգոստոսի սկիզբներին էր։ Առավոտյան կանուխ, մի քանի ոստիկաններ ափ առին մեր տան դուռը։ Երբ բաց արինք, ներս մտան և ուղղակի դիմեցին մեր վարձակալների սենյակը ու խստորեն հրամայեցին անմիջապես պատրաստվել մեկնելու դեպի Անկարա...։ Ես տեսա, թե ի՛նչպես ամենքը սոսկալի գունատվեցին։ Վարուժանը իրեն տերակները թաքցրեց բարձի տակ։ Նրանց դուրս հանեցին աճապարանոք։ Ես հետաքրքրությունից մղված, հետևում էի նրանց։ Հասանք կամուրջի սրճարանի մոտերը, ուրկից արդեն հավաքվել էին աքսորական նրանց ընկերները։ Երկու կառք մոտեցան։ Վարուժանը, դոկտոր Սևակը և նրանց մյուս ընկերները ամենքին հրաժեշտ էին տալիս, ասելով. «Մնաք բարո՛վ, մնաք բարո՛վ... մենք... մեռնելու կերթանք»։ Բոլոր մնացողները արտասվում էին։

Կառքը շարժվելու պահին, Վարուժանը չմոռացավ նաև դեպի ինձ թեքվելով «մնաս բարո՛վ» ասելու, պատվիրելով, որ տեր լինեմ թողած տետրակներին։ Հետո վերջին անգամ պոռաց.

— Իմ փոխարեն համբուրի՛ր Մանուշակին...։

Ես այլևս չկարողացա զսպել արցունքները։

Վերադարձա տուն։ Մերոնք ամենքն էլ լացած էին լինում։ Մորս հետ գնացինք նրանց ամայացած սենյակը։ Ես մտադրել էի վերցնելով Վարուժանի բարձի տակից նրա թաքցրած բանաստեղծությունների տետրերը, երբ հենց նույն պահին ներս մտան երեք ոստիկաններ և լքված գույքերը ծրար արած, տարան։

— Իսկ տետրակնե՞րը,— շշնջացի ահաբեկված։

— Ափսո՛ս, ժամանակ չունեցա դրանք թաքցնելու...։

— Խե՜ղճ Վարուժան, խե՜ղճ հայ գրականություն,— կրկնում էի կսկծագին,— ինչպիսի՜ գոհարներ կորցրիր, ինչպիսի՜...։

Իբրահիմը ծխախոտ հրամցրեց ինձ, ու մենք վշտից ծխում էինք կատաղորեն։ Նա շարունակեց պատմել.

— Նույն օրը Զանղըրը վերադարձել էին ակու կառքերը։ Կառապաններից մեկը հատապես շատ վշտացած, պատմել է, թե ի՛նչես հանկարծ հարձակում էին կրել Թունա չուշված զառիվերը բարձրանալիս չորս դաճիների կողմից, որոնց գլխավորը հրամայել ր աքսորականներին՝ ցած իջնել կառքից։ ոկտոր Սևակը պաղատել է վարձկան դաճիներին, որ խնայեն իրենց կյանքը, փոխանն խոստանալով տալ իրենց բովանդակ ստարստությունը։ Դահիճները մնացել են անպրկվելի. իջեցրել են նրանց մոտակա ձորը, նախապես հանելով նրանց զգեստները. հետո սկսել են նրանց ձեռքերը չվանով կապել։ Վարուժանը ընդվզել է։ Դրա համար նրան սաստիկ խոշտանգել են, կապել են ծառին, ինչպես նաև մյուսներին, ապա դանակներով հարձակվել են նրանց վրա։ Նախ փորփրել են Վարուժանի աչքերը, հետո կտոր-կտոր են արել նրան և մյուս ընկերներին ու նետել հեղեղատի ջրի մեջ...։

Ծանր ապրումների ազդեցության տակ, հուզումից դողում էի, առանց մի կաթիլ արցունքի բարերար ցողի...։

Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՋԱՐԴԱՐՅԱՆ

Մեր գրականության երախտաւոր գրողներից է Ռուբեն Զարդարյանը։ Նրա ստեղծագործության մեջ սեղմ դրսևորումն են ստացել իր ապրած ժամանակաշրջանի բովանդակ արևմտահայության տագնապները, ձգտումները, երազը։ Ու թեև այդ երազի մի քանի կարկառուն հատկանիշները քանդակեց նա իր երկերում, բայց նրա իրագործմանը չհասած, վրա հասավ պատրանաթափ կործանումը, և մեծ գրողն ու քաղաքացին իր ժողովրդի մի հատվածի հետ զոհ գնաց ապրիլյան անօրինակ եղեռնին։

Այն կարճ ժամանակահատվածը, որի ընթացքում գործեց և ստեղծագործեց Զարդարյանը, գրական բեղմնավոր մշակույթի սաղմերի ծլարձակման շրջան հանդիսացավ։ Այդ կարճ ժամանակահատվածը հասարակական-քաղաքական առումով մի քանի թվականներ արձանագրեց, որոնք արևմտահայ գրականության և Զարդարյանի ստեղծագործության ու գործունեության ճակատագրականորեն բնութագրական տարեթվերը դարձան։

1895—1896 թվականներ...։ Տևական հալածանքների և հաջորդած ջարդերի տարի՝ հեգնության և ողբերգության կրկնակի միաձուլումով, սոսկալի համայնական հառաչանքով է ողողվում իրական մթնոլորտը, որն աստիճանաբար վերածվում է ներդաշնակ ընդվզման՝ հանձինս վերապրող սերնդի գրական ասպարեզ իջած գործիչների։ Անջնջելի տառապանքի ահագնության և հորիզոնում առկայծող հույսի խոստացող անդորրության միջև տարուբերվող մաքառման շրջան։

Բուն Հայաստանից էր գալիս Զարդարյան ստեղծագործողը, իր հետ բերելով հայրենի երկրի բույրն ու լույսը։ Մագաղաթով խարբերդցի է Զարդարյանը, ծնվել է 1874-ին։ Խարբերդում էլ քսաներկուամյա պատանին ականատես է եղել կոտորածներին և ավերածություններին։ Խարբերդում և շրջանում հոսած արյունը իր անջնջելի դրոշմն է թողել նրա գրվածքների մեջ։ Երբ հրատարակվում են Զարդարյանի առաջին պատմվածքները Զոհրապ—Ասատուրի «Մասիս»-ում (1893) և Զոպանյանի «Մաղիկ»-ում (1895), նրանց հեղինակն արդեն ձևավորված ստեղծագործական անհատականություն էր։

1908 թվական. Թուրքերին հատուկ խեղկատակություն. պետական հեղաշրջում. սահմանադրություն. արտոնություններ ազգային սահմաններում. նոր ոգևորության տարիներ, անցյալի ահավոր դրվագը մոռացության մշուշով պատելու ցանկություն (հանուն երևութապես խոստումնալից ներկայի), բայց անկարողություն։ Հինը իրեն զգացնել է տալիս. ներել հնարավոր չէ. մոռանալ՝ առավել ևս. մաքառումը շարունակվում է։

Օտար երկնքի տակ դեգերելուց հետո, ի թիվս այլ գործիչների, Պոլիս է վերադառնում նաև Զարդարյանը։ Անցած դժվարին տասնամյակի ընթացքում են ստեղծվել մի քանի տասնյակ գրական փոքր սեռի երկեր, որոնք պարբերականների էջերից ժողովելով, 1910-ին հեղինակն ամփոփում է «Ցայգալույս» հատկանշական խորագրի տակ։ Այդ դժվարին տարիներին էր վերաբերում ուսուցչական գործունեությունը. մանկավարժական հարուստ փորձը, լայն իմացությունները և գրական ճաշակը հետագա տարիներին հնարավորություն են տալիս Զարդարյանին պատրաստելու և հրատարակելու «Մեղրագետ»-ների շարքը, որոնք որպես ձեռնարկ օգտագործվել են արևմտահայ վարժարաններում։

1909 թվական. Կիլիկյան ահաղանգը սթափեցնում է ուղեղները. Ադանայի ջարդի արձագանքները հասնում են Պոլիս. խուճապը վերսկսվում է։ Զարդարյանը շարունակում է իր արտակարգ ծանրակշիռ խմբագրական աշխատանքը. նա արևմտահայ հասարակական կարծիքին ուղղություն տվողներից է.

ևս մի քանի տարի լարված գործունեություն. մի քանի տարի հույս. մի քանի տարի լավատեսություն...»:

1915 թվական. վարագույրը բարձրանում է, վերջին անգամ անդառնալիորեն իջնելու համար հայկական զանգվածի վրա. արյան ալեկոծությունների միջից լսվող եղերաշունչ դղրդը՝ եղերափակիչ ակորդը արևմտահայ գրականության: Զարդարյանը Պոլսում ձերբակալված մտավորականների թվում է. տեղահանվում է քաղաքից և աքսորի ճանապարհին վայրենաբար խողխողվում:

Զարդարյանի կյանքը իր ժողովրդին նվիրվելու և ծառայելու մի սրտակեղեք վկայություն է, նրա գրական ժառանգությունը՝ իր ապրած ժամանակաշրջանի ոգու արտահայտությունը:

***

Արևմտահայ գրականության 1900-ական թվականների գրական սերնդի տիրական դեմքերից է Զարդարյանը: Նա, ինչպես և Սուրեն Պարթևյանը, Զապել Եսայանը իրապաշտ սերնդի կրտսեր ժամանակակիցներն են, որոնց վիճակված էր շարունակել իրենց նախորդների գրական մնայուն սովորույթները և նոր որակի հասցնել արևմտահայ արձակը, կատարելագործելով և նրբակերտելով այն, «արվեստագիտական ղգայնություն» (արտահայտությունը Չոպանյանինն է) հաղորդելով նրան: Այս անանուն շարժումը, որը վարողներից էր նաև Զարդարյանը, հակադրության եղր չուներ իրապաշտ հոսանքի հետ, ընդհակառակը՝ օրգանական շարունակությունն էր Զոհրապով, Կամսարականով, Բաշալյանով սրբագործված գրական ձգտումների:

Իր սերնդի ընթացիկ մտայնության հետ ունեցած աղերսակցությունից դուրս, ուրույն գեղագիտական նկարագիր ունի Զարդարյանը:

Թլկատինցին իր հիմնական նախասիրություններից մեկն է: Ջատագով է միաժամանակ օտարերկրյա ներբարվեստ հեղինակների: Այս հանգամանքը իրարամերժ նախասիրությունների հետևանք չէ, այլ ակունքը մեկ անգամ ընդմիշտ ձևավորված գրական հավատամքի, որին նա հավատարիմ մնաց և որի միջոցով գարձավ իր սերնդի լավագույն արձակագիրը կամ առաջինը իրեն հավասար ուժերի միջև:

Այդ հավատքի ակունքը՝ բանահյուսությունն է:

Բարձրարժեք, ինչպես Զարդարյանն է կոչում՝ «իսկատիպ» գրականություն ստեղծելու համար, պետք է դիմել ժողովրդական հոգեբանության անպաճուճ աղբյուրին, «... հին հավատալիքներեն սկսած մինչև հետզհետե փոխանցման շրջաններով այլափոխված նախապաշարումները, առածներն ու ավելորդապաշտություն կոչվածները...», վերջիններիս խմորման, կազմավորման առաջընթացով ներշնչվելով, վերհանել և բարձրացնել արվեստի երկի աստիճանի, որպես անհրաժեշտություն և հաճույք ուսումնասիրելով և ընկալելով ժողովրդական հոգեբանության բոլոր խորություններն ու բոլոր մանրամասնությունները, «... ապրող համայնքին տարազներեն սկսած մինչև անոր կյանքի երևույթներուն հետին մանրամասնությունները—բնակություն, զբաղում, դատողություն և տպավորության պայմաններ...»[1]:

Այս վկայությունը կարևորություն է ներկայացնում նաև այն պատճառով, որ լույս է սփռում արևմտահայ գրական առաջընթացի ամենաէական հարցերից մեկի վրա: Թերևս Զարդարյանը միակն էր, որ ճիշտ կողմնորոշվեց 1900-ին «Մասիս»-ի անցկացրած հարցարանի կապակցությամբ, որի հարցերից մեկը վերաբերում էր «վաղվան գրականության»: Դրաքննությամբ պայմանավորված այս աղճատված ձևակերպումը, որը մի տասնամյակ առաջ արծարծվում էր որպես «գավառական գրականություն», և որը 1910-ական թվականներին միայն պետք է ստանար իր բուն ձևակերպումը՝ «Հայաստանյայց գրականություն», իր ժամանակաշրջանի Պոլսի անկումային մթնոլորտի համար ինքնին խիզախում էր: Առավել գնահատելի էին հարցի առթիվ արևմտահայ գրականության կենսունակության ու հեռանկարների նկատմամբ Զարդարյանի ցուցաբերած վճռական հավատն ու լավատեսական կամքը:

Ժողովրդական բանահյուսության, ժողովրդական վարք ու բարքի օգտագործման և գեղարվեստական երկի հիմք ընդունելու մասին գեղագիտական սկզբունքը ինքնին թելադրում էր նաև գրական սեռի ընտրության հարցը: Հետևողականությունն առկա է: Ռ. Զարդարյանի մշակած սեռերն են հեքիաթ, ավանդավեպ, արձակ քերթված, պատկեր և նորավեպ: Վերջինը, թվում էր, թե նվազ կիրառություն պետք է գտներ այս դեպքում, բայց այն իր հետաքրքրական կերպն է ստացել և զգալի կերպարանափոխության է ենթարկվել Զարդարյանի մշակմամբ, դասական նորավեպի համեմատությամբ: Զարդարյանի նորավեպը իր մեջ միաձուլում է հեղինակի մշակած գրական մյուս սեռերի էական հատկանիշները, դրանով իսկ ավելի շեշտելով նրա տեսության ասպարեզում զարգացրած գեղագիտական սկզբունքի գե-

[1] «Մասիս», 1900, № 40, էջ 629:

ղեցիկ կիրառումն ու նրա նկատմամբ ունեցած չհայտարարված հավատարմությունը։ Այսպես, Զարդարյանի նորավեպերում փոխանցվել են նրա ավանդավեպերի խոհականությունն ու հեքիաթների անբռնազբոսությունը, արձակ քերթվածների հուզականությունն ու պատկերների կառուցման արվեստը։ Լեզվի նուրբ զգացողության հետ, այս ամենին միախառնված մեկ այլ հատկանիշն արժեքավորում է Զարդարյանի նորավեպը, ինքնատիպ ու առանձնահատուկ դարձնելով այն։ Այդ մեկ այլ հատկանիշը, որ բխում է մշակված ձևերի գրական սեռին հատուկ պատկերացումներից, կայանում է նորավեպի նյութը իբրև ավանդություն մատուցելու հեղինակի ձգտման մեջ, դրանով ներշնչելով (այդ հաջողվում է Զարդարյանին) նկարագրվող երևույթների կարևորությունը և ժողովրդական մտածելակերպի ակունքներից եկող առավելության արժանիքը։

«Ճայգալույս» ժողովածուում արտահայտված գաղափարները շրջադարձային 1895-ին հաջորդած տարիների հայության ընդհանուր մտայնության արձագանքն են, շաղախված հեղինակի զգայնությունների ու մտածումների հետ։ Այդ մասին վկայում է նաև ինքը Զարդարյանը, ժողովածուին կցված առաջաբանում.

«Ճայգալույս»-ը խորհրդանշանն է պատմական այն շրջանին, ուր բռնադատիչ խավարը կճնշեր թրքահայ մտքին և գրականության վրա։ Բանը ոչնչացված չէր, բայց կենսազուրկ ու կիսակենդան, հազիվ կճառագայթեր մթաստվեր ու մռայլ հորիզոնի մը վրա, որպես տրտմաթաթավ, անդրադարձած ցոլքը ցայգալուսային աշխարհի մը մեջ։

Տիտղոսը, ուրեմն, այս գրքին, ուրիշ բան չէ, այլ միայն մեկնաբանությունը իր պարունակության և գրական որոշ շրջանի մը միանգամայն»[2]։

Տասից ավելի տարիների ընթացքում ստեղծված հավաքածու է այդ հատորը։ 1895-ին հաջորդած տարիներին հեղինակը ոչ միայն վերապրում է կատարված երևույթների հավաորությունը որպես անցյալի հուշ, այլ նույն զգացողությամբ է մատուցնում, նույն վտանգի հնարավոր կրկնությունն է ցանկանում կանխել (մի բան, որ իր ուժերից վեր էր), գեթ հոգեկան դիմադրողականության և արիության պահանջ ներշնչելով ընթերցողին։ Նկարագրվող հոգեվիճակների ու դրությունների մատնանշումը այդ նպատակին է հետապնդում, սերունդների համար ժամանակաշրջանի անխարդախ գեղարվեստական հիշատակարանը լինելուց բացի։

Հոգիների խորքը կատարվող ուղևորությունն է հարազատ հաջորդը դարձնում Զարդարյանին իր ավագ ժամանակակիցների։ Զարդերին զուգակցվող հալածանքների ու գաղթականության ֆոնի վրա, Զարդարյանը ներկայացնում է հայ անհատի ներաշխարհում թպրտացող ելևէջավոր իղձերը և վերջիններիս իրականացման անհնարինության գիտակցումից առաջացող մարդու երերուն, բայց համառ հոգեվիճակը։ Այդ անհատի խոհերին հեղինակը միաձուլում է նաև իր մտածումները, ուղեցույց ու կազմակերպող ուժի ամբողջության պատրանք ստեղծելով։ «Մարդեղանալ», «մարդեղացման» անհրաժեշտություն, մարդկային ու ազգային ինքնագիտակցության պետք. ահա՛ Զարդարյանի ժողովածուում իշխող գաղափարների կենտրոնական զսպանակը (տե՛ս «Ճեղին զավակը»)։ Այստեղից էլ հետևում է Զարդարյանի տրամաբանական շարունակություն հանդիսացող այս երկրորդ ձևակերպումը. «... մեռնիլ գիտնալ ապրելու համար» (տե՛ս «Ապրելու համար»)[3]։

Նորավեպերից մեկում («Հայրենիքս կուզամ ես») հերոսներից մեկի կապակցությամբ օգտագործված «ներքնասևեռում» արտահայտությունը մոտեցնում է Զարդարյանի ոճի ընկալման ուղուն։ Բայց լրիվ չի բացահայտում։ Ներքնասևեռումը հեղինակի մոտ գեղագիտական ձևավորված սկզբունքի չի վերածվում, քանի որ Զարդարյանը քեև քափանցում է մարդկային հոգու խորքը, բայց բավարարվում է ակնհայտը, երևացողը, տեսանելին վերհանելով, չծանրաբեռնելով գրությունը այդ տեսանելի հատկանիշի հոգեկան գաղտնի ծալքերում թաքնված պատճառները որոնելով կամ վերլուծելով։ Թերևս այս է պատճառը, որ Զարդարյանի արձակը այնքան սահուն է, սլացիկ ու քնարական։ Նա տառապում է, բայց չի տառապեցնում ընթերցողին, քանի որ գիտե իր տառապանքը վարագուրել երևութական հեշտությամբ, հանգամանք, որ ձեռք է բերվում գրչի վարպետ տիրապետմամբ։

Զարդարյանին ու նրա ստեղծագործությունը բարձր են գնահատել իր ժամանակակից անվանի արձակագիրները՝ Երուխանը, Եսայանը։ Այս վերջիններս հիմնական ելույթ ունեցողներն էին «Ճայգալույս»-ին նվիրված գրական ասուլիսի ժամանակ։ Եսայանը, վերհանելով Զարդարյանի ստեղծագործության «գեղեցկագիտական արժեքը», բնորոշում է հեղինակին որպես «թրքահայ գրականության մեր սերունդին ամենեն արդյունավոր, ամենեն համակրելի անդրանիկներեն

[2] «Ճայգալույս», Կ. Պոլիս, 1908, էջ 1։

[3] «Արևելյան մամուլ», 1901, № 6, էջ 229։

մեկը»[4]։ Որուխանը ընդգծում է Զարդարյանի մեջ բուն հայկական գրողը, հայկական ժողովրդական բույրով, որ օծված է քաղաքակրթության առաջխաղացմամբ[5]։

Այս բույրը նկատել են շատերը նրա ստեղծագործության մեջ։ Բայց այն առավել է արժեքավորվում մեծն Կոմիտասի ձայնակցությամբ։ Ահա՛ իր եղրափակիչ խոսքերը.

«Երբ զայն («Ցայգալույս»-ը) կարդացի, Զարդարյանը չպատկերացուցի բնավ աչքերուս առջև, այլ ազգ մը, ամբողջ ժողովուրդ մը՝ իր գեղեցկությամբն ու շքեղությամբ...։

Շնչե՛նք այդ շունչը, մանավանդ դուք երիտասարդներ, շնչեցե՛ք զայն երիտասարդական շունչով մը, որովհետև ան գավառեն կուգա, մեր հայրենի բնավայրեն, որուն արևը քաղցր է, ջուրը անուշահամ, երկինքը վճիտ և օդը կենսատու ու պայծառ, և որուն վրա կսավառնի գեղեցկությունը։ Շնչե՛նք այդ գեղեցկությունը»[6]։

Ունկնդրել այս պատգամին, նշանակում է հարստանալ Զարդարյանով, նշանակում է հպարտանալ նրա անվամբ, նշանակում է արժանապատվությամբ գնահատել անցյալի պայծառ ու դեռևս ապրեցնող խորհրդանշանները։

[4] «Գրական ասուլիսներ», Դ, Ռ. Զարդարյանի «Ցայգալույս»-ը, Կ. Պոլիս, 1913, էջ 11։

[5] Նույն տեղում, էջ 38։

[6] Նույն տեղում։



Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՆԻ ԱՊՐԻԼՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, թուրքական կառավարությունն իր հայաջինջ ծրագրի կենսագործումն առաջին հերթին սկսում է Վանի և Էրզրումի նահանգներից, որոնք սահմանակից էին Ռուսաստանին և վերածվել էին պատերազմի թատերաբեմի։ Թուրքական եռապետության՝ Թալեաթի, Էնվերի և Ջեմալի կարծիքով, ավելի դժվար էր Վանի նահանգի բնակչության կոտորածը, որովհետև նա ավելի լավ էր կազմակերպված և 380 000 բնակչությունից հայերի թիվը հասնում էր 198 000-ի։ Հետևաբար, կարիք էր զգացվում հմուտ ջարդարար նահանգապետի։ 1914 թվականի ռուս-թուրքական պատերազմի սկզբին պաշտոնի բարձրացումով, Վանի նահանգապետ Թահսին բեյը նշանակվում է Էրզրումի նահանգապետ և նրա փոխարեն Վանի վիլայեթի նահանգապետ (վալի) է նշանակվում Վանին լավ ծանոթ և նույն նահանգի Բաշկալեի մութասարիֆ Ջևդեթ բեյը, որ ստոր և դավադիր մարդ էր, մոտիկից կապված եռապետության անդամների հետ։ Ահա սրա վրա է դրվում Վանի նահանգի հայ բնակչությունը կոտորելու գործը։ Առհասարակ թուրքական պետական օրենքով հայերին բանակ էին վերցնում 25—35 տարեկան հասակում միայն, բայց պատերազմի սկզբին փոխվում է այդ օրենքը և զորահավաքի (սեֆերբիրլիկ) են ենթարկվում 18—45 տարեկան բոլոր տղամարդիկ, որպեսզի դիմադրող չիներ և հեշտանար հայ բնակչության բնաջնջող կոտորածը։

Արևմտյան Հայաստանի հայաբնակ վեց վիլայեթների մեջ Վասպուրական նահանգն իր աշխարհագրական դիրքով, իր պատմական դեպքերով բռնում էր առաջին տեղը։ Նա հայտնի է իր հսկա լեռներով ու լեռնաշղթաներով, լեռների բարձր գագաթներով, խոր ձորերով, անհամեմատ մեղմ կլիմայով, իրար հաջորդող դաշտերով ու հովիտներով, որոնք աջ ու ձախ ակոսում են Վանի վիլայեթի ընդարձակ տարածությունը։

Վան-Վասպուրականի նահանգը, մանավանդ նրա հյուսիսային մասը՝ Վանի սանջաքը, բնության մի զարդ է, որի նմանը չկա մի այլ տեղ։ Վանի սանջաքումն է փռվում Վանա լիճը, պատմական Տոսպա կամ Բզնունյաց ծովը, որ շքեղազարդ հարսի պես բազմել է Վասպուրական աշխարհում իր գեղածիծաղ ափերով ու կղզիներով։

Պատմական Հայաստանի Մեծ Հայքը, ըստ մեզ հասած «Աշխարհացոյց»-ի, վարչականորեն բաժանված է եղել 15 նահանգների կամ աշխարհների, որոնցից մեկն էր Վասպուրականը, որ բոլոր նահանգներից ամենամեծն էր և բաժանվում էր 36 գավառի։ Վասպուրականը դարերի ընթացքում խոշոր դեր է խաղացել հայ ժողովրդի պատմության մեջ։

Հայ ժողովուրդը հիմնականում կենտրոնացած է եղել երեք գլխավոր կենտրոնական նահանգներում՝ Այրարատում, Տարոն-Տու-

րուբերաանում ու Վասպուրականում: Առաջին երկու նահանգները կազմում էին պատմական Հայաստանի սիրտը, իսկ վերջինը, երորդը, նրա պատվանդանն էր: Այս երեք մեծ նահանգներում է ստեղծվել հայ ժողովրդի մշակույթը, կազմակերպվել են նրա պետական և մշակութային կենտրոնները: Ճիշտ է, Սյունիքը, Գուգարքը և Բարձր Հայքը նույնպես կարևոր դեր են խաղացել և նույնիսկ այս կամ այն դարաշրջանում ազդեցություն են ունեցել հայ ժողովրդի պատմության վրա, բայց իրականում ներկայացրել են տարբեր աշխարհներ, իրենց շահերով ու ձգտումներով և աշխարհագրական դիրքով: Վերը նշված նահանգները տնտեսական շահերով քիչ էին կապված երկրի կենտրոնական նահանգների հետ: Վասպուրական նահանգը կամ աշխարհը Մեծ Հայքի 8-րդ նահանգն էր և ուներ 40-870 քառակուսի կիլոմետր տարածություն[1]:

1514 թվականին օսմանյան թուրքերը Հայաստանի հետ միասին գրավում են նաև Վան-Վասպուրական նահանգը և 1914 թվականի սեպտեմբեր ամսին, Վանի վիլայեթի նահանգապետ Թահսին բեյը, կենտրոնի ցուցմունքով, պաշտոնապես տոնում է Վանի գրավման 400-ամյակը:

Վան-Վասպուրականի վիլայեթը բաժանվում է երկու սանջաքի՝ Վանի և Հեքարիի: Առաջինը գրավում է վիլայեթի հյուսիսային և վերջինը՝ հարավային շրջանները և երկու սանջաքներն իրարից բաժանվում են Ջուխի, Գարահիսարի և Կորդվաց լեռներով ու լեռնաշղթաներով: Հեքարիի կենտրոնն էր Բաշկալեն, հին Հադամակերտը, ուր նստում էր սանջաքի կառավարիչ մութասարիֆը: Այստեղ հայերի թիվը քիչ էր, մեծ մասը կազմում էին քրտերն ու ասորիները, հայաբնակ էր մնացել Աղբակի գավառն իր Ս. Բարթողիմեոս վանքով: Այլ պատկեր ունի Վանի սանջաքը: Այստեղ հայերն ազգաբնակչության մեջ կազմում էին ճնշող մեծամասնություն և իրենց ազատագրական շարժումներով հայ ժողովրդի պատմության մեջ խոշոր դեր են խաղացել:

Վանի սանջաքը բաժանվում էր հետևյալ կազաների (գավառների). 1) Վան-Տոսպի, 2) Թիմարի, 3) Բերկրիի, 4) Արճեշի, 5) Ալջավազի, 6) Հայոց-Ձորի, 7) Գավաշի, 8) Կարճկանի, 9) Արճակի, 10) Մարայի, 11) Խոշաբի, 12) Նորդուզի, 13) Շատախի, 14) Մոկսի և 15) Կարկառի: Հեքարիի սանջաքը բաժանվում էր հետևյալ կազաների (գավառների). 1) Աղբակի, 2) Ջուլամերկի և 3) Գյավառի: Վանի վիլայեթն իր մեջ ընդգրկում էր համարյա Մեծ Հայքի, Վասպուրականի, Մոկքի և Կորճեքի նահանգները, 39 300 քառակուսի կիլոմետր տարածությամբ[2], համարյա այնքան, որքան էր Մեծ Հայքի Վասպուրական նահանգի տարածությունը:

Այսպիսով, եղեռնի նախօրյակին Վանի վիլայեթը բաժանվում էր երկու սանջաքի և 12 կազաների (գավառների):

Ա-դոն իր «Մեծ դեպքերը Վասպուրականում 1914—1915 թվականներին» աշխատության մեջ ցույց է տալիս, որ Վանի վիլայեթը 1914 թվականին ունեցել է 450 հայաբնակ գյուղ ու քաղաք, 19 222 հայ ընտանիք և 121 337 շունչ հայ[3], որն անշուշտ ճիշտ չէ: Այդ նույն թվականին Վանի վիլայեթի հայերի թիվը պտտվում էր 185 000—200 000-ի սահմաններում:

***

Վերջին շրջանում Վասպուրականը դառնում է հայ ազատագրական շարժումների գլխավոր թատերաբեմը և հայ կրթության ու մշակույթի կենտրոնը:

Վասպուրական աշխարհը դարերի ընթացքում իր ծոցում ավելի շատ հայություն էր պահպանել, քան մյուս նահանգները և այնտեղ հայությունը դարերի ընթացքում հայ ժողովրդի հատկություններն ու հոգեբանությունը նույնպես ավելի լավ է պահպանել, քան երկրի մյուս մարզերը: Վասպուրականի հայերն ավելի աչքի էին ընկնում ինքնավստահությամբ, ստեղծագործական տաղանդով, համառ աշխատասիրությամբ և պայքարով: Վանում են առաջին անգամ առաջանում և ձևավորվում «Միության և առաջադիմության» (1872), «Սև խաչ ընկերության» (1878) և «Արմենական» (1885) քաղաքական կազմակերպությունները: Հայտնի էր Վանի Պողոսյան և Ապողոսյան քաղաքական հոսանքների 40-ամյա պայքարը (1856—1896):

Տարիների ընթացքում Պոլսից Կիլիկիա, Փոքր Հայքից դեպի Մուշ ու Կարին տարերային ըմբոստության մասնակի պոռթկումներն ու բռնկումները գալիս ու կենտրոնանում են Վանում և Խրիմյանի հայրենաշունչ հովանու տակ, 1850—1860-ական թվականներին, ծնունդ տալիս հայ ազատագրական շարժման ու ազգային վերածննդի: Վանի ու-

---

[1] Ս. Տ. Երեմյան, «Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի», Երևան, 1963, էջ 117:

[2] Ա-դո, «Մեծ դեպքերը Վասպուրականում 1914—1915 թվականներին», Երևան, 1917, էջ 11—30:

[3] Նույն տեղում:

սուցիչների մեծ մասը Վարագի Խրիմյանի, ապա Մկրտիչ Փորթուգալյանի և Համբարձում Երամյանի աշակերտներն էին, որոնք Վանի Պողոսյան և Ապողոսյան պայքարի ընթացքում հետևում էին Խրիմյանի՝ Ապողոսյանի ազատամիտ հոսանքին։ Հայ ազատագրական շարժման առաջին ամենամեծ ոհմվիրան հանդիսանում էր Խրիմյան Հայրիկն իր Վարագի դպրոցով, տպարանով ու «Արծվի Վասպուրական» ամսագրով, որի դեմ կատաղի պայքար էր մղում Պողոսյան հետադեմ հոսանքը։ Ահա այդ պայքարի հետևանքով Վասպուրականը, Վան կենտրոնով, ամբողջ 19-րդ դարի երկրորդ կեսը դառնում է հայ ազգային ազատագրական շարժման կենտրոնը Արևմտյան Հայաստանում։

Վան-Վասպուրականում 20-րդ դարի առաջին 15 տարիներին գործում էին քաղաքական երեք հոսանքներ՝ արմենական-ռամկավարներ, հնչակներ և դաշնակներ։ Ամենից շուտ գործի են սկսում արմենականները, սկսած 1885 թվականից և համարյա 20 տարի շարունակ միակ քաղաքական ուժեղ կազմակերպությունը հանդիսանալով Վան-Վասպուրականում։ Ճիշտ է, 1896 թվականի Վանի ինքնապաշտպանությունից հետո, այդ կուսակցությունը լուրջ հարված է ստանում նույն թվականին Ս. Բարթողիմեոս վանքի տակ, բայց և այնպես արմենականներն էին մնում Վանում որպես ազատագրական պայքարի կազմակերպողներ։ Հնչակյանները Վանում մեծ ուժ չեն ունենում և նրանց թիվը հարյուրի չի հասնում։ Դաշնակների գործունեությունը Վան-Վասպուրականում սկսում է 1904 թվականից, բայց ավելի է ուժեղանում 1908 թվականի Սահմանադրությունից հետո։

Էրզրումում հնչակներն ու դաշնակները իրենց գործունեության համար հող չեն գտնում։ Կարսը կորցնելուց հետո, Էրզրում բերդաքաղաքը ռուս-թուրքական պատերազմի ժամանակ դառնում է ամենախոցելի վայրը, դրա համար թուրքերը լուրջ ուշադրություն են դարձնում այդ նահանգի վրա, ուժեղացնում հսկողությունը, փակում ճանապարհները քաղաքական գործիչների առաջ, մանավանդ 1890 թվականից հետո։ Իսկ Մուշ-Սասունում հանդես եկող 1893—1894 թվականների հնչակյանների շարժումները և 1903—1904 թվականների դաշնակների Սասունում կազմակերպած ինքնապաշտպանական ապստամբությունները ճնշելուց հետո, կենտրոնական շրջանը մնում էր Վան-Վասպուրականը։ Տրապիզոնի, Սվազի (Սեբաստիայի), Խարբերդի և Դիարբեքիրի նահանգների մասին խոսք չէր կարող լինել, որովհետև շատ թույլ էին։

***

Վան քաղաքը հիմնադրվել է ուրարտական Սարդուրի Ա թագավորի ժամանակ (836—820), 834 թվականին, Վան-Տոսպ դաշտի արևմտյան մասում, լճափին, և ունի հիասքանչ բնություն, հրաշալի օդ ու ջուր։ Քաղաքը բաժանվում է երկու մասի՝ Այգեստան և բուն քաղաք կամ քաղաքամեջ։ Վերջինս տարածվում է բերդի ստորոտում, շրջապատված հինավուրց պարիսպներով, նեղ, ծուռումուռ փողոցներով, հայ և թուրք խառն բնակչությամբ։

Այգեստանը ձգվում է քաղաքի պարիսպներից դուրս, փռված այգիների մեջ, մոտ 8 քառակուսի կիլոմետր տարածության վրա, հարուստ բուսականությամբ, ծաղկազարդ ու ջրառատ բազմաթիվ փողոցներով ու գեղեցիկ շենքերով։

Այգեստանը բաղկացած էր հետևյալ թաղամասերից. Հայկավանք, Ս. Հակոբ, Հայնկույսեր, Նորաշեն, Առարք, Կլորդար և Շամիրամ։ Այս թաղամասերից համարյա հայաբնակ էին Հանկույսները, Նորաշենը և Առարքը. թուրքաբնակ էին Շամիրամի մեծ թաղը և Ս. Հակոբը, իսկ մյուսներն ունեին խառն բնակչություն։

Վան քաղաքը ապրիլյան գոյամարտից առաջ ունեցել է 7 500 տուն բնակիչ, որից 6 000 տունը Այգեստանում էր, 1 500 տուն քաղաքամիջում։ Քաղաքամիջում հայերի թիվը կազմում էր 1 000 տուն, թուրքերինը՝ 500։ Այգեստանում հայերն ունեին 3 500 տուն, թուրքերը՝ 2 500. ընդհանուր բնակչությունը թվով կազմում էր 52 500 շունչ, որից հայերը 31 500 հոգի, թուրքերը՝ 21 000։

Վանը 1914 թվականին ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան Հայաստանի ամենամեծ հայաշատ քաղաքն էր։

Վանի առևտուրն ու արհեստները համարյա գտնվում էին հայերի ձեռքը։ Վանի ուկերչական ապրանքները գնում էին մինչև Պետերբուրգ, Փարիզ, Լոնդոն, Վաշինգտոն և այլ վայրեր։

1896 թվականի ինքնապաշտպանության հետևանքով, կառավարությունը ռազմական նպատակներով զորանոցներ է կառուցում Այգեստանի շուրջը։ Հարավ-արևելյան կողմից շինում է Հաջի-Բեհիրի, հյուսիս-արևելյան կողմից՝ Թոփրակ-Կալեի զորանոցները, իսկ Զրմփ-Զրմփ մաղարայի վրա էլ մի դիտարան, Այգեստանի համարյա կենտրոնում՝ Համուդ աղայի զորանոցը (1904), որով հայերը փաստորեն առնվում են պաշարման մեջ և ապրիլյան հերոսամարտից առաջ Համուդ աղայի զորանոցը, որ համարյա դատարկ էր, զորք է լցվում։

**
*

Համաշխարհային առաջին պատերազմի հետևանքով, Արևմտյան Հայաստանի հայերի գլխին կախվում է ահավոր մի եղեռն, որը կազաղօրոք ծրագրել ու գործադրում էր ոճրագործ թուրք կառավարությունը, օգտագործելով համաշխարհային պատերազմը, որ իրար դեմ մղում էին եվրոպական պետությունների երկու խմբավորումները։ Թուրքիան մասնակցում է պատերազմին։ Հայ ժողովուրդը հարկադրված նեռվում է պատերազմի հորձանուտի մեջ։

Թուրքիան գնալով ենթարկվում է անիշխանության. գյուղից գյուղ ու քաղաքից քաղաք երթևեկելը դառնում է անհնար, սկզբում անհատական, հետո զանգվածային կարգով ամբողջ նահանգում ծայր են առնում սպանություններ ու կոտորածներ, հատկապես ճանապարհամասային գավառներում։ Թուրքական ավազակախմբերը նորից գործի են անցնում։ Նրանց ամեն տեսակ գործողությունները հովանավորում էին կառավարությունը և նրա տեղական պաշտոնյաները։ Հայ գյուղացիները լուռ կերպով ենթարկվում են խուզարկության, ծեծի, բռնության, թալանի ու սպանության։ Թուրքերը Սարայի և Բաշկալեհի գավառների հայ և ասորի գյուղերի բնակիչներին կոտորում ու տները այրում են։ Այդ գործը կատարում են Թաբուր աղասի Ահմեդ բեկն իր 160 ոստիկաններով և մազրիկցի ցեղի պետ քուրդ Շարաֆ բեկն իր 150 հետևիդեներով։ Այս ոճրագործները նույնիսկ չեն խնայում երեխաներին ու կանանց։ 1914 թվականի նոյեմբեր—դեկտեմբեր ամիսներին կոտորված հայերի թիվը անցնում է 10 000-ից, վերը նշված գավառներում ոչ մի հայ ու ասորի գյուղ չի մնում կանգուն, իսկ բնակիչներից հազիվ ազատվում են մոտ 4 000 հոգի և ապաստան գտնում Վանի Այգեստան թաղամասում։ Նույն ժամանակից սկսվում է նաև բանակում եղած հայ զինվորների զանգվածային զինաթափումն ու կոտորածը։

Թիմարի շրջանի էրեխն գյուղի բնակչությունը զանգվածաբար կոտորվում ու գյուղն այրվում է. նույնը տեղի է ունենում Բայբակ գյուղում։ Դեկտեմբերի 5-ին թուրքերը քրդերի օգնությամբ ավերում են Գավաշ գավառի Բելու գյուղը։ Դեկտեմբերի 6-ին կոիվներ են տեղի ունենում Աթաանց գյուղում։ Թուրքերը, հաշվի առնելով հայերի դիմադրության ուժեղացումը, հետ են քաշվում։ 1915 թվականի հունվարի 30-ին, հայերին կոտորելու պատճառով, կռիվներ են տեղի ունենում Կարկառ գավառում։ Հայ կռվողները, հաշվի առնելով իրենց ուժերի թուլությունը, գավառի բնակչության հետ տեղափոխվում են մոտակա Մոկս և Գավաշ գավառները, իսկ քուրդերն ու թուրքերը ավերում ու կողոպտում են Կարկառը։ Բիթլիսի նահանգի մեջ մտնող Ներքին Կարկառի 7 գյուղեր թալանվում ու այրվում են, բնակչությունը ինքնապաշտպանության միջոցով մի կերպ ազատվում և ապաստան է գտնում Մոկսում, Գավաշում, մերկ ու անոթի։ Այդ դժբախտների թիվը հասնում էր 1 938 հոգու։ Փետրվարի սկզբից ինքնապաշտպանական կռիվներ են սկսվում Ալջավազի գավառում, գյուղացի Օհան Դարբինյանի գլխավորությամբ։ Այդ գավառի ինքնապաշտպանական կռիվները վերջանում են փետրվարի 16-ին, կուսակալ Ջևդեթ բեյն ստիպված տեղի է տալիս ու կնքում հաշտություն։ Կռվողներից 60 հոգի անցնում են Թիմարի գավառը, որի ինքնապաշտպանական կռիվները տեղի են ունենում մարտի 2—13-ի ընթացքում, բայց շուտով նաբաթ գյուղում կնքվում է հաշտություն և ժամանակավորապես վերջ է տրվում հայերի կոտորածներին Թիմարում։

Վանի նահանգում մտավորականներին սկսում են ձերբակալել մարտին ու ապրիլի սկզբին, իսկ Պոլսում՝ ապրիլի 11/24-ին։ Մտավորականության ձերբակալումով, թուրքերն աշխատում էին գլխատել ժողովրդին և թողնել առանց ղեկավարի, որպեսզի հեշտանար հայերի ընդհանուր կոտորածն ու տեղահանությունը։

Վանի նահանգապետ Ջևդեթ բեյը, հետեվելով կենտրոնական կառավարության հրահանգներին, աշխատում էր ամենից շուտ հաշիվը մաքրել Վանի նահանգի հայերի հետ, որովհետև ռուսներն այդ նահանգն ավելի շուտ կարող էին գրավել։ Նա նահանգի 198 000 հայ բնակչության համար ստեղծել էր ծանր կացություն և ծրագրել էր 1915 թվականի ապրիլի 6-ին, 24 ժամվա ընթացքում կոտորել հայերին, անշուշտ առաջին հերթին քաղաքի բնակչությանը, որն ավելի կազմակերպված ու զինված էր։

Սարայի, Բաշկալեհի, Ալաշկերտի հայերի կոտորածներն ու տեղահանությունները, Ալջավազի, Թիմարի շրջանների գյուղերի կողոպուտն ու հրկիզումը, Հայոց-Ձորի, Գավաշի և Կարկառի ընդհարումները բոլորն էլ ծրագրված էին թուրքական կառավարության ու նրա տեղական պաշտոնյաների կողմից։ Վասպուրականի հայության գլխին կախված էր ֆիզիկական բնաջնջման ահավոր վտանգը։ Հակահայ եղեռնը պատրաստ էր, որովհետև արդեն Վան-Վասպուրականում 10 000-ից ավելի հայ էր կոտորվել, 100-ից ավելի գյուղեր կողոպտվել, հրդեհվել և ավերվել էին, 15 000 մարդ դարձել էր փախըս-

տական, որոնց մեծ մասը ապաստան էր գտել Վանի Այգեստանում։

Վանի նոր կուսակալ Ջևդեթ բեյը, որ մեկնել էր Սալմաստի ճակատը, մարտի 17-ին Բաշկալեից Վան է վերադառնում 2 000 կանոնավոր զորքով և 3 ընդանոթով։ Ջևդեթ բեյը 10 օրից հետո պահանջում է, որ քաղաքի 18—50 տարեկան բոլոր տղամարդիկ ներկայանան ու մտնեն բանակ, որպես ամրաշեն բանվորներ (ամալա թաբուրի)։ Վանի ղեկավարությունը գիտակցում է, որ դա ջարդ է, բայց փորձում է մասամբ բավարարել նրա պահանջը՝ տալով 500 մարդ, որովհետև կուսակալը մի կերպ համաձայնվել էր, որ շաբաթը 500 մարդ տան և երկու ամսվա ընթացքում Վանի երիտասարդությունն ու միջին կազմը, թվով 4 000 հոգի, ներկայանան կառավարության։ Վանի երիտասարդությունը դրան դեմ էր և պահանջում էր դիմել զենքի։ Ահա Վանի նահանգի լարված այդ դրությունը պայթում է Շատախ գավառում 1915 թվականի մարտի 29-ին։ Այդ օրը կուսակալի կարգադրությամբ տեղական իշխանությունը քաղում ձերբակալում ու բանտարկում է 6 հայ երիտասարդների, որոնց թվում դպրոցների տեսչի օգնական Հովսեփ Զոլոյանին։ Հայերը պահանջում են անմեղ մարդկանց ազատ արձակել, բայց թուրքերը քուրդերի օգնությամբ հարձակվում են հայերի վրա, վերջիններն էլ ստիպված դիմում են ինքնապաշտպանության, որով մարտի 29—30-ից սկսվում է Շատախի ինքնապաշտպանության հերոսամարտը։ Թեև պայթել էր Շատախի դեպքը, բայց կուսակալը Ջատկի առիթով այցելում է Վռամյանին և «բարեկամական» զրույց է ունենում նրա հետ, ապա երաշխիքներ է տալիս, որ ամեն բան լավ կլինի, բայց գաղտնի կերպով պատերազմի դաշտից քաղաք է մտցնում 800 զինվոր։ Հայոց ղեկավարները չեն կարողանում ըմբռնել այն, ինչ որ ծրագրում է դավադիր կոնսակալը հայերի նկատմամբ։

Բերդակը Վանի հարավային գյուղերից էր և ամբողջ նահանգում միակը, որ կարողանում է դիմադրել ու պարտության մատնել գյուղի վրա հարձակվող մեծ թվով թուրքական և քուրդական ուժերին։ Ի վերջո կենտրոնական կառավարությունն այնտեղ է ուղարկում հայ և թուրք խառն հանձնաժողով, որին էլ հաջողվում է խաղաղություն հաստատել այդ գյուղում։ Բայց դա մի ծուղակ էր հայերին քնացնելու համար։

1915 թվականի ապրիլի 2—4-ին Վանում դեռ բաց էին դպրոցները, քաղաքի շուկան, խաչ փողոցի և Արարքի խանութները, բայց կուսակալը նոր զորքեր է մտցնում քաղաք, լցնում զորանոցները, Շիտեջյանների տունը, քաղաքամիջի ու շրջանների հետ հարաբերությունները դժվարանում են։ Երկրի այս վճռական ժամին Ջևդեթը դեռ փորձում էր խաբել հայերին՝ Վռամյանի տուն գնալ-գալով և միաժամանակ ասում էր, որ եղած դեպքերը արժեք չունեն, ինքը հայերի հետ լավ է վերաբերվում։ Նա սպասում էր հարմար ժամանակի։ Նա խոսք էր տվել կենտրոնական կառավարության, որ հայկական կոտորածները պետք էր սկսել Վան-Վասպուրականից և հույս ուներ, որ 24 ժամվա մեջ սրի կքաշի Վասպուրականի հայերին։ Այսպես կուսակալը խաբում էր Վռամյանին, նրա միջոցով էլ ժողովրդին։ Բայց նա իր հաշիվների մեջ սխալվում էր. Վանի հայությունը, առանձնապես նրա երիտասարդությունը, միշտ արթուն էր և պատրաստվում ինքնապաշտպանության ու հետևում դավադիրների գործունեության։

Ապրիլի 3-ին, Հայոց-Ձորի Հիրճ գյուղում, Իշխանի և նրա երեք ընկերների դավադրաբար սպանությամբ, ապրիլի 4-ին Վռամյանի ձերբակալությամբ և աքսորով, վերջնականապես պատռվում է Ջևդեթի դիմակը և նույն ապրիլի 4-ի երեկոյան, Կարապետ Շատախյանի տանը, տեղի է ունենում ազգային խառն ժողով ավելի ընդլայնված կազմով։ Արամը, որ իր գլուխը կորցրել էր և խիստ ընկճված, երկար խոսել չի կարողանում, անմիջապես դիմում է հին ֆեդայի Արմենակ Սկարյանին և ասում. «Արմենակ, կացությունը ծանոթ է քեզ, փորձառու անցյալի տեր մարդ ես, ըրե՛ ինչ որ անհրաժեշտ է որ ընես և ինչ որ կսպասվի որ ընես»[4]։ Ապա ընդլայնած ազգային խառն ժողովում կազմվում է «զինվորական շտաբ» կամ «զինվորական գերագույն մարմին» (զինմարմին) երեք հոգուց բաղկացած, նախագահ՝ Արմենակ Ասրյան (ռամկավար), անդամներ՝ Բուլղարացի Գրիգոր և Կայծակ Առաքել (դաշնակ)։ Զինմարմնի խորհրդականները ընտրվում են չորս հոգի, հնչակներից՝ Հրանտ Գալիկյան, ռամկավարներից՝ Գաբրիել Սեմերջյան, դաշնակներից՝ Արամ Մանուկյան և անկուսակցականներից՝ նկարիչ Փանոս Թերլեմեզյան, նախկինում արմենական, այժմ չեզոք։

Այնուհետև, ապրիլի 5-ի գիշերը, զինմարմինը Ապատյանների բնակարանում ժողովի է հրավիրում բոլոր խմբապետներին, որոնց նախօրոք ընտրել էին, թվով 78 մարդ, որից 39 ռամկավար, 37 դաշնակ և 2 հնչակ։ Ժողովին մասնակցում էին նաև զինմարմնի խորհրդականներ, Վանի կուսակցական և անկուսակցական գործիչներ, քաղաքական

[4] «Հուշեր Արմենակ Սկարյանի», Կահիրե, 1927, էջ 191։

ՀՐԱԺԵՇՏ

(Հանդակագործ՝ Դ. Դանիելյան)

ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և անմիջապես գործի անցնում։ Վերջ են գտնում նեղ տեղական, անձնական և կուսակցական վեճերն ու տարաձայնությունները, Վանի ժողովուրդը, առանց դավանանքի, դասակարգերի և կուսակցական խորության, մի մարդու պես համախմբվում ու համախմբվում է որպես մի կուռ բանակ, իր ամենածանր ու նեղ րոպեում, մանավանդ երիտասարդությունը։ Ապա արձանագրվում են բոլոր խմբապետները, ըստ իրենց կուսակցական պատկանելության, իրենց խմբի տղաներով, զենքերով և որ դիրքում պիտի կռվեն։ Այդ ամբողջ աշխատանքը կատարվում է մի ժամվա մեջ և խմբապետները, կազմ ու պատրաստ, շարվում և սպասում են զինմարմնին։ Նախ խոսում է Արամը և ներկայացնում զինմարմնի կազմը, այնուհետև խոսում է զինմարմնի նախագահ Եկարյանը և պարզում ընդհանուր դրությունը, գավառների ու բանակում եղած հայ զինվորների վիճակը, կառավարության դիտավորությունը և այլն։ Վերջում Եկարյանն ավելացնում է. «Մեր առաջ կա երկու ճանապարհ՝ կամ մահ, կամ կռիվ դարավոր ոսոխի դեմ. չկենք է վախենալ թշնամու մեծ ուժից»։

Դրանից հետո խմբապետներն անմիջապես իրենց խմբերով մեկնում են դիրքերը, որ նախօրոք պատրաստված էին, իսկ ժողովը առանց խմբապետների, շարունակվում է նաև ապրիլի 5-ի առավոտյան և որոշում է զինմարմնի տրամադրության տակ դնել կուսակցությունների նյութական-ռազմական բոլոր միջոցները, քաղաքի լավագույն շենքերը, ուտելիքն ու հագնելիքը։

Ապրիլի 5-ի ժողովում և հետագայում աստիճանաբար կազմվում են զինվորական մարմնին հարակից օժանդակ կազմակերպություններ։ Առաջինը տեղեկատու դիվանն էր, որը կազմվում է 7 հոգուց, որոնցից 3-ը միաժամանակ հանդիսանում էին զինմարմնի քարտուղարներ։ Երկրորդը «զինաբաշխ մարմին»-ը կամ «ռազմանյութի հանձնաժողով»-ն էր, 4 հոգուց բաղկացած, երրորդը «հայթայթիչ հանձնաժողով»-ը, բաղկացած 12 հոգուց, Գևորգ Սաճյանի գլխավորությամբ։ Չորրորդ, կազմվում է «Հայ ինքնապաշտպանության կարմիր խաչ» 7 հոգուց բաղկացած, բժիշկ Սաֆյանու (Խոսրով Չիբճանի) գլխավորությամբ։ Այդ հանձնաժողովին օգնում էին 30 ուսուցիչներ և աշակերտներ, որպես հիվանդանոցներ ծառայում էին Նորաշենի դպրոցը, Տեր-Բարսեղյանի, Սոսոյանի և Վարդապետյանի տները։ Հինգերորդ, նպաստից հանձնաժողով, կազմվում է 13 հոգուց, Սեպուհ Խանջյանի ղեկավարությամբ։ Հետագայում կազմվում են դատարան, քաղաքապետարան և ոստիկանություն։ Ահա այսպիսի կազմակերպությամբ էր գնում Վանի հայությունը դեպի ապրիլի 7-ի գոյամարտը։ Ապրիլի 5-ին էլ թուրքերն են գրավում իրենց դիրքերը և երկուստեք պատրաստվում են կռվի։

***

«Վասպուրական, տխուր Հայաստան...», ինչե՞ր չես տեսել պատմության դարերի ընթացքում. ինչքա՞ն ես մաքառել օտարերկրյա ոսոխների դեմ, ընկել և արնաթաթախ եղել, բայց շատ հաճախ հաղթել ու պահպանել ես քո ծոցում հայության մի մեծ զանգված։ Սակայն այն, որ տեսար ապրիլյան եղեռնին, գերազանց էր նախընթաց քո բոլոր գործերից ու սխրանքներից։ Այդ պատճառով էլ Վանի ապրիլյան հերոսամարտը կազմում է հայ ժողովրդի պատմության ամենամեծ դրվագներից մեկը, մի դրվագ, որն իր հերոսական ոգով ուսանելի է հայ երիտասարդության հայրենասիրական դաստիարակության համար։

Ջևդեթը ծրագրել էր Վասպուրականի հայերին կոտորել ապրիլի 6-ին, ըստ Պոլսից իր ստացած հրահանգի։ Ոճրագործ կուսակալը բնաջնջումն սկսում է գյուղերից ու շրջաններից։ Հիրճ գյուղի հայերին կոտորում են ապրիլի 4-ին, Արճեշ գավառի Ականց գյուղաքաղաքի հայերին՝ ապրիլի 6-ին, նրա շրջապատի հայերին՝ ապրիլի 6—7-ին, Բերկրիի հայերի կոտորածը մեծ մասամբ տեղի է ունենում ապրիլի 4—5-ին Բերկրիի կիրճում (Գյալիում), գնդակահարված հայերին նետում են Բանդիմանու գետը։ Այդ բոլորը կատարում էր Բերկրիի գավառի գայմագամ Զիա բեյը։ Գավառների հայերի զանգվածային կոտորածները, Իշխանի և ընկերների սպանությունը, Վամյանի ձերբակալումն ու աքսորը, Վանի երիտասարդությանը մղում էին դեպի ինքնապաշտպանություն։ Սակայն Վանի Այգեստանն անպարիսպ փռված էր բաց դաշտի մեջ, շրջապատված պարտեզներով, այգիներով ու ծառաստաններով։ Հյուսիսային կողմից ունի բնական պատվար՝ մի փոքր լեռնաշղթա Ակոբու սար անունով, ուր գտնվում են Զրմփ-զրմփ մաղարան, Մհերի դուռը, Թուրք Ակոբի գյուղը և Ակոբի մատուռը։ Վան քաղաքի երկու մասերն իրարից բաժանված են մի ամայի բաց տարածությամբ, ուր գտնվում է երբեմնի հայաշատ և այժմ կիսավեր Հայավանք թաղամասը։ Թուրքերը հիմնականում բնակվում էին Այգեստանի արևմտյան մասում, իսկ հայերը՝ արևելյան շրջանում։ Հայերի թաղամասերից

դեպի Վարագ տարածվում է մի ընդարձակ հարթավայր, որ վտանգ էր հայկական թաղերի համար, հատկապես Հաջի-Բեքիրի զորանոցը։ Այս բոլորի հետևանքով գոյամարտի ժամանակ քաղաքի երկու մասերի և քաղաքի ու շրջանների միջև եղած կապը կտրվում է ու մեկը մյուսից մեկուսանում։ Հետևաբար Այգեստանի հայերի առաջ դրվում է ամուր պաշտպանողական դիրքեր ստեղծելու խնդիրը և Վանի երիտասարդությունը Վռամյանի ու Արամի, հին ռազմիկ Արմենակ Եկարյանի գլխավորությամբ և մի շարք այլ գործիչների ցուցմունքներով նախօրոք, մարտ ամսին, կազմակերպել ու պատրաստել էր ինքնապաշտպանության գծեր։

Այգեստանի նման ռազմական պատրաստություն են տեսնում նաև քաղաքամեջի հայերը։ Այստեղ ևս կազմվում են 7 հոգուց բաղկացած զինվորական մարմին Հայկակ Կոսոյանի գլխավորությամբ, մատակարարման ու կարմիր խաչի հանձնաժողովներ։ Քաղաքամիջում մեծ դեր է խաղում առաջնորդական տեղապահ Եզնիկ վարդապետը։ Զինվորական մարմինն անմիջապես անցնում է պաշտպանության ու դիրքերի դասավորման գործին։ Կազմվում է պաշտպանության 4 շրջան. 1) Թավրիզի դռան շրջան, 2) Թեքեալիֆի հարթեի շրջան (Հարավ), 3) Ցաղմալուի ու Խանի տակի շրջան, և 4) Ամբարի տակի շրջան։ Հայկական դիրքերը պաշտպանող 130 զինվորի դիմաց թուրքերն ունեին 1 000 կանոնավոր զինվոր, և մի քանի թնդանոթ։ Ապրիլի 4-ից քաղաքամեջի հայերի հարաբերությունները կտրվում են Այգեստանի ու դրսի աշխարհի հետ և կռիվը սկսում է ապրիլի 7-ին և մի բուռ հայ արհեստավորներ ու խանութպաններ մոտ 30 օր հերոսական պայքար են մղում թուրք չարդարարների դեմ, մնում են անընկճելի, մինչև մայիսի 6-ը, ռուսական հաղթական զորքերի հաղթական մուտքը Վան։

Իսկ Այգեստանի պաշտպանությունը բաժանվել էր 5 շրջանի.

Առաջին շրջան.— Սկսվում էր Մանդաբուռի ծառաստանից (մեջայից), նախորի փողոցով վերջանում էր Ջարչի Բաղդոյի դիրքով, կենտրոնը Արարուց հրապարակը, այդ պատճառով էլ կոչվում էր Արարուց շրջան։ Ղեկապետն էր Նշան Նալբանդյան։ Այս շրջանի դիրքերից հատկապես աչքի էին ընկնում դհերցի Սարգսի, դհերցի Նենոյի և Ցաղուբյանի դիրքերը։

Երկրորդ շրջան.— Սկսվում է Ավոյի դարից, Ուրբաթ առվի դիմաց, մինչև Թազաքյահրեզի ծայրը, իր մեջ առնելով Թազաքյահրեզի, Ավոյի դարի և Միրապի-չադրի թաղերը։ Ղեկապետն էր Ռաֆայել Տեր-Խաչատրյանը։

Երրորդ շրջան.— Զգվում էր Այգեստանի հյուսիս և հյուսիս-արևելյան մասում, իր մեջ ընդգրկում էր Շան թաղից մինչև Հանկույսներ և Ջավուշ-բաշին։ Ղեկապետն էր Հովհաննես Մանուկյանը։

Չորրորդ շրջան.— Սկսվում էր Պողպատի (Պողպտի) դարից, Համուդ աղայի զորանոցից (կշլայից) մինչև Խաչ փողոցը, Այգեստանի հյուսիսային ճակատը, իր մեջ առնում էր Շանոյի դարը, Փոս թաղը, Շան թաղը և Խերանի թաղը։ Ղեկավարն էր Մելիքսեթ Էնաթյանը։

Հինգերորդ շրջան.— Զգվում էր Խաչ փողոցից մինչև Արարուց թաղը, Թյուրյունճյանի տունը, փակելով արևմտյան ճակատի մեծ մասը, իր մեջ առնելով Արարուց հրապարակից եկող Նալբանդ-օղլու փողոցն իր երկրուքյամբ և Խաչ փողոցն իր շրջակայքով։ Ղեկավար-ղեկապետն էր Փանոս Ժամկոչյանը։ Ամենաուժեղ կռիվներ տեղի էին ունենում պաշտպանության այս շրջանում։ Այս բոլորը կազմում էին հզոր մի ամուր պատնեշ, որ պիտի դիմագրեր ահավոր գրոհներին ու հարձակումներին, իր շուրջ 1 000 կռվողներով։

Վանի ապրիլյան հերոսամարտին մասնակցում էին նաև գյուղացիները. նրանք տալիս էին ավելի քան 250 կռվող և մոտ 1 000 ամրաշեն բանվոր, որոնք կառուցում են դիրքեր, անմիջապես վերանորոգում քանդվածները, փորում խրամներ, թունելներ դիրքերն իրար հետ կապելու, թշնամու թիկունքը անցնելու համար։ Այդ ամրաշեն բանվորները Վանի հմուտ քանքանների հետ պաշտպանության շրջագծի բոլոր դիրքերը միացնում են իրար, տների պատերը ծակելով և փոքր ու մեծ թունելներ փորելով. դա նույնպես մեծ աշխատանք էր, որ պատվով են կատարում հայ գյուղացի ամրաշեն բանվորները։ Այսպիսի եղանակով էր Վասպուրականի կենտրոն Վանը նախապատրաստվում գոյամարտի։

Թուրքական ճակատը ապրիլի 5—6-ին սեղմում է հայերին, Հաջի Բեքիրի զորանոցից, ուր կար 600 զինվոր, հարվածում են Կուռապաշին, Շուշանցին և Այգեստանին, ապա առաջանում են դեպի բաց դաշտը և խրամատներ են փորում հայերի դիրքերի դիմաց, հասնում են մինչև Ուրբաթ առուն և ամեն քայլափոխին կարող էին կտրել Շուշանցի ճանապարհը։ Հյուսիս-արևելքից նույնպես ունեին մեծ ուժեր, նրանց ձեռքումն էր գտնվում Թոփրակ-կալեի բարձունքը, որն իշխում էր Այգեստանի վրա, ուր և տեղավորել էին մեծ ուժեր, իսկ Հանկույսների զորա-

ոցը լցրել էին մեծ թվով զինվորներ։ Թուրքերը բռնել էին նաև Համուդ աղայի զորացոցը և դրան կից երեք թուրքական տներ, որոնց ձեռքն էին պահում Համուդ աղայի զորացոցից դեպի Սղկա գյուղ տանող փողոցներն ու այգիները, բայց չէին հասել մինչև Ուրբաթ առուն ու կապվել Հաջի Բեքիրի ուժերի հետ։ Ավելի ծանր էր արևմտյան կողմը, որ փողոցից մինչև Արարուքի մերքեզը (ոստիկանատունը)։ Այդ ուղղությամբ թուրքերը Համզենց, Մզոյենց, Ջաղալ Միրզենց և այլ թուրքական տներ ու այգիներ վերածել էին դիրքերի։ Այս դիրքերը գերազանցապես ուղղված էին Սահակ բեյի դիրքի դեմ։ Թուրքերի արևմտյան դիրքերը Ակոբիով կապվում էին Թոփրակ-կալեի հետ։ Արևմտյան դիրքերը հյուսիսին միացնողը թուրքական ընդարձակ թաղերն էին, որոնք ձգվում էին մինչև Շեն թաղը և Սև Քոայի բարձունքը։ Այդպիսով Այգեստանն առնվում էր օղակի մեջ։

Թուրքական ռազմական ուժերը կազմվում էին պաշտոնական զորքերից, միլիսներից, ոստիկանական-ժանդարմայական ուժերից ու քուրդերից։ Թուրքական ուժերը սկզբում բաղկացած էին 4 000 զինվորից, հետո ավելանալով, թուրքերի թիվը հասնում է 7 000-ի, քուրդերինը՝ 5 000-ի, ընդամենը 12 000 զինվոր և 12 թնդանոթ։ Այս բոլորի դիմաց հայերն ունեին 625 հրացան, այսինքն 1-ը 20-ի դեմ, որսի հրացանները Կրուպի թնդանոթների դեմ, այն էլ շատ քիչ գնդակներով։ Թուրքերը մղում էին հայերին բնաջնջելու, կողոպտելու, բռնաբարելու կռիվ, հայերը՝ ապրելու, ընտանիքը պահպանելու, ազգային գոյությունն ու պատիվը փրկելու կռիվ։ Վանի հայությունը կռվում էր ոչ թե ուժի քանակով, այլ որակով, հայրենասիրությամբ։ Նա մղում էր գոյության կռիվ, որովհետև նրա գլխին Դամոկլյան սրի նման կախված էր ջարդերի սև ուրվականը. նա, այդ դարավոր ռայան, ոտքի էր կանգնել, դուրս էր քաշել սուրը իր ոսոխի դեմ և չէր դնում պատյան. նա ընդունում է պատվավոր մահը։ Թուրքերի ուժի առավելությանը հայերը հակադրում են իրենց բարոյական գերակշռությունը։ Կռվի նախօրյակին և ընթացքում, Վանի հայերն ազգովին ավելի են միավորվում՝ իրենց գոյամարտը հաջող վարելու համար։

Ապրիլի 6-ին երթևեկությունը քաղաքամեջի հետ դադարում է, շուկան փակվում, կապը կառավարության հետ կտրվում է, ծայրամասերի հայերը քաշվում են կենտրոնական թաղերը ու լցվում ամերիկյան ու գերմանական շենքերը, դատարկվում են Կոր դարը, Արարքի մի մասը, Ս. Հակոբի թաղամասը, Համզկերտ, Սղկա և Շուշանց հայաբնակ գյուղերի բնակիչները գաղթում են քաղաք։ Քաղաք են փոխադրվում Վարագա վանքի որբերը, աշակերտներն ու ուսուցիչները։ Ավանց գյուղից որոշ թվով կռվող տղաներ իրենց զենքերով նույնպես մտնում են քաղաք։ Արհավիրքը մոտենում էր։ Գործադրության էր դրվում հայաջինջ սև քաղաքականությունը։ Ըստ ծրագրի, Վանը պիտի կոտորեր կուսակալը 12 000 զորքով, 12 թնդանոթով, Բերկրիի գայմագամ Ջիա բեյը, Կոփ-Մահմուդի Թոռ Ամար բեյը և Ցարհոնն իրենց 600 ձիավորներով պիտի կոտորեին Բերկրիի ու Վերին Թիմարի հայերին։ Սարայի գայմագամ Քյամիլ բեյը, Խանասորի քուրդ Շարաֆ բեյը և Արիֆ բեյը իրենց զորքերով ու թագուրցիների իրենց աշիրաթներով պիտի կոտորեին Արճակի շրջանի ու Ներքին Թիմարի հայերին։ Հուսեին փաշայի տղան իր աշիրաթներով պիտի կոտորեր Արճեշ—Ալջավազի հայերին, Շաքիրի որդի Լազգին իր ձիավորներով՝ Հայոց-Ձորի հայերին, այն էլ 24 ժամվա մեջ, հետո պիտի կոտորեին մնացած շրջանների հայերին։ Հենց այդ ժամանակ Սարայում կոտորում են թուրքական բանակում եղած 150 հայ զինվորներին։

Վան-Վասպուրական նահանգի հայերի բնաջնջումն սկսում է ապրիլի 4-ից և համարյա վերջանում է ապրիլի 12-ին, մեծ մասը տեղի է ունենում ապրիլի 6—7-ին, ինչպես նախատեսել ու ծրագրել էր կուսակալ Ջևդեթը, բայց այդ կոտորածը տեղի է ունենում միայն որոշ գավառներում։ Վան-Վասպուրական նահանգի գավառներից Աղբակի ու Սարայի 6 000 հայերի բնաջնջումը տեղի է ունենում 1914 թվականի նոյեմբեր—դեկտեմբեր ամիսներին, որոնց մնացորդները ապաստան են գտնում Վանի Այգեստանում։ Մոկս գավառի շուրջ 7 000 հայեր ազատվում են ջարդերից լուսամիտ քուրդ Մորթուլահ բեյի շնորհիվ։ Կարկառի, Կարճկանի և Գավաշի մոտ 25 000 հայեր թեև բնավեր են դառնում, բայց կռվելով ազատվում ու ապաստանում են Մոկսում ու Շատախի Փեսան դաշտում։ Գյավառի, Ջուլամերիկի և Նորդուզի 6 000 հայեր մեծ մասամբ կռվելով ազատվում ու ապաստանում են Շատախ, Վարագ և Վան-Այգեստան։ Շատախը մինչև վերջ մղում է գոյամարտ։ Վան-Տոսպ գավառի ավելի քան 25 000 հայեր ազատվում են կոտորածներից ապաստանելով Վան-Այգեստան և Վարագա գիծ։ Խոշաբի 2 500 հայեր համարյա ազատվում ու ապաստանում են Վարագ և Այգեստան։ Արճակի ու Հայոց ձորի 24 000 հայերից մի մասը կոտորվում է, ազատվածները ապաստանում են Վարագ, Վան-Այգեստան և Փեսան դաշտ։ Թիմարի ավելի քան 25 000 հայերից մի փոքր մասը նույնպես կոտորվում է, բայց մեծագույն

մասը ազատվելով ապաստանում է Վանա լճի կղզիներն ու Վան-Այգեստան։ Կոտորածների ու ջարդերի ժամանակ ամենից շատ տուժում են Ալջավազի, Արճեշի ու Բերկրիի գավառի ավելի քան 28 000 հայերը։ Այս գավառներում դիմադրությունը թույլ էր, թշնամին աներկյուղ շարժվում էր ուզածին պես։ Արճեշ ու Բերկրի գավառների բնակչության կեսը համարյա ոչնչանում է, իսկ այդ երեք գավառների ազատվածները նույնպես ապաստանում են Վանա լճի կղզիներում և Վան-Այգեստանում։ Այսպիսով, ամբողջ նահգի մոտ 200 000 հայերը կենտրոնանում են Վանա լճի կղզիներում, Շատախում, Փեսան դաշտի 4 գյուղերում, Մոկսում, Վարագա գծում և մոտ 100 000 Վան քաղաքում ու շարունակում գոյամարտը։

Ապրիլի 6-ը անցնում է խաղաղ։

(Շարունակելի)



ԱԱԼԵՔՍԱՆԴՐ ՓԱՇԱՅԱՆ

ԼԵՌ, ՈՐ ԱՊՐՈՒՄ Է ԺՈՂՈՎՐԴԻ ՍՐՏՈՒՄ

(Ականատեսի հուշեր ու մտորումներ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» գրքի արևելահայերեն հրատարակության առթիվ)։

«Համբարձի պաչս իմ ի լերինս,
ուստի եկեսցէ ինձ օգնութիւն»։
(ՍԱՂՄ. ճԻ 1)

1933 թվականին լույս տեսավ գերմանացի հրեա գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վերնագրով ստվարածավալ վեպը, որ գեղարվեստական նկարագրությունն է 1915 թվականին ինքնապաշտպանության համար Մուսա լեռ բարձրացող սվեդիացիների մղած հերոսամարտի։

Շուտով այս գիրքը ունեցավ ընթերցողների մի բանակ և օրըստօրե նրա մասին ստեղծված հետաքրքրությունն այնքան շատացավ, որ կարճ ժամանակամիջոցում վեպն ունեցավ մոտ երեք տասնյակ տարբեր լեզուներով թարգմանություններ։

Ֆրանց Վերֆելից առաջ օտարազգի ոչ մի գրչի չէր հաջողվել տալ լիարժեք գեղարվեստականությամբ և լայն ընդգրկումով վիպական մի ստեղծագործություն, որի մեջ ցոլար հայ ժողովրդի հերոսությունը, ազատատենչ ոգին և, մանավանդ, նրա կամքը՝ արևի տակ ապրելու որպես ազգ, որպես իր ինքնուրույնությունը պահող ժողովուրդ։

Երբեմն արհամարհված, երբեմն սակարկության ու վաճառքի առարկա դարձած, երբեմն մոռացության ենթարկված, իր նախկին բարեկամներից մերժված ու լքված հայ ժողովուրդը, շնորհիվ «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի, ճանաչվեց որպես ազատաբաղձ, կենսունակ և անվեհեր ժողովուրդ, որի դիմաց «թշնամին ճանչցավ հայու սիրտն անհաղթ...»[1]։

Արար աշխարհ կարդաց Վերֆելի գիրքը, կարդաց հիացմունքով և համոզվեց, որ աստվածաշնչական հայ ժողովուրդը ուզում է ապրել որպես մարդ, ստեղծագործել մարդկության համար այն, ինչ վեհ է, գեղեցիկ ու ճշմարիտ։ Նա միշտ ձգտել է ունենալ արևի տակ իր պապերից ժառանգած չորս հազար տարվա նվիրական հողը՝ «Հայաստան երկիր դրախտավայր»-ը։

---

1 Վ. Թեքեյան, «Երկեր», Հայպետհրատ, Երևան, 1958 թ., էջ 279։

Անշուշտ Մուսա լեռան փոքրիկ, խաղաղ հայ գյուղերը չէին միայն, որ «երբ թշնամին սպառնաց՝ եղան հանկարծ բանակներ», որոնք ինքնապաշտպանության դիմեցին ազատագրական հերոսամարտեր մղելով, միայն նրանք չէին, որ ընդվզեցին թուրքական բռնակալության դեմ։ Մուսա լեռան հետ պետք է հիշել նաև Վանի, Շաբին-Գարահիսարի, Եդեսիայի, Ֆրնդըջակի և հուսկ հետո հերոսական Հաջընի նախընթաց չունեցող հերոսամարտերը։

Հայ ժողովուրդը միայն և միայն իր ֆիզիկական գոյությունը պաշտպանելու համար է դիմել զենքի։

Այդպիսին է եղել մեր պատմությունը, սկսած Ավարայրից մինչև Սարդարաբադի հերոսամարտը։

Բռնակալության լծի տակ երկար ժամանակ տանջահար եղած և պայքարի ելած ժողովուրդները երբեք չպետք է մոռանան հարգել ազատության ճանապարհի վրա հերոսաբար զոհվածների հիշատակը։

Դժբախտաբար մենք չունեցանք մեր նոր օրերի Հոմերոսին, որպեսզի քերթեր 1915 թվականի հայկական մեծ եղեռնի և՛ Իլիականը, և՛ Ոդիսականը։

Եվ ահա մի օտար գրչի վիճակվեց այդ դերը։ Ծագումով հրեա տաղանդավոր մի գրող լոկ խղճի, արդարության և մարդկային արժանավորության նկատմամբ հարգանքի զգացմունքներից թելադրված, դրվատեց ու կենդանացրեց հայ ժողովրդի հերոսական այդ պայքարը ազնիվ կրքոտությամբ, անշահախնդիր և սրբազան նվիրումով։

Յուրաքանչյուր հայ պետք է հրճվի, հպարտանա և իր երախտագետ սրտում անպայման սրբությամբ պահի այժմ արդեն վախճանված այդ մարդասեր հեղինակի պայծառ հիշատակը։

Միայն ու միայն թուրք ազգայնամոլները կարող են տխրել ու գաղազել, ինչպես այդ արեցին 1938 թվականին, Ստամբուլի Թաքսիմ հրապարակում, երբ քսաներորդ դարի «քաղաքակրթված» թուրք ուսանողները արդեն զանազան լեզուներով թարգմանված «Մուսա լեռան քառասուն օրը» հավաքելով խարույկ սարքեցին, նրա լափլիզող բոցերի մեջ խեղդել ցանկանալով իրենց թանձր ատելությունը։

Իսկ երբ Ալեքսանդրետի սանջաքը Թուրքիային հանձնելու տխուր դեպքից հետո Մուսա լեռան հայերը, պարտադրված, լքեցին իրենց գյուղերը, Դամլաջըկի բարձունքի վրա իրենց կառուցած հուշարձանը թողնելով անտեր-անտիրական, իրեն քաղաքակիրթ համարող թուրքը, չհանդուրժելով նույնիսկ տեսնել այդ պատմական կոթողը Մուսա լեռան բարձունքի վրա, այն ջարդուփշուր արեց[2]։

Այժմ, երբ արդեն սովետահայ ընթերցողի սեղանի վրա է «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը, ես, որպես բնիկ սվեցիդի և Մուսա լեռան քառասուն օրերն ապրողներից մեկը, ուզում եմ այս նշանավոր գրքում նկարագրված պատմական դեպքին վերաբերող որոշ լրացումներ կատարել։

***

1915 թվական, սև թվական հայ ժողովրդի համար...։

Սկսվեց մեծ եղեռնը։ Որոշված էր հայ ժողովրդի բնաջնջումը...։ Թուրք կառավարությունը հայերին տեղահան էր անում Արևմտյան Հայաստանից, Անատոլիայից, Թուրքիայի բոլոր անկյուններից և ուղարկում էր դեպի մեծ սպանդանոցը՝ Դեր Զոր։

Հերթը հասել էր Մուսա լեռան։ Եվ ահա այս խաղաղ լեռնորդիները, արհամարհելով ամեն վտանգ, մերժում են թուրք կառավարության հրամանը և վերջնագրին պատասխանում են՝ պարզելով ապստամբության դրոշը իրենց սրբազան լեռան վրա։ Նրանք վճռում են զեն ի ձեռին պաշտպանվել, կռվել մինչև իրենց արյան վերջին կաթիլը, մեռնել, պատվով, քան տանջամահ լինել Սիրիայի անապատներում։

Մուսալեռնցիները լավ էին ղգում իրենց նախահայր քերթող Եղիշեի «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն» պատմական խոսքի ճշմարտությունը։

Ու մուսալեռնցիները լեռ բարձրացան 1915 թվականի օգոստոսի 1-ին, իրենց հետ վերցնելով միայն այն, ինչ անհրաժեշտ էր մարտնչելու, պաշտպանվելու համար։

---

[2] 1942 թվականին երկու թուրք պաշտոնյաներ գալիս են Անկարայից՝ Մուսա լեռ բարձրանալու և ստուգելու համար, թե իրոք այդպիսի բան պատահե՞լ է։ և երբ տեսնում են, որ դեռ կանգնած մնում է հերոսամարտի հուշարձանը, գազազած, խկույն պոկում են գմբեթի վրա ամրացված խաչը, դեն են շպրտում այն և կարգադրում մոտակա թուրք գյուղացիներին՝ քանդել այդ պատմական կոթողը, այն միամիտ համոզմամբ, թե այդպիսով ջնջած կլինեն պատմական խոշոր մի իրադարձությունը։

Այս դեպքին ականատես է եղել բնիկ մուսալեռնցի (Բիթլիսից) Հովհաննես Գրպրանյանը, որն այդ ժամանակ դեռ մնում էր Բիթլիսում և եղել էր թուրք պաշտոնյաների դիդը։

Այս դեպքը պատմել է Մուսա լեռան Հաջի-Հարիբլի գյուղից. Սարգիս Շիրինյանը, որը 1945 թվականին փախչելով Սանջաքից, ապաստան գտավ Հալեպում և ապա 1946 թվականին ներգաղթեց Հայրենիք։



Մուսալեռնցիների նավամուտը

Մուսալեռնցիները իրենց հայրենի սարերի վրա կռվեցին 40 օր ու 40 գիշեր, կորցնելով ընդամենը 18 մարտիկ և ունենալով միայն 8 վիրավոր, մինչև որ եկան ֆրանսիական զրահանավերը և փրկեցին մահից այս խրոխտ, խիզախ և ըմբոստ լեռնորդիներին։

Թե ինչպե՞ս և որտեղի՞ց էին տեղեկություն ստացել այս մարտանավերը և փութացել փրկելու Մուսա լեռան հայորդիներին, ահա այդ հարցի լուսաբանմանն է հատկացված հիմնականում մեր սույն հոդվածը։

Լեռ բարձրանալու հենց առաջին օրից, հայ լեռնականները իրենց հույսը դնում են ծովի վրա. նրանք համոզված էին, որ մի բուռ ժողովուրդ չէր կարող դիմադրել օսմանյան պետության վայրագ ուժերին։ Այս համոզումով էլ մուսալեռնցիները սկսում են զանազան ծրագրեր մշակել և անմիջապես անցնում գործի։

Կազմվում են վարչական մարմիններ, խորհուրդներ, ընտրվում են զինվորական պետեր՝ Եսայի Յաղուբյանը, Պետրոս Դըմլաքյանը, Հաբեթ Իսկենդերյանը և ուրիշներ։

Նշանակվում են վարչական խորհուրդների համար առենապետներ՝ պատվելի Տիգրան Անդրեասյանը (Վերֆելի վեպում հիշված Արամ Թովմասյանը), Տ. Աբրահամ քահանա Տեր-Գալստյանը և Տ. Վարդան քահանա Վարդերեսյանը և ուրիշներ։

Առաջին ճակատամարտն սկսվում է 1915 թվականի օգոստոսի 7-ին, երկրորդը՝ օգոստոսի 10-ին, երրորդը՝ օգոստոսի 11-ին (12 ժամ տևողությամբ), չորրորդը՝ օգոստոսի 13-ին և այսպես շարունակաբար։

Ինքնապաշտպանության խորհրդի վարչական մարմինը որոշում է սպիտակ սավաններից պատրաստել երկու մեծ դրոշակ և վրան կարել կարմիր խաչ։ Բարեբախտաբար մարտիկների մեջ կային ֆրանսերեն և անգլերեն լեզուներին քաջատեղյակ անձինք։ Հեռոսամարտի ղեկավարներից պատվելի Տիգրան Անդրեասյանը այդ հսկա դրոշակներից մեկի վրա, անգլերեն լեզվով, համառոտակի գրում է լեռնականների օրհասական վիճակի մասին. «Christians in drstress։ riscue!» («Քրիստոնյաներ վտանգի մեջ, փրկեցե՛ք»)։ Այդ դրոշակն ամրացնում են Դամլաջըկի բարձունքի վրա, ծովի դիմաց, և կողքին վառում են մեծ խարույկ այն հույսով, որ անցնող նավերը կկարողանան հեռվից նկատել այն։ Նշանակում են հերթափոխներ, որոնք սպասում են դրոշի մոտ, իրենց աչքերը հառած դեպի ծովը այն ակնկալությամբ, որ իրենց փրկությունը կարող է գալ միայն ծովից։

Պատվելի Տիգրան Անդրեասյանը գրում է նաև անգլերեն լեզվով ընդարձակ աղերսագիր, ուղղված դաշնակից ծովակալներին։

Դրոշի մոտ արթուն հսկում է 65 տարեկան Մովսես Գըրըգյանը, հայտնի հայրենասեր, խիզախ լեռնական, որը, որպես քաջ լողորդ, հանձն է առնում մարտանավ նկատելուն պես նետվել ջուրը, տեղ հասցնել աղերսագիրը, որը դրված էր նախապես պատրաստված թիթեղյա տուփի մեջ և անագով ամրացված։ Խիզախ և անձնուրաց ծերունին պիտի տաներ այդ տուփը լարով մեջքին կապած ու հանձներ հանդիպող նավին։

Ահա այդ գրությունը.

«Անգլիական, ֆրանսական, իտալական, ռուսական և ամերիկյան բոլոր ծովակալներուն, նավապետներուն և իշխանութեանց, որոնց կրնա ներկայանալ սույն աղերսագիրը, դիմում կընենք մենք հանուն Աստուծո և մարդկային եղբայրութեան, դիմում կընենք հանուն Քրիստոսի և քրիստոնեութեան։

Տե՛ր, մենք, Յողուն-օլուքի և ուրիշ վեց հայ գյուղերու բնակչութեունս, ընդամենը 6 000 հոգի[3], քաշված ենք Մուսա դաղի Դամլաջըկ կոչված կեդրոնը, որ կգտնվի Սվեդիայե 3—4 ժամ հեռու դեպի արևմուտք, ճիշտ ծովուն դիմացը։ Ծովուն ու մեր մեջտեղ ոչ մեկ թրքական զորք կա ու կրնա մնալ։ Տե՛ր, մենք հոս ապաստանած ենք թրքական բարբարոսութեանեն, խժդժություններեն, կոտորածեն և մահեն, և մանավանդ մեր կիներուն պատիվին բռնաբարումեն զերծ մնալու համար։ Տե՛ր, վստահ ենք, որ դուք տեղյակ եք թուրքին ներկա բնաջնջման քաղաքականութեյան, զոր նա կգործադրե մեր խեղճ ցեղին վրա։ Հայերը ցրվելու պատրվակով, իբր թե արգիլելու համար անոնց ապստամբությունը, խեղճ հայ քրիստոնյաները կվտարվին իրենց տուներեն, կտարագրվին իրենց օջախներեն, իրենց պարտեզներեն և այգիներեն, և իրենց գույքերեն ու հարստութեներեն, և կղրկվին թրքական անծանոթ անապատ վայրեր, հոն, եթե ոչ ճամբուն վրա, անպատիվ մահ մը գտնելու վայրենի թուրքերու, քուրդերու կամ արաբներու ձեռքը։ Այս սադայելյան ծրագիրը արդեն իսկ կիրարկված է Զեյթունի և իր 32 գյուղերուն վրա, ինչպես նաև Ալբուստանի, Կյոքսյունի և Յարփուզի վրա։ Ո՛չ մեկ հայ մնացած է այն կողմերը։ Նույնպես Դիարբեքիրի, Կյուրինի, Ադանայի, Տարսոնի, Մերսինի, Դյորթ-Յոլի, Հաջընի, Քեսաբի, Հասան-Բեյլիի, Այնթաբի, Քիլիսի և ուրիշ վայրերու հայ բնակչությունը տեղահանված է։ Եվ նույն գործողությունը կկատարվի հետզհետե Թուրքիո բոլոր հայերուն վրա։ Այս տողերը գրողը, քանի մը ամիս առաջ Զեյթունի բողոքականաց քարոզիչն էր, որ թուրք կառավարութեյան շատ մը անկուր վայրագություններուն ականատես վկան եղած է։ Սահմռկեցուցիչ էր տեսնել, ինչպես սույն տողերը գրողը, ութը կամ տասը անդամներե բաղկացած մեծ ընտանիքներ երկու պզտիկ գրաստներով գաղթելու ստիպված, տեսնել վեց-յոթը տարեկան բոբիկ տղաք և ծերունի այրեր ու կիներ, որոնք գիշեր ու ցերեկ կքալեին ոտքերնին ուռած, և հաճախ անոթի ու ծարավ։ Բազմաթիվ ուժասպառ մայրեր ստիպվեցան իրենց գիրկերեն նետել իրենց հոգեհատորները, և բախտերնին անիծելով մեկ կողմ դարձուցին իրենց արտասվալից աչքերը հավիտենապես։ Քանի՛ փափկասուն տիկիններ, որոնք մացառուտի մը քով ծնունդ տված էին իրենց երեխաներուն, ստիպվեցան անմիջապես շարունակել իրենց ճամբան, մինչև որ բարեհաճ մահը եկավ հասավ վերջ տալու իրենց տառապանքին։ Այսպես ծերերու և պառավներու, պզտիկներու, հիվանդներու և տկարակազմներու մեծ մասը կոտորվեցան ճամբուն վրա։ Մնացածը, տակավին ճամբորդության տաժանքին դիմանալու չափ զորավոր, ժանդարմաներու խարազաններուն տակ, քշվեցան դեպի անխուսափելի գերեզմանը, անծանոթ անապատներու ավազուտքը, արևուն կիզիչ ճառագայթներուն տակ մեռնելու անոթութենե (քանի որ շատեր ճամբան իսկ ուտելու բան մը չունեին, և ուրիշ շատերուն ալ ունեցած քիչ մը դրամը կողոպտված էր), և կամ ժանտատենդ և այլ հիվանդություններե, կամ վայրենի արաբին, թուրքին ու քուրդին սուրեն, եթե այդ անգութ սուրը չփութա արդեն ընդհանուր մահ տարածելու մյուս միջոցներու պետքը չզգացված։ Եվ հիմա, Տե՛ր, արդեն իսկ հասած ենք այդ սև եղեռնատրամին, այն դժոխային ողբերգության։ Իզուր հիմա առաջին գաղթումին բաղդատաբար լավագույն վիճակը կփնտռվի։ Իրենք, այդ առաջին գաղթողներն իսկ հավիտյան կորուսած են զայն։ Հիմա կոտորածները ամենուրեք կատարածեն իրենց սարսափը։ Դեր Զոր ղրկված 7 000 զեյթունցի այրեն ո՛չ մեկը ազատած է կոտորածեն, և դժբախտ այրիներն ու աղջիկները բաշխված են բնիկ վայրենի արաբներու միջև։ Կոտորածներ պատահած են նաև Դիարբեքիր և Մարաշ։ Դիարբեքիրի արական սեռը ջնջելե վերջ, մնացածները գաղթեցուցած են զեյթունցիներու բախտակից ըլլալու համար։ Մենք իմացած ենք, որ հիմա գաղթողները չեն թույլատրվիր նույնիսկ որոշված աքսորավայրերը հասնելու։ Ճամբան հանդիպած գյուղերու բնակիչները անոնց այրերը կսպաննեն և ոմանք անոնց կիներն ու աղջիկ-

[3] Ինչպես ճշտում է վերապատվելի Տիգրան Անդրեասյանը, ճշգրիտ մարդահամար կատարվելուց հետո պարզվել է, որ այս թիվը պետք է լինի 4 600 (տե՛ս «Զեյթունի տարագրությունը և Սվեդիո ապստամբությունը», Հալեպ, 1935, էջ 77—82)։



Մուսալեռնցի մի խումբ մարտիկներ Պորտ Սաիդում

ները կառևանգեն։ Մեկ խոսքով որոշ գիտենք, թե ինչպես որ ամերիկացի դոկտոր մը ըսած է, թուրք կառավարությունը որոշած է բնաջնջել թրքահայերը և մեծ կորովով կգործադրե իր ծրագիրը։ Հիմա, Տե՛ր, մենք դարերով հալածված ժողովուրդի մը մնացորդներն ենք։ Թուրք կառավարությունը ասկե քառասուն օր առաջ իմացուց մեզ մեր ամբողջ ժողովուրդը գաղթեցնելու իր որոշումը, երբ մենք հոս քաշվեցանք մեր կյանքն ու պատիվը փրկելու համար, քանզի որոշ գիտեինք, թե գաղթել՝ ներկա պայմաններու ներքև կնշանակե ոչնչացում, սարսափ, տանջանք և անպատվություն։ Ուստի մենք որոշեցինք մեռնիլ կռվելով՝ քան մեր իսկ աչքերով տեսնել մեր կիներուն պատիվին անարգվիլը և հետո, իբր վախկոտներ, անլուր չարչարանքներով մահվան դիմել։ Մենք հոս քիչ ուտելիք, սակավաթիվ զենք և անբավական ռազմամթերք ունինք։ Անոթության աղաղակը արդեն իսկ կլսվի, և թուրք կառավարությունը անդադար կհալածե մեզ։ Մինչև հիմա հինգ կատաղի ճակատամարտեր ունեցած ենք 3 000 զորքերու և անկանոն խուժանի մը դեմ, և Աստված հաղթությունը մեզի շնորհած է։ Բայց մեր ամենեն թանկագին կռվողներեն ոմանք կորուսած ենք, և վստահ ենք, թե հաջորդ անգամ շատ ավելի մեծ ուժի մը դիմադրելու պիտի ստիպվինք, որով վստահ չենք, թե պիտի կարենանք հաղթել այսչափ քիչ զենքերով ու ռազմամթերքով։ Մանավանդ, Տե՛ր, սուվը շատ մոտեցած է մեզ։ Այսպես, Տե՛ր, 6 000 խեղճ քրիստոնյաներ, որոնց եթե քրիստոնյա աշխարհը օգնության ձեռք չկարկառե, սովալլուկ մեռնելու և կամ թուրք զինվորներու ձեռքով կոտորվելու դատապարտված են։ Վստահ ենք, թե Աստված չընե, եթե անգամ մը հաղթվինք, մեր բոլոր էրիկ մարդիկը պիտի սպաննվին անլուր չարչարանքներով, և մեր դժբախտ կիները ամոթալի ու սրտակեղեք կյանքի մը անձնատուր պիտի ըլլան։ Տե՛ր, դիմում կընենք Ձեզի հանուն Աստուծո և մարդկային եղբայրության, դիմում կընենք հանուն Քրիստոսի, դիմում կընենք հանուն քաղաքակրթության, ընդդեմ քաղաքակրթության այս ոսոխին, և կխնդրենք, որ ազատեք մեր կյանքն ու պատիվը։ Հաճեցե՛ք, Տե՛ր, փոխադրել մեզ Կիպրոս կամ ուրիշ ազատ երկիր մը։ Մեր ժողովուրդը ծույլ չէ, կրնա իր ապրուստը ճարել, եթե գործ տրվի իրեն։ Ով կամ, եթե այսքանը կարելի չէ, հաճեցեք փոխադրել գոնե մեր կիները, ծերերն ու մանուկները, և պարենավորեցե՛ք մեզ զենքերով և ռազմամթերքով, ուտելիք տվե՛ք մեզի, որ Ձեզի հետ կողք-կողքի կռվինք թրքական ուժերուն դեմ։ Կխնդրենք, Տե՛ր, մի՛ թողուք, որ սովամահ ըլլանք, մի՛ թողուք, որ ոչնչանանք, ազատեցե՛ք մեր կյանքը, ազատեցե՛ք մեր պատիվը, քանի դեռ շատ ուշ չէ։

Ձեր խոնարհ ծառան, ի դիմաց տեղվույս բոլոր քրիստոնյաներուն՝

Տիգրան Անդրեասյան

1915 օգոստոս 20/2 սեպտեմբեր»[1]։

[1] Վերապատվելի Տիգրան Անդրեասյան, նշված աշխատությունը, էջ 77—82։



Մուսալեռնցիների ավատարար կարմիր խաչով դրոշը

Որոշվում է սույն դիմումի երկրորդ օրինակն էլ Ալեքսանդրետի կողմերն ուղարկել Մովսես Գըրըգյանին, որպես օգնական, կամավոր միանում են Աբրահամ Գոջայանը, Կարապետ Խաղըշնյանը և Տիգրան Մավլիկյանը։ Իսկույն նրանք մեկնում են, աղերսագիրը հետները առած։ Մի քանի օր հետո վերադառնում են հուսախաբված, որովհետև Ալեքսանդրետի կողմերը ոչ մի նավ չէր երեվացել։

Մուսա լեռան պաշտպանության խորհրդի վարչական մարմինը խորհրդակցելով, որոշում է կապ հաստատել արտասահմանի մեր ազգակիցների հետ, տեղյակ պահել նրանց, որպեսզի ի գործ դնեն իրենց բոլոր հնարավորությունները։

Ահա թե ի՛նչ է գրում այս մասին վերապատվելի Տիգրան Անդրեասյանը։

«Այս միջոցին ուրիշ խորհուրդ մըն ալ ունեցանք՝ եղյակ համաձայնության և մեր արտասահման բնակող ազգակիցներուն լուր հասցնել Հալեպի ամերիկյան հյուպատոսին միջոցավ։ Երեք նամակ գրեցինք, մեկը հյուպատոսին, երկրորդը՝ Պողոս փաշա Նուպարին և երրորդը՝ Հալեպի հայոց առաջնորդարանին»[5]։ Առաջին նամակը անգլերեն լեզվով գրում է ինքը՝ պատվելի Տ. Անդրեասյանը, երկրորդը գրում է Մ. Տեր-Գալստյանը Հալեպի առաջնորդարանին, իսկ երրորդը՝ Վարդան քահանա Վարդերեսյանը[6] Պողոս փաշա Նուպարին։

Ինձ, որպես Մուսա լեռան քառասուն օրերն ապրողներից մեկի, միշտ հուզել է այն հարցը, թե արդյո՞ք պատահականություն էր ֆրանսիական մարտանավերի օգնության գալը, հրա՞շք էր։ Ո՛չ այս, ո՛չ այն։ Տեսնենք ուրեմն ի՛նչ շարժառիթներից մղված, ֆրանսիական մարտանավերը հանկարծ հայտնվեցին Մուսա լեռան ծովեզերքները և փրկեցին օրհասի մեջ գտնվող շուրջ 5 000 հոգու։

Ստույգ աղբյուրներից իմ ստացած տեղեկությունները հետևյալն են ասում.

1915 թվականին Բեյրութի ամերիկյան և ֆրանսիական զույգ համալսարաններում սովորելիս են եղել մի խումբ հայ ուսանողներ,

---

[5] Նույն տեղում, էջ 92—93։

[6] Այս հայրենասեր քահանան 1946 թվականին ներգաղթեց Հայաստան, վախճանվեց 1953 թվականին և թաղվեց Էջմիածնում, Ս. Գայանե վանքի բակում։

որոնցից մի քանիսը իրազեկ են եղել Մուսա լեռան դեպքին։ Այդ իրազեկ վկաներից եր-կուսը ինձ ծանոթ անձնավորություններ են, որոնցից մեկը ներկայումս ապրում է Երևանում, իսկ մյուսը քեսաբցի հայտնի բժիշկ Ա. Ինջեջիկյանն է, որն այժմ բնակվում է Բեյրութում։ Նրանք ինձ պատմել են հետևյալը.

Թուրքական իշխանությունները փակել են տալիս Բեյրութի ֆրանսիական համալսարանը։ Համալսարանի հայ ուսանողներն ապաստանում են ամերիկյան համալսարանում։ Հավանաբար մուսալեռնցի հայերից ոմանք հաջողեցրել են պատվելի Տ. Անդրեասյանի շարադրած աղերսագիրը հասցնել հայ ուսանողներին, որոնք անմիջապես այն ամերիկյան համալսարանի ռեկտոր միստեր Դաջին են հանձնում և թախանձագին խնդրում, որ նա բոլոր հնարավոր միջոցները ձեռք առնի՝ իմացնելու եղելությունը դաշնակից ծովային ուժերին։

Այդ օրերին ամերիկյան մի զրահանավ խարիսխ է գցած լինում Բեյրութի նավահանգստում, ամերիկյան շահերը և հատկապես համալսարանի անձնակազմին պաշտպանելու համար։

Միստեր Դաջը խոստանում է հնարավորն անել՝ փրկելու համար Մուսա լեռան հայերին։ Իսկույն նա հաղորդակցության մեջ է մտնում ամերիկյան զրահանավի հրամանատարի հետ, իսկ սա էլ իր հերթին հեռագրում է եգիպտոսի և Կիպրոսի դաշնակից ուժերի հրամանատարությանը։

Ահա այս ահազանգի վրա է, որ առաջինը շարժվում է ֆրանսիական «Դիշեն» հածանավը, որը 1915 թվականի սեպտեմբերի 5-ին երևում է Մուսա լեռան դիմաց։ Սույն հածանավի անձնակազմի մեջ է լինում հայազգի ծովային սպա Տիրան Թեքեյանը՝ բանաստեղծ Վահան Թեքեյանի զարմիկը, որն անկասկած պետք է մեծ դեր խաղացած լինի փրկության գործում։ Նրա անձնվեր ծառայությունն անուրանալի է և արժանի հիշատակության[7]։ Նրա թելադրանքով է, որ բաց ծովից մարտանավի մարդիկ հեռադիտակով նշմարում են Դամլաջըկի վրա տնկված դրոշակի սպիտակ պատառի վրա դրոշմված կարմիր խաչը և կողքին անշեջ խարույկը, որից հետո մարտանավը մոտենում է դեպի ծովեզրը։

Նովակալ Դարտիժ դյու Ֆուռնեն իր «Պատերազմի հիշատակներ» գրքում գրում է.

«Սեպտեմբերի առաջին օրերին, կապիտան Բրիսոնի հրամանատարության տակ գտնվող «Դիշեն» հածանավը, երբ ծովի ափերն էր եղերում, ցամաքի վրա նշաններ է տեսնում»[8]։

Մուսալեռնցիները մարտանավը տեսնելուն պես, կանխազգում են իրենց փրկությունը. մի քանիսը շտապում են ծովափ. մոտենում է մարտանավից իջեցված նավակը, որի մեջ լինում է մարտանավի կապիտանը։ Լեռնականներից Խաչիկ Տումանյանը տիրապետում էր ֆրանսերեն լեզվին. նա տալիս է անհրաժեշտ բացատրությունները կապիտան Բրիսոնին, որն շտապում է պետք եղածը հեռագրել գերագույն հրամանատարությանը։

Երեք օր հետո, սեպտեմբերի 8-ին, ծովակալ Դարտիժ դու Ֆուռնեն այցելում է լեռնորդիներին և իսկույն մեկնում Կիպրոսի Ֆամագուստա նավահանգիստը։

Սեպտեմբերի 14-ին ժամանում են ֆրանսիական չորս մարտանավեր, հրամանատարությամբ վերոհիշյալ ծովակալի, և նավ վերցնում շուրջ 5 000 մուսալեռնցիներին։

***

Իսկ այժմ ի՞նչ է ներկայացնում Մուսա լեռը։ Նա մխացող հուշ է այլևս, պատմության հանձնված։ «Քաղաքակիրթ» Թուրքիան, չհաշվելով նորագույն պատմության այս իրական հերոսական դեպքի հետ, փոխել է Մուսա-լեռան անունը և այն հորջորջել Սաման դաղը (Հարդի լեռ)։

Բայց ապրում է լեռը հայ ժողովրդի սրտում, ապրում է Մուսա լեռան ոգին սվեդիացիների սրտում, և ոչ միայն նրանց, այլև ամբողջ հայության սրտում։

Մուսա լեռան 40 օրերի հերոսամարտի մասնակիցներից շատ-շատերը (այդ թվում նաև հերոսական մարտերի ղեկավարներից Եսայի Յաղուբյանը) ներգաղթեցին Հայաստան 1946 և 1947 թվականներին։ Նրանք ներկայումս երջանիկ են իրենց Մայր Հայրենիքում և երախտապարտ կլինեն, եթե մի օր Երևանի ծայրամասերում գտնվող թաղերից մեկը անվանվեր իրենց սրբազան և պաշտելի Մուսա լեռան անունով։

[7] Մեր ստացած տեղեկությունների համաձայն, Տիրան Թեքեյանը դեռևս ողջ է և բնակվում է Մարսելում։

[8] Վերապատվելի Տիգրան Աճեմեանյան, նշված աշխատությունը, էջ 114։

Ն. Գ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ
(1912—1913 թ. թ.)

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ձեռագրատունը գտնվում է մի արժեքավոր ձեռագիր, № 49 ժամանակավոր համարի տակ, որտեղ գտնվում են նոր նյութեր՝ եղեռնից առաջ Արևմտահայաստանում հայ ժողովրդի վիճակի մասին։

Ձեռագրում հանգամանորեն խոսվում է 1912—1913 թվականներին Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքարանի և եվրոպական մի շարք դեսպանատների միջև եղած այն պաշտոնական տեսակցությունների մասին, որոնք վերաբերում են գավառներում հայ ժողովրդի վիճակին։

Հայոց Պատրիարքարանի կողմից զանազան առիթներով այդ տեսակցություններին անձամբ մասնակցել են Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Հովհաննես արքեպիսկոպոս Արշարունին (1911—1913 թ. թ.), Համայակ եպիսկոպոս Դիմաքսյանը, Գրիգոր Զոհրապը, Համբարձում Պոյաճյանը (Մուրադ), Նշան Գալըպճյանը, Գարայանը, Զավրյանը, բժիշկ Զավրիևը և այլ անձինք։

Այդ տեսակցությունները տեղի են ունեցել Պոլսում, կա՛մ Հայոց Պատրիարքարանում և կա՛մ եվրոպական պետությանց դեսպանատներում, Բալկանյան երկու պատերազմների ժամանակաշրջանում։ Այդ խոսակցությունները սկսվել են 1912 թվականի նոյեմբերի 13-ից և տևել են մինչև 1913 թվականի նոյեմբերի 22-ը։

Արևմտահայերի ներկայացուցիչները տեսակցել են Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովի, նույն մինիստրության արևելյան գործերի տնօրեն՝ իշխան Տրուբեցկու, Պոլսի ռուսական դեսպան Դը Գիրսի, դեսպանատան առաջին քարտուղար Ա. Մանդելշտամի, խորհրդական Կուլվինչի, Պոլսի գերմանական դեսպան Վանգենհայմի, դեսպանատան առաջին քարտուղար կոմս Քանիցի, այլ քարտուղար դոկտ. Շյոնբերգի, գերմանացի հայասեր դոկտ. Լեփսիուսի, Պոլսի անգլիական դեսպան սըր Ջերալդ Լոուտերի, դեսպանատան առաջին քարտուղար միստեր Ֆից Մորիսի, Պոլսի ֆրանսիական դեսպան Օգյուստ Բոպի, դեսպանատան առաջին քարտուղար Լըդուի, Պոլսի ավստրիական դեսպան մարկիզ Փալլավիչինի, դեսպանատան խորհրդական էդուար Օտտոյի հետ։ Հայոց Պատրիարքարանի ներկայացուցիչները տեսակցություններ են ունեցել նաև Պոլսի իտալական դեսպանատան գործերի հավատարմատար կոմս Նանի Մոչենիկոյի, Թուրքիայի ներքին գործերի մինիստր Թալեաթ բեյի, իթթիհատական խալիլ բեյի և մի քանի այլ անձանց հետ։

Վերոհիշյալ տեսակցություններից բացի, 1913 թվականի ապրիլին Մերսինի նավահանգստում խարխափած գերմանական «Ստրալզուրգ» հածանավի հրամանատար Պասխենը հատուկ տեսակցություն է ունեցել Կիլիկիայի Սահակ Բ կաթողիկոս Խապայանի հետ, իսկ չորս օր հետո, որպես փոխադարձություն, կաթողիկոսի անունից, Գրիգորիս վարդապետ Պալաքյանը տեսակցել է նույն հրամանատարի հետ։

Բոլոր այս տեսակցությունները նկարագրվում են մանրամասնությամբ և շատ անգամ հարց ու պատասխանի ձևով։

Սույն ձեռագիրը ներկայացնում է տեսակցություններին ներկա եղող Պատրիարքարանի ներկայացուցիչներից իրազեկ մեկի զեկուցագիրը մի ստվար հատորում, որ հետագայում ուղարկվել է Ս. Էջմիածին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանին (1911—1930), որպես հայ ժողովրդի Գերագույն Հոգևոր Պետի։

Ձեռագրում գտնվում են նաև անջատ հինգ թղթեր, որոնք սևագրություններն են այլ տեսակցությանց։ Առաջինը կրում է շաբաթ, 7/20 փետրվար 1915 թվականը, իսկ երկրորդը՝ մարտ, 1915 թ.։ Վերոհիշյալ հինգ թղթերը, հակառակ որ գրված են ավելի ուշ շրջանում, այսինքն ձեռագրում նշված վերջին տեսակցությունից

ՄԱՑՐ ԱԹՈՌՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՆԱԽԱԳԾԵՐԻՑ

(Հեղինակ՝ ճարտարապետ Ռ. Իսրայելյան)

ուրջ մեկուկես տարի հետո (1915 թ. փետրվարին և ապրիլին), սակայն շոշափում են նույն հարցն ու խընդիրները, և օրդանապես կապված լինելով նախորդների հետ, խիստ անհրաժեշտ ենք գտնում դրանց հրատարակումը ևս, որ տալու ենք աշխատության վերջում։

Աշխատության վերջին այս տեսակցություններին մասնակցել են Զավեն Պատրիարքը, Պոլսի հայոց քաղաքական ժողովի ատենապետ դոկտ. Դավիթյանը, պրոֆ. Շակոբյանը և Մինաս Չերազը։

Ստորև տալիս ենք այդ ձեռագրի սիգնատուրան.

ԹՂԹԵՐԸ՝ 185։—ՊՐԱԿՆԵՐԸ՝ 12, յուրաքանչյուրը 16 թերթից։—ՄԵՆՈՒԹՅՈՒՆԸ՝ 24×17×2 սմ.։—ՆՅՈՒԹԸ՝ սպիտակ հաստ թուղթ։—ԿԱԶՄԸ՝ չունի։—ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չկան։—ՎԻՃԱԿԸ՝ բավարար, սակայն պրակները բաժանված են միմյանցից։—ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միատարր։—ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ՝ 1բ—2բ, 3բ, 83ա—84ա, 108բ—109ա, 144բ, 146բ—147բ, 172բ—185բ։—ՏՈՂԵՐ՝ 23։—ԳԵՈՒՄՆԵՐԸ՝ թուղթը ինքնին գծավոր է։—ԳԻՐԸ՝ շեղագիր։—ԳՐԻՉԸ՝ հավանաբար Պատրիարքարանի իրազեկ ներկայացուցիչներից մեկը։—ԺԱՄԱՆԱԿԸ՝ 1912—1913 թ. թ.։—ՎԱՅՐԸ՝ Կոստանդնուպոլիս։—ՇԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը հանված է Մայր Աթոռի արխիվից։

Հրատարակության տալով արխիվային այս նոր փաստաթղթերը, կարծում ենք, որ դրանք նոր լույս կսփռեն հայկական եղեռնի տխուր պատմության վրա։

Թ. Հա.— Մասնավոր տեսակցություն ռուս դեսպան պր. Դը Գիրսի հետ, հանուն ամենապատիվ սրբազան պատրիարքին և Ազգային կեդրոնական վարչության

(Ռուս դեսպանատան մեջ)

Դշ. 13 նոյեմբերի 1912 (Փրանսերեն)։

Ռուս դեսպան Դը Գիրս[1] *ընդունելով Պատրիարքարանի ներկայացուցիչները իր աշխատության սենյակը, նախ և առաջ կհարցնե, թե ի՞նչ է մեր փափագը։ Ներկայացուցիչները պարզելով Անդրոլուի հայ ժողովրդյան տագնապալի և անհանուրժելի վիճակը՝ կյանքի, ինչքի և պատվի շարունակական անապահովության և հաճախակի սպանութեանց, թալանի, առևանգման և այլ այս կարգի անարդարութեանց բերմամբ, կհայտնեն, թե հայ ժողովուրդը, այլևս հուսահատ Օսմանյան Սահմանադրութենեն ևս՝ կդիմե գաղթի։ Ուստի կխնդրվի, որ Բալկանյան պատերազմով հառաջ եկած նոր կացութեան բերմամբ, հայ բազմաչարչար ժողովուրդին ևս դարավոր զրկանքներուն վերջ մը տրվի, արմատական բարեկարգութեամբ ապահովելու համար հայոց խաղաղ զարգացումը, արժանացնելով զինքն մարդկային ամենատարրական իրավունքներուն։*

Դեսպան—Պարոններ. գիտեք, որ իմ դիրքս փափուկ է։ Ես հոս ներկայացուցիչն եմ կառավարության մը, ու իմ պարտականությունս է բարվոք հարաբերություն մշակել օսմանյան կառավարության հետ, ուստի ստիպված եմ շատ վերապահ լեզվով խոսիլ, վստահ լինելով, որ հարկ եղածը պիտի հասկընաք։ Ես շատ կսիրեմ հայ ժողովուրդը, որուն համար մեծ համակրանք ունիմ։ Նույն համակրանքը ունի նաև իմ կառավարությունս, ու ասոր ապացույցն է հայոց գոհացուցիչ վիճակը Կովկասի մեջ, ուր Ձեր կաթողիկոսությունը այնքան հարգված է մեզմե։ Արդ, այժմ հաճեցեք ըսել, թե ի՞նչ դարման կառաջարկեք հայոցդ աննախանձելի վիճակին հիմնական բարվոքման համար։

Պատասխան—Երկար տարիներե ի վեր Թրքահայաստանի բարեկարգության հարցը հուզված է, դժբախտաբար որևէ գոհացուցիչ ելքի հանգած չէ։ Օսմանյան կառավարությունը ո՛չ բարի կամեցողություն և ո՛չ ալ կարողություն ունի կյանքի, ինչքի և պատվի ամենատարրական պահանջները հայ ժողովրդյան գոհացնելու։

Եվրոպական պետությունները նմանապես չեն ըրած որևէ լուրջ միջամտություն՝ գործադրել տալու համար Բեռլինի 61-րդ հոդվածը[2]։ Մակեդոնիո մեջ պետությանց ի գործ դրած կոնտրոլը իսկ չկրցավ որոշ արդյունքի մը հանգիլ, իրենց պետությանց անհամաձայնության և օսմանյան պետության արգելքներուն պատճառով։ Ներկա պարագաներու մեջ կմնա մեզ մեկ բան խնդրել՝ Եվրոպական պետության մը թևարկությունը Թրքահայաստանի վրա։ Ռուս պետությունը, իբրև մերձավոր դրացի հզոր պետություն, կրնա իր թևարկությունը և պաշտպանությունը ընծայել մեզ։ Իհարկե խոսք չենք ըներ տիրապետության մասին, բայց կարելի է Թրքահայաստանի մասին հարմար կարգադրություն մը ընել. օրինակ, ինչպես Բոսնա-Հերսեքի[3] վարչությունը ժամանակին հանձնվեցավ Ավստրո-Հունգարական պետության, նույնպես Թրքահայաստանը ևս բարեկարգելու հոգն կրնա հանձնվիլ ռուս պետության։

---

[1] Ցարական Ռուսաստանի դեսպանը Կոստանդնուպոլսում։

[2] Խոսքը 1878 թվականի հուլիսին Բեռլինի վեհաժողովում ընդունված պայմանագրի 61-րդ հոդվածի մասին է, որտեղ նախատեսվում էր անցկացնել բարենորոգումներ Արևմտյան Հայաստանում։

[3] Հարավսլավիայի Բոսնա և Հերցեգովինա նահանգը։

Դեսպան—Ադոր ժամը դեռ եկած չէ. նախ Բալկանյան պատերազմը պետք է վերջանա, անկե վերջն է, որ զանազան լուծման կարոտ խնդրոց համար, եվրոպական պետութիւնները «կոնֆերանս» մը պիտի ընեն, այդ ատեն իմ կառավարութիւնը նախաձեռնարկ պիտի լինի Ձեր խնդրույն համար։

Բայց, ըսեք կաղաչեմ, Ձեր այս դիմումը հանուն ամբողջ ազգի՞ն է։

Պատասխան—Այո՛, հանուն ամենապատիվ սրբազան պատրիարքին կխոսինք, և թե առ այս պահանջված «մանդատ»[4] Ազգային կեդրոնական վարչութիւնը տված է մեզ։

Դեսպան—Ո՛չ, հարցս այդ չէ, Ձեր մեջ քաղաքական կուսակցութիւններ կան, անոնք ալ ձեզ հե՞տ են։

Պատասխան—Այո՛, արդեն այդ կուսակցութիւնները, դաշնակցական թե հնչակյան, կեդրոնական վարչութեան մեջ իրենց ներկայացուցիչները ունին։

Դեսպան—Շատ համոզված չեմ ասոր և կցավիմ, որ դաշնակցական կուսակցութեան ընթացքը ազգին համար վնասակար եղած է. ազգին ուժը իր ամբողջական միութեանը մեջ է։

Դեսպանը ավելցուց, թե անմիջապես իր կառավարութեան պիտի հաղորդե հայ ազգին հայտնած այս բաղձանքները, թե իր կառավարութիւնը հայոց հետ միշտ համակրութեամբ վարված է, թեև ժամանակ մը չափով մը կասկած գոյացավ հայոց մասին, և դաշնակցութիւնն ալ կառավարութեանս հակառակ ընթացքի մեջ գտնվեցավ, բայց հայ ազգը վստահ կրնա լինել, թե մեր համակրութիւնը միշտ կշարունակվի։ Դուք գիտեք, թե կառավարութիւնս Սան Ստեֆանոյի դաշնագրին[5] մեջ ի՛նչ տեղ տված է իրեն, և եթե Բեռլինի դաշնագրին մեջ դանցաւորութիւններ եղան, հանցանքն իրը չէր։

Պատվիրակներու կողմե դեսպանին ուշադրութիւն հանձնվեցավ իսլամ դաղթականներու (Ռումելիեն փախստական) օսմանյան կառավարութեան կողմե Հայաստան ղրկվելու հրեշտակի պարագան։

Դեսպանը պատասխանեց, որ որոշ բան մը գիտե՞ն իսլամ դաղթականներու Հայաստան ներկայիս ղրկվելու մասին։

Պատասխանվեցավ թե ոչ, բայց չուզվիր որ կատարված իրողութեան մը առջև գտնվինք հառաջիկայիս։

Դեսպանը խոստացավ այս մասին մասնավոր ուշադրութիւն ընծայել, և երկյուղներու իրականացման սկսման պարագային անմիջապես տեղեկութիւն տալ իրեն։

Դեսպանը գովեստը ըրավ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, հարցնելով որ նորին Սրբութիւնը Թրքահայոց մեջ ի՞նչ աստիճանի համակրութիւն և հեղինակութիւն կվայելե։

Պատասխանվեցավ որ Նորին Ս. Օծութիւն Սրբազան Հայրապետը բոլոր հայոց հոգևոր բարձրագույն Պետը լինելով և անկե ընտրվելով, շատ հարգված է մանավանդ Թրքահայ իր ժողովուրդեն։

Դեսպանը դարձյալ խոստացավ որ իր կառավարութեան կարևորը պիտի գրե և երբ պատեհ ժամանակը գա, մեր հարցին նախաձեռնութիւնը պիտի ստանձնե, և մասնավոր հոգ պիտի տանի, որ հայ ժողովուրդը վրեժխնդրութեան կրկին զոհ չերթա։

Դեսպանը այս առթիվ հայտնելով որ ինք կհետևի հայ մամուլի տեղվույս հրատարակութեանց, գնահատութիւնն հայտնած է այս միջոցին Պոլսահայ մամուլին չափավոր ընթացքին։

Թ.141բ.—Տեսակցություն մը գերմանական դեսպան պր. Դը Վանգենհայմի հետ

21 նոյեմբեր 1912։

Կատարելով հանձնարարութիւնը, զոր Ձեր բարձր սրբազնութիւնը ըրավ ինձի, երեկ պատիվ ունեցա խոսելու անձնական այցելութեանս միջոցին նորին վսեմութեան Պարոն Դը Վանգենհայմի, դեսպան Գերմանիո, մարդասիրական պարտավորութեան մասին, զոր Ձեր բարձր սրբազնութիւնը և հայ ազգը կսպասե գերմանական կառավարութենեն։

Իբր իմ անձնական գաղափար, ըսի, թե համոզված ըլլալով հանդերձ կառավարութեան կողմե հայ ազգին հանդեպ մասնավորապես աննպաստ դիտավորութեանց բացակայութեանը 1894—1897 դեպքերու միջոցին, գերմանական շահերու պահանջմանցը անգորույն հետևանքը եղած է այն ատեն գերման դիվանագիտութեան համիդական կառավարութեան հանդեպ չափազանց համակիր դիրք մը բռնելը, որ մեծապես խոցեց հայ ժողովուրդին սիրտը։ Ծանրացա մասնավորապես այն ժամանակե ի վեր կացութեան կրած փոփոխութեանը վրա։ Այժմ գերման ազգը ահագին շահեր ունի Կիլիկիո մեջ, որ անոնց բեղմնավորումին համար իրեն անհրաժեշտ են ժողովուրդին հոժար տրամադրութիւնը և ժրաջան աշխատութիւնը։ Արդ, այդ միջավայրին մեջ հանրային տրամադրության ար-

[4] Լիազորություն։

[5] Խոսքը 1878 թվականի փետրվարին Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածի մասին է։

տահայտությանը ամենեն կարող և բանիմաց աշխատության ամենեն հարմար տարրը հայ ժողովուրդն է, որու գոյությունը պաշտպանելը այսօր կնշանակէ վաղվան դերմանական շահերը պաշտպանել։

Այս բացատրութենեն ետք, դեսպանին հաղորդեցի Ձեր բարձր սրբազնության օրհնյալ բարևները և ըսի, թե ապահովության վրդովումը սպառնացող վտանգին առջև, զոր արդեն ուշադրության առած են պետությունները, հայոց պատրիարքը մասնավորապես կխնդրե, որ երկրին իրական շահերուն և իր հոտին պաշտպանությանը կրկին և համեմատաչափ տեսակետեն, որ պետք եղած դիվանագիտական ազդեցությունը գործածվի ու իրական հսկողությունը կատարվի, որպեսզի Կիլիկյան այնքան եղեռնական արկածներով տառապած միջավայրը ղերծ մնա նոր դրժբախտություններե։

Ավելցուցի նաև, թե այս հոգածությունը նշանակիչ արտահայտություն մը պիտի ըլլա դերման ազգին և կառավարության տրամադրությանցը նոր երևույթին՝ դեպի հայ ժողովուրդը։

Նորին վսեմությունը պատասխանեց, թե ինչ որ ըլլա օսմանյան ժողովուրդին վրա օտար մարտանավերու ներկայությունը միջազգային օրինական տեսակետով արդարացնող դիվանագիտական բանաձևը, դեսպանատունները չեն մտադրած օտար հպատակաց պաշտպանության վրա կեդրոնացնել միայն իրենց հոգածու ջանքերը։ Նպատակը ընդհանուր ապահովությունը ամրացնելն է։

Պարոն Դը Վանգենհայմը ըսավ նաև, թե Կիլիկյան ծովափին վրա գտնվող գերման մարտանավերու հրամանատարներուն ուղղելիք հրահանգին մեջ պիտի ճշտե գերման շահերու պաշտպանությունը հպատակներու կենաց և ինչիցը ապահովությանը մեջ չմասնավորելու, այլ միջավայրին սրտադրիչ ուժերուն ալ գոյությունը անվթար կացուցանելու պետքը։

Ապահովության խանգարումը ահագին կորուստ մրն է ինքնին գերման շահերուն համար։ Պիտի հանձնարարե հետևապես, որ հրամանատարները երկրին ընդհանուր ապահովությունն ալ նկատի առնեն և կարելի եղած օժանդակության մեջ գտնվին ի պահանջել հարկին։

Իմ խնդրանքս վրա, դեսպանը խոստացավ նաև հրահանգ տալ Ադանայի հյուպատոսին, որ ավելի սերտ հարաբերություններ մշակե հայոց առաջնորդին հետ, որպեսզի կարենա անկե տեղեկանալ երկրին իրական կացության։

Թ. 6բ.— Մասնավոր տեսակցություն անգլիական դեսպան սըր Ջերըլդ Լոուտերի հանուն ամենապատիվ սրբական պատրիարք հոր և ապգային կեդրոնական վարչության

(Անգլիական դեսպանատան մեջ)

Բշ. 24 դեկտեմբեր 1912 (Անգլերեն լեզվով)։

Պատվիրակ — Նորին սրբազնություն հայոց պատրիարքը պաշտոն տված է Ձեր վսեմության ներկայանալ, իր ողջույններն հաղորդել Ձեզ, ինչպես նաև իր երախտագիտությունը այն համակրության համար, զոր ցույց տված եք հանդեպ իր տառապյալ հոտին, խնդրել միանգամայն, որ իր ժողովուրդը Ձեր մասնավոր ուշադրության առարկան հաճիք ընել ներկա ժամանակին մեջ և Ձեր բանկագին ազդեցությունը գործածել ի նպաստ անոնց։

Դեսպան—Շնորհակալ եմ, ի՞նչ կուզեն հայերը։

Պատվիրակ—Գիտեք արդեն, թե ի՞նչ էր հայոց վիճակը հին ռեժիմի միջոցին։ Հայերը նոր ռեժիմին փարեցան անկեղծությամբ և ամենայն հավատարմությամբ, և անոր հաջողության համար աշխատեցան, բայց հարկ չէ Ձեզ բացատրել, թե ո՞րքան դառն հուսախաբություն մը ունեցան։

Դեսպան—Թևև փափուկ խնդիր մրն է մեզ համար, բայց ես նախարարներուն քանիցս խոսած եմ։

Պատվիրակ—Անդադար տեղեկություններ կհասնին Պատրիարքարան ոճիրներու մասին, որ դեռ կգործվին հայաբնակ գավառներու մեջ անպատիժ։

Դեսպան—Ո՞ւր, զոր օրինակ։

Պատվիրակ—Վան, Մուշ, Ադանա և այլն, ինչպես կտեսնեք այն ցուցակին մեջ, որ Ձեր ուշադրության հանձնված է արդեն։

Դեսպան—Միայն մեկ տեղե մը գանգատ հասած է մեզ, տեսնեմ այդ անունը կրնա՞մ գտնել այս ցուցակին մեջ, տեսնեմ ինձ ո՞րքան ծանոթ անուններ կան հոս (այդ տեղին անունը չի հիշեր, բայց կկարծե Սղերդ ըլլալու է)։ Մեր մարդիկը ոչ թե ներկա վիճակեն է որ կգանգատին այնքան, որքան ապագային համար վախ կհայտնեն։

Պատվիրակ—Քուրդերը հիմա ալ, ինչպես միշտ, իրենք իրենց իրավունք կուտան ամեն տեսակ չարիք հասցնելու անպաշտպան հայերուն...։

Դեսպան—Քուրդերը՝ հեզ մարդիկ, գիս կվստահեցնեն, որ քուրդերու զորաց գունդը, որ հոս կգտնվի, ամենեն հնազանդ և ամենեն հլու զորքերն են։

Պատվիրակ—Պետք է հիշենք, որ հայերը անզեն են և քուրդերը զինյալ և կառավարության պաշտպանությունը կվայելեն։

Դեսպան—Անշուշտ հայերը զինվորական ծառայութենե խուսափելու համար փախեր են և իրենց կիները ու զավակները անպաշտպան թողեր են։

Պատվիրակ—Հայերը իրենց զինվորական ծառայությունը քաջաբար կատարեցին, ինչպես հեղինակավոր անձինք հայտարարեցին։ Բայց մեր ողբացած ամենեն մեծ աղետներեն մեկը կմատնանշեք, երբ արտագաղթին կակնարկեք։ Իրենց հայրենիքին մեջ կյանքի պայմանները այնքան անտանելի դարձած են, որ թշվառ հայերը տարիներե ի վեր ստիպված են գունդագունդ գաղթել։

Դեսպան—Հայերը ընդհանրապես բարեկեցիկ չե՞ն միթե։

Պատվիրակ—Ինչպե՞ս կրնակալեիք, որ բարեկեցիկ ըլլան անոնք, որ չարաչար կաշխատին և պատեհություն չունին իրենց աշխատության պտուղը վայելելու, երբ կկողոպտեն զիրենք, կկեղեքեն իրենց ստացվածքները, կայրեն և այլն։

Դեսպան—Նախարարները իրենց այնքան ստիպողական զբաղումներուն մեջ, հայրենակ գավառները չեն մոռնար, և բարենորոգմանց ծրագիրներ կպատրաստեն։

Պատվիրակ—Ճիշտ այդ կետի մասին ալ մտադիր էի խոսիլ արդեն։ Այդ ծրագիրները որքան ալ խոստումնալից ըլլան, անցելույն երկարատև փորձառությունը սորվեցուցած է մեզ, թե երբե՛ք կարելի չէ անոնց գործադրության մասին վստահություն ունենալ։

Դեսպան—Բայց այդ ծրագիրը երեսփոխանական ժողովին կողմե վավերացվելով երկրին օրենքը կդառնա, և ժամանակին դահլիճը, ո՛ր կարգի անձերե ալ բաղկանա, ստիպված կըլլա գործադրել զանոնք։

Պատվիրակ—Պատշաճ օրենքներ կրնան հաստատվիլ, բայց օրենքներու գործադրության մասին վստահությունն է, որ բոլորովին կպակսի դժբախտաբար։

Դեսպան—Ի՞նչ կպահանջեն ուրեմն հայերը։

Պատվիրակ—Հայերը միշտ պնդած են, որ իրենց բոլոր պահանջն է՝ կյանքի, ինչքի և պատվի ապահովություն։

Դեսպան—Այսինքն կուզեն ունենալ Ասիո մեջ այն իրավունքներն, որ անգլիացիք կվայելեն իրենց երկրին մեջ։

Պատվիրակ—Կուզեն ունենալ մարդուն բնական և տարրական իրավունքները և հուսանք, որ հետզհետե կարենան վայելել նաև անգլիացիի մը իր երկրին մեջ վայելած բարիքները։ Բայց իրենց տարրական իրավունքները վայելելու համար, ոչ թե բարեկարգական ծրագիրներ պետք են, այլ այդ ծրագիրներուն գործադրության համար եվրոպական իրական ու արդյունավոր երաշխավորություն, առանց որու հայոց վիճակը կրնա ավելի վատթարանալ քան բարելավվիլ։

Դեսպան—Դժբախտաբար անգլիական մարտանավերն չեն կրնար Վան ու Մուշ այցելել։ Ի՞նչ եղանակով կուզեն այդ երաշխավորությունը, ի՞նչ է իրենց ծրագիրը։

Պատվիրակ—Հայերը կրնան իրենց ծրագիրը և իրենց փափագները ունենալ և ի հարկին հայտնել զայն, բայց եվրոպական պետական անձանց բարի կամեցողութենեն կակնկալեն արդյունավոր երաշխավորության ապահովությունը։

Պրոֆեսոր Մ. (անգլիացի և Անգլիայեն ևկած և ապա կրկին մեկնած), որ ներկա էր այս խոսակցության, ըսավ.

Պրոֆ. Մ. անգլիացի—Թե՛ Եվրոպա այս անգամ ալ զլանա հայերուն իր ազդեցիկ պաշտպանությունը, հայերը թերևս ստիպվին Ռուսիո դիմել։

Դեսպան—Սատանային ձեռքեն խորունկ ծովուն մեջ նետվիլ ըսել է։

Պրոֆ. Մ.—Թերևս լավագույն է ծովուն խորության մեջ նետվիլ և խեղդվիլ, քան սատանային ձեռաց մեջ շարունակաբար տանջվիլ։

Պատվիրակ—Սրբազան պատրիարքը իր կացության բերմամբ իսկ չէր կրնար հայտնապես եվրոպական պաշտպանությունը հայցել, իր ժողովրդյան մասին, բայց Ամենայն Հայոց Հայրապետը, որ Ռուսիա կրնակի, ինք ստանձնած է հայոց մասին եվրոպական պաշտպանություն խնդրելու գործը։ Նորին Ս. Օծության համայն Հայ Եկեղեցվո Պետն է և իրավունք ունի, ինչպես և հեղինակություն, հանուն ամբողջ հայության խոսելու, և կներկայացնե ոչ միայն Ռուսիո և արտասահմանի, այլև Թուրքիո հայոց իղձերն ու խընդիրները։

Սրբազան պատրիարքը կըսե, թե հայերը իրենց տառապանաց մեջ մասնավոր վստահությամբ մը ու ակնկալությամբ իրենց աչքերն կդարձնեն դեպի բրիտանական մեծ աղգը, որուն երախտագետ ըլլալու պատճառներ ունին և թախանձագին կխնդրե, որ իր պետական անձերը պաշտպանեն հայոց դատը ներկա պարագայից մեջ և կխնդրե Ձեզմե, որ իր այս զգացումները ու խնդիրները հաճիք հաղորդել Ձեր կառավարության։

Ինչպես մեր վարչության առենապետը Ազգային ընդհանուր ժողովին մեջ հայտարարեց, հայոց դատը պաշտպանելը օսման-

յան կառավարության ճշմարիտ շահերն պաշտպանել է արդեն։

Դեսպանը կխոստանա սրբազան պատրիարք հոր փափագին համաձայն իր կառավարության զեկուցանել առ այս կարևորը։

Թ. 9բ.—Մասնավոր տեսակցություն ռուս դեսպանատան առաջին թարգման պր. Մանդելշտամի[6] հետ

(Ռուս Դեսպանատան մեջ)

Ուրբաթ, 28 դեկտեմբեր 1912 (Ֆրանսերեն)։

Թարգման—Ձեր ներքին գործոց նախարարին գրած թաքրիրին[7] ի՞նչ պատասխան ստացաք։

Պատվիրակ—Նախարարը մեզ պատասխանեց այս անգամ ոչ ուղղակի կերպով, այլ արդարության գործոց նախարարին միջոցավ։ Իր պատասխանին մեջ երկարորեն մեջ կբերե համառոտությունը մեր թաքրիրին, լռությամբ անցնելով սակայն վերջին մասը, որ ամենակարևորն էր և որով կըսեինք մենք, թե Պատրիարքարանը կանգիտանա մանավանդ այն կարևոր հարցը, թե կառավարությունը բարենորոգմանց ծրագիրը կատարելապես իրականացնելու համար, վստահության արժանի ի՞նչ միջոց և երաշխիք կխորհի։ Նախարարը, ինչպես ըսի, այս վերջին հապավմամբ, թաքրիրը համառոտելե վերջ, կըսե, թե կառավարությունը Հայոց Պատրիարքարանի քվեին դիմած չէ և չի դիմեր, զի այդ քվեի իրավունքը օսմանյան խորհրդարանին կպատկանի։

Թարգման—Ուրեմն պարզապես բառերու վրա կխաղան և լուրջ բան մը չկա՞։

Պատվիրակ—Այս կողմեն լուրջ բան մը չկա, բայց մենք կսպասենք, թե ի՞նչ պիտի ըսեք մեզ, քանի որ խոստացած էիք ի մուտո տեղեկություն տալ ռուսական կառավարության ընթացքի մասին, հայկական հարցի նկատմամբ։

Թարգման— Տակավին պիտի սպասեք քիչ մ՚ալ, համբերութենեն չեք վնասեր, ընդհակառակը։ Գիտեք, որ հիմա շարունակվող բանակցությունները խաղաղության հաստատման մասին երբ վերջ գտնեն, և պատերազմի արհավիրքը կորսվի, այն ատեն ահա ռուսական կառավարությունը հայկական հարցը ինքը մեջտեղ պիտի դնե, Անգլիո և Ֆրանսայի հետ, որոնք արդեն, կրնանք Ձեզ ըսել, թե Ձեր դատին նպաստավոր են։

Եթե հիմա դեսպաններուն գումարումին ենթարկվի հայկական խնդիրը, անհաջողութենե մը կվախցվի, քանզի, ինչպես գիտեք, նույակ դինակցությունը[8] Թուրքիո հանդեպ աժան բարեկամություն ծախել կուզե և կրնա հայկական հարցին աննպաստ ընթացքի մը հետևիլ, ըսելով, թե պետք է թողուլ, որ Թուրքիա հարկ եղածն ընե։ Ռուսիա հավանաբար հայկական հարցով պիտի զբաղի Անգլիո և Ֆրանսայի հետ, առանց մյուս պետությունները գործի խառնելու։ Արդեն այս ընթացքը իր նախընթացը ունի, ըանզի 1895-ի մայիսյան ծրագիրը Ռուսիո, Անգլիո և Ֆրանսայի նույակ պետությանց կողմե եղած դիմումներուն վրա ընդունված էր։

Բայց, ըսենք կաղաչեմ, Դուք Եվրոպա պատգամավոր ղրկա՞ծ եք և լրագիրները գրեցին, որ Օրմանյան սրբազանն ևս պիտի ղրկեք եղեր դիմումներ կատարելու նպատակով, ստո՞ւգ է...։

Պատվիրակ—Մենք Ձեզ դիմած էինք և Դուք ըսած էիք, որ սպասենք Ձեր տալիք տեղեկությանց, հետևաբար միշտ սպասողական վիճակի մեջ ենք, և Ձեր պատասխանին կըսպասենք, որ կարենանք մեր կողմե ըլլալիք դիմումներուն ուղղությունը որոշել։

Սակայն, ինչպես գիտեք, Եգիպտոս, Փարիզ և այլուր հայ գաղթականություններ կան, և անոնք իրենց կողմե տեղական կառավարությանց կամ մեծ պետությանց կարտահայտեն իրենց բաղձանքները, Թուրքիո հայոց վիճակի բարելավման համար։ Օրմանյան սրբազանին գալով, իբր պատգամավոր Եվրոպա երթալու մասին, անհիմն էր և հերքվեցավ։

Թարգման—Փարիզ դիմում եղած ըլլալը լսվեցավ, արդյունքը ի՞նչ է, կհաճի՞ք ըսել։

Պատվիրակ—Որքան որ հասկցած ենք, պարոն Փուանկարեին[9] պարզած են Թուրքիո հայոց անտանելի կացությունը։ Պարոն Փուանկարեն համակրալից ընդունելություն ըրած և ըսած է, թե երբ կարգը գա, Ֆրանսա պիտի օգնե հայոց դատին հաջող ելք մը տալու համար։

Թարգման—Ձեր ծրագիրը ի՞նչ է, և Ձեր փափագները ի՞նչ բանե կբաղկանան։

Պատվիրակ—Մեր ծրագիրը որոշ գիծեր ստացած չէ տակավին, պատճառն ալ այն է, որ կսպասենք Ձեր կողմեն մեզ ըլլալիք որոշ դեկուցումին։ Որովհետև չենք ուզեր մտնել այնպիսի ճամբու մեջ, որ հակառակ ըլլար մեր դատին համար Ռուսիո կողմե կատարվելիք պաշտոնական ձեռնարկներուն։ Ահա

---

[6] Mandelstam.

[7] Հուշագիր։

[8] Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը։

[9] Ռեյմոնդ Փուանկարե՝ վարչապետ և արտաքին գործերի մինիստր 1912 թվի հունվար ամսից, ապա նախագահ Ֆրանսիայի 1914 թվի հունվարին։

այս պատճառով է, որ անձկութեամբ կսպասենք Ձեր լուրերուն։ Բայց մեր բաղձանքը այժմեն կրնամ իր գլխավոր գծերուն մէջ հիշել, թէ մեր բաղձանքն է հայաբնակ նահանգներու ընդհանուր կառավարչութիւնը հանձնված տեսնել եվրոպական ձեռնհաս բարձր անձնավորութեան մը։ Ասիկա եվրոպական կոնտրոլն է, առանց որու մենք չենք հուսար որևիցե բարելավութիւն հայոց ներկա տխուր վիճակին։ Եվրոպացի ընդհանուր կառավարիչը պիտի ընտրվի մեծ պետութեանց կողմեն և հաստատվի սուլթանի իրադեով[10]։ Այս ալ կավելցնեմ, թէ ինչպես որ կանխավ ալ ըսած էի, եվրոպական պետութեանց խառն կոնտրոլը իր դժվարութեանց պատճառով (Ռումելի), գործնական չըլլալով այդ կոնտրոլը, կփափագինք, որ հանձնվի ռուս պետութեան, որ իր դիրքին և դրացնութեան շնորհիվ լավագույն կերպով պիտի կրնա հաջողցնել իր ստանձնելիք մանդատն։

Թարգման—Դուք չպիտի՞ ուզեիք, որ ընդհանուր կառավարիչը Թուրք մը լիներ և եվրոպացի թարգման մը ունենար։

Պատվիրակ—Ո՛չ դժբախտաբար, Թուրք կառավարութիւնը և Թուրք կառավարիչները երկիրը բարեկարգելու անկարող ըլլալնին հաստատած են դարերե ի վեր, և մեր վիճակը նոր հուսախաբութիւններ կրելու չի կրնար հանդուրժել։

Թարգման—Բայց եվրոպական միջազգային կոնտրոլին դեմ ի՞նչ կրնաք ըսել։

Պատվիրակ—Բերլինի 61-րդ հոդվածով պետութիւնները հայաբնակ նահանգներու մէջ ըլլալիք բարենորոգմանց հսկելու հոգը ստանձնած էին, բայց բան մը չըրին, և այս թվականեն ի վեր հայը ահռելի կերպով տուժեց։ Հետո մենք տեսանք մոտիկ անցյալին մէջ մեծ վեց պետութեանց կոնտրոլը Մակեդոնիո մէջ, որ դարձյալ գրեթե ապարդյուն մնաց, պետութեանց ոմանց շահերը և նպատակները իրար հակասելուն և իրենց զանազան ուղղութիւններու հետևելնուն պատճառով։ Հետևաբար, հայաբնակ նահանգներու համար եվրոպական կոնտրոլը անհրաժեշտ է, և իր հաջողութեան բախտը ապահոված պիտի լինի, եթե այդ հանձնվի Ռուսիո։

Թարգման— Իրավունք ունիք, Մակեդոնիո մասին խոսածնիդ շատ իրավացի է, հաճեցեք ըսել, թէ Ձեր ազգային մարմինները միշտ սերտիվ միացա՞ծ են Ձեր ազգային հարցին շուրջ և թէ ժողովին (ակնարկ կեդրոնական վարչութեան) մեծամասնութիւնը ծայրահե՞ղ, թէ պահպանողական տարրերն կբաղկանա։ Մենք գոհունակութեամբ տեսանք, որ դաշնակցութիւնը հայտարարեր է, որ այս պատմական վայրկյանին մէջ ազգին մեծամասնութեան հետ են, զի Ձեր ուժը Ձեր միութեան մէջ կկայանա։

Պատվիրակ—Հայ դատին նկատմամբ մեր հայտնած բաղձանքներուն շուրջ, ազգային բոլոր մարմիններն ու կուսակցութիւնները համակամ են, Վարչութիւն և Ազգային ընդհանուր ժողով իրենց մեծամասնութեամբ չափավոր տարրերե կբաղկանան, բայց այս խնդիրներու շուրջ մեծամասնութիւն և փոքրամասնութիւն գոյութիւն չունի։

Թարգման—Ի՞նչ կըսեք Վանա ոճրին մասին, լրագիրները կգրեն, թէ դաշնակցութեան գործն է։

Պատվիրակ—Պաշտոնապես բան մը չենք գիտեր, տեղեկութիւն ուզած ենք, տեսնենք ի՞նչ պատասխան կուգա։ Չենք կարծեր, որ դաշնակցութեան գործն ըլլա, քանզի Սահմանադրութենեն վերջ կուսակցութիւնները հայտարարեցին, թէ տեռոր այլևս չպիտի ի գործ դնեն։ Գափամաճյան դաշնակցականներու համակիր եղած չէ, բայց ասիկա պատճառ չէ, որ ոճիրը դաշնակցականներու վրա գրենք։

Թարգման—Շատ ցավալի պիտի ըլլար, եթե այս ոճիրը դաշնակցականներու կողմե եղած ըլլար։ Դաշնակցութիւնը Ռուսիո մէջ կառավարութեան կողմե հալածվեցավ իր տեռորներուն պատճառով և մանավանդ այն ուղղութեամբ, որուն հետևեցավ՝ միանալով ծայրահեղ և հեղափոխական տարրերուն և իր ծրագրին մեջ դրավ Կովկասը ուրույն հանրապետության վերածելու սկզբունքը։ Դուք տեսաք, թէ այս ամենքին հետ մեկտեղ, ռուս կառավարութիւնը ո՛րքան արդարութեամբ վարեց դաշնակցականներու դատերը, և մեղմ վճիռներ արձակելով ու քիչերը միայն պատժելով։ Ռուս կառավարութիւնը իր պաշտոնին վրա կպահե Կովկասի փոխարքա կոմս Վարոնցով Դաշկով իշխանը[11], որ խիստ համակիր է հայերուն և կգովե հաւերը, և որուն դեմ նույնիսկ բողոքներ կան, թէ ծայրահեղ է իր հայասիրութեանը մէջ։

Պատվիրակ—Այո, իշխանին շատ գովեստներ լսած ենք և Կովկասի հայերը կխոստովանին, թէ ներկա փոխարքան հեռի եղած է իր նախորդին հայահալած քաղաքականութենեն։ Նմանապես Կովկաս եղած ժամանակս, գոհութեամբ լսեցի, որ դաշնակցութեան դատին մէջ, պարապ տեղը անբաս-

[10] Հրովարտակ։

[11] Կովկասի փոխարքան 1905—1915 թ. թ.։

ատանված հայեր, վերջապես անպարտ արձակված ըլլալուն ուրախությունը ունեցեր են։

Թարգման— Ոչ միայն այդքան, այլև պետությունը պատժեց հարցաքննիչ դատավորը (Ժրժեն), որ դաշնակցականներու դատին մեջ նենգություններ ի գործ դրած էր հայոց հակառակ։

Պատվիրակ— Երբ հայերը եվրոպական կոնտրոլ կուզեն ու այդ կոնտրոլին ալ Ռուսիո հանձնվիլը կփափագին, պատճառներեն մեկը և կարևորը այն է, որ կրազձան վերջապես դիրենք ալ վայելել արդարության բարիքը, որ այս երկրին մեջ գոյություն ունեցած չէ ցարդ։

Թարգման— Կփափագիմ, որ հաճախ տեսակցինք, միշտ առիթ ունենալով խոսակցիլ այս նյութին վրա, և կխնդրեմ, որ հաջորդ ժամադրությունը լինի հառաջիկա չորեքշաբթի (2 հունվար)։

Թ. 18ա.— Տեսակցություն ֆրանսական դեսպանատան առաջին թարգման պր. Բոպի[12] հետ

Ուրբաթ, 28 դեկտեմբեր 1912։

Թարգմանը կհայտնե ներկայացուցիչին, թե՝

«Հրահանգ ենք ստացեր հայկական խընդիրը ձեռք առնելու Ռուսիո և Անգլիո հետ։

Խորհուրդ կուտամ Ձեզ բոլոր դեսպաններուն հետ բարվոք հարաբերություն պահել և անոնց աջակցությունը խնդրել։

Աշխատիլ որ Անգլիո և Ռուսիո մեջ դարձյալ թյուրիմացություն չպատահի Ձեր հարցի շուրջ»։

Եվ երբ ցույց տրված է մեր ծրագրի հիմնական կետերը, պատասխանած է.

«Եթե իսկ միայն եվրոպացի ընդհանուր կառավարիչը ընտրվի պետություններեն և այդ հոդվածը ընդունվի, արդեն ինքնին եվրոպական երաշխավորություն ըսել է»։

Ուզած է գիտնալ, թե ծրագրին մեջ գործադրության հսկելու հոգը մեկ պետության հանձնվի ըսելով, որո՞ւ կակնարկվի, Ռուսիո՞, հարցուցած է, և պատասխանը դրական եղած է։

Փարիզ, օսմանյան դեսպանին եղած դիմումը Պողոս փաշայի կողմե ի՞նչ նպատակով եղած է, իբր պարզ քաղաքավարական այցելությո՞ւն մը, թե ճնշո՞ւմի տակ եղած է։ Պատասխանված է, թե պարզ քաղաքավարական այցելութենե մը ավելի արժեք չունի։

[12] Auguste Boppe.

Թ. 14ա.— Տեսակցություն անգլիական դեսպանատան առաջին թարգման պր. Ֆից Մորիսի հետ

(Անգլիական դեսպանատան մեջ)

20 հունվար 1913։

Պարոն Ֆից Մորիս խոսելով ծանոթ և վրաստահելի անձի մը հետ, հայտարարած է ի միջի այլոց, թե պետք է գիտնան հայերը, որ՝

Ա. Որքան ալ Ֆրանսա և Անգլիա ցարդ միշտ հակառակած են—1878-են ի վեր մանավանդ—Ռուսիո պետության հայոց և Թըրքահայաստանի նկատմամբ ունեցած ծրագիրներուն և ձգտումներուն, սակայն այժմ պարագաները փոխված լինելով, իրենք մեկ կողմ թողած են իրենց երբեմնի հակառուս քաղաքականությունը և ընդհակառակը իրենք ուժ պիտի տան Ռուսիո, այժմու Թըրքահայաստանի մասին բռնելիք քաղաքականության։

Բ. Հայկական հարցը առ այժմ եվրոպական դիվանագիտական սեղանին չպիտի հանվի, ցորչափ տևեն Բալկանյան պատերազմով համաշխարհային խաղաղության սպառնացող վտանգները, և վերջապես չլուծվին Բալկանյան կնճիռները։ Բաց աստի, կսպասեն Եոյակ համաձայնության պետությունները Ավստրո-Հունգարիո տերության Բալկանյան կնճիռներու պատճառով ի գեն կոչած զորաց արձակման։

Գ. Արդ, այս հաշվով կենթադրվի, որ հայկական հարցը Եվրոպայի դիվանագիտական սեղան պիտի ելլե հառաջիկա հունիսին-հուլիսին. և կրնա հավաստել, որ հայկական հարցը իր վերջնական լուծումը պիտի ստանա այս 1913 տարվա ընթացքին։

Դ. Թրքահայերը պետք է համոզվին, թե իրենց փրկությունը ռուս պետության ձեռամբ կրնա ըլլալ միայն, հետևապես պետք է անոր օժանդակության և խորհուրդներուն դիմեն։ Մանավանդ, որ Թրքահայաստանի բարեկարգության հսկողությունը ռուս կառավարությունը պիտի ընե, և աս է, որ առ այդ հարմարություն ունի։

Ե. Թրքահայոց խորհուրդ կուտամ, որքան հնար է լուռ մնալ, երբեք չգժտիլ օսմանյան կառավարության հետ, անաղմուկ գործել, արտասահմանի հայ գաղութներուն թողլով հայկական հարցի հետապնդման գործը, անշուշտ ազդեցությամբ, հեղինակությամբ և միջնորդությամբ Ամենայն Հայոց Ընդհանրական Հայրապետին։

Թ. 19ա.— Տեսակցություն գերման դեսպանատան առաջին թարգման կոմս Քանիցի հետ սրբազան պատրիարքի տան մեջ

Երեքշաբթի, 26 հունվար 1913:

Պողոս փաշայի[13] Փարիզի Գերման դեսպանին տված մեկ գաղտնի տեղեկագրին և Բեռլինի հայասեր գերմաններեն կազմված կոմիդեին ջանքերուն շնորհիվ, գերման կառավարությունը հրահանգ ղրկած լինելով մայրաքաղաքիս գերման դեսպան պարոն Վանգենհայմի, անոր կողմե թարգման կոմս Քանից, հանուն դեսպանին, պաշտոնապես ներկայացավ մասնավորաբար տեղեկություններ ուզելով Կիլիկիո հայության մասին, և խնդրեց, որ հայոց Կիլիկիո վիճակացույցը պատրաստելով տանք գերմանական դեսպանատուն։ Իր բոլոր հարցերուն սրբազան պատրիարքը և ներկա եկեղեցականը գոհացուցիչ պատասխաններ տալով մեկնեցավ թարգմանը, խնդրելով որ Կիլիկիո ներկա իրադարձությանց մասին իրազեկ ընենք զիրենք։ Այս այցելության առթիվ հայտնի եղավ, որ Գերմանիա բացորոշապես հայտնել կուզե մեզ, թե Կիլիկիո մասին մեզ հետ պետք է բանակցիք, իբր մեր ազդեցության շրջանակին հատուկ գործ։

Թ. 15ա.— Պաշտոնական տեսակցություն ռուս դեսպանատան առաջին թարգման պր. Մանդըլշտամի հետ սրբազան պատրիարք հոր տան մեջ ի ներկայության սրբազան պատրիարքի և մեկ կրոնական ու մեկ աշխարհական վարչության անդամներուն

Դշ. 30 հունվար 1913:

Պաշտոնական հանձնում հայաբնակ վեցյակ նահանգներու բարեկարգության ծրագրին, ի ձեռն սրբազան պատրիարք հոր։

Պատրիարք *(Ֆրանսերեն)*— *Թեև ուշացուցինք մեր ժողովուրդի բարենորոգմանց պահանջներու ծրագրի հանձնումը, բայց պետք էր լուրջ կերպով քննել, կշռել ու ապա պատրաստել ծրագիր մը, որ համապատասխան լիներ իրապես մեր ցավերուն և մեր ժողովուրդի կրած տառապանքներուն։ Գիտեք արդեն, թե մենք անկախություն չէ որ կպահանջենք, այլ մեր պատվի, կյանքի և գույքի ապահովությունը։*

Ահավասիկ ծրագիրը, որ Ձեզ հանձնելով, կխնդրեի հաճեիք հանձնել վսեմաշուք դեսպանին, հանուն քրքահայ ժողովուրդի։ Պիտի տեսնեք, որ եղած առաջարկները շատ համեստ են և հիմնված լինելով երկրի ընդհանուր օրենքներու վրա, կպահեն նույնիսկ վարչական ձևը, հիմնվելով ապակեդրոնացման սիստեմի և ազգերու հավասարության սկզբունքի վրա։ Ձեզ կմնա գիտնալ, թե Բուրք կառավարության միջոցա՞վ գործադրել կուտաք, թե դուք կգործադրեք անձամբ։

Խնդրեմ հաճեցեք հաղորդել վսեմաշուք դեսպանին, որ այս ծրագիրին մեջ եղած պահանջները, իր էական և հիմնական կետերու մեջ, պահանջներն են բովանդակ հայ ազգի։ Այս ծրագիրը իր պատճառաբանությունները պիտի ունենա, որ մոտ օրեն նույնպես պիտի հանձնվի վսեմաշուք դեսպանին։

Վսեմաշուք դեսպանին կարծիքները ասոր նկատմամբ հարգանքով կակնկալենք, ինչպես նաև իր խորհուրդները ու թելադրությունները։

Մենք չպիտի հարցնենք Ձեզի, թե մեր հարցը ե՞րբ պիտի լուծեք, այլ կարծեմ արյան հեղեղներու մեջ իր կյանքը ապրող քրիստոնյա և քաղաքակրթության միշտ ձգտած հայ ժողովուրդը իրավունք պիտի ունենա ըսելու Ձեզի. «Կպահանջենք, որ վերջնապես ազատեք մեզի մեր տառապանքներեն»։

Հայ ժողովուրդը միշտ ձեզմե է, որ սպասած է իր փրկությունը։ Անցյալին մեջ արտաքին պայմանները միշտ արգելք եղան դժբախտաբար, կհուսամ, թե վերցած են այդ արգելքները. և այս անգամ վերջապես մեր ժողովուրդը ևս պիտի կրնա տանելի կյանքի մը արժանանալ, փրկվելով զինք հյուծող տառապանքներե։

Առաջին անգամ ըսի արդեն վսեմաշուք դեսպանին, և այս անգամ ալ կկրկնեմ, եթե բան մը չպիտի բնեք մեզ համար, խնայեցե՛ք մեզի, զի հետևանքները շատ աղետաբեր պիտի ըլլան արդեն դառերե ի վեր տանջվող հայ ժողովուրդին համար։

Կխնդրեմ, որ վսեմաշուք դեսպանը իմ ազերսներս հաճի ներկայացնել առ ուսս Վեհափառ Կայսեր Մեծին Ռուսիո։ (Գրավոր և ֆրանսերեն լեզվով ըսված)։

Թարգման— *Իրավունք տալով սրբազան պատրիարք հոր խոսածներուն, հույս հայտնեց, որ հայոց այս դուզնաքյա պահանջումներն կիրագործվին, և խոստացավ ծրագիրը ներկայացնել դեսպանին, և եթե դիտողություններ ունենա, իր կարգին հաղորդե սրբազան պատրիարքին։*

[13] Պողոս փաշա Նուպար, որդին եգիպտոսի նախկին վարչապետ Նուպար փաշայի։

Պատրիարք—Քիչ օրեն պիտի հանձնենք այս ծրագրի «Exposé des motifs»-ը[14], մի առ մի հիշված են ծրագրին յուրաքանչյուր հոդվածին բացատրությունները և պատճառաբանությունները։ Բայց ասոր, կուզենք գիտնալ, թե արդյոք օգտակար չէ՞, որ այդքաղաքիս մյուս մեծ տերությանց դեսպաններուն ևս մեկ-մեկ օրինակ սույն ծրագրեն տանք։

Թարգման—Առ այժմ որոշ կարծիք չեմ կրնար հայտնել, մինչև որ վսեմաշուք դեսպանին հետ այս մասին չխորհրդակցիմ։

Ներկայից մին—Մտույգ է, որ հայերը մեծ հույսը դրած են միմիայն Ռուսիո կայսրության վրա, բայց քանի որ պաշտոնապես կդիմեն եվրոպական մեծ պետությանց, արդյոք անհրաժեշտ չէ՞, որ մյուս պետություններուն ևս մեկ-մեկ օրինակ տրվի արեկարգության ծրագրեն։

Թարգման—Առ այժմ սպասել հարկ է։

Ապա հանձնվեցավ նաև պր. թարգմանին պայքնակ վեց նահանգներու ազգագրական ճակացույցը, ըստ կարգին բացատրություններ և լուսաբանություններ տալով վիճակացույցի աղբյուրներու մասին։ Թարգմանը շատ շահեկան գտնելով սույն վիճակացույցը, ինչ-ինչ մեկնություններ ուզեց, որոնց պատասխանվեցավ նույնպես գոհացուցիչ ձևով, և ապա մեկ ժամ և մեկ քառորդ ձևով հրաժեշտ առավ թարգմանը և մեկնեցավ։

Թ. 17բ.— Տեսակցություն ռուս դեսպանատան առաջին թարգման պր. Մանդելշտամի հետ ռուս դեսպանատան մեջ

Ուրբաթ, 7 փետրվար 1913։

Պատվիրակ—Կփափագինք գիտնալ, թե Մեր հանձնած բարեկարգության ծրագրի մասին վսեմաշուք դեսպանին և Ձեր կարծիքը ի՞նչ է և ունի՞ք դիտողություն։

Թարգման—Մինչև որ «Exposé des motifs»-ը չստանանք, չենք կրնար որոշ կարծիք հայտնել, որովհետև ծրագրին յուրաքանչյուր հոդվածը տեղի կուտա այլևայլ հարցումներու և անհրաժեշտ է հատուկ բացատրությանց, որոնց պատասխանները անշուշտ պիտի գտնվին ծրագրին պատճառաբանությանց մեջ։

Թարգմանը հանուն դեսպանին կարծիք հայտնեց, որ երբ ծրագրին «Exposé des motifs»-ն ևս պատրաստ լինի, կարելի է ի միասին հանձնել Անգլիո և Ֆրանսայի դեսպաններուն, և կրկին շեշտեց, որ փութացնենք ծրագրին պատճառաբանյալ տեղեկագիրը, առանց որու հնար չէ որոշ կարծիք ունենալ ծրագրի մասին։

Թ. 20ա.— Տեսակցություն ռուս դեսպան Դը Գիրսի հետ

12/25 ապրիլ 1913։

Դը Գիրս փափագ հայտնած ըլլալով տեսակցություն մը ունենալ Պատրիարքարանի և դաշնակցության ներկայացուցիչներու հետ միատեղ, ներկայացանք առավոտյան ժամը 9-ին երկ-երկու ներկայացուցիչներով։

Դեսպան—Ընդունեցի Ձեր ծրագիրը և ուշի-ուշով ուսումնասիրեցի զայն. այդ ծրագիրը, լայն գիծերով, պահանջները կներկայացնե. կըմբռնեմ, թե ինչո՛ւ մանրամասնություն մեջ մտած չեք և իրավունք ունիք։ Ձեր ծրագիրը, որ ընդհանուր առմամբ լավ պատրաստված է, իմ տեղեկագրովս պիտի ղրկեմ Պետերբուրգ՝ արտաքին գործոց նախարարության, որ զայն ուսումնասիրելե վերջ, կա՛մ իր հավանությունը պիտի հայտնե և կա՛մ իր դիտողությունները պիտի ընե։ Թուրքահայոց Պատրիարքարանը այն ատեն կա՛մ նույնությամբ և կամ, եթե յուրացնե ռուս կառավարության դիտողությունները և յուրացնե բարեփոխելով զայն՝ պիտի պատրաստե իր վերջնական ծրագիրը՝ թրքահայոց պահանջները արտահայտող՝ և ներկայացնի զայն եվրոպական պետությանց։ Թեպետև մինչև ռուս արտաքին գործոց նախարարությենեն պատասխան ստանալս պաշտոնապես չեմ կրնար կարծիք հայտնել Ձեր ծրագրին վրա, բայց թող ներվի ինձ ծրագրին երկու կետերուն վրա իմ անձնական—ոչ պաշտոնական—կարծիքս հայտնելու։

Առաջին և ամենաէական Ձեր պահանջը կգտնվի ծրագրին գլուխը։ Դուք կուզեք եվրոպացի բարձր կոմիսար[15] մը՝ անվանված եվրոպական պետություններե և վավերացված սուլթանի կողմե։ Այս ձևի պահանջում մը հակառակ է սուլթանին վեհապետական իրավանց և կենթադրե անջատական ձգտումներ, արդեն նախընթաց ալ չունի, հետևաբար շատ հավանական է, որ մերժվի թե՛ եվրոպական պետությանց և թե՛ սուլթանին կողմե։ Ըստ իս պետք է բարեփոխել և պահանջել բարձր կոմիսար մը՝ անվանված սուլթանին կողմե, համաձայնությամբ եվրոպական պետությանց։ Այս ձևը ընդունված է շատ մը նմանօրինակ պարագաներու մեջ։ Երբ եվրոպական պետությունները իրենց հավանություն

14 Պատճառաբանյալ տեղեկագիրը։

15 Haut commissaire

հայտնեն, անշուշտ անոնք պիտի հավանին այնպիսի մեկի մը, որ ծանոթ ըլլա իր վարչական կարողութեամբ և իր անկախ և ազդեցիկ հատկութիւններով, որով զերծ կմնա օսմանեան կառավարութեան ազդեցութենեն, կգործե ազատ և անկախ, այսպիսով գոհացում կստանա այդ հոդվածին տակ թաքնված Ձեր պահանջումին։ Ձեմ կրնար ապահովել Ձեզի, թե բարձր կոմիսարը անպատճառ եվրոպացի պիտի ըլլա, թեպետև հավանական է, որ այդ մասին աշխատվի, բայց երբ կոմիսարը օսմանցի ըլլա, անշուշտ քրիստոնյա պիտի ըլլա։

Երկրորդ կետն այն է, որ Դուք բարձր կոմիսարին իրավասութիւն կթողուք երկրին ընդհանուր օրենքները բացատրելու ձևին տակ, տեղական պետքերուն պատշաճ օրենքներու և կանոնագրերու հրատարակումը։ Նախ, առանց անջատողական ձգտումներու, երկրին ընդհանուր օրենքները կարելի չէ փոխել, և ի՛նչ հարկ, արդեն գիտենք, թե առանձնաշնորհյալ նահանգի մը մեջ երկրին ընդհանուր օրենքները իրենց ուժը մեծապես կկորսնցնեն, երկրորդ՝ բարձր կոմիսարը, որ գործադիր մարմինը կներկայացնե, չի կրնար բնավ օրենք և կանոնագիր պատրաստել. այդ իրավունքը տրված է միմիայն օրենսդիր ժողովո, որ այս պարագային մեջ՝ նահանգային ընդհանուր ժողովն է, այս վերջինն ալ, առ առավելն, կրնա պատրաստել տեղային պետքերուն պատշաճող վարչութեան կամ եվրոպական օրենքներ կամ կանոններ։

Դուք, Ձեր ծրագրին մեջ, կես առ կեսի դրութիւնը կառաջարկեք, մինչ ոչ մեկ գավառի մեջ հայերը մեծամասնութիւն կկազմեն։ Ըստ ձեր վիճակագրութեան, վեց նահանգաց մեջ առ առավելն 45% հայ և 45% իսլամ բնակչութիւն կա, իսկ մնացյալ 10% ուրիշ ազգեր են։

Պատվիրակութիւնը — Պատասխանեցինք, թե թվական տեսակետով դեսպանը իրավունք ունի, բայց պետք է նաև ի նկատի առնել ընկերային, տնտեսական և քաղաքակրթական որակը հայերու, որ անհամեմատ ավելի գերազանց է։ Մեր ընկերներեն մեկը ձեռնարկած է հայաբնակ վեց նահանգաց ընկերային, տնտեսական և կուլտուրական ուսումնասիրութեան մը, ուր պիտի տեսնվի, թե հայոց և իսլամաց մեջ ո՛րքան մեծ քաղաքակրթական տարբերութիւն կա։

Դեսպանը ըսավ, թե այդ շատ կարևոր աշխատութիւն մըն է և թե շատ կցանկար կցել իր տեղեկագիրներուն, և թե այդ աշխատութիւնը շատ զորավոր մեկ փաստ է հայ դատին պաշտպանութեան համար։

Մեր ընկերներեն մեկը պատասխանեց, որ այդ աշխատութեան ամբողջացումը ժամանակի կկարոտի, քանի որ դեռ միայն Սվազինն է պատրաստ։ Դեսպանը ըսավ, որ կարելի եղածին չափ արագ պիտի պատրաստել։ Ինքը կուզե շուտով ղրկել իր տեղեկագիրը և միայն Սվազինը առ այժմ կբավե, որովհետև իբր օրինակ կրնա ծառայել մյուս նահանգաց վերաբերյալ։ Խոստացանք մինչև չորեքշաբթի ներկայացնել Սվազի վիճակագրութիւնը և ուսումնասիրութիւնը, որպեսզի դեսպանը ղրկե Պետերբուրգ։

Դեսպանին բացատրվեցավ նաև, որ ամենեն շատ թափառիկ ցեղեր պարունակող վայրերը հայկական վեց նահանգներն են, թե անկե դուրս թափառիկներու փոքր մաս մը կա։

Դեսպանը տեղեկութիւններ ուզեց Նուպար փաշայի[16] գործունեութեան վրա։

Բացատրեցինք, որ Նուպար փաշան եվրոպական համբավ մը ունի, շնորհիվ իր հորը, թե ինքը լավ դիրք մը ունի հոն իր հարստութեան, կրթութեան և տաղանդին համար, կհարգվի քաղաքական բարձր դասին մեջ Լոնդոն թե այլուր և թե ան իր տաղանդը, սիրտը ու հոգին դրած է հայկական դատին մեջ։

Դեսպանը պատասխանեց, որ Նուպար փաշային գործունեութիւնը շատ օգտակար կրնա ըլլալ հայոց դատին, դիպլոմատիկ աշխարհին հետ կապ պահելով, պրոպագանդա ընելով, հարաբերութիւններ մշակելով և համակրանք ստեղծելով հայոց դատին համար։ «Պիտի գիտնաք, որ այսպիսի պարագաներու մեջ ժողովուրդի համակրանքը և հանրային կարծիքը մեծ դեր կխաղան»,— ավելցուց նա։

Յորհուրդ հարցուցինք, թե ի՞նչ պիտի ըլլան մեր հարաբերութիւնները մյուս դեսպանատանց հետ։

Դեսպանը պատասխանեց, թե «Պետք է լավ հարաբերութիւններ մշակել բոլոր դեսպանատանց հետ և մանավանդ առանց կեղծիքի խոսիլ, թե համակիր պետութեանց—Ֆրանսայի և Անգլիո—կրնանք բերանացի տեղեկութիւններ տալ ծրագրի մասին և, եթե պահանջվի, տալ նույնիսկ ծրագիրը նույնութեամբ։

Վերջապես խնդրեցինք հայտնել, թե ո՞րքան կարելի է հուսալ մեր դատի հաջողութեան։

Դեսպանը պատասխանեց, թե պաշտոնապես չպիտի կրնա այդ մասին բան մը ըսել և թե հարկ է, որ սպասե հրահանգներու, բայց անձնապես կրնա մեզի վստահացնել, թե ռուս կառավարութիւնը շատ համակիր է այս

[16] Պողոս փաշա Նուպար։

պահուս մեղի նկատմամբ և պիտի ջանա, որ ա'ալկանյան կնճիռը հարթվելէ անմիջապես ղ'ներջը հայկական հարցը դրվի դիվանագիտական սեղանին վրա և մեծ հույս կա, որ գոհացում պիտի տրվի հայոց պահանջներուն։ ա'այց, ավելցուց դեսպանը, «ինչպես գիտեք. աղաքականության մեջ բան մը կարելի չէ. ուշակել նախապես. քաղաքականության ձնջ ամեն բան կախում ունի օրն օրին առաջ նկած դեպքերեն և դիվանագիտության ձեափոխություններեն»։

Դաշնակցության ներկայացուցիչները, ուսեղվով, ըսին դեսպանին, թե կոնտրոլին գործադրության կարծյաց փոքրիկ տարբերություն մը կա Պատրիարքարանի և Փարիզի պատգամավորության մեջ։

Դեսպանը պատասխանեց, որ հայերը եվրոպական կոնտրոլ մըն է որ կպահանջեն և պետք է որ պահանջեն, սակայն կոնտրոլին ձևը եվրոպական պետությանց պետք է ձգել որոշելու։ Հետո, ավելցուց, թե ամեն անգամ որ իրեն պետք ունենանք, ինքը պատրաստ է միշտ սիրով ընդունելու զմեզ։

Շնորհակալություն հայտնեցինք և ըսելի վերջ, թե հայերը իրենց արդար դատը ուս կառավարության են հանձնած, հրաժեշտ առինք գոհ տպավորության տակ։

(Շարունակելի)

ՀԵՆՐԻ ՄՈՐԳԵՆԹԱՈՒ*

(Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի նախկին դեսպան)

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՍՈՍԿԱԼԻ ԵՂԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քիչ երկրներ են այնքան խոշտանգման ենթարկվել, որքան Հայաստանը։ Այն հարատև դաժանությունները, որոնց նա զոհ գնաց, եղել են այն աստիճան զարհուրելի, որ մեզանից շատերի համար, հենց Հայաստան անունը ստացել է նահատակ բառի համազոր նշանակություն։ Ներկա աղետալի իրադարձության պայմաններում նրա կրած տառապանքները գերազանցեցին աշխարհի պատմության մեջ արձանագրված բոլոր տեսակի արհավիրքները։ Արդի պատերազմում երկրագնդի տարբեր մասերում իրագործված ամենասոսկալի չարիքներից և ոչ մեկը չի կարող համեմատվել այն ահավոր ու ողբերգական եղեռնի հետ, որը բաժին ընկավ հայ ժողովրդին։ Սույն հոդվածով իմ նպատակն է ցույց տալ հայկական հարցը և համառոտ կերպով բացահայտել այն շարժառիթները, որոնք մղեցին թուրքական ներկա կառավարության՝ ոչնչացնելու այս խաղաղասեր, ճարտարագետ, անմեղ ու իմաստուն ազգը, ինչպես նաև ճանաչելի դարձնել այն եղանակը, որը որդեգրել էին թուրքական իշխանությունները, ազգեր բնաջնջելու իրենց անողոք գործում։

Թեև զրկված քաղաքական անկախությունից, հայերը սակայն երբեք չմերվեցին իրենց վրա իշխող թուրքերի հետ։ Նրանք համառորեն կապված մնացին իրենց ցեղային ավանդություններին, կրոնին, լեզվին ու գաղափարին։ Հայոց հին պատմությունը՝ սկսած մեր դարաշրջանից մինչև ասորեստանցիների, միդացիների, բաբելացիների ու պարթևների ժամանակները, նրանց համար հանդիսանում է տակավին ազգային հպարտության աղբյուր, իսկ իրենց կրոնը՝ քրիստոնեությունը, կա ու եղել է միշտ բարոյական ամենամեծ զորավիգը, որը պահել ու պահպանել է նրանց

---

* Ամերիկացի ականավոր իրավաբան Հենրի Մորգենթաուն, քաղաքական գործիչ ու դիվանագետ, 1913—1916 թվականներին հանդիսացել է Կոստանդնուպոլսում ԱՄՆ-ի դեսպան։ Առաջին աշխարհամարտի սկզբներին, զգալով Թուրքիայում ապրող հայ ժողովրդին սպառնացող վտանգը, նա մեծագույն աշխուժությամբ և ամեն կերպ աշխատել է կանխել երիտասարդ թուրքերի կառավարության նախօրոք որդեգրած ծրագրի իրականացումը հայ ժողովրդին ոչնչացնելու մասին։ Սակայն նրա հարատև ու համառ ջանքերը, ինչպես և բազմաթիվ այլ նշանավոր մարդկանց գործունեությունները այդ ուղղությամբ, մնում են անհետևանք ու հայ ժողովրդի արևմտյան հատվածը ենթարկվում է այդ անողոք ծրագրի իրագործման, տալով շուրջ 2 000 000 անմեղ զոհեր։

Որպես ականատես վկա 1915 թվականի ապրիլյան եղեռնին, Հ. Մորգենթաուն հետագայում իր գրած „Ambassador Morgenthau's story", 1918 „All in a lifetime", 1922, և մի շարք այլ աշխատություններում, բազմիցս անդրադարձել է հայկական սպանդին վերաբերող հարցերին, առարկայականորեն բացահայտելով այդ կոտորածների հիմնական դրդապատճառներն ու հետևանքները։

Հ. Մորգենթաուի աշխատություններէ մի մասը լույս է տեսել հայերեն լեզվով 1919 թվականին, ե. Արմենի և ապա Մ. Շամդանջյանի թարգմանությամբ։ Սույն հոդվածը առաջին անգամ հրատարակվել է ամերիկյան „The Red Cross" հասարակական հանդեսի 1918 թվականի համարում և այնուհետև Փարիզում ֆրանսերեն լեզվով, առանձին գրքույկով։ Մեր ընթերցողներին ներկայացնում ենք պատմական մեծ արժեք ներկայացնող այդ փաստաթղթի թարգմանությունը։— Թանթուրյան թարգմանչի։



ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՆԱԽԱԳԾԵՐԻՑ

(Հեղինակ՝ ճարտարապետ Հրաչդան Պալյան)

ուժեղացրել, դիմադրելու համար Կենտրոնական Ասիայից եկող բազմաթիվ հորդանեն. ներխուժումներին, որոնք բազմիցս ասատակել են հայկական երկիրը, դեպի Եվրոպա կատարած իրենց արշավանքների ընացքում։

1908 թվականին երիտասարդ թուրքերի ողմից կատարված հեղափոխության հաջոուքյունը, որը հանգեց Սուլթան Աբդուլ Համիդի գահընկեցության, ողջունվեց ամբողջ շշխարհով մեկ որպես արշալույս Թուրքիայի ամար սկսվող մի նոր դարաշրջանի։ Ողջ արդկությունը հրճվեց, տեսնելով մի ժամակակից ու առաջադեմ կառավարություն, որը գալիս էր փոխարինելու Աբդուլ Համիդի արգահատելի վարչաձևին։ Եվ դա, ամենից ավելի ուրախություն պատճառեց հայերին։ Նրանք անմիջապես սկսեցին գործակցուՑյուն ցույց տալ նոր կուսակցության, որը ողոր քաղաքացիների համար խոստանում էր հավասար իրավունքներ սահմանադրական մի պետության ներքո։ Տեղի սղության պատճառով հարկադրված եմ կանգ չառնել այն ահավոր հուսախաբության վրա, որ առաջ բերին նոր կառավարության արարքները, այնքան հուսադրող խոստումներից ու հավաստիացումներից հետո։

1909 թվականին Ադանայում տեղի ունեցած սպանդը, որպես շուտափույթ ցույց, ևկավ վկայելու երիտասարդ թուրքերի տիրապետողական գաղափարախոսության ու նրանց նեղ ազգայնական դիրքորոշման մասին։ Հայերի բոլոր հույսերը իսպառ չքացան ու կարճ ժամանակամիջոցում նրանք համոզվեցին, որ նախկինում գործադրված միևնույն քաղաքականությունը՝ նվաճողների և հպատակ ցեղերի միջև, նորից ուժի մեջ էր դրվելու։ Ազատության և հավասարության մասին, այնքան երկար ժամանակներից ի վեր նրանց փայփայած երազը, հետու մնաց իրագործվելուց։ Այն վերաբերմունքը, որ ի գործ դրվեց հայերի հանդեպ 1913 թվականին, դարձավ այն աստիճան անտանելի, որ նրանք ստիպվեցին կոչ անել եվրոպական պետություններին՝ իրենց օգնության հասնելու համար։ Երկարատև ամիսների բանակցություններից հետո, կողմերը եկան այն համաձայնության, որով Դուռը ընդունում էր հայկական վեց նահանգներում եվրոպացի երկու հսկիչների նշանակումը՝ գործելու լիակատար իշխանության իրավունքով։ Այս նպատակի համար ընտրվեցին նորվեգիացի պր. Մ. Հոֆը և հոլանդացի պր. Վեստենենկը։ Նրանք անմիջապես ժամանեցին Կոստանդնուպոլիս՝ համապատասխան հրահանգներ ստանալու համար, բայց հազիվ էին նրանք տեղ հասել, երբ պայթեց պատերազմը։ Թուրքական կառավարությունը, օգտվելով իրադրությունից, հրաժարվեց իր տված խոստումից և հրամայեց եվրոպացի ներկայացուցիչներին՝ առանց հապաղման երկրից հեռանալ։

1914 թվականի օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսները—դեռևս Թուրքիան չեզոք դիրքում էր գտնվում—հանդիսացան մի ժամանակաշրջան, որը դարձավ կարևոր անկյունադարձ Թուրքիայի պատմության համար։ Թուրքերը շտապեցին սկսել զորահավաքը, խափանեցին օտարերկրյա դաշնադրությունները, վերջ տվին արտասահմանյան բողոքարական ծառայություններին, ավելացրին մաքսային տուրքերը և ընդհանուր առմամբ, բոլոր բնագավառներում օգտագործեցին առիթը՝ առավելագույն չափով շահելու այն իրադրությունից, որ մեծ տերությունները պատերազմի մեջ էին մտել միմյանց դեմ։ Այն հաջողությունը, որ նրանք ունեցան արգելելով դաշնակից ուժերին մտնելու Դարդանել, նրանց տվեց հաղթողների հավակնություն և հուսադրեց նրանց՝ աշխարհում մի հզոր պետություն դառնալու ցնորամիտ պատրանքով։

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՈՐՊԵՍ ԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ Ի ՎԵՐ ՍՊԱՍՎԱԾ ԱՌԻԹ

Այն իրադրությունը, որը առաջ էր եկել պատերազմի հետևանքով, վաղուց ի վեր սպասված առիթն էր ընծայում Թուրքական կառավարության՝ ճնշելու հայերին։ Թշնամական առաջին իսկ օրերից, թուրքական կառավարությունը կանչեց մի քանի երևելի հայ անձնավորությունների և հայտնեց նրանց. «Եթե որևէ հայ նվազագույն օգնություն կցուցաբերի ռուսներին, վերջիններիս Թուրքիա մտնելու դեպքում, ապա առանց այլևայլության Թուրքերը հաշիվ կմաքրեն ամբողջ հայ ազգի հետ»։

1914 թվականի գարնան թուրքերը սկսեցին իրագործել հայկական ցեղի բնաջնջման ծրագիրը։ Նրանք մեղադրում էին իրենց նախնիներին, որոնք ժամանակին զանց էին արել քրիստոնյա ցեղերի ոչնչացումը կամ չէին պարտադրել նրանց, նվաճումից հենց անմիջապես հետո, դավանելու իսլամական կրոնը։ Արդ, երբ մեծ տերություններից չորսը պատերազմի մեջ էին գտնվում իրենց դեմ, իսկ մնացյալ երկուսը հանդիսանում էին իրենց դաշնակիցները, թուրքերը պատեհ առիթ նկատեցին ուղղելու Ժե դարում կատարված սխալը։ Նրանք մտածում էին, որ իրենց ծրագիրը իրագործելուց հետո, մեծ տերությունները կկանգնեին կատարված իրողության առջև և գործադրված ոճիրը կմնար անո-

պատիժ, ինչպես այդ պատահել էր 1895—1896 թվականների կոտորածների առթիվ, երբ մեծ տերությունները որևէ հանդիմանություն անգամ չուղղեցին սուլթանին։

Նրանք զինակոչել էին բոլոր պիտանի հայերին, առանց սակայն զենք տալու նրանց ձեռքը։ Հայերն իրավունք ունեին աշխատելու միայն ճանապարհների շինարարության և այլ նույնանման գործերի վրա։ Եվ այսպես, բնակչության մոտ զենք փնտռելու պատրվակով, նրանք ավերեցին գյուղերը։ Զանազան անունների տակ, առանց փոխհատուցման, նրանք վերցրին հայերից այն ամենը, ինչ կարող էր պիտանի լինել թուրքական բանակներին և ստիպեցին հայերին արտակարգ հարկեր վճարել Ազգային պաշտպանության կոմիտեի օգտին։

ԴԺՈԽԱՑԻՆ ՎԱՅՐԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերջին և ամենասարսափելի միջոցը, որ գործադրվեց հայերի հանդեպ, եղավ ամբողջ բնակչության զանգվածային ու բռնի տեղահանությունը։ Խլելով իրենց օճախներից, հայերին աքսորեցին դեպի հեռավոր անապատները, ենթարկելով նրանց ամեն տեսակի ոճիրների։ Որևէ կարգադրություն չէր նախատեսվել աքսորյալներին փոխադրական միջոցներով ու սննդամթերքով ապահովելու համար։ Այս դժբախտները, որոնց թվում գտնվում էին զարգացած մարդիկ, ազնվական կանայք, գնում էին հետիոտն, ենթարկվելով նախօրոք կազմակերպված ոճրագործ ավազակախմբերի խոշտանգումներին։ Տները, բառի բուն առումով, կողոպտվել էին, մինչևույն ընտանիքի անդամներին իրարից բաժանել ու ցիրուցան էին արել, տղամարդկանց սպանել էին, իսկ կանանց ու երիտասարդ աղջիկներին ճանապարհին առևանգել կամ քշել էին հարեմները։ Երեխաները գցվել էին ջուրը կամ, իրենց իսկ մայրերի ձեռքով, վաճառվել էին օտարականներին՝ սովամահությունից փրկելու համար։ Ականատես վկաների կողմից, որոնք արժանի են բացարձակ հավատի, դեսպանատան ուղարկված զեկուցագրերում նկարագրված փաստերը գերազանցում են մարդկային պատմության մեջ երբևէ իրագործված կամ երևակայված ամենագազանային ու ամենադժոխային բարբարոսություններին։ Թուրքական իշխանությունները փակել էին նահանգների և մայրաքաղաքի միջև գոյություն ունեցող բոլոր տեսակի հաղորդակցության միջոցները այն միամիտ հույսով, որ արտասահմանյան երկրները, այսպիսով, անտեղյակ կարող են մնալ երկրի ներսում կատարվող ոճիրներին։ Սակայն այդ տեղեկությունները հյուպատոսներին հասան քարոզիչների, օտարերկրյա ճանապարհորդների և նույնիսկ իրենց՝ թուրքերի խողովակով։ Շուտով հայտնի դարձավ, որ կառավարիչներին հրամայվել էր երկրից աքսորել բոլոր հայ բնակիչներին, որոնք գտնվում էին իրենց սահմաններից ներս, առանց սեռի ու տարիքի խտրականության։ Տեղական պաշտոնյաները, գրեթե առանց բացառության, ամենայն ճշտությամբ կատարեցին այս հրահանգները։ Բոլոր հայ պիտանի տղամարդիկ, ամբողջապես զինաթափված, կանչվեցին զինվորական ծառայության, իսկ մնացյալները՝ ծերեր, կանայք ու երեխաներ, մատնվեցին ամենասոսկալի ու ամենազարհուրելի վայրագություններին։

Կոտորածների վերաբերյալ դեպքերը խնամքով հիշատակելու նպատակով, ես ուղիղ ստեղծեցի ականատես վկաներից հավաքել բառացիորեն ճշգրիտ տեղեկություններ, որոնք հաստատում էին ստացված զեկուցագրերի իսկությունը։ Այդ զեկուցագրերը իրենց մեջ պարունակում են ամեն դասի պատկանող փախստականների, քրիստոնյա քարոզիչների և այլ բազմաթիվ վկաների պատմածները։ Դրանց ամբողջությունը կազմում է մի ընդհանուր ատենագրություն հայկական նախճիրի տարբեր փուլերի մասին և հանդիսանում է, անկասկած, համայն մարդկության դատապարտության խոսքը ուղղված այդ ճիվաղ մարդասպաններին։ Այդ փաստաթղթերից մի ստվար ծավալ, լուսաբանված ուժեղագույն ապացույցներով, հրատարակվել են արդեն դերկոմս Բրայսի կողմից լույս ընծայված մի սքանչելի աշխատությունում։ Տեղի սահմանափակության պատճառով, այդ հոյակապ գրքից, ես կարող եմ այստեղ վերարտադրել միայն մի վավերագիր։ Չարմանալին այն է սակայն, որ այս զեկուցագիրը ինձ տվել է մի գերմանացի քարոզիչ և ես այն թղթին եմ հանձնել անմիջապես հենց դեսպանատնում.

«Շատ հաճախ մենք չգիտեինք ուր պատըսպարվել։ Բոլոր կողմերից շրջապատված էինք այնպիսի հարևաններով, որոնք ամեն րոպե կարող էին մեզ գնդակոծել լուսամուտներից, մանավանդ գիշեր ժամանակ։ Հիվանդապահուհին ու ես բնում էինք հատակին՝ հրացանի գնդակներից պաշտպանվելու համար։ Որբանոցի պատերը ծակծկվել էին թնդանոթի հարվածներից։ Ես հարկադրվեցի որբերին մենակ թողնել։ Կառավարական մի նոր հրամանի համաձայն, մենք պետք էր հանձնեինք տեղական իշխանություններին բոլոր հրաց, մեծ կամ փոքր, որոնք գտնվում էին մեր հաստատություններում։ Իմ բոլոր թախանձանքներն ու բողոքները մնացին անհետե-

վանք: Պատվո վրա երդում անելով ինձ վստահեցրին, որ խնամով էին վերաբերվելու որերի հետ մինչև նրանց Ուրֆա հասցնելը: Այն ժամանակ ես հարկադրվեցի դիմել կառավարչին: Նա կանգնած էր մի քնդանոթի մոտ և իրեն պահում էր ինչպես մի ընդհանուր հրամանատարի: Նա չուզեց անգամ ինձ լսել. նա դարձել էր մի իսկական հրեշ: Գեր երեխաներին խնայելու համար իմ արած թախանձանքներին նա պատասխանեց. «Այնուամենայնիվ, դուք հում չե՞ք կամենում, որ հայ երեխաները մենակ մնան մահմեդականների միջև: Պետք է, որ նրանք էլ մեկնեն մյուսների հետ»: Նա մեզ թույլատրեց պահել միայն երեք աղջիկների, այն էլ որպես սպասուհիների:

Նույն օրվա կեսօրից հետո ես ստացա առաջին տեղեկությունները այն սոսկալի եղելությունների մասին, բայց ես կատարելապես հավատ չընծայեցի դրանց: Այդ առաջին լուրերը ստացել էին մի բանի հայ քաղաքապետներ ու հացագործներ, որոնց ծառայությունը դեռևս անհրաժեշտ լինելով կառավարության, մնացել էին իրենց տեղերում: Ասում էին, որ տղամարդկանց միմյանց կապելուց հետո, գնդակահարել էին գետի պատերից այն կողմ: Կանանց ու երեխաներին էլ էին մոտակա գյուղերը ու հարյուրներով տեղավորելուց հետո, կենդանի վիճակում այրել էին, իսկ մնացյալներին էլ հետել էին ջուրը: Մեր շենքերը գտնվում էին քաղաքի գլխավոր քաղամասում և այդ պատճառով լուրերը մեզ հասնում էին կարճ ժամանակում: Մի քիչ ավելի ուշ, փողոցներում արդեն կարելի էր տեսնել կանանց ու երեխաների՝ արյունաքաքախ ու ողբալի վիճակում... ո՞վ կարող է նկարագրել այդ տեսարանը, երբ դրան ավելացնենք նաև հրդեհված տների տեսքը ու այրված դիակների գարշահոտությունը:

Մի շաբաթվա ընթացքում գործը գրեթե ավարտված էր: Սպաներն այժմ պարծենում էին իրենց բաջագործությամբ, որ այդ֊քան հաջող կերպով կարողացել էին բնաջնջել ամբողջ հայ ժողովուրդը: Երբ շաբաթ անց, երբ մենք հեռանում էինք Մուշ քաղաքից, գյուղերը դեռ վառվում էին: Հրամայված էր՝ քաղաքում ու գյուղերում ոչինչ չթողնել հայերի ունեցվածքից:

Միայն Մուշ քաղաքում ապրում էին 25 000 հայեր: Բացի դրանից, քաղաքի շրջակայքում կային 300 բազմամարդ հայկական գյուղեր:

Մենք մեկնեցինք Մեզրե: Ջինվորները, որոնք ղեկավարում էին մեզ, հպարտությամբ էին ցույց տալիս, թե ո՞րտեղ, ի՞նչպես և ո՞րքան կանանց ու երեխաների էին սպանել նրանք:

Միակ մխիթարական երևույթը, որի մասին կարելի է ասել, դա այն էր, որ հասնելով Խարբերդ, մենք տեսանք, որ որբանոցները լեցված էին հայ երեխաներով: Մամուրեթուլ֊Ազիզը վերածվել էր մի մեծ հայկական գերեզմանոցի: Տարբեր հանգրվաններից բոլոր հայերին էլ֊բերել էին այդտեղ և նրանք, ովքեր չէին կորչել հանապարհին, հասնում էին Մամուրեթուլ֊Ազիզ, իրենց գերեզմաններն այդտեղ գտնելու համար:

ԱՎԵԼԻ ՍՈՍԿԱԼԻ ՔԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՁԱՐՁԱՐԱՆՔՆԵՐԸ

Մի այլ սարսափելի բան, որ տեղի ունեցավ Մամուրեթուլ֊Ազիզում, դա եղավ այն, որ թուրքերը, երկու ամիս շարունակ, գազանաբար խոշտանգեցին անմեղ ու խաղաղ հայ բնտանիքներին: Մարդկային ոտքեր, ձեռքեր և մարմնի պատառոտված այլ անդամներ մեխել էին տախտակների վրա: Ահցաններով քաշում էին գռիյալների մատներն ու եղունգները, մորուսն ու հոնքերը: Ինչպես ձիերին, գամերով պայտում էին նրանց ոտքերը, իսկ շատերին, գլխիվայր վիճակում, կախել էին արտաքինոցների պատերից...

Ա՜խ, որքա՜ն պիտի ուզեինք, որ այդ ամենը ճիշտ չլինեին: Խուժանը, հավաքված բանտերի շուրջը, ուր գործվում էին այդ գազանությունները, թմբկահարում էին կամ սուլուցներով աղմուկ բարձրացնում, որպեսզի դրսի բնակչությունը չլսի զոհերի մահվան վերջին աղաղակները:

Հուլիսի 1֊ին 2 000 մարդ տեղահանվեցին Խարբերդից: Դրանք զինվորներ էին և ասում էին, որ դրանց տանում են հանապարհների վրա աշխատեցնելու: Բնակչությունը մատնված էր սարսափի: Սրա վրա, կուսակալը իր մոտ կանչեց գերմանացի բարոզիչ Մ֊ին և խնդրեց նրան հանգստացնել բնակչությանը, ասելով, որ իմ ևս սաստիկ վշտացած է տեսնելով ժողովրդի ապրած վախը, և այլն և այլն: Այդ բշվածները դեռ հազիվ էին մի օրվա ճամբա անցել, երբ բոլորը սպանվեցին լեռան կիրճում: Նրանք կապված են եղել միմյանց, և երբ բդեշն ու թուրք զինվորները վրա են հասնում ու սկսում է ջարդը, նրանցից մի բանիսին, օգտվելով գիշերվա խավարից, հաջողվում է փախչել: Հաջորդ օրը, 2 000 այլ մարդիկ ուղարկվեցին Դիարբեքիրի ուղղությամբ: Այս ահռելիների մեջ գտնվում էին բազմաթիվ մեր որբ տղաներից, որոնք ամբողջ տարին աշխատել էին հօգուտ կառավարության: Նույնիսկ բուրդ կանայք, դանակներով զինված, մասնակցում էին հայերի կոտորածին: Նրանցից մի բանիսին հաջողվեց փախչել: Երբ կառավարությունն ի֊

մացավ այդ մասին, բոլոր էշվողներին երկու օրով զրկեց հացից, փախչելու համար անզոր դարձնելու նպատակով:

Բարձր դասի բոլոր հայ կաթոլիկները իրենց արքեպիսկոպոսի հետ միասին սպանվեցին: Մնացել էր միայն առևտրականների մի խումբ, որոնց կառավարությունը դեռևս պետք ուներ և այս իսկ պատճառով տակավին չէին տեղահանվել, բայց նրանք ևս հրաման ստացան մեկնելու և մյուսների նման ճանապարհին սպանվեցին»:

Ինչպես զոհերի քանակությամբ, այնպես էլ նրանց հանդեպ գործադրված միջոցներով հայերի այս սպանդը, պատմության մեջ հիշատակված բոլոր տեսակի ջարդերից, եղել է ամենասոսկալին: Հաճախ հարց է ծագում, թե կրակի, սովի ու անմարդկային վերաբերմունքի պատճառով ինչքա՞ն հայեր են թարկվեցին մահվան ու դեռ ինչքա՞ն հայեր թշվառության մեջ կորան աքսորի ճամբաներում: Լորդ Բրայսի կողմից հավաքված կարևոր վավերագրերի վերջում կա մի կատարյալ ամփոփում այդ եղելությունների մասին: 1912-ին, օսմանյան կայսրության մեջ ապրող հայերի թիվը գնահատված է այստեղ 1 600 000-ից մինչև 2 000 000: Այս թվից 182 000 հայեր գաղթել են ռուսական Կովկաս և 4 200 հոգի՝ Եգիպտոս: 150 000 հայեր դեռևս մնում են Կոստանդնուպոլսում: Այս թվերին պետք է ավելացնել նաև կենդանի մնացածների համեմատաբար շատ աննշան թիվը, որոնք ցրված և թաքնված են հեռավոր նահանգներում: Հետևաբար մենք կարող ենք եզրակացնել, որ 1 000 000 հայեր խլվել են փոքր Ասիայի բազմամարդ քաղաքներից ու գյուղերից: Սպանվածների թիվը հասնում է 600 000-ից մինչև 800 000-ի: Նրանք, ովքեր հրաշքով մնացել են կենդանի, գտնվում են ամենախղճալի վիճակում, ամբողջապես զուրկ կյանքի անհրաժեշտ պետքերից և պաղատագին ձեռք են երկարում Ամերիկայում ապրող իրենց քրիստոնյա եղբայրներին:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԿԱՆԽԱՄՏԱԾՎԱԾ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ մենք խոսելու ենք մի շատ ցավալի նյութի շուրջ: Գերմանական կառավարությունն արդյո՞ք պատասխանատու է հայկական կոտորածների ու աքսորների համար: Թույլ տվեք ինձ ամենաբացահայտ կերպով հայտարարելու, որ գերմանական կառավարությունը, եթե կամենար, կարող էր այդ արգելել: Իմ բոլոր ամենաեռանդուն ու համան ջանքերը, արթնացնելու գերմանական դեսպան պարոն Վանգենհեյմի տրամադրությունը ի նպաստ հայերին, անցան ապարդյուն: Նրա հետ ունեցած բազմաթիվ հանդիպումների ժամանակ ես փորձեցի նրան համոզել, որ ողջ աշխարհը բարոյապես պատասխանատու կգտներ Գերմանիային իր դաշնակցի կողմից գործադրված ոճիրների համար: Ես համառ կերպով պնդում էի ասելով նրան, որ նույնիսկ տնտեսական տեսակետից Գերմանիայի օգտին չէր, որ Թուրքերը ոչնչացնեն երկրի ամենակարևոր տարրին, որ դրա հետևանքով առաջ կգար օսմանյան կայսրության տնտեսական կործանումը, որ, նաև, այն դեպքում, երբ Գերմանիային հաջողվի դառնալ Թուրքիայի տերը, նա այդտեղ ոչինչ չէր կարող գտնել բացի դատարկ կեղևից: Իսկ երբ նկատեցի, որ իմ բերած պատճառաբանությունները մնում են անլսելի, ես հարկադրվեցի դիմել իմ կառավարության, որ նա ճնշում բանեցնի Բեռլինում արտաքին գործերի պաշտոնատան վրա, որպեսզի համապատասխան հրահանգներ տրվեն Կոստանդնուպոլսում գտնվող գերմանական դեսպանին՝ վերջ տալու կոտորածներին: Միակ արդյունքը, որ ստացվեց դրանից, եղավ այն, որ գերմանական դեսպանը մի հուշագիր ուղարկեց Դռանը, բողոքելով Թուրքերի կողմից գործադրված գազանությունների դեմ: Այս հուշագրով, Գերմանական կառավարությունը նպատակ ուներ պարզապես ազատվել որևէ պատասխանատվությունից: Գործնականում, այն ոչ մի ազդեցություն չէր ունենալու: Ես նվազագույն կասկածն իսկ չունեմ, որ գերմանական կառավարությունը կարող էր, հենց սկզբից ևեթ, կանխել այդ արհավիրքները:

. . . . . .

. . . . . .

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հնարավոր չէ, առայժմ, հայկական հարցի համար ձևակերպել մի վերջնական լուծում: Սակայն մի բան աներկբա է, որ հայերը պետք է ազատվեն Թուրքական լծից:

Ինձ համար անսպասելի է, որ Եվրոպայի ու Ամերիկայի 400 000 000 քրիստոնյաները այս անգամ ևս ներեն Թուրքական կառավարության կողմից գործադրված այս վայրագություններ: Արդյո՞ք նրանք, Գերմանիայի նման, կբռնեն Թուրքի արյունլվա ձեռքը, կներեն ու կպարգևատրեն նրան, ինչպես այդ արեց Վիլհելմը՝ սուլթանին շնորհելով իր ամենաբարձր պատվի շքանշանները: Արդյո՞ք, այս սարսափելի արարքները, դժոխային չարչարանքները, կանանց արգելափակումը հարեմներում, անմեղ, երիտասարդ աղջիկների հափշտակումն ու նրանցից շատերի չորս

ֆրանկով վաճառքը, հարյուր հազարավոր մարդկային էակների սպանդը և այլ հարյուր հազարավոր հայերի աքսորը անապատներում, ուր նրանք ոչնչացան սովամահությունից, հարյուրավոր քաղաքների ու գյուղերի կործանումը, վերջապես, Թուրքիայի հայ, հույն, սիրիացի քրիստոնյաներին ոչնչացնելու կանխամտածված ու դժոխային այս ծրագրի գործադրումը, արդյո՞ք այս բոլոր եղեռնագործությունները, ի վերջո, մնալու են անպատիժ։ Մի՞թե թույլ ենք տալու Թուրքերին, ի՞նչ եմ ասում, մի՞թե մեր երկչոտությամբ քաջալերելու ենք նրանց շարունակելու, իրենց տիրապետության տակ գտնվող քրիստոնյաների հետ վերաբերվել որպես «անհավատ շներ»-ի։ Թե՞ հակառակը, առանց ուշացման, ոչինչ չենք խնայելու՝ Թուրքերի ճիրաններից ազատագրելու համար այս հնամյա, քաղաքակրթված ու լուսավոր քրիստոնյա ժողովուրդներից ողջ մնացածներին։

Փարիզ, 1918 թ.

Ֆրանսերենից թարգմանեց՝
Վ. Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ա. Խ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՎԱՆԱՆՔՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՎ ՎԱՆՔԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐՆ ՈՒ ԹԱՂԻՐՆԵՐԸ*

ԷՐԶՐՈՒՄԻ ՎԻԼԱՅԵԹ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԳՐԱՍԵՆՑԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ							
Գրասենյակի №-ը	Քարտի №-ը	Ինչի՞ մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Գնահատականը	Սևագրության թվականը	Մաքրագրության թվականը
385	1978					1330 թ. փետրվարի 16	1330 թ. փետրվարի 16

Արդարադատության և դավանանքների միջնստրության

Էրզրումի վիլայեթի Քեմախի կազայի և հարակից գյուղերի կայսերական հրամանով

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1965 թվականի № 4-ից։

չհաստատված 43 եկեղեցիների վայրերը և անունները ցուցնող մեկ օրինակ ցուցակը սրա հետ ներկայացվում է։ Հիշյալ եկեղեցիների կառուցման թվականները շատ հին են։ Խնդրում ենք համաձայն օրենքի հարկ եղած կարգադրության մասին Ձեր միջնորդությունը։



ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՆԱԽԱԳԾԵՐԻՑ

(Հեղինակ՝ ճարտարապետ Բ. Արզումանյան)

ԵՐԶՆԿԱ, ՔԵՄԱԽ

Առանց ֆերմանի հնուց կառուցված
43
Թղթի թիվը (հայերեն) 385
Կցված է 1330 թ. փետրվար, № 1978 թարթիրին։

Ֆերման ունի, ֆերման չունի

1. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Ս. Լուսավորիչ վանքի չորս եկեղեցի, հնուց կառուցված։*
2. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Լուսավորիչ վանքի մոտ Ս. Մանե կույսի եկեղեցին, հնուց։*
3. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Ս. Թադեոս Առաքյալի Ավագ վանքի եկեղեցին, հնուց։*
4. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Ս. Թադեոս Առաքյալի վանքին կից Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։*
5. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Ս. Թադեոս առաքյալի վանքին կից Ս. Կարապետ եկեղեցին, հնուց։*
6. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Կարնի գյուղում Ս. Թորոս եկեղեցին, հնուց։*
7. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Կարնի գյուղի մոտ Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։*
8. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Դավղինեչ գյուղում Ս. Մինաս եկեղեցին, հնուց։*
9. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Դավղինեչ գյուղի մոտ Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։*
10. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Դավղինեչ գյուղի մոտ Ս. Թորոս եկեղեցին, հնուց։*
11. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Դավղինեչ գյուղի մոտ Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։*
12. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Դավղինեչ գյուղի մոտ Սերովբեից-Քերովբեից վանքի եկեղեցին, հնուց։*
13. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Տորթան գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։*
14. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Տորթան գյուղի Ս. Տրդատ եկեղեցին, հնուց։*
15. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Գոմեր գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։*
16. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Գոմեր գյուղի մոտ Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։*
17. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Գոմեր գյուղի մոտ Զորեհանգիստ եկեղեցին, հնուց։*
18. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Գոմեր գյուղի մոտ Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։*
19. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Գոմեր գյուղի մոտ Ս. Հրեշտակապետ վանքի եկեղեցին, հնուց։*
20. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Մարիք գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։*
21. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Մարիք գյուղի մոտ Ս. Անարծաթ եկեղեցին, հնուց։*
22. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Մարիք գյուղի մոտ Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։*
23. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Մարիք գյուղի մոտ Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։*
24. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Օրի գյուղում Ս. Աստվածամայր եկեղեցին, հնուց։*
25. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Օրի գյուղի մոտ Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։*
26. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Օրի գյուղի մոտ Ս. Տիկին վանքի եկեղեցին, հնուց։*
27. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Ջակարի գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։*
28. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Ջակարի գյուղի մոտ Ս. Հակոբ եկեղեցին, հնուց։*
29. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Ջակարի գյուղի մոտ Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։*
30. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Հազարք գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։*
31. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Հազարք գյուղի մոտ Ս. Եղիա եկեղեցին, հնուց։*
32. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Ստորին Փակարիչ (?) գյուղի Ս. Հակոբ եկեղեցին, հնուց։*
33. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Ստորին Փակարիչ (?) գյուղի Ս. Աստվածամայր եկեղեցին, հնուց։*
34. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Ստորին Փակարիչ (?) գյուղի մոտ Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։*
35. *Երզրումի վիլայեթի Քեմախի կազայում,*

Ստորին Փակարիչ (?) գյուղի մոտ Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։

36. Էրզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Վերին Փակարիչ (?) գյուղի Ս. Աստվածամայր եկեղեցին, հնուց։

37. Էրզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Վերին Փակարիչ (?) գյուղի մոտ Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։

38. Էրզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Փեկարի վանք գյուղում, Արեգակ Ս. Նշան վանքի եկեղեցին, հնուց։

39. Էրզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Փեկարի վանք գյուղի մոտ, Արեգակ Ս. Նշան եկեղեցին, հնուց։

40. Էրզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Փեկարի վանք գյուղի մոտ Ս. Գրիգոր եկեղեցին, հնուց։

41. Էրզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Սաղի գյուղի Ս. Աստվածամայր եկեղեցին, հնուց։

42. Էրզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Կարդաք գյուղում Ս. Հովհաննես եկեղեցին, հնուց։

43. Էրզրումի վիլայեթի Քեմախի կազայում, Իխտիք գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։

ԷՐԶՐՈՒՄԻ ՎԻԼԱՅԵԹ

ՀԱՑՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԳՐԱՍԵՆՑԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի №-ը	Կարղի №-ը	Ինչի՞ մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Գևառը	Սևագրության թվականը	Մաքրագրության թվականը
	1979					1330 թ. փետրվարի 18	Նորը

Արդարադատության և դավանաճիճների մինիստրության

Էրզրումի վիլայեթի Քղի կազայի և նրան հարակից գյուղերի կայսերական հրամանով չհաստատված 47 եկեղեցիների վայրերը, անունները և կառուցման թվականները ցուցնող ցուցակը մեկ օրինակով սրա հետ ներկայացվում է և խնդրվում համաձայն օրենքի հարկ եղած կարգադրության մասին Ձեր միջնորդությունը։ Այդ մասին հրամանն ու ֆերմանը Նորին Վսեմության են պատկանում։

ՔՂԻ

Առանց ֆերմանի
47
Կցված է 1330 թ. փետրվարի 16-ի
№ 1979 թաքրիրին։

Կառուցման թ.

1. Էրզրումի վիլայեթի Քղի կազայում Ս. Սարգիս եկեղեցին, 1252 թ.։
2. Էրզրումի վիլայեթի Քղի կազայում Ս. Հակոբ եկեղեցին, 1251 թ.։
3. Էրզրումի վիլայեթի Քղի կազայում Ս. Նշան եկեղեցին, 1191 թ.։
4. Էրզրումի վիլայեթի Քղի կազայում Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1221 թ.։
5. Էրզրումի վիլայեթի Քղի կազայում Ս. Աստվածամայր եկեղեցին, 1221 թ.։
6. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Ջիբեր գյուղում Ս. Աստվածամայր եկեղեցին, 1241 թ.։
7. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Ղազի գյուղում Ս. Եղիա եկեղեցին, 1281 թ.։
8. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Աղփէջոտ գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1265 թ.։
9. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Արք գյուղում Ս. Հովհաննես եկեղեցին, 1246 թ.։
10. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Արք գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1246 թ.։
11. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Արք գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 851 թ.։

12. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Զրմաք գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1181 թ.։
13. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Թարման գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1181 թ.։
14. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Աբուղնաք գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1231 թ.։
15. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Օսնաք գյուղում Ս. Մինաս եկեղեցին, 1276 թ.։
16. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Օսնաք գյուղում Ս. Կիրակոս եկեղեցին, 1161 թ.։
17. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Օրոր գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1131 թ.։
18. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Աստղաբերդ գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1121 թ.։
19. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Աստղաբերդ գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1001 թ.։
20. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Ջարիբաղ գյուղում Ս. Հովհաննես եկեղեցին, 1229 թ.։
21. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Ջանաքչի գյուղում Ս. Կիրակոս եկեղեցին, 1216 թ.։
22. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Ջան գյուղում Ս. Մինաս եկեղեցին, 1059 թ.։
23. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Քերլող գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1226 թ.։
24. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Ավորդնիք գյուղում Ս. Երրորդութիւն եկեղեցին, 1249 թ.։
25. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Չելեբի գյուղում Ս. Թորոս եկեղեցին, 1259 թ.։
26. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Հաղաս գյուղում Ս. Աստվածամայր եկեղեցին, 1211 թ.։
27. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Խաբս գյուղում Ս. Կարապետ եկեղեցին, 1226 թ.։
28. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Սերկևիլ գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1133 թ.։
29. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Սերկևիլ գյուղում Ս. Փրկիչ վանքի եկեղեցին, 801 թ.։
30. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Սղանք գյուղում Ս. Մինաս եկեղեցին, 1201 թ.։
31. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Հերթիվ գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1276 թ.։
32. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Սագաձոր գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1209 թ.։
33. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Հաքըստուն գյուղում Ս. Խաչ եկեղեցին, 1168 թ.։
34. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Հաքըստուն գյուղում Ս. Կարապետ վանքի եկեղեցին, 816 թ.։
35. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Թենք գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1216 թ.։
36. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Արինջ գյուղում Ս. Փրկիչ վանքի եկեղեցին, 1139 թ.։
37. Էրզրումի վալայեթի Քղի կազայի Ղարափեք գյուղում Ս. Մինաս եկեղեցին, 1216 թ.։
38. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Մելքոն գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1126 թ.։
39. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Ջեթման գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1224 թ.։
40. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Ղոփնք գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1256 թ.։
41. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Էբրնք գյուղում Ս. Մինաս եկեղեցին, 1238 թ.։
42. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Խոշկար գյուղում Ս. Նիկողոս եկեղեցին, 1219 թ.։
43. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Շեն գյուղում Ս. Հակոբ եկեղեցին, 1326 թ.։
44. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Շարոք գյուղում Ս. Գևորգ եկեղեցին, 1243 թ.։
45. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Կըզըլ-Ջուբուք գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1256 թ.։
46. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Լիչիք գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, 1156 թ.։
47. Էրզրումի վիլայեթի Քղի կազայի Չիֆթլիք գյուղում Ս. Աստվածածին եկեղեցին, 1181 թ.։

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՑԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի №-ը	կարգի №-ը	Ինչի մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	կազմողը	Պետը	Սկզբնության թվականը	Մաքրագրության թվականը
581 ԹՀԳ	2022					1331 թ. մարտի 2	1330 թ. մարտի 2

Արդարադատության և դավանաճիճների միհիստրության

Երզնկայի սանջաքի Ռեֆահիյե կազայում գտնվող Ս. Լուսավորիչ եկեղեցին 1323 թվականի սեֆերի 25-ի կայսերական հրամանով հաստատված է։ Վերոհիշյալ կազային հարակից գյուղերում հնուց կառուցված և կայսերական հրամանով չհաստատված չորս եկեղեցիների վայրերը և անունները ցուցնող մեկ օրինակ ցուցակը սրա հետ ներկայացվում է և խնդրվում, համաձայն ընդունված կարգի, հարկ եղած կարգադրություններն անել։ Այդ մասին հրամանն ու ֆերմանը Նորին Վսեմությանն է պատկանում։

ՌԻՖԱՀԻՅԻ ԿԱԶԱ (ԵՐԶՆԿԱ)

№ 581

Առանց ֆերմանի 4 — Ֆերմանով 1

Կցված է 1331 թ. մարտի 2-ի № 2022 թաքրիրին։

(ջնջված է)

1. Ռիֆահիյեի կազայում Ս. Փրկիչ եկեղեցին (ֆերմանի թվականը հետագրով հարցված է)։
2. Ռիֆահիյեի կազայի Մյուլքի-Շերիֆ գյուղում Ս. Աստվածամայր եկեղեցին, հնուց։
3. Ռիֆահիյեի կազայի Մյուլքի-Շերիֆ գյուղում Ս. Եղիայի վանքի հայոց եկեղեցին, հնուց։
4. Ռիֆահիյեի կազայի Հերուփիլ գյուղում Ս. Աստվածամայր եկեղեցին, հնուց։
5. Ռիֆահիյեի կազայի Հերուփիլ գյուղում Ս. Թափոր վանքի հայոց եկեղեցին, հնուց։

ՓԵԼՈՒՄԵՐԻ ԿԱԶԱ (ԵՐԶՆԿԱ)

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՑԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի №-ը	կարգի №-ը	Ինչի մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	կազմողը	Պետը	Սկզբնության թվականը	Մաքրագրության թվականը
581	2021					1331 թ. մարտի 2	1331 թ. մարտի 2

Արդարադատության և դավանաճիճների միհիստրության

Երզնկայի սանջաքի Փելումերի կազայում և նրան հարակից գյուղերում գտնվող հնուց կառուցված և կայսերական հրամանով չհաստատված վեց եկեղեցիների վայրերը և անունները ցուցնող սույն ցուցակը մեկ օրինակով սրա հետ ներկայացվում է և խնդրվում համաձայն կանոնի անհրաժեշտ կարգադրություններն անել։ Այդ մասին հրամանն ու ֆերմանը Նորին Վսեմությանն է պատկանում։

ՓԵԼՈՒՄԵՐԻ ԿԱԶԱ (ԵՐԶՆԿԱ)

Առանց ֆերմանի 6

Կցված է 1331 թ. մարտի 2-ի № 2021 թաքրիրին։

ֆերմանի թ. — կառուցման թ.

1. Փելումեր կազայի Գանչեք նահիյեում Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։

2. Փեյումեր կազայի Դանչեք նահիյեում Ս. Քառասունք, այլ անվամբ Ս. Սիմեոնի վանքի հայոց եկեղեցին, հնուց։
3. Փեյումեր կազայի Դանչեք նահիյեում Ս. Թադեոսի վանքի հայոց եկեղեցին, հնուց։
4. Փեյումեր կազայի Դանչեք նահիյեում Ս. Սարգիս վանքի հայոց եկեղեցին, հնուց։
5. Փեյումեր կազայի Դանչեք նահիյեում Քիրունուդ գյուղում Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։
6. Փեյումեր կազայի Դանչեք նահիյեում Փերքերի գյուղում Ս. Մինաս եկեղեցին, հնուց։

ԲԱՅԲՈՒՐԴ (ԷՐԶՐՈՒՄ)

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԳՐԱՍԵՆՑԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի №-ը	Կարգի №-ը	Ինչի մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Գնահատականը	Սևագրության թվականը	Մաքրագրության թվականը
440	1980					1330 թ. փետրվարի 16	№

Առողջապահության և դավանաճիճների միհիստրության

Էրզրումի վիլայեթի Բայբուրդ կազայում և հարակից գյուղերում գտնվող և կայսերական հրամանով չհաստատված 57 եկեղեցիների վայրերը, անունները և նրանց կառուցման թվականները ցուցնող սույն ցուցակը մեկ օրինակով սրա հետ ներկայացվում է և խնդրվում համաձայն կանոնի հարկ եղած կարգադրությունն անել։

№ 440 ԲԱՅԲՈՒՐՏ (ԲԱԲԵՐԴ)

Կցված է 1330 թ. փետրվարի 16-ի № 1980 թաքրիրին։

Կառուցման թ.

1. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Կախի-զադե թաղի Ս. Հրեշտակապետ եկեղեցին, 1264 թ.։
2. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Կախի-զադե թաղի Ս. Հրեշտակապետ եկեղեցին, 1283 թ.։
3. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Դաշ թաղի Ս. Ստեփանոս եկեղեցին, 362 թ.։
4. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Լենգյահի Ս. Հովհաննես եկեղեցին, 594 թ.։
5. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Ղաթըր թաղի Ս. Նշան եկեղեցին, 1264 թ.։
6. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Ջիկրաշենի Ս. Աստվածածին եկեղեցին, 876 թ.։
7. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Ավերակ թաղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1266 թ.։
8. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Ավերակ գյուղի Ս. Հովհաննես եկեղեցին, 436 թ.։
9. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Վարազահան գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1259 թ.։
10. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Վարազահան գյուղի Ս. Համբարձում եկեղեցին, 451 թ.։
11. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Մալասա գյուղի Ս. Հովհաննես եկեղեցին, 1300 թ.։
12. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Մալասա գյուղի Ս. Թովմաս եկեղեցին, 580 թ.։
13. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Կիսանդու գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1260 թ.։
14. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Կիսանդու գյուղի Ս. Եղիա եկեղեցին, 534 թ.։
15. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Կիսանդու գյուղի Ս. Գրիգոր եկեղեցին, 1030 թ.։
16. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Կարավանք գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1267 թ.։
17. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Կարավանք գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, 528 թ.։

18. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Ադե գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1264 թ.։
19. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Ադե գյուղի Ս. Լուսավորիչ եկեղեցին, 765 թ.։
20. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Ջահմանս գյուղի Ս. Հովհաննես եկեղեցին, 1300 թ.։
21. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Խուփս գյուղի Ս. Փրկիչ եկեղեցին, 1264 թ.։
22. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Խուփս գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, 541 թ.։
23. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Խուփս գյուղի վանքում Ս. Քրիստափոր եկեղեցին, 1276 թ.։
24. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Նիվ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1262 թ.։
25. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Լեսոնեք գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1005 թ.։
26. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Լեսոնեք գյուղի Ս. Լուսավորիչ եկեղեցին, 1258 թ.։
27. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Լեսոնեք գյուղի Ս. Հովհաննես եկեղեցին, 458 թ.։
28. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Ռյուշտի գյուղի Ս. Հովհաննես եկեղեցին, 1285 թ.։
29. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Ռոմելի գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1285 թ.։
30. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Սարաջող գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, 1296 թ.։
31. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Դոմլա գյուղի Ս. Համբարձում եկեղեցին, 1266 թ.։
32. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Սըղրջի գյուղի Ս. Խաչ եկեղեցին, 1288 թ.։
33. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Խնզավիրաք գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, 1268 թ.։
34. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Խարիք գյուղի Ս. Հովհաննես եկեղեցին, 1280 թ.։
35. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Խարիք գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1172 թ.։
36. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Խարիք գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, 757 թ.։
37. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Փիլրաք գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1276 թ.։
38. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Փլիտաք գյուղի Ս. Կիրակի եկեղեցին, 652 թ.։
39. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Արևզղա գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1230 թ.։
40. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Կիրզի գյուղի Ս. Պողոս եկեղեցին, 1262 թ.։
41. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Կիրզի գյուղի Ս. Խաչ եկեղեցին, 828 թ.։
42. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Քու (Քո) գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1258 թ.։
43. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Բալախոր գյուղի Ս. Լուսավորիչ եկեղեցին, հնուց։
44. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Բալախոր գյուղի Ս. Կարապետ եկեղեցին, հնուց։
45. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Ս. Թորոս գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
46. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Ս. Թորոս գյուղի եկեղեցին, հնուց։
47. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Բլուր գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։
48. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Բլուր գյուղի Ս. Սահակ եկեղեցին, հնուց։
49. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Բլուր գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։
50. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Հերկի գյուղի Ս. Լուսավորիչ եկեղեցին, հնուց։
51. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Հերկի գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
52. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Օստիղ գյուղի Ս. Հակոբ եկեղեցին, հնուց։
53. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Փնջերղա գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
54. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Օլմերղա գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
55. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Բալախոր գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։
56. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Կսանդա գյուղի Ս. Լուսավորիչ եկեղեցին, հնուց։
57. Էրզրումի վիլայեթի Բայբուրտ կազայի Բլուր գյուղի Ս. Մարտիրոս եկեղեցին, հնուց։

ԲԻԹԼԻՍԻ ՎԻԼԱՅԵԹ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Դրամներկի Ա-ը	Կարգի Թ-ը	Ինչի՞ մասին է գրված	Բովանդակության համառոտագրերը	Կազմողը	Պետը	Սևագրության թվականը	Մաքրագրության թվականը
1705	2093					1331 թ. հունիսի 2	1331 թ. հունիսի 2

Արդարադատության և դավաճանների մինիստրության

Բիթլիսի վիլայեթի Գենջ սանջաքում և նրան հարակից գյուղերում գտնվող և կայսերական հրամանով չհաստատված 26 եկեղեցիների վայրերն ու անունները և կառուցման թվականները ցուցնող մեկ օրինակ ցուցակը սրա հետ ներկայացվում է։ Այդ մասին...

№ 1705

ԳԵՆՋ

Կցված է 1331 թ. հունիսի 2-ի № 2025 թաթրիրին։

Կառուցման թ.

1. Գենջ սանջաքի Արշ գյուղի Ս. Պողոս եկեղեցին, 681 թ.։
2. Գենջ սանջաքի Ղիզրո գյուղի Ս. Դանիել եկեղեցին, 631 թ.։
3. Գենջ սանջաքի Օղնուդ գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, 591 թ.։
4. Գենջ սանջաքի Դալան գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, 581 թ.։
5. Գենջ սանջաքի Ալի-Փիրան գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1276 թ.։
6. Գենջ սանջաքի Դոխլուն գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 581 թ.։
7. Գենջ սանջաքի Ջաբաքջուր կազայի Ջոլիք գյուղի Ս. Հակոբ եկեղեցին, 1296 թ.։
8. Գենջ սանջաքի Ջաբաքջուր կազայի Մատրաք գյուղի Ս. Կիրակոս եկեղեցին, 1266 թ.։
9. Գենջ սանջաքի Կալը կազայի Սողդոն գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
10. Գենջ սանջաքի Կալը կազայի Հաղդին գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
11. Գենջ սանջաքի Կալը կազայի Փարզա գյուղի Ս. Կիրակոս եկեղեցին, հնուց։
12. Գենջ սանջաքի Կալը կազայի Բահմիտա գյուղի Ս. Կիրակոս եկեղեցին, հնուց։
13. Գենջ սանջաքի Կալը կազայի Քերմ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
14. Գենջ սանջաքի Կալը կազայի Սևինթ գյուղի Ս. Մինաս եկեղեցին, հնուց։
15. Գենջ սանջաքի Կալը կազայի Ինդողնա գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
16. Գենջ սանջաքի Կալը կազայի Արտղոնք գյուղի Ս. Հակոբ եկեղեցին, հնուց։
17. Գենջ սանջաքի Կալը կազայի Իշխանուր գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
18. Գենջ սանջաքի Կալը կազայի Ահարոնք գյուղի Ս. Յոթն Մանկունք եկեղեցին, հնուց։
19. Գենջ սանջաքի Կալը կազայի Շողը գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
20. Գենջ սանջաքի Կալը կազայի Էնոփ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
21. Գենջ սանջաքի Կալը կազայի Ինսկատ գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։
22. Գենջ սանջաքի Կալը կազայի Քեղերվան գյուղի Ս. Ստեփանոս եկեղեցին, հնուց։
23. Գենջ սանջաքի Կալը կազայի Կասքե գյուղի Ս. Թեոդորոս եկեղեցին, հնուց։
24. Գենջ սանջաքի Կալը կազայի Արա գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
25. Գենջ սանջաքի Կալը կազայի Փասի գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
26. Գենջ սանջաքի Կալը կազայի Փասոր գյուղի Ս. Հակոբ եկեղեցին, հնուց։

Մ Ո Ւ Շ

ՀԱՑՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ԳՐԱՍԵՆՑԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրաստեն-յակի №-ը	Կարգի №-ը	Ինչի՞ մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Գնտը	Սևագրության թվականը	Մաքրագրության թվականը
1075	2094					1331 թ. հունիսի 2	1331 թ. հունիսի 2

Արդարադատության և դավանաճիճեերի բարձր մինիստրության

Բիթլիսի վիլայեթի Մուշի սանջաքում և նրան հարակից գյուղերում գտնվող և կայսերական հրամանով չհաստատված 82 եկեղեցիների վայրերը, անունները և կառուցման թվականները ցուցնող ցուցակը մեկ օրինակ սրա հետ ներկայացվում է։ Այդ մասին հրամանն ու ֆերմանը Նորին Վսեմությանն է պատկանում։

№ 1705

Մ Ո Ւ Շ

Կցված է 1331 թ. հունիսի 2-ի № 2094 թաքրիրին։

Ֆերմանի թ. ։ Կառուցման թ.

1. *Մուշի սանջաքի Սողդամ գյուղի Ս. Սահակ եկեղեցին, 921 թ.։*
2. *Մուշի սանջաքի Ալիզնան գյուղի Ս. Կիրակոս եկեղեցին, 490 թ.։*
3. *Մուշի սանջաքի Բերդակ գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, 921 թ.։*
4. *Մուշի սանջաքի Բերդակ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 731 թ.։*
5. *Մուշի սանջաքի Արաղ գյուղի Ս. Կիրակոս եկեղեցին, 831 թ.։*
6. *Մուշի սանջաքի Դերկեվանք գյուղի Ս. Թորոս եկեղեցին, 531 թ.։*
7. *Մուշի սանջաքի Արինզուվանք գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, 631 թ.։*
8. *Մուշի սանջաքի Ջափնա գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, 731 թ.։*
9. *Մուշի սանջաքի Խասքյոյ գյուղի Ս. Երրորդություն եկեղեցին, 1307 թ.։*
10. *Մուշի սանջաքի Խասքյոյ գյուղի Ս. Ստեփանոս եկեղեցին, հնուց։*
11. *Մուշի սանջաքի Խասքյոյ գյուղի Ս. Թաղիլեոս եկեղեցին, հնուց։*
12. *Մուշի սանջաքի Իրիշդեր գյուղի Մ. Թովմաս եկեղեցին, հնուց։*
13. *Մուշի սանջաքի Ալի-Նելփոն- գյուղի Ս. Թոխմանուկ եկեղեցին, 1127 թ.։*
14. *Մուշի սանջաքի Շիմլաք (?) գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։*
15. *Մուշի սանջաքի Շիմլաք (?) գյուղի Ս. Կարապետ եկեղեցին, հնուց։*
16. *Մուշի սանջաքի Ֆեներ գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։*
17. *Մուշի սանջաքի Կոլվիք գյուղի Ս. Հակոբ եկեղեցին, հնուց։*
18. *Մուշի սանջաքի Մեղրակում գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։*
19. *Մուշի սանջաքի Արվարիխ գյուղի Ս. Հակոբ եկեղեցին, 1161 թ.։*
20. *Մուշի սանջաքի Թիյոնիք գյուղի Ս. Սիմեոն եկեղեցին, 585 թ.։*
21. *Մուշի սանջաքի Թիլ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 756 թ.։*
22. *Մուշի սանջաքի Հասիք գյուղի Ս. Հակոբ եկեղեցին, 750 թ.։*
23. *Մուշի սանջաքի Հասիք գյուղի Ս. Մեսրոպ եկեղեցին, 750 թ.։*
24. *Մուշի սանջաքի Իրիզաք գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։*
25. *Մուշի սանջաքի Աբիլ-Նիջար գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 578 թ.։*
26. *Մուշի սանջաքի Սիրունք գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, 546 թ.։*
27. *Մուշի սանջաքի Սիրունք գյուղի Ս. Հակոբ եկեղեցին, 546 թ.։*
28. *Մուշի սանջաքի Հովնան գյուղի Ս. Թովմաս եկեղեցին, հնուց։*
29. *Մուշի սանջաքի Հորղենաս գյուղի Ս. Երեքխորան եկեղեցին, հնուց։*
30. *Մուշի սանջաքի Հոլդամ գյուղի Ս. Թորոս եկեղեցին, հնուց։*
31. *Մուշի սանջաքի Արաք գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, 1093 թ.։*
32. *Մուշի սանջաքի Արքավանք գյուղի Ս. Թովմաս առաքյալ եկեղեցին, հնուց։*
33. *Մուշի սանջաքի Արքավանք գյուղի Շեկ Ավետարանի եկեղեցին, հնուց։*

34. Մուշի սանջաքի Զիղաք գյուղի Ս. Ստեփանոս եկեղեցին, հնուց։
35. Մուշի սանջաքի Վարդախաչ գյուղի Հայոց եկեղեցին (?), հնուց։
36. Մուշի սանջաքի Զիակի գյուղի Ս. Թուխմանուկ եկեղեցին, հնուց։
37. Մուշի սանջաքի Խինիք (?) գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
38. Մուշի սանջաքի Ավչուդ գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։
39. Մուշի սանջաքի Ավչուդ գյուղի Ս. Սիմեոն եկեղեցին, հնուց։
40. Մուշի սանջաքի Արտոնք գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
41. Մուշի սանջաքի Խարս գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1207 թ.։
42. Մուշի սանջաքի Խարս գյուղի այլ Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
43. Մուշի սանջաքի Խարս գյուղի Ս. Բարսեղ եկեղեցին, հնուց։
44. Մուշի սանջաքի Ավազաղբյուր գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
45. Մուշի սանջաքի Արնիստ գյուղի Ս. Հովհաննես եկեղեցին, հնուց։
46. Մուշի սանջաքի Թիրմեդ գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։
47. Մուշի սանջաքի Վարդենի գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
48. Մուշի սանջաքի Վարդենի գյուղի Ս. Հակոբ եկեղեցին, հնուց։
49. Մուշի սանջաքի Հարթրեթ գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, 1395 թ.։
50. Մուշի սանջաքի Հալիջան գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1201 թ.։
51. Մուշի սանջաքի Աղչան գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1231 թ.։
52. Մուշի սանջաքի Շեյխ-Յուսեֆ գյուղի Ս. Աստածածին եկեղեցին, հնուց։
53. Մուշի սանջաքի Փիքլիչ գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, 531 թ.։
54. Մուշի սանջաքի Հերքերտ գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, 431 թ.։
55. Մուշի սանջաքի Ս. Կարապետ վանքի (?) (Հայոց վանք) եկեղեցին, հնուց։
56. Մուշի սանջաքի Ս. Կարապետ վանքի գերեզմանատան եկեղեցին, հնուց։
57. Մուշի սանջաքի Ս. Կարապետ վանքի Ս. Ստեփանոս եկեղեցին, հնուց։
58. Մուշի սանջաքի Ս. Կարապետ վանքի Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։
59. Մուշի սանջաքի Ս. Կարապետ վանքի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
60. Մուշի սանջաքի Ս. Կարապետ վանքի Ս. Հարութիւն եկեղեցին, հնուց։
61. Մուշի սանջաքի Ս. Կարապետ վանքի Ս. Խոտաճարակաց եկեղեցին, հնուց։
62. Մուշի սանջաքի Սալիջան գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1276 թ.։
63. Մուշի սանջաքի Մեղտիվ գյուղի Ս. Մասունք եկեղեցին, 1043 թ.։
64. Մուշի սանջաքի Խիբյան գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1165 թ.։
65. Մուշի սանջաքի Դում գյուղի Ս. Սիմեոն եկեղեցին, 1222 թ.։
66. Մուշի սանջաքի Կոմիս գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1289 թ.։
67. Մուշի սանջաքի Ս. Կարապետ վանքի շրջակայքում Ս. Պողոս եկեղեցին, 1168 թ.։
68. Մուշի սանջաքի Ս. Կարապետ վանքի շրջակայքում Ս. Սարգիս եկեղեցին, 1167 թ.։
69. Մուշի սանջաքի Զիյարեթ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1268 թ.։
70. Մուշի սանջաքի Հասան-օվա գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, 1291 թ.։
71. Մուշի սանջաքի Բաղլու գյուղի Ս. Հրեշտակապետ եկեղեցին, 1271 թ.։
72. Մուշի սանջաքի Բաղլու գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 329 թ.։
73. Մուշի սանջաքի Փազո գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1278 թ.։
74. Մուշի սանջաքի Սուրդար գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1294 թ.։
75. Մուշի սանջաքի Կիվրիս գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, 1300 թ.։
76. Մուշի սանջաքի Խարդոս գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, 1151 թ.։
77. Մուշ քաղաքում Մարթինե թաղի Ս. Մարթինե եկեղեցին, հնուց։
78. Մուշ քաղաքում Մարթինե թաղի Ս. Գևորգ եկեղեցին, 1246 թ.։
79. Մուշ քաղաքում Զիգերաշ թաղի Ս. Կիրակոս եկեղեցին, հնուց։
80. Մուշ քաղաքում Վերին թաղի Ս. Հարութիւն եկեղեցին, հնուց։
81. Մուշ քաղաքում Սորո թաղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
82. Մուշ քաղաքում (անընթեռնելի) Ս. Սարգիս եկեղեցին, 531 թ.։

ԽԱԲԲԵՐԴԻ ՎԻԼԱՅԵԹ

ՀԱՑՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԳՐԱՍԵՆՑԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ

Գրասենյակի №-ը	Կարգի №-ը	Ինչի՞ մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Գևառը	Սևագրության թվականը	Մաքրագրության թվականը
397	1884					1330 թ. փետրվարի 16	1330 թ. փետրվարի 16

Արդարադատության և դավանաճիճեների մինիստրության

Մամուրեթ-ուլ-Ազիզի (Խարբերդ) վիլայեթի Չարսանջաք կազայում և նրան հարակից գյուղերում հնուց կառուցված և կայսերական հրամանով չհաստատված 31 եկեղեցիների վայրերն ու անունները ցուցնող մեկ օրինակ ցուցակը սրա հետ ներկայացվում է և խնդրվում համաձայն օրենքի անհրաժեշտ կարգադրությունը։

ՉԱՐՍԱՆՋԱՔ

№ 367

Առանց ֆերմանի 31
(հնուց կառուցված են)
Կցված է 1330 թ. փետրվարի 26-ի
№ 1984 թաքրիրին։

Կառուցման թ.

1. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Բերդ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, ֆերման չունի։*
2. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Փաշաղաք գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, ֆերման չունի։*
3. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Վասկերտ գյուղի Ս. Թորոս եկեղեցին, ֆերման չունի։*
4. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Հոլե գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։*
5. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Աղ-Մեղրէ գյուղի Ս. Քառասուն մանկանց եկեղեցին, հնուց։*
6. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Օրիք գյուղի Ս. Հովհաննես եկեղեցին, հնուց։*
7. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Խարեսիք գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։*
8. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Թանիս գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։*
9. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Յենի-քյոյ գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։*
10. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Լուսավորիչ գյուղի Ս. Հակոբ եկեղեցին, հնուց։*
11. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Բաշ-շեհեր գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։*
12. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Սուրքիան գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։*
13. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Խրնեք գյուղի Ս. Հակոբ եկեղեցին, հնուց։*
14. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Սիղջուֆ գյուղի Ս. Հակոբ եկեղեցին, հնուց։*
15. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Ստորին Հավս գյուղի Ս. Անտոն եկեղեցին, հնուց։*
16. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Փերթարք գյուղի Ս. Թորոս եկեղեցին, հնուց։*
17. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Փերթեք Նահիյեի Թիլ գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։*
18. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Փերթեք Նահիյեի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։*
19. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Փերթեք Նահիյեի Ս. Մարտիրոս եկեղեցին, հնուց։*
20. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Կյոք-թեփե Նահիյեի Ս. Կարապետ եկեղեցին, հնուց։*
21. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Ղորջան գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։*
22. *Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Իմամլիլջիք գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։*

23. Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Կոզուկչըք գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
24. Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Բասո գյուղի Ս. Գրիգոր եկեղեցին, հնուց։
25. Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Համամ գյուղի Ս. Մինաս եկեղեցին, հնուց։
26. Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Խուշթի-Մերզե գյուղի Ս. Կարապետ եկեղեցին, հնուց։
27. Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Ուրս գյուղի Ս. Մինաս եկեղեցին, հնուց։
28. Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Կոդարիզ գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։
29. Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Սորաք գյուղի Ս. Կարապետ եկեղեցին, հնուց։
30. Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Հայվաթլի գյուղի Ս. Մինաս եկեղեցին, հնուց։
31. Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազայի Կայա-իզի գյուղի Ս. Մինաս եկեղեցին, հնուց։

ՉԱՐՍԱՆՋԱՔ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԴՐԱՄԵՆՑԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ							
Գրասենյակի №-ը	Կարդի №-ը	Ինչի՞ մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Գետը	Ստացության թվականը	Մաքրագրության թվականը
709	2016					1330 թ. փետրվարի 26	1330 թ. փետրվարի 26

Արդարադատության և դավանաճիճների նախարարության

16 փետրվարի 1330 թ. № 1984 գրության հավելվածն է։

Չարսանջաք կազայի Կուշչի գյուղում գտնվող Ս. Աստվածածին եկեղեցին հնուց ի վեր կառուցված է և կայսերական ֆերմանով հաստատված չինելու մասին տեղից տեղեկություն ստացված է, որի համար խնդրում ենք ըստ կանոնի անհրաժեշտ կարգադրությունն անել այդ մասին։

(Հայերեն լեզվով ծանոթություն)՝
«Գրված է 1915 թ. փետրվարի 26-ին»
(Ստորագրություն)

ԽԱՐԲԵՐԴԻ ՎԻԼԱՅԵԹ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԴՐԱՄԵՆՑԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ							
Գրասենյակի №-ը	Կարդի №-ը	Ինչի՞ մասին է գրված	Բովանդակության համառոտագիրը	Կազմողը	Գետը	Ստացության թվականը	Մաքրագրության թվականը
823 774	2050					1331 թ. ապրիլի 4	1331 թ. ապրիլի 4

Արդարադատության և դավանաճիճների նախարարության

16 փետրվարի 1330 թ. № 1984 գրության հավելվածն է։

Խարբերդի վիլայեթի Չարսանջաք կազային հարակից գյուղերում հնուց կառուցված և կայսերական հրամանով չհաստատված 22 եկեղեցիների վերաբերյալ մեկ օրինակ ցուցակը նմանապես սրա հետ ներկայացվում է և խնդրվում համաձայն որոշման հարկ եղած կարգադրությունն անել։ Այդ մասին...

ՁԱՐՍԱՆՋԱՔ

Թղթի թիվը 823/774

Առ. Ֆերմանի 22
Կցված է 1331 ապրիլի
№ 2050 թաղրիրին։

Կառուցման թ.

1. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Յաշաղաք գյուղի Նազրիկի վանքի հայոց եկեղեցին, հնուց։
2. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Ս. Հովհաննես վանքի հայոց եկեղեցին, հնուց։
3. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Ս. Վառվառե (Սարգիս) եկեղեցին, հնուց։
4. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Օրիք գյուղի հայոց եկեղեցին, հնուց։
5. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Սիվջուղ գյուղի հայոց եկեղեցին, հնուց։
6. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Սիվջուղ գյուղի Ս. Երից Մանկանց եկեղեցին, հնուց։
7. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Սիվջուղ գյուղի Ս. Վառվառե եկեղեցին, հնուց։
8. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Բալիշեր գյուղի Ս. Կարապետ եկեղեցին, հնուց։
9. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Բալիշեր գյուղի Ս. Թորոս եկեղեցին, հնուց։
10. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Իսմայիլ գյուղի Ս. Լույս եկեղեցին, հնուց։
11. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Խարասիկ գյուղի Ս. Կարապետ վանքի եկեղեցին, հնուց։
12. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Լուսավորիչ գյուղի Ս. Երից Մանկանց եկեղեցին, հնուց։
13. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Վասկերդ գյուղի հայոց եկեղեցին, հնուց։
14. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Համախ գյուղի հայոց եկեղեցին, հնուց։
15. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Ղադոսա գյուղի Ս. Կարապետ եկեղեցին, հնուց։
16. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Ղադոսա գյուղի մյուս Ս. Կարապետ եկեղեցին, հնուց։
17. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Վինան գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։
18. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Վինան գյուղի Կարմիր վանքի հայոց եկեղեցին, հնուց։
19. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Բերդակ գյուղի Շաբշաբրի թաղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
20. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Բերդակ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին, հնուց։
21. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Բերդակ գյուղի Ս. Քառասուն Մանկանց եկեղեցին, հնուց։
22. Խարբերդի վիլայեթի Ձարսանջաք կազայի Բերդակ գյուղի Ս. Կարապետ եկեղեցին, հնուց։

ԽԱՐԲԵՐԴԻ ՎԻԼԱՅԵԹ

ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԴՐԱՄԵՆԱՑԱԿԻ ՕՐԻՆԱԿԸ								
Գրաքեն-յակի №-ը	Կարգի №-ը	Ինչի՞ մասին է գրված	Բովանդակություն համառոտագիրը		Կազմողը	Գևոը	Սևագրության թվականը	Մաքրագրության թվականը
823 774	2049						1331 թ. ապրիլի 4	1331 թ. ապրիլի 4

Արդարադատության և դավանաճիճների մինիստրության

Խարբերդի վիլայեթի Դերսիմ սանջաքում և նրան կից վայրերում հնուց կառուցված և կայսերական հրամանով չհաստատված 28 եկեղեցիների վայրերն ու անունները ցուցնող մեկ օրինակ ցուցակը սրա հետ ներկայացվում է և խնդրվում, համաձայն ընդունված կարգի, անհրաժեշտ կարգադրությունն անել։ Այդ մասին...



ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՆԱԽԱԳԾԵՐԻՑ

(Հեղինակ՝ ճարտարապետ Ա. Գալիկյան)

ԴԵՐՍԻՄ

Թղթի թիվը՝ 823/774

Առանց ֆերմանի 28
Կցված է 1331 թ. ապրիլի 4-ի
№ 2049 թաթրիրին։

Կառուցման՝ թ.

1. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի կենարոն Խոզաթի Ս. Փրկիչ եկեղեցին, 1288 թ.։
2. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Իխթիղա (?) գյուղի Ս. Մինաս եկեղեցին, հնուց։
3. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Ճերմակաղբյուր գյուղի հայոց եկեղեցին, հնուց։
4. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Յերղան գյուղի Ս. Հարութիւն եկեղեցին, հնուց։
5. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Յերղան գյուղի Կարմիր վանքի հայոց եկեղեցին, հնուց։
6. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Հավշաքար գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, 1325 թ.։
7. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Հավշաքար գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։
8. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Աղչոնիք գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։
9. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Աղչոնիք գյուղի հայոց քանդված եկեղեցին, հնուց։
10. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Աղչոնիք գյուղի Սիկեաիք գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։
11. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Ս. Հովհան գյուղի Ս. Հովհան եկեղեցին, հնուց։
12. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Զիմբիղ գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։
13. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Հաղթոք գյուղի Ս. Մինաս եկեղեցին, հնուց։
14. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Հաղթոք գյուղի Երեք Մանկունք ավերակ եկեղեցին, հնուց։
15. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Թեքիյե գյուղի հայոց եկեղեցին, հնուց։
16. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Հալվորիկ գյուղի Ս. Աստվածամայր եկեղեցին, հնուց։
17. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Հալվորիկ գյուղի Ս. Կարապետ վանքի հայոց եկեղեցին, հնուց։
18. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Կատիշար գյուղի հայոց եկեղեցին, հնուց։
19. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Դաշտակ գյուղի հայոց եկեղեցին, հնուց։
20. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Կրզըլ-քիլիսե գյուղի հայոց եկեղեցին, հնուց։
21. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Ջաշատուր գյուղի հայոց եկեղեցին, հնուց։
22. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Դողանես գյուղի հայոց եկեղեցին, հնուց։
23. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Թիքնիկ գյուղի հայոց եկեղեցին, հնուց։
24. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Շիտան գյուղի հայոց եկեղեցին, հնուց։
25. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Գյուլսուրաք գյուղի Ս. Գևորգ եկեղեցին, հնուց։
26. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Զիվե գյուղի Ս. Սարգիս եկեղեցին, հնուց։
27. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքում, բուն Դերսիմում, 7 հայկական եկեղեցիներ, հնուց։
28. Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջաքի Ինին գյուղի 9 հայկական եկեղեցիներ, հնուց։

Կցված է 1331 թ. ապրիլի 4-ի
№ 2049 թաթրիրին։

(Շարունակելի)

ՆԻԿՈՂՈՍ ԹԱՀՄԻԶՅԱՆ

ՀՈՒՇԱՐՁԱՆ
(1915—1965)


riten.
morendo
a tempo
pp
p
mp
crescendo
mf
dim
pp
p
crescendo


mp
p
mf
cresc
crescendo
mf
crescendo
f
cresc
mf
fz
f
8
ff
ff
8
dim


mp
fp
subp
rubato

a tempo
sf
p




sub p
poco a poco cresc
fp
poco a poco cresc
ff sub pp
poco cresc
molto cresc.


sub pp
sub p molto cresc
molto cresc